

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
(*հոդվածների ժողովածու*)

SCIENTIFIC READINGS
(*collection of articles*)

НАУЧНЫЕ ЧТЕНИЯ
(*сборник статей*)



I

Ստեփանակերտ- 2016

ՀՏԴ001
ԳՄԴ72
Գ602

Արցախի անկախության հռչակման
25-րդ տարեդարձին նվիրված միջազգային
Ուսանողական գիտաժողովի նյութեր

*Տպագրվում է Արցախի պետական համալսարանի
Գիտական խորհրդի որոշմամբ*

Գիտաժողովի խորհուրդ

Վ. Ավանեսյան – ԱրՊՀ պրոռեկտոր
Ա. Սարգսյան – ԼՂՀ ԿԳՆ փոխնախարար
Վ. Յարամիշյան - ԱրՊՀ պրոռեկտոր
Գ. Սահակյան - ԱրՊՀ պրոռեկտոր
Ա. Առստամյան – ԱրՊՀ դեկան
Ռ. Մանգասարյան – ԱրՊՀ դեկան
Է. Հայրապետյան – ԱրՊՀ դեկան
Շ. Այդինյան – ԱրՊՀ դեկան
Վ. Միրզոյան – ԱրՊՀ դեկան
Ա. Ալեքսանյան – ԱրՊՀ ամբիոնի վարիչ
Ա. Խաչատրյան - ԱրՊՀ ամբիոնի վարիչ
Ս. Խանյան բ.գ.դ., պրոֆեսոր

ԱրՊՀ ՈԻԳԸ դեկավար՝ Ա. Թադևոսյան

Գիտական ընթերցումներ I: Հոդվածների ժողովածու.-
Գ 602 Ստեփանակերտ: ԱրՊՀ հրատ., 2017.- ...էջ:

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

ՀՏԴ 58:663.9:663.8

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ
Մարիամ Մկրտչյան
Գորիսի պետական համալսարան
Քիմիա, մագ. 2-րդ կուրս
ք.գ.թ., դոցենտ Ս.Ա. Հայրապետյան

ԹԵՑԱՀԱՎԱՔՆԵՐՈՒՄ ԴԱԲԱՂԱՆՑՈՒԹԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Բանալի բառեր. դաբաղանյութ, երիկամային ֆիտոթեյ, պերմանգանատոմետրիա:

Ամփոփում

Սըխատանքի նպատակն է ուսումնասիրել դաբաղանյութեր պարունակող բուսահավաքները, ծանոթանալ դաբաղանյութերի որակական ու քանակական անալիզի մեթոդներին, կատարել Գորիս քաղաքի դեղատնային կրպակներում ամենամեծ պահանջարկ ունեցող երեք բուսահավաքների (1. Почечный фиточай – միզամուղ, 2. Чай “Красный слим”- ցուցումը քրոնիկ փորկապություն 3.Фиточай “Santi Min” – նյութափոխանակությունը կարգավորող) ֆիզիկաքիմիական անալիզ, բարձր պահանջարկ ունեցող նշված թեյերի մեջ հաստատել դաբաղանյութերի առկայությունը և քանակությունը: Հարկ է նշել, որ նշված 3 թեյերը չեն հանդիսանում դեղամիջոցներ:

Мариам Мкртчян

Горисский государственный университет

Химия, маг. 2 курс

к.х.н., доц. С. А. Айрапетян

ОПРЕДЕЛЕНИЕ ДУБИЛЬНЫХ ВЕЩЕСТВ В ЧАЙНЫХ ТРАВАХ

Ключевые слова: дубильные вещества, почечный фиточай, пермангометрия.

Резюме

Цель работы изучить сбор трав, которые содержат дубильные вещества, ознакомиться количественными и качественными методами анализа дубильных веществ, в чаях имеющих большой спрос в аптечных киосках города Гориса (1. Почечный фиточай – мочегонное, 2. Чай “Красный слим”- хронический запор 3.Фиточай “Santi Min” –регулирующий обмен веществ) поттвердить и узнать количественное содержание дубильных веществ , сделать физикохимический анализ. Необходимо отметить, что эти три чая не являются лекарственными препаратами.

Mariam Mkrtchyan

Goris State University

Chemistry, Master’s degree, 2

c. ch. s., docent S. A. Hayrapetyan

THE ESTIMATION OF TANNINS IN THE TEA PLANTS

Key words: tannins, burgeonal phitotea, permogametry.

Summary

The goal of this work is to study the collection of plants containing tannins, to refer to qualitative and quantitative methods of analyses of tannins, to do the physicochemical analysis of 3 collections of plants having the greatest demand in Goris drugstores (1. Kindey herbal teas diuretie, 2. Tea "Red slim" – for chronic constipation), 3. Herbal tea "Santimin" – as metabolism regulator), to confirm the existence and the quantily of tannins in the mentiond teas. The mentioned 3 teas are not medications.


Դաբաղանյութերը բուսական ծագմամբ պոլիֆենոլային միացություններ են՝ որոշակի մոլեկուլային զանգվածով, օժտված դաբաղող հատկությամբ: Լավ են լուծվում ջրում, պարունակում են ֆենոլային հիդրօքսիլ խմբեր: Լայնորեն տարածված են բուսական աշխարհում: Դաբաղանյութերն ունեն արտահայտված թթվային հատկություն և օժտված են կաշին դաբաղելու հատկությամբ: Ներկայումս բույսերից անջատել են բազմաթիվ ցածրամոլեկուլային պոլիօքսիֆենոլային միացություններ, որոնք օժտված են դաբաղող ազդեցությամբ, սակայն ըստ կենսաբանական ծագման համարվում են դաբաղանյութերի նախորդները: <<Դաբաղանյութեր>> հասկացությունն առաջին անգամ կիրառել է Սեգենը 1796թ. բույսերի էքստրակտներում հայտնաբերված նյութերի բնութագրման համար, որոնք թողնում էին դաբաղող ազդեցություն [1]:

Բժշկության մեջ դեղաբույսերը, որոնք պարունակում են դաբաղող նյութեր, կիրառում են, որպես կապոդ, հակամանրէային, հակաբորբոքային և արյունականգ միջոց: Ներքին ընդունման ձևով օգտագործում են աղեստամոքսային տրակտի մի շարք հիվանդությունների բուժման ժամանակ, ինչպես նաև բույսերով, մետաղական աղերով թունավորումների դեպքում [2]: Դաբաղանյութերը փոխազդելով մաշկի և լորձաթաղանթի սպիտակուցների հետ, վերջիններիս ամրացնում են, դրանով իսկ խոչընդոտելով բակտերիաների ներթափանցումը:


Դաբաղանյութերը լայնորեն տարածված են բուսական աշխարհում: Մասնավորապես, դրանք հանդիպում են ձիաձեռների, պտերների, սնկերի և սպորավորների մոտ: Մրանցով առավել հարուստ են վարդագգիների, հնդկացորենագգիների, լոբագգիների ընտանիքներին պատկանող բույսերը: Դաբաղանյութերը հիմնականում կուտակվում են ծառերի կեղևում, արմատներում և կոճղարմատներում: Դաբաղանյութերն ունեն սպիտակուցային ծագում, առաջանում են շաքարներից և իրենեցից ներկայացնում են ֆոտոսինթեզի արդյունք:

Դաբաղանյութերի դասակարգումը: Ըստ Պրոկտերի դասակարգման դաբաղանյութերը բաժանվում են 2 հիմնական խմբերի.

1. Պիրոգալլային (առաջացնում են պիրոգալլոլներ)
2. Պիրոկատեխինային (առաջացնում են պիրոկատեխին):



պիրոգալլոլ



պիրոկատեխին

Հետագա հետազոտությունների արդյունքում Ֆրեյդենբերգը Պրոկտերի դասակարգումը ենթարկեց փոփոխության: Պիրոգալլային դաբաղանյութերը կոչվեցին հիդրոլիզվող, իսկ երկրորդ խումբը (պիրոկատեխինները)^a կոնդենսացված [3]: Բույսերում մի շարք դաբաղանյութեր չեն դասակարգվում նշված խմբերի մեջ, քանի որ տվյալ դասակարգումը մի շարք դեպքերում սահմանափակ է: Հաճախ բույսերում գտնվում են երկու խմբերին պատկանող դաբաղանյութերի խառնուրդներ:

Մեր կողմից ուսումնասիրվել են Գորիս քաղաքի դեղատնային կրպակներում ամենամեծ պահանջարկ ունեցող երեք բուսահավաքներում (1. Почечный фиточай – միզամուղ, 2. Чай “Красный слим”- ցուցումը քրոնիկ փորկապություն, 3. Фиточай “Santi Min” – նյութափոխանակությունը կարգավորող) դաբաղանյութերի պարունակությունն ու քանակությունը:

Որակական ռեակցիաներ: Որակական և քանակական ռեակցիաների համար պատրաստել ենք ջրային էքստրակտներ. թեյահավաքներից վերցրել ենք մեկական գրամ, ավելացրել 100մլ ջուր, տաքացրել ջրային բաղնիքում 30ր, ֆիլտրել: Երեք թեյահավաքները, չնայած տարբեր արտադրողների կողմից էին թողարկվել և ունեին տարբեր նշագրումներ ու բաղադրություն, սակայն ունեին նույն երանգը և համը:

Իրականացրել ենք դաբաղանյութերի հայտնաբերման հետևյալը որակական, ռեակցիաները, արդյունքները բերված են աղյուսակ 1-ում, 2-ում և 3-ում:

1. 2-3մլ էքստրակտի վրա ավելացրել ենք 1%-ոց ժելատինի լուծույթ: Առաջանում է պղտորություն, որն անհետանում է ժելատինի ավելցուկի դեպքում:
2. 2-3մլ էքստրակտին ավելացրել ենք 4-5 կաթիլ երկաթամոնիումային շիբ:

3. 1 մլ էքստրակտին ավելացրել ենք 2 մլ 10%-ոց քացախաթթու և 1 մլ 10%-ոց կապարի միջին աղի լուծույթ:

Թեյը	ռեակտիվը	արդյունքը
Почечный фиточай	ժելատինի 1%-ոց լուծույթ	առաջանում է պղտորություն, որը հետագայում անհետանում է
Красный слим	ժելատինի 1%-ոց լուծույթ	առաջանում է պղտորություն, որը հետագայում անհետանում է
Santi Min ժելատինի 1%-ոց լուծույթ		առաջանում է պղտորություն և պահպանվում

աղյուսակ 1.

Թեյը	Ռեակտիվը	արդյունքը
Почечный фиточай	երկաթ	կապտասև երանգ
	ամոնիումային շիբ	(հիդրոլիզվող)
Красный слим	երկաթ ամոնիումային շիբ	կանաչավուն երանգ (կոնդենսացված)
Santi Min	երկաթ ամոնիումային շիբ	կանաչավուն երանգ (կոնդենսացված)

աղյուսակ 2.

Թեյը	ռեակտիվը	արդյունքը
Почечный фиточай	քացախաթթու + կապարի ացետատ	թույլ կանաչ
Красный слим	քացախաթթու + կապարի ացետատ	թույլ կանաչ
Santi Min	քացախաթթու + կապարի ացետատ	արտահայտված կանաչ

աղյուսակ 3.

Քանակական որոշում: Մանրացրած թեյահավաքների երեք նմուշներից մոտ 2-ական գրամ, տեղավորել ենք 100մլ տարողությամբ կոնսաձև կոլբայի մեջ, ավելացրել 50մլ եռացող ջուր և տաքացրել ջրային բաղնիքի վրա 30ր անընդհատ խառնման պայմաններում: Հեղուկը չափիչ կոլբայում սառեցրել ենք, հանուկի ծավալը հասցրել անհրաժեշտ չափի՝ ջրի օգնությամբ: Ստացած 25մլ հեղուկը լցրել ենք 250մլ տարողությամբ կոլբայի մեջ, ապա ավելացրել 25մլ ինդիգոսուլֆոթթթվի լուծույթ և տիտրել 0,1Ն. կալիումի պերմանգանատով, անընդհատ խառնման պայմաններում, մինչև դեղնաոսկեգույն գունավորման առաջացումը: Կալիումի պերմանգանատի 0,1Ն. 1մլ լուծույթին համապատասխանում է տանինների 0,004157գ: Չուգահեռ իրականացնում են ստուգիչ փորձ^a ինդիգոսուլֆաթթուների 25մլ տիտրելով 750մլ H₂O-ում: Արդյունքները բերված են աղյուսակ 4-ում:

աղյուսակ 4

Թեյը	դաբաղանյութերի քանակությունը, (x), %	դաբաղանյութերի տիպը
Почечный фиточай	17	հիդրոլիզվող
Красный слим	46	կոնդենսացված
Sa nti Min	49	կոնդենսացված

Դաբաղանյութերի տոկոսային պարունակությունը որոշում են ըստ հետևյալ բանաձևի.

$$x = \frac{(V_1 - V_2) DV_{100} \cdot 100}{mVa \cdot 100},$$

որտեղ V_1 - 0,1Ն, $KMnO_4$ լուծույթի ծավալն է (մլ), որը ծախսվում է տիտրման ժամանակ, V_2 - 0,1Ն. $KMnO_4$ լուծույթի ծավալն է (մլ), որը ծախսվում է ստուգիչ

փորձանոթի վրա, D-կոնֆիգիենտն է՝ տանինի հաշվով, որը հիդրոլիզվող դաբաղանյութերի համար 0,004157գ է, կոնցենտրացվող դաբաղանյութերի դեպքում՝ 0,00582գ, V-էքստրակտի ընդհանուր ծավալը (մլ), m-կշռված հումքի զանգվածը, Va- էքստրակտի ծավալը (մլ), որը ծախսվել է տիտրման համար:

Մեր կողմից ուսումնասիրված թեյահավաքները արտադրողների կողմից գովազդվում են որպես նիհարեցնող թեյեր: Մակայն դիետոլոգ-էնդոկրինոլոգները նշում են, որ այդ միջոցներից ոչ մեկն իրականում չեն կարող օգնել ազատվել ավելորդ քաշից: Ընդհանուր առմամբ նիհարեցնող թեյերը միազամուղներ են, դրանք մարդու օրգանիզմից դուրս են բերում ավելորդ հեղուկը և քաշը նվազում է, իսկ մարդուն թվում է թե նա նիհարել է:

Լուծողական պրեպարատները թույլ չեն տալիս, որ սննդամթերքները լիարժեք յուրացվեն մարդու օրգանիզմի կողմից, դա կհանգեցնի քաշի որոշակի փոփոխության, բայց ոչ ճարպային հյուսվածքի դեմ պայքարի: Եթե դրանք օգտագործվում են չափից շատ, առանց բժշկի նշանակման, բացի քաշի կորստից, ի հայտ են գալիս նաև նյութափոխանակության խանգարումներ:

Գրականություն

- 1.Каррер П. Курс органической химии. Пер. с нем. 13-го перераб. и доп. изд./ Под ред. Колосова М. П. - Л.: Гос. научно - техническое изд. химической литературы, 1960. - 1216с., ил.
- 2.Краткая химическая энциклопедия. Ред. кол. И. Л. Кнунянц (отв, ред.) и др., 5 т. - М., «Сов. Энциклопедия», 1961., ил.
- 3.Государственная Фармакопея СССР, Вып. 2, Общие методы анализа, МЗ СССР, XI изд. М., Медицина, 1989, 400 с.
- 4.М. Д. Машковский. Лекарственные средства, В 2-х частях, 12-е изд. перераб. и доп., М., Медицина, 1993, 736 с.

ՀՏԴ581.2

Արփինե Յարամիշյան
Արցախի պետական համալսարան
կենսաբանություն II կուրս/բակալավրիատ/
Միլա Մարգարյան
բուսաբանություն II կուրս /մագիստրատուրա/

ՄՆԱԴՈՒՄ ՀԱՃԱԽ ԿԻՐԱՌՎՈՂ ՈՐՈՇ ԴԵՂԱԲՈՒՑՍԵՐԻ ՄԼԿԱՅԻՆ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանալի բառեր՝ բուսատեսակ, սննդային դեղաբույս, սնկային հիվանդություն, մանրադիտակային մեթոդ, մակրոսկոպիկ մեթոդ, ախտահարում

Ամփոփում

Հորվածում համապատասխան գրականության ուսումնասիրման և վերլուծության ճանապարհով ներկայացված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում հաճախ հանդիպող և սննդի մեջ օգտագործվող դեղաբույսերը, ինչպես նաև արտաքին զննման և մանրադիտակային մեթոդներով հետազոտված են դրանց սնկային հիվանդությունները:

Արփինե Երամիշյան- биология II курс /бакалавриат/
Мила Саркисян- биология II курс/магистратура/
Арцахский государственный университет

ГРИБКОВЫЕ БОЛЕЗНИ НЕКОТОРЫХ ЛЕКАРСТВЕННЫХ РАСТЕНИЙ ЧАСТО ПРИМЕНЯЕМЫХ В
ПИЩЕ

Ключевые слова- вид растений, пищевые лекарственные растения, грибковые болезни, микроскопический метод, макроскопический метод, поражение

Резюме

В статье, на основе изучения и анализа соответствующей литературы, представлены лечебные растения, которые применяются в пище и часто встречаются на территории Нагорно-Карабахской Республики, макроскопическим и микроскопическим методами изучены их грибковые болезни.

Arpine Yaramishyan- biological Course II / Bachelor /
Mila Sarkisyan- Biology II Course / Master /
Artsakh State University

FUNGAL DISEASE OF SOME MEDICINAL PLANTS COMMONLY USED IN FOOD

Key words- species of plants, edible herbs, fungal disease, microscopic method, the macroscopic method defeated

Summary

The article, based on research and analysis of relevant literature, represented medicinal plants, which are used in food and are often found on the territory of Nagorno-Karabakh Republic; fungal diseases are studied by macroscopic and microscopic methods.

ԼՂՀ տարածքի բուսածածկույթի բազմազանությունը պայմանավորված է նրա ռելիեֆի, կլիմայի բազմազանությամբ, ինչպես նաև փոփոխման առանձնահատկություններով: Որքան հարուստ է կենսազանգվածը, այնքան մեծ է օգտակար բուսատեսակների թիվը:

Բանկչության հետ ունեցած շփումներից, կատարված հարցումներից պարզվեց, որ արցախցիների առօրյա սննդակարգում գերակշռում է բուսական սնունդը:

Բուսատեսակների դեղագործական նշանակությունները

Դեղագործական նշանակություն ունեցող դեղաբույսերի սննդի մեջ օգտագործելու տիպական օրինակ է Արցախում լայն տարածում ունեցող «Ժենգյալով հացը»:

Մննդում առավել հաճախ օգտագործվող և դեղագործական նշանակություն ունեցող մի շարք բուսատեսակների դեղագործական նշանակության վերաբերյալ ստորև ներկայացվում է համընդգրկուն տեղեկություն:

1. Գանգրավոր թրթնջուկ- բուժիչ նպատակներով օգտագործում են գանգրավոր թրթնջուկի արմատները և կոճղարմատը, որոնց մեջ պարունակվում են՝ դաբաղանյութեր, ֆլավոններ,

վիտամին K, ասկորբինաթթու, եթերային յուղեր և այլն: Ժողովրդական բժշկության մեջ արմատի եփուկները կիրառում են աղիքային վարակների և մաշկային հիվանդությունների դեպքում: Թրթնջուկի տերևները պարունակում են հանքային աղեր, կաթնաթթու, թրթնջկաթթու 80մգ%, կարոտին 8 մգ%, կվերցետին 0.5 մգ%, վիտամին B₁, B₂, P, K, PP:

2.Ավելուկ – բժշկության մեջ օգտագործվում են արմատն ու տերևները: Ավելուկի եփուկը խմում են՝ թոքախտի, փորացավի, միզակապության, սերմի թուրմը՝ թոքաբորբի ու հազի, սերմի ու գոմեշի կաթի խառնուրդը՝ ամլության ժամանակ: Քոսի դեպքում շեպը և ավելուկի արմատը ձեռում ու քսում են մարմնին: Արմատը գործածում են նաև ստամոքսի, մաշկի ու թոքերի հիվանդությունների ժամանակ: Ղևոնդ Ալիշանը նշում է, որ ջրային ավելուկը մասնավորապես օգնում է փորկապությանը, իսկ ձեռած հունդը գինու հետ ազդում է հոգեվիճակի վրա: Ծեծած հում սերմը խառնում են գինու հետ ու խմում ստամոքսի և որովայնի ցավերի դեպքում: Հայկական բժշկության մեջ ավելուկն օգտագործել են մելամաղձության, սրտխփոցի, վարակիչ հիվանդությունների, ստամոքսաաղիքային ուղու խանգարումների, ստամոքսի գերթթվայնության, նյութափոխանակության խանգարման, մակերիկամների հիվանդությունների, պարանոցի ուռուցքների, ականջաբլթակի խոցի, արյունազեղման բուժման նպատակով: Մենդի մեջ օգտագործում են ավելուկի թարմ և չոր տերևները:

3.Եղինջ- Դեղաբույս է: Տերևներում հայտնաբերվել են վիտամին K, C (մինչև 269մգ%), B խմբի վիտամիններ, կարոտին, կարոտինոիդներ, ինչպես նաև մրջնաթթու, քլորոֆիլ (մինչև 5%), դաբադանյութեր (2%-ից ավելի), խեժ, պրոտոպորֆիրին, կոպրոպորֆերին, սիտոստերին, գլիկոզիդ, ֆիտոնցիդներ, կվերցետին, կոֆեինաթթու, ֆերուլաթթու, սիլիցիումաթթու, հիստամին, ացետիլխոլին, քիմիական տարրերից՝ K, Ca, Fe, Si, Cr, Cu, Mn, Al, V և այլն: Պտուղները պարունակում են մինչև 32.5% ճարպայուղ: Բույսի մատղաշ տերևները 2 անգամ ավելի շատվիտամին են պարունակում,քան հաղարջի պտուղները, իսկ կարոտինի պարունակությամբ եղինջը գերազանցում է գազարին,թրթնջուկին և չիչխանին: Պատրաստուկներն օգտագործում են որպես միզամուղ, խորխաբեր, հակաբորբոքային, արյունահոսությունը դադարեցնող, վերքերն ապաքինող միջոց: Բուժման նպատակով օգտագործում են բույսի տերևները, ծաղիկներն ու արմատը:

4.Խատուտիկ- բույսի արմատը պարունակում է տրիտերպենային միացություններ, մինչև 40մգ% ինսուլին, մինչև 3 մգ% կաուչուկ, ճարպայուղ, որը պարունակում է գլիցերիդներ, խեժ, կալիումական և կալցիումական աղեր: Կաթնահյութը պարունակում է լուկցուցերոլ, խոլին, ասպարգին, խեժ, իսկ տերևները՝ ճարպ, պարանքսաքին, կարոտինոիդներ, A, B, B₂, C, PP վիտամիններ, խոլին, թիրոզին, քիմիական տարրերից Fe, Mn, Ca, P: Խատուտիկն ընդգրկված է բազմաթիվ երկրների դեղաբանական ցանկերում, գիտական բժշկությունը հիմնականում օգտագործում է բույսի արմատները՝ որպես լեղամուղ միջոց խոլեցիրիտի անացիդ ստամոքսաբորբի, քրոնիկ փորկապության բուժման համար: Մեծ կիրառում ունի խատուտիկի հյութը, որը հարզի է՝ որպես օրգանիզմն ամրացնող և տոնուսը բարձրացնող միջոց :

Հաշվի առնելով նկարագրվող բույսերի օգտակարությունը և դեղագործական նշանակությունը, անհրաժեշտ է դրանք օգտագործել միայն առողջ վիճակում: Նշված բույսերը ընկալունակ են մի շարք հիվանդությունների նկատմամբ, այդ թվում սնկային հիվանդությունների, որի արդյունքում դիտվում է ախտահարված բույսերի կենսագործունեության խախտում և որակական հատկությունների նվազում:

Մեր խնդիրն էր ուսումնասիրել նկարագրվող բուսատեսակներն ախտահարող սնկերը և տալ դրանց վերաբերյալ ամփոփ նկարագիր:

Նյութի հետազոտման մեթոդները

Նյութի հետազոտումն իրականացվել է մակրոսկոպիկ և մանրադիտակային գուգակցությամբ:

Մակրոսկոպիկ մեթոդ՝ հիվանդ բույսի արտաքին զննում: Այդ ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել.

- բույսի զարգացման փուլը
- հիվանդության տարածվածությունը
- հիվանդության տևողությունը, որը կախված է հիվանդության ընթացքի բնույթից:

-ախտահարված կուլտուրաները:

Մակրոսկոպիկ մեթոդը, այսինքն՝ հիվանդ բույսի արտաքին զննումը, հնարավորություն է տալիս նախնական եզրակացության գալ հիվանդության տիպի մասին:

Մանրադիտակային մեթոդ՝ հիվանդ բույսի ախտահարված հյուսվածքները ուսումնասիրում են մանրադիտակի օգնությամբ, հայտնաբերում անատոմիական փոփոխությունները, ապա՝ հիվանդության հարուցիչին:

Մակային հիվանդությունները

Ընտանիք՝ մատիտեղազգիներ-Polygonaceae, տեր-բույս՝ Rumex acetosa L., R. acetosella L., R. Acetoselloides:

1,2 Erysiphe communis: Տերևների վրա առաջանում է սպիտակ այրանման փառ՝ մուգ սնկամարմիններով: Ավելուկն ախտահարող **Erysiphe communis** սնկի հարուցիչ սնկամարմինները շատ պարզ են, պայուսակները շատ, սպորները միաբջջային են և անգույն: Ինտենսիվ ախտահարության արդյունքում բույսն ամբողջությամբ ծածկվում է սնկի միցելիումով և դառնում օգտագործման համար ոչ պիտանի: ԼՂՀ-ում հաճախ հանդիպող երևույթ է:

Erysiphe polygoni: Ախտահարում է տերևները, որոնց վերին մակերեսները ծածկվում են այրանման փառով: տերևային մակերեսները ծածկող փառն իրենից ներկայացնում է հարուցիչի միցելիումը, որում զարգանում են սնկի կլեյստոտեցիումները: Կլեյստոտեցիումներն ունեն մի քանի պայուսակներ, որոնք կրում են բազմաթիվ հավելումներ:

Uromyces acetosae: Տեր-բույսի ախտահարված օջախներում ձևավորվում են ուրեդինիոսպորներ և տելիոսպորներ: Ուրեդինիումները տեղակայված են տերևների զույգ մակերեսներին, կլորավուն են, ցրված և ժանգա դարչնագույն: Երբեմն դասավորված են լինում կոնցենտրիկ շրջաններով, չեն միախառնվում: Ուրեդոսպորները կլորավուն են կամ կարճ էլիպտիկալ, բաց դարչնագույն են, թաղանթը գորտնուկապատ է: Տելիումները նման են ուրեդինիումներին, բայց սև գունավորության: Տելիոսպորները կլորավուն են, թաղանթը հարթ է, գազաթում ծծակի տեսքով է և գորտնուկավոր: Ունի անգույն կարճ ոտիկ, որը հեշտությամբ կոտրվում է: Սունկը ԼՂՀ-ում տարածված տեսակ է:

Puccinia acetosae – Մնկի զարգացման ընթացքում ձևավորվում են ուրեդինիոսպորներ և տելիոսպորներ: Ուրեդինիումները տեղակայված են տերևների զույգ մակերեսներին, կլորավուն են, ցրված և դարչնագույն: Ուրեդինիոսպորները կլորավուն են կամ ձվաձև, դեղին են, թաղանթը հազվադեպ գորտնուկավոր: Տելիումները նման են ուրեդինիումներին, բայց մուգ դարչնագույն են: Տելիոսպորներն էլիպտիկալ են տանձաձև, գազաթում կլորացած, երբեմն ստորին բջջակը երկար է վերին բջջակից, միջուկները թույլ է արտահայտված, թաղանթը գազաթում ծծակի տեսքով է և գորտնուկավոր: Սունկը ԼՂՀ-ում տարածված տեսակ է:

Ovularia monosporia:

Ախտահարումները մուգ կարմրավուն են, փոքր, կլորավուն կետիկներով, կամ հաճախ մինչև 1սմ տրամագծով կլորավուն, գորշ և կենտրոնում առավել բաց գունավորություն ունեցող և մուգ կարմրավուն եզրագծով: Տերևի ստորին մակերեսին առաջանում է սպիտակ փառ, որտեղ տեղակայված հիֆերում ձևավորվում են թույլ տարբերակված կոնիդիակիրներ՝ խմբերով հավաքված կոնիդիումներով: Կոնիդիումները 2-4 շղթաներով են: Կոնիդիոսպորները ձվաձև են, երկարավուն, ոչ հավասարանկյուն:

Peronospora rumicis: Կեղծ արագողի վարակը ԼՂՀ-ում առանձին օջախներում բնութագրվում է ինտենսիվ ախտահարությամբ: Հիվանդությունը դրսևորվում է աղոտ, թույլ շերտավոր բծերի վրա: Հիվանդ տերևների ստորին մակերեսները ծածկվում են մոխրագույն փառով և աճը կտրուկ դանդաղում է, ինչի հետևանքով տերևները ենթարկվում են ձևափոխությունների: Սունկը տարածվում է անգույն, օվալաձև կոնիդիումներով, որոնք ունեն բարակ մանուշակագույն թաղանթ: Հարուցիչը ձմեռում է բուսական մնացորդներում օօսպորներով:

3. Ընտանիք՝ եղինջազգիներ-Urticaceae, տեր-բույս՝ Urtica urens L.:

Puccinia caricina: Սպերմագոնիումները և էցիդիումները զարգանում են եղինջազգիների վրա, ուրեդինիոսպորներ և տելիոսպորներն անց են կացվում բոշխազգիների վրա: Սպերմագոնիումները խմբերով են, տեղակայված են տերևների զույգ մակերեսներին, մեղրադեղնագույն են: Էցիդիումները շատ մեծ խմբերով են, որոնք տեղակայված են ցողունների, հիմնական ջղերի և

տերևների վրա: Առաջացնում են ուժեղ ձևափոխություն: Էցիդիումները բաժականման են, դեղին, պերիդիումի ետծալաված սպիտակ ծայրով: Էցիդիոսպորները կլորավուն են կամ բազմանկյուն, բաց նարնջագույն, մանր փշիկապատ: Ուրեդինիումները տերևների ստորին մակերեսներին են, օվալաձև են, փքված, բաց գորշավուն, երկար ժամանակ մնում են էպիդերմիսով ծածկված: Տելիումները տեղակայված են տերևների ստորին մասում, մուգ դարչնագույն են: Տելիոսպորները սովորաբար քորոցանման են, բաց գորշավուն, թաղանթը հարթ է, ոտիկը ամուր և դեղնավուն:

Erysiphe urticae – Սունկն ախտահարում է եղինջագգիները: Միցելիումը տեղակայված է առանձին՝ իրարից զատ օջախներում: Հիմնականում ծածկում է տերևի վերին մակերեսը՝ մասնակի կամ ամբողջությամբ: Կլեյստոտեցիումներն ունեն բազմաթիվ պայուսակներ և հավելումներ: Նշված սնկով ախտահարված բույսերի մոտ դիտվում է կենսագործունեության պրոցեսների խանգարում, բույսը կորցնում է սննդային և դեղագործական նշանակությունը:

4 Ընտանիք աստղաձաղկազգիներ-Asteraceae, տեր-բույս՝ Taraxacum officinale:

Bremia lactucae: Սնկի հարուցիչները թափանցում են տեր բույսի էպիդերմի մեջ և ձևավորում միջբջջային միցելիում: Բույսի ախտահարված տերևները գունազրկվում են: Տեր-բույսի հյուսվածքներում ձևավորում են օօգոնիումներ և անթերիդիումներ, որտեղ և իրականացվում է ձևեռող սպորի սեռական զարգացումը:

Sphaerotheca tuliginea: Ախտահարվածությունը դիտվել է ամռան ամիսներին՝ տերևների ստորին մակերեսներին, որտեղ առաջանում է սպիտակ այրանման փառ: Որոշ ժամանակ անց տերևաձաձկի այրանման գույնը ստանում է վարդագույն կամ դարչնագույն երանգ: Կոնիդիումներն առաջանում են ամռան վերջին, մուգ դարչնագույն կամ սև գունավորության են: Մշտական սպորները դրանք կլեյստոտեցիումներն են: Սունկը ձևեռում է թափված տերևների վրա կլեյստոտեցիումների ձևով: *Sphaerotheca tuliginea*-ն զարգանում է չոր և տաք եղանակային պայմաններում: ԼՂՀ-ում հայտնաբերվել է 2014թ.

Puccinia taraxaci: Նշված սնկի սպերմագոնիումները ուրեդինիո և տելիոսպորները զարգանում են խատուտիկի վրա: ԼՂՀ-ում սպերմագոնիումներ չեն հայտնաբերվել: Ուրեդինիումները տեղակայված են տերևների վերին մակերեսներին, կլորավուն են, խոշոր, մուգ դարչնագույն, փոշիացող և չեն միախառնվում: Ուրեդինիոսպորները կլորավուն են, դեղնադարչնագույն, փշիկապատ թաղանթով: Տելիումները շատ նման են ուրեդինիումներին, բայց սև գունավորության են, տելիոսպորներն երկարավուն են, երկբջիջ, որոնք իրար խիստ նման են, միջնորումը թույլ է արտահայտված, թաղանթը մանր փշիկապատ է, սպորները մուգ դարչնագույն են, ոտիկն անգույն է և կարճ:

Գրականություն

- 1.Ջ.Հ. Աբրահամյան, Ս.Գ Նանագույան, Ա. Ս Ամիրյան - Ֆիտոպաթալոգիա Երևան 2004թ.
- 2.Ս.Գ Նանագույան, Գ.Գ Մարգարյան – ԼՂՀ ժանգասնկեր Ստեփանակերտ. 20015թ
3. Āīðēāīēī Ā.Ī. Āīēāçīē ðāñðāīēē è āīāðīyÿ ñðāāā /Ī-āðēē áēīēīāēē è ýēīēīāēē ïāðāçēðīā ðāñðāīēē/ òēðīīāðīēīāēÿ, ìēēīēīāēÿ, 2012ā., - 124 ñ.
4. Ī.Ē. Āāīāìòüāāā, Ī.Ē. Āüāīñēēē |Āīēāçīē ïēīāīā, ïāìüðē è èàððōīðāēÿ ïðē ððāíāìēēš 1988ā., - 231ñ.
5. <https://hy.wikipedia.org/wiki/Եղինջ>
6. <https://hy.wikipedia.org/wiki/Ավելուկ>
7. <https://hy.wikipedia.org/wiki/Խատուտիկ>

ՀՊՄՀ, Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետ,
2016-2017 ուսումնական տարի,
«մաթեմատիկա» մասնագիտության
մագիստրատուրա II կուրսի ուսանողուհի
Գիտական ղեկավար՝ ֆիզմաթ գիտությունների թեկնածու Նեկտար Հակոբյան

**ԿԱՌՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՕԺԱՆՂԱԿ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ՄԵԹՈՂԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՄ**

Բանալի բառեր՝ օժանդակ կառուցում, կառուցման քայլ, վերլուծություն, հետազոտում:

Ամփոփում

Տրված աշխատանքը նվիրված է կառուցման խնդիրների լուծման օժանդակ կառուցման մեթոդի կիրառությանը որոշ խնդիրներում: Յուրաքանչյուր խնդրում նշված է, թե որ օժանդակ կառուցումն է նպաստել խնդրի լուծմանը:

Лиана Хачатрян

АГПУ, Факультет математики, физики и информатики, 2016-2017 уч. год,

Математика, маг. 2 курс

Научный рук. к.ф.н. Нектар Акопян

**ПРИМЕНЕНИЕ МЕТОДА ВСПОМОГАТЕЛЬНОГО ПОСТРОЕНИЯ В НЕКОТОРЫХ
КОНСТРУКТИВНЫХ ЗАДАЧАХ**

Ключевые слова: вспомогательное построение, шаги построения, анализ, исследование.

Резюме

Данная работа посвящена применению метода вспомогательного построения в некоторых конструктивных задачах. В каждой задаче отмечено с помощью какого вспомогательного построения решается задача.

Liana Khachatryan

ASPU, department of mathematics, physics and computer sciences, 2016-2017 ed. year,

Mathematics, Second year Master's degree

Supervisor: PhD Nektar Hakobyan

THE APPLICATION OF AUXILIARY CONSTRUCTION METHOD IN SOME CONSTRUCTIVE PROBLEM

Key words: auxiliary construction, constructive steps, analysis, investigation.

Summary

The present work is devoted to the application of auxiliary construction method in some constructive problems. In each problem it is noted which auxiliary construction was used.


Կարկինով և քանոնով կառուցման խնդիրները մեծ տարածում ունենին Հին Հունաստանում և դրա արտահայտությունը կարելի է գտնել Էվկլիդեսի «Տարրեր» աշխատության մեջ՝ երկրաչափական պատկերը գոյություն ունեւ, եթե այն հնարավոր էր կառուցել կարկինով և քանոնով: Կառուցման խնդիրների միջոցով հնարավոր է շատ հստակ ձևով պարզել սովորողի իրական երկրաչափական գիտելիքների շրջանակները: Այդ խնդիրների լուծումը գեղագիտական բավականություն է պատճառում սովորողին և նաև ամբողջացնում երկրաչափության իմացությունը [1]:

Կառուցման խնդիրների լուծման **օժանդակ կառուցման** մեթոդը կառուցման խնդիրների լուծման առավել նուրբ, առավել գեղեցիկ եղանակն է: Այն հնարավոր է դիտել որպէս հատումների մեթոդի ընդհանրացում: Խնդիրն այս մեթոդով լուծելիս վերլուծության և (կամ) կառուցման փուլում, ելնելով խնդրի պայմաններից, կատարում են օժանդակ (միջանկյալ) կառուցում, որից հետո խնդրի լուծումը դառնում է գրեթե ակնհայտ [2]:

Դիտարկենք այդպիսի խնդիրների մի քանի օրինակ:

Խնդիր 1: Տրված երկու շրջանագծերի հատման կետով գծել ուղիղ, որն այդ շրջանագծերից անջատում է առավելագույն գումարային երկարությամբ լարեր:


Լուծում: **Վերլուծություն:** Շրջանագծերի հատման կետերից մեկով (A -ով) տանենք որևէ ուղիղ (տե՛ս նկ. 1 ա)), որն այդ շրջանագծերից անջատում է կամայական երկարությամբ լարեր: Շրջանագծերի կենտրոններից տանենք այդ ուղղին ուղղահայացներ (տե՛ս նկ. 1 բ)): Ստացվում է $OO'H'H$ քառանկյունը (ուղղանկյուն սեղանը՝ HH' և OO' սրունքներով, ընդ որում $HH' < OO'$): Որպեսզի HH' կողմը լինի առավելագույն երկարության, անհրաժեշտ է, որ $HH' \parallel OO'$: Մնում է նկատել, որ այդ գումարային երկարությամբ լարերի երկարությունը հավասար է $2HH'$ -ի ($2HH' = 2OO'$):



Կառուցում: **Քայլ 1:** Կառուցենք OO' կենտրոնագիծը (տե՛ս նկ. 1 ա)):

Քայլ 2: Շրջանագծերի հատման A (B) կետով տանենք OO' գուգահեռ ուղիղ (տե՛ս նկ. 1 բ)):

Քայլ 3: Կառուցենք տարված գուգահեռ ուղղի և շրջանագծի X և Y հատման կետերը (տե՛ս նկ. 2 բ)):




Ապացուցում: Ըստ կառուցման 3-րդ քայլի XY ուղիղը որոնելին է, մնում է նկատել, որ $XY = 2OO'$:

Հետազոտում: Կառուցման բոլոր քայլերը իրագործելի են կարկինով և քանոնով, ուրեմն խնդիրը միշտ ունի միակ լուծում: Նկատենք, որ շրջանագծերի հատման A կետի փոխարեն կարելի է վերցնել B կետը:

Այստեղ կառուցման հիմնական տարրը XY ուղիղն է, որը գուգահեռ է OO' կենտրոնագծին: Սակայն այն ի հայտ է գալիս OO' կենտրոնագծի կառուցումից հետո: Հետևաբար, խնդրի լուծման գործընթացում հիմնական տարրը OO' կենտրոնագծի **օժանդակ կառուցումն է:**

Խնդիր 2: Կառուցել ABC եռանկյուն ըստ h_b բարձրության, m_b միջնագծի և արտագծած շրջանագծի R շառավղի:

Լուծում: **Վերլուծություն:** Ենթադրենք խնդիրը լուծված է և ABC եռանկյունը կառուցված է: $BH = h_b$ –ն B գագաթից AC կողմին տարված բարձրությունն է, $BM = m_b$ –ն միջնագիծը: BHM -ը ուղղանկյուն եռանկյուն է, որում հայտնի են h_b էջը և m_b ներքնաձիգը, ուրեմն այդ եռանկյունը կառուցելի է: Կառուցելով BHM եռանկյունը՝ հնարավոր է կառուցել որոնելի ABC եռանկյունը: Նկատենք նաև, որ որոնելի եռանկյանն արտագծված շրջանագծի կենտրոնը գտնվում է M կետից HM ուղղին տարված ուղղահայացի և BHM եռանկյան B կենտրոնով R շառավղով շրջանագծի հատման կետում:



Նկ. 3 ա)

բ)

գ)

Կառուցում: Քայլ 1: Կառուցենք BHM ուղղանկյուն եռանկյունը ըստ $BH=h_b$ էջի և $BM=m_b$ ներքնաձիգի(տե՛ս նկ. 3 բ):

Քայլ 2: M կետով տանենք HM ուղղին ուղղահայաց (տե՛ս նկ. 3 բ):


Քայլ 3: Կառուցենք (B, R) շրջանագիծը (տե՛ս նկ. 3 գ):

Քայլ 4: Կառուցենք (B, R) շրջանագծի և M կետով HM -ին տարված ուղղահայացի O և O' կետերը: (տե՛ս նկ. 3 գ):

Քայլ 5: Կառուցենք (O, R) շրջանագիծը: (տե՛ս նկ. 4 ա):

Քայլ 6: Կառուցենք (O, R) շրջանագծի և HM ուղղի հատման A և C կետերը (տե՛ս նկ. 4 բ):

Քայլ 7: B կետը միացնենք A և C կետերին (տե՛ս նկ. 4 բ): ABC եռանկյունը որոնելին է:



Նկ. 4 ա)

բ)

Ապացուցում: Ըստ կառուցման 1 և 2 քայլերի H և M կետերը պատկանում են որոնելի եռանկյան b կողմին, B -ն համընկնում է եռանկյան գագաթներից մեկին: Ըստ կառուցման 3, 4 և 5 քայլերի O (O')-ն որոնելի եռանկյանն արտագծված շրջանագծի կենտրոնն է:

Հետազոտում: Կառուցման առաջին քայլը իրագործելի չէ, եթե $h_b < m_b$: Կառուցման երկրորդ և երրորդ քայլերը միշտ իրագործելի են: Կառուցման չորրորդ քայլը իրագործելի չէ, եթե $HM > R$: Կառուցման հինգերորդ քայլը միշտ իրագործելի է: Կառուցման վեցերորդ քայլը իրագործելի չէ, եթե $OM \geq R$ ($O'M \geq R$): Այսպիսով, խնդիրը կարող է լուծում չունենալ, եթե նշված պայմանները բավարարված չեն, ունենա մեկ լուծում կամ երկու լուծում:


Այստեղ խնդրի լուծման գործընթացում հիմնական տարրը BHM **օժանդակ եռանկյան կառուցումն է:**

Խնդիր 3: Տրված են a, b գուգահեռ ուղիղներ, դրանց պատկանող մեկական կետ՝ $K \in a, L \in b$ և M կետ, որը չի պատկանում այդ ուղիղներից որևէ մեկի: Կառուցել այդ ուղիղներին պատկանող $P \in a$ և $Q \in b$ կետեր այնպես, որ $KQ \parallel PL$ և PQ ուղիղը պարունակի M կետը:

Լուծում: Վերլուծություն: Ենթադրենք խնդիրը լուծված է. կառուցել ենք (տե՛ս նկ. 5 ա):

այդ ուղիղներին պատկանող $P \in a$ և $Q \in b$ կետեր այնպես, որ $KQ \parallel PL$ և PQ ուղիղը պարունակում է M կետը: Նկատենք, որ $QKPL$ քառանկյունը գուգահեռագիծ է, ընդ որում PQ

ուղիղը հատում է KL ուղիղը KL հատվածի O միջնակետում: Այսինքն՝ PQ ուղիղը համընկնում է MO ուղիղին: Կառուցելով O կետը՝ կունենանք PQ ուղիղը:



Նկ.5 ա)


բ)

Կառուցում: Քայլ 1: Կառուցենք KL հատվածի O միջնակետը (տե՛ս նկ. 5 բ):

Քայլ 2: Կառուցենք MO ուղիղը (տե՛ս նկ. 6 ա):

Քայլ 3: Կառուցենք MO ուղիղի և a և b ուղիղների հատման P և Q հատման կետերը (տե՛ս նկ. 6 բ):

Քայլ 4: Կառուցենք KQ և PL հատվածները (տե՛ս նկ. 6 բ):



Նկ. 6 ա)


բ)

Ապացուցում: Ըստ կառուցման առաջին քայլի O կետը պատկանում է որոնելի ուղիղին:

Ըստ կառուցման երրորդ և չորրորդ քայլերի PQ -ն անցնում է $QKPL$ քառանկյան

KL անկյունագծի միջնակետով, a -ն և b -ն զուգահեռ ուղիղներ են, հետևաբար, $KQ \parallel PL$:

Հետազոտում: Կառուցման երրորդ քայլը իրագործելի չէ, երբ $MO \parallel a(b)$ (տե՛ս նկ. 7 բ): Այդ դեպքում խնդիրը լուծում չունի: Եթե M կետը համընկնում է O -ին (տե՛ս նկ. 7 ա), ապա այդ կետով անցնող ցանկացած ուղիղի (բացառությամբ այն ուղիղի, որը զուգահեռ կլինի տրված ուղիղներին) դեպքում կբավարարվի խնդրի պահանջը, հետևաբար, այս դեպքում խնդիրն ունի անթիվ բազմության լուծումներ: Մնացած դեպքերում խնդիրն ունի միակ լուծում:



Նկ. 7 ա)

բ)

Այստեղ խնդրի լուծման գործընթացում հիմնական տարրը O կետի **օժանդակ կառուցումն** է:

Փրականություն

1. Հարությունյան Ս. Ք., Երկրաչափություն, մաս II, Երևան, Աստղիկ, 2011, 320 էջ:
2. Адлер А., Теория геометрических построений, Ленинград 1940:

ՀՏԴ595

Բելլա Պետրոսյան
Գորիսի պետական համալսարան,
կենսաբանություն 1-ին կուրս
Գիտական ղեկավար կ.գ.թ., դոցենտ Հասմիկ Սաֆարյան

**ՕՐԱԿԱՎՈՐ ՈՐԴԵՐԻ ԷՎՈԼՅՈՒՑԻՑԻՈՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Բանալի բառեր՝ Օղակավոր որդեր, ընդհանուր դեգեներացիա, պրոտոնեֆրիդներ, ստրուկտուրալ, լակունար համակարգ, վակուոլային մերսում, հիրուդոթերապիա:

Ամփոփում

Կենդանի օրգանիզմները համարվում են էվոլյուցիայի հիմնական կրողները: Նրանց տարբեր տեսակների խորը ուսումնասիրության արդյունքում կարելի է էվոլյուցիոն պատկեր ստանալ: Յուրաքանչյուր տեսակ յուրովի է էվոլյուցիայի ենթարկվում, այդ իսկ պատճառով յուրահատուկ հատկություններ, հատկանիշներ, նշանակություն է ձեռք բերում: Արդեն իրականացվել է մարդու գենոմ ծրագիրը, ուսումնասիրություններ են կատարվել տրանսկրիպցիոն, հետտրանսկրիպցիոն մակարդակներում: Այդ ուսումնասիրություններից էլնելով՝ պետք է օգտագործել այնպիսի միջոցներ, որոնք համեմատաբար քիչ բացասական ազդեցություն կթողնեն մարդու գենոմի վրա: Բնությունն անպիտան ոչինչ չի արարում. խնդիրն այն է, որ մարդիկ չզգիտեն ինչպես օգտվել բնության բարիքներից: Առողջության վերականգնման, հիվանդությունների բուժման համար մարդիկ ավելի հաճախ նախապատվությունը տալիս են քիմիական միջոցներին, թեև բնության առաջարկածն ավելի արդյունավետ է:

Белла Петросян
Горисский государственный университет,
биология 1-ый курс
к. б. н. доц. Асмик Сафарян

ЭВОЛЮЦИОННЫЕ ОСОБЕННОСТИ И ПРАКТИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ КРУГЛЫХ ЧЕРВЕЙ

Ключевые слова: круглые черви, общая дегенерация, протонефриды, пиявки, лакунарная система, вакуумный массаж, гирудотерапия.

Резюме

Живые организмы являются основными носителями эволюции. При глубоком изучении различных видов можно получить эволюционную картину. Каждый вид по-своему подвергается эволюции, и потому приобретает своеобразные свойства, признаки, назначение. Уже осуществлена программа генома человека, проведены исследования на транскрипционном и посттранскрипционном уровнях. Исходя из этих исследований, необходимо использовать такие средства, которые оставляли бы относительно меньше отрицательного влияния на генома человека. Природа не создает ничего непригодного. Проблема в том, что люди не знают как использовать дары природы. Для восстановления здоровья, излечения от болезней, люди часто предпочитают химические средства, хотя предложенные природой, более эффективны.

Bella Petrosyan
Goris State University, Biology 1st year
Supervisor: PhD Hasmik Safaryan

EVOLUTIONAL CHARACTERISTICS AND PRACTICAL SIGNIFICATION OF THE ROUNDWORMS

Key words: roundworms, general degeneration, protonephridia, leeches, lacunar system, vacuum massage, hirudotherapy.

Summary

Live organisms are considered the main bearers of evolution. We can get an evolutionary image in the result of their careful study. Each species is affected by evolution uniquely and thus, it takes particular peculiarities and meanings. Human genome program has already been implemented, some research has been made in the transcription and post-transcription levels by molecular level. Based on this research we need to use the means which have fewer negative effects on the human gene. The nature does not create useless things. The problem is that people do not know how to use them. To recover health and treat some diseases people prefer to use chemical means while the nature offers more effective ones.

Օղակավոր որդերն ի հայտ են եկել որդերի ընդհանուր նախնիներից՝ էվոլյուցիոն գործոնների ազդեցության տակ: Նրանց երևան գալը երկրագնդի վրա դիտվում է որպես կենդանիների մորֆոֆիզիոլոգիական կազմավորվածության պատմական զարգացման նոր՝

բարձր մակարդակ: Նրանց ծագման հարցը վերջնականապես լուծված չէ, սակայն կան տարբեր վարկածներ: Տեսություններից մեկում նշվում է, որ օղակավոր որդերի հնագույն տեսակները բնակեցված են եղել ջրային միջավայրում: Ցամաքի ձևավորմամբ պայմանավորված՝ օղակավոր որդերն անցել են այլ կենսամիջավայր: Էվոլյուցիան ընթացել է ջրից դեպի ցամաք: Ցամաքի անցման հետ կապված՝ նրանց մոտ փոփոխվել է նաև սեռական ապարատի կառուցվածքը: Ջուրը համարվում է ավելի բարենպաստ միջավայր, որտեղ արունների և էգերի հանդիպման հավանականությունն ավելի մեծ է, այդ իսկ պատճառով ջրային ձևերը բաժանասեռ են: Ցամաքային ձևերը, որոնց հանդիպման հավանականությունը փոքր է, միջավայրի անբարենպաստ պայմանների հետ կապված՝ հերմաֆրոդիտ են: Նրանց էվոլյուցիայի կարևոր մաս է համարվում նաև սեզմենտավորված մարմինը: Ծագման վերաբերյալ տեսություններից մեկում էլ նկարագրվում է օղակավոր և թարթիչավոր որդերի նմանությունը [1]: Թարթիչավոր որդերի մարմնի ամբողջ երկարությամբ դիտվում են կեղծ մետամերային հատկանիշներ՝ որոշ օրգանների (աղիքի ելուստների, սեռական գեղձերի) կրկնություն և այլն: Ակտիվ տեղաշարժման հետ կապված օղակավոր որդերի մոտ ձևավորվել է արյունատար համակարգ, որն օրգանիզմը մատակարարում է սննդանյութերով և թթվածնով: Նրանց թրթուրը՝ տրոխոֆորան, ունի մարմնի առաջնային խոռոչ, պրոտոնեֆրիդներ, շուրջկլանային նյարդային համակարգ և զարգացման սկզբնական փուլերում՝ կույր աղիք: Օղակավոր որդերի էվոլյուցիայի միջին խումբը, որից հետագայում առաջացել են սակավախոզանները և տզրուկները, համարվում է բազմախոզանների դասը: Օղակավոր որդերի հնէաբանական մնացորդները բավականին քիչ են, սակայն պահպանվել են որոշակի մնացորդներ Քեմբրիի դարաշրջանից: Էվոլյուցիոն տեսանկյունից առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում տզրուկները: Նրանք մտնում են գոտիկավորների ենթատիպի, օղակավոր որդերի տիպի մեջ: Էվոլյուցիոն տեսանկյունից բավականին հետաքրքիր օրգանիզմներ են, համարվում են սակավախոզանների խիստ ձևափոխված հետնորդներ: Մեծամասամբ քաղցրահամ ջրերի բնակիչներ են: Վերջիններիս մի մասը ամֆիբիոնտ ձևեր են, կարող են որոշ ժամանակ ապրել նաև ջրից դուրս՝ խոնավ հողում: Փոքր խումբ կազմող ծովային ձևերը հանդիսանում են ձկների մաշկի մակաբույծներ [1]: Մակաբուծային կենսակերպի հետևանքով փոփոխվել է նրանց կառուցվածքը: Բնական ընտրությունը ընթանում է սննդի ձեռք բերման, պահեստավորման և սեռական համակարգի զարգացման ուղղությամբ: Նրանց մոտ մեծանում է մարսողական համակարգի տարրողությունը, աճում՝ բազմացման օրգանների ծավալը: Որոշների մոտ բազմացման օրգանները զբաղեցնում են մարմնի հիմնական մասը: Կան նաև գիշատիչ ձևեր, որոնք սնվում են այլ կենդանիներով կամ պարբերաբար ծծում են ողնաշարավոր և անողնաշարավոր կենդանիների արյունը [2]: Թեև համեմատած մյուս դասերի հետ տզրուկների դասը քիչ տեսակներ է ընդգրկում՝ շուրջ 400, այնուամենայնիվ բավականին տարածված ու ճանաչված են: Դա կապված է նրանց ունեցած յուրահատուկ կառուցվածքի ու կենսակերպի հետ: Մարմնի երկարությունը տատանվում է 1-ից մինչև 20սմ սահմաններում: Այն տափակ է դորզովենտրալ մեջքափորային ուղղությամբ: Սեզմենտների՝ սուրմուկների, թիվը 30-33 է: Մարմինը պայմանականորեն բաժանվում է 3 մասի: Առջևի մասը ներկայացված է թույլ արտահայտված գլխային թիակով՝ պրոստոմով և 4 գլխային սեզմենտով, որոնք մտնում են ծծիչի կազմի մեջ: Իրանային բաժինը ընդգրկում է 22 սեզմենտ, իսկ մարմնի ետին ծայրը 7 սեզմենտ: Վերջիններս կազմում են ետին ծծիչը: Տզրուկների մոտ նկատվում է աղապտացիայի հետևանքով առաջացած հատկանիշ: Դա կենդանու արտաքին և ներքին հատվածայնության անհամապատասխանությունն է: Արտաքին 3-5 սեզմենտներին համապատասխանում է 1 ներքին սեզմենտ: Այդ հատկանիշը ապահովում է մարմնի ճկունությունը մաշկամկանային պարկի հզոր զարգացման պայմաններում: Տզրուկների մոտ նկատվում է կենսաբանական առաջադիմություն: Մասնավորապես այն իրականանում է ընդհանուր դեգեներացիայի եղանակով: Մակաբույծ կենսակերպի անցած տեսակները տարբերվում են ազատ ապրող ձևերից: Դրանց մոտ տեղի է ունենում կազմավորվածության պարզեցում, ինչը սովորաբար ուղեկցվում է կյանքի ուրույն պայմանների նկատմամբ զանազան հարմարանքների առաջացմամբ: Նրանք չունեն պարապոդներ և այլ հավելումներ: Խոզանները պահպանվել են միայն ստորակարգ ձևերի՝ խոզանակիր տզրուկների մարմնի առաջին հինգ սեզմենտների

վրա: Մաշկամկանային պարկը բաղկացած է միաշերտ էպիթելից և լավ զարգացած մկաններից: Մաշկը հարուստ է լորձ արտադրող գեղձերով և լակունար մազանոթներով: Մաշկամկանային պարկի մեջ մտնում են 3 տեսակի մկաններ՝ արտաքին օղակաձև, անկյունագծային և հզոր երկայնակի շերտերը: Լավ են զարգացած նաև դորզովենտրալ մկանները, որոնք չեն մտնում մաշկամկանային պարկի մեջ: Տզրուկների կառուցվածքային յուրահատկությունը պայմանավորված է երկրորդային խոռոչի զգալի փոփոխություններով՝ մասնակի վերացմամբ, այլ օրգանների փոխարկմամբ՝ լակունների (ծոցերի), սինուսների (ճեղքերի), որոնք կատարում են արյունատար անոթների դեր: Գրեթե բոլոր տզրուկների միջօրգանային տարածքը երկրորդային խոռոչը, լցված է պարենքիմով: Նրանցից ավելի ցածր զարգացման մակարդակի վրա կանգնած՝ տափակ որդերի մոտ, նույնպես միջօրգանային տարածքը լցված է պարենքիմով: Ամենացածրակարգ տզրուկները՝ խոզանավորները, ունեն ցելոմ և լավ զարգացած արյունատար համակարգ: Այն ներկայացված է մեջքային և որովայնային արյունատար անոթներով և նրանց միացնող լայնակի օղակաձև անոթներով: Կնճիթավոր տզրուկների մոտ պարենքիմայի ավելի ուժեղ զարգացման և ցելոմի մասնակի ետաճի հետևանքով երկրորդային խոռոչը փոխարկվել է պարկերի, ճեղքերի, խողովակների համակարգի: Նրանց մոտ գոյացել են 4 գլխավոր լակուններ, որոնցից երկուսը տեղադրված են աղիքի վերին և ստորին կողմերում և շրջապատում են մեջքային և որովայնային արյունատար անոթները, իսկ մյուս երկուսը՝ մարմնի աջ և ձախ կողմերում: Այս լակունները հաղորդակցվում են իրար հետ և ստեղծում ավելի փոքր լակունների ցանց: Այսպիսով, կնճիթավոր տզրուկները միաժամանակ ունեն և՛ լակունար, և՛ արյունատար համակարգեր: Բարձրակարգ ծնոտավորների մոտ դիտվում է պարենքիմայի ավելի ուժեղ զարգացում և ցելոմային լակունների մեջ գտնվող արյունատար անոթների վերացում: Այս դեպքում արյունատար անոթների դերը կատարում է ցելոմային ծագում ունեցող լակունար համակարգը: Արտաթորության օրգանները ներկայացված են զույգ փոփոխված մետանեֆրիդներով: Ցելոմի փոխարկումը լակունար համակարգի պայմանավորել է մետանեֆրիդների կառուցվածքի փոփոխումը: Յուրաքանչյուր նեֆրիդային խողովակի ձազարանման լայնացած ծայրը նեֆրոստումը, սկսվում է համապատասխան որովայնային լակունից: Վերջինս ցույց է տալիս, որ տզրուկների լակուններն իրենցից ներկայացնում են ցելոմի մնացորդներ: Նշված ձազարի նեղ մասը միացած է կույր պարփակված պահեստամանին միզապարկին: Միզատար խողովակը իր կույր ծայրով սկսվում է միզապարկից և բացվում դուրս արտաթորության անցքով՝ նեֆրոպորով: Միզապարկում կուտակվող հեղուկ նյութերը դիֆուզ եղանակով թափանցում են միզատար խողովակ: Էվոլյուցիոն տեսակետից արտաթորության համակարգում դրսևորվել է միզագոյացման առավել բարձր մակարդակ [3]: Տզրուկների էվոլյուցիոն գործընթացը հատկապես վառ դրսևորվեց նրանց բերանային ապարատի ձևափոխություններում, ինչպես նաև թքագեղձի կողմից արտադրվող ակտիվ նյութերի արտադրությամբ: Նրանք արյունը ներծծում են իրենց 3 ծնորտների վրա գտնվող 270 փոքր աստամիկների միջոցով, որոնք միկրոասեղներ են հիշեցնում: Ծնոտների շրջանում գտնվող մկանային օղակների օգնությամբ նրանք սկսում են ակտիվորեն մերսել շրջապատող հյուսվածքները՝ ավելացնելով արյան հոսքը դեպի նրա բերանը. ստացվում է վակուումային մերսում [4]: Ծծելով արյունը տզրուկները ներարկում են իրենց թուփը, որը պարունակում է մի շարք օգտակար կենսաբանորեն ակտիվ նյութեր: Որպեսզի հիրուղոթերապիայի էֆեկտիվությունը բարձրացվի, մի շարք հիրուղոթերապստներ մարդու մարմնի վրա ընտրում են հատուկ ռեֆլեկտոր տարածքներ, որտեղ պետք է տեղադրվեն տզրուկները: Կծած տեղում առաջանում է ոչ մեծ բորբոքային օջախ, որտեղ հավաքվում է օրգանիզմի բջիջների մի ամբողջ բանակ, որը արտադրում է տարբեր ֆերմենտներ, այդ թվում՝ հակաբորբոքային նյութեր, որոնք ոչնչացնում են օրգանիզմի հին, մահացած բջիջները՝ նպաստելով նորերի առաջացմանը [5]: Տզրուկների միջոցով բուժվում են հետևյալ հիվանդությունները՝ գլխացավեր, հիպերտոնիա, ստենոկարդիա (հաճախասրտություն), չբերություն, էնդամետրոզ, թուփք, արյան անոթների վարիկոզ լայնացումներ, արթրոզ, արթրիտ, գլաուկոմա, շագանակագեղձի բորբոքում, գիրություն, լյարդի և ենթաստամոքսային գեղձի աշխատանքի խանգարումներ, մաշկային հիվանդություններ (պսորիազ) և այլն: Կծած տեղում լավանում է արյան, ավշի

միկրոշրջանառությունը, որի խանգարումն ընկած է շատ հիվանդությունների, այդ թվում՝ օրգանիզմի վաղաժամ ծերացման հիմքում: Արյան կորուստը կծած ժամանակ խթանում է օրգանիզմում նոր էրիթրոցիտների սինթեզին՝ վերականգնելով օրգանիզմը բնական ճանապարհով: Տղուկների թթի մեջ մտնող կենսաբանորեն ակտիվ նյութերը այրում են ճարպը՝ նվազեցնելով աթերոսկլերոզի առաջացման ռիսկը, որն իր հերթին կանխում է վաղաժամ ծերացումը: Հիրուդոթերապիայի շնորհիվ նվազում է արյան անոթների ճնշումը. շնորհիվ ոչ միայն նրա, որ տղուկները ծծում են արյան մի մասը, այլ նաև կենսաբանորեն ակտիվ նյութերը վերացնում են անոթների սպազմը: Կարևոր է, որ այդ հիպոտենզիալ էֆեկտը կարող է պահպանվել օրերով, նույնիսկ ամիսներով: Այդ պատճառով, լրիվ ազատվելու համար անոթների սպազմից, հիրուդոթերապիան կարելի է կրկնել շաբաթական 1 անգամ, այնուհետև ավելի ուշ: Տղուկները օգնում են նաև ազատվել ավելորդ կիլոգրամներից: Մաքրում են օրգանիզմը տոքսիններից, բարձրացնում իմունիտետը: Բուժական նպատակներով տղուկներն օգտագործվում են ավելի քան 2000 տարի: Բուժման մեթոդի հայրը, “հիրուդոթերապիա” անվանումը տրվել է հույն բանաստեղծ Նիկադր Կալաֆոնին, ով դեռևս 2-րդ դարում նկարագրել է միջատների և օձի խայթոցների դեմ տղուկների օգտակարության մասին: Հիրուդոթերապիայի առաջին կիրառողները եղել են Գալենը (130-200) և Ավիցենան (980-1037): Միջին դարերում Եվրոպայում տղուկներով բուժումը պաշտոնապես ճանաչված դարձավ, ձեռք բերեց մեծ ժողովրդականություն և ոչ ճիշտ օգտագործման արդյունքում բացասական հետևանքներ ունեցավ: Տղուկները վաճառվում էին գրեթե ամենուր: Բժիշկները տարբեր հիվանդությունների ժամանակ օգտագործում էին հիմնականում տղուկներ: Երբեմն կիրառվում էր անմտածված քանակ՝ մինչև 200 տղուկ մեկ գործընթացի ժամանակ: Այդպիսի բուժման եղանակներն իջեցրին տղուկների դերը և նրանց էֆեկտիվությունը կասկածի տակ դրեցին: Իր ծաղկմանը հիրուդոթերապիան հասավ 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին: Այն ավելի շատ ծաղկում ապրեց Ֆրանսիայում, իսկ հետո՝ Անգլիայում: Նապոլեոնի թողած հիշատակություններից պարզ է դառնում, որ միայն Հունգարիայից մեկ տարվա ընթացքում ներմուծվել է 6 միլիոն տղուկ՝ իր բանակի զինվորների բուժման համար: Ռուսաստանում հիրուդոթերապիան հայտնի է դարձել շնորհիվ խոշոր բժիշկներ Պիրոգովի, Մուրոմովի, Ջախարինի: Բժշկագիտության զարգացման հետ մեկտեղ, տղուկների պահանջը աստիճանաբար նվազեց: Հայտնվեցին այլպիսի դեղեր՝ հակաբիոտիկներ, որոնց միջոցով կարելի էր ազատվել բակտերիաներից՝ հաղթահարել վարակները [4]: Առաջին հակաբիոտիկը՝ պենիցիլինը, հայտնաբերվել է 1929թ.-ին՝ Ալեքսանդր Ֆլեմինգի կողմից, սակայն կիրառության մեջ է դրվել երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Հետաքրքրությունը տղուկների նկատմամբ նոր թափ ստացավ միայն դրանից հետո, որին նշանակալից չափով խթանեց նոր տվյալների հայտնաբերումը, այնպիսի տվյալներ, որոնք ցույց են տալիս, որ տղուկների դերը միայն արյունառությամբ չի ավարտվում: Հայտնաբերվեցին յուրահատուկ բուժիչ ազդեցություն ունեցող ավելի քան 15 կենսաբանորեն ակտիվ նյութեր: Այս հայտնագործությունը բժշկության մեջ մեծ արձագանքներ ունեցավ: Ներկայումս այդ կենսաբանորեն ակտիվ նյութերի թիվը հասնում է ավելի քան 100-ի: Ամերիկայի, Եվրոպայի բժիշկները տղուկներն օգտագործում են ակնաբուժական պրակտիկայի և պլաստիկ վիրահատության ընթացքում, իսկ չինացի բժիշկները՝ աթերոսկլերոզի բուժման մեջ:

Գրականություն

1. Համբարյան Մ.Ե. Անողնաշարավորների կենդանաբանություն, Պրակ 3, Երևան, 1986, 94 էջ:
2. Мамонтов С.Г. Биология, М.; Дрофа, 2012, 544с.
3. Натали В. Ф. Зоология беспозвоночных. Изд. 3-е. М.: Просвещение, 1975, 487с.
4. Жарова Д.Г. Секреты гирудотерапии. М.; Изд. Феникс, 2003, 320с.
5. www.hirudomed.am
6. Силаев А.Б. Антибиотики и их продуценты. М.; Изд. Наука, 1975, 246с.

ՀՏԴ 582.093(479.25)

Անի Հովհաննիսյան
ՎՊՀ Կենսաբանաքիմիական ֆակուլտետ
Կենսաբանություն 4-րդ կուրս
Ղեկավար՝ կ.գ.դ. Զ.Վարդանյան

**Sambucus Nigra L. ՏԵՍԱԿԻ ՋՐԱՅԻՆ ՌԵՃԻՄԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՒԳԱՐՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ**

Բանալի բառեր. սև թանթրվենի, ջրային ռեժիմ, ծաղկման փուլ, կոկոնակալման փուլ, տրանսպիրացիայի ինտենսիվություն:

Ամփոփում

Լոռու մարզի Գուգարքի տարածաշրջանում հատատեղերը արագ զբաղեցվում են *Sambucus nigra* տեսակով, որը պակաս պահանջկոտ է միջավայրի պայմանների նկատմամբ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ որքան ցածր է աճելատեղի խոնավությունը, այնքան սև թանթրվենու բույսի ցողունում և տերևներում ջրի պարունակության տարբերությունը փոքրանում է:

Ани Оганнисян
ВГУ, факультет биологии, 4-ый курс
Науч. рук.: д. б. н. З. Вадянян

ОСОБЕННОСТИ ВОДНОГО РЕЖИМА SAMBUCUS NIGRA L. В РЕГИОНЕ ГУГАРК

Ключевые слов: черная бузина, водный режим, этап процветания, этап бутонирования, интенсивность транспирации.

Резюме

Лесные вырубки Гугарского района быстро восполняются видом *Sambucus nigra* L., который нетребователен к условиям прорастания. Результаты исследований показывают, что чем ниже влажность условий прорастания, тем разница содержания воды в стебле и листьях становится меньше.

Ani Hovhannissyan
VSU, department of Biology, 4th year
Supervisor: PhD Z. Vardanyan

THE CHARACTERISTICS SAMBUCUS NIGRA L.'s WATER REGIME IN THE REGION OF GUGARK

Key words: black elderberry, water regime, the stage of prosperity, bourgeon forming stage, transpiration rate.

Summary

In Gugark region of Lori province, the beforested areas are rapidly filled up with the type of plant called *Sambucus nigra*, which is less demanding of its surroundings conditions. The studies have shown that the lower the humidity of the growing environment is, the less the difference between the water amount in stems and leaves of the black elder is.

20-րդ դարի վերջին կապված էներգետիկ ճգնաժամի հետ Հայաստանում, մասնավորապես Լոռու մարզում, լայն թափ ստացան ապօրինի անտառահատումները, որոնց պատճառով տնտեսապես օգտակար հիմնական անտառ կազմող տեսակներին փոխարինելու եկան պակաս արժեքավոր ձևեր, որոնք լինելով անպահանջկոտ, արագորեն զբաղեցնում են հատատեղերը: Այդպիսի բուսատեսակներից է սև թանթրվենին (*Sambucus nigra*): Լոռու մարզի տարածքում դեռևս քիչ ուսումնասիրություններ են կատարվել սև թանթրվենու բույսի կենսաէկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրման ուղղությամբ¹: Ուստի առաջադրված թեման արդիական է և ունի կարևոր գիտական ու գործնական նշանակություն:

Բույսերի ջրային ռեժիմը արագորեն արձագանքում է էկոլոգիական պայմանների փոփոխություններին: Ուստի էկոլոգիական պայմանների ազդեցության տակ բույսերի նյութափոխանակության ընթացքում տեղի ունեցող տեղաշարժը և ձևաբանական փոփոխությունները սերտորեն կապված են ջրային ռեժիմի հետ ու արտահայտում են նրանց

¹ Վարդանյան Զ., Բայրամյան Լ., Լոռյան Ա., Մխիթարյան Հ.- *Sambucus nigra* տեսակի կենսաէկոլոգիական առանձնահատկությունները Գուգարքի տարածաշրջանում, Երևան, 2015, էջ 82-88

Ֆիզիոլոգիական վիճակը ¹: Դա նշանակում է, որ միկրոկլիմայական տարբեր պայմաններում աճող թանթրվենու կենսագործունեության պրոցեսների նորմալ ընթացքի համար վճռական դերը պատկանում է նրանց ջրային ռեժիմին:

Ելնելով դրանից, մեր կողմից առաջին անգամ աշխատանքներ են կատարվել Գուգարքի հողա-կլիմայական պայմաններում սև թանթրվենու ջրային ռեժիմի առանձնահատկությունների ուսումնասիրությամբ: Մեր կողմից ուսումնասիրվել է ջրի տարբեր ձևերի ընդհանուր, կապված և ազատ ջրի քանակը (% թաց կշռին) բույսի կոկոնակալման և ծաղկման փուլում աճելատեղի տարբեր պայմաններում՝ անտառի վերին եզրին, գոգավոր մասում, հատված անտառահանդակում: Համաձայն ընդունված տեսակետի՝ ազատ ջրի պարունակությունը պայմանավորում է ֆիզիոլոգիական պրոցեսների ինտենսիվությունը, իսկ կապված ձևինը՝ բույսերի դիմացկունությունն անբարենպաստ պայմաններին ²:

Ելնելով այդ տեսակետից, կարելի է սպասել, որ տարբեր էկոլոգիական պայմանները կարող են իրենց կնիքը դնել թանթրվենու տերևներում ազատ և կապված ջրի պարունակության վրա: Փորձերը կատարել ենք երթուղային, կիսաստացիոնար և ստացիոնար եղանակներով (ծովի մակերևույթից 2000-2600մ բարձրություն):

Ուսումնասիրությունների արդյունքները բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Ջրի տարբեր ձևերի պարունակությունը (% թաց քաշից) թանթրվենու տերևներում կախված աճելատեղերի պայմաններից (2015թ., Գուգարք)

Տեսակ	Կոկոնակալում			Ծաղկում		
	Անտառի վերին եզրին	Լանջի գոգավոր մաս	Հատված Անտառա հանդակ	Անտառի վերին եզրին	Լանջի գոգավոր մաս	Հատված Անտառա Հանդակ
Սև թանթրվենի	Ընդհանուր Ջուր					
	83.5	86.7	80.3	81.2	83.4	75.7
	Ազատ Ջուր					
	52.4	56.8	48.4	47.8	49.9	43.5
	Կապված ջուր					
	36.3	33.2	35.5	38.9	38.2	36.2

Աղյուսակ 1-ից երևում է, որ ուսումնասիրվող թանթրվենու կոկոնակալման փուլում ընդհանուր ջրի պարունակությունը տերևներում ամենացածրն է եղել հատված անտառահանդակում՝ 80,3%, իսկ ծաղկման փուլում՝ 75,7%: Ազատ ջրի պարունակությունը տերևներում և կոկոնակալման փուլում, և ծաղկման փուլում գերակշռել է լանջի գոգավոր մասում կազմելով 56.8% և 49.9%: Կապված ջրի քանակությունը տերևներում և կոկոնակալման փուլում, և ծաղկման փուլում գերակշռել է անտառի վերին եզրում՝ կազմելով 36.3% և 38.9%:

Ուսումնասիրությունների արդյունքներից պարզվել է, թանթրվենու բույսի տերևների ջրապաշարը տատանվում է կախված աճելատեղերի միկրոէկոլոգիական պայմաններից: Որքան բարձր է եղել հողի խոնավությունը, այնքան բարձր է արտահայտվել ջրի պարունակությունը տերևներում և հակառակը: Այդ առումով, տերևներում ընդհանուր ջրի քանակը գերակշռել է լանջի գոգավոր մասում, իսկ ամենացածր քանակը գրանցվել է հատված անտառահանդակում:

¹ Ананьина В.М. - Водный режим и коллоидно-химические свойства протоплазмы растений, в связи с особенностями их условиях Полярного Севера, Вильнюс, Изд. "Минтис", 1965, с. 27-30

² Генкель П.А.-физиология жаро и засухоустойчивости растений. М., Наука, 1982, с. 287

Այդ օրինաչափությունը պահպանվել է նաև սև թանթրվենու բույսի ծաղկման փուլում, որը նա հաստատում է հողի ջրապաշարի նշանակությունը տերևների ջրապահովության համար: Այս արդյունքները համընկնում են այլ ուսումնասիրությունների արդյունքների հետ ¹:

Կարելի է ենթադրել, որ փորձերում օգտագործված տարբեր աճելատեղերում թանթրվենու արմատային համակարգի հզորությունը կարող է տարբեր լինել և ազդել նրա ընդհանուր ջրապաշարի վրա: Այլ աշխատանքներով պարզված է, որ հողում ջրի բավարար քանակության դեպքում ասիմիլյատներն արագորեն հոսում են դեպի արմատները ու արագացնում նրանց աճը:

Մեր ուսումնասիրության արդյունքներից պարզվել է, որ ազատ ջրի ամենաբարձր պարունակությունը հատուկ է լանջի գոգավոր մասում աճած բույսերի տերևներին, որոնցում կոկոնակալման փուլում, անտառի վերին եզրում և հատված տարածքում աճածների համեմատությամբ ավելի շատ ազատ ջուր է պարունակվել: Նույն օրինաչափությունը պահպանվել է նաև բույսերի ծաղկման փուլում:

Բազմաթիվ ուսումնասիրությունների տվյալները հաստատում են, որ բույսերի տերևներում կապված ջրի պարունակությունը կախված է օսմոտիկորեն և կոլլոիդների կողմից կլանված ջրի քանակից, որին մասնակցում են ածխաջրերը, ամինաթթուները, սպիտակուցները և այլն ²: Թանթրվենու ջրային ռեժիմի ուսումնասիրության ընթացքում տերևներին զուգահեռ ուշադրություն է դարձվել նաև ցողուններում ընդհանուր ջրի պարունակության վրա: Վերջինս ավելի մեծ տեղեկություններ է տալիս նրանց ջրափոխանակության մասին ³:

Այդ ցուցանիշն ուսումնասիրվել է նաև մեր կողմից, որի շնորհիվ պարզվել է, որ որոշակի կապ գոյություն ունի աճելավայրի պայմանների և թանթրվենու ցողուններում ջրի պարունակության մեջ: (Աղ. 2)

Աղյուսակ 2

Ընդհանուր ջրի պարունակությունը թանթրվենու ցողուններում (% թաց քաշից) կախված նրա աճելատեղերի պայմաններից

Տեսակը	Կոկոնակալում			Ծաղկում		
	Անտառի վերին եզր	Լանջի գոգավոր մաս	Հատված անտառա հանդակ	Անտառի վերին եզր	Լանջի գոգավոր մաս	Հատված անտառա հանդակ
Sambucus nigra	84.8	87.3	81.5	81.7	84.9	75.3

Ստացվում է, որ կոկոնակալման փուլում *Sambucus nigra* տեսակի մոտ ջրի պարունակությունը ցողուններում ամենից բարձրն է լանջի գոգավոր մասում՝ 87.3%, ամենից փոքրը հատված անտառահանդակում՝ 81.5%: Ծաղկման թուլում ամենից մեծն է լանջի գոգավոր մասում՝ 84.9%, ամենից փոքրը հատված անտառահանդակում՝ 75.3%:

Աղյուսակ 2-ից երևում է, որ կոկոնակալման և ծաղկման փուլերում ցողունների ջրապաշարը ամենաբարձրն է հողի ավելի բարձր խոնավությամբ օժտված լանջի գոգավոր մասում, միջին՝ անտառի վերին եզրում և ամենացածրը՝ հատված անտառահանդակում, որն այժի է ընկնում խոնավության համեմատաբար նվազ քանակով: Հարցին տեսականորեն մոտենալիս կարելի է հիշել այն հանգամանքը, հող-բույս-մթնոլորտ համակարգում բույսերի ջրային ռեժիմը գնահատելու համար թերմոդինամիկական ցուցանիշներից ամենահարմարը ջրի պոտենցիալն է ⁴: Ըստ որում՝ ջրային պոտենցիալի մեծությունը և ուղղվածությունը

¹ Белая Г.А. ,Степанова К.Д.- Некоторые элементы водного режима Крупнотравья Камчатки. Владивосток,1973, с. 26-33

Гусев Н.А.- физиология водообмена растений. В. Кн.: "Физиология сельскохозяйственных растений" т.3.М.,Изд-во Моск. Ун-та, 1967,с. 5-86

² Петин Н.С.- Взаимосвязь водного режима и некоторых физиологических преецесов растений, с их продуктивностью в различных условиях водоснабжения. В.сб.:"Водный режим растений, в связи обменом веществ и продуктивностью". М.,Изд-во АНСССР, 1963, с.3-22

³ Белая Г.А. ,Степанова К.Д.- Некоторые элементы водного режима Крупнотравья Камчатки. В кн.: "Комаровские чтения". Владивосток,1973, в.20, с. 26-33

⁴ Белая Г.А. ,Степанова К.Д.- Некоторые элементы водного режима Крупнотравья Камчатки. В кн.: "Комаровские чтения". Владивосток,1973,в.20, с. 26-33

Ананьина В.М.- Водный режим и коллоидно-химические свойства протоплазмы растений, Вильнюс, Изд. " Минтис",1965,с. 27-30

կախված է աճման պայմաններից: Հողի խոնավությունը պակասելու ընթացքում գոլորշիացնող հյուսվածքների և արմատամերձ միջավայրի խոնավության միջև ջրային պոտենցիալի գրադիենտն աճում է, արմատ-տերև գրադիենտը, ի տարբերություն հող-արմատի, ձեռք է բերում բացասական արժեք ու մեծանում է ջրի շարժմանը ցույց տվող դիմադրությունը ¹:

Մեր փորձերում հողի տարբեր խոնավության պայմաններում այդ գործոնները մեծ դեր են խաղացել ցողուններում, խոնավության քանակական փոփոխության պրոցեսում:

Սև թանթրվենու բույսի ցողուններում և տերևներում ջրի պարունակության ցուցանիշների համեմատությունից պարզվում է, որ այն ավելի ցածր է տերևներում:

Հողի ցածր խոնավության պայմաններում ցողունի և տերևների ջրի պարունակության փոքր տարբերությունը խոսում է բույսերի ավելի կայուն ջրապաշարի և ֆիզիոլոգիական վիճակի հարաբերական կայունության օգտին, այսպիսի հետևության կարելի է գալ նաև այլ հեղինակների աշխատանքների հիման վրա ²:

Ստացված տվյալները թույլ են տալիս եզրակացնելու, որ որքան ցածր է աճելատեղի խոնավությունը, այնքան սև թանթրվենու բույսի ցողունում և տերևներում ջրի պարունակության տարբերությունը փոքրանում է: Վեգետացիայի համեմատաբար վաղ փուլում (կոկոնակալում) այդ տարբերությունն ընդհանրապես ավելի մեծ է, քան համեմատաբար ուշ շրջանում (ծաղկում):

Բույսերի ջրային ռեժիմը բնութագրող կարևոր ցուցանիշներից մեկը տրանսպիրացիայի ինտենսիվությունն է, որի մեծությունը գաղափար է տալիս էկոլոգիական պայմանների ազդեցության տակ բույսերի կողմից ջրի ծախսի մասին:

Մեր կողմից ուսումնասիրվել է տրանսպիրացիայի ինտենսիվությունը թանթրվենու բույսերի մոտ կախված աճելատեղերի էկոլոգիական պայմաններից (Աղ. 3):

Աղյուսակ 3

Թանթրվենու տրանսպիրացիայի ինտենսիվությունը (q/q_m^2 ժամ) կախված նրա աճելատեղերի միկրոէկոլոգիական պայմաններից

Տեսակը	Կոկոնակալում			Ծաղկում		
	Անտառի վերին եզր	Լանջի գոգավոր մաս	Հատված անտառա հանդակ	Անտառի վերին եզր	Լանջի գոգավոր մաս	Հատված անտառա հանդակ
Sambucus nigra	1.72	1.43	2.01	2.45	2.83	2.32

Կոկոնակալման փուլում տրանսպիրացիայի բարձր ինտենսիվությամբ օժտված են եղել հատված անտառահանդակում, ցածրով լանջի գոգավոր մասում աճած բույսերը, իսկ անտառի վերին եզրում աճածներն ունեցել են ջրի գոլորշիացման միջին ունակություն:

Ծաղկման փուլում պատկերը փոխվել է, այդ շրջանում տրանսպիրացիայի առավել ունակություն են ցուցաբերել լանջի գոգավոր մասում աճող բույսերը, իսկ հատված անտառատարածքում աճողները այդ ցուցանիշով գրավել են վերջին տեղը:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունների հիման վրա, եզրակացնում ենք, որ Sambucus nigra տեսակը Լոռու մարզի Գուգարքի տարածաշրջանում արագ զբաղեցնում է հատատեղերը: Որքան ցածր է աճելատեղի խոնավությունը, այնքան սև թանթրվենու բույսի ցողունում և տերևներում ջրի պարունակության տարբերությունը փոքրանում է: Վեգետացիայի համեմատաբար վաղ փուլում (կոկոնակալում) այդ տարբերությունն

¹ Ананьина В.М.- Водный режим и коллоидно-химические свойства протоплазмы растений, Вильнюс, Изд. "Минтис",1965,с. 27-30
Белая Г.А. ,Степанова К.Д.- Некоторые элементы водного режима Крупнотравья Камчатки,1973,в.20, с. 26-33

² Гусев Н.А.- физиология водообмена растений. В. Кн.: "Физиология сельскохозяйственных растений" т.3.М.,Издо-во Моск.Ун-та, 1967,с. 5-86

ընդհանրապես ավելի մեծ է, քան համեմատաբար ուշ շրջանում (ծաղկում): Կոկոնակալման փուլում տրանսպիրացիայի բարձր ինտենսիվությամբ օժտված են եղել հատված անտառահանդակում, ցածրով լանջի գոգավոր մասում աճած բույսերը, իսկ անտառի վերին եզրում աճածներն ունեցել են ջրի գոլորշիացման միջին ունակություն: Ծաղկման փուլում տրանսպիրացիայի առավել ունակություն են ցուցաբերել լանջի գոգավոր մասում աճող թանթրվենիները, իսկ հատված անտառատարածքում աճողների մոտ այդ ցուցանիշը նվազել է:

Գրականություն

1. Վարդանյան Ջ., Բայրամյան Լ., Լոքյան Ա., Մխիթարյան Հ.- Sambucus nigra L. Տեսակի կենսաէկոլոգիական առանձնահատկությունները Գուգարքի տարածաշրջանում, Երևան, 2015
2. Ананьина В.М.- Водный режим и коллоидно-химические свойства протоплазмы растений, в связи с особенностями их условиях Полярного Севера. Д окл. науч. конф. Прибалтийских республик и Белорусси " Общие закономерности роста и развития растений". Вильнюс, Изд. " Минтис",1965
3. Белая Г.А. ,Степанова К.Д.- Некоторые элементы водного режима Крупнотравья Камчатки. В кн.: "Комаровские чтения". Владивосток,1973
4. Генкель П.А.-физиология жаро и засухоустойчивости растений. М., Наука, 1982
5. Гусев Н.А.- физиология водообмена растений. В. Кн.: "Физиология сельскохозяйственных растений" т.3.М.,Изд-во Моск.Ун-та, 1967
6. Красулин Н.П.,Панкратова Н.М.- транспирация, как показатель поглощения воды корневой системой древесных растений. Д окл. АНССР,1957
7. Лархер В.-Экология растений.Пер. с.Нем.М.,Мир; 1978
8. Петин Н.С.- Взаимосвязь водного режима и некоторых физиологических процессов растений,с их продуктивностью в различных условиях водоснабжения. В.сб.: "Водный режим растений, в связи обменом веществ и продуктивностью". М.,Изд-во АНСССР,1963
9. Gindel I.-Transpiration of the Aleppo pine (Pinus halepensis Mill.) as a function of environment. Ecology, 1964

УДК 621.3

Сергей Кривоногов
старший преподаватель
ГБОУ ВО НГИЭУ
г. Княгинино

**ИНФОРМАЦИОННАЯ СИСТЕМА «ЭЛЕКТРОННЫЙ ЖУРНАЛ УЧЕТА
ТЕОРЕТИЧЕСКОГО ОБУЧЕНИЯ АКАДЕМИЧЕСКОЙ ГРУППЫ ФАКУЛЬТЕТА ИТИСС ГБОУ
ВО НГИЭУ»**

Ключевые слова: академическая группа, диспетчер, информационная система, информационные технологии, форма, язык программирования.

Аннотация: рассматривается создание информационной системы «Электронный журнал учета теоретического обучения академической группы факультета ИТИСС ГБОУ ВО НГИЭУ». Дано назначение системы ее основные функции. Описано теоретическое обоснование разработки.

Sergey Krivonogov

**INFORMATION SYSTEM OF THE "ELECTRONIC REGISTER OF THE THEORETICAL TRAINING
OF THE GROUP OF THE ACADEMIC FACULTY ITISS GBOU IN NGIEU".**

Key words: academic group, dispatcher, information system, IT, form, programming language.

Abstract: The creation of the information system "Electronic register of the theoretical training of the Group of the academic faculty ITISS GBOU IN NGIEU". Is considered its appointment system, main functions are given. We describe the development of a theoretical basis.

Մերգեյ Վրիվնոգով

**ՏԵՂԵՎՍՏՎՈՒԿԱՆ ՀԱՄԱՎԱՐԳԻ « ITISS GBOU IN NGIEU ՏԵՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԽՍԲՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԱՅՅԱՆ»**

Բանալի բառեր. ակադեմիական խումբ, դիսպեչեր, տեղեկատվական համակարգ, ՏՏ, ձև, ծրագրավորման լեզու:

Համառոտագիր: Տեղեկատվական համակարգի « ITISS GBOU IN NGIEU տեսական ուսուցման ֆակուլտետի ակադեմիական խմբում էլեկտրոնային մատյանի» ստեղծումը: Հաշվի առնելով նրա նշանակությունը հիմնական գործառնությունների համակարգում: Մենք նկարագրել ենք զարգացումը տեսական հիմքի վրա:

Государственное бюджетное образовательное учреждение высшего профессионального образования Нижегородский государственный инженерно-экономический университет (ГБОУ ВО НГИЭУ) является крупным учебным заведением, образовательная деятельность в котором осуществляется на 4 факультетах:

- экономическом;
- информационных технологий и систем связи;
- инженерном;
- транспорта сервиса и туризма.

На факультете ИТИСС ведется подготовка бакалавров, а также обучение по специальности СПО 09.02.04 Информационные системы (по отраслям) – группы 15-45С.

В каждой из этих групп ведется журнал учета посещаемости и успеваемости. На данный момент на факультете применяется обычный бумажный вариант журнала. Староста группы берет журнал из деканата и носит на каждое занятие для того, чтобы преподаватель выставлял оценки и пропуски за занятие. Куратору группы приходится постоянно писать список группы по каждому предмету, что занимает достаточно много времени. Не меньше времени отнимает у куратора выбор пропусков и задолженностей по каждому предмету студента для отчета перед их родителями на родительских собраниях.

Бумажный вариант журнала может повлечь за собой безнадёжную порчу документа, восстановление которого – очень долгая и неприятная процедура. Так как журнал находится у студентов, то они могут написать все, что душе угодно в том числе, даже подправить свои оценки [2, с. 33].

Поэтому целью проекта стала разработка новой автоматизированной информационной системы (АИС) для групп СПО факультета ИТИСС «Электронный журнал». Система состоит из:

1. БД «Академические группы», с таблицами четырех академических групп (поля «Название дисциплины», «№ Семестра», «Вид контроля») – это, фактически, учебный план для каждой группы; таблицу «Перечень групп» (поля «Название группы», «Количество человек», «Куратор») и таблицу «Список группы» (поля: «Номер», «ФИО», «ФИО (Сокращенно)», «Дата рождения», «Домашний адрес», «Дата и № приказа о зачислении» и «Дополнительные сведения»);

2. БД электронных журналов групп на конкретный учебный год, каждая из которых включает в себя таблицы по учебным дисциплинам (поля: «Дата», «Тема занятия», «Количество часов», «Домашнее задание», «ФИО» (по количеству обучающихся студентов),) и таблицу «Сведения об обучающихся группы» (поля: «Номер», «ФИО», «ФИО (сокращенно)», «Дата рождения», «Домашний адрес», «Дата и № приказа о зачислении» и «Дополнительные сведения»);

3. Архивной файловой структуры, куда переносятся журналы по окончании учебного года.

Разработанная система мобильна. Все элементы системы находятся в одной папке, поэтому ее установка заключается в перемещении папки с системой на общий ресурс НГИЭУ, где она планируется использоваться. Для удобства желательно создать ярлык запуска программы на рабочем столе каждого преподавателя[3, с. 33].

Перед началом учебного года[5, с. 63]:

– необходимо занести, или скорректировать в БД учебные планы по каждой группе. Первоначальное занесение производится с помощью формы «Изменение учебного плана». После заполнения полей нажать на кнопку «Внести». В дальнейшем, корректировка семестра и вид контроля происходит с помощью кнопки «Изменить». Дисциплина удаляется с помощью кнопки «Удалить».

– необходимо занести или скорректировать списки групп, добавить пришедших или переведенных студентов, удалить отчисленных. Занесение вновь сформированной группы производится в форме «Перечень группы». Заносятся данные о группе, которые будут отображаться в течение года. Так как журнал создан на СПО, а групп всего 4, поэтому менять только придется количество и имя куратора. Нажатие на кнопку «Обновить» приводит к обновлению данных.

Данные о новом студенте заносятся в форму «Данные о новом студенте» заполняем поля данными и нажимаем на кнопки «Добавить в сведения об обучающихся», «Добавить в список», «Добавить в журнал».

Для удаления отчисленных открываем форму «Удалить студента». Выбрав группу и студента из списка, нажимаем кнопку «Удалить». Студент удаляется из списков группы и БД. Студент удаляется только в новом учебном году.

– необходимо создать электронные журналы групп. Откроем форму «Диспетчер групп» и перейдем к форме «Создание журнала». Вводится название группы, выбирается курс, вводится количество человек и нажатием на кнопку «Создать список», открываются поля для заполнения фамилий. После заполнения полей фамилиями студентов нажимаем на кнопку «Создание журнала». Журнал группы на год создан и занесен в БД. После открывается форма «Сведения об обучающихся группы» для заполнения данных о студентах. При нажатии кнопки «Вывести ФИО» столбец ФИО (сокращенно) заполнится автоматически. Заполнив данные о студентах, нажимаем сначала кнопку «Обновить», а потом кнопку «Занести список».

В течение учебного года система обеспечивает ввод оценок и пропусков академических занятий по каждому предмету. Для этого преподаватель во время учебного занятия выходит с аудиторного компьютера на общий ресурс, запускает программу WindowsFormsApplication

1. Перейдя к журналу, выбрав группу автоматически открываем форма «Журнал группы». Автоматически открывается форма «Текущие данные по дисциплине» с помощью кнопки «Заполнить» заполняется окно данными. Заполнив поля оценками и/или пропусками, нажимаем

кнопку «Урок окончен!». Данные заносятся и сохраняются в БД Электронный журнал группы[4, с. 45].

Система также обеспечивает просмотр задолженностей, оценок и пропусков студентов по любой дисциплине. С помощью формы «Долги студентов» можно посмотреть, какие долги у студента по предмету. Выбрав номер группы, название предмета и фамилию студента можно узнать по какой теме урока у студента стоят «2» и «н».

Кнопка «Количество пропусков» показывает общее количество «н» по предмету, а кнопка «Средний балл» высчитывает средний бал данного студента.

По окончании года все данные которые вводились в течение года, перемещаются в Архив с номером группы и годом. Для этого нужно перейти в форму «Архивирование». В поле «Группа» нужно выбрать номер группы и нажать на кнопку «Архивировать».

Электронный журнал будет доступен преподавателям и работникам деканата. С помощью электронного журнала можно вывести, данные о количестве пропущенных студентом занятий, о полученных оценках, об образовавшихся текущих задолженностях.

Можно будет вывести:

- текущие задолженности выбранного студента по выбранному предмету;
- количество пропусков выбранного студента по выбранному предмету;
- рассчитать средний бал успеваемости выбранного студента по выбранному предмету;

В электронном журнале автоматически выводится средний бал по предмету. Таким образом, перед глазами педагога встает ясная картина успеваемости конкретного студента. Кроме этого, выставляются все текущие оценки и выставляются они ежедневно.

Список литературы

1. Абрамов Г.В., Медведкова И.Е., Коробова Л.А. Проектирование информационных систем. – М.: ВГУИТ, 2012. – 172с. – [Режим доступа: <http://www.knigafund.ru/books/172735> ЭБС "КнигаФонд, по логину и паролю].
2. Алиев И.М., Горелов Н.А., Ильина Л.О. Экономика труда. – М.: Юрайт, 2011. – 672 с.
3. Архитектура информационных систем / Б. Я. Советов, А. И. Водяхо, В. А. Дубенецкий, В. В. Цехановский. – М.: Издательский центр «Академия», 2012. – 288с. [http://www.academia-moscow.ru/reader/?id=38791 ЭБ ИЦ «Академия», по логину и паролю]
4. Батоврин В. К. Толковый словарь по системной и программной инженерии. –М. : ДМК Пресс. – 2012 г. – 280 с.
5. Борзов Ю.В. Методы тестирования и отладки программ ЭВМ. – Р.: ЛГУ им. П. Стучки, 2009. – 600 с.
6. Бронин Е.И. Принципы построения и архитектура САПР. – М.: Мир, 2009. – 300 с.
7. Вермишев Ю.Х. Основы автоматизации проектирования. – М.: Бином, 2008. – 292 с.

ՀՏԴ 581.1

Գայանե Համբարյան
ՎՊՀ Կենսաբանաքիմիական ֆակուլտետ
Կենսաբանություն 3-րդ կուրս
Ղեկավար կ.գ.դ. Զ.Վարդանյան

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՄՐՏԱՎԱՐՂԻ ՈՐՈՇ ԷԿՈԼՈԳՈՖԻԶՈԼՈԳԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԼՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ

Բանալի բառեր. կովկասյան մրտավարդ, ռելիկտային տեսակ, տերևային մակերես, տրանսպիրացիա, միկրոկլիմայական պայմաններ:

Ամփոփում

Լռու մարզի տարածքում կովկասյան մրտավարդը երրորդական-չորրորդական ժամանակներից մեզ հասած ռելիկտային տեսակ է, որը այսօր գգում է պահպանության կարիք: Կովկասյան մրտավարդի մոտ տրանսպիրացիայի ինտենսիվությունը բարձր է ընթանում հատված անտառահանդակներում կոկոնակալման փուլում, իսկ ծաղկման փուլում՝ լանջի գոգավոր մասում: Կովկասյան մրտավարդի մոտ տերևային մակերեսը կոկոնակալման փուլում բարձր է անտառի վերին եզրում, իսկ ծաղկման փուլում՝ լանջի գոգավոր մասում:

Гаяне Амбарян
ВГУ, Факультет биохимии,
Биология3,
Науч.рук.:к.б.н. З. Варданян

НЕКОТОРЫЕ ЭКОФИЗИОЛОГИЧЕСКИЕ ПОКАЗАТЕЛИ КАВКАЗСКОГО РОДОДЕНДРОМА В ОБЛАСТИ ЛОРИ

Ключевые слова: кавказский рододендром, реликтовый вид, поверхность листа, транспирация, микроклиматические условия

Резюме

На территории Лорийской области Кавказский Рододендром представлен реликтовым видом третичного-четвертичного периода. На данном этапе необходима защита вида. Интенсивность транспирации наиболее высока на лесных вырубках в фазе бутонизации, а в фазе цветения – пологих склонах. В фазе ботонизации листовая поверхность наиболее развита на верхней границе леса, а в фазе цветения- на пологих склонах.

Gayane Hambaryan
VSU the faculty of Chemistry and Biology
Biology 3rd year student
Supervisor PhD Z. Vardanyan

SOME ECOPHYSEOLOGICAL INDICATORS OF THE Rhododendron caucasicum L. IN THE LORI REGION

Key words: Rhododendron caucasicum L., relict type, leaf surface, transpiration, microclimatic conditions.

Summary

In the territory of Lori region the type of Rhododendron caucasicum L., which reached us from old times, is a relict type which needs to be preserved nowadays. The intensity of vaporization of the caucasion rhododendron is high during the budding phase in the deforested parts (sections), yet during the blossoming phase- in the incaved part of the slope . The leaf surface of the caucasion rhododendron is high in the forest ledge during the budding phase, and during the blossoming phase – in incaved part of the slope.

Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության ռազմավարության և գործողությունների ծրագրում 1999 թ. հատկապես կարևորվում է ԲՀՊՏ-ների դերը կենսաբազմազանության պահպանության ապահովման գործում: Ռազմավարության մեջ ամրագրված է, որ բնության և նրա բաղադրիչների պահպանության կայուն երաշխիք են հանդիսանում բնության հատուկ պահպանվող տարածքները: լռու մարզում հատուկ պահպանվող տարածքներին է պատկանում Մրտավարդենիների պուրակը, որը հիմնվել է 1959թ. ՀՀ Մինիստրների խորհրդի որոշումով ¹:

Հետազոտության նպատակն է եղել ուսումնասիրել ռելիկտային կովկասյան մրտավարդի կենսաէկոլոգիական առանձնահատկությունները, տարածվածությունը, Մրտավարդենիների

¹ Варданян Ж.А. Дендрология, Ереван 2005. 370 с. (на арм. языке)
ООПТ Республика Армения // Министерство охраны природы РА, Эколур, Ереван, 2007

պուրակի վիճակը: Նշված նպատակի իրականացման համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- .բացահայտել ռելիկտային մրտավարդի տարածման արեալի ներկայիս վիճակը,
- .ուսումնասիրել կովկասյան մրտավարդի կենսակոլոգիական առանձնահատկությունները աճելավայրի տարբեր պայմաններում.
- .ուսումնասիրել կովկասյան մրտավարդի ֆիզիոլոգիական որոշ ցուցանիշների կախվածությունը աճելավայրի միկրոէկոլոգիական պայմաններից:

20-րդ դարի 60-ականներից առաջին անգամ է ուսումնասիրվել ռելիկտային մրտավարդի վիճակը Լոռում մարզի տարածքի անտառներում:

Հետազոտման օբյեկտ են համարվել Լոռու մարզի Մարգահովիտի Մրտավարդենիների պուրակը, որը հիմնադրվել է 1959 թ.: Գուգարքի տարածաշրջանում դեռևս 1959 թ. կազմավորվել են երկու արգելավայր, մեկը Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների հյուսիսահայաց լանջերին ծովի մակերևույթից 2200-3000 մ բարձրության սահմաններում, մոտ 2000 հեկտար մակերեսով Կովկասյան մրտավարդի, իսկ մյուսը «Դիլիջան» ազգային պարկի անտառների հարևանությամբ անտառի վերին սահմանը ընդգրկող 3368 հա մակերեսով Մարգահովիտի (ՀՍՄՀ .Ս.Ս. 29.02.թ. թիվ և 16.11.1959թ. թվ 75 որոշումներ): Ռելիկտային կովկասյան մրտավարդի թփուտները հանդիպում են նաև Հալապ լեռնաշղթայի հյուսիսահայաց լանջերին՝ 2200-2800 (3000) մ բարձրությունում ¹:

Լոռվա մարզում ենթալպյան գոտու կովկասյան մրտավարդի ուսումնասիրությունները տարվել են երթուղային, կիսաստացիոնար և ստացիոնար եղանակներով (ծովի մակերևույթից 2000-2600 մ բարձրություն): Ընդ որում, երթուղային հետազոտությունները տարվել են այն վայրերում, որտեղ գտնվում են մրտավարդի հիմնական ասոցիացիաները, իսկ կիսաստացիոնար և ստացիոնար աշխատանքները ընդգրկվել են մրտավարդի ամենատարածված վայրերից Վանաձորի և Մայմեխի շրջակայքի անտառային և ենթալպյան գոտիները:

Երթուղային և կիսաստացիոնար ուսումնասիրության ժամանակ մրտավարդի հաշվառման, գույքագրան, ինչպես նաև կազմի ու կառուցվածքի պարզաբանման նպատակով կատարվել են ֆիտոցենոտիկ բազմաթիվ գրառումներ: Այդ ընթացքում յուրաքանչյուր ասոցիացիայում որոշվել է տեսակային կազմը, բույսերի առատությունը, հարկայնությունը, բարձրությունը, ֆենոփուլերը և այլն:

Ստացիոնար հետազոտությունները տարվել են մրտավարդի աճելատեղերի տարբեր էկոլոգիական պայմաններում՝ հատված անտառահանդակում, անտառի վերին սահմանում և լանջի հյուսիսային զոգավոր մասում: Ուսումնասիրվել են կովկասյան մրտավարդի կենսամորֆոլոգիական որոշ հարցեր՝ կապված աճման ու զարգացման առանձնահատկությունների հետ ²:

Էկոլոգիաֆիզիոլոգիական առանձնահատկությունների պարզաբանման դաշտային և լաբորատոր ուսումնասիրությունները կատարվել են ընդունված մեթոդներով: Այդ նպատակով տվյալ տարածքի տարբեր մասերում աճած բույսերից ընտրվել են 12-15 տիպիկ անհատներ, որոնց վրա դրվել են փորձերը: Որոշ փորձեր (օրինակ ֆոտոսոսնթեզի և տրանսպիրացիայի ինտենսիվությունը) կատարվել են անմիջապես դաշտում: Մյուս որոշումների համար անհրաժեշտ բուսանյութը վերցնելուց և ֆիքսելուց հետո այն անմիջապես տեղափոխվել է փորձասենյակ: Փորձերը կատարվել են 3-4 կրկնողությամբ՝ անտառի վերին եզրին, լանջի զոգավոր մասում, հատված անտառահանդակում:

Rhododendron L. ցեղը պատկանում է հավամրգածաղկավորների *Ericales* կարգի Հավամրգազգիների ընտանիքին՝ *Ericaceae*: Ընտանիքն ընդգրկում է 70 ցեղի պատկանող շուրջ 150 տեսակ՝ տարածված երկրագնդի ամենատարբեր բնական գոտիներում: Հայաստանում

¹ ООПТ Республика Армения // Министерство охраны природы РА, Экологур, Ереван, 2007
Тахтаджян А.Л. Ботанико – географический очерк Армении // Тр. БИН АрмФАН СССР, 1941, 2, 180с.

² Варданян Ж.А. Дендрология, Ереван 2005. 370 с. (на арм. языке)
Сукачев В.Н., Зонн С.В. Методические указания к изучению типов леса, М., 1961, 144с.

աճում է 1 ցեղի 1 ներկայացուցիչ, դա կովկասյան մրտավարդն է- Rhododendron L.-ը, որը ներկայացված է մեկ տեսակով Կովկասյան մրտավարդ R. Caucasicum L.:

Ըստ վերջին գույքագրման տվյալների, նրա զբաղեցրած տարածությունը Հայաստանում կազմում է մոտ 2000 հա ¹: Այդ բուսուտը հայտարարված է արգելավայր, իսկ մրտավարդը՝ որպես երկրորդական դարաշրջանի պահպանված ռելիկտ և մեծ հետաքրքրություն ներկայացնող տեսակ: Գրանցված է Հայաստանի կարմիր գրքում (նկ.1) ²:



Կովկասյան մրտավարդի ընդհանուր տեսքը

Մրտավարդը այն մշտադալար սակավաթիվ տեսակներից է, որոնք չորրորդական դարաշրջանի սառցապատման ընթացքում պահպանվել են ձյան շերտի տակ: Իր բնական տարածման սահմաններում ներկայումս էլ այն ձմեռում է նույն եղանակով:

Ներկայումս պալեոգեն-նեոգեն ժամանակաշրջանի մնացորդային թփուտներ են, հանդիպում են Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին, մերձալպյան մարգագետնային գոտում՝ մոտ 2000 հա տարածքով: Այդ տարածքում հիմնադրվել է Մրտավարդենիների պուրակը: Արգելավայրը կազմակերպվել է 1959 թ. հունվարին: Մրտավարդենիների մացառուտները տարածված են առավելապես 1900-2200 մ բացարձակ բարձրությունների սահմաններում, անտառի վերին սահմանի մոտ: Մրտավարդուտը դկորատիվ տեսակներից Հայաստանի առաջին գեղեցիկ թփերից մեկն է, որն այժմ է ընկնում 20 սմ տրմագծով վահանիկի մեջ հավաքված խոշոր սպիտակ ծաղիկներով: Սա Հայաստանի կաշեպատ, մշտականաչ տերևներով թփերից մեկն է: Մրտավարդի առավել նշանակալի զանգվածը գտնվում է Փամբակի լեռների հյուսիսային և Մայմեխ լեռան լանջերին: Առավել փոքր զանգվածներ կան նաև Չքնաղ գետի ավազանում ³:

Մեր կողմից ուսումնասիրվել են կովկասյան մրտավարդի էկոլոգաֆիզիոլոգիական որոշ ցուցանիշներ՝ տերևային մակերեսի մեծությունը, տրանսպիրացիայի ցուցանիշը: Էկոլոգաֆիզիոլոգիական ցուցանիշները ուսումնասիրել ենք բույսերի զարգացման տարբեր ֆենոֆուլերում փորձելով համեմատել ցուցանիշների արժեքները և աճման տեմպերը: Տարբեր աճելավայրերում զարգացման տարբեր ֆենոֆուլերում կովկասյան մրտավարդի բույսերի մոտ տերևային մակերեսի մեծության արժեքները գրանցված են Թիվ 1 աղյուսակի մեջ:

¹ Варданян Ж.А. Дендрология, Ереван 2005. 370 с. (на арм. языке)

Гроссгейм А.А. Очерк растительного покрова Закавказья. (Азербайджана, Армении и Грузии) // Тифлис, 1930, 40с. (Закавказье. опытно-исслед. ин-т водного хоз-ва).

Сосновский Д.И. Основные формы растительного покрова Кавказа в их географическом размещении // Сов. бот., 1947, 15. N6, С. 318-328

² Тахтаджян А.Л. Ботанико-географический очерк Армении // Тр. БИН АрмФАН СССР, 1941, 2, 180с.

Хуршудян П.А., Марджанян Ф.С. Леса и лесной фонд Армянский ССР // Биол. журн. Армении (АХ Арм.ССР), 1972, т. 25, N2, С. 69-74

³ Варданян Ж.А. Дендрология, Ереван 2005. 370 с. (на арм. языке)

Хуршудян П.А., Марджанян Ф.С. Леса и лесной фонд Армянский ССР // Биол. журн. Армении (АХ Арм.ССР), 1972, т. 25, N2, С. 69-74

Աղյուսակ 1

Կովկասյան մրտավարդի տերևային մակերեսը տարբեր աճելավայրերում (հաշված են բոլոր տերևները մեկ ընձյուղի հաշվով, 2015 թ. տվյալները միջին մեկ տերևի հաշվով սմ²)

Տեսակը	Կոկոնակալում			Ծաղկում		
	Անտառի վերին եզրին	Լանջի գոգավոր մաս	Հատված անտառա հանդակ	Անտառի վերին եզրին	Լանջի Գոգավոր մաս	Հատված անտառա հանդակ
Կովկասյան մրտավարդ	14.3	16.2	13.6	16.4	20.1	14.9

Աղյուսակի տվյալներից երևում է, որ կովկասյան մրտավարդի մոտ կախված աճելավայրի պայմաններից և զարգացման փուլից տերևային մակերեսի մեծությամբ լինում է տարբեր: Կոկոնակալման փուլում լանջի գոգավոր մասում բույսերի տերևային մակերեսը անտառի վերին եզրում աճածների համեմատությամբ ավելին է 1.13 անգամ, իսկ հատված անտառահանդակում աճած բույսի համեմատությամբ 1.19 անգամ: Այդ նույն օրինաչափությունը նկատվում է նաև ծաղկման փուլում հետազոտության ենթարկված բույսերի մոտ, համապատասխանաբար՝ 1.22 և 1.34 անգամ:

Կարելի է ենթադրել, որ անտառի հատված տարածքում աճող բույսերի ասիմիլացիոն ապարատի թույլ զարգացվածությունը հողից ջրի ուժեղ գոլորշիացման և նրանում ավելի պակաս խոնավության հետևանք է, որի դեպքում դանդաղում է ինչպես տերևների աճը, այնպես էլ նորերի առաջացումը:

Բույսերի ջրային ռեժիմը բնութագրող կարևոր ցուցանիշներից է տրանսպիրացիայի ինտենսիվությունը, որի մեծությունը վկայում է էկոլոգիական պայմանների ազդեցության տակ բույսերի կողմից ջրի ծախսի մասին: Կախված աճելավայրի պայմաններից մրտավարդի բույսերի մոտ գրանցվել են տրանսպիրացիայի ինտենսիվության տարբեր ցուցանիշներ (Աղ.2)

Աղյուսակ 2

Կովկասյան մրտավարդի տրանսպիրացիայի ինտենսիվությունը ($q/\eta \text{մ}^2/ժ$) կախված աճելատեղերի միկրոէկոլոգիական պայմաններից 2010 թ

Տեսակ	Կոկոնակալում			Ծաղկում		
	Անտառի վերին եզր	Լանջի գոգավոր մաս	Հատված անտառա հանդակ	Անտառի վերին եզր	Լանջի գոգավոր մաս	Հատված անտառա հանդակ
Կովկասյան մրտավարդ	1.67	1.31	1.95	2.29	2.68	2.19

Տրանսպիրացիայի ինտենսիվության այս փոփոխությունները, որոնք նկատվում են փորձաբույսերի մոտ, պայմանավորված են նրանց կողմից իրենց ջրային հաշվեկշիռը կարգավորելու հատկությամբ: Հողի խոնավության ամենացածր ցուցանիշը գրանցվել է անտառի հատված մասում, ուստի՝ տրամաբանական է, որ տրանսպիրացիայի ինտենսիվության ամենաբարձր տվյալները գրանցվել են հենց այդ աճելատեղի բույսերի մոտ: Տրանսպիրացիայի ինտենսիվությունը կախված է ոչ միայն հողի խոնավությունից, այլև բազմաթիվ ներքին գործոններից, դիմադրողականությունից, ջրային անբավարարվածությունից:

Համեմատելով փորձնական բույսերի տրանսպիրացիայի ինտենսիվությունը, կարելի է նկատել, որ ջրի ծավալը գոլորշիացման միջոցով ավելի ինտենսիվ է ընթանում հատված

անտառահանդակներում կոկոնակալման փուլում, իսկ ծաղկման փուլում՝ լանջի գոգավոր մասում:

Մեր կողմից կատարած ուսումնասիրությունների հիման վրա եկել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Լոռու մարզի տարածքում կովկասյան մրտավարդը երրորդական-չորրորդական – ժամանակներից մեզ հասած ռելիկտային տեսակ է, որը այսօր զգում է պահպանության կարիք:

2. Կոկոնակալման փուլում լանջի գոգավոր մասում բույսերի տերևային մակերեսը անտառի վերին եզրում աճածների համեմատությամբ ավելին է՝ 1.13 անգամ, իսկ հատված անտառահանդակում աճած բույսի համեմատությամբ՝ 1.19 անգամ: Այդ նույն օրինակափությունը նկատվում է նաև ծաղկման փուլում հետազոտության ենթարկված բույսերի մոտ, համապատասխանաբար՝ 1.22 և 1.34 անգամ:

3. Բույսերի տրանսպիրացիայի ինտենսիվությունը բարձր՝ $1.95 \text{ գ/դմ}^2/\text{ժ}$ է ընթանում հատված անտառահանդակներում կոկոնակալման փուլում, իսկ ծաղկման փուլում՝ լանջի գոգավոր մասում $2.68 \text{ գ/դմ}^2/\text{ժ}$:

Գրականություն

1. Варданын Ж.А. Дендрология, Ереван 2005. 370 с. (на арм. языке)
2. Гроссгейм А.А. Очерк растительного покрова Закавказья. (Азербайджана, Армении и Грузии) // Тифлис, 1930, 40с. (Закавк. опытно-исслед. ин-т водного хоз-ва).
3. Мхитаря А. К. задачи охраны *Rhododendron caucasicum pall* в Лорийской марзе Армении
4. Сосновский Д.И. Основные формы растительного покрова Кавказа в их географическом размещении // Сов. бот., 1947, 15. №6, С. 318-328
5. ООПТ Республика Армения // Министерство охраны природы РА, Эколур, Ереван, 2007.
6. Тахтаджян А.Л. Ботанико –географический очерк Армении// Тр. БИН АрмФАН СССР, 1941, 2, 180с.
7. Хуршудян П.А. , Марджанян Ф.С. Леса и лесной фонд Армянский ССР // Биол . журн. Армении (АХ Арм.ССР) ,1972, т. 25, №2, С. 69-74
8. Сукачев В.Н., Зонн С.В. Методические указания к изучению типов леса ,М. , 1961, 144с.

ՀՏԴ 314(479.243)

Արթուր Աբրահամյան
ԱրՊՀ Բնագիտական ֆակուլտետ,
աշխարհագրություն ամբիոն, IV կուրսի ուսանող
Գիտական ղեկավար՝ ա.գ.թ., դոցենտ՝ Ա. Վ. Գրիգորյան
 Էլ. հասցե՝ artur.abrahamyan.1122@mail.ru

ԼՂՀ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ (XX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՑ ՄԻՆՉԵՎ 2015Ք.)

Բանալի բառեր՝ ուրբանիզացում, ժողովրդագրական գործընթաց, բնական աճ, բնական վերարտադրություն, ժողովրդագրական անցում, մարդահամար, մահացության գործակից, ժողովրդագրական քաղաքականություն:

Ամփոփում

ԼՂՀ քաղաքային բնակավայրերում ժողովրդագրական գործընթացների շարժերը պետության զարգացման տեմպերն ուսումնասիրելու ոլորտներից մեկը կարելի է համարել: Այդ շարժերի միջոցով հնարավոր է պարզել հասարակության մեջ քաղաքների դերի աճի, քաղաքաբնակների բաժնի ավելացման, գյուղական և քաղաքային բնակչության հարաբերակցության, քաղաքային ապրելակերպի տարածման գործընթացները: Հոդվածում ներկայացված են հիմնականում ԼՂՀ քաղաքային բնակավայրերի վիճակագրական ցուցանիշները և դրանց վերլուծության հիմքում ձևավորված խնդիրների բացահայտումը:

Артур Абрамян

АРГУ, факультет естественных наук, 4-ый курс

Науч. рук.: к.г.н., доц. Григорян А. В

АНАЛИЗ ДЕМОГРАФИЧЕСКИХ ПРОЦЕССОВ В ГОРОДАХ НКР (С КОНЦА XX ВЕКА ДО 2015 ГОДА)

Ключевые слова: урбанизация, естественный прирост, естественное воспроизводство, демографический переход, коэффициент смертности, демографическая политика.

Резюме

Динамику демографических процессов в городских населенных пунктах НКР можно считать одним из сфер изучения темпов развития страны. В статье в основном представлены статические показатели городских населенных пунктов НКР и проявлены проблемы, которые образовались в основе анализа этих показателей.

Arthur Abrahamyan

ASU, the faculty of natural sciences

Supervisor: PhD Grigoryan

THE ANALYSIS OF THE DEMOGRAPHIC PROCESSES IN THE URBAN AREAS OF THE NKR

Key words: urbanization, demographic process, natural growth, natural reproduction, demographig transition, census, mortality factor, demographic policy.

Summary

The dynamics of demographic movements in NKR urban areas can be considered one of the areas of study of the tempo of development. By the help of these movements it is possible to know the whole of state in society, the addition of people who lives in states and other processes. The article reviewed the main statistical indicators and the indentification of problems and details formed on the basis of their analysis of the urban population were identified.


ԼՂՀ քաղաքային բնակավայրերը քաղաքի կարգավիճակ են ստացել պատմական տարբեր ժամանակահատվածներում: Մայրաքաղաք Ստեփանակերտը որպես քաղաքատիպ բնակավայր հիմնվել է 1847թ.-ին, իսկ 1923թ.-ին ստացել է քաղաքի կարգավիճակ: 1978թ.-ին Ստեփանակերտը մարզային վարչական կենտրոնից բացի նաև համանուն շրջանի կենտրոնն էր¹: Քաղաքային բնակավայրերից Շուշին քաղաքի կարգավիճակ է ստացել 1840թ.-ին, Ասկերանը՝ 1978 թ.-ին (քաղաքատիպ բնակավայր՝ 1967թ.-ից), իսկ մնացած բնակավայրերը քաղաքի կարգավիճակ են ստացել համեմատաբար ուշ՝ 1984 թ.-ից հետո: Այսպես՝

¹ Մելքունյան Ս., Լեռնային Ղարաբաղ (Պատմատնտեսագիտական ուսումնագիր), Երևան, 1990թ., 45-46 էջ:

Մարտունին և Մարտակերտը՝ 1985թ.-ին, Հաղրուրը՝ 1987թ.-ին: 2015թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում հաշվում են 13 քաղաքային բնակավայր:

1926-1939թթ.-ին ԼՂԻՄ-ի բնակչության թվաքանակը 1.2 անգամ ավելացել է, ընդ որում քաղաքային բնակչությունը՝ 1.9 անգամ¹: Եթե 1926թ.-ին քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը կազմում էր 6.6% և 93.4%, ապա 1939թ.-ին քաղաքային բնակչության բաժինը բարձրացավ և կազմեց՝ 10,5%: Այսինքն՝ ԼՂԻՄ-ի ուրբանիզացման գործընթացում նկատվել է քաղաքային բնակչության թեթև աճ: 1939-1959թթ.-ի մարդահամարների արդյունքների համեմատությունը ցույց է տալիս, որ երկրորդ աշխարհամարտը և դրա հետևանքները մեծապես ազդել են ժողովրդագրական գործընթացների վրա²: Նշված տարիների ընթացքում քաղաքային բնակչության թիվն ավելացավ 1.6 անգամ, մինչդեռ գյուղական բնակչությունը պակասեց ավելի քան 30 հազարով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային բնակչության բաժինի փոփոխությունը 1926-2015թթ.



1959-1979թթ.-ին ԼՂԻՄ բնակչության թվաքանակն աճել է 24.3 %-ով, ընդ որում քաղաքային բնակչության աճը կազմել է 22.5%: Շուրջ 20 տարվա ընթացքում քաղաքային բնակչության բաժինը 20.7%-ից դարձավ 43.2%³: Այդ տարիներին ԼՂԻՄ քաղաքային բնակչության տեսակարար կշռում ավելացավ Ստեփանակերտի բնակչության բաժինը, որին գումարվեց նաև 1978թ.-ին շրջկենտրոն դարձած Ասկերան քաղաքի բնակչության բաժինը: ԼՂԻՄ-ի ուրբանիզացման գործընթացում նկատվելի տեղաշարժեր գրանցվեցին 1985թ.-ից սկսած, երբ քաղաքային բնակավայրերի շարք մտան Մարտունին և Մարտակերտը, ապա Հաղրուրը: Արդեն 1979-1989թթ.-ի ընթացքում ԼՂԻՄ-ի քաղաքային բնակչության բաժինը գերազանցեց գյուղական բնակչության բաժինն, կազմելով համապատասխանաբար 51.7% և 48.3%⁴: Նշված ժամանակահատվածում ադրբեջանցիների տեսակարար կշիռը նվազեց, պայմանավորված 1988թ.-ի ադրբեջանահայկական հարաբերությունների լարվածությամբ, որի հետևանքով շատ ընտանիքներ հեռացան մարզի տարածքից: Միևնույն ժամանակ ադրբեջանցիների կողմից Սումգայիթում, Բաքվում ու այլ վայրերում կազմակերպված հայերի ջարդերի հետևանքով հազարավոր փախստականներ ապաստան գտան ԼՂԻՄ տարածքում, մասնավորապես 1989թ.-ի սկզբի դրությամբ 8.5 հազ. հայեր հանգրվան գտան Ստեփանակերտում⁵: Այդ թվականներից սկսած հանրապետության քաղաքային բնակչության

¹ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2006-2012թթ., Ստեփանակերտ, 2013թ., - էջ 33:

² Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ատլաս, Երևան, 2009թ., էջ 35:

³ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2006-2012թթ., Ստեփանակերտ, 2013թ., - էջ 32:

⁴ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2006-2012թթ., Ստեփանակերտ, 2013թ., - էջ 33:

⁵ Մելքունյան Ս., Լեռնային Ղարաբաղ (Պատմատնտեսագիտական ուսումնագիր), Երևան, 1990թ., - էջ 50:

թվաքանակի փոփոխությունները պայմանավորող գործոնները շատ էին: Նախ՝ 1988թ.-ի լարվածությունը, հետո 1990-1994թթ.-ի ռազմական գործողությունները, սոցիալ-տնտեսական ճգնաժամը ստեղծեցին այնպիսի իրավիճակ, ինչը չէր կարող չանդրադառնալ ԼՂԺՊՐՀ-ի գործընթացների վրա: 1992թ.-ի կեսերից ԼՂԺՊՐՀ-ում տեղի ունեցավ գյուղական բնակչության հոսք դեպի քաղաքային բնակավայրեր՝ մասնավորապես Ստեփանակերտ և Շուշի: Դա էլ ուղեկցվեց քաղաքների համար բնորոշ տնտեսական գործունեության ձևերի տեղափոխմամբ: Այսինքն՝ վերջին 20 տարիներին ԼՂԺՊՐՀ-ի քաղաքային բնակչության թվի աճի տեմպի վրա իր ազդեցությունն ունեցավ բնական վերարտադրությունը: Ուստի, դժվար չէ նկատել, որ ներկայումս հանրապետության քաղաքային բնակավայրերը հայտնվել են ժողովրդագրական անցման երկրորդ փուլում, երբ մահացության գործակիցը շարունակում է նվազել, սակայն ծնելիության գործակիցը նվազում է դրանից էլ ավելի արագ տեմպով, որի հետևանքով բնակչության թվի աճի տեմպերը աստիճանաբար դանդաղում են: 1995-1999թթ.-ին քաղաքային բնակչության բնական աճը տատանվել է 6.2%-4.4%օ, գյուղական բնակչության 2.9%-3.3%օ-ի համեմատ¹:

2006-2014թթ.-ի վիճակագրական տվյալների վերլուծությունը (8 տարվա կտրվածքով) ցույց է տալիս, որ 50 և բարձր տարիքի բնակչության թիվը քաղաքային բնակչության ընդհանուր թվում աճել է 0.05%-ով: Քաղաքային բնակչության թվում աճում է նաև 60 և բարձր տարիքի բնակչության բաժինը: Եվ քանի որ այն զգալի թիվ է կազմում, ուստի բարձրացնում է ամբողջ հանրապետության նույն ցուցանիշը, ինչն էլ ազդում է ԼՂԺՊՐՀ-ի գործընթացական ծերության մակարդակի փոփոխությանը: Այսպես՝ ըստ բնակչության ծերության սանդղակի, երբ 60 և բարձր տարիքի մարդկանց բաժինը ընդհանուր բնակչության մեջ 14%-ից անցնում է, դասվում է ժողովրդագրական ծերության միջին մակարդակի խմբի մեջ: ԼՂԺՊՐՀ-ում նույն ցուցանիշը 2014թ.-ին կազմել է 15.8%, ինչը մոտենում է ժողովրդագրական ծերության բարձր մակարդակին՝ 16-18%-ին²: Հետաքրքիր է այն, որ 2014թ.-ին ԼՂԺՊՐՀ-ի ընդհանուր բնակչության սեռային կազմում տղամարդկանց մասնաբաժինը կազմել է 48.6% կանանց մասնաբաժնի 51.4%-ի համեմատությամբ: Մինչդեռ քաղաքային բնակչության սեռային կազմում կանանց և տղամարդկանց տոկոսային տարբերությունն ավելի է արտահայտված և կազմում է տղամարդկանց համար՝ 47.7% և կանանց համար՝ 52.3%³:

Ուշագրավ է այն փաստը, որ քաղաքային բնակչության բնական աճի ցուցանիշը գյուղականի համեմատությամբ կրկնակի բարձր է: Մասնավորապես 2014թ.-ին ԼՂԺՊՐՀ-ի քաղաքային բնակչության բնական աճը 1000 մարդու հաշվով կազմել է 28 մարդ, իսկ գյուղական բնակչության բնական աճը՝ 4.6 մարդ: Բնակչության բնական աճի ամենաբարձր ցուցանիշը հանրապետությունում գրանցվել է 2008թ.-ի հոկտեմբերի 16-ին Արցախյան մեծ հարսանիքին հաջորդած 2 տարում: Այսպես՝ 2009թ.-ին 1000 բնակչի հաշվով ԼՂԺՊՐՀ-ի քաղաքներում բնակչության բնական աճի գործակիցը տատանվել է 5.4-ից 19.7-ի միջև:

1995-2015թթ. ընկած ժամանակահատվածում ծնունդների թվի աճի վրա մեծ ազդեցություն է գործել նաև մանկամահացության բացարձակ թվի նվազումը: Օրինակ՝ 2011թ.-ին մանկամահացության բաժարձակ թիվը 31 էր: Նույն թիվը 2014թ.-ին նվազել է 10-ով դարձել 21: 2014թ.-ին հանրապետության քաղաքներում բնական աճի բացարձակ թիվը 1995թ.-ի համեմատ աճել է 2.5 անգամ, իսկ քաղաքներում ծնվածների թիվը՝ 1.3 անգամ: 1995-2015թթ.-ի վիճակագրական ցուցանիշներից կարելի է նկատել, որ մահացությունների թվի փոփոխությունը տարբեր ժամանակահատվածներում տարբեր դրսևորումներ է ունեցել: 1995թ.-ին ԼՂԺՊՐՀ-ի մահացության գործակիցը (բնակչության 1000 շնչի հաշվով) թեև դանդաղ, բայց աճի միտում էր դրսևորում: Մահացության ընդհանուր գործակիցը 2001թ.-ին 7.9 մարդուց 2014թ.-ին բարձրացավ և կազմեց 8.8 մարդ, իսկ քաղաքային բնակավայրերում մահացության գործակիցը 1995թ.-ին 8.6 մարդուց 2014թ.-ին նվազեց և կազմեց 7.3 մարդ:

Ծնելիության և մահացության գործակիցների փոփոխությունը ինչ որ չափով ամուսնությունների և ամուսնալուծությունների շարժընթացն է կրում: 1995-2014թթ.-ին

¹ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 1995-1999թթ., Ստեփանակերտ, 2002թ.,-16 էջ:

² _Աշխարհագրության գիտաճանաչողական ներուժը և գործնական կիրառումը (Լ. Վալեսյանի ծննդյան 85 և գիտամանկավարժական գործունեության 55-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր), Երևան, 2011թ.,- 44 էջ:

³ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2008-2014թթ., Ստեփանակերտ, 2015թ.,-էջ 45:

ամուսնությունների թվի համեմատ աճել է նաև ամուսնալուծությունների թիվը¹: Բայց ներկայացված թվերն ինչ որ չափով սինթետիկ են, քանի որ դրանցում չեն արտահայտված չգրանցված ամուսնությունների և ամուսնալուծությունների թվերը: Կարելի է ենթադրել, որ դա պայմանավորված է պետությունից ինչ որ օգնություն ստանալու ակնկալիքով:

Հաշվի առնելով 20-րդ դարի վերջից մինչև 2015թ.-ը քաղաքային բնակավայրերի ժողովրդագրական գործընթացների վերլուծությունները և այդ գործընթացներում նկատվող փոփոխությունների որոշակի հաջորդականությունն ու զարգացման օրինաչափությունները, հարմար է կատարվածն ամփոփել ըստ ժամանակագրական երկու փուլերի՝ 1. 1985-1995թթ., 2. 1996-2015թթ.:

Առաջին փուլին բնորոշ գործընթացներն հիմնականում կապված են քաղաքի կարգավիճակ ստացած բնակավայրերի, աղբբեջանական կողմի սանձազերծած պատերազմի և դրա տրամաբանական շարունակությունը հանդիսացող քաղաքական, ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական և այլ իրադարձությունների հետ:

Երկրորդ փուլին բնորոշ է արդեն դրական տեղաշարժեր՝ կապված բնակչության բնական աճի, քաղաքաբնակների բացարձակ թվի ավելացման (որը գյուղաբնակների և քաղաքային բնակչության համեմատաբար բարձր բնական աճի դրսևորումն է) հետ: Դա մեծամասամբ կրում է գյուղական երիտասարդ բնակչության ներքին միգրացիոն շարժունակությունը: Այս փուլում նկատելի է նաև ժողովրդագրական գործընթացների համեմատական կայունացման միտումներ՝ կապված պետության վարած ժողովրդագրական քաղաքականությամբ:

Գրականություն

1. Ամիրջանյան Թ. Ի., Արզումանյան Վ. Ա., Լեոնային Ղարաբաղի աշխարհագրություն, Ստեփանակերտ, 1994թ.,-112 էջ:
2. Աշխարհագրության գիտաճանաչողական ներուժը և գործնական կիրառումը (Լ. Վալեյանի ծննդյան 85 և գիտամանկավարժական գործունեության 55-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր), Երևան, 2011թ.,-376 էջ:
3. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Ատլաս, Երևան, 2009թ.,-96 էջ:
4. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 1995-1999թթ., Ստեփանակերտ, 2002թ.,-214 էջ:
5. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2000-2005թթ., Ստեփանակերտ, 2006թ.,-236 էջ:
6. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2006-2012թթ., Ստեփանակերտ, 2013թ.,-337 էջ:
7. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2008-2014թթ., Ստեփանակերտ, 2015թ.,-337 էջ:
8. ԼՂՀ Պետ. արխիվ ՊՈԱԿ, ֆոնդ 142, ցանկ 9, կապ 7, պահպանման միավոր 32, 1998թ.,-73 էջ:
9. ԼՂՀ Պետ. արխիվ ՊՈԱԿ, ֆոնդ 142, ցանկ 9, կապ 7, պահպանման միավոր 32, 1998թ.-99 էջ:
10. ԼՂՀ Պետ. արխիվ ՊՈԱԿ, ֆոնդ 142, ցանկ 9, կապ 4, պահպանման միավոր 19, 1998թ.,-8 էջ:
11. Մելքունյան Ս., Լեոնային Ղարաբաղ (պատմատնտեսագիտական ուսումնագիր), Երևան, 1990թ.,- 303 էջ:
12. Մելքունյան Ս., ՀՀ սոցիալ - տնտեսական աշխարհագրություն, Երևան, 2005թ.,- 448 էջ:

¹ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2008-2014թթ., էջ 46:

УДК 542.9

Асмик Степанян

Армянский государственный университет им. Х. Абовяна
Факультет- биологии, химии и географии
Кафедра- Химии и методики ее преподавания
Курс- Химия, магистратура 2-ой, 2016г.
Руководитель- к.т.н., доцент В.А. Айрапетян

ИЗВЛЕЧЕНИЕ РЕДКИХ РАССЕЯННЫХ МЕТАЛЛОВ ИЗ МЕДНО-МОЛИБДЕНОВОГО СУЛЬФИДНОГО КОНЦЕНТРАТА

Ключевые слова: флотационные концентраты, обжиг, возгонка, кипящий слой, маточный раствор, извлечение редких рассеянных металлов селена и теллура.

Резюме

Из Техутского (республика Армения) медно-молибденового сульфидного концентрата методом вакуумной возгонки извлечен рений в виде Re_2O_7 . Выщелачиванием Re_2O_7 водным раствором КОН получен белый осадок- перренат калия ($KReO_4$), который дальнейшим восстановлением водородом с 99 %-ным выходом выделен порошкообразный металлический рений.

Использование сернистого газа, образовавшегося в процессе возгонки руды, в качестве восстановителя, и пропускание его через маточный раствор, содержащий растворимые соли - селенит и теллурит калия (K_2SeO_3 и K_2TeO_3) позволило выделить порошкообразные металлы – Se и Te с выходом до 97.6 %.

Использованным методом был извлечен мышьяк из исходной руды примерно на 85-90%.

Հասմիկ Ստեփանյան

ՀՊՄՀ, կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ
Քիմիա, մագ. 2-րդ կուրս
Գիտ. դեկ.՝ տ.գ.թ., դոց. Հայրապետյան Վ. Ա.

ՀԱԶՎԱԳՑՈՒՄՑ ԶՐՎԱԾ ՄԵՏԵՂՆԵՐԻ ԿՈՐԶՈՒՄԸ ՊՂԼՁԱ-ՍՈՒԻԲՐԵՆԱՅԻՆ ՍՈՒԼՖԻԴԱՅԻՆ ԽՏԱՆՑՈՒԹՅՑ

Բանալի բառեր. խտանյութ, եռացող շերտ, կորզում, հազվագյուտ, ցրված, մետաղներ:

Ամփոփում

Վերանշակվող հումքի բարձր ինքնարժեքը պարտավորեցնում է փնտրել և ներդնել առավել կատարելագործված մշակման տեխնոլոգիա, որը հնարավորություն կնձեռնի մաքսիմալ քանակությամբ պղնձա-մոլիբդենային սուլֆիդային խտանյութից կորզել ոչ միայն հիմնական տարրերը պղինձը, երկաթը և մոլիբդենը, այլ նաև կորզել նրանց ուղեկցող ազնիվ, գունավոր, հազվագյուտ և ցրված մետաղները, որոնց քանակությունները խտանյութի մեջ զգալի են:

Սուլֆիդային խտանյութը օդի մնացորդային ճնշման (0.2-0.3 մմ սնդ. սյուն) և

800 °C- ի պայմաններում ենթարկվում է բռվման, որի հետևանքով էլային հումքի մեջ գտնվող հազվագյուտ մետաղ Re-ը, ցրված մետաղներ՝ սելենը, տելլուրը և այլն օքսիդների տեսքով անցնում են փոշու կլանման սարք:

Ջերմաստիճանի լայն տիրույթում՝ 600-800°C և բարձր (մինչև 1000 °C), տարրեր ջերմաստիճաններում ուսումնասիրվել է խտանյութի թրծման կինետիկան օրինաչափությունները:

Փորձնական ճանապարհով հաստատվել է, որ գունավոր, հազվագյուտ և ցրված մետաղները, այդ թվում նաև արսենը երկու ժամվա ընթացքում քանակապես կորզվում են հումքից:

Նշված տարրերի օքսիդներից՝ Re_2O_7 , SeO_2 , TeO_2 հիդրոմետալուրգիական եղանակով ստացվել են հետևյալ աղերը՝ $KReO_4$ (նստվածք), K_2SeO_3 -ի և K_2TeO_3 : Հետագայում մշակելով K_2SeO_3 և K_2TeO_3 ծծմբային անհիդրիդով (SO_2) բարձր էլքերով ստացվել են մետաղական Se-ը և Te--ը: $KReO_4$ -ի վերականգնումը ջրածնով քանակապես կորզվում է Re-ը:

Hasmik Stepanyan

ASPU, the faculty of biology, chemistry and geography

Chemistry, masters degree, 2nd year

Supervisor: PhD Hayrapetyan V.

EXTRACTION OF RARE TRACE METALS FROM COPPER-MOLIBDENIUM SULFIDE CONCENTRATE

Key words: concentrate, fluidized bed, extraction, non-ferrous, rare and scattered metals.

Summary

The high prices of recycling materials obligates us to seek and invest new improved technologies which will give us an opportunity to absorb main elements such as copper, iron and molibdenium from copper-molibdenium sulfide concentrate, as well as accompanied them non-ferrous, rare and scattered metals with the essential content in concentrate.

At the residual pressure (0,2-0,3 mm Hg) and temperature of 800 °C the sulfide concentrate roasts causing the rare metal Re and scattered metals Se and Te transfere from the original material into dust absorption apparatus in the state of oxide.

At the large temperature amplitude from 600 °C to 800 °C and higher the kinetic laws of the concentrate roasting process were studied. By the experimental methods it is confirmed that non-ferrous, rare and scattered metals including arsenic can be extracted quantitatively during the two hours.

From the oxides Re_2O_7 , SeO_2 , TeO_2 of shifted above elements such salts as $KReO_4$ (precipitate), K_2SeO_3 and K_2TeO_3 were obtained using hydrometallurgical method. Subsequently by the processing of K_2SeO_3 and K_2TeO_3 with the sulfur dioxide metallic Se and Te were received with great output. In the result of reconstitution of $KReO_4$ with hydrogen the Re is extracted quantitatively.

Введение.

Изыскание новых способов и подходов комплексной переработки руд различного состава и извлечение из них нужных инградиентов, имеющих прикладное значение, является проблемой первостепенной важности. Газообразные продукты обжига Техутского медно-молибденового сульфидного флотационного концентрата улавливаются пылеуловителями различных конструкций [1,2]. В результате обжига руды медь, молибден, железо практически полностью остаются в остатке навески, тогда, как пыль содержит селен, теллур, рений, медь и в незначительных количествах серебра и золота. Комплексная переработка пыли дает возможность извлечь как медь, так и перечисленные выше металлы [3-5].

В настоящем сообщении предлагается новый, более эффективный метод извлечения из обжиговой пыли таких важных элементов, как рений, селен, теллур и небольших количеств серебра и золота. Известно, что пробы медно-молибденового концентрата Техутского горно-металлургического комбината имеют приблизительно следующий химический состав:

Mo - 49,54%, Cu - 0,54%, Re - 0,34%, ($ReS_2 = 0,44\%$), Se - 0,043%, Te - 0,034%, Fe - 11,4%, S - 22,4%, As - 1,8%, Au - 0,02%, Ag - 0,02% и др - 4,5%.

Следует отметить, что ценность этих руд определяется не только содержанием в них основных элементов: - молибдена, меди, железа, но и редких элементов, таких как: - рения, селена, теллура и благородных металлов (серебро, золото).

Экспериментальная часть и обсуждение результатов

Исследования динамики возгонки конверторной пыли проводились в вакууме, в условиях, обеспечивающих непрерывную потерю веса испытуемого образца.

Образец, в количестве 100 г, вводился для обжига в зону трубчатой печи в диапазоне температур (500 – 1000)°C и выдерживался в интрвале времени от 30 мин. до 150 минут при остаточном давлении воздуха, равном, 0,2-0,3 мм. рт. ст.. Возгонная пыль собиралась в кварцевом конденсаторе в виде концентрата. Эксперименты показали, что возгонка пыли из образца интенсивно протекает в диапазоне температур 700-750 °C. Дальнейшее повышение температуры от 750 °C до 800 °C практически не влияет на степень возгонки. В интервале температур 900-1000 °C наблюдается возгонка и молибдена, и меди, сопровождающаяся нежелательным явлением-частичным плавление навески.

Возгоночная пыль, полученная в ходе обжига руды при температурах 600 °C, 700 °C, 750 °C исследовалась химическим методом анализа. Ниже в таблице 1 представлены выходы рения, селена и теллура в составе возгонной пыли, полученных при изученных, вышеуказанных температурах обжига руды. Из данных таблицы можно заключить, что оптимальным условием количественного образования селена, теллура и рения является ведение процесса вакуумной возгонки при температуре – 750 °C, с продолжительностью обжига руды –120 минут.

В ходе вакуумной возгонки сырья имеет место следующая последовательность химических превращений:







Таблица 1

Данные химического анализа продуктов возгона при различных температурах.


№ п/п	Темпе- ратура (°C)	Время обжига (мин.)	Вес навески после обжига (г)	Убыль веса навески после обжига (г)	Содержание элементов в концентратах					
					Re		Se		Te	
					(г)	(%)	(г)	(%)	(г)	(%)
1	600	30	98,4	1.6	—	—	0.012	35	0.012	3.5
		60	97,64	2.4	—	—	0.018	52.3	0.021	52.5
		90	95,3	4.7	—	—	0.025	73.5	0.026	65.7
		120	90,2	9.8	—	—	0.031	91.2	0.033	80.3
		150	89,4	10.1	—	—	0.038	97.1	0.039	97.5
2	700	30	97.5	3.5	0.10	25.4	—	—	—	—
		60	95.4	4.6	0.17	42.5	—	—	—	—
		90	87.6	13.4	0.25	62.5	0.032	80.0	0.04	97.3
		120	84.5	15.5	0.32	80.6	—	—	—	—
		150	83.7	16.5	0.39	97.2	0.04	98.3	0.04	98.9
3	750	30	—	—	—	—	—	—	—	—
		60	—	—	—	—	—	—	—	—
		90	81.3	18.7	0.37	92.5	—	—	—	—
		120	—	—	—	—	—	—	—	—
		150	79.5	20.5	0.40	99	—	—	—	—

Далее проводилась гидрометаллургическая обработка концентрата (возгонной пыли) двух нормальным водным раствором гидроксида калия в течении 60 минут при интенсивном перемешивании со скоростью (100-150 об/мин) в интервале температур (40 -50)°C.

Процесс выщелачивания оксидов металлов (селена, теллура и рения) можно представить следующей совокупностью химических реакций:



После фильтрации осадок KReO_4 - перренат калия предварительно промытый водой высушивается для получения металлического рения в чистом виде по реакции (8),





С целью предотвращения спекания предложено вести восстановление оптимальной рабочей смеси, а именно:- тонко измельченного перренат калия с двойным (по весу KReO_4) количеством хлористого калия (KCl). В присутствии соли KCl температура восстановления понижается с 750 до 600-650 °C, а сам процесс восстановления (реакция 8) осуществляется в трубчатых электрических печах.

Продукт восстановления – порошкообразный рений многократно промывают горячей водой для удаления с его поверхности KOH и KCl , затем порошок промывают спиртом и сушат.

С целью выделения селена и теллура фильтрат, содержащий селенит (K_2SeO_3) и теллурит (K_2TeO_3) калия, обрабатывался 10%-ным водным раствором H_2SO_4 и затем через него пропускают сернистый газ (SO_2), образующийся в процессе возгонки руды, который легко восстанавливает их до металлического состояния по реакциям (9-12):





В заключение отметим, что нами были также проведены исследования по удалению мышьяка из навески. Эксперименты показали, что мышьяк в процессе обжига удаляется примерно на 85-90 %.

Выводы

1. Изучены и экспериментально установлены оптимальные условия: - температурные режимы и продолжительность ведения процесса обжига Техутского медно-молибденового сульфидного концентрата для количественного извлечения ценных, редких рассеянных металлов (рения, селена и теллура), а также меди, молибдена и благородных металлов (золота и серебра).
2. Разработаны аналитические методы количественного извлечения перечисленных выше металлов, находящихся в виде оксидов в возгоночной газовой смеси.
3. Методом вакуумной возгонки удалось извлечь также мышьяк из исходной руды примерно на (85-90) процентов.

Литература

1. А.А. Кудрявцев. Химия и технология селена и теллура. М., 1998, с.300
2. В.Г. Рцхиладзе, АТ Авалиани, Ж.Г. Гукасян. Извлечение редких и рассеянных элементов из конвертонной пыли. АГМК, 1986, с. 360-362.
3. Ю.А. Сидоренко.// Развитие технологии аффинажа платины и палладия.- ОАО «Красцветмет» цветные металлы.2003, №6, с. 15-20.
4. Г.А. Мерсон, А.Н. Зелимкон. Металлургия редких металлов. М.,1987, с. 573-577
5. А.А. Шахназарян, Г.Г. Бабаян, Э.А.Капанцян. //« О возможности извлечения селена, теллура из тонких обжиговых пылей медно-химических производств». В сб. Всесоюзного совещания « Химия и технология редких и рассеянных элементов». Ер. 1981, с. 382.

ՀՏԴ 615

Մոնա Զաքարյան
 Գորիսի պետական համալսարան
 2015-2016 ուս. տարի, դեղագործական քիմիա բակալավր
 Անի Բաղդասարյան, դասախոս

ԴԵՂԵՐԻ ԿՈՂՄՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանալի բառեր. դեղաբանական ազդեցություն, տոքսիկ ազդեցություն, ալերգիկ ռեակցիա, տերատոգենեզ, կանցերոգենեզ:

Ամփոփում

Յուրաքանչյուր տարի ԴԿԱ-ները հարյուր հազարավոր հիվանդների մահվան պատճառ են հանդիսանում, բարձրացնում են հոսպիտալացման դեպքերի թիվը և տևողությունը, իջեցնում հիվանդների կյանքի որակը: Ըստ առկա տվյալների ԴԿԱ-ներով հոսպիտալացումների առնվազն կեսից կարելի է խուսափել: Այդ պատճառով ներկայացվող աշխատանքում մենք ուսումնասիրել ենք ԴԿԱ-ների դասակարգումը, առաջացման մեխանիզմները, պատճառները, ԴԿԱ-ներին նպաստող գործոնները, որոնց իմացությունը հնարավորություն կտա հնարավորինս նվազագույնի հասցնել ԴԿԱ-ների առաջացման դեպքերը:

Сона Захарян

ГПУ, фармацевтическая химия, бакалавриат

Науч. рук.: Ани Багдагюлян

ПОБОЧНЫЙ ЭФФЕКТ ЛЕКАРСТВ

Ключевые слова: фармакологические действия, токсическое действие, аллергический реакция, тератогенез, канцерогенез.

Резюме

Каждый год сто тысяч людей умирают от побочных действий лекарств. Увеличивается число госпитализации, снижается качество жизни у больных. По данным статистики от половины госпитализации можно было бы избежать. По этому в данной работе мы изучили виды побочных действий лекарств, причины их возникновения, те факторы, которые воздействуют на побочны действия лекарств, знание которых даст возможность уменьшить их.

Sona Zaqaryan

GSU, the faculty of Chemistry, bachelor's degree

Supervisor: Ani Bagdasaryan

THE EFFECTS CREATED BY DRUGS

Key words: pharmacological action, toxic effect, allergic reactions, teratogenesis, carcinogenesis.

Summary

Every year people die because of side effects of drugs. These side effects increase number of hospitalization cases and lower life quality. The research shows that at least half of side effects created by drugs can be avoided. Thus in this paper we did a research on classification, creation mechanisms, reasons and contributory factors of drug side effects. This will help us to lower or even prevent side effects of drugs.

Նպատակը՝ առաջացնել հետաքրքրություն դեղերի կողմնակի ազդեցությունների (ԴԿԱ), դրանց առաջացման մեխանիզմների և պատճառների, նպաստող գործոնների և կանխարգելման մեթոդների վերաբերյալ:

Ակտուալությունը՝ կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ դեղամիջոցների կիրառման արդյունքում միլիոնավոր մարդկանց մոտ ի հայտ են եկել տարբեր ծանրության և աստիճանի ԴԿԱ-ներ: Քիչ չեն եղել նաև մահացության դեպքերը: Միայն ԱՄՆ-ում ամեն տարի ԴԿԱ-ների արդյունքում հոսպիտալացվում են 3,5-8,8 միլիոն հիվանդներ և մահանում են 100.000-200.000 հիվանդներ: Հայաստանի Հանրապետությունում ևս իրականացվում է ԴԿԱ-ների մշտադիտարկում, որն իրականացվում է Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի կողմից:

Խնդրի լուծման առաջարկվող մեթոդը՝ կազմակերպել սեմինարներ բժիշկների և դեղագետների համար, ինչպես նաև իրականացնել թեմատիկ դասախոսություններ հիվանդների համար:

ԴԿԱ-ները շարունակում են մնալ կլինիկական բժշկության ամենաարդիական խնդիրներից մեկը, որը մահվան հանգեցնելու ունակությամբ զբաղեցնում է 5-րդ տեղը՝ սրտանոթային, օնկոլոգիական, թոքերի հիվանդություններից և վնասվածներից հետո [1]:

ԴԿԱ-ն չկանխատեսված ազդեցություն է, որն դուրս է գալիս հաշվարկված թերապևտիկ ազդեցության սահմաններից, անգամ բուժական դեղաչափի կիրառման ժամանակ [2]:

ԴԿԱ-ն, որպես ամենաբարդ բժշկական խնդիրներից մեկը, հայտնի էր դեռևս հին ժամանակներից: Դեռևս մ.թ.ա. IV հարյուրամյակում Հիպոկրատը հիվանդներին պաշտպանում էր վտանգավոր դեղամիջոցների կիրառումից, խորհուրդ տալով դրանք դուրս գրել հիմնավորված ստուգումներից հետո: 1785թ. Վիլյամ Վայթերինգը մատնոցուկի բուժական ազդեցության նկարագրման ժամանակ ուշադրություն դարձրեց նրա առաջացրած անցանկալի ազդեցություններին (փսխում, տեսողության խանգարում, բրադիկարդիա, դողերոցք և մահ) [3]:

Յուրաքանչյուր տարի ԴԿԱ-ները հարյուր հազարավոր հիվանդների մահվան պատճառ են հանդիսանում, բարձրացնում են հոսպիտալացման դեպքերը և տևողությունը, իջեցնում են հիվանդների կյանքի որակը: Ըստ առկա տվյալների բոլոր հոսպիտալացումների մոտ 6% պայմանավորված են ԴԿԱ-ներով, որոնց առնվազն կեսից կարելի է խուսափել [3]: Հայտնի է նաև, որ ԴԿԱ-ի առաջացման հաճախականությունը հոսպիտալացված հիվանդների մոտ կազմում է 15-35%, որի արդյունքում հոսպիտալացման տևողությունն երկարաձգվում է 1-5.5 օրով: Արդյունքում մի շարք հիվանդների մոտ առաջանում են ծանր, երբեմն էլ անդարձելի բարդություններ [1]:

Ստեղծված իրավիճակում անհրաժեշտ է լինում, որպեսզի պրակտիկ բժիշկները և դեղագետներն ունենան բավականաչափ գիտելիքներ ԴԿԱ-ի մասին, որպեսզի կարողանան կանխատեսել դրանց առաջացմանը նախատրամադրող գործոնները, դրանց ճանաչման մեթոդները և իրականացնեն կանխարգելումը:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ-ի) բնորոշմամբ ԴԿԱ-ներին պատկանում են օրգանիզմի ցանկացած անկանխատեսելի և անցանկալի ռեակցիաներն ի պատասխան դեղամիջոցին, երբ դրանք կիրառվում են հիվանդությունների բուժման, ախտորոշման և կանխարգելման նպատակով [3]:

Ինչպես գիտենք, յուրաքանչյուր դեղամիջոցի կիրառումն ուղղված է օրգանիզմի կողմից որոշակի ռեակցիա առաջացնելուն: Սակայն այդ ռեակցիան կարող է լինել ոչ միայն թերապևտիկ, այլև կողմնակի՝ երբեմն անցանկալի, իսկ ավելի հաճախ՝ անբարենպաստ:

Ներկայումս անհրաժեշտություն չկա որևիցե մեկին համոզել, որ դեղամիջոցները ցուցաբերում են ոչ միայն բուժական ազդեցություն, այլ նաև կարող են ցուցաբերել անցանկալի կողմնակի ազդեցություններ: Սովորաբար դեղամիջոցների մեծամասնության հիմքում ընկած է նրանց ֆիզիկաքիմիական կամ քիմիական փոխազդեցությունը օրգանիզմի կենսաընկալիչների հետ, որի արդյունքում իջեցվում է զարկերակային զերձնշումը, հանգստացնում ցավը, իջեցնում այտուցը, բայց դրանցից բացի ի հայտ են գալիս մի շարք կողմնակի ազդեցություններ՝ քոր, գլխացավ, գլխապտույտ, փորկապություն և այլն: Դա բացատրվում է նրանով, որ ընդունված դեղամիջոցները փոխազդում են ոչ միայն հիմնական «ճանաչվող» կենսաընկալիչների, այլև, արյան հոսքով տարածվելով օրգանիզմով մեկ, փոխազդում են օրգանիզմի տարբեր համակարգերի հետ: Դա բերում է նրանց ֆունկցիայի փոփոխմանը: Բացի դրանից դեղամիջոցների մի մասը ենթարկվում է կենսավերափոխարկման, կորցնում իրենց նախնական ակտիվությունը, արդյունքում առաջանում են նոր միացություններ (մետաբոլիտներ), որոնք կարող են ունենալ այլ կենսաբանական հատկություններ և առաջացնել չկանխատեսված՝ կողմնակի հատկություններ: Այսպիսով բոլոր դեղամիջոցներն ունեն բուժական և կողմնակի, որպես կանոն, անցանկալի ազդեցություններ:

Գոյություն ունի ԴԿԱ-ների դասակարգման մի քանի եղանակներ:

Բոլոր ԴԿԱ-ները բաժանվում են 2 խմբի՝ A և B տեսակի ԴԿԱ-ներ [3]:

A տեսակի ռեակցիաները որակապես համապատասխանում են տվյալ դեղամիջոցին բնորոշող ֆարմակոլոգիական էֆեկտին, պարզապես արտահայտվում են մի քանի անգամ

ուժեղ: Այս խմբի մի շարք ռեակցիաներ արտահայտվում են տվյալ դեղամիջոցին ոչ հատուկ ձևով:

Այս տեսակի ԴԿԱ-ները կարելի է կանխատեսել՝ ելնելով դեղամիջոցի ֆարմակոլոգիական հատկություններից: Նրանք սովորաբար մահացու ելք չեն ունենում: Որպես կանոն համարվում են դեղաչափկախյալ և դեղաչափի փոքրացման դեպքում վերանում են:

Յ տեսակի ռեակցիաները համարվում են անկանխատեսելի, քանի որ ԴԿԱ-ները դուրս են գալիս դեղամիջոցների ֆարմակոլոգիական ազդեցության սպեկտրից:

Դրանք սովորաբար դեղաչափկախյալ չեն և չնայած հազվադեպ են արտահայտվում, հաճախ ունենում են ծանր ընթացք և անգամ կարող են բերել մահացու ելքի:

Յ տեսակի ռեակցիաները կարող են դառնալ լուրջ պատճառ, որպեսզի դեղամիջոցը դուրս բերվի դեղագործական շուկայից:

ԴԿԱ-ները դասակարգում են նաև ըստ ծանրության աստիճանի, ըստ առաջացման մեխանիզմների և այլն [4]:

Միևնույն դեղամիջոցի կիրառումը տարբեր մարդկանց մոտ կարող է բերել տարբեր ռեակցիաների առաջացման: Դա կարող է արտահայտվել կամ միևնույն ռեակցիայով՝ առաջացած տարբեր դեղաչափերից, կամ էլ՝ նույն դեղամիջոցի կիրառումից կարող են առաջանալ տարբեր ֆարմակոլոգիական ազդեցություններ: Առաջացած ռեակցիայի ուժգնությունը սովորաբար պայմանավորված է լինում դեղաչափով:

ԴԿԱ-ի հիմքում ընկած է նրանց ֆարմակոլոգիական, ֆարմակոկինետիկական և ֆարմակոդինամիկական յուրահատկությունները: Կարևոր է նաև հիվանդության բնույթը: Եվ վերջապես մեծ դեր են խաղում ֆարմակոգենետիկական ցուցանիշները:

ԴԿԱ-ները կարող են պայմանավորված լինել դեղամիջոցի դեղաձևի առանձնահատկություններով: Կողմնակի ազդեցությունները կարող են ի հայտ գալ դեղաձևից ազդող նյութի արագ ձերբազատման արդյունքում, որը պայմանավորված է արյան մեջ ազդող նյութի կոնցենտրացիայի բարձրացմամբ: Ակտիվ նյութի ձերբազատման արագությունը կախված է տարբեր գործոններից՝ օժանդակ նյութերի քանակից և որակից, որը պարունակվում է տվյալ դեղամիջոցում: Ազդող նյութի ձերբազատման արագությունից է կախված նաև ստամոքս-աղիքային համակարգի վրա տեղային տոքսիկ ազդեցության աստիճանը:

ԴԿԱ-ների ֆարմակոկինետիկական պատճառների մեջ մտնում են ներծծման, բաշխման և դուրս բերման մակարդակի խանգարումները:

Ներծծում (աբսորբցիա). դեղամիջոցի և հայտնի ստանդարտների միջև ներծծման արագության և աստիճանի (կենսամատչելիություն) տարբերությունը կարող է հանդիսանալ ԴԿԱ-ի առաջացման պատճառ: Ներծծման աստիճանի վրա կարող են ազդել դեղաչափը, ներմուծման ուղին, դեղաձևը, աղեստամոքսային համակարգի գալարակծկանքը, աղեստամոքսային համակարգի լորձաթաղանթի ներծծող ունակությունը, ինչպես նաև առաջին անցման էֆեկտը, այսինքն՝ լյարդում և աղիներում առաջնային նյութափոխանակությունը, մինչ դեղամիջոցն անցնի համակարգային արյունհոսք:

Դեղամիջոցը ներս ընդունելուց ներծծման արագությունը նշանակալից չափով որոշվում է ստամոքսի դատարկման աստիճանով և արագությամբ: Այն իր հերթին պայմանավորված է ստամոքսի պարունակության քիմիական հատկություններով, հիվանդության բնույթով, տարբեր դեղամիջոցներ միաժամանակ ներս ընդունման դեպքում նրանց միջև փոխազդեցություններով:

Դեղամիջոցների բաշխումը տարբեր օրգաններում և հյուսվածքներում կախված է տեղային արյունհոսքից, պլազմային սպիտակուցների և հյուսվածքների հետ կապվելու ունակությունից: Դեղամիջոցի բաշխման բնույթի իմացությունը թույլ է տալիս որոշակիորեն կանխատեսել կողմնակի ազդեցության առաջացման նախատրամադրվածությունը:

Սովորաբար դեղամիջոցներն օրգանիզմից դուրս են բերվում մեզով, լեղու միջոցով, կղանքով, արտաշնչված օդով, քրտինքով, թքի միջոցով, կաթով կամ էլ նյութափոխանակության են ենթարկվում լյարդում՝ առաջացնելով քիչ թունավոր և հեշտ մարսվող մետաբոլիտներ: Շատ դեպքերում առաջացած մետաբոլիտները նույնպես օժտված են

լինում ֆարմակոլոգիական ակտիվությամբ, իսկ որոշները կարող են լինել մի քանի անգամ ավելի ակտիվ իրենց նախորդներից (դիագնոզային մետաբոլիտ հանդիսացող օքսազեպամը), մյուսները՝ քիչ ակտիվ (քլորդիագնոզային մետաբոլիտ հանդիսացող ամինոքլորբենզոֆենոնը): ԴԿԱ-ները կարող են պայմանավորված լինել առաջացած մետաբոլիտի բնույթով:

Դեղամիջոցների դուրս բերման արագության խանգարումը հանդիսանում է ԴԿԱ-ների առաջացման համար նշանակալից նախատրամադրող գործոն: Դանդաղացված էլիմինացիան բերում է նրա կուտակմանը օրգանիզմում, որն էլ իր հերթին արյան պլազմայում և հյուսվածքներում ստեղծում է դեղամիջոցի բարձր կոնցենտրացիա՝ առաջացնելով թունավոր ազդեցություն:

Երիկամային ֆիլտրացիայի վատթարացումը բերում է դեղամիջոցի և նրա մետաբոլիտների էլիմինացիայի փոքրացման: Այն անհատները, որոնց մոտ առկա են երիկամային ֆիլտրացիա ցածր ցուցանիշներ (երիկամային հիվանդություններ, ծերունական տարիք, նորածիններ), հաճախ ԴԿԱ-ներն առաջանում են անգամ բուժական դեղաչափի կիրառման պարագայում (դիգոքսին, ամինոգլիկոզիդներ և այլն): Յուրաքանչյուր հիվանդի համար դեղաչափը կարգավորելով կարելի է ստանալ անհատական ֆարմակոգրամա, դրանով իսկ ԴԿԱ-ները հասցնել ոչ միայն նվազագույնի, այլև կանխելով դրանց առաջացումը:

Ճարպալուծ դեղամիջոցները հաճախ մետաբոլվում են մինչև ջրալուծ միացությունների, որոնք հետո դուրս են բերվում երիկամներով: Նյութափոխանակությունը հիմնականում իրականացվում է լյարդում, չնայած երիկամները, թոքերը, մաշկը և աղիները նույնպես ունեն որոշակի մետաբոլոլ հատկություն:

Դեղամիջոցների մետաբոլիզմի արագության նվազումն ուղեկցվում է օրգանիզմում դրանց կուտակումով և մեծանում է կողմնակի ազդեցությունների առաջացման ռիսկը:

Ոչ մեծ թվով դեղամիջոցներ կարող են առաջացնել իմունոլոգիական բնույթի ԴԿԱ-ները, որոնք արտահայտվում են գերզգայնությամբ (լոդոսինկրազիա): Որոշ դեղամիջոցների նկատմամբ բարձր զգայնությունն արտահայտվում է իմունոլոգիական ռեակցիայով՝ պայմանավորված հիվանդի օրգանիզմում հակածինների առկայությամբ:

ԴԿԱ-ների արտահայտման գործում, բացի ֆարմակոկինետիկական գործոններից, քիչ դեր չեն խաղում նաև օրգանների և հյուսվածքների գերզգայնությունը դեղամիջոցի նկատմամբ, ֆարմակոկինետիկական և ֆարմակոդինամիկական գործոնների համատեղումը: Մեծ թվով դեղամիջոցներ ցուցաբերում են իրենց ֆարմակոլոգիական ազդեցությունը բջջաթաղանթի յուրահատուկ ընկալիչների մակարդակով, կամ ներազդում են ցիտոպլազմայի և կորիզի վրա: Օրգան-թիրախները տարբեր անհատների մոտ տարբեր ձև են պատասխանում դեղամիջոցի ազդեցությանը: Դա պայմանավորված է տարբեր որակի և քանակի հյուսվածքային ընկալիչներով [3]:

ԴԿԱ-ի առաջացմանը նպաստող գործոնների թվին են պատկանում համակցված ֆարմակոթերապիան, տարիքը, սեռը, ուղղեկցող հիվանդությունները, ռասայական և գենային պոլիմորֆիզմը [3, 5]:

ԴԿԱ-ների հայտնաբերումը և մոնիթորինգը: Դեղամիջոցը դեղերի շուկա մտնելուց առաջ փորձարկվում է միջինում 1500 մարդու վրա: Այդ շրջանում հնարավոր է լինում հայտնաբերել միայն A տեսակի ԴԿԱ-ները: Իսկ B տեսակի ԴԿԱ-ները հնարավոր է հայտնաբերել կլինիկական պրակտիկայում՝ լայն կիրառման պարագայում, քանի որ դրանք հանդիպում են հազվադեպ և որոշակի պոպուլյացիաներում: Հետևաբար, ԴԿԱ-ների դիտարկումը շարունակվում է նաև դեղագործական շուկա ներմուծելուց հետո: Ներկայումս համակարգային դիտարկումներ իրականացվում են մի շարք երկրներում:

ԴԿԱ-ների բացահայտմանը նպաստում են իրականացվող կլինիկական հետազոտությունները, որոնք բաղկացած են 4 փուլից.

- 1-ին փուլ-առողջ կամավորներ՝ 20-50 մարդ,
- 2-րդ փուլ-150-300 հիվանդներ,
- 3-րդ փուլ-250-1000 հիվանդներ,
- 4-րդ փուլ-հետմարքեթինգային հետազոտություններ:

Ներկայումս 50 երկրներ հանդիսանում են դեղամիջոցների միջազգային մոնիթորինգի մասնակից: Շվեդական կառավարությունն իր վրա է վերցրել ծրագրի հետ կապված բոլոր ծախսերը: Ուպասալա քաղաքում ստեղծվել է ԱՀԿ-ի կենտրոն, որն իրականացնում է դեղամիջոցների միջազգային մոնիթորինգը: Այդ կենտրոնն ամեն օր ստանում է ավելի քան 150.000-200.000 տեղեկատվություն ԴԿԱ-ների վերաբերյալ: Մասնակից երկրներն ունեն շուրջօրյա անվճար մուտք տվյալների ինտերնետային բազա:

2001թ.-ից Հայաստանը ԱՀԿ-ի դեղամիջոցների մոնիթորինգի միջազգային ծրագրի լիիրավ անդամ է:

Որոշակի դեղամիջոցների կիրառումից առաջացած ԴԿԱ-ների հաճախականության գնահատման համար օգտվում են Food and Drug Administration-ի (FDA) կողմից առաջարկված սանդղակից, ըստ որի հաճախակի համարվում են այն ռեակցիաները, որոնք արտահայտվում են 100 մարդուց մեկից ավելի դեպքերում.

-ոչ հաճախակի՝ 100-ից մեկի մոտ:

-հազվադեպ՝ 1000-ից մեկի մոտ [3]:

Դեղամիջոցների տոքսիկ ազդեցության առաջացման հիմնական պատճառներն են պլազմայում դեղամիջոցի բարձր կոնցենտրացիան և/կամ նրա նկատմամբ հյուսվածքային գերզգայունությունը, ինչը կարող է պայմանավորված լինել ոչ համապատասխան դեղաչափի կիրառմամբ կամ տվյալ հիվանդի մոտ դեղամիջոցի ֆարմակոկինետիկայի խանգարմամբ, սպիտակուցների հետ կապման ունակության իջեցմամբ, դանդաղեցված մետաբոլիզմով, իջեցված երիկամային էքսկրեցիայով, կամ այլ դեղամիջոցի հետ փոխազդեցությամբ:

Ալերգիկ ռեակցիաները առաջանում են մի շարք դեղամիջոցներից և տարբերակվում են կլինիկական արտահայտվածությամբ, ընթացքի ծանրությամբ և ելքով: Դեղորայքային ալերգիայի ժամանակ գոյություն չունի կապ դեղաչափի և ռեակցիայի արտահայտվածության միջև: Ոչ հազվադեպ են հանդիպում դեպքեր, երբ դեղամիջոցի անգամ չնչին քանակությունները կարող են առաջացնել ծանր, կյանքին վտանգ ներկայացնող ռեակցիաներ: Իսկ որոշ հիվանդների մոտ նույնիսկ մեծ դեղաչափերը կարող են բերել թեթև ընթացքով ալերգիկ ռեակցիաների [3]:

Տերատոգենեզի երևույթը: Հղիության ընթացքում դեղամիջոցների կիրառումը կարող է բերել էմբրիոնի վրա բացասական ազդեցության՝ տերատոգենեզի (հունարեն teras-հրեշ), որը նորածինների մոտ արտահայտվում է տարբեր արատներով [3, 6, 7]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնարավոր չէ միանշանակ որոշել դեղամիջոցի տերատոգեն լինելու հանգամանքը, հղիության առաջին 2-3 ամսվա ընթացքում, երբ էմբրիոնի մոտ զարգանում են հիմնական օրգանները, խորհուրդ է տրվում ձեռնպահ մնալ դեղամիջոցների կիրառումից, եթե չկան հստակ ցուցումներ:

Բացի դրանից պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ հնարավոր է դեղամիջոցի անցումը նորածնին մայրական կաթի միջոցով, ինչը կարող է նորածնի մոտ թողնել բացասական ազդեցություն [6]:

Կանցերոգենեզի երևույթը: Դեղամիջոցները, որոնք բերում են ուռուցքների առաջացմանը, օգտագործվում են շատ հազվադեպ, քանի որ դեղագործական արդյունաբերությունը մեծ ջանքեր է գործադրում, որպեսզի խուսափի կանցերոգեն միացություններ պարունակող դեղամիջոցների մարքեթինգից:

Դեղորայքային կախվածություն: Բնութագրվում է հոգեկան և ֆիզիկական վիճակներով, որոնց ժամանակ առաջանում է ցանկություն անընդհատ կամ պարբերաբար օգտագործել դեղամիջոցը՝ տհաճ զգացողություններից խուսափելու համար:

Հանման համախտանիշն առաջանում է դեղամիջոցի կիրառումը կտրուկ դադարեցնելուց:

Կոդոպտման համախտանիշը դեղամիջոցի ունակությունն է լավացնելով (կամ ուժեղացնելով) առանձին օրգանների կամ նրա մասերի ֆունկցիան, վաթարացնել հարակից համակարգերի և առանձին օղակների գործունեությունը:

ԴԿԱ-ների կանխարգելման նպատակով պետք է հետևել հետևյալ կանոններին.

-հաշվի առնել ոչ միայն դեղամիջոցի բուժական ազդեցությունը, այլև հնարավոր ԴԿԱ-ները, -նշանակել դեղամիջոցի նվազագույն արդյունավետ դեղաչափը, հետևել կուրսային դեղաչափին կամ դեղամիջոցի հանման կանոններին,

- համակցված թերապիայի ժամանակ հաշվի առնել հնարավոր փոխազդեցությունները,
- խուսափել դեղամիջոցների ներմուծումից ներարկման ուղիներով,
- կիրառել անհատական մոտեցում՝ հաշվի առնելով տարիքը, սեռը և այլն,
- կիրառել ԴԿԱ-ի չեզոքացման մեթոդը այլ դեղամիջոցներով,
- խուսափել ակոնիտի, սուրճի, ծխախոտի կիրառումից, քանի որ դրանք կարող են փոխազդել դեղամիջոցների հետ,
- առավել հաճախ ԴԿԱ-ներ առաջացնող դեղամիջոցները նշանակել՝ ելնելով հիվանդության ծագումնաբանությունից [8,9]:

Եզրակացություն: Ինչպես արդեն նշվեց ԴԿԱ-ները երբեմն կարող են մահվան պատճառ դառնալ: Այդ պատճառով շատ կարևոր է հայտնաբերելը և կանխարգելելը: Դրա համար կարևոր է իմանալ ԴԿԱ-ների առաջացման մեխանիզմները, հաճախականությունը, նպաստող գործոնները և այլն: Դեղամիջոցների էֆեկտիվության և անվտանգության վրա ազդող գործոնների մանրակրկիտ հսկողությունը, ֆարմակոդինամիկայի, ֆարմակոկինետիկայի և ֆարմակոգենետիկայի վերաբերյալ իրականացված հետազոտությունները, ինչպես էքսպերիմենտալ, այնպես էլ կլինիկական պայմաններում, կարող են նվազագույնի հասցնել ԴԿԱ-ները:

Մեծ ուշադրություն պետք է հատկացնել ԴԿԱ-ների վերաբերյալ տեղեկատվության հաղորդման մշակույթի ձևավորմանը: Այդ առումով շատ կարևոր դեր են խաղում բժիշկների և դեղագետների շրջանում կազմակերպված սեմինարները, որոնք բարձրացնում են տեղեկացվածությունը ԴԿԱ-ների վերաբերյալ և տեղեկատվության տարածմամբ նպաստում ԴԿԱ-ների կանխարգելմանը:

Գրականություն

- 1.Пухлик Б.М., Викторов А.П., Зайков С.В. Лекарственная аллергия и побочные эффекты лекарственных средств в аллергологии, Медицина свиту, Львов, 2008, 108с.
- 2.Паттерсон Р., Грэммер Л.К., Гринбергер П.А. Аллергические болезни: диагностика и лечение: Пер. с англ., -М.: 2000, 768с.
- 3.Габриелян Э.С. и Борожан Р.Г. Руководство по фармакотерапии для врачей и фармацевтов, Ер.: изд-во <Гитутюн>, 2001, 387с.
- 4.Дранник Г.Н. Клиническая иммунология и аллергология: пособие для студентов, врачей-интернов, иммунологов, аллергологов, врачей лечебно-профиля всех специальностей. 3-е изд., Полиграф плюс, 2006, 482с.
- 5.Бабак О.Я., Деримедведь Л.В., Перцев И.М., Хоменко В.Н. Опасные взаимодействия лекарств при комбинированной терапии(Серия <В помощь врачу и фармацевту>)-Х., 2002, 28с.
- 6.Грачева Н.М. Лекарственная болезнь в клинике инфекционных заболеваний.-М.: Медицина, 1978, 199с.
- 7.Харкевич Д.А. Фармакология, 10-е изд. -М.: ГЭОТАР-Медиа, 2010, 908 с.
- 8.Деримедведь Л.В., Перцев И.М., Шувалова Е.В. Взаимодействие лекарств и эффективность фармакотерапии -Х.: Изд. <Мегаполис>, 2002, 784с.
- 9.Зупанец И.А., Черных В.П., Москаленко В.Ф. и др.; Под ред. В.П. Черных, И.А. Зупанца, Усенко В.А. Фармацевтическая опека: Практ. руководство для провизоров и семейных врачей, Золотые страницы, 2002, 264 с.

УДК 808.63

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
Е.А. Леонтьева, Д.В. Журба
Приднестровский государственный
университет им.Т.Г.Шевченко

К ВОПРОСУ О КЛАССИФИКАЦИИ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ С СЕМАНТИКОЙ ТЕМПОРАЛЬНОСТИ В ВОСТОЧНОСЛОВЯНСКИХ ЯЗЫКАХ

Ключевые слова: семантика, темпоральность, классификация, фразеологические единицы, восточнославянские языки.

Резюме

В статье указывается статус фразеологических единиц с темпоральной семантикой, представляется краткий обзор существующих классификаций анализируемых единиц, а также репрезентируется собственный взгляд на данную проблему.

Լեոնտևա Ե.Ա., ժուրբա Դ. Վ.
Տ.Գ. Շևչենկոյի անվան
Մերձդնեստրի պետական համալսարան

ԱՐԵՎԵԼԱՍԼԱՎՈՆԱԿԱՆ ԼԵՋՈՒՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԻՍԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Բանալի բառեր. իմաստաբանություն, դասակարգում, դարձվածաբանական միավորներ, արևելալավոնական լեզուներ:

Անվտիում

Հորվածում նշվում է դարձվածաբանական միավորների նկատմամբ ժամանակային իմաստաբանության կարգավիճակը, ներկայացվում է առկա դասակարգումների կարճ վերլուծությունը, ինչպես նաև սեփական տեսակետը այս հարցի վերաբերյալ:

Leontieva Ye. A., Zhurba D. V.
TSU named after T. G. Shevchenko

EXTRACTION OF RARE TRACE METALS FROM COPPER-MOLIBDENIUM SULFIDE CONCENTRATE

Key words: semantics, temporality, classification, phraseological units, East Slavic languages.

Summary

The article indicates the status of phraseological units with temporal semantics, presents a quick overview of the existing classifications of analyzed units, as well as reconceptualization of the problem.

Мало найдется других показателей культуры, которые в такой же степени характеризовали бы ее сущность, как понимание времени. В нем воплощается, и с ним связано мироощущение эпохи, поведение людей, их сознание, ритм жизни, отношение к вещам.

А. Я. Гуревич

Актуальность нашего исследования обусловлена тем, что на современном этапе развития лингвистической науки в анализе единиц различных языковых уровней приоритетными являются семантический и компаративный аспекты.

Исследование семантической классификации фразеологизмов с темпоральным значением стало объектом научных исследований многих филологов Л.П. Гашевой, В.А. Лебединского, И. Лебедевой, Ф.И. Никоновой, А.В. Свиридовой, С.И. Суровцевой и других, но в современном языкознании до сих пор не существует единого подхода к семантической классификации этих единиц. Описание и анализ фразеологизмов с временным значением способствует созданию не только более полной и объемной семантической классификации украинских, русских и белорусских паремий, но и репрезентации специфики языковой и национальной картины мира восточнославянских народов.

Объектом исследования стал фразеологический фонд украинского, русского и белорусского языков.

Предметом– фразеологические единицы восточнославянских языков, которые выражают временную семантику.

Цель нашей работы - сравнительное описание репрезентации категории темпоральности в фразеологизмах украинского, русского и белорусского языков, а также создание собственной семантической классификации анализируемых единиц.

Задачи лингвистического исследования:

- проанализировать средства выражения темпоральной семантики в восточнославянских языках;
- выявить фразеологические единицы с временным значением;
- исследовать существующие классификации фразеологизмов со значением темпоральности и предложить собственную.

Во время исследования активно были использованы **метод** сплошной выборки, описательный метод, синтез и анализ.

Гипотеза нашей исследовательской работы состоит в утверждении, что фразеологические единицы с темпоральной семантикой являются неотъемлемым и очень важным компонентом языковой картины мира восточнославянских народов.

Теоретическая и практическая ценность работы заключается в попытке представить собственную семантическую классификацию украинских, русских и белорусских фразеологизмов с темпоральной семантикой. Результаты работы могут быть активно использованы в дальнейших исследованиях, посвященных актуальным вопросам семантического и компаративного аспектов сопоставительной фразеологии, а также в процессе преподавания лекционных и практических курсов по фразеологии восточнославянских языков в школе, высших учебных заведениях и в исследовательской деятельности бакалавров, магистров, аспирантов .

«Время - одна из основных объективных форм существования материи, которая проявляется в продолжительности бытия» [5, с. 274].

А.Я. Гуревич отмечает, что время в совокупности с другими понятиями, такими как пространство, причина и судьба относится к категориям человеческого сознания, которые «в каждой культуре связаны между собой, образуя своего рода «модель мира»- ту «систему координат», с помощью которой люди воспринимают действительность и строят образ мира, существующий в их сознании» [3, с. 19].

Категория времени является объектом научного анализа различных наук: философии, филологии, лингвокультурологии, истории, психологии и др.

В языкознании категория темпоральности вербализируется как грамматическая категория времени глаголов и их форм. На лексическом уровне семантику темпоральности выражает целый класс лексических единиц: существительное (укр.: секунда, рік, століття; рус.: утро, сутки, минута; бел.: гадзіна, хвіліна, поўнач), прилагательное (укр.: вчорашній, щорічний, нічний; рус.: утренний, вечный, моментальный; бел.: вечны, заўтрашні, позні), разряд наречий с темпоральным значением (укр.: тепер, завжди, понині; рус.: давно, редко, сейчас; бел.: зараз, цяпер, часта), предлог (укр.: з ранку, о п'ятійгодині, від часу до часу; рус.: в девять утра, около полуночи; бел.: з раніцы, у дзесяцьвечара). Кроме того рассматриваемая категория представлена и на синтаксическом уровне: подлежащее (укр.: Три роки минули непомітно; рус.: Каждая минута в этом доме казалась ему драгоценной, и он не хотел терять ее; бел.: Час - струмень, смывший нас); обстоятельства времени (укр.: Чоловікз'явився у невеличкому містечку обідньої пори; рус.: Два года от дочери писем не было; бел.: Тры гады ў хаце не было весялосці), сложноподчиненное предложение с придаточным времени (укр.: Моїмтибув, ще як Земля ізполум'я творилась; рус.: С тех пор как мы знаем друг друга, ты ничего мне не дал, кроме страданий; бел.: Ачуняўён, калісонца было ўжо высока).

Отдельного внимания заслуживают фразеологизмы анализируемых языков с темпоральным значением, которые вербализуют время реализации или продолжительности явления, процесса или действия.

Анализируя существующие семантические классификации фразеологических единиц с временным значением, следует сказать о классификации А.А. Гречиной, в которой автор исследует темпоральные единицы русского, английского и немецкого языков, выделяя ФЕ со значением быстро, всегда, постоянно, потом, иногда и никогда [2]. Такой подход нам кажется очень поверхностным, поскольку данная классификация не отражает реальной картины семантической коннотации фразеологических единиц временной семантики.

Более полной и объективной, по нашему мнению, является семнадцатикомпонентная классификация Л.О.Безсоновой, которая была разработана на базе русских и белорусских фразеологизмов с временным значением: рано, поздно, давно, недавно; будущее; никогда; сейчас; своевременность, несвоевременность; долго, недолго; быстро, медленно; постоянно, часто; редко, иногда; постепенно; промежуток времени [1].

Н.А. Сегал, анализируя концепт время в современной лингвокультуре, выделяет следующие разряды: прошлое (давно, недавно) сейчас и потом; своевременность (пунктуальность) поздно, долго, недолго; быстро и медленно; постоянно (часто); редко; иногда; всегда, никогда [4, с. 95 - 97].

В результате анализа темпоральных фразеологических единиц восточнославянских языков и существующих классификаций мы предлагаем собственную классификацию фразеологических единиц с временным значением, выражающие:

быстрый ход событий или скорую реализацию действия:укр.: як чарами, аж пил слідом, в один момент, з усіхніг, як стріла; рус.: расти как грибы, во всю прыть, в темпе; бел.: выскачыў як казак з маку, як мышыз'елі, на гарачыягубы, як з ланцугасарваўшыся. Такие единицы приобретают положительного звучания, когда представляют скорость как неотъемлемую составляющую успеха (укр.: на всіх парах, раз, два і в дамках, не встигнешоглянутися; рус.: семимильными шагами, не по дням, а по часам), отрицательное - когда имеют коннотацию несвоевременности, некачественности или суетливости (укр.: не встиг і рота відкрити, як опечений, як божевільний, аж спотикається; рус.: на биструю руку, поспешишь, людей насмешишь, как белка в колесе, бежать высунув язык).

Краткосрочность процесса или события:укр.: без року три дні, на якусьхвилину, на мить, без тижня день; рус.: без году неделя, не успеешь глазом моргнуть, в мгновение ока; бел.: як маланкаюспаліў, як вокаммаргнуць, за аднымсвістам.

Временную характеристику процесса или события, которые реализуются через очень короткое время:укр.: без п'ятихвилин, не за горами, у будь-яку хвилину, з години на годину, висіти на носі; рус.: в близком будущем, не за горами, не нынче-завтра; бел.: па хуткім часе, гэтыміднямі, без пяцімінут.

Временную характеристику процесса или события, которые происходят непоследовательно, нерегулярно:укр.: від часу до часу, як коли, раз од разу; рус.: время от времени, в кои век; бел.: час ад часу.

Временную характеристику процесса или события, которые происходят постоянно:укр.: без кінця-краю, денно і нічно, що божий день, від рана до рана; рус.: ни на миг, без выхода, изо дня в день; бел.: дзеньпры дні, дзенна і ночна.

Семантика навсегда:укр.: доки світу й сонця, раз на все, на безвік, віднині й довіку, до божого суду, на вікивічні, до другого пришествя; рус.: до могилы, по гроб жизни, до скончание века, на вечные времена; бел.: як светстаіць, пакульсвет, спраконвякоў.

Отрицание реализации определенного действия или процесса:укр.: на маленького Юрія, ніколи в світі, як бабаксвисне, як на долоніволоссявиросте, як виростегарбуз на вербі, як п'явкакрикне, на Рахманськийвеликдень; рус.: ни в жизнь, ни за какие коврижки, ни за что на свете, до морковкина заговенья; бел.: як воўкшчанёмбудзе і брахацьхвастом буде, хутчэй бусел жарабяўродзіць;заўтра ў тую пару, калі рак паляціць з вадыўгару.

Временную характеристику действия или процесса, которые происходили очень давно: укр.: у тьмівіків, від Адама, відсотворіннясвіту, за царя Гороха, як людей булотрохи; за царя Панька, як земля була тонка; за царя Хмеля, як була людей жменя; як баба буладівкою, за дідів-прадідів; рус.: Бог знает как давно, много воды утекло, старо как мир, черт знает когда; бел.: не за нашим Богам; за царомкесаром, як светгарэў, а саламаютушылі.

В фразеологических единицах этого подкласса наблюдаем ярко выраженное преувеличения давности.

Следует подчеркнуть, что в восточнославянской фразеологии активно функционируют фразеологизмы с коннотацией **несвоевременности** (укр.: заднім умом, на шапкобрання, як сніг на голову, поперед батька в пекло; рус.: как гром среди ясного неба, с бухты барахты, не в время; бел.: без нічога ніяк ага, ні стуль ні ссюль) и **своевременности** (укр.: хвилина в хвилину, у час, в самий раз; рус.: всему своё время, как нельзя кстати; бел.: усякамугародніна свой час, дарога лыжка да абеду). последние имеют положительный оттенок независимо от контекста.

В восточнославянских культурах **медлительность реализации действия или процесса** интерпретируется как недостаток и имеет негативную коннотацию (укр.: ціла вічність, кістки травую поростуть; рус.: битый час, в час по чайной ложке, тянуть kota за хвост; бел.: што ні день, канца-берагуняма), как и фразеологизмы, выражающие семантику **действия, отложенного на неопределенное время** (укр.: у довгушухляду, до грецьких календ, іншим часом; рус.: тянуть лямку, тянуть канитель; бел.: да другогапрышэсця).

Не очень продуктивными во всех трёх языках являются ФЕ, имеющие семантику **сейчас**: укр.: час пробив, на часі, у ту ж хвилину; рус.: сей момент, сию минуту; бел.: у той жамомант, гадзінупрабіў.

Фразеологические единицы рассматриваемых языков способны репрезентировать и конкретную часть суток:

вечер: укр.: на схилі дня, рус.: сиден вечер, на вечеру; бел.: проціночы.

ночь: укр.: після других півнів, ще й на зорю не займається, ще чорти навкулачки не б'ються; рус.: до первых петухов, за полночь; бел.: да першыхпеўняў. Фразеологизмы этих двух групп могут иметь коннотацию (очень) поздно.

утро: укр.: тільки почало на світ благословлятися, ледве на світ зазоріло, до білого дня, після третіх півнів; рус.: белое утро, на брезгу, рань несусветная, с первыми лучами; бел.: раннюю расу абагнаць, з цёмнага рана. Следует подчеркнуть, что рассматриваемые фразеологизмы в трёх языках могут иметь значение рано.

Результаты нашего исследования показали, что семантическую базу темпоральных фразеологизмов украинского, русского и белорусского языков формируют единицы с коннотацией экспрессивной оценки и субъективности, источником для которых стали народные обычаи и обряды, библейские и мифологические сюжеты. «Обладея широкими коннотативными возможностями, которые обусловлены «образной составляющей», они способствуют структурированию лингвовременной картины мира, в которой находит отражение глубокое философское осмысление времени» [4, с. 94].

Результаты работы иллюстрируют структурную и национально-культурную специфику категории темпоральности в языковой картине мира восточнославянских народов, в которой представляется система прагматических и морально-этических ценностей. Следует подчеркнуть, что подавляющее большинство проанализированных ФЕ имеют прямые соответствия в трёх языках, что свидетельствует о их близкородственности и наличии единого праязыка для этих народов.

ФЕ с темпоральным значением представляют довольно большую подсистему фразеологического состава восточнославянских языков и характеризуются широким коннотативным спектром.

Литература

1. Бессонова, Л.А. Темпоральность в русской и белорусской фразеологии [Электронный ресурс]. – Режим доступа: [http:// elib. bspu. by/bitstream](http://elib. bspu. by/bitstream)

/doc/932/1/Темпоральность%20в%20русской%20и%20белорусской%20фразеологии.pdf

2. Гречина, А.А. Темпоральность фразеологических единиц в русском, английском и немецком языках: семантический аспект[Электронный ресурс]. – Режим доступа: <http://pandia.org/text/78/329/27103.php>

3. Гуревич, А.Я. Категорії середньовічної культури / А.Я. Гуревич. М.: Искусство, 1972. — 318 с

4. Сегал, Н.А. Концепт «время» в современной лингвокультуре: способы вербализации в лексико-семантической системе русского языка // Ученые записки Таврического национального университета им. В.И. Вернадского. Серия Филология. Социальные коммуникации. Симферополь: 2013. – Т. 27 (66). № 2. – С. 93-98

5. Словник української мови: в 11 т. / під ред. І.К. Білодід, А.А. Бурячок. – К.: «Наукова думка», 1980. – Т. 11. – 700 с.

Леонтьева Елена Александровна - ст. преподаватель кафедры украинской филологии филологического факультета, аспирант кафедры РЯЛНШ факультета ПиП ПГУ им. Т.Г.Шевченко

lenasterke@mail.ru

К вопросу о классификации фразеологических единиц с семантикой темпоральности в восточнославянских языках.

Молдова Слободзейский р-н с.Суклея ул. Гагарина 225/3 кв.66

0777 -5 -11- 35

Журба Дарья Викторовна - студентка 202 группы ФФ ПГУ им. Т.Г.Шевченко.

UDC 802.0

Ani Harutyunyan
ASU, Philological department
Supervisor: senior lecturer Varduhi Gabrielyan
English and literature,
3rd yearaniharutyunyan155@gmail.com

HISTORICAL BACKGROUND OF ENGLISH IDIOMS

Key words: idiom, language, historico-cultural heritage, figurative meaning, form, phrase

Summary

This article reveals the nature of idioms and analyzes some English idioms basing on their historical background, mentality and culture of Englishmen. Being unique language units, idioms can hardly be translated from one language to the other one. But the current paper proves that despite their historico-cultural bases, some idioms have their equivalents in other languages in terms of meaning and form. Thus, idioms are an important part in mastering any language and it's important to get acquainted with the idiomatic expressions of the given language and it'll be easier with understanding them if learners go deep to the historical background.

Անի Հարությունյան
ԱրՊՀ, քանասիրության ֆակուլտետ, 3-րդ կուրս
Գիտ. դեկ. ավագ դասախոս Գաբրիելյան Վ.
aniharutyunyan155@gmail.com

ԱՆԳԼԵՐԵՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Բանալի բառեր. Դարձվածք, լեզու, պատմա-մշակութային ժառանգություն, փոխաբերական իմաստ, ձև, արտահայտություն

Ամփոփում

Այս հոդվածը բացահայտում է դարձվածքների բնույթը և վերլուծում անգլերեն որոշ դարձվածքներ՝ հիմնվելով նրանց պատմական անցյալի, անգլիացիների մշակույթի և մտածելակերպի վրա: Լինելով յուրահատուկ լեզվական միավորներ, դարձվածքները դժվար թե կարող են թարգմանվել մի լեզվից մյուսը: Բայց այս հոդվածը ապացուցում է, որ չնայած իրենց պատմա-մշակութային հիմքերի, որոշ դարձվածքներ ունեն իրենց համարժեքը ուրիշ լեզուներում՝ ձևով և իմաստով: Այսպիսով, դարձվածքները կարևոր դեր են խաղալով ցանկացած լեզվի տիրապետելու գործում, և անհրաժեշտ է ծանոթ լինել տվյալ լեզվի դարձվածաբանական բառապաշարին, իսկ այս ամենը ավելի կհեշտանա, եթե սովորողները խորը ուսումնասիրեն դարձվածքների պատմական հիմքերը:

Ани Арутюнян
АрГУ, филологический факультет, 3-ий курс
Науч. рук.: старший преподаватель Габриелян В.Г.
aniharutyunyan155@gmail.com

ИСТОРИЯ АНГЛИЙСКИЙ ИДИОМАТИЧЕСКИХ ВЫРАЖЕНИЙ

Ключевые слова: идиома, язык, историко-культурное наследие, переносный смысл, форма, фраза

Резюме

Эта статья раскрывает природу идиом и анализирует некоторые английские идиомы, основываясь на их историческом фоне, менталитете и культуре англичан. Будучи уникальными языковыми единицами, идиомы трудно переводить с одного языка на другой. Но данная статья показывает, что, несмотря на их

историко-культурную основу, некоторые идиомы имеют свои эквиваленты в других языках с точки зрения смысла и формы. Таким образом, идиомы являются важным фактором в освоении любого языка, и важно ознакомиться с идиоматическими выражениями данного языка. А задача упростится, если учащиеся углубятся в историческое прошлое идиом.

Introduction: Language has literal and figurative meanings. The literal meaning is the direct reference of words or sentences to objects. The figurative sense, however, is different from the literal one in the sense that it is used for giving an imaginative description on a special effect. In this case, the meaning of individual words in an expression has nothing to do in the comprehension of the whole meaning. There are fixed phrases consisting of more than one word, with meaning that cannot be inferred by knowing the individual words. Such phrases are called idioms.¹ Idioms have a great extent use and are a part of mastering any language. They are considered as one of the most frequently used means of non-literal language and are a prominent natural part of our everyday discourse, since they reflect the history of the country, development of the language and cultural features of the language speakers.

Foreign languages are another favorite topic, and as these men are bilingual they have a fair notion of what it means to speak and think in many different idioms (Irish writer and playwright John Millington Synge).

The actuality of this article lies in the fact that nowadays idiomatic expressions are part of mastering any language and English learners, especially beginners, come across the problem of understanding idioms. They find it difficult to understand because they don't know what the image of the idiomatic expression is based on.

The aim of the current paper is to analyze some English idioms taking into consideration their non-arbitrary meanings, i. e. to prove the link between idioms and their meanings, basing on their historical background and to shed some light on the main reasons which make idiomatic expressions such a thorny issue, not only for learners, but also for translators.

In linguistics, idioms are usually presumed to be figures of speech contradicting the principle of compositionality. This principle states, that the meaning of the whole should be constructed from the meanings of the parts that make up the whole. Let's take as an example the following sentence: "Michelangelo drew his breath in the period of Renaissance". Now, you can take this literally, as one of the masterpieces of Michelangelo, where he drew his breath on a canvas. But the idiomatic expression "to draw one's breath" has an alternate meaning, implying that a person lives.

It is interesting to note that while there are different idioms for each individual language, many languages have equivalent translations of idioms found in other languages. Idiomatic expressions are particularly hard to translate. For instance, the phrase "kick the bucket" in English which implies that someone has died, can be translated into a phrase that means the equivalent in Ukrainian, "to cut the oak (as in, building a coffin)"; in German, "to look at the radishes from underneath"; or in Swedish, "to take the sign down" and in Armenian "to ground feet".

Because of their rather rigid structure, quite unpredictable meaning, and fairly extensive use, idioms are a notoriously difficult but simultaneously very useful aspect of English for learners because a grasp of them can be a great asset to learners in acquiring a new language.

In any idiom research, an important yet difficult initial question is what constitutes an idiom? The definition of idiom varies considerably from scholar to scholar. As Moon puts it, "Idiom is an ambiguous term, used in conflicting ways". For some scholars, and in a broad sense, the term is rather inclusive, covering, among other things, all fixed phrases, proverbs, formulaic speeches, and, at the extreme, even single polysemic words. For example, scholars such as Cooper (1998) and Katz and

¹ Fromkim, Rodman, "An Introduction To Language", p. 181

Postal (1964) have included as idioms individual words that are used metaphorically, such as weigh as in weigh a decision. Yet for other scholars, and in a more restrictive use, the term idiom is a much narrower concept referring only to those “fixed and semantically opaque or metaphorical” expressions, such as “kick the bucket” or “spill the beans”.

According to Fernando, “only those expressions which become conventionally fixed in a specific order and lexical form, or have only a restricted set of variants, acquire the status of idioms. Combinations, showing a relatively high degree of variability, especially in the matter of lexical replacement such as catch a bus, catch a train, are not regarded as idioms, though they exemplify idiomaticity by virtue of habitual co-occurrence: catch meaning ‘be in time for’ co-occurs usually with a mode of transport, though catch the post is also possible.”

Richards and Schmidt defines an idiom as: “an expression which functions as a single unit and whose meaning cannot be worked out from its separate parts.” However, it is to be noted that an idiom has usually started as a phrase having a literal meaning and then starts to be used in a figurative way.

Al-Haddad argues that there must be some relationship between the meanings of most idioms and the meanings of their constituents at some time in the past, and, if not, they would not have been expressed by them.

Idiomatic expressions are particularly hard to translate. Consequently the translator may face lots of problems, for example when an expression has both literal and figurative or idiomatic meanings, or the fact that not all the idioms can be recognized in a given text easily. In this regard the more difficult an expression is to understand and the less sense it make in a given contest, the more likely a translator will recognize it as an idiom.¹ The translator may also encounter some difficulties while selecting the most appropriate strategy for translating the idiomatic expression. There are three different strategies that are suggested to produce the most effective counterpart for any idiom.


1. Total equivalence (similar meaning and form): This strategy involves using an idiom in the target language which conveys roughly the same meaning as that of the source language idiom and consists of equivalent lexical items: for example, ironing somebody’s head – մեկի գլուխը արդուկել, to eat a beating - ծեծ ուտել, Achilles’ heel – Աքիլեսյան զարշապար, the man in a case – человек в футляре.
2. Partial equivalence (similar in meaning not in form): It’s often possible to find an idiom in the target language which has a meaning similar to that of the source language idiom, but which consists of different lexical items: for example, big fish – важная шишка, to play an advantage over somebody – մեկի գլուխը յուզել.
3. Paraphrasing: It is considered to be the most common way of translating idioms when a match cannot be found in the target language. This strategy involves giving a brief explanation of the meaning behind the idiomatic expression being used in the source language, usually when the expression has no counterparts in the target language or when it seems inappropriate to use idiomatic language in the target text because of differences in stylistic preferences of the source and target languages: for example Jack in office – ինքնավստահ.

Idiomatic expressions are built upon the history, heritage, culture and customs of a nation. According to Ambrose, idioms share cultural and historical information and broaden people’s understanding manipulation of a language.

Realizing the image that the idiom is based on and the origin of the idiom could help in resolving the figurative meaning of that particular idiom. Exploring popular English idioms we have to go back deep to the national heritage of Englishmen. So, let’s take a look at some common idioms and phrases and at the meanings and origins behind them.

¹ Baker, Mona “In other words”, p. 65

To read the riot act: Since the early 19th century we have used 'read the riot act' as a figurative phrase to describe attempts to calm groups of rowdies or to reprimand rowdy characters and warn them to stop behaving badly. But it wasn't always so. Had we been 'reading the riot act' in 1715 we would have noticed capital letters. At that date there was a real Riot Act and it used to be read in public. The 'Riot Act' was passed by the British government in 1714 and came into force in 1715. It was more formally called 'An act for preventing tumults and riotous assemblies.'



This was the result of the fact that in 18th century England the government was fearful of Jacobite mobs who threatened to rise up and overthrow the Hanoverian George I. Thus, this document that gave origin to the idiomatic expression "to read the riot act" is strictly bounded historically concerning only one country and has no equivalents in other languages as a phraseological unit. Translating this expression, the strategies of total equivalence and partial equivalence are impossible, consequently it is translated into other languages by means of paraphrasing (not as the easiest strategy, but as the only possible one).

The first record of the figurative use of the phrase is in William Bradford's Letters, December 1819: "She has just run out to read the riot act in the Nursery."

A skeleton in the closet: For a long time people considered as a fact the tale, that a skeleton in the closet arose from a murder in a family in which the body had been hidden away, only later to be found in a mummified state, close enough to a skeleton. But this idiom, that means "a secret source of shame which a person or family makes efforts to conceal", was first found in printed version in the early 1800s. It has a figurative reference in a piece by William Hendry Stowell, in the UK monthly periodical *The Eclectic Review*, 1816. The 'skeleton' in this case was disease, infectious or hereditary: "... men seem afraid of enquiring after truth: cautions on cautions are multiplied, to conceal the skeleton in the closet or to prevent its escape, till our very fears bring the object constantly before us, not in its real form, but multiplied into every possible shape and magnified in all". From these lines it's obvious that this word-combination had been used earlier (may be in its literal sense), than Stowell wore this periodical.

The dramatic device of a hidden body was used widely in the Gothic novels of the Victorian period. Edgar Allen Poe was the master of such tales; for example, this extract from *The Black Cat*, 1845 : "Gentlemen, I delight to have allayed your suspicions", and here, through the mere frenzy of bravado, I rapped heavily upon that very portion of the brick-work behind which stood the corpse of the wife

of my bosom. The wall fell bodily. The corpse, already greatly decayed, stood erect before the eyes of the spectators.

It has been suggested that the phrase derives from the era of the notorious body snatchers; that is, prior to 1832, when the UK's Anatomy Act allowed the more extensive use of corpses for medical research. The theory goes that, in a scenario similar to that of the concealment of Catholic priests in priest holes in domestic houses in Elizabethan England, doctors would conceal in cupboards the illegally held skeletons they used for teaching. Concealed skeletons are occasionally found in walled-up in houses but they are usually those of unwanted infants.



The notion of a 'skeleton in the closet' as shorthand for the grim evidence of a murder was widely adopted into the language thanks to the writings of the popular Victorian author William Makepeace Thackeray. He referred to 'a skeleton in every house' in a piece in 1845 and explicitly to 'skeletons in closets' in *The Newcomes*; memoirs of a most respectable family, 1854–55: “Some particulars regarding the Newcome family, which will show us that they have a skeleton or two in their closets, as well as their neighbors.”

Whether Thackeray was alluding to actual skeletons or whether he was responding to the imagination of authors like Poe, we are never likely to know. One person he certainly wasn't referring to was the 18th/19th century philosopher Jeremy Bentham, despite his being the best-known actual skeleton in a cupboard. Bentham was hardly aiming to keep his skeleton a secret as he willed that his body be preserved in a wooden cabinet. It is on public display in University College, London.

“It’s Raining Cats and Dogs!”: This must sound like a very odd expression to someone just learning the language for the first time. There are a lot of things we have seen falling from the sky, but cats and dogs are not one of them.

How did this expression come about, then? It’s quite simple. It originated in England in the 1500s, when houses had thatched roofs. A thatch roof consisted of straw piled high, with no wood underneath. In cold, foggy England, this was sometimes the only place for an animal to get warm. Cats, and other small animals, like mice, bugs, and the occasional dog would wind up on the roofs. When it rained really hard, some of the animals would slip off the roof and wash up in the gutters on the street. Hence, the saying, “It’s raining cats and dogs” ended up referring to a heavy rainfall.

Gossip: It is a single word defined as something that is said between two or more people, usually in a derogatory nature, about someone else. Gossip is just one word, but it actually is derived from more than one word. Before TV, phones, and other media, politicians of old had to depend on feedback to find out what was important to people in their jurisdiction. They did this by sending their assistants out to the local taverns and pubs, where most of the people hung out, and they would sip some ale, and listen to people’s conversations, and thus learn what was on people’s minds and what their concerns were. They basically were told to “go sip some ale”, thus the term “gossip” was coined.

Let the cat out of the bag: There are two commonly heard suggested origins of the phrase “Let the cat out of the bag”, that means to disclose a secret. One relates to the fraud of substituting a cat for a piglet at markets. If you let the cat out of the bag you disclosed the trick - and avoided buying a pig in a poke. This form of trickery is long alluded to in the language and 'pigs in a poke' are recorded as early as 1530. The other theory, an interesting one, is that the 'cat' referred to is the cat o' nine tails, which was used to flog ill-disciplined sailors. Again, this has sufficient historical record to be at least possible. The cat o' nine tails was widely used and was referred to in print many years prior to the first use of 'let the cat out of the bag'. The 'nine tails' part of the name derives from the three strands of cord that the rope lashes were made from. Each of the cords was in turn made from three strands of string. When unbraided a piece of rope separated into nine strings. The 'cat' part no doubt alluded to the scratches that the knotted ends of the lash made on the victim's back, like those from a cat's claws.

Of the two explanations, the 'pig in a poke' derivation is the more plausible. The first known use of the phrase in print is in a 1760 edition of The London Magazine: " we could have wished that the strange genius, author of this piece, had not let the cat out of the bag, for it is such a mad , ranting, swearing, caterwauling puss, that we fear no sober family will be troubled with her."

Bite on the bullet: Before the advent of ether, the first anesthetic, surgery was a pretty desperate and painful affair, with the patient fully conscious and feeling the pain. These early surgeries were typically limb amputations or the removal of some object lodged into the body such as a bullet or arrowhead. A typical amputation consisted of the “surgeon” using a saw to hack off the unwanted limb. The skin was then pulled down over the stub and sutured shut. Amazingly, some of these patients survived, but certainly the success ratio was low.

Even after the advent of anesthetics such emergency surgery has had to be performed at times, particularly in times of war when anesthetics may be in limited supply or unavailable.



To ease the pain the patient was given a couple of stiff belts of whiskey to numb the senses, then given a stick or lead bullet to bite down on as the surgeon went to work with knife and saw. It may also have helped to reduce the screaming, which probably benefited the surgeon and attendants. Why bite on a bullet? Made of lead, bullets are malleable. Although quite strong they will actually deform somewhat when bitten hard. Hence teeth would not break as would likely happen from biting a stone for example. Bullets are also readily available in times of war, when this type of surgery is frequently called for. “Bite on the bullet” may have originated in the Civil War. This is how this phrase got the meaning of endure the pain.

“I heard it straight from the horse’s mouth”: Although it is an odd phrase, since horses obviously don’t talk, we understand that it means it is something you cannot deny, it’s an actual fact. The truth is, horses have always been a prized commodity down through the ages. There were a lot of dishonest people who would try to sell less than quality horses to potential buyers. They would also lie about a horse’s age. However, anyone who knew anything about horses knew that you could tell the age by examining the size and shape of the teeth, literally getting the truth straight from the horse’s mouth. This is how the phrase later came to mean getting the literal truth.

“Heard it through the grapevine”: This phrase has come to reference something that is heard, unofficially, or indirectly. This phrase originated at the turn of the century when the telegraph was getting off the ground. Important information was transmitted across country using the telegraph system. The system required thousands of miles of wire to be installed, and this wire was held in place several feet above the ground with poles at equal intervals. People thought the wires and poles looked like the strings used to train vines so the telegraph lines became known as “the grapevine”. The phrase “turn a blind eye”, that means to pretend not to have noticed something, is said to have arisen as a result of the famous English naval hero Admiral Horatio Nelson, who, during the Battle of Copenhagen in 1801, is alleged to have deliberately raised his telescope to his blind eye, thus ensuring that he would not see any signal from his superior giving him discretion to withdraw from the battle. This he pretended not to have noticed the order. This is how this word combination got its figurative meaning.

CONCLUSION: Accordingly, the metaphorical nature of much idiomatic language has been emphasized and the central importance of metaphorical multiword units in language use has been insisted upon. Thus, summing up the results of our research, we have come to the conclusion, that the derivation of idioms comes from the people’s mentality. The Modern English language wouldn’t considered as valuable, as it is now, without idioms, since one of the main testimonies of the language’s self-development and acquiring new values is a certain language’s idiomatic granary. As Flula Borg said the hardest portion of English is Idioms. Idioms are an indissoluble part of native speakers’ everyday conversation, they embellish and enrich their speech, though they use those phrases automatically, but for non-native speakers idiomatic expressions are quite difficult to understand and use in their speech.

A noticeable thing is that even languages belonging to different families may have similar idioms and those which differ dramatically can be guessed within the context.

So, taking into consideration those points and the fact, that most of the prominent poets and writers used idiomatical units in their masterpieces to make their thoughts more expressive and interesting, we can conclude, that idioms are an integral part of a language that make our speech colorful and authentically native and give us a considerable value of information related to the native speakers’ historico-cultural heritage.

Bibliography

1. Thomas C. Cooper, Ph. D., “Foreign Language Annals”, May 1998, 266 p.
2. Katz J. J. and Postal P.M., “An Integrated Theory Of Linguistic Description” , Cambridge, 2003, 416 p.
3. Chitra Fernando, “Idioms and Idiomaticity”, Oxford University Press, 1966, 265 p.
4. Richards Jack C., Schmidt Richard, “Longman Dictionary of Language Teaching and Applied Linguistics”, Harlow, Longman-Pearson, 2002, 246 p.
5. Victoria Fromkin, Robert Rodman, Nina Hyams, “An Introduction To Language”, Canada, Cengage Learning, 2011, 640 p.
6. Baker, Mona, “In Other Words”, London, Routledge, 1992, 301 p.

ՀՏԴ 809.198.1

Լիլիթ Ղուլինյան
Վանաձորի պետական համալսարան,
Բանասիրական ֆակուլտետ,
Հայոց լեզվի և գրականության բաժին,
բակալավրիատի III կուրս
գիտ. ղեկ.՝ Բ.Գ.Թ. դոցենտ Լիլիթ Պետրոսյան

**ՀՈՌՈՄԱՅՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Բանայի բառեր. Բարձրաբաշ, արձանագրություն, համառոտագրություն, կցագիր, լեզվատճական առանձնահատկություններ, գրային նշանների համակարգ, ուղղագրություն, տառերի թվային արժեք:

Ամփոփում

Հոռոմայրի վանքը գտնվում է Հոռոմայր գյուղում: Այդ արձանագրություններն ունեն պատմական, լեզվական, հայագիտական և ազգագրական մեծ նշանակություն: Դրանց միջոցով ծանոթանում ենք տվյալ ժամանակաշրջանի գրային նշանների, համառոտագրությունների համակարգին, ազգային տոներին, տեղեկանույն, թե ինչ անձնանուններ են տարածված եղել հայոց մեջ:

Лелит Гулиян
ВГУ, факультет филологии
Армянский Язык и литература, 3-ий курс
науч. рук.: к.ф.н., доц. Лилит Петросян

ОСОБЕННОСТИ НАДПИСЬИ ЯЗЫКОВОГО СТИЛЯ ОРОМАЙРА

Ключевые слова: надпись, аббревиация, лингво-стилистические особенности, система письменных знаков, орфография, числовые значение букв.

Резюме

Монастырь Оромайра находится в деревне Оромайр. Эти литографии имеют историческое, фольклорное языковое значение. С помощью этих литографий мы знакомимся с письменными знаками, с системой сокращений, с народными праздниками того времени. Можем узнать так же какие имена были распространены среди армян.

Lilit Ghulinyan
VSU, Philological department
Armenian and literature, 3rd year
Supervisor: PhD Lilith Petrosyan

THE LINGIO –STULISTIK PECULIARITIES OF THE HOROMAYR INSCRIPTIONS

Key words: inscription, abbreviation, lingo-stilistic characteristics, the system of written characters, spelling, the numerical value of the letters.

Summery

The church of Horomayr is situated in the villige of Horomayr. These inscriptions have historical, linguistic, ethnographical value. They enable us to learn written symbols abberviation combinations, national holidays. We can know what kind of names were spread at that time.

Հոռոմայրի վանքը գտնվում է Լոռու մարզի Հոռոմայր գյուղում: Հոռոմայրի վանքը՝ իբրև մեկ միասնական հոգևոր-մշակութային կենտրոն, բաղկացած է երկու խմբից՝ Ներքին և Վերին:

Վերինը գյուղի հարավարևելյան կողմում է, Ներքինը՝ Դեբեդի ձախ ափի զառիվայրի վերջում: Վանական համալիրի ներքին խումբը կազմված է Ս. Նշան, Ս. Աստվածածին, երկրորդ և երրորդ եկեղեցիներից: Դրանցից ամենահինը Ս. Նշանն է, որը կառուցվել է 12-րդ դարում Ջաքարե Ամիրսպասալարի և նրա եղբայր Իվանեի կողմից: Ս. Աստվածածինը կառուցվել է 14-րդ դարում Իգնատիոսի կողմից: Համալիրում կան մատուռներ, բնական և ձեռակերտ քարանձավներ, ավանդատուն, խաչքարեր և այլն:

Վերին խումբը կազմված է երկու եկեղեցիներից և գավթից:¹

Սույն հողվածի նպատակը վանքի պատերին արված արձանագրությունների լեզվառձական առանձնահատկությունների վերհանումն է: Թեման արդիական է, քանի որ արձանագրություններն ամփոփում են ոչ միայն լեզվական, այլև պատմական, բանահյուսական և ազգագրական չուսումնասիրված հարուստ նյութ: Արձանագրությունները անփոխարինելի աղբյուր են լեզվական այս կամ այն իրողության բացահայտման համար, դրանց ուսումնասիրության արդյունքում պատկերացում ենք կազմում ինչպես տվյալ ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների, հայոց մեջ տարածված սովորությունների, տոների, անձնանունների մասին, այնպես էլ կենդանի լեզվի քերականական, բառապաշարային առանձնահատկությունների մասին:

Քննության ենք ենթարկել 69 արձանագրություն, որոնք, հիմնականում լինելով ինքնակենսագրական բնույթի, այնուամենայնիվ հարուստ ազգագրական նյութ են ամփոփում իրենց մեջ: Ըստ կառուցվածքի՝ արձանագրությունները հիմնականում բաժանվում են երեք խմբի.

1. տեղեկություններ հեղինակի մասին,
2. կառուցման դրդապատճառները և նպատակը,
3. օրհնանքներ և անեծքներ:

Հեղինակի մասին տեղեկություններում առանձնանում են հատկանունները, որոնք հիմնականում անձնանուններ են: Դրանց ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 13-14-րդ դդ. Հռոմայր գյուղում կիրառվել են **Թովմաս, Թևադորոս, Կոզմաս, Ասյան, Վարդ, Դեդ, Իւանէ, Կուկոր, Վախտանգ, Սմբատ, Պողոս, Աստուածատուր, Համան, Պետրոս, Յակոր, Քերոբ, Օհանն, Միսէոն** արական անունները և **Թամար, Խաթուրի, Մարան** իգական անունները, **Գեղամացի, Անգեղացի, Ճողենց** տոհմանունները, որոնք ըստ ծագման կա մ բնիկ հայկական են, կա մ փոխառություններ կատարված պարսկերենից, հունարենից և վրացերենից: Սրանց զուգահեռ կան անուններ, որոնց ստուգաբանությունն անհայտ է, ինչպես **Խաթուրի, Համանի**: Հռոմայրի քարեղեն արձանագրություններից պարզ է դառնում, որ եկեղեցաշենները ծանոթ են եղել Աստվածաշնչին և հաճախ են կիրառել նաև աստվածաշնչյան հատկանուններ, ինչպես **Քրիստոս, Յիսուս, Կանն, Յուդա**:

Կառուցման դրդապատճառներում են ներկայացվում տեղանունները՝ **Վան** և **Օձուն**:

Անձնանունների կիրառություններին բնորոշ է կայուն որոշառությունը՝ արտահայտված **նվաստս, չնչինս, ծառա** բառերով³:

Արձանագրությունների ուսումնասիրություններում կարևոր է հատկապես գրաբանության քննությունը: Հռոմայրի վանքի արձանագրություններին բնորոշ են համառոտագրությունը և կցագրությունը: Համառոտագրությունները կիրառվում են պատվի տարբեր նշաններով և հիմունքներով⁴.

1. «Սկզբնատառ + վերջնատառ», օրինակ՝ ՍԲ, ԱԾ, ՅՍ:

2. «Առաջին տառ + երկրորդ տառ», օրինակ՝ ԹՎ:

Օրինակներից պարզ է դառնում, որ հատկապես համառոտագրվում են **Աստուած, Աստծոյ, ՅԱստծոյ, Յիսուս, Քրիստոս, Սուրբ, Տէր, խաչ, թվական** բառերը, որոնցից **Աստուած** բառը համառոտագրվում է նաև բառաբաղադրիչի դերում, ինչպես՝ **ԱԾածին**:

¹ Տե՛ս Դիվան հայ վիմագրության, Պրակ 9, Երևան, 2012, էջ 280-282:

² Տե՛ս Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հատոր 2, Երևան, 1942, էջ 444:

³ Տե՛ս Հր. Աճառեան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր 6, Երևան, 1971, էջ 372:

⁴ Տե՛ս Ա. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 195:

Հոռոմայրի վանքի արձանագրությունների կցագրերը իրենց մեջ կարող են ամփոփել 2-4 տառակապակցություններ, որոնք կոչվել են նաև կապագիր, քանի որ ստեղծվել են մեկ կամ մի քանի տառերի միավորումից. վերջինս տեղ տնտեսելու նպատակ ուներ:

Հայ լեզվաբանության մեջ կցագրերի տեսակներին անդրադարձել է Աշոտ Աբրահամյանը. նա առանձնացնում է կցագրերի 3 տեսակ.

1. այնպիսի կցագրեր, որոնք ձևավորվում են տառի աջ սյունագծի՝ հաջորդ տառի ձախ սյունագծին միանալով:

2. Երբ մի տառը նստած է մյուսի ուսին:

3. Օղցագիր, երբ մի տառը կարծես գրված լինի մյուսի ծոցում¹:

Հոռոմայրի արձանագրություններում ծոցագրեր չկան:

Հարավային սրահի արևելքից երկրորդ սյան քիվի վրա առկա արձանագրությունն ամբողջությամբ բաղկացած է համառոտագրություններից՝ ՅՍ, ՔՍ, ԱՕ:

Արձանագրություններում կետադրական նշաններ գրեթե չեն հանդիպում: Հազվադեպ հանդիպում է երկու կետը, որ սովորաբար դրվում է արձանագրությունների վերջում կամ թվական նշանակող տառերի սկզբում և վերջում:

Քննության ենթարկելով վանքի արձանագրությունները՝ եկանք այն եզրակացության, որ դրանց ուղղագրության հիմունքը պատմական է: Պահպանվել են գրաբարյան ուղղագրության կանոնները: Սակայն որոշ դեպքերում շեղումներ են նկատվում, օրինակ՝ գրաբարյան *յ* վերջնահնչյունի անկում՝ *ծառսա, Պողոստ, հոգո, Ակորբա* և այլն, *աւ* երկբարբառը հնչյունափոխություն՝ *Պողոս*:

Երբեմն նույն արձանագրության մեջ ականատես ենք լինում ուղղագրական տարբերակների, օրինակ՝ *Օձուն* տեղանունը կարելի է հանդիպել *Ուձուն* ձևով: *Հոգի* բառը, որ ենթարկվում էր *ռ-աւ* արտաքին հոլովման, կարելի է տեսնել նաև *ռ* հոլովման օրինակներ՝ *հոգոյ*:

Այժմ անդրադառնանք բառերի հաճախադեպությանը՝ ըստ խոսքիմասային պատկանելության: Խոսքի մասերից առավել հաճախադեպ են գոյականները, որոնք հիմնականում պատկանում են *ի-աւ* և *ռ-աւ* արտաքին հոլովումների: Առկա են նաև այլաձև հոլովումների օրինակներ՝ *տեր, հայր, աւր* և այլն: Հատուկ գոյականները ենթարկվում են մեծմասամբ *աւ* արտաքին, ապա *ռ* և *ի* արտաքին հոլովումների:

Գոյականներից հետո հաճախադեպ են բայերը, ապա դերանունները: Բայերը հիմնականում սահմանական եղանակի անցյալ կատարյալի ձևեր են՝ դրված առաջին դեմքով: Դերանուններից հանդիպում են անձնական, ստացական, հարցական և հարաբերական տեսակները:

Գրականություն

1. Դիվան հայ վիմագրության, Պրակ 9, Երևան, 2012:

2. Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հատոր 2, Երևան, 1942:

3. Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր 6, Երևան, 1971:

4. Ա. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973:

¹Տե՛ս Ա. Աբրահամյան, Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973, էջ 187:

ՀՏԴ 81՝37

Անի Չատինյան
 ՎՊՀ բանասիրական ֆակուլտետի
 <<Հայոց լեզու և գրականություն>>
 բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի
 Գիտ. ղեկավար՝ Բ. Գ. Թ., դոցենտ Լիլիթ Պետրոսյան

ԿԱՐՈՒՏ ԲԱՆԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առանցքային բառեր՝ Կարոտ, պատմահամեմատական լեզվաբանություն, իմաստափոխություն, հնդեվրոպական ծագում, հայ հին մատենագրություն, իմաստաբանություն:

Ամփոփում

Պատմահամեմատական լեզվաբանության հիմունքներով կատարված յուրաքանչյուր գիտական ուսումնասիրություն նպատակ ունի զարգացնելու լեզվամտածողության փիլիսոփայությունը: **Կարաւոտ** բառը, իր ծագումնաբանությամբ առնչվելով հնդեվրոպական նախամայր լեզվի, հին հնդկերենի հետ, հայերենում ձևեր է բերել ինքնատիպ նշանակություն և իմաստ: Այն գործածվել է հայերենի պատմական զարգացման բոլոր շրջաններում և բոլոր ոճերում: Առօրյա-խոսակցական ոճում այն դարձվածի՝ բաղադրիչ է: Լինելով անձնանիշ գոյականներին հատուկ վերացական հասկացություն՝ հրապարակախոսության և գեղարվեստական գրականության մեջ **կարոտ** բառը հարաբերվում է իրանիշ գոյականներին

Ани Чатинян

*Студентка 2 курса филологического факультета ВПИИ
 отдела “Армянский язык и литература”*

Научный руководитель кандидат филологических наук Лилит Петросян

ГЕНЕАЛОГИЯ И СЕМАСИЛОГИЯ СЛОВА <<КАРОТ>>

Ключевые слова: "карот", сравнительно-историческое языкознание, смысловые изменения, индоевропейское происхождение, древнеармянская библиография, семантика.

Резюме

Каждое научное исследование, осуществленное на основе сравнительно-исторического языкознания, имеет цель развить философию мышления. Слово “карот” своей генеалогией связывалось с индоевропейским языком-предком, с древнеиндийским, в армянском приобрело своеобразное значение и смысл. Оно применилось во всех областях и стилях исторического развития армянского исторического развития армянского языка.

В разговорно-бытовом стиле он часть фреозеологизм. Будучи абстрактным понятием одушевленных существительных, в публицистике и художественной литературе слово “карот” соотносится с неодушевленными существительными.

Ani Chatinyan

*The 2-nd year student of the department of Armenian
 language and literature of the faculty of Philology of Vanadzor State Petagogical Institute
 Scientific advisor-Candidate of Philological Sciences - Lilit Petrosyan*

THE ETHYMOLOGY AND SEMASIOLOGY OF THE WORD <<KAROT>>

Key words: “karot”, comparative-historical linguistics, semantic changes, Indo-European origins, Armenian ancient bibliography, semantics.

Summery

Each scientific research implemented on the basic of comparative-historical linguistics aims at expanding the Philosophy of language awareness. The word Karot originally dealing with ancestor Indo European language together with old Indian acquired a unique function and meaning in Armenian.

It has been used in all periods and all styles of the historical development of Armenian. Being an abstract concept peculiar to Animate nouns the word karot relates to inanimate nouns in proper publicism and fiction.

Լեզվաբանության ուսումնասիրման ելակետը բառն է՝ որպես լեզվական միավորներից գիտակցության մեջ ամրակայված նշան¹: Յուրաքանչյուր բառ ունի իր պատմությունը, որի քննությամբ զբաղվում է պատմահամեմատական լեզվաբանությունը: Հայերեն բառերի պատմահամեմատական քննությունը նպաստում է արդի ճանաչողական և կիրառական լեզվաբանությունների զարգացմանն այնքանով, որ ներկայացվում են բառի ծագումը և իմաստային և կիրառական առանձնահատկությունները:

Կարաւտ բառում **կար** հնչյունակապակցությունը արմատ է, որը ծագում է հնդեվրոպական ***g^wori-**, ***g^wer** արմատից՝ <<ծանր>> նշանակությամբ, իսկ **աւտ (ou)**-ը հնդեվրոպական քարացած ածանց է: Հին հնդկերենում **guru** արմատը նշանակում էր ոչ միայն **ծանր**, այլ նաև **կարևոր**, **արժանավոր**²: Հին հայերենում **կար** արմատը կիրառվում էր միայն որպես բառաբաղադրիչ՝ **պէտք**, **հարկաւորութիւն** իմաստներով, ինչպես **կարիք**, **կարևոր**, **անկար**, **կարաւտ**³:

Լեզվի պատմական զարգացման ընթացքում **կարաւտ** բաղադրյալ ձևը ձեռք է բերել անմասնատունակության հատկանիշ՝ դառնալով նոր բաղադրյալ բառերի հիմք, ինչպես **կարաւտիչ**, **կարաւտանալ**, **կարաւտագին**, **կարաւտակէզ**, **կարաւտաւոր** և այլն:

Կարոտ բառը հայոց լեզվում գործածվում է հայրենիքի անցած ժամանակների բաղձանքի առնչությամբ.

Կանչում է կրկին, կանչում անդադար

Էն չքնաղ երկրի կարոտը անքուն...

Կարոտ բառը արևելահայերենի **հացի կարոտ**, **խորհրդի կարոտ**, **կարոտել մի բանի** արտահայտություններում կիրառվում է **չքավոր**, **աղքատ**, **կարիքավոր** նյութական իմաստներով, ինչպես՝ Աշտարակում գրառված հեքիաթներից մեկում մի մարդ իր տղային բերում է ավազակների մոտ աշակերտ: Սրանք ասում են, որ կվերցնեն նրան, բայց նաև զարմանում են. «Մեր արհեստն ի նչ ա, որ դու **կարոտում էս** մեր արհեստին»:

Արդի հայերենում **կարոտ** բառը համադրելի է ռուսերենի **тоска** գոյականին, որը նշանակում է նաև **թախիծ**, **տխրություն**, **հոգեկան ճնշվածություն**: Գերմաներենում **կարոտ** բառն ունի **Heimweh** ձևը՝ **հայրենիքի կարոտ** իմաստով և բառացի նշանակում է **տան**, **հայրենիքի վիշտ**:

Հին հայերենում **կարաւտ** ածականը **Ունաւղ զկարիս կամ զպէտս, զհարկաւորութիւն պիտոյից և ձեռնատուութեան, չքաւոր, և փափաքաւղ անձկանաւք, կարաւտեալ, զրկեալ, յետնեալ** իմաստներով համարժեք էր հունարեն **Έσδεις**, **χρείαι** **έχου**, **δείμενος**, **έλαττόμενος**, **στερεόμενος** և լատիներեն **Indigens**, **indigus**, **egens**, **inops**, **carens**, **privatus** բառերին Աստվածաշնչի առակներում, Խոսրով Անձևացու, Փիլոն Երրայեցու, Սարգիս Վարդապետի, Հովհաննես Սարկավագի երկերում, ինչպես՝ **Թագաւոր կարաւտ մտաւք՝ մեծ զրպարտող: Զմերկն ծածկեսցես և կերակրովք և ըմպելեաւք զկարաւտն լցուցես: Կարաւտից թառամեցուցանել ընդ ծաղկի մարմնոյն՝ և զախտս բնաւորականս**⁴:

Կարաւտ ածականը հին մատենագրության մեջ կիրառվում էր որպես ածականական բառակապակցության գերադաս անդամ՝ պահանջելով տարբեր հոլովածներով արտահայտված լրացումներ: «**Կարաւտ** + տրական հոլոված» կաղապարով օրինակներ են

¹ Տես Է. Աթայան, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, 1981, էջ 78:

² Տես Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջ 390 :

³ Տես Զ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973, էջ 543:

⁴ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Երևան, 1979, էջ՝ 1077:

կիրառված Աստվածաշնչի առակներում, Գիրք պիտոյիցում, Շարականներում, Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» երկում, Ոսկեբերան Հայրապետի, Ներսես Շնորհալու երկերում, ինչպէս՝ *Միրտ անմտի կարաւոս է հանճարոյ: Կարաւոս է օգնականութեան: Չէ՛ կարաւոս ումէք վարդապետի: Կարաւոս եմ ես շնորհի քո և ողորմութեան: Ո՛չ թէ կարաւոս ինչ հայրաբուն փառացն: Բնութիւնս մեր միմեանց կարաւոս ստեղծաւ:*

«*Կարաւոս* + գործիական հոլովածն» կաղապարը ՆՀԲ-ի հեղինակները համարում են լատիներեն ոճին հատուկ կիրառություններ: Կաղապարը հանդիպում է Աստվածաշնչում, Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկում, Ոսկեբերան Հայրապետի, Եփրեմ Ասորու երկերում, ինչպէս՝ *Միթէ կարաւոս ի նչ իցեմ ես այսահարօք: Ոչ էթէ կարաւոս ինչ ոք իւիք էր: Ոչ էթէ նա ինչ կարաւոս մերովքս իցէ, այլ մէք ամենին նորայովքն: Ոչ էր նա կարաւոս գողովքն, էթէ վկայք եղիցին յարութեան նորա: Ճշմարիտ ազատութեամբն որդւոյն կարաւոս էին:*

Կարաւոս ածականը կիրառվում էր նաև իբրև ստորոգյալի մաս՝ հարաբերվելով *եմ, առնել* բայերին, ինչպէս՝ *Ահա յերեսաց քոց ոչ կարաւոս եղև: Մի՛ կարաւոս առնէր զիս ի յուսոյ իմմէ; Ոչ ոք արար կարաւոս ապաստանի:*

Հայ հին գրականության մեջ *կարաւոս* բառը կիրառվել է նաև գոյականի նշանակությամբ՝ հունարեն ἔσθεια, χρεία և լատիներեն Inopia, opus բառերի համաբանությամբ: Սուրբ Աթանես Հայրապետի ճառերում, Մաշտոցի, Խոսրով Անձևացու, Գրիգոր Սկևռացու, Վարդան Վարդապետի երկերում և Գ. Նարեկացու գանձերում, ինչպէս՝ *Ոչ առ կարաւոս ինչ բանն մարմին եղև: Մէք միշտ կարաւոսիւ ըղձանք ընդունել ի քէն գողորմութիւն: Ծարաւն և կարաւոսն ազգակից են միմեանց: Կարաւոսիւն և սիրով յանձն առցէ:*

Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»¹ երկում *կարաւոս* գոյականը համադրվել է *փառք, շնորհք* գոյականներին՝ արտահայտելով *տենչանք* իմաստը, ինչպէս՝ *Ոչ ինչ է նա կարաւոս փառաց (202): Ոչ թէ ի ինդրել ապաստան, և կամ կարաւոս ինչ հայրաբուն փառացն, այլ զի լուիցեն (211): Զկարաւոսս լցուցանեն մեծամեծ շահիւք (4): Զկարաւոսս լցուցանեն երկնաւոր առատութեամբն (7):*

Փափստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց»² երկում *կարաւոս* գոյականի համարժեքով կիրառվել է *կարաւոսեալ* անցյալ դերբայը՝ *հիվանդության տեսակ* իմաստով, ինչպէս՝ *Կաղ և կույրք և մարմնահարք, և կարաւոսեալք ընդ նմա և ի նոսա ակրմբի դարման էին բազմեալք (65): Ո՛վ իցէ, որ սիրեաց զհիւանդութիւնն և ստեաց զառողջութիւնն. յամենայնի պակասեալք, և ոչ կարաւոսեալք (71): Եմ բայի հետ կարաւոս գոյականը արտահայտել է *ցանկանալ* իմաստը, ինչպէս՝ *Ամենայն ոք կարաւոս էր առ նա գալ (81):**

Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»³ երկում նույնպէս գոյականական կիրառությամբ է հանդէս եկել անցյալ դերբայը՝ *ցանկալիին սպասող, աղքատ* իմաստներով, ինչպէս՝ *Ճշմարտութեան բանից մերոց կարաւոսեալ ստեպ-ստեպ և անյագ առնիցեն զընթերցումն պատմութեանց մերոց հայրենեաց (253): Գնեաց ցորեան բազում յոյժ և բաշխեաց ամենայն կարաւոսեալք (160):*

Հայ հին մատենագրության մեջ *կարաւոս* բառահիմքով են կազմվել *կարաւոսաբար, կարաւոսաբերիմ, կարաւոսագոյն, կարաւոսական, կարաւոսամիտ, կարաւոսանամ* բառերը:

Ժամանակակից հայերենում *կարոտ* բառը նույնպէս կիրառվում է տարբեր խոսքիմասային արժեքներով և տարբեր նշանակություններով⁴:

1. *Մի բան ունենալու փափագ ցանկություն բաղձանք տենչանք* նշանակություններով կիրառվել է Ավետիք Իսահակյանի և Ակսել Բակունցի երկերում, օրինակ՝ Անգին յարիս լույս երեսին կարոտ եմ, նազուկ մեջքին ծով ծամերին կարոտ եմ... Նրան տանջում էր հայրենիքի կարոտը:

2. *Մի բանից գուրկ եղող և մի բանից զրկված, զրկանքից տառապող* իմաստներով *կարոտ* բառը կիրառվել է Րաֆֆու ստեղծագործություններում, ինչպէս՝ բայց նախքան օգնելը պետք է գիտենալ թե ինչ բանի կարոտ են նրանք: Քունը մոտ չէ գալիս կարոտ աչքերին

¹ Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց,

² Փափստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց,

³ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց,

⁴ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3,

3. Նյութական միջոցներից գուրկ, ընչագուրկ չքավոր ,աղքատ իմաստներով կարոտ բառը կիրառվել է Մուրացանի երկերում, ինչպես կարոտները ոչ միայն կերակուր այլև հանդերձներ էին ստանում:

4. **Կարոտ** բառի գործիական հոլովածը *խանդաղատանքով, սիրով, գուրգուրանքով* մակբայական նշանակությամբ է կիրառվել Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում. *Բաբին ու Ներսիկը փարվեցին մորը և սկսեցին կարոտով համբուրվել:*

Ասույթներում հաճախ կիրառվող **կարոտ** գոյական-ստորգելին բնութագրվում է անձնանշությամբ, սակայն գեղարվեստական գրականության փոխաբերական պատկերներում բառիմաստի ընդլայնման օրենքով **կարոտ** գոյականը վերագրվում է նաև իրանիշ գոյականներին, ինչպես՝ *Գառը մայունով լայիս, լորը ննջում հանգիստ, Արևից հետո կարոտ են ապրում հասկ ու քիստ*¹:

Կարոտ բառը, ընդլայնելով իր կիրառության ոլորտները, գործածվում է նաև արդի հրապարակախոսության մեջ, ինչպես՝ *2007 թվականի հունվարի մեկից կգործի հարավ-կովկասյան երկրների միջխորհրդարանական վեհաժողովը, որը կարող է կարևոր գործոն դառնալ տարածաշրջանում առկա ճշգրտման կարոտ խնդիրների քննարկման ու լուծման համար: Սակայն հայերենի ենթաշերտի բառազանձի հազարավոր բառեր դեռևս կարոտ են քննության: Թարգմանութեան են կարոտ անթերի...*³:

Սպասում-կարոտ հարաբերությունը շարունակվում է նաև հայ նոր գրականության էջերում, ինչպես՝ *Երբ ռազմաճակատից վերադարձա, սարերի կարոտ կար իմ սրտում, չորս տարի որսի չէի գնացել*⁴: Այլը, դրանք **խելքի կարոտ** մարդիկ են, որ խելք ունենան, հայի հետ կկոպեն ⁵: Մի ուշանա, երբ նրա ամենամեղապարտ հոգին մխիթարության **կարոտ** է⁶: Իսկ Չարենցի տարերքն ի բնե այնպիսին է, որ **կարոտ էր ընդվզում**⁷: Հորդ անձրևիդ Սեր կարոտ ենք, Չորացած երկրի պես պապակած, Սուրբ հոգիովդ այցելե մեզ Լուր մեր աղերս հոն Աստված...⁸

Ժողովրդախոսակցական լեզվում **կարոտ** բառն ունի գոյականական կիրառություն, ինչպես՝ **կարոտ զգալ, կարոտը լցնել, կարոտ լինել, կարոտ կենալ, կարոտ մնալ, կարոտը քաշել** դարձվածքներում այն խնդրի կամ ստորոգելիի գործառույթներով հարաբերվել է բայերին⁹:

Պատմահամեմատական լեզվաբանության հիմունքներով կատարված յուրաքանչյուր գիտական ուսումնասիրություն նպատակ ունի զարգացնելու լեզվամտածողության փիլիսոփայությունը: **Կարաւոտ** բառը, իր ծագումնաբանությամբ առնչվելով հնդեվրոպական նախամայր լեզվի, հին հնդկերենի հետ, հայերենում ձեռք է բերել ինքնատիպ նշանակություն և իմաստ: Այն գործածվել է հայերենի պատմական զարգացման բոլոր շրջաններում և բոլոր ոճերում: Առօրյա-խոսակցական ոճում այն դարձվածի բաղադրիչ է: Լինելով անձնանիշ գոյականներին հատուկ վերացական հասկացություն՝ հրապարակախոսության և գեղարվեստական գրականության մեջ **կարոտ** բառը հարաբերվում է իրանիշ գոյականներին¹⁰:

Գրականություն

1. Է. Աթայան, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Երևան, 1981:
2. Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան (խմբագրությամբ և առաջաբանով՝ Վահան Մարգարյանի). Երևան. «Ասողիկ» հրատարակչություն, 2010:
3. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973:
4. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Երևան, 1979:
5. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ.3 Երևան 1974

¹ Օբրո Օբրոյան, Նոան հատիկ:

² Ազգ թերթ:

³ Հրագրան թերթ:

⁴ Վախթանգ Անանյան, Պատմվածքներ:

⁵ Մկրտիչ Մարգարյան, Դարավերջի հայր:

⁶ Վլադիմիր Հարությունյան, Նաիրյան առավոտներ:

⁷ Վահագն Դավթյան, Ի սկզբանե էր բան....

⁸ Հոգևոր երգարան:

⁹ Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1:

¹⁰ Ծնորհակալություն ենք հայտնում Հրաչ Մարտիրոսյանին՝ հոդվածը կարդալու և որոշ դիտարկումներ անելու համար:

Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան: հ.1. Երևան 1976 :

Աղբյուրներ

1. Ազաթանգեղոս, Պատմութիւն Հայոց,
2. Փաւստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց,
3. Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց,
4. Օքրո Օքրոյան, Նռան հատիկ:
5. Ազգ թերթ:
6. Հրագրան թերթ:
7. Վախթանգ Անանյան, Պատմվածքներ:
8. Մկրտիչ Սարգսյան, Դարավերջի հայր:
9. Վլադիմիր Հարությունյան, Նաիրյան առավոտներ:
10. Վահագն Դավթյան, Ի սկզբանէ էր բանն....
11. Հոգևոր երգարան:

ՀՏԴ 81 '38

Ալինա Նահապետյան
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի
(Հայոց լեզվի և նրա դասականության մեթոդիկայի ամբիոն)
մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի
Կոտայքի մարզ, քաղաք Եղվարդ, Երևանյան 9/32
Էլ. Հասցե՝ nahapetian.alina@mail.ru
Հեռախոսահամար՝ 096-64-83-64

**ՀԱՎԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՄԵՎՈՐՄԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ Պ.
ՍԵՎԱԿԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ**

Բանալի բառեր՝ հակադրություն, հակադրությո՞, հականիշ, բարդություն, հարադրություն, պատկերավորման միջոց, կրկնակի հակադրություն, մակդիր:

Ամփոփում

Փորձել ենք հորվածի շրջանակներում վեր հանել Պ. Սևակի պոետիկայում տեղ գտած միևյանց ոչ հակադիր իմաստ արտահայտող բառերից ու կապակցություններից կազմված լեզվական հականիշներ՝ արտահայտված գոյականով, ածականով, դերանունով, բայով..., որոնք հակադրությունների դրսևորման ինքնատիպ միջոցներ են:

Алина Нахпетян
АГПУ, факультет филологии, маг. 2
nahapetian.alina@mail.ru

**СТИЛИСТИЧЕСКАЯ ЦЕННОСТЬ ЯЗЫКОВЫХ СРЕДСТВ ПРОТИВОПОСТОВЛЕНИЙ ВЫРОЖЕННЫЕ В
ПОЭЗИИ П. СЕВАКА**

Ключевые слова: противопоставление, антоним, сопоставление, сложные слова, средство выражения, двойное противопоставление, эпитет.

Резюме

В данной статье мы попытались показать в поэзии П. Севака те языковые антонимы, составленные из слов и словосочетаний не противоположных друг другу по смыслу, выраженные существительными, прилагательными, глаголами, местоимениями..., которые являются своеобразными средствами выражения противоположностей.

Alina Nahapetyan
ASPU, the faculty of philology, masters degree 2nd year
nahapetian.alina@mail.ru

**STYLISTIC VALUE OF THE LINGUISTIC MEANS OF OPPOSITIONS CONVEYED IN THE POETRY OF
SEVAK**

Key words: opposition, antonym, comparison, compound words, means of expression, double opposition, epithet, attribute.

Summary

In this article we have tried to identify the antonyms in the poetry of P. Sevak, that are composed of words and word combinations of not opposite sense, expressed by nouns, adjectives, verbs, pronouns... which are peculiar forms of expressing contrasts

Գեղարվեստական խոսքի հիմնական հատկանիշներից մեկն այն է, որ ունի գեղագիտական արժեք: Մտքեր հորդորելուն զուգահեռ գրողը նպաստակ ունի ազդելու ընթերցողի հոգեկան աշխարհի, զգացմունքների վրա, հուզելու և հետաքրքրելու: Լեզվի ոճաարտահայտչական հնարավորությունները գեղարվեստական ճշտությանը նպաստում են յուրովի: Տարբեր գրողներ գեղարվեստական պատկերի առանցք են դարձնում լեզվաոճական տարբեր միջոցներ: Արտահայտման բազմազան միջոցներից Պ. Սևակը հաճախ է ընտրում այնպիսիք, որոնց դիմել են քչերը. սա պայմանավորված է նրա մտածողությամբ, ոճի առանձնահատկություններով, բանաստեղծական շարքերի կառուցվածքային ու գաղափարական յուրահատկություններով: Գրողի խոսքարվեստի քննությունը պարզում է բանաստեղծի մտածողության ինքնատիպ մի գիծ, որն այս կամ այն չափով նկատելի է նրա ստեղծագործության բոլոր շրջաններում:

Հականշությունը բառային միավորների իմաստների հակադրությունը կամ բևեռացումն է¹: Հականիշներն իրար հակադիր իմաստ արտահայտող բառեր են, որոնք խոսքի մեջ ունեն ոճական որոշակի երանգավորում: Հականիշները լինում են

1. բուն,
2. բացարձակ կամ հակադրական,
3. ժխտական:

Բուն հականիշ բառերի արտահայտած հասկացությունների հակադիր լինելն զգացվում է կիրառությունից դուրս, ինչպես՝

Դու ***փոքր*** ես եղել, եղել ես մի բուռ,

Բայց ***մեծ*** է եղել ափդ լիաբուռ: /«Մովետական իմ Հայաստան»

շարքից, 14/

Տե՛ս, գունափոխված ծառերը բոլոր

Իրենց սաղարթը ձուլածո ոսկին

Առանց գնզոցի մանրում են անվերջ,

Վերածում ***կծան*** թղթադրամի՝

Գնելով իրենց հանգիստ քնելու իրավունքը ***թանկ***:

/Նամակի փոխարեն, 104/

Թրթրում եմ

Բաց աչքերով խարխափումից,

Փակ թշնամուց... /Մարտում եմ, 409/

Բացարձակ կամ ***հակադրական հականիշները*** ցույց են տալիս տրամաբանորեն իրար հակառակ առարկա /անձ/, հատկանիշ և գործողություն, որոնք միմյանց հակառակ իմաստ են արտահայտում, ինչպես՝

Մխայ է ***ասե յր***,

Մխայ է ***սիրե յր***,

Այրվե՛լը,

Մխա յր: /Մխալ խոսք սխալի մասին, 164/

Կա՛մ ***սիրել եմ***, կա՛մ ***ասել եմ***, բայց չեմ խաբել,

Երկու հարկով ***բարձր*** եմ ապրել,

Ցած եմ իջել երկու հարկով,

Իջել-ելել, սակայն երբեք չեմ խարխափել: /Մարսափում եմ ես լոկ հիմա, 232/

Մեր քննության ընթացքում նկատել ենք հակադրությունների բազմաթիվ դեպքեր՝ արտահայտված բարդություններով:

Երկու և ավելի հիմնական ձևայինների կամ բառերի կցումով կամ հարադրությամբ կազմված բաղադրությունները, որոնք ունեն մեկ ընդհանուր շեշտ, կոչվում են բարդություններ կամ բարդ բառեր¹:

¹ Շալունց Ռ., Հականիշ բառերը ժամանակակից հայերենում, Երևան, 1979, էջ 174:

Բարդությունները լինում են՝

1. **վերլուծական**, որոնց մեջ են մտնում հարադրություններն ու կրկնավորները,
2. **համադրական**, որոնք էլ բաժանվում են կցական և իսկական բարդությունների:

Վերլուծական եղանակով կազմվող այն բարդությունները, որոնց կազմի մեջ մտնող երկու և ավելի բառեր առանց միաձուլվելու, հանդես գալով հարադրաբար, արտահայտում են մեկ բառի իմաստ, կոչվում են հարադրական բարդություններ: Այս բարդությունները լինում են անվանական և բայական:

Հարադրություն են կոչվում բառերի այնպիսի միացություններ, «որոնք թեպետ մեկ բառի նշանակություն ունեն, բայց սովորաբար մեկ բառ չեն համարվում և միացած իբրև մեկ բառ չեն գրվում»²: Դրանք ծագում են սովորական շարահյուսական կապակցություններից: Երկարատև գործածության հետևանքով կապակցությունների բաղադրիչների քերականական շարահյուսական և իմաստային նախկին հարաբերությունները հետզհետե մթագնում են կամ կորչում (երբեմն նաև պահպանվում են՝ ստանալով լրացուցիչ երանգներ), և առաջ են գալիս նոր իմաստներ ու հարաբերություններ: Հարադրությունների էական առանձնահատկությունն այն է, որ, կազմված լինելով երկու (երբեմն ավելի) բաղադրիչներից, բարդությունը հաղորդում է ավելի լավ իմաստ, որը բաղադրիչներն առանձին-առանձին չեն արտահայտում, և իր բոլոր բաղադրիչներով դիտվում է որպես մեկ բառային միավոր կամ միություն:

Անվանական հարադրական բարդությունները կազմվում են գոյական, ածական, մակբայ, թվական, շաղկապ, եղանակավորող բառ խոսքի մասերի հարադրությամբ: Փաստերը վկայում են, որ վերոնշյալ կառույցներով ստեղծված հակադրությունները խոսքին հաղորդում են պատկերավորություն, հուզարտահայտչականություն: Ասվածը հավաստենք օրինակներով:

1. **Գոյականական հարադրությամբ հակադրություններ**: Կազմվում են գոյականների հարադրությամբ, շաղկապներով կամ առանց շաղկապների.

Չէ՞ որ ինչ-որ տեղ **փորրերս ու Մեծը**

Հավասարվում ենք, դառնում աջակից:

/Խոսք հավաստիքի, 52/

Հարդագողի հետքե՞ր թողնել վերստին

Եվ այս անգամ երկրի՞ վրա, աշխարհի՞ ,

Նրա **լայնքին ու երկայնքի՞ն**... խաչի՛ պես: /Վահագնին, 72/

2. **Ածականական հարադրությամբ հակադրություններ**: Կազմվում են ածականների հարադրությամբ.

Այս ձեռքերը՝ մո՛ր ձեռքերը,

Հինավուրց ու նո՛ր ձեռքերը... /Մոր ձեռքերը, 32/

Դու մերթ եղել ես անհաղթ ու արի.

Մերթ **դաժան** եղել, մերթ **մեղմ ու բարի**.

Բայց ոչ... անիրավ: /Դու այսպես ես եղել, 21/

3. **Մակբայական հարադրությամբ հակադրություններ**: Կազմվում են արմատական մակբայների հարադրությամբ, երբեմն **և, ու** շաղկապներով:

Թո՛ղ անկարելին դառնա կարելի

Աշխարհու մ համայն,

Ամենքի՛ս համար,

Դառնա կարելի **վաղն ու հենց հիմա**,

Դառնա կարելի մե՛կ բառով՝

-Բա՛րև... /Բարև, 200/

Իսկ ձեռքե՛րը... մի կատարյալ, _

Մի կատարյալ... ի՛նչ... գալարանք.

Առաջ ու ետ, վերև-ներքև.

Բան են որսում ասես նրանք (4, 122):

¹ Սուրբայան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2008, էջ 232:

² Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 169□

4. Ղերանվանական հարադրությամբ հակադրություններ:

Խոփերը նորից

Այստեղ ու այնտեղ

Ծեր Երկրագնդի հին մաշկն են քորում.../Բարի աջողում, 114/

5. Շաղկապներով և եղանակավորող բառերով կազմված հարադրություններով հակադրություններ:

Բայց սուտ ասելն ավելի է հեշտ ու դյուրին,

Քան թե անվերջ սուտ լսելը: /Դարակեսի հիմնը, 148/

6. Հարադրական բայերով կազմված հարադրությամբ հակադրություններ:

Համրիչ եմ դարձել ես ձեր մատներին.

Քաշում-ես տալիս.

Հաշիվ եք անում... /Համրիչ եմ դարձել, 181/

Հարադրական բարդությունների մեծ մասը կազմում են հարադրական բայերը: Հարադրական բայերը կազմվում են երկու անկախ բայերից և հարադրից. առաջինները կոչվում են գուգադրական բայեր կամ գուգաբայական հարադրություններ, երկրորդները հարադրական կամ հարադրավոր բայեր:

Վիճակագրական քննությունը ցույց է տալիս, որ վերոնշյալ հարադրություններով կազմված հակադրությունները բավական մեծ տեղ են գտել Պ. Սևակի չափածոյում:

Չուգադրական բայերը կազմվում են երկու անկախ բայերից, որոնցից յուրաքանչյուրը առանձին, անկախ խոնարհվում է:

Եվ ամբողջ կյանքում նրանք մշտապես մի բան են անում՝

Ղիմակ են դնում-ղիմակ են հանում.

Ի՛նչ է թե իրենց դեմքը չտեսնեմ ավելորդ անգամ: /Իրերի բնությունը, 130/

Սխալ է և հողը.

Ատնրվում-ծախվում է: /Սխալ խոսք սխալի մասին, 163/

Հարադրավոր բայերը կազմվում են որևէ հարադիրով և բայով(հարադրյալ)

Անբաժան է քեզնից քո թովչանքը,

Ինչպես գույնը՝ ծաղկից,

Ինչպես պայծառությունն՝ արեգակից,

Ինչպես անրջանքը

Պատանեկան թովիչ այն հասակից,

Որից ես դուրս եկել

Ու դեռ դուրս չեմ եկել: /Անբաժան քեզնից, 224/

Եկեք նաև մի՛ նեղանաք,

Թե սիրում են՝ ցույց չեն տալիս.

Բայց մի՛ ներեք.

Թե ցույց տալիս, քայց չեն սիրում: /Ներում եմ, 470/

Հետաքրքրական են հայերենի տարբեր խոսքի մասերի պատկանող բառերի կրկնությամբ կազմված հակադրությունները:

Հեղինակը ածանցման և բառաբարդման միջոցով ստեղծել է նույն արմատով կազմված բառերի գուգորդմամբ հակադրություններ.

Ա՛խ այս անվերջ «պիտի»-ն

Վերջ ունենա՞ պիտի... /Պիտի, 187/

Միայն է՛ս բովանդակ գիշեր աչքերըս պիտի չփակեմ,

Քանի որ ամեն կերպ հիմա քո տեղն է բռնել կամենում

Մի անձանոթ պառաված օրիորդ՝

Այս կպչուն անբնությունը,

Որից ինձ չեն փրկում նաև քնաբեր կոչված դեղերը:

/Բարի գիշեր, 211/

Քիչ ենք թախծում մենք անառիթ,

Շատ ենք տխրում առիթով,

Քիչ ենք կարդում, շատ ենք գրում,

Շատ ենք խորհում, քիչ քնում: /Օերանում ենք, 613/
Մեր դյուցազներգակ ու վահագնապաշտ գոռոզ գուսանաց
Բամբ բամբիռների և թինդ թմբուկի ձայների թվով,
Մեր սիրախոով տաղերգու արանց, կանանց, կուսանաց
Անհայտ ու հայտնի բույրքի համեմատ.../Հայոց լեզու, 66/

Պ. Սևակի պոեզիայում տեղ են գտել մի շարք ժխտական հականիշներ, որոնցով ձևավորված հակադրությունները խոսքին հաղորդում են պատկերավորման շեշտված երանգներ:

Ժխտական են այն հականիշները, որոնց մեջ մտնող բաղադրիչներից մեկը ժխտում է, բացառում մյուսի ցույց տված հատկանիշի առկայությունը: Ժխտական հականիշները սովորաբար կազմվում են **ան-, ապ-, դժ-, տ-, չ-** ժխտական նախածանցներով, ինչպես՝

Մաթեմատիկական այս **անհայտը**
Հայտնի՝ քննադատ է,
Եվ ինչո՞վ է հայտնի-
Ինքն իրեն է հերքել, ինքն իրեն է հերքում... /Ութնյակներ, 490/
Քիչ է պատահում, որ ինքըս ինձնից
Փոքր ինչ **գոհ** լինեմ:
Ղժզոհ եմ հաճախ,

Ուրեմն՝ մարդ եմ ու դեռ ապրում եմ: /Միրում եմ սիրել, 504/

Եթե **ասեմ**

Բոց կլինի,

Եթե **չասեմ**

Խոց կլինի... /Ութնյակներ, 492/

Ինչպես նշեցինք, հականիշները հակառակ իմաստ ունեցող բառեր են ու բառաձևեր, նախադասություններ, և առաջին հայացքից թվում է, թե սրանք գեղարվեստական խոսքում ոճական-արտահայտչական առանձնակի արժեք չպետք է ունենային: Բայց իրականում այդպես չէ. տարբեր տեսակի հականիշներ հաճախ են գործածվում գեղարվեստական խոսքում և ունեն արտահայտչական որոշակի լիցք՝ ստեղծելով գեղարվեստական պատկեր ու հակադրություն:

Հավելենք, որ մեր նպատակն է նաև պատկերավորման համակարգում վեր հանել հակադրությունների ոճական և արտահայտչական բազմապիսի դրսևորումներ:

Սևակին հաջողվել է ստեղծել նաև կրկնակի հակադրություն.

Երաժշտում և դեռ պիտի
Հորդաբխուն երաժշտեր, /հակադիր գոյականների և բայի
Սուտը հերքած՝ ճիշտը ճշտեր. միջոցով/
Բայց... մի ահեղ գիշերվա մեջ
Արյուն հազան կանաչ դաշտեր: /Անլռելի, էջ 173/

Բայց երբ կատարվի տենչանքը նրաց,

Նրանցից ոմանք /կրկնակի հակադիր մակբայներով/
/Կամա թե անկամ, ուրախ թե տրտում/

Կուղեկցեն իմ դին: /Երերի բնությունը, 130/

Հեղինակը հետաքրքրական հնար է գործածում: Բառային հականիշի հակադրությունը զուգորդվում է զուգադրական համադասական շաղկապը հակասման իմաստով.

Ու թե զարմանալ

Ոչ թե լավ բանից, **այլ** միայն **վատի՛ց.** /Երգել, 392-393/

Նա՝ **վատ** թե **լավ**՝ կյանքում առևտուր է անում.

/Ուշացած իմ սեր, 335/

Հեղինակը հակադրություն է ստեղծում ածականների ու բայերի զուգորդմամբ, որը նույնպես ոճական հնարք է.

Սև էր գնացել՝ բեզ-մորուքը **սև**,

Վարդապետական **սև** սքեմ հագած:

Սև էր գնացել՝ եկավ ճերմակած..../Անլռելի, 233/

Սևակը շատ է օգտվել գունային մակդիրներից, որոնք շատ անգամ չեն բխում բնութագրվող առարկայի կամ երևույթի առանձնահատկություններից: Դրվելով գոյականների վրա այդ մակդիրները ոչ թե նրանց արտաքին հատկանիշներն են ցույց տալիս, այլ դառնում են տրամադրությունների ու ապրումների արտահայտման միջոցներ: Գույներ անվանող ածականները հանդես են բերում նաև ոճական բազմազան նրբերանգներ և ներգործում են միայն բանաստեղծական միջավայրում:

Հատկապես «Ակրեյի Զանգակատուն» պոեմում հաճախակի գործածական է սև մակդիրը: Սև բառով բնորոշող մակդիրների գործածության դեպքում առավել ցայտուն արտահայտվում է ժողովրդական լեզվամտածողությանը հարազատ մնալու հանգամանքը: Այս մակդիրի հմուտ գործածումով Սևակն արտահայտում է ողբերգական իրավիճակներ և գունային ընկալման մեջ նոր որակ է հանդես բերում՝ ստեղծելով հակադրություն ճերմակ ածականի հետ:

Եվ հաջողություն կոչվածը մարդու
կամ բախտ ասվածը մի ամբողջ ազգի
կախված չէ՝ արդյոք
այդ խոյի գույնի ց, գույնի ց միմիայն՝
սև կամ ճերմակից: /265/

Ու երբ ձմռան անձայրածիր սպիտակին
Մարդիկ իրենց մժեղային սևն են խառնում՝
Տաք տներից ելնում են դուրս, ու, իսկի պես,
Ո՞ւր են գնում-ո՞ւր են դառնում՝ չես ըմբռնում: /Ակրեյի, էջ 109/

Սև են վարսերըդ, ինչքան ճերմակ է

Դեռ փակ կուրծքը քո... /Երգ երգոց, 361/

Ինչպես նկատում ենք, որպես գունային հակադրություն մշտական-բացասական բաղադրիչ հանդես է գալիս սև գույնը, որի հետ գունային հակադրություն են կազմում սպիտակը, ճերմակը:

Գրականություն

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
2. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2007:
3. Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, 1984:
4. Շալունց Ռ., Հականիշ բառերը ժամանակակից հայերենում, Երևան, 1979:
5. Պապոյան Արտ., Ակնարկներ Պ. Սևակի բառապաշարի և տաղաչափության, Երևան, 1991:
6. Պապոյան Արտ., Պ. Սևակի չափածոյի բառապաշարը, Երևան, 1970:
7. Պապոյան Արտ., Չափածոյի լեզվական արվեստի հարցեր, Երևան, 1976:
8. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2008:
10. Սևակ Պ., Երկերի ժողովածու, Երևան, 1974:

ՀՏԴ 81-13

Էդիտա Ալտունյան
Բանասիրական ֆակուլտետ,
Հայոց լեզու և գրականություն 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Ք. դոցենտ Հասմիկ Ղազարյան
(E-mail: edita_altunyan@mail.ru)

**ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԿԱ ԵՎ ԱՆՑՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ
ՀԱՎԵԼՅԱԼ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՏՏՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Բանալի բառեր՝ Սահմանական եղանակ, անկատար ներկա, անկատար անցյալ, առաձական ներկա, պատմական ներկա, կրկնության անկատար, մշտական ներկա, սահմանումի ներկա, բնութագրումի ներկա, ընդհանուր անկատար:

Ա մ փ ռ փ ռ մ

Քաղված բնագրային օրինակների հիման վրա ներկայացվում են սահմանական եղանակի անկատար ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերի իմաստային կիրառությունները: Սահմանական եղանակի այս երկու ժամանակաձևերը շատ են կիրառվում հատկապես հավելյալ իմաստներով: Ուսումնասիրելով ԲաՖՖու ստեղծագործությունները՝ եկել ենք այն համոզման, որ սահմանական եղանակի ներկա ժամանակը կարող է ցույց տալ ներկայում որպես սովորույթ կրկնվող գործողություններ, բնության երևույթներ, կիրառվել պատմական ներկայի իմաստով, իսկ խոսակցական լեզվում՝ նաև ապառնու նշանակությամբ: Անկատար անցյալը, իր հիմնական կիրառությունից բացի, ցույց է տալիս նաև անցյալում որպես կարգ, կանոն, սովորույթ կատարվող կամ կրկնվող գործողություններ:

*Эдита Алтунян
АрГУ, факультет филологии, 3-ий курс
Науч. рук.: к.ф.н., доц. Асмик Казарян
E-mail: edita_altunyan@mail.ru*

**СМЫСЛОВЫЕ ИСПОЛЬЗОВАНИЕ ГЛАГОЛОВ ИЗЪЯВИТЕЛЬНОГО НАКЛОНЕНИЯ
НЕСОВЕРШЕННОГО ВИДА НАСТАЯЩЕГО И ПРОШЕДШЕГО ВРЕМЕНИ В ПРОИЗВЕДЕНИЯХ
РАФФИ**

Ключевые слова: *изъявительное наклонение, настоящее несовершенное время, прошедшее несовершенное время, повторяющиеся действия, значение будущего, историческое настоящее, ограничительное настоящее, описательное настоящее, общее несовершенное*

Резюме

. Эти два вида изъявительного наклонения широко используются особенно в дополнительном значении. В данной работе в произведениях Раффи большое внимание уделено именно этим двум видам.

Изучая произведения Раффи мы пришли к выводу, что настоящее время изъявительного наклонения может показывать повторяющиеся действия в настоящем и явления природы. Прошедшее время несовершенного вида, кроме своего основного применения показывает порядок, правило и повторяющиеся действия в прошлом, а в разговорном языке также может иметь значение будущего.

*Edita Altunyan
ASU, the Faculty of philology, 3rd year
Supervisor: Ph.D Hasmik Khazaryan*

E-mail: edita.altunyan@mail.ru

THE SEMANTIC IMPLAMEMANTATION OF THE INDICATIVE MOOD OF THE PRESENT AND PAST
SIMPLE TENSES IN RAFFI'S WORKS

Keywords: *Indicative Mood, Present Imperfect, Past Imperfect Time, repetitive actions, future value, present historical, real restrictive, descriptive present, imperfect total*

Summary

These two types of inclination of the Indicative Mood are widely used, especially in additional value. In the given article great attention is paid to these two types of inclination in Raffi's works. We came to the conclusion that the Present Tense of Indicative Mood shows repeated actions in the present and phenomena of nature. Past Imperfect Tense, in addition to its primary application shows the order, rule and repeated actions in the past, and in the spoken language can also be used for the future.

Խոսքի մասերի համակարգում բայ խոսքի մասն առանձնանում է իր քերականական դրսևորումներով և քերականական կարգերի հարստությամբ: Բային հատուկ քերականական կարգերից է եղանակի կարգը, որի տրամաբանական հիմքն այն է, որ նույն և միևնույն գործողությունը կարող է ներկայացվել որպես իրական, ցանկալի, ենթադրական, կարելիական, պայմանական, անհրաժեշտական և այլն: Բայի եղանակի կարգը ցույց է տալիս խոսողի վերաբերմունքը գործողության նկատմամբ: Ըստ այդմ էլ ժամանակակից հայերենի քերականության մեջ ընդունվում է բայի 5 եղանակ՝ սահմանական, ըղձական, պայմանական կամ ենթադրական, հարաբերական կամ անհրաժեշտական և հրամայական¹:

Սահմանական եղանակը ցույց է տալիս այնպիսի գործողություն կամ եղելություն, որը խոսողի կողմից դիտվում է որպես օբյեկտիվորեն ստույգ կատարվող, կատարված կամ կատարելի²: Սահմանական եղանակի բայաձևերի միջոցով հաստատվում կամ ժխտվում է որևէ գործողություն, որը, ըստ խոսողի, համընկնում է իրականության հետ: Սահմանականը, այսպես կոչված, առարկայական եղանակ է՝ ի տարբերություն մյուս եղանակների, որոնք, այսպես կոչված, անձնական եղանակներ են³:

Սահմանականը լեզվաբանական գրականության մեջ բնորոշվում է նաև որպես իրականության եղանակ, որովհետև սահմանական եղանակի բայաձևերով առարկայական աշխարհի եղելությունները ներկայացվում են իրենց բնական դրության մեջ՝ առանց անձնական վերաբերմունքի: Սակայն այստեղ մի էական վերապահում պետք է անել սահմանական եղանակի բայաձևերը ցույց են տալիս ստույգ գործողությունը ոչ թե բացարձակ կերպով, այլ խոսողի ներկայացմամբ: Դրանից բխում է, որ սահմանական եղանակով կարող են արտահայտվել այնպիսի գործողություններ, որոնք, ըստ էության, չեն համապատասխանում իրականությանը, որը, սակայն, քերականական տեսակետից նշանակություն չունի⁴: Օրինակ՝

Հարկը պահանջած ժամանակ խաչագողը միայն անորոշ ձայներ է արձակում կամ թռչունների ու գազանների բարբառով ազդարարություններ է կարդում:

Սահմանական եղանակը բայաձևերով ամենահարուստն է: Սահմանական եղանակի ժամանակաձևերն են՝ անկատար ներկա, անկատար անցյալ, վաղակատար ներկա, վաղակատար անցյալ, ապակատար ներկա, ապակատար անցյալ և անցյալ կատարյալ: Այս ժամանակաձևերը, բացի իրենց հիմնական կիրառություններից, ունեն նաև հավելյալ իմաստային կիրառություններ, որոնք հայ լեզվաբանական գրականության մեջ ուսումնասիրված են: Հաշվի առնելով, որ նշված ժամանակաձևերի իմաստային կիրառությունների բացահայտումը կարևոր է նաև առանձին հեղինակների լեզվի ուսումնասիրության առումով, մենք կփորձենք, առաջնորդվելով նկարագրական-վերլուծական մեթոդով, ստորև գրական հայերենի օրինաչափությունների քննությամբ ներկայացնել

¹ Տե՛ս Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Եր., 1989, էջ 284:

² Տե՛ս Մ.Աբրահամյան, Ն.Պատնայան, Հ.Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Եր., 1974, էջ 359:

³ Տե՛ս Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Եր., 1989, էջ 287:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 287:

անկատար ներկա և անցյալ ժամանակային ձևերի հիմնական և, առանձնապես, հավելյալ կիրառությունները Րաֆֆու ստեղծագործություններում:

Անկատար ներկա ժամանակաձևը, որ կազմվում է անկատար դերբայի և օժանդակ բայի ներկա ժամանակի ձևերի հարադրությամբ, ցույց է տալիս խոսելու պահին ընթացքի մեջ գտնվող գործողություն, մի գործողություն, որի սկիզբն անշուշտ տրամաբանորեն ընկնում է խոսելու պահից առաջ, բայց և խոսելու պահին ընթացքի մեջ է, շարունակվում է հարաձիգ¹: Օրինակ՝

Այդ քարեղեն բանտի միջից ես ամեն բոպե, ամեն վայրկյան **տեսնում եմ**, թե ինչ է **կատարվում** այնտեղ, Հայոց աշխարհում...

Սա սահմանական ներկայի հիմնական կամ գլխավոր իմաստն է, որը դրսևորում է ամենափոքր շարակարգում կամ հենց սուկ բայաձևի մեջ, և ներկայի մյուս բոլոր կիրառությունները բխում և պայմանավորված են հենց այդ իմաստով: Ներկա ժամանակաձևի վերը նշված հիմնական կամ գլխավոր կիրառության համար բերենք բնագրային այլ օրինակներ.

Նա **սպասում է**. երկար ու ձիգ տարիներ **սպասում է**: Նա **տանում է** աղքատություն, միշտ հրապուրված այն քաղցր հույսով, թե մի օր յուր տղամարդը կվերադառնա գանձերով:

Նա **կամենում է** հայոց թագավոր լինել, բայց միննույն ժամանակ ավերակ ու անմարդաբնակ է **դարձնում** այն երկիրը, որի թագավորը պետք է դառնա:

Իր այս բնույթով հայերենի ներկա ժամանակը, իրոք, անկատար ներկա է, և, եթե այսպես կարելի է ասել, անսահմանափակ ժամանակ է, քանի որ չի սահմանափակված ո՛չ սկզբով, ո՛չ էլ վերջով՝ ի տարբերություն մյուս ժամանակների, որոնք, որպես կանոն, այս կամ այն սահմանափակվածությունն ունեն: Օրինակ՝ **գնացել է** ձևի մեջ գործողությունը սահմանափակված է ըստ ավարտվածության (գործողությունը կատարվել վերջացել է), իսկ **գնալու է** ձևի մեջ՝ ըստ սկզբնավորության (գործողությունը դեռ նոր պետք է կատարվի):

Բացի իր հիմնական նշանակությունից, սահմանական եղանակի ներկա ժամանակը կիրառվում է նաև հետևյալ իմաստներով.

1. Ինչպես նշում է Մ. Ասատրյանը սահմանական եղանակի ներկայի բայաձևերով են արտահայտվում բոլոր ժամանակների համար ընդունելի ճշմարտությունները, իրերի մշտական հատկանիշների վերագրումը, բնորոշումները, սահմանափակումները և այլն: Դա, այսպես կոչված, ընդհանուր կամ մշտական ներկան է, որով արտահայտված եղելությունները այդպես են ըստ բնության և ոչ թե ըստ իրադրության: Ընդհանուր կամ մշտական ներկան լայն առումով սահմանումի կամ բնութագրական ներկա է²: Օրինակ՝

Մամիկոնյանը **ծնում է** դավաճաններ... Մամիկոնյանը **ծնում է** և հերոսներ:

Այս նախադասության մեջ սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերով Րաֆֆին իր վերաբերմունքն է արտահայտում կամ բնութագրում Մամիկոնյան տոհմին:

2. Ցույց է տալիս բնության մեջ երևան եկած և արդեն կայուն վիճակում գտնվող երևույթներ, աշխարհագրական տեղադրություններ և այլն³: Օրինակ՝

Գետերը, մեծամեծ լճերը, լեռնային շղթաները իրանց բազմաթիվ ճյուղավորմամբ **կտրատում են** երկրի մակերևույթը, **ստեղծում են** բազմաթիվ մանր մասնիկներ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է մի-մի գավառ, որ բաժանված է բնական սահմաններով:

3. Ներկայի բայաձևերով արտահայտվում են իբրև կարգ, կանոն, սովորույթ կրկնվող գործողությունները, որոնք ընդգրկում են մի որոշակի ժամանակաշրջան, սրանց մեջ և խոսողի ներկան: Օրինակ՝

Դերվիշը տուն, տեղ, ընտանիք և հայրենիք-ոչինչ չունի: Նա երգելով **թափառում է** երկրից երկիր և ամեն տեղ բաց է նրա առջև Աստծո սեղանը:

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 288:

² Տե՛ս նույն տեղում, էջ 288:

³ Տե՛ս Մ. Աբրահամյան, Ն. Պառնայան, Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Եր., 1974, էջ 362:

Երբ մարդերի մեղքը **բազմանում է**, Աստված էլ **խրատում է** նրանց տեսակ-տեսակ պատիժներով:

Տիգրանում եղած ժամանակս միշտ հետամուտ էի գիտենալու, թե ի՛նչ են մեքենայում պարսից արքունիքում:

Այսպիսի ներկան ընդհանուր ձևով կոչվում է սովորութ կամ կրկնության ներկա¹:

4.Ներկայի բայաձևերով կարող են արտահայտվել նաև անցյալում կատարված-վերջացած գործողությունները: Այսպիսի ներկան քերականա-գիտության մեջ կոչվում է պատմական ներկա²: Ներկայի այսպիսի կիրառությունը ավելի շուտ ոճական մի յուրահատուկ հնարանք է և ունի հատուկ նպատակադրում՝ անցյալի գործողությունները մտովի տեղափոխել ներկա ժամանակակետը և դրանք ներկայացնել որպես խոսելու պահին հարաձիգ կատարվող՝ այսպիսով կենդանություն և հավաստիություն հաղորդելով խոսքին:

Բաֆֆին իր պատմական բնույթի ստեղծագործություններում հաճախ է կիրառել անկատար ներկան հենց այս իմաստով:

Այն օրից, որ քրիստոնեությունը **մուտք է գործում** Հայաստանում, **նկատվում է** մի խուլ, ներքին կոիվ թագավորի և հոգևորականության մեջ, որ հաճախ **արտահայտվում է** դառն, եղերական վախճանով:

Քուրայի տան մեջ աղոթելու ժամանակ հանկարծ գերեզմանից **հայտնվում է** Մուհամետը յուր երկար մորուքով և սպիտակ չալմայով:

Պատմական ներկան խոսքը դարձնում է ավելի պատկերավոր, արտահայտիչ և կենդանի:

5.Երբեմն, հատկապես խոսակցական լեզվում, ներկա ժամանակաձևը կարող է արտահայտել նաև ապագայում կատարվելիք գործողություն, այսինքն՝ կիրառվել ապառնու նշանակությամբ: Այս իմաստով ներկան գործածվում է այն դեպքում, երբ խոսողը կատարվելիք գործողությունը համարում է այնքան իրական, հաստատ, անպայման, որ կարծես խոսելու պահին արդեն կատարվելիս լինի³: Օրինակ՝

Մոզերով ու մոզպետներով **է գալիս** իմ հայրը... **գալիս է** ոչնչացնելու մեր եկեղեցիները, մեր դպրությունը, **գալիս է** պարսկացնելու մեզ... **գալիս է** ծածկելու հայրենի երկիրը հրով և արյունով... **գալիս է** ոչնչացնելու այն եկեղեցիները, որոնց մեջ ինքը մկրտված է որոնցից շատերը յուր նախնիքն են կառուցել... **գալիս է** մեզ ստիպելու, որ պարսկերեն աղոթենք և պարսից աստվածներին երկրպագենք...

Ինչպես տեսնում ենք այս նախադասության մեջ սահմանական ներկա ժամանակի բայաձևերով Բաֆֆին տալիս է ստույգ, առարկություն չվերցնող գործողություն, որը, սակայն, կատարվում է ոչ թե ներկայում՝ խոսելու պահին, այլ կատարվելու է ապագայում՝ խոսելու պահից հետո:

Սահմանական եղանակի անկատար անցյալ ժամանակը կազմվում է անկատար դերբայի և օժանդակ բայի անցյալ ժամանակի ձևերի հարադրությամբ: Օրինակ՝

Վաղորդյան մառախուղը հետզհետե **նտրանում էր**, **նրբանում էր**, որքան արեգակը **բարձրանում էր** հորիզոնի վրա:

Ողական ամբոցը շրջապատող ծառագարդ բլուրները **մխում էին** ձյունի պես ճերմակ գույրձիներով:

Սահմանական եղանակի անցյալի անկատար ժամանակը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետի համեմատությամբ հաստատ կատարվող, սկսված և ընթացքի մեջ եղող գործողություն կամ եղելություն⁴: Բերենք բնագրային այլ օրինակներ.

Նա **շարունակում էր** դեգերել գետի ափերի մոտ և լի սրամտությամբ **նայում էր** դեպի արևելք:

¹ Տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Եր., 1989, էջ 289:

² Տե՛ս նույն տեղում, էջ 289:

³ Տե՛ս Մ. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Եր., 1974, էջ 362:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 364:

Երևում էին Քարքե լեռան բարձրությունները իրանց մթին ծմակներով և մռայլ անտառներով, որոնք իրանց անմատչելի թավուտների մեջ **անուցանում էին** մի մռայլ ժողովուրդ:

Անցյալ անկատար ժամանակով արտահայտվում են անցյալում որպես կարգ, կանոն, սովորույթ կատարվող գործողությունները կամ էլ կրկնվող գործողությունները: Սա, այսպես կոչված, ընդհանուր կամ սովորույթի ու կրկնության անկատարն է¹:

Բաֆֆու ստեղծագործություններում հանդիմում ենք անկատար անցյալի այսպիսի կիրառությունների: Օրինակ՝

Ամեն օր **անցնում էի** այն լուսամուտի առջևից, որտեղից օրիորդը դեպի փողոցը նայել կսիրեր, բայց միանգամայն ևս չկարողացա տեսնել նրան:

Վանքը հաց **էր տալիս, կերակրում էր** ժողովրդի աղքատներին, **դարմանում էր** նրա հիվանդներին, **անուցում էր** նրա որբերին և այրիներն, ուսում և կրթություն **էր տալիս** նրա զավակներին:

Այսպիսով՝ սահմանական եղանակի ներկա ժամանակը լայն առումով սահմանումի կամ բնութագրական ներկա է, կարող է ցույց տալ ներկայում որպես սովորույթ կրկնվող գործողություններ, բնության երևույթներ, կիրառվել պատմական ներկայի իմաստով, իսկ խոսակցական լեզվում՝ նաև ապառնու նշանակությամբ: Անկատար անցյալը, իր հիմնական կիրառությունից բացի, ցույց է տալիս նաև անցյալում որպես կարգ, կանոն, սովորույթ կատարվող կամ կրկնվող գործողություններ:

Գրականություն

1. Ս.Աբրահամյան, Ն.Պատնասյան, Հ.Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ.2, Եր., 1974:
2. Ս.Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1969:
3. Զ.Աղաջանյան, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Եր., 2007:
4. Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1989:
5. Յու.Ավետիսյան, Հ. Զաքարյան, Ձևաբանություն, Եր., 2008:
6. Ռ.Իշխանյան, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1971:

¹ Տե՛ս Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Եր., 1989, էջ 291:

ՀՏԴ 81 37(038)=111

Վանուհի Բաղրամյան
Խ. Աբովյանի անվան
Հայկական պետական մանկավարժական համալսարան
Բանասիրական ֆակուլտետ,
հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն
vanuhi.baghramyan@mail.ru

**ՊՍՏՃԵՆՈՒՄՍԱՅԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՎԳԵՐՅԱՆԻ ԱՆԳԼԵՐԵՆ
ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆՈՒՄ**

Բանալի բառեր. պատճենում, բառային, բառակապակցական, իմաստային պատճենում, կիսապատճենում:

Անկոփում

Հարություն Ավգերյանի անգլերեն-հայերեն բառարանի միջոցով փորձել ենք պարզել, թե ¹որքանով է վերջինս պատճենումային թարգմանություններով ազդել հայերենի բառաֆոնդի հարստացման վրա: Մեր նպատակն է երկլեզվյան այս բառարանից դուրս բերել պատճենումային նորաբանությունները:

Պատճենումները՝ իբրև նորաբանություններ, ընտրել ենք՝ հիմք ընդունելով «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանը: Անգլերեն առանձին արմատների թարգմանությունը կատարել ենք ըստ Յովհաննէս Չաքմազեանի «Ընդարձակ Բառարան անգլիերէնէ-հայերէն»-ի:

Այս դեպքում ևս պատճենումները լինում են մի քանի տեսակ՝ բառային, կայուն բառակապակցության կամ ասույթի արժեք ունեցող և իմաստային պատճենումներ:

Քանակի առումով գերակշռում են բառային և կայուն կապակցության պատճենումները:

**Вануи Баграмян
АГПУ, факультет филологии
vanuhi.baghramyan@mail.ru**

**КОЛЬКИРОВАННЫЙ ПЕРЕВОД В СЛОВАРЕ “АНГЛИЙСКИЙ И АРМЯНСКИЙ” АРУТЮНА
АВГЕРЯНА**

Ключевые слова: калькирование, словообразовательные кальки, словосочетания, семантические кальки, полукальки.

Резюме

Взяв за основу словарь “Английский и армянский” Арутюна Авгеряна мы попытались выяснить, насколько калькирование, как переводческий прием, повлияло на обогащение словарного запаса армянского языка. Нашей целью являлась выборка калькированных неологизмов.

Мы выбрали калькированные неологизмы, основываясь на сравнительном анализе со словарем “Новый словарь Айказовского языка”. Основой для перевода отдельных корней английских слов послужил “Обширный англо-армянский словарь” Ованеса Чакмагчяна.

В данном случае калькированные слова делятся на несколько видов: словообразовательные кальки, устойчивые словосочетания, высказывания, семантические кальки или фразеологические кальки.

В результате мы пришли к выводу, что в количественном соотношении преобладают словообразовательные кальки и калькирование, выраженное устойчивыми словосочетаниями.

*Vanouhi Baghramyan
ASPU, the faculty of philology
vanuhi.baghramyan@mail.ru*

GALQUING (LOAN TRANSLATION) IN THE DICTIONARY "ENGLISH AND ARMENIAN" OF HARUTYUN AVGERYAN

Key words: *calques, calquing, semantic calques, phraseological calques, semi-calques.*

Summary

By using the dictionary "English and Armenian" of Harutyun Avgeryan we have tried to find out how calques included in the dictionary impact on the enrichment of the vocabulary of the Armenian language. Our goal was to select calquing neologisms.

We chose calques based on a comparative analysis with the dictionary "New dictionary of Haikazian language." Separate English roots have been selected from "Wide English- Armenian glossary" of Hovhannes Chakmagcheyan.

Selected calques are divided into several types: words, phrases, semantic calques, phraseological calques.

As a result, we have concluded the words or phrases as calques dominate in quantity.

Պատճենումը՝ իբրև լեզվաբանական երևույթ, գրեթե միշտ եղել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Չնայած երևույթը խոր արմատներ ունի (օրինակ՝ իր զարգացման դասական շրջանում գրական լատիներենը թարգմանում կամ պատճենում էր բազմաթիվ հունական բառեր)¹, սակայն գիտական լուրջ ուսումնասիրություններ կատարվել են միայն անցած դարից սկսած: Այս առիթով Շ. Բալլին գրում է. «Գիտությունը դեռևս չի տվել լեզվական ազդեցության այս տարատեսակի թափն ու նշանակությունը բնորոշող գնահատականը»²:

Տերմինի հիմքում ֆրանս. calque բառն է (անգլերեն translation loan), որն իբրև լեզվաբանական տերմին առաջին անգամ օգտագործել է Շ. Բալլին³: Հայ լեզվաբանության մեջ երևույթը հաճախ անվանում են ռուսերեն калька բառի փոխառությամբ՝ կալկա, այլ եզրույթով նաև անալոգիական կազմություն, սակայն վերջին շրջանում ընդունված է օգտագործել ֆրանսերեն calque բառի (այն սկզբնապես տպագրական գործի տերմին է եղել) հայերեն համարժեքը՝ պատճենում:

Ըստ այսմ՝ այն բառերը, կայուն կապակցությունները, իմաստները, որոնք մի լեզվի ազդեցության հետևանքով մուտք են գործում մեկ այլ լեզու՝ վերարտադրվելով տվյալ լեզվի համապատասխան միջոցներով, կոչվում են պատճենումներ:

Պատճենումների դասակարգման հարցում կան շատ մոտեցումներ: Ա. Սուրիաայանը, օրինակ, դրանք բաժանում է երկու խմբի՝ 1) իմաստային և կառուցվածքային (բառակազմական), 2) կիսապատճենումներ (մասնակի)⁴:

Մեր աշխատանքում հիշատակված բառարանի՝ «Ա» տառի բառհոդվածների թարգմանություններում հանդիպում են հիմնականում բառակազմական պատճենումներ:

Կիսապատճենումների փոխառյալ բաղադրիչները միջնորդական փոխառություններ են, հայերենում մասնավորապես ռուսերենի միջոցով (իր ընդունած իմաստով ու հնչյունական ձևափոխությամբ) փոխառվածները: Անգլերենի հետ կապված՝ նշենք հետևյալ օրինակները. գալա-համերգ<անգլ. gala, շոու<show, շոփ-ճանապարհորդություն<shop, փոփ-երգչուհի<անգլ. pop, հիպիական շարժում<անգլ. hippy, հումոր<անգլ. humor, փոփ-երաժշտություն<անգլ. pop և այլն:

Ա. Բարլեզիզյանը, անդրադառնալով պատճենումների դասակարգումների հետ կապված տարբեր կարծիքներին, առանձնացնում է հետևյալ տեսակները. 1) բառապատճենումներ, 2) կայուն բառակապակցությունների կամ ասույթների պատճենումներ, 3) իմաստային պատճենումներ⁵:

¹Տե՛ս Ի. Тронский., Очерки по истории латинского языка, М.-Л., 1953, էջ192:

²Մ. Балли, Французская стилистика, М.,1961, էջ 71:

³ Տե՛ս Նույն տեղում:

⁴ Տե՛ս Ա. Սուրիաայան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1982, էջ 265:

⁵ Տե՛ս Ա. Բարլեզիզյան, Հայ-ֆրանսիական լեզվական առնչությունները XIX դարում, Ե., 1997, էջ 95, 99:

Իմաստային բառապատճենումը (семантическая калька) հենվում է տերմինի ընդհանուր իմաստի վրա:

Տ. Արբեկովան գրում է. «պատճենումը փոխառության եղանակ է, որի ժամանակ փոխառվում են բառի կամ բառակապակցության զուգորդական իմաստը և կառուցվածքային կաղապարը»¹: Հաշվի առնելով Արբեկովայի այս ձևակերպումը՝ կարող ենք ասել, որ պատճենումը մեխանիկական երևույթ չէ, և պատճենվող միավորի կաղապարը պարզապես վերարտադրվում է պատճենող լեզվում: Մեխանիկական պատճենման են ենթարկվում մեծ մասամբ տերմինները: Այդ մասին խոսելիս Շ. Բալլին մատնանշում է «Սուրբ գրքի լեզուն» գրելով, որ «նրան բնորոշ յուրահատուկ բառերի ու պատկերների մեծամասնությունը ներկայացնում է «Աստծո խոսքի» բառացի, մեխանիկական թարգմանություն»²:

Պատճենումը իրականացվում է պատճենող լեզվի բառակազմական հնարավորությունների միջոցով. այսինքն՝ լեզվական նոր միավորը ենթարկվում է տվյալ լեզվի ներքին օրինաչափություններին:

Հայերենի հետ համեմատությունը կատարել ենք՝ ըստ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»³ (այսուհետև՝ ՆՀԲ), պատճենումների՝ անգլերեն առանձին արմատների թարգմանությունների համեմատությունը՝ ըստ Յովհաննես Չաքմազեանի «Ընդարձակ Բառարան անգլիերեն-հայերեն»-ի⁴:

Իմաստային նորաբանական պատճենումները այս բառարանում թվով համեմատաբար շատ ավելի քիչ են: Օրինակ.

After-all մ. Ջկնի, կամ 'ի վախճան ամենայնի, 'ի վախճանի, հուսկ յետոյ, ապա:

Չկնի բառը ՆՀԲ-ում և՛ նախդրի, և՛ մակբայի արժեքով կա, սակայն այն չունի «ամեն ինչի վախճանը» իմաստը:

Այա բառը ևս կա, սակայն ոչ «ամեն ինչի վախճանը» իմաստով:

To Aftereye բ, ն. Ունել առաջի աչաց, զգուշանալ:

Չգուշանալ բառը «աչքի առաջ ունենալ» իմաստը ՆՀԲ-ում չունի:

Պատճենումային թարգմանությունները լինում են ածանցավոր (նախաձանցավոր, վերջաձանցավոր, բարդաձանցավոր) և բարդ բառեր, բառակապակցություններով կազմություններ:

Նախաձանցավոր կազմությամբ պատճենում. օրինակ՝

Afoot մ. Հետևակ, հետիոտու: յոտին, պատրաստ:

Յոտին բառ չկա. Այն foot բառի պատճենված ձևն է:

Վերջաձանցավոր կազմությամբ պատճենում. օրինակ՝

Anathematical ած. Անաթեմական, նզովական, նզովից, բանադրանաց:

Անաթեմա եզրույթը ՆՀԲ-ում կա: *Cal* ածականակերտ ածանցը հայերեն թարգմանվում է «ական» իմաստով. anathemat (անաթեմա)+cal (ական):

Ancientness գ. Հնութիւն, վաղնջութիւն:

Ness գոյականակերտ ածանցը թարգմանվում է հայերեն գոյականակերտ «ություն» իմաստով: «Ancient» (հին, վաղեմի) + «ness» (ություն):

Amplly մ. Լայնաբար, ճոխաբար, լիով, ճոխագոյնս, ընդարձակ, առատապէս, լիովի:

Լայնաբար բառը ՆՀԲ-ում չկա: *Ample* եզրույթը, որ նշանակում է «լայն», «առատ», *ly* մակբայակերտ ածանցով, որ հայերեն «աբար» մակբայակերտ ածանցի նշանակությունն ունի, կազմել է նոր բառ: Նույն ածանցի իմաստի թարգմանությամբ է նաև «analogically» բառը, որ թարգմանվում է այսպես.

Analogically մ. Վերաբանութեամբ, համեմատաբար, ըստ համեմատութեան:

Այստեղ «վերբանութեամբ» բառը ՆՀԲ-ում չկա. մակբայի իմաստը հայերենում գոյականի ներգոյական հոլովածնի համանուն բառույթով է դրսևորվում: Նույն կերպ պատճենվել է «antecedently» բառը.

¹Т. Арбекова, Лексикология английского языка, М., 1977, էջ 146:

²Ш. Балли, Французская стилистика, М., 1961, էջ 71:

³Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836:

⁴Տե՛ս Н. ШАКМАКJIAN, COMPREHENSIVE DICTIONARY ENGLISH-ARMENIAN, BOSTON, 1922:

Antecedently մ. Նախընթացաբար, յառաջագոյն, նախքան:

Antecedent (նախընթաց)+ly (աբար):

Բարդաձանցավոր կազմութեամբ պատճենում. օրինակ՝

Aerology գ. Օդաբանութիւն:

Aero նշանակում է «օդ», *loge*՝ «գետ», *չ*-ն գոյականակերտ ածանց է, որ թարգմանվում է հայերէն «ութիւն» գոյականակերտ վերջածանցի իմաստով: Նույն վերջածանցով «aerology» բառն է:

Aerology գ. Օդագնութիւն, դիտողութիւն օդոյ:

Aero նշանակում է «օդ», *scope*՝ գործունեության շրջանակ, իրազեկութիւն:

Առավել գերակշռող են **բարդ բառերի** օրինակները: Դրանցից են.

Aforenamed ած. Յառաջագոյն անուանեալ կամ ասացեալ:

Afore նշանակում է «առաջի», «նախ քան», «յառաջ քան», *name*՝ «անուն»:

Aforesaid ած. Յառաջագոյն կամ նախ ասացեալ:

Յառաջագոյն բառի բացատրության մեջ, իբրև մակբայ, կա «յառաջագոյն ասել, կամ պատմել» արտահայտությունը:

Aforetime մ. Յառաջագոյն, կանխաւ, յանցեալ ժամանակա:

Յանցեալ ժամանակա պատճենումային թարգմանություն է:

Մի շարք օրինակներ կան՝ կազմված *after* արմատով, որն ունի մի շարք նշանակություններ, ինչպէս՝ «հետո», «նորից», «կրկին» և այլն:

After-all մ. Չկնի, կամ 'ի վախճան ամենայնի, 'ի վախճանի, հուսկ յետոյ, ապա:

«*Հուսկ յետոյ*», «*ի վախճան ամենայնի*» արտահայտությունները պատճենումային թարգմանություններ են:

Afterbirth գ. Աղտ տղայոց:

Սա *ընկերք* բառն է, որ նշանակում է «ծին»: «Մինչև ծնվելը» բառացի թարգմանություն է:

Aftercost գ. Նորոգ կամ 'կրկին ծախք:

Cost նշանակում է «արժենալ»: *After* (կրկին)+*cost* (արժենալ):

Aftercrop գ. Կրկին հունձք:

Crop նշանակում է «հունձք»: *After* (կրկին)+ *crop* (հունձք):

To Aftereye բ, ն. Ունել առաջի աչաց, զգուշանալ:

«Ունել առաջի աչաց» արտահայտությունը պատճենումային թարգմանություն է:

Aftergame գ. Կրկին կամ վերստին հնարք:

Game նշանակում է «մրցախաղ», «ծրագիր», «գործելակերպ»: *After* (կրկին)+*game* (ծրագիր):

Aftermath գ. Կրկի հունձք խոտոյ, հունձք աշնայնոյ:

Math նշանակում է «հունձք»:

Airbuilt ած. Օդաշէն, շինեալ կամ կառուցեալ յօդա:

Air նշանակում է «օդ», *built* «ձև», «ձեւում», «կերտում»:

Անգլերէնի նույն սկզբնարմատով նաև մեկ այլ բառ.

Airdrawn ած. Օդանկար, նկարեալ յօդա:

Drawn նշանակում է «նկար»:

Առանձին բառական կապակցությունների օրինակները ունեն հետևյալ առանձնահատկությունը. պատճենման ժամանակ երբեմն բառը կամ բառակապակցությունը փոխում են մայր լեզվի շարադասությունը կրելով պատճենող լեզվին հատուկ շարադասության նորմերը, որովհետև այդ լեզվով խոսող անհատի լեզվամտածողության մեջ բառերն այդ կերպ են դասավորվում:

Նույնատիպ շարադասության օրինակներ են.

After բառի ունեցած մի շարք նշանակություններ արդեն նշել ենք: Բերենք նրանով կազմված մի քանի օրինակներ:

Afternoon գ. Չկնի հասարակ աուր:

Noon նշանակում է «կէսօր», «միջօրէ»: «Չկնի» բառը՝ ըստ ՆՀԲ-ի՝ որպէս նախդիր նշանակում է «գհետ», «յետոյ քան»:

Afterpart գ. Երկրորդ կամ յետին մասն:

Այստեղ *after* արմատը թարգմանվում է նաև «երկրորդ» իմաստով:

Part նշանակում է «մաս», «բաժին», «դեր», «կողմ»:

Aftertimes գ. Յետագայ կամ առյապա ժամանակք, ապառնիք:

Ապառնիք բառ ՆՀԲ-ու կա, սակայն բառի առաջին բացատրությունը ևս պատճենումային թարգմանություն է:

Շրջուն շարադասության օրինակներ են:

Aethiops-mineral գ. Հանք Եթովպացուց (է անուն սևորակ ինչ գեղոյ):

Mineral նշանակում է հանք, հանքաքար:

Afterpains գ. Ցաւք զկնի երկանց կամ ծննդեան:

Pain նշանակում է «ցաւ», «պատիժ», «վիշտ»: *After+pains* և *ցաւք+զկնի* (երկանց կամ ծննդեան):

Afterproof գ. Երկրորդ ցուցումն, վերջին փորձ:

Այստեղ *after* արմատը թարգմանվում է «վերջին» իմաստով:

Proof նշանակում է «ապացոյց», «փաստ», «փորձ»:

Aftertaste գ. Համ զկնի ճաշակառութեանն:

Taste նշանակում է «համ»: Այստեղ ևս կա շրջուն շարադասություն. *after+taste* և *համ+զկնի*:

Afterthought գ. Խորհուրդ անագան:

Thought նշանակում է «խորհուրդ», «մտածում», «միտք», «խորհրդածութիւն»:

Անագան, ըստ ՆՀԲ-ի, նշանակում է «ոչ կանուխ», «յետին»: Այս արմատի նշանակությամբ բացատրվում է նաև «afterwit» բառը:

Afterwit գ. Հանճար կամ հնարք անագան:

Wit նշանակում է «միտք», «խելք», «իմաստութիւն», «ուշիմութիւն», «հանճար» և այլն:

Ague-fit գ. Ըմբռնումն տենդի:

Ague թարգմանվում է «դող», «ջերմ»:

Fit նշանակում է «նոպայ», «պոռթկում»:

Ամփոփելով կատարած աշխատանքը՝ գալիս ենք այն եզրահանգման, որ հայերենը պատճենել է Հ. Ավգերյանի անգլերեն-հայերեն բառարանի «A» տառի բառամթերքի որոշ մասը: Պարզ դարձավ, որ իմաստային պատճենումները քանակի առումով զիջում են մնացած տեսակներին: Բառապատճենումների շարքում գերազանցում են մասնավորապես բարդ բառերով թարգմանությունները, և ավելի քիչ են ածանցավոր բառապատճենումների տեսակները: Այս թարգմանությունների մի մասն անցել է հայերենի գործուն շերտ և կիրառելի դարձել վերջինիս բառապաշարում:

Գրականություն

Աղբյուրներ

1. Աւգերեան Յ., Անգղիարէն եւ հայերէն բառարան, Վենետիկ, 1821:
2. Նոր բառագիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836:
3. CHAKMAKJIAN H. H., COMPREHENSIVE DICTIONARY ENGLISH-ARMENIAN, BOSTON, 1922:

Տեսական

1. Բարլեզիզյան Ա., Հայ-ֆրանսիական լեզվական առնչությունները XIX դարում, Ե., 1997:
2. Սուրիապյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982:
3. Арбекова Т. И., Лексикология английского языка, М., 1977:
4. Балли III. Французская стилистика, М., 1961:
5. Тронский И. М., Очерки по истории латинского языка, М.-Л., 1953:

ՀՏԴ 327

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
Արմեն Չոփուրյան
Հովհ. Թումանյանի անվան
Վանաձորի պետական համալսարանի
պատմաաշխարհագրական ֆակուլտետի
պատմության բաժնի 4-րդ կուրսի ուսանող
Գիտական ղեկավար՝ պատմության ամբիոնի դասախոս Արման Բերենցյան

ԴԵՅԹՈՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Բանալի բառեր՝ Բոսնիա և Հերցեգովինա, Դեյթոն, «թույլ դաշնություն», Ռուսաստան, Սերբական Հանրապետություն, բարձր ներկայացուցիչ, «Բուտմիրյան փաթեթ», մուսուլմաններ, խորվաթներ, սերբեր:

Ամփոփում

Բոսնիան և Հերցեգովինան անկախ պետություն է, բայց փաստացի՝ միջազգային վերահսկողության ներքո գտնվող տարածք: Հաշտության համաձայնագրի էությունը երկակի բնույթ ունի. մի կողմից այն անկախուն կազմավորման ստեղծման միջոց է, որն աստիճանաբար կարող է հայտնվել միջազգային կառույցների վերահսկողության ներքո՝ չեզոքացնելով սերբ ժողովրդի քաղաքական կամքը և ազատությունը: Մյուս կողմից պրոտեկտորատի հաստատումը միջոց է հեշտ ղեկավարման, որի շնորհիվ ազդեցության տակ կհայտնվի ամբողջ տարածաշրջանը:

Armen Chopuryan
ВГУ, факультет истории и географии, 4-ый курс
Науч. рук.: препод. Арман Беренция

ДЕЙТОНСКИЙ ПРОЦЕСС И ЕГО ПОСЛЕДСТВИЯ

Ключевые слова: Босния и Герцеговина, Дейтон, слабая федерация, Россия, Сербская Республика, высокий представитель, Бутмирский пакет, мусульмани, сербы.

Резюме

Босния и Герцеговина является независимым государством, но на самом деле, территория находится под международным контролем. На основе договоренности лежит два аспекта: с одной стороны - это неустойчивый метод формирования, которое постепенно может появиться под международным контролем, нейтрализовать политическую волю и свободу сербского народа. С другой стороны - это создание протектората для простого способа управления, под влиянием которого будет находиться весь регион.

Armen Chopuryan
VSU, the faculty of history, 4th year
Supervisor: lecturer Arman Berencyan

THE PROCESS OF DAYTONA

Key words: Bosnia and Hercegovina, Dayton, «weak federation», Russia, The republic of Serbia, high representative, « Butmiryan package», muslim, croats, serbs

Summary

Bosnia and Herzegovina is a sovereign state, but in fact, it is a territory under an international supervision. The peace agreement has two underlying aspects. On the one hand, it is an unstable way of formation, which can gradually slide into the supervision of international organizations, neutralizing the political will and freedom of the Serbian people. On the other hand, the establishment of a protectorate is a means of easy government, thanks to which the whole region will be under an influence.

Բոսնիա-Հերցեգովինայի պատերազմի նախաշեմին՝ 1992 թ. ապրիլի սկզբին, հանրապետության տարածքը մտովի բաժանված էր 3 ազգային կուսակցությունների միջև (մահմեդական) ժողովրդավարական գործունեության կուսակցություն (ԺԳԿ), Սերբական ժողովրդավարական կուսակցություն (ՄԺԿ) և Խորվաթական ժողովրդավարական միություն (ԽԺՄ)-ի միջև: Վերջինս, 1990 թ. իշխանության գալով, ձևավորեց կոալիցիոն կառավարություն:¹

Ինչպես Սլովենիայի և Խորվաթիայի կառավարությունները, այնպես էլ 1991թ. Բոսնիա-Հերցեգովինայում մահմեդական և խորվաթական կուսակցությունները գտան, որ իրենց իշխանությունը պահելու միակ ձևը Հարավսլավիայի դաշնությունից առանձնանալն է:

Սերբական կուսակցության պատգամավորներն այնուհետև Բոսնիա-Հերցեգովինայում հաստատեցին Սերբական ազգային ժողով: Ազգային ժողովը 1991թ. նոյեմբերին կազմակերպեց Բոսնիա-Հերցեգովինայում ապրող սերբերի հանրաքվե, որի արդյունքներով, ըստ կազմակերպիչների՝ հանրաքվեին մասնակցողների 98%-ը քվեարկել էր հոգուտ նրա, որ Բոսնիա-Հերցեգովինայի սերբերը մնան Հարավսլավիայի կազմում: Հենվելով հանրաքվեի պաշտոնական արդյունքների վրա՝ սերբական կուսակցության առաջնորդները հայտարարեցին, որ Բոսնիա-Հերցեգովինայի սերբերը դեմ էին Հարավսլավիայից բաժանվելուն և սկսեցին նախապատրաստել իրենց պատասխան բաժանումը Բոսնիա-Հերցեգովինայից: Ըստ այդմ՝ նախատեսվում էր Բոսնիա-Հերցեգովինայի սերբերի առանձին հանրապետության ստեղծում, որը հետագայում ստացավ Սերբական հանրապետություն անվանումը: Հանրապետությունը հռչակվեց 1992թ. Ապրիլի 7-ին, ճիշտ այն օրը, երբ ուժի մեջ մտավ Եվրախորհրդարանի և ԱՄՆ-ի կողմից Բոսնիա-Հերցեգովինայի անկախության ճանաչումը:²

Հարավսլավիայից Բոսնիա-Հերցեգովինայի և ապա երկրամասի սերբերի բաժանման շուրջ հակասությունները պարարտ հող ստեղծեցին տարածքներ տիրելու նպատակով զինված հակամարտության համար:

Պատերազմն էականորեն փոխեց Բոսնիա-Հերցեգովինայի ժողովրդագրական պատկերը. Պատերազմի ընթացքում խառը բնակչություն ունեցող տարածքներն արագորեն վերածվել էին ազգային տեսակետից միասեռ տարածքների:

Իտալիայում և Ադրիատիկ ծովում գտնվող օդային հենակետերից թռչող ՆԱՏՕ-ի առաջին օդանավերը հարձակվեցին Բոսնիայի սերբական հրամանատարական և հաղորդակցական կենտրոնների, զինվորական կայազորների, զինապահեստների, Սարանոյի և ՄԱԿ-ի ապահով գոտիների մերձակա զենքի գործարանների վրա:³

Մինչ ՆԱՏՕ-ի օդային գրոհները Բոսնիայի սերբերի դիրքերի վրա լրիվ թափով շարունակվում էին, սեպտեմբերի 8-ին ՄԱԿ-ում ԱՄՆ դեսպան Ռիչարդ Հոլբրուկը բանակցող երեք կողմերին համաձայնեցրեց «Հիմնական սկզբունքների» հետ, որը վերահաստատեց Բոսնիա-Հերցեգովինայի երկու «Բաղկացուցիչ տարրերի» միջև՝ Republica Srpska (Սերբական Հանրապետություն) և Բոսնիայի և Հերցեգովինայի դաշնության միջև տարածքի՝ Կոնտակտային խմբի առաջարկած չափաբաժնով բաժանումը: Սերբական Հանրապետության ճանաչումը որպես երկրի բաղկացուցիչ տարր մեծ զիջում էր մահմեդական կուսակցության և ԱՄՆ-ի կառավարության կողմից: Նախկինում երկուսն էլ մերժում էին Բոսնիա-

¹ Պավկովիչ Ա. Հարավսլավիայի մասնատումը, Եր., 1997 թ., էջ 221:

² А. Абашидзе, А. Солнцев, [Балканы - ахиллесова пята евро-атлантической безопасности](#) статья из журнала "Обозреватель", №8 за 2010 год.

³ Нижняя С. И. Этнополитические конфликты в посткоммунистическом мире, часть 1, М., 1996, ст. 34.

Հերցեգովինայում սերբերի քաղաքական և տարածքային ինքնավարության իրավունքը: «Հիմնական սկզբունքներին» հոկտեմբերի 26-ին հաջորդեց Օհայո նահանգում գտնվող Դեյթոն կոչվող ԱՄՆ-ի ռազմաօդային հենակայանում կայացած Իզթբեգովիչի, Թուջմանի և Միլոշևիչի միջև «մտերմության» խաղաղության քննարկումները:¹

Դեյթոնը՝ ԱՄՆ-ի ռազմաօդային հենակայանն է Օհայո նահանգում, որը համարվում է համաշխարհային նոր կարգերի խորհրդանշաններից: Բյուսելի, Հաագայի, Ստրասբուրգի և Ռամբույեի հետ այն ասոցացվում է Եվրոպայի քաղաքական քարտեզի վերաձևման հետ, սահմանելով քաղաքական խաղերի նոր օրենքներ: Հենց Դեյթոնում 1995թ. նոյեմբերի 21-ին նախաստորագրվեցին փաստաթղթեր, որոնք պատմության մեջ մտան որպես Բոսնիայի և Հերցեգովինայի հաշտության մասին կարևորագույն համաձայնագրեր (հաշտության համաձայնություն): Փաստաթղթերը ուժի մեջ մտան 1995 թ. Դեկտեմբերի 14-ին Փարիզում ստորագրվելուց հետո: Համաձայնագրի երաշխավորները դարձան ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Գերմանիան և Ռուսաստանը: Այս համաձայնագրի ի հայտ գալը վերջ տվեց Բոսնիայի և Հերցեգովինայի միջև զինված կոնֆլիկտին, որը տևել է 1992-1995 թթ.: Արդյունքում երկիրը մասնատվել էր թշնամական կողմերի և ընդգրկում էր Սերբիայի հանրապետության և Մուսուլմանախորվաթական դաշնության տարածքները:

Քաղաքական շրջանակներում միջազգային մոնիթորինգի ստեղծման նպատակով Դեյթոնյան պայմանագրի հիման վրա ստեղծվեց հաշտության համաձայնագրի կատարման խորհուրդ 55 երկրներում, և գործադիր մարմնի ղեկավար կոմիտե (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Իտալիա, Կանադա, Ռուսաստան, Ճապոնիա, Եվրամիության ներկայացուցիչ, և որպես իսլամական համաձուլվի ներկայացուցիչ՝ Թուրքիան: Այս միջազգային կառույցի համակարգողը՝ Բարձր ներկայացուցիչն էր Բոսնիայում և Հերցեգովինայում:²

Աշխարհի քաղաքական հակասությունները վերջին 16 տարիների ընթացքում հանգեցրել էին բազմաթիվ «սառեցված» և գործող հակամարտությունների, չհաշված այն հանգամանքը, որ աշխարհի քաղաքական քարտեզի վրա առաջ էին եկել նոր սուբյեկտներ: Միայն Բալկաններում այդ ժամանակ առաջացան երեք նոր պետություններ. Վերջնականապես թաղելով Հարավսլավական անցյալը, 2006 թ. Սերբիան և Չեռնոգորիան հռչակվեցին որպես ինքնուրույն միավորներ, իսկ 2008-ին ՆԱՏՕ-ի և Եվրամիության անմիջական մասնակցությամբ առաջացավ նոր կիսանկախ պետություն՝ Կոսովոն: Համաշխարհային հակասությունների շարունակվող վերաձևումների արդյունքում Դեյթոնյան սկզբունքները սկսեցին ավելի շատ ներդրվել պետությունների միջև առակա հակամարտությունների կարգավորման հիմքում:³

Դեյթոնյան համաձայնագրի գլխավոր քաղաքական և հումանիտար արժեքը զինված հակամարտության կարգավորումն էր: Դրանք ամրագրում էին 10 տարի առաջ ձևավորված 2 սուվերեն կազմավորումների միությունը, երբ միջազգային կառույցների անմիջական մասնակցությամբ ձևավորվել էր ղեկավարման արդյունավետ համակարգ:

Հաշտության համաձայնագրի ստորագրման պահից Բոսնիան և Հերցեգովինան գտնվում էր արտաքին կառավարող կողմերի մշտական վերահսկողության ներքո (Ռազմական խորհրդի կատարման ուժեր, կամ Եվրամիության ուժեր): Անգամ այդ այդ պետությունների Սահմանադրությունում ի հայտ եկավ հաշտության համաձայնագրի չորրորդ հավելվածը.

Բոսնիայի և Հերցեգովինայի 1995 թ. Սահմանադրությունը արտահայտում է պետական-տարածքային համակարգի առանձնահատուկ կառուցվածքը, որին պայմանական անվանում են «Թույլ ֆեդերացիա» և կազմված է երկու սուբյեկտներից՝ Բոսնիայի և Հերցեգովինայի (մուսուլմաններ և խորվաթներ) և Սերբիայի հանրապետություն: Երկու սուբյեկտներն էլ օժտված էին լայն ինքնուրույնությամբ՝ քաղաքական, ռազմական,

¹ Richard Holbrooke, To End a War, New York, 1998, pg. 47-61.

² Елена Пономарева Ловушки и дилеммы мирного соглашения или какое будущее ждет Боснию и Герцеговину? Баян-Лука, 2011 г., ст. 220.

³ Հարավսլավիայի մասնատումը, էջ 234:

տնտեսական և այլ ոլորտներում, այն դեպքում, երբ Բոսնիայի և Հերցեգովինայի պետական կառույցները խիստ սահմանափակված էին:

«Անցումային շրջանի պետության» կամ Դեյթոնյան Բոսնիան ձևավորվեց 3 սկզբունքների հիման վրա.

1. Գրեթե ամբողջ իշխանության փոխանցումը ազգային սուբյեկտներին (կազմակերպություններին):
2. Ազգային ներկայացուցչական և կենտրոնական մարմիններին՝ երեք ժողովուրդների հավասար հարաբերակցության (1,1,1) և վետոյի իրավունք:
3. Ժամանակավոր անդամակցություն ՄԱԿ-ին Եվրամիությանը, և ՆԱՏՕ-ին՝ պետական կառավարման հիմնական ոլորտների աշխատանքներին մասնակցությանը, երկրի քաղաքական կառույցների վերահսկողության ներքո:¹

Գործնականում այդ սկզբունքները իրագործվեցին կենտրոնական իշխանության կառույցների համակարգում: Բոսնիայի և Հերցեգովինայի գլխավոր օրենսդիր մարմինն էր Բոսնիայի և Հերցեգովինայի պառլամենտական անսամբլեան. ներկայացուցիչների պալատ և ժողովուրդների պալատ:

Վերազգային կառույցների մասնակցության հանգամանքը ժամանակակից Բոսնիայի և Հերցեգովինայի ձևավորման և զարգացման գործընթացում հատուկ ուշադրության է արժանի բարձր ներկայացուցչական հաստատության շնորհիվ: Բարձր ներկայացուցչին նշանակում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը: 1995թ.-ից սկսած այդ պաշտոնն զբաղեցնում էին շվեդ Կարլ Բեյդոր, իսպանացի Կառլոս Վեստենդորպը, ավստրիացի Վոլֆգան Պելգրինը, անգլիացի լորդ Պեդդի Էշդուան, գերմանացի Կրիստիան Շվարց-Շիլլինգը, սլովակ Միրոսլավ Լայչակը: 2009 թ. Մարտի 14-ին Բարձր ներկայացուցիչ նշանակվեց Ավստրիայի նախկին դեսպանը Սլովենիայում Վալենտին Նիկելուն:²

«Անցումային շրջանի պետությունների» գոյության ընթացքում Բարձր ներկայացուցչի լիազորություններն զգալիորեն ընդլայնվեցին: Նա ստացավ իշխանության կենտրոնական հաստատություններում ավելի ակտիվ գործունեություն ծավալելու հնարավորություն, այդ թվում պաշտոններից հեռացնել պաշտոնատար անձանց, միջազգային դիտորդների հետ այս կամ այն հարցի շուրջ տարաձայնությունների պատճառով, ինչպես նաև հեռացնել այն մարդկանց, ովքեր ընտրվել էին ընտրությունների արդյունքում, փոխարինելով նրանց սեփական հայեցողությամբ: Բացի դրանից ներդրվել է քաղաքական, տնտեսական և այլ որոշումների համաձայնեցման սկզբունքը, որոնք տարածվում են նույնիսկ Բոսնիայում և Հերցեգովինայում հավատարմագրված դեսպանների վրա:

2007 թ.-ից Բոսնիան աշխատում է այն խնդիրների իրականացման վրա, որոնք սահմանված են խորհրդի կազմակերպչական կոմիտեի կողմից, հաշտության գործընթացի իրականացման համար, դեռ 2003 թ.-ի դեկտեմբերի 14-ից: Խոսքը վերաբերում է 5 խնդիրների իրականացմանը և մուտքը դեպի Եվրամիություն և ՆԱՏՕ:

Հաշտության համաձայնագրի իրականացման խնդիրների թվում Խորհուրդն առանձնացրել է.

1. Պետական գույքի բաշխման ընդունելի և վերջնական կարգավորման հարցը
2. Պաշտպանական գույքի հեռացման ընդունելի և վերջնական կարգավորման հարցը
3. Վերջնական իրավարար վճռի իրականացման ավարտումը Բրչկո մարզի վերաբերյալ
4. Ֆինանսական կայունության ապահովումը
5. Օրինաապահության ամրապնդումը:³

Նախապայմաններից առաջինն արդեն իրականացել է՝ Եվրամիության հետ կայունացման և ասոցացման համաձայնագիրը, որը ստորագրվել 2008 թ.-ի հունիսի 16-ին: Մնացել է կայունացնել քաղաքական իրավիճակը անվտանգության ոլորտում, որի հետ կապված

¹ Ловушки и дилеммы мирного соглашения или какое будущее ждет Боснию и Герцеговину?, ст. 222.

² Հարավսլավիայի մասնատումը, էջ 245:

³ Ловушки и дилеммы мирного соглашения или какое будущее ждет Боснию и Герцеговину?, ст. 226:

Խորհուրդը հաշտության համաձայնագրի իրականացմանը պետք է տա դրական գնահատական: Այսպիսով, Դեյթոնյան համաձայնագրի դանդաղ վերանայումը ուղղված է քաղաքական հարցերի լուրջ վերափոխումների Բոսնիայում և Հերցեգովինայում:

Ակնհայտ է, որ Բոսնիական հակամարտությունը կապված է հաշտության համաձայնագրի իրականացման հետ, մտել է եզրափակիչ փուլ: Այդ փաստաթղթի իրականացումը մոտենում է իր նորամաբանական ավարտին, Բոսնիայում և Հերցեգովինայում խոր և բազմաբովանդակ բարեփոխումները հիշյալ ոլորտներում սուբյեկտներին զրկել են անկախության ուղին բռնելու մտքից: Դեյթոնի կորիզի՝ երկրի Սահմանադրության առաջիկա խոշոր փոփոխությունները նշանավորելու է Բոսնիայում և Հերցեգովինայում որակապես նոր իրավիճակ, դարձնելով երկիրը անկախ ֆեդերացիա, որն ամբողջությամբ կգտնվի ՆԱՏՕ-ի վերահսկողության տակ:

Վերլուծելով Բոսնիայում տեղի ունեցող զարգացումները, պետք է հիշել, որ Դեյթոնյան համաձայնագրի էությունը կայանում էր նրա արտաքին ղեկավարման մեջ: Միչև այսօր Բարձր ներկայացուցչի գրասենյակի հաղորդմամբ, Եվրամիությունը և ՆԱՏՕ-ն հանդիսանում են կայունացման ուժերի իրավահաջորդը:

ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը հաստատեց, որ այդ կառույցները կարող են ընդունել ցանկացած որոշում:

Եվրամիությունը շարունակում է ապահովել իր ռազմական ներկայացուցչությունը Բոսնիայում և Հերցեգովինայում, որի զիված ուժերն այստեղ հասնում է 2500 զինծառայողի և պահպանում է ստրատեգիական նշանակության պահուստային զորքերի տեղակայումը:

Եվրամիությունը իր շտաբն ունի Սարաևոյում, ինչպես նաևամբողջ երկրի տարածքում կապի և մոնիտորինգի հատուկ խմբեր:

Հատուկ ուշադրության է արժանի Բոսնիայի և Հերցեգովինայի միացումը ՆԱՏՕ-ին: Հիշեցնենք, որ 2009թ. Հունիսին Բոսնիայում և Հերցեգովինայում գտվող ՆԱՏՕ-ի Բուլմիր ռազմական բազայում բանակցություններ տեղի ունեցան Ջեյմս Ստեյներտի (ԱՄՆ) և Կառլ Բիլտի (ԵՄ) միջև՝ Բոսնիայի և Հերցեգովինայի, և Սերբիայի հանրապետության 7 քաղաքական կուսակցությունների մասնակցությամբ, որպեսզի ծանոթացնեն նրանց երկրում սահմանադրական փոփոխությունների առաջարկներին: Կնքվեց 90-ականների իրավիճակը, երբ սահմանադրական բարեփոխումները նախապատրաստում էին կրոպացի և ամերիկացի քաղաքագետները:¹

Բանակցությունների արդյունքում Բոսնիական մուսուլմանական ներկայացուցիչները այն կարծիքն արտահայտեցին, որ որոշումը տանում է դեպի Բոսնիայի վերջնական բաժանմանը: Խորվաթները դժգոհ էին նրանից, որ իր կարգավիճակը կարող է լրջորեն վատանալ, իսկ սերբերը փոփոխությունների առաջարկի մեջ տեսնում էին կենտրոնացված պետության ստեղծման ստրատեգիա:

Չնայած բանակցությունների ձախողմանը, պետություններից յուրաքանչյուրը պատրաստ էր քննարկել Սահմանադրության փոփոխման առանձին նոր առաջարկներ:

«Բուլմիրյան փաթեթը», ամենից առաջ ուներ ևս մեկ թաքնված նպատակ՝ ստիպել Սերբիայի հանրապետության բնակչությանն ընդունել ՆԱՏՕ մտնելու առաջարկը:²

Համաժողովրդական քվեարկության արդյունքում, որոնք տեղի ունեցան 2009 թ. վերջերին, սերբերի 75%-ը դեմ էր քվեարկել կազմակերպության մեջ մտնելուն, որը նրանց ոմբակոծել էր 1994 թ.-ին:

Բուլմիրում հստակ առաջարկվեցին Սերբական հանրապետության կողմից նախկինում ընդունված պահանջները: Մի շարք սերբ վերլուծաբանների կարծիքով ՆԱՏՕ-ն ամենաքիչն է անհանգստացած երկրում առկա ներքաղաքական թշնամանքի շուրջ: Հակառակը, դաշինքի համար նույնիսկ լավ է, եթե կուսակցությունները, ժողովուրդները, շրջանները, կազմավորումները վիճեն և հակամարտեն միմյանց դեմ: Այդ դեպքում առիթ

¹ Там же, ст. 228.

² Там же, ст. 231.

կառաջանա ՆԱՏՕ-ի համար երկիր ներթափանցել: Առաջ են գալիս նոր ուժեր՝ բոսնիական ժողովուրդը, որը կարող է դառնալ նոր պատերազմ հրահրելու առիթ: Այլ խոսքով, թղթի վրա պետք է ամրագրվի Բոսնիայի և Հերցեգովինայի կենտրոնացումը:

Արևմուտքի համար բնորոշ այս քաղաքականությունը տվեց սպասված արդյունքները՝ 2009թ. Բրյուսել ուղարկվեց պաշտոնական դիմում, գործողությունների պլանին անդամակցելու խնդրանքով և արդեն 2010թ. Ապրիլի 23-ին ստացավ այն, դառնալով ՆԱՏՕ-ի անդամակցության պաշտոնական թեկնածու, որը սակայն, չի երաշխավորում դաշինքին վերջինիս անդամակցությունը:¹

Այստեղ անհրաժեշտ է մի երկու խոսք ասել Ռուսաստանի շուրջ Եվրամիության դիրքորոշման վերաբերյալ: Տալլինում տեղի ունենալիք ՆԱՏՕ-ի գազաթնաժողովի նախօրեին Բոսնիայում և Հերցեգովինայում Ռուսաստանի դեսպան Բոյան Խարչենկոն նշեց, որ իրենք չեն ցանկանում խառնվել Բոսնիայի և Հերցեգովինայի գործերին, բայց վստահ են, որ ՆԱՏՕ-ի ընդլայնումը չի նպաստում Եվրոպայում կայունության ամրապնդմանը: Չպետք է մոռանալ, որ դաշինքի էքսպանսիան Եվրոպայում նոր բաժանարար գծեր է ստեղծում, և մտնելով ՆԱՏՕ, երկրներն իրենց վրա են վերցնում որոշակի պարտավորվածություններ, որոնց իրականացումը հակասում է Ռուսաստանի շահերին:

Արդյունքում ստացվում է, որ ձևականորեն Բոսնիան և Հերցեգովինան անկախ պետություն են, բայց փաստացի՝ միջազգային վերահսկողության ներքո գտնվող տարածք: Հաշտության համաձայնագրի էությունը սուվերեն պետություններին միջազգային կառույցների օգտին վերակազմավորումն է: Ներկայացնելով այն որպես ժամանակավոր և ստիպված քայլ, վերջնական արդյունքում հանգեցնում է վերազգային հաստատությունների ստեղծմանը տվյալ երկրի տարածքում: Դեյթոնյան համաձայնագրերը, որոնք հումանիտար նշանակությունից զատ՝ կոչված են վերջ տալու բաց հակամարտությանը, բացասական դեր են կատարում համաշխարհային աշխարհակարգում:

Գրականություն

1. Պավկովիչ Ա. Հարավսլավիայի մասնատումը, Երևան, 1997 թ.
2. А. Абашидзе, А.Солнцев, Балканы -ахиллесова пята евро-атлантической безопасности статья из журнала "Обозреватель", №8 за 2010 год.
3. Нижняя С. И. Этнополитические конфликты в посткоммунистическом мире, часть 1, Москва, 1996 г.
4. Richard Holbrooke, To End a War, New York, 1998.
5. Елена Пономарева Ловушки и дилеммы мирного соглашения или какое будущее ждет Боснию и Герцеговину? Баня-Лука, 2011 г.

¹ Там же, ст.232.

ՀՏԴ 941(479. 243)

Էլլադա Հայրապետյան
ԱրՊՀ Պատմության և իրավագիտության ֆակուլտետ
Պատմության բաժնի բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողուհի
Գիտ. դեկ. պ.գ.թ., դոցենտ Նելլի Բաղդասարյան
Էլ. հասցե ellada-hayrapetyan@mail.ru

**ՈԱԶՄԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՂԲԵԶԱՆԱ-ՂԱՐԱԲԱՂՅԱՆ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ /1991-1994 թթ. / .ԴԱ ՏԱՊԱՐՏՈՒՄԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԻՏԱԿԵՏԻՑ**

Բանալի բառեր. «Կոլցո» ռազմագործողություն, ադրբեջանա-դարաբադյան հակամարտություն, Մարադայի ցեղասպանություն, ռազմական հանցագործություններ, ՕՄՕՆ, ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիա, միջազգային կոնվենցիաներ, միջազգային մարդասիրական իրավունք:

Ամփոփում

Հոդվածում ներկայացվել են ռազմական հանցագործությունները ադրբեջանա-դարաբադյան հակամարտության ընթացքում /1991-1994 թթ. /, որոնք պատժելի են համարվում միջազգային իրավունքի դիտակետից: Օգտագործելով համապատասխան միջազգային իրավական ակտերը՝ Մարադայի ողբերգությունը ներկայացվել է «ցեղասպանություն» հասկացության սահմաններում: Ընդգծվել է, որ 1991-1994 թ. ռազմական հանցագործությունների անպատժելիության արդյունքը 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմում ռազմական հանցագործությունների դեպքերն են, որոնք սպասում են միջազգային իրավական համարժեք գնահատականների:

Эллада Айрапетян
АрГУ, факультет истории и юриспруденци, 3-ий курс,
Науч. рук.: к.и.н., доц. Нелли Багдасарян
ellada-hayrapetyan@mail.ru

**ВОЕННЫЕ ПРЕСТУПЛЕНИЯ В ХОДЕ АЗЕРБАЙДЖАНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА /1991-1994
ГГ./ ОСУЖДЕНИЕ С ТОЧКИ ЗРЕНИЯ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА.**

Ключевые слова Операция „Кольцо,, ,азербайджано-карабахский конфликт, марагинский геноцид , военные преступления, ОМОН, конвенция ООН от 9 декабря 1948г , международные конвенции, международное гуманитарное право

Резюме

В статье представлены военные преступления в ходе азербайджано-карабахского конфликта /1991-1994 гг. , которые с точки зрения международного права считаются караемыми .Используя соответствующую конвенцию, марагинская трагедия представлена в рамках понятия „геноцид „ Подчёркивалось, что результатом безнаказанности военных преступлений 1991-1994 гг, являются случаи военных преступлений происходившие во время апрельской четырёхдневной войны 2016 г , , которые ждут равноценных международных правовых оценок .

Ellada Hayrapetyan

ASU, the faculty history and jurisprudence, 3rd year
Supervisor: PhD Nelli Bagdasaryan
ellada-hayrapetyan@mail.ru

WAR CRIMES DURING AZERBAIJAN-KHARABAKH CONFLICT IN 1991-1994. CONDEMNATION FROM
THE POINT OF VIEW OF INTERNATIONAL LAW

Key words. "Ring" operation, the Azerbaijani-Kharabakh conflict, genocide of Maragha, war crimes, the UN Convention in December 9, 1948, international conventions, international humanitarian law.

Summary

The article is about war crimes committed during the Kharabakh conflict in 1991-1994, which are punishable from the point of view of the international law. Using the appropriate convention the tragedy in Maragha was represented as «genocide». It was underlined that the four-day war in April 2016 was the result of impunity of war crimes in 1991-1994, which are waiting for an adequate legal international reaction.

1988-1991 թթ. Լեռնային Ղարաբաղի Հայաստանի հետ վերամիավորման, իսկ հետագայում նաև անկախացման գործընթացը բացասական արձագանք գտավ Ադրբեջանում: Ադրբեջանական ազրեսիան սկզբնական շրջանում կրում էր հիմնականում տեղային բնույթ և դրսևորվեց համապարփակ շրջափակման, պետական և անհատական ունեցվածքի կողոպտման, բերքի և ցանքատարածությունների փչացման կամ բերքահավաքին խոչընդոտելու, հայկական բնակավայրերի, մերձակա օժանդակ տնտեսությունների ու արտադրական ձեռնարկությունների վրա ավազակային զինված հարձակումների և հակաօրինական այլ գործողությունների տեսքով: Դրանց հաջորդեցին կազմակերպված ու բացահայտ զինված ներխուժումներն ու տարածքները զավթելու, հայ բնակչությանը բռնատեղահանելու նպատակով իրականացվող լայնածավալ ռազմական գործողությունները¹: Արցախյան պատերազմի ընթացքում լայնածավալ ռազմագործողությունների միջոցով ներխուժման փորձերը կարելի է բաժանել 3 հիմնական փուլերի.

I. 1991թ. ապրիլ-հունիս՝ «Օղակ» ռազմագործողությունը և հայկական մի շարք բնակավայրերի բռնագրավումն ու բնակչության տեղահանությունները:

II. 1992թ. հունիս-1993թ. հունվար՝ լայնածավալ ազրեսիայի արդյունքում Շահումյանի շրջանի և Մարտակերտի շրջանի մեծ մասի զավթումը:

III. 1993թ. դեկտեմբեր-1994թ. հունվար՝ հարձակողական լայնածավալ ռազմագործողություններ ԼՂՀ նկատմամբ²:

1991-1992 թթ. Լեռնային Ղարաբաղում չափազանց ծանր իրավիճակ էր ստեղծվել: 1991թ.ապրիլի վերջին-մայիսի սկզբին Ադրբեջանի ՆԳՆ հատուկ նշանակության միլիցիայի ջոկատները (ՕՄՕՆ) խորհրդային բանակի զորքերի աջակցությամբ սկսեցին պատժիչ գործողություններ՝ նպատակ ունենալով ԼՂ-ի և նրան հարակից հայաբնակ շրջաններից տեղահանել հայ բնակչությանը: Իրականացվեց «Կոլցո» ռազմագործողությունը, որն ուղղված էր Խանլարի շրջանի Գետաշեն ու Մարտունաշեն գյուղերի, Շահումյանի, Հադրութի ու Շուշիի շրջանների որոշ գյուղերի հայ բնակչության բռնի տեղահանմանը: Մարտական ուղղաթիռների, հրասայլերի և զրահամեքենաների ուղեկցությամբ «անձնագրային ռեժիմի ստուգման» ու «հայ գրոհայիններին զինաթափելու» պատրվակով սկսվեց հարձակումը: Հատկապես թեժ մարտեր բորբոքվեցին Խանլարի շրջանի Գետաշեն ու Մարտունաշեն գյուղերի տարածքներում³: Այդ ռազմագործողության արդյունքում ամբողջովին դատարկվեցին, հիմնահատակ ավերվեցին կամ ադրբեջանցիներով բնակեցվեցին Հադրութի՝ շրջանի՝ 14, Շուշիի շրջանի Բերդաձորի ենթաշրջանի՝ 6 հայկական գյուղեր, Խանլարի շրջանի՝ Ազատ, Գետաշեն, Մարտունաշեն, և Շահումյանի շրջանի Բուզլուխ, Մանաշիղ և Էրքեջ բնակավայրերը⁴:

¹ Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, Հանրագիտարան, Երևան, 2004, էջ 9:

² Հարությունյան Մ. Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Երևան, 2000, էջ 15:

³ Բալայան Վ. Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2011, էջ 270:

⁴ НКР. Путь к вершинам . Степанакерт 2001, стр.106.

1992թ. փետրվարի վերջին Լեոնային Ղարաբաղում սպանվել էր 243 մարդ, այդ թվում՝ 37 կին և 14 երեխա, և վիրավորվել 491 մարդ, այդ թվում՝ 70 կին և 53 երեխա¹:

Իր ծայրահեղ դաժանությամբ և մարդու իրավունքների զանգվածային խախտումներով աչքի ընկած «Կոլցո» գործողության հետևանքով շեշտակիորեն սրվեց լարվածությունը տարածաշրջանում և ղարաբաղյան հակամարտությունը տեղափոխվեց ռազմական հարթություն:

ԵԱՀԽ առաքելության 1992թ. փետրվարի 28-ի զեկուցման մեջ նշվել է՝ «1991թ. ապրիլ-մայիս ամիսներին իրադրությունը հատկապես սրվեց, երբ հիմնականում խորհրդային բանակը Ադրբեջանի ՆԳՆ ստորաբաժանումների օգնությամբ տարածաշրջանի շատ գյուղերից տեղահանեց հայերին: Տեղահանությունը իրականացվել է հատուկ դաժանությամբ»: «Կոլցո» ռազմագործողության ընթացքում տեղի ունեցած դեպքերն իրենց արտացոլումն են գտել միջազգային մի շարք կազմակերպությունների փաստաթղթերում, դարձել լսումների թեմա՝ ՌԴ Գերագույն խորհրդի մարդու իրավունքների կոմիտեում և դատապարտվել Եվրախորհրդարանի և ԱՄՆ Սենատի բանաձևերում: Մոսկովյան «Մեմորիալ» միության իրավապաշտպան կենտրոնն արձանագրել է մարդու հիմնարար իրավունքների կարևորագույն խախտումներ. «Կոպտորեն խախտվել է յուրաքանչյուր մարդու կյանքի, ազատության, անձնական անձեռնմխելիության իրավունքը, կիրառվել են կտտանքներ, կատարվել ինքնակամ կալանքներ և ձերբակալություններ, կատարվել են բազմաթիվ գույքային իրավախախտումներ: Բնակչության տեղահանումը կրել է զանգվածային բնույթ: Այդ խախտումներին հատուկ ցինիկություն է հաղորդում այն փաստը, որ խաղաղ բնակչության նկատմամբ զանգվածային բռնությունը կատարվել է հենց իրավապահպան մարմինների կողմից: Այդ ամենի պատասխանատվությունը ընկնում է ինչպես Ադրբեջանի հանրապետության ՆԳՆ և ՊԱԿ-ի բարձրագույն ղեկավարության, այնպես էլ ԽՍՀՄ ՆԳՆ, պաշտպանության նախարարության և ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի հրամանատարության վրա: Այդ հանցագործությունները ստվեր են նետում նաև ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության վրա»²:

1991թ. մայիսի 1-ին ԱՄՆ Սենատում ընդունվեց միաձայն որոշում, որով դատապարտվում էին «ԽՍՀՄ և Ադրբեջանի ղեկավարության կողմից Լեոնային Ղարաբաղի, Հայաստանի և Ադրբեջանի հայազգի բնակչության դեմ կատարված հանցագործությունները»: Նրանում մասնավորապես դատապարտվում էին «Լեոնային Ղարաբաղում և հարակից հայկական բնակավայրերում ու Հայաստանում անմեղ մարդկանց, կանանց, երեխաների վրա կատարված հարձակումները, ռազմական ուժի լայնածավալ կիրառումը, ինչպես նաև Հայաստանի արևելյան և հարավային սահմանների անգն բնակչության գնդակոծումները» և կոչ էր արվում «վերջ տալ շրջափակմանը, ուժի գործադրման մյուս ձևերին, ինչպես նաև Հայաստանի և Լեոնային Ղարաբաղի դեմ ուղղված ահաբեկչությանը»³: Մայիսի 25-ին ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավորների չորրորդ նստաշրջանում քննարկման դրվեց Հայաստանի և Ադրբեջանի մի շարք շրջաններում ստեղծված իրադրության շուրջ զեկույցի նախագիծը, որն էլ ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունվեց: Որոշման մեջ մասնավորապես նշվում էր, որ «համաձայն մարդու իրավունքների միջազգայնորեն ճանաչված նորմերի և համաձայնագրերի՝ անհրաժեշտ է անմիջապես դադարեցնել խաղաղ բնակչության տեղահանումը, ազատ արձակել պատանդներին և զինված բախումների գործերով քննության տակ գտնողներին հանձնել ԽՍՀՄ դատախազության վարույթ»: Այդուհանդերձ, «Կոլցո» ռազմագործողության ընթացքում թույլ տրված հանցագործություններին համապատասխան քաղաքական և իրավական գնահատական չի տրվել միջազգային հանրության կողմից, իսկ կազմակերպիչներն ու կատարողները մնացել են անպատիժ: Չէ, որ «սպանելու ազատությունը հռչակվել էր 3 տարի առաջ Սումգայիթում»⁴: Պատերազմի զոհերի պաշտպանության

¹ Ն ո լ յ ն տ ե դ ու մ , է ջ 108:

² www.nkr.am.

³ Նույն տեղում:

⁴ Մելիք-Շահնագարյան Լ., Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեոնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, Երևան, 1998, էջ 80:

վերաբերյալ իրավանորմով արգելվում են կանխամտածված սպանությունները, խեղում պատճառելը, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը, տանջանքները, խոշտանգումները: Հատուկ պաշտպանությունից և հովանավորությունից են օգտվում երեխաները, կանայք, հատկապես հղի կանայք, գառանյալները: Պատերազմի զոհերի պաշտպանության վերաբերյալ նորմերի դիտարկյալ խախտումների համար մեղավոր անձինք զինվորական հանցագործներ են և ենթակա են քրեական պատասխանատվության¹:

Ցայսօր բռնատեղահանված բնակիչները զրկված են սեփական տները վերադառնալու հնարավորությունից և չեն ստացել որևէ փոխհատուցում: Ափսոսանքով պետք է արձանագրել նաև, որ «Կոլցո» ռազմագործողությամբ տեղահանված ոչ մի հայկական գյուղ չի հիշատակվում ադրբեջանա-դարաբաղյան կարգավորման համար միջազգային դիտորդների կողմից առաջարկվող և ոչ մի փաստաթղթում:

Սակայն Ադրբեջանի ռազմական հանցագործությունները «Կոլցո» օպերացիայով չեն սպառվում: Դրանք շարունակվում են Մարաղայում: Մարաղայի ողբերգությունը առանձնանում է մարդու երևակայությունը ցնցող դեպքերով: Ադրբեջանի զինված ստորաբաժանումների կողմից իրագործված խաղաղ հայ բնակչության ցեղասպանությունը Մարաղայում, անկասկած, մարդկային պատմության ողբերգական էջերից մեկն է: Ցավոք, Մարաղայում տեղի ունեցած դեպքերը բոլորովին համաբնույթ չեն արտացոլվել տարածաշրջանային ու համաշխարհային զանգվածային լրատվամիջոցներում, ինչը կարող է ձեռնադրել լինել հանցագործներին ամբողջ աշխարհում և խթանիչ դառնալ նման անգթությունների կրկնության համար աշխարհի ցանկացած մասում: Նման դեպքերի կրկնության նախադրյալ է նաև այն, որ Մարաղայում հայերի ցեղասպանության անմիջական իրագործող ադրբեջանցի զինվորներն ու սպաները իրենց կատարածի համար պատասխանատվության չեն կանչվել: Ադրբեջանի ղեկավարությունը քաջատեղյակ է, թե 1992թ. ապրիլի 10-ին որ գորամասերն են զավթել Մարաղան և թե ինչպիսի հրեշավոր հանցագործություններ էին կատարվում այդ գորամասերի ծառայողների կողմից: Միր-Բաշիրի (Թեր-Թեր) սահմանակից Մարաղա գյուղը երկար ժամանակ սաստիկ հրետակոծության էր ենթարկվում, որի հետևանքով դեռ մինչև ապրիլի 10-ի դեպքերը գյուղում զգալի ավերածություններ կային: 1989թ. մարդահամարի տվյալներով գյուղում ապրում էր 4660 մարդ: 1992թ. ապրիլի 10-ին առավոտյան ժամը 5-ին սկսվեց գյուղի գնդակոծությունը: Այն նախորդներից ուժեղ չէր: Սակայն կեսօրին մոտ² գնդակոծության կտրուկ սաստկացումից հետո, Ադրբեջանի կանոնավոր բանակի զորամասերը անցան հարձակման ու մտան Մարաղա: Գրավելու հետևանքով գյուղի մեծ մասն ավերվեց ու հրկիզվեց, 57 բնակիչ սպանվեց, դրանց թվում` 9 երեխա, 29 կին: Նրանց դիակները անդամահատվեցին, այլանդակվեցին, անարգվեցին: 2 շաբաթ անց գյուղը կրկին հարձակման ենթարկվեց, բնակչությունը բռնի արտաքսվեց, 13 խաղաղ բնակիչ պատանդվեց, տները թալանվեցին ու հրկիզվեցին: ԼՂՀ ղեկավարությունը իր տրամադրության տակ ունի սպանվածների դիակների շիրիմներից հանելու տեսաժապավենը, որ արվել է Բրիտանիայի Միացյալ Թագավորության լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոքսի ներկայությամբ: Տեսակադրերը վկայում են, որ սպանվածների հանդեպ բարբարոսություն է գործադրվել ինչպես մինչև մահը վրա հասնելը, այնպես էլ մահվանից հետո³:

Նախորդ գնդակոծությունների ժամանակ, ինչպես նաև գաղթի ճանապարհներին մահացածների հետ միասին Մարաղայում զոհվել է ավելի քան 90 խաղաղ բնակիչ: Տարբեր աստիճանի վնասվածքներ է ստացել 37 մարդ, այդ թվում` 21 կին ու 6 երեխա³:

¹ Քոչարյան Վ., Միջազգային իրավունք, Երևան, 2002, էջ 275 :

² Մելիք-Շահնազարյան Լ., Ադրբեջանի ռազմական հանցագործությունները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ, Երևան, 1998, էջ 98-99:

³Նույն տեղում, էջ 102-103:

Մարադայում տեղի ունեցած բարբարոսությունները վկայում են, որ մարդու իրավունքների զանգվածային խախտումներ են եղել, որոնց համար պատասխանատվություն է նախատեսված միջազգային բազմաթիվ կոնվենցիաներով ու պայմանագրերով: *«Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիան»* (հաստատված 1948թ. դեկտեմբերի 9-ին) նշում, որ որպես ցեղասպանություն հասկացվում են հետևյալ գործողությունները, որոնք կատարվում են որևէ ազգային, էթնիկական, ռասայական, կրոնական խումբ՝ որպես այդպիսին լիովին կամ մասամբ ոչնչացնելու մտադրությամբ.

- այդ խմբի անդամների սպանությունը.
- այդ խմբի անդամներին լուրջ մարմնական վնասվածքներ կամ մտավոր խանգարումներ հասցնելը.

• որևէ խմբի համար այնպիսի կենսական պայմանների կանխամտածված ստեղծումը, որոնք նպատակադրված են այդ խմբի լիովին կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը:

Քաղաքացիական բնակչության և մշակութային արժեքների միջազգային իրավական պաշտպանությունը նախատեսված է 1907թ. Հաագայի IV, 1949թ. Ժնևի IV և 1954թ. Հաագայի կոնվենցիաներով: Քաղաքացիական բնակչությունը բոլոր պայմաններում իրավունք ունի հավակնելու մարդասիրական վերաբերմունքի և բռնության, ահաբեկման և վիրավորանքների ցանկացած գործողություններից պաշտպանության՝ անկախ նրանից՝ հակառակորդի կողմից ժամանակավորապես օկուպացված տարածքում մ է գտնվում, թե՛ իր բանակի թիկունքում:

Միջազգային մարդասիրական իրավունքի *օբյեկտների սահմանափակման սկզբունքի* համաձայն՝

- հարձակումները պետք է խիստ սահմանափակվեն ռազմական օբյեկտներով,
- արգելվում է հարձակումը չպաշտպանվող տեղանքների նկատմամբ,
- արգելվում է որևէ թշնամական գործողություն ուղղված այն շենքերին, որտեղ իրականացվում են գիտական հետազոտություններ կամ տեղակայված են բարեգործական հիմնարկներ, նույնը և պատմական հուշարձանների և արվեստի ստեղծագործությունների դեպքում¹:

Ռազմագերիների միջազգային իրավական պաշտպանությունը նախատեսված է 1907թ. Հաագայի IV կոնվենցիայով, 1949թ. Ժնևի III կոնվենցիայով և 1977թ. I և II Լրացուցիչ արձանագրություններով: Այդտեղ մասնավորապես ասվում էր, որ պատերազմող կողմերը պարտավոր են մարդասիրաբար վերաբերվել ռազմագերիներին, հարգել նրանց անձը և պատիվը, ապահովել ջրով, սննդամթերքով, ռազմագերիների նկատմամբ չկիրառել ֆիզիկական տանջանքներ և այլ միջոցներ՝ տեղեկություն ստանալու համար:

1991-1994 թթ. ադրբեջանա-դարաբադյան հակամարտության ընթացքում Ադրբեջանի կողմից ԼՂՀ բնակչության նկատմամբ իրագործված ռազմական հանցագործությունների անպատժելիության արդյունքը կարելի է համարել 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմում ռազմական հանցագործությունների դեպքերը: Ադրբեջանի կողմից սանձազերծված այս ագրեսիայի ժամանակ նույնպես խախտվեցին միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը: Թալիշում ադրբեջանցիների կողմից հայ ընտանիք խոշտանգվեց, սպանվեց Զորավանի դպրոցահասակ աշակերտը, թիրախավորված հրետակոծությունների ենթարկվեցին խաղաղ բնակավայրեր, անարգվեցին ու խոշտանգվեցին սպանվածների մարմինները: Դրանք սպասում են միջազգային իրավական համարժեք գնահատականների:

¹ Քոչարյան Վ. Միջազգային իրավունք, Երևան, 2002, էջ 266:

ՀՏԴ 941(479.25.)

Լուիզա Ջանոյան
Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ,
Պատմաբանասիրական ֆակուլտետ, մագիստրանտ
Գիտական ղեկավար՝ պ.գ.թ., դոցենտ Քնարիկ Սարգսյան

**ՄԻՍԻԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՄԵԴԱԼԻՈՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՆՏԻԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՆԹԵՈՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ**

Բանալի բառեր՝ դամբարան, մեդալիոն, անտիկ Հայաստան, պանթեոն:

Ամփոփում

Պատմական Սյունիքը, լինելով հայկական լեռնաշխարհի առանցքային տարածքներից մեկը, հարուստ է հնագիտական հուշարձաններով, որոնք մեծ նշանակություն ունեն Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեդարյա պատմության ուսումնասիրության տեսանկյունից: Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում Միսիանի մ.թ.ա. I դարի երկրորդ կեսով թվագրվող դամբարանը իր հնագիտական հարուստ նյութով: Միսիանի դամբարանի գտածոներում առանձին խումբ են կազմում հինգ մեդալիոնները՝ պատրաստված արծաթե բարակ թիթեղից դրոշմելու եղանակով, ոսկեջրած: Ուսումնասիրվող մեդալիոնները հնարավորություն են տալիս հարստացնելու մեր գիտելիքները Հայաստանի հելլենիստական մշակույթի զարգացման մակարդակի վերաբերյալ:

Луиза Джаноян

ГГПИ, историко-филологический факультет, магистрант

Науч. рук.: к. и.н., доц. Кнарик Саргсян

**МЕДАЛЬОНЫ, ОБНАРУЖЕННЫЕ В МАВЗОЛЕЕ СИСИАНА, КАК ОБРАЗЦЫ АНТИЧНОГО
ЮВЕЛИРНОГО ИСКУССТВА**

Ключевые слова: *гробница, медальон античная Армения, пантеон.*

Резюме

Исторический Сюник, будучи одним из ключевых регионов Армянского нагорья, богат археологическими памятниками, которые имеют большое значение с точки зрения изучения истории Армянского нагорья эпохи Бронзового и Серебряного веков. В этом отношении своим богатым археологическим материалом большой интерес представляет мавзолей Сисиана, датируемый второй половиной 1 века до н.э.

Среди находок мавзолея отдельную группу составляют 5 медальонов, изготовленных из тонкого листа серебра, позолоченных. Изучаемые медальоны дают возможность обогатить наши знания об уровне развития Эллинистического искусства Армении

Luiza Janoyan

GSPI, the fakulty of history and philology, master's degree

MEDALLIONS FOUND IN SISIAN MAUSOLEUM AS ANCIENT JEWELRY DESIGNS

Key words: tomb, locket, Antique Armenia, pantheon.

Summary

Historical Suynik, being one of the key areas of Armenian Highland, is rich in archeological monuments, which have a big importance from the point of view of study of Armenia Highland of the Bronze and Silver Age. In this regard Sisian's mausoleum with its rich archaeological material dated by the second half of 1 century BC is of great interest.

Among the findings of Sisian mausoleum there is a separate group of five medallions made of thin silver tin plate, gilded. The medallions gave an opportunity to enlarge our knowledge on the level of Armenian Hellenistic art development.

Պատմական Սյունիքը, լինելով Հայկական լեռնաշխարհի առանցքային տարածքներից մեկը, հարուստ է հնագիտական հուշարձաններով, որոնք մեծ նշանակություն ունեն Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեդարյան պատմության ուսումնասիրության համար: Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում Սիսիանի մ.թ.ա. I դարի երկրորդ կեսով թվագրվող դամբարանը՝ իր հնագիտական հարուստ նյութով:

Սիսիանի դամբարանի՝ մեզ մասամբ հասած ոսկե, արծաթե իրերի, գեղարվեստական մետաղի, ոսկե և արծաթե դրամների, կահ-կարասու, բազմազան ու բազմատեսակ առարկաների առատությունն ու շքեղությունը վկայում են դամբարանի աղբյուրագիտական մեծ նշանակության մասին:

Դամբարանադաշտը պատահմամբ հայտնաբերվել է 1970 թվականի նոյեմբերին Սիսիանի ավանի Շհարստան (քաղաքատեղի) կոչվող վայրում՝ «Ձոհաբերության» բլրի մոտ, որտեղ պահպանվել էին հին պարիսպների ու շենքերի հիմնապատերի հետքեր: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ դամբարանը կառուցվել է մեզանից երկու հազար տարի առաջ և պատկանել է Արախսզատ իշխանին¹: Իր կառուցվածքով այս դամբարանը մի ուշագրավ հուշարձան է:

Պեղումների արդյունքում պարզվեց, որ դամբարանը ստորգետնյա սրբատաշ, տարբեր երկարության 20-23 սմ հաստության կրաքարե սալերով, կանոնավոր և ինքնատիպ շարվածքով կառուցվածք է՝ ուղղանկյուն հատակագծով (ճարտարապետ Մ. Դանիելյանի չափագրմամբ ներսի չափերն են՝ 2,10 X 1,80մ, բարձրություն՝ 1,66 մ)²: Պատերը դրված են նախապես պատրաստված սալահատակի վրա: Մուտքն արևմտյան կողմից է՝ հարավային պատին կից՝ փակված ավելի փոքրաչափ քարերով, որոնք ըստ անհրաժեշտության հնարավոր էր հանել և նորից տեղադրել: Արևելյան և արևմտյան պատերի քարերը՝ 4-7-րդ շարքը, 4-20սմ առաջ դնելու հետևանքով դամբարանի վերին մասն աստիճանաբար նեղանում է մինչև 65 սմ և փակվում է լավ մշակված երեք սալերով: Սալերի վրա հում աղյուսներով պատրաստված է մոտ 25 քառ. մետր մակերեսով հարթակ, որի վրա բացվել է երկու խարիսխ: Հայաստանում «կեղծ թաղով» դամբարաններ հանդիպում են մ.թ.ա. II հազարամյակից մինչև մ.թ.ա. VI դարը: Նմանօրինակ դամբարաններ հայտնաբերվել են Օշականում, Սևանի ավազանում, Արագածի լանջերին, Լոռիում, Իշխանասարում և այլուր³:

Դամբարանից պեղվել է հարուստ հնագիտական նյութ. կահույք, աշտանակներ, ոսկե տարբեր առարկաներ ու զարդեր, արծաթե սպասք և զարդեր, բրոնզե սպասք, խեցեղեն, գենքեր, գեմմաներ, ապակյա իրեր, ուլունքներ և այլն: Սիսիանի դամբարանի գտածոներում առանձին խումբ են կազմում մեղալիոնները: Թեև սակավաթիվ են, բայց իրենց գեղագիտական արժանիքներով մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Մեղալիոնները հինգն են՝ պատրաստված արծաթե բարակ թիթեղից դրոշմելու եղանակով, ոսկեջրած: Դրանցից մեկը կենտրոնում կրում է կանացի ռելիեֆ պատկեր: Կինը կրում է թեթև շղարշե զգեստ՝ կրծքի մասում եռանկյունաձև բացվածքով, առանց թևերի: Կնոջ դիմագծերը խոշոր են, արտահայտիչ, լի վճռականությամբ: Գլխից ձախ

¹ Տե՛ս Խաչատրյան Ժ., Սիսիանի դամբարանը (մ.թ.ա. I դարի երկրորդ կես), Եր., 2009, էջ 6:

² Տե՛ս Նույն տեղում, էջ 8:

³ Տե՛ս Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. I, Եր., 1942, էջ 367:

պատկերված է արմավենու ճյուղ, իսկ դեպի աջ՝ նիզակին ագուցված հանդերձանքավար: Մանրվածքը կիսալուսնաձև է, հարդարված առանձնակի հյուսկեն փնջերով, բնորոշ հելլենիստական շրջանում լայն տարածում գտած սանրվածքի հարդարման նորաձևությանը: Կնոջ գլխի երկու կողմում թռչնաթևեր են՝ շրջանակված ոլորուն զարդով: Զարդաձևերը թեթև են, անցումները՝ սահուն: Դեմքը կերտված է հունահռոմեական արվեստին բնորոշ համաչափությունների գեղեցիկ ներդաշնակությամբ¹:

Կարելի է ենթադրել, թե մեդալիոնի վրա պատկերված է մերձավորարևելյան աստվածուհու ընդհանրացված կերպարը, որն իր մեջ զուգորդում է Իսիդայի ու Դեմետրեի՝ փոքրասիական մայր աստվածուհու բնորոշ գծերը: Միսիանի մեդալիոնի վրա, բացի Իսիդայի ու Դեմետրեի պատկերից, կարելի է նկատել այլ մանրամասներ, որոնք պահանջում են իրենց բացատրությունը: Ըստ երևույթին, այստեղ պատկերված է հունահռոմեական աստվածուհիներից մեկը՝ իրեն բնորոշ մի շարք ատրիբուտներով, միաձուլված տեղական որևէ աստվածուհու հետ: Միսիանի մեդալիոնի պատկերն իր արտահայտչամիջոցներով հիշեցնում է հաղթանակի թևավոր աստվածուհուն՝ Վիկտորիային: Նրա մի կողմում պատկերված է ռազմական ավարը, իսկ մյուսում՝ արմավենու ճյուղը²:

Հելլենիստական շրջանի Ծովքի և Արտաշիսյան դինաստիայի հայ թագավորների դրամների դարձերեսներին պատկերված են Հերակլեսի, Աթենասի, Նիկեի ու Տիսիտի կերպարները: Միասնական տիպի պատկերագրությամբ հանդերձ՝ այդ դիմապատկերներում նկատելի է տարբերակների մեծ բազմազանություն: Նիկեն պատկերված է, ինչպես միշտ, դափնեպսակով, արմավենու ճյուղով: Ի դեպ Միսիանի մեդալիոնի արմավենազարդ ճյուղը նման է Տիգրան II դրամների դարձերեսին պատկերված Տիսիտի ձեռքի արմավենու ճյուղին:

Միսիանի մեդալիոնի Վիկտորիայի պատկերը, բացառյալ թևերի, մնացած բոլոր ատրիբուտներով կարելի է նույնացնել Հայոց մայր աստվածուհու՝ Անահիտի հետ: Քանզի Անահիտը մարմնավորում էր ոչ միայն պտղաբերության, արգասավորության, ամենայն հայոց աշխարհի հովանավորի ու պահապանի, այլև ռազմի աստվածությանը վերագրվող հատկանիշներ: Թագավորներն Անահիտից խնդրում էին հաջողություն և զորություն՝ իրենց թշնամիներին հաղթելու, և իշխանություն՝ երկիրը կառավարելու համար³:

Միսիանի մեդալիոնի կնոջ դիմագծերը՝ ճակատից իջնող ուղիղ քիթը, ծնոտը, լիքը այտերը և երկար վիզը, հիշեցնում են «Տիսե-Խվանիդային» պատկերող հունաբակտրիական մեդալիոնի (արծաթ, ոսկեջրած, մ.թ.ա. II դ.) աստվածուհուն: Վերջինս նույնպես ունի ուսերից դուրս եկող փոքր թևեր, փարթամ, գեղեցիկ հարդարված մազեր, ցածր գլխարկ, հարուստ ծալքերով զգեստ: Այստեղ ևս առկա է սինկրետիզացված մի կերպար, որտեղ ակնառու են և՛ հելլենականի, և՛ արևելյանի արմատները:

Նիկեի պատկերումը հայկական կիրառական արվեստում, մեդալիոններ, կնիքներ և պաշտոնական արվեստի հուշարձաններ, պատահական չպետք է համարել, մանավանդ մ.թ.ա. I դարում, երբ Հայաստանը ծաղկուն երկիր էր և գտնվում էր իր հզորության գագաթնակետին: Այսպիսով, Միսիանի մեդալիոնի վրա մենք ունենք տիպիկ սինկրետիկ մի աստվածուհու պատկեր, որտեղ արևելյանը և հունահռոմեականը հանդես են գալիս համատեղ: Նիկեի այս պատկերը՝ ավարով, արմավենու ճյուղով և թրով, մեկ ամգամ ևս հաղթական տիրակալին փառաբանելու գաղափարն է խորհրդանշում: Գաղափարական նույն միտվածությունն ունեն և մյուս մեդալիոնները⁴:

Երկրորդ մեդալիոնը թերի է, պահպանվել է միայն մարդու գլուխը: Սկզբնական շրջանում ենթադրվում էր, որ այն տղամարդու (Մերկուրիոսի կամ ռազմիկի) գլխի բարձրաքանդակ է, բայց հետագայում պարզվեց, որ այն կնոջ արծաթե կիսանդրի է և պատրաստված է նույն եղանակով, ինչ նախորդը: Քիթը սեղմված է մի կողմի վրա:

¹ Խաչատրյան Ժ., Նշվ. աշխ., էջ 35:

² Խաչատրյան Ժ., Հայաստանի անտիկ շրջանի մեդալիոնները, ԼՀԳ, 1978, թիվ 5, էջ 46:

³ Մելիք-Փաշայան Կ., Անահիտ աստվածուհու պաշտամունքը, Եր., 1963, էջ 62:

⁴ Տե՛ս Խաչատրյան Ժ., Նշվ. աշխ., էջ 37:

Խաթարված է, ոսկին մեծ մասամբ թափված է, կնոջ դիմագծերի, վզի և մյուս մանրամասների մշակումը նույնն է, ինչ նախորդինը¹:

Քանդակի մեջ առավել ուշագրավը գլխարկն է, որը շքեղ բաշով սաղավարտ է: Կողմնային մասերում բաշը արծվի թևերի նմանությամբ փռվում է փետրազարդերով և ամբողջացնում կերպարի ներկայացուցչական հորինվածքը: Կերպարի բնութագրով, ու մանրամասներով դիմաքանդակը վերարտադրում է Աթենաս Պալասին²:

Ալ. Մակեդոնացու կողմից Արևելքը նվաճելուց հետո հունական շատ աստվածություններ, կորցնելով իրենց նախնական, հունական կերպարանքը և համադրվելով տեղական համապատասխան աստվածությունների հետ, չնայած պահպանեցին իրենց կերպարին յուրահատուկ որոշ ատրիբուտներ, հելլենիստական շրջանում սկսեցին պատկերվել տեղական հագուստներով, զենքերով և այլ խառը ձևերով:

Աթենասը ևս կորցնում է հունա-հռոմեական պատկերագրության կողմից մշակված դիմանկարի ավանդական պատկերաձևերը, գեղեցիկ, հպարտ կեցվածքը, ձեռք բերում նոր հանդերձանք՝ դրանով իսկ շեշտելով նրա էթնիկական այլ խմբի պատկանելը: Աթենասը Հայաստանում նույնացվել է Արամազդի դուստր Նանեի հետ, և արձանը կանգնեցվում է Բարձր Հայքի Դարանազյաց գավառի Թիլ ավանում, որտեղ գտնվում էր Նանեին նվիրված մեծիանը: Սակայն Միսիանի մեդալիոնի վրա Աթենասը պատկերված է հունական դիմագծերով և կրում է հունիական սաղավարտ³:

Միսիանի մեդալիոնի պատկերաքանդակում աստվածուհու սաղավարտն ունի ճիշտ նույն հորինվածքը, ինչ Կերչի մոտ գտնված է մ.թ.ա. III դ. թվագրվող ոսկե մատանու ակնաքարը (սիրիական նոնաքար) զարդարող Աթենաս աստվածուհու սաղավարտը, միայն այն տարբերությամբ, որ այստեղ մանրամասներն ավելի հստակ են և լավ մշակված:

Վերջապես Միսիանի մեդալիոնն աստվածուհու իր կերպավորմամբ հիշեցնում է Ապոլոնիայից հայտնի շքագարդը՝ Աթենասի պատկերաքանդակով: Հարկավ, չի բացառվում, որ քննարկվող շքագարդ-պատվանշանը պատրաստվել է կամ դրսեկ (Տիգրան II-ի կողմից բռնագաղթված) կամ էլ հելլենիստական հարդարվեստին լավատեղյակ տեղացի որևէ շնորհալի վարպետի կողմից՝ հաղորդակ ժամանակի նորամուծություններին ու զարդանկարային պատկերասրահին: Մեդալիոնի ողջ պատկերադաշտը հարդարում է խոշոր արծվապատկերը՝ թերևս մեկ անգամ ևս նրա բացառիկությունը մատնանշելու ցանկությամբ, որովհետև պատկերը մասամբ դուրս է եկել այն գոտևորող շրջանակից: Թռչունը պատկերված է հաղթական կեցվածքով, մի դեպքում՝ խրոխտ կանգնած գետնած կենդանի գազանի փորի վրա, մյուս դեպքում՝ շանթահար որոտների ու կայծակների հենքում: Արծվապատկերը խիստ բնական է՝ փորագրված ամենայն մանրամասնությամբ: Չարդատարրերը հստակ են ու արտահայտիչ, հատկապես դիմային հատվածում⁴:

Քանդակի նման շեշտվածությունն ակներևաբար բովանդակում է արծվի՝ որպես խորհրդանիշ ընդգծելու դիտավորություն, որովհետև նրան գոհ դարձած կենդանին անհամեմատ ավելի ընդհանուր մշակում ունի, լավ վերարտադրված են թռչնի համաչափությունները և ընդհանուր ծավալը:

Հորինվածքային տեսակետից մեդալիոնների ձախ կամ աջ անկյունները ծանրաբեռնված են, իսկ հակառակ երեսներն ավելի ազատ են թողնված՝ հաղթանակող արծվի կերպարն առավել ընդգծելու նպատակով: Դրան նպաստում է նաև արծվի գլխի դիրքը՝ հեռուն ուղղված հայացքով: Արծիվներից մեկի գլուխը թեքված է դեպի ձախ, մյուսինը՝ դեպի աջ, իսկ երրորդինը, ըստ պահպանված հետքերի, կարելի է ենթադրել՝ դեպի ձախ: Մեդալիոնները շրջանակված են շքեղ գոտիներով, որոնցից երկուսը՝ ոճավորված կենդանու վրա կանգնածները, կազմված են բաղերից և դափնեպսակից⁵:

Այսպիսով, Միսիանի մեդալիոններն իրենց զարդապատկերային հորինվածքով ու բովանդակությամբ համադրվում են Ջևսի, երկնքի, արևի պաշտամունքի

¹Տե՛ս նույն տեղում, էջ 37:

²Տե՛ս Խաչատրյան Ժ., Հայաստանի անտիկ շրջանի մեդալիոնները, Եր., ԼՀԳ, 1978, թիվ 5, էջ 48:

³Տե՛ս Արակլյան Բ. Կ., Очерки по истории искусства древней Армении (VI в. до н. э.—III в. н. э.), Ереван, 1976, стр. 81.

⁴Տե՛ս Խաչատրյան Ժ., Նշվ. աշխ., էջ 39:

⁵Տե՛ս նույն տեղում:

մերձավորարևելյան, հելլենիստական արև-աստվածությունների, այդ թվում գուցե և Արամազդի հետ: Քննարկվող մեղալիոնները կերտված են տեխնիկական նույն հնարներով և ունեն նույն չափերը, ինչ որ կանացի պատկերներով մեղալիոնները, որը թույլ է տալիս ասել, թե դրանք միևնույն կենտրոնի և արհեստանոցի արտադրանք են՝ չբացատրելով միևնույն վարպետի կողմից պատրաստված լինելը:

Առավել դժվար խնդիրը Միսիանի մեղալիոնի պատրաստման կենտրոնը որոշելն է: Դրանց գուգահեռները մեզ հայտնի չեն: Մեղալիոնները կարող էին պատրաստված լինել Միրիայում, Փոքր Ասիայում կամ էլ Հայաստանում: Ինչ վերաբերում է արծվի պատկերներին, ապա դրանք պատկանում են լեռնային տեսակին կամ ընտանիքին և տարածված են եղել ամենուր՝ Փոքր Ասիայից Հայկական լեռնաշխարհ¹: Ընդհանուր առմամբ շքագարդերն աչքի են ընկնում ոճական նկատելի ընդհանրությամբ: Ակներն է հելլենիստական տեղական մշակույթների ազդեցությունը: Տեղականը տեսանելի է մակերեսի վրա հորինվածքի անհամաչափ տեղադրման, ատրիբուտներին խիստ պայմանական մոտեցման, կնոջ կերպարի ու գեղեցիկի ըմբռնման չափանիշների մեջ:

Հելլենիստականն արտահայտվում է նախ՝ մեղալիոնների աստվածուհիների պատկերներում, որոնք համադրված են ոչ միայն իրենց ֆունկցիաներով, այլև պատկերագրությամբ: Այսինքն՝ տեղական աստվածուհիները, կորցնելով իրենց նախնական տեսքն ու ատրիբուտները, ձեռք են բերում օտարածին տեսք և բոլորովին նոր հատկանիշներ՝ գերազանցապես նմանվելով հունա-հռոմեական աստվածուհիներին: Հելլենիստական կերպավորումն արտահայտվում է և առանձին մանրամասների արտահայտչամիջոցներում, առավելապես սանրվածքի, հագուստի ձևերի, թռչունների թևերի մշակումներում:

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ Միսիանի մեղալիոն-գտածոները պատրաստվել են Հայաստանում, հնարավոր է դեռևս Ռիրարտուի ժամանակներից կամ էլ հելլենիստական շրջանում ձևավորված մետաղագործական հայտնի կենտրոններից մեկում: Ամենայն հավանականությամբ, արքունիքին սպասարկող և նրան պատկանող ու նրա հոգածությունը վայելող ոսկերչական արհեստանոցներից մեկում, որն անշուշտ պետք է գործեր Արտաշատում: Վերջիններս, հարագատ մնալով տեղական ավանդույթներին, միևնույն ժամանակ կրել են հելլենիստական մշակույթի ազդեցությունը, յուրացնել ու ստեղծագործաբար օգտագործել այն: Հնարավոր է՝ դրանք պատրաստվել են ներմուծված բարձրարժեք անոթների կամ նմանատիպ պատճենների օրինակով, տեղացի վարպետի կողմից, որն էլ վերարտադրել է յուրովի՝ իր միջավայրին համապատասխան, ազատ կոմպոզիցիայով: Միսիանի մեղալիոններն անկասկած ավելին են եղել, քան մեզ հասածները: Ակնհայտ է, որ դրանք արծաթե ըմպանակների վրա ազուցված խորհրդանշանները չեն, թեև հելլենիստական շրջանում սկսվում է անոթների մեջ դրվող ռելիեֆ մեղալիոնների արտադրությունը, որը շարունակվում է նաև հետագայում: Մակայն Միսիանի դամբարանից հայտնաբերված մոտ մեկ տասնյակ ըմպանակներից ոչ մեկի վրա այդպիսի խորհրդանշաններ ընդելուզելու հետքեր չկան: Դրանք ամրացված են եղել թիթեղների վրա՝ զարդարելով բարձր խավի շքեղ հագուստները: Պահպանվել են միայն առանձին բեկորներ:

Միսիանի պեղումներից հայտնաբերված մեղալիոնները խոսում են այն մասին, որ Հին Հայաստանում ոսկերչությունն ունեցել է բարձր մակարդակ: Հայ վարպետները տիրապետել են դրվագման, ձուլման, հյուսման, հատիկազարդման, մանրարուրքի և այլ եղանակների: Հելլենիստական շրջանում կենցաղ մտած մեղալիոնները լայնորեն տարածվեցին մ.թ.ա. I-մ.թ. I դդ.՝ հինք հանդիսանալով Հայաստանում ոսկերչական արվեստի հետագա զարգացման ու կատարելագործման համար:

Գրականություն

1. Թորամանյան Թ., Լյութեր հայկական ճարտարապետության պատմության , հ. I, Եր., 1942:

¹ Տե՛ս Կույն տեղում, էջ 41:

2. Խաչատրյան Ժ., Հայաստանի անտիկ շրջանի մեդալիոնները, ԼՀԳ, 1978, թիվ 5:
3. Խաչատրյան Ժ., Միսիանի դամբարանը (մ.թ.ա. I դարի երկրորդ կես), Եր., 2009:
4. Մելիք-Փաշայան Կ., Անահիտ աստվածուհու պաշտամունքը, Եր., 1963:
5. Араксян Б. Н., Очерки по истории искусства древней Армении (VI в. До н. э.—III в. н. э.), Ереван, 1976.





ՀՏԴ 941(479.25)

Տաթև Արարատյան

eararatyan@gmail.com

ՀՊՄՀ-ի պատմության և իրավագիտության
Ֆակուլտետի պատմությանբաժնի 3-րդ
կուրսի ուսանողուհի

Սալվինե Մարկոսյան
salvi.markosyan@gmail.com

ՀՊՄՀ-ի պատմության և իրավագիտության
ֆակուլտետի պատմության բաժնի 4-րդ
կուրսի ուսանողուհի

Գիտական ղեկավար՝ պ.գ.թ., Ավետիս Հարությունյան
ՀՊՄՀ-ի պատմության և իրավագիտության
ֆակուլտետի Հայոց Պատմության ամբիոնի դոցենտ

**ԱԼՄԱ ՅՈՒՀԱՆՍՈՆԸ ԵՎ ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ
ՏԱՐԻՆԵՐԻՆ**

Բանալի բառեր՝ Շվեդիա, միսիոներություն, ցեղասպանություն, արևմտահայություն, որբանոց, բռնություն, տեղահանություն, պատերազմ, կոտորած, գաղթականներ

Ամփոփում

Հնդվածում արժարծվել է շվեդ միսիոներուհի Ալմա Յուհանսոնի գործունեությունը, որը 1901-1915թվականներին լինելով Արևմտյան Հայաստանում, ականատես է եղել Օսմանյան կայսրության վարած ցեղասպանության քաղաքականությանը և ձեռնամուխ է եղել անձնուրաց միսիոներական գործունեության : Հայ ժողովրդի զավակների փրկությանն ուղղված Ա.Յուհանսոնի գործունեությունն անգնահատելի է և իրապես արժանի է գնահատանքի:

Татев Араратян

Салвине Маркосян

АЛЬМА ЮХАНССОН И ПРОБЛЕМА ПОМОЩИ АРМЯНСКИМ БЕЖЕНЦАМ В ГОДЫ МЕЦ ЕГЕРНА

Ключевые слова: Швеция, миссионерство, геноцид, западное армянство, детдом, насилие, депортация, война, беженцы, резня

Резюме

В статье обсуждаются деятельность шведской миссионерки Альмы Юхансон, которая 1901-1915-годах находясь в Западной Армении, засвидетельствовала факт проведения политики геноцида правительством Османской империи и проводила бескорыстную миссионерскую деятельность. Деятельность Аьми Юхансон по спасению детей армянского народа, бесценна, и действительно заслуживает высокой оценки.

*Tathev Araratyan
Selvine Markosyan*

**ALMA JOHANSSON AND THE PROBLEM OF THE HELP FOR ARMENIAN REFUGEES DURING METS
EGHERN**

Key words: Sweden, missionary, genocide, Western Armenians, orphanage, violence, deportation, war, refugees, massacres.

Summary

In the article discusses the activity of a Swedish missionary named Alma Johanson, in Western Armenia during 1901-1915 years, when she witnessed the conducted genocide policy of Ottoman Empire and she took up the selfless missionary activity. Johanes's activity aimed at the salvation of Armenian children is invaluable, and it really deserves high appraisal.

Օսմանյան կայսրության լծի տակ կեղեքվող հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ սկանդինավյան պետություններում ուշադրություն են դարձրել դեռևս 19-րդ դարի կեսերից: Համիդյան կոտորածներից անմիջապես հետո շվեդական հասարակությունը առիթ է ունենում մոտիկից ծանոթանալու հայ ժողովրդին բաժին հասած այդ ողբերգությանը:¹

Թեև արևմտաեվրոպական մյուս երկրների համեմատ հեռավոր սկանդինավյան երկրները սակավ տեղեկացված են եղել Հայկական հարցի վերաբերյալ, այդուհանդերձ հետաքրքրությունը հայության հանդեպ ունեցել է տարբեր դրսևորումներ: Սկանդինավյան երկրների արևմտահայության ողբերգությանը ներգրավված լինելն արտահայտվել է նախ հայության մեջ մի շարք միսիոներների գործունեությամբ:

Մեծ է հատկապես արևմտահայ կարոտյալների շրջանակներում գործունեություն ծավալած սկանդինավյան միսիոներուհիների ավանդը: Արձակագիր Կարպիս Սուրենյանը 1893 թվականին Կոպենհագենում գրողների միջազգային հանդիպման ժամանակ կարդացած զեկույցում, հիշելով սկանդինավյան միսիոներուհիների աշխատանքը արևմտահայության շրջանում, նրանց տվել է հետևյալ դիպուկ բնորոշումը՝ «Նեղմիտ միսիոներները չէին այդ բարեպաշտ կանայք, լայնախոհ լայնասիրտ և գործնական մարդասիրությունն էր նրանց մղում: Սովորեցին հայոց լեզուն, հարազատացան հայ մարդկանց, նրանց կենցաղին, նրանց ճակատագրին՝ հաղթահարելով բոլոր դժվարությունները»:²

Միսիոներուհիների լայնախոհության ապացույցներից է այն, որ նրանցից ոմանք, օրինակ, Քարեն Եփփեն, ընդունել է հայ լուսավորչական դավանանքը և իրենց հաստատություններում մեծ տեղ են տվել ավետարանչական և լուսավորչական քահանաներին:

1895 թվականին Ֆրեդրիկ Համարը և կոմսուհի Զիգրիդ Քուրքը Ստոկհոլմում հիմնում են շվեդ կանանց քարոզչական ընկերությունը, իսկ 1900 թվականին հիմնում են նաև «Դանիացի տիկնանց միություն»-ը, որը հայրենակցուհիներին կոչ էր անում գորավիզ լինել իրենց հայ քույրերին: «Դանիացի տիկնանց միություն»-ը հայության մեջ աշխատելու նպատակով առաջին անգամ Հայաստան է ուղարկում քույր Քրիսթա Համմերին: Շվեդական քարոզչական ընկերությունը 1901 թվականին Քրիսթա Համմերի հետ աշխատելու նպատակով Մուշ և Մեզրե է ուղարկում Ա. Յուհանսոնին (1880-1974), որտեղ վերջինս մնում է մինչև 1915 թ. դեկտեմբերը:³ Նրան է միանում նաև նորվեգացի միսիոներուհի Բյոդի Բյոռնը:

Այս առաքինի և անձնուրաց ,հայերենին լավ քաջատեղյակ շվեդուհին 1901-1915 թվականներին ապրել և աշխատել է Մեզրեյում և Մուշում գործող միսիոներական հաստատությունում և որբանոցում: «Deutscher Hilfsbund» կազմակերպության հայ երեխաների համար հիմնած որբանոցում, նրանք ողջ անհրաժեշտ աշխատանքը կատարում էին հերոսությամբ ու ինքագոհողությամբ: Ա. Յուհանսոնը և Բ. Բյոռնը անգոր հետևում էին, թե ինչպես էին թուրք զինվորները կանանց ու երեխաներին ծեծում, նախրի պես նրանց քշում փողոցներով, կրակում, ծիծաղում նրանց վրա: «Երբեք չեմ մոռանա այդ տեսարանը: Ես ոչինչ չէի կարող անել նրանց համար»:⁴ Որոշ ժամանակ անց Ա. Յուհանսոնը և Բ. Բյոռնը ականատես են լինում, թե ինչպես են իրենց որբերին փակում մի շինության մեջ և ողջակիզում:

1915 թվականին Ա. Յուհանսոնը վերադառնում է Շվեդիա: Նրա ապրումները լավագույնս ներկայացված են իր իսկ խոսքերում «Վերոհիշյալ իրադարձություններից դեռ

¹ Բախչինյան Ա., Հայանպաստ շարժումը սկանդինավյան երկրներում 1986-1930-ական թթ., Երևան, էջ 55:

² Սուրենյան Կ. Հին պատմություն, Երևան, 1999, էջ 167:

³ Ազատյան Լ. ., Հայ որբերը Մեծ Եղեռնի, Լոս-Անջելես, 1995, էջ 200:

⁴ Յուհանսոն Ալմա, Մի արտոյալ ժողովուրդ, Երևան, 2008, էջ 10:

երկու-երեք տարի շարունակ այն միտքը, որ պետք է շարունակել ապրել, դարձել էր համարյա անտանելի։ Մինչ օրս ժամանակ առ ժամանակ ես տանջվում եմ այն մտքից, թե ինչու ես այն ժամանակ տուն չվերադարձա բոլորի հետ և, որ ինձ թողեցին գրեթե մենակ»:¹

Բոլոր նրանք, ովքեր պատերազմից ու տեղահանությունից հետո հանդիպել էին Շվեդիա վերադարձած Ալմա Յուհանսոնին, երբեք չէին մոռանում տառապանքներից քարացած նրա տանջահար դիմագծերը։ Նրա անարցունք աչքերի արտահայտությունը, որը երկար ժամանակ չէր կարողանում խոսել ամենաձանրի իր փոքրիկ որբուկների ճակատագրի մասին, երբ նենգությամբ ու բռնությամբ բարձր աստիճանի սպայի տված «պատվի խոսքով», փոքրիկներին դուրս հանեցին ու ինչպես մորթվելու տարվող գառուկների՝ տարան սպանդի՝ մահվանն ընդառաջ։ Միակ հանգամանքը, որ կարող էր մեղմել անասելի ողբով լի սրտի ցավը, դա գիտակցումն էր, որ երեխաները Քրիստոսի մոտ են մանուկ նահատակները դրախտում պաշտպանված են բոլոր տանջանքներից։

Շվեդիա վերադառնալու ճանապարհին Կոպենհագենում դեկտեմբերի 7-ին նա այցելում է «Կանանց առաքելության աշխատողներ» (ԿԱԱ)-ի կազմակերպության դանիական մասնաճյուղի հայկական կոմիտե, պատմում իր և Բ.Բյոռնի տեսածի մասին։ Նրա պատմությունը գաղտնի տպագրվում է յոթ էջանոց գրքույկում, որը 1916 թվականին տարածվում է ԿԱԱ-ի անդամների մեջ։ Դա Մուշում և Մեգրեյում հայերի զանգվածային կոտորածների ժամանակ Մուշից վտարված ԿԱԱ-ի դանիական մասնաճյուղի միսիոներների կրկնվող պատմություններն էին։ Այն ինչ Ա. Յուհանսոնը պարզորոշ նկարագրում է հայերի «բնաջնջումն» էր։ Փրկված հայերի ու միսիոներների կյանքը, ինչպես նաև պատերազմից հետո նրանց հետագա գործունեությունը վտանգի չենթարկելու համար գաղտնի գրքույկում միսիոներների միայն առաջին տառերն էին գրված։

1920 թվականին Ալմա Յուհանսոնը Դանիայի կանանց միսիոներական շարժման ներկայացուցիչ տիկին Գրյունհագենի հետ մեկնեց Կ.Պոլիս, որ փորձի վերադառնալ Կիլիկիա, ուր հալածանքներից փրկված հայերն օգնության կարիք ունեին։ Բայց թուրքական իշխանություններն արդեն արգելել էին ամեն տեսակի միսիոներական գործունեությունը՝ չցանկանալով իրենց հանցագործության վկաներն ունենալ։

Ինչպես Զիգրիդ Քուրֆն է նկարագրում. «Հազարավոր քրիստոնյաներ այնտեղ տանջամահ էին լինում, ինչպես իրենց եղբայրները Եփրատի ափերին, գետ որը սևացել էր արյունից, և մինչև օրս էլ սև է սարսափելի հիշողություններից»:²

Օրիորդ Յուհանսոնը կրկին սկսում է աշխատել հայ գաղթականների շրջանում, այս անգամ Կ.Պոլիսի արվարձաններում, նախ Մաքրիքյոյում, ապա և Սկյուտարում։

Այն բանից հետո, երբ շվեդ կանանց միսիոներական շարժումն իր գործունեությունն առնչեց ամերիկյան խոշոր «Near East Relief» նպաստամատույց ծառայության հետ, որն աշխատում էր Մերձավոր Արևելքի կարիքավորների շրջանում, օրիորդ Յուհանսոնին առաջարկեցին ուղարկել Հունաստան՝ Մալոնիկ, որտեղ ամերիկացիները ունեին օգնության կայան, ունեին և, որտեղ նա կարող էր օգնել տառապալներին և համատեղել այդ աշխատանքը միսիոներական գործունեության հետ։

Երբ ամերիկացիներն ավարտեցին իրենց աշխատանքը և հետ կանչեցին իրենց աշխատակիցներին, շվեդ կանանց միսիոներական շարժումը 1924 թվականից Մալոնիկում սկսեց վարել լրիվ ինքնուրույն գործունեություն։ Մալոնիկում Ա. Յուհանսոնը բացում է մանիֆակտուրա 200-ից ավելի հայ կանանց և երիտասարդ աղջիկներին ապահովելով աշխատանքով և վարձատրությամբ, իսկ Խարիլաոսում՝ հայկական մանկապարտեզ։ Պատրաստված գեղեցիկ ձեռագործները, որ գեղարվեստական ստեղծագործության և հայ կանանց բարձր վարպետության լավագույն ապացույցներն էին, ուղարկվում են Շվեդիա վաճառքի, որտեղ դրանք արժանանում են մեծ գնահատանքի։ 1941 թվականին Ա. Յուհանսոնը վերադառնում է Շվեդիա, սակայն կապ է պահպանում իր հայ բարեկամների հետ, որոնք նրան նամակներ են ուղարկում «Միրելի մայրիկ» բառերով։

Ա. Յուհանսոնը գրել է երկու գրքույկ «Մի արքայալ ժողովուրդ» և «Հայ արքայականների կյանքը», որոնք 1979 թվականին ստոկհոլմաբնակ Պետրոս Զարդարյանը թարգմանել է հայերեն և հրատարակել։³ Մինչ այդ՝ արդեն 1920 թվականին, դանիոնի Ամալյա Լանգեն

¹ Յուհանսոն Ալմա, Մի արքայալ ժողովուրդ, Երևան, 2008, էջ 10։

² Յուհանսոն Ալմա, Մի արքայալ ժողովուրդ, Երևան, 2008, էջ 11։

³ «Սկանդինավյան արձագանք», Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 2011, էջ 13։

Ա.Յուհանսոնի մարդասիրական գործունեության մասին գրել է, իր «Արյուն հայոց պատմությունից» աշխատության մեջ:
Այսօր էլ Ա.Յուհանսոնի հիշատակը վառ է հայերի մեջ, և անուրանալի է նրա գործունեությունը ցեղասպանության տարիներին:

Եզրակացություն

Հորվածում արծարծվել է շվեդ միսիոներուհի Ալմա Յուհանսոնի գործունեությունը, որը, 1901-1915 թվականներին, լինելով Արևմտյան Հայաստանում, ականատես է եղել Օսմանյան կայսրության վարած ցեղասպանության քաղաքականությանը և ձեռնամուխ է եղել անձնուրաց միսիոներական գործունեության:

Հայ ժողովրդի զավակների փրկությանն ուղղված Ա.Յուհանսոնի գործունեությունն անգնահատելի է և իրապես արժանի է գնահատանքի:

Գրականություն

1. Ազատյան Լ., Հայ որբերը Մեծ Եղեռնի, Լոս-Անջելես, 1995:
2. Բախչինյան Ա, Հայասպաստ շարժումը սկանդինավյան երկրներում 1986-1930-ական թթ, Երևան:
3. Յուհանսոն Ալմա, Մի աքսորյալ ժողովուրդ, Երևան, 2008 :
4. «Սկանդինավյան արձագանք», Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 2011:
5. Մուրենյան Կ. Հին պատմություն, Երևան, 1999:
- 6.

ՀՏԴ 941(479)-054

Աղունիկ Սահակյան
Հովհ. Թումանյանի անվան
Վանաձորի պետական համալսարանի
պատմաաշխարհագրական ֆակուլտետի
«Պատմություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի
Գիտական ղեկավար՝ պատմության ամբիոնի դասախոս Արման Բերնեցյան

ԲԵՐԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐՎՈՎԿԱՍՅԱՆ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1931-1937 թթ.)

Բանալի բառեր - Լավրենտի Բերիա, Անդրկովկասյան դաշնություն, Համամիութենական կոմունիստական կուսակցություն, Ստալին, Գիրով, Օրջոնիկիձե, Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմ, Անդրկովկասի շրջանային կոմիտե, «մեծ գտում», ժողովրդի թշնամիներ, «Կրեմլյան գործ», բռնաճնշումներ, Մոլոտովի, Լակոբ, Խանջյան, Դեդարիանի:

Ամփոփում

1931 թ. Լավրենտի Բերիան դարձավ Վրաստանի Կ(բ)Կ ԿԿ առաջին քարտուղար, իսկ 1932 թ.՝ Անդրկովկասյան մարզային կոմիտեի առաջին քարտուղար: 1934 թ. ընդգրկվեց ՎԿ(բ)Կ ԿԿ Քաղբյուրոյի կազմում: Այդ ընթացքում նա հետապնդումներ սկսեց Վրաստանի և Հայաստանի Կոմունիստական կուսակցության անդամների, մասնավորապես Վրաստանի ԽՍՀ կրթության մինիստր Դեդարիանիի նկատմամբ: 1935 թ-ից Բերիան դարձավ Ստալինի ամենավստահելի ենթականերից մեկը: Նա Ստալինի մերձավորների շրջապատում իր դիրքերն ամրապնդեց «Անդրկովկասում բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցերի շուրջ» զեկույցով (հետագայում հրատարակվեց գրքի տեսքով), որում ընգծվում էր Ստալինի կերպարը:

Агуник Саакян
ВГУ, факультет истории и географии, 4-ый курс
Науч. рук.: препод. Арман Беренцян

ДЕЯТЕЛЬНОСТЬ БЕРИИ В ЗАКАВКАЗСКОЙ ФЕДЕРАЦИИ

Ключевые слова: Лаврентий Берия, Закавказская федерация, Всесоюзная коммунистическая партия, Сталин, Киров, Орджоникидзе, ЦК К(б)П Грузии, Закавказский районный комитет, «великая чистка», враги народа, «Крмлевское дело», репрессии, Мдивани, Лакоб, Ханджян, Девдариани.

Резюме

В 1931 году Лаврентий Берия стал первым секретарём ЦК КП(б) Грузии, а 1932 — первым секретарём Закавказского крайкома. В 1934 году был включён в Политбюро ЦК ВКП(б). За это время он

начал пристраивать членов Коммунистической партии Грузии и Армении, в частности, Девдариани, который служил в качестве министра образования Грузинской ССР. К 1935 году Берия стал одним из самых доверенных подчиненных Сталина. Он укрепил свое место в окружении Сталина с помощью доклада под названием «К вопросу об истории большевистских организаций в Закавказье» (позже опубликованном в книге), в котором подчеркивается роль Сталина.

Aghunik Sahakyan

VSU, the faculty of history and geography, 4th year

Supervisor: PhD Arman Berentsyan

ACTIVITIES OF BERIA IN THE TRANSCAUCASIAN FEDERATION

Key words: Lavrenty Beria, the Transcaucasian Federation, All-Union Communist Party, Stalin, Kirov, Ordzhonikidze, CC K (b) P Georgia Transcaucasian district committee, the "great purge", enemies of the people, "Khrmlin's affair", repression, Mdivani, Lakoba, Khanjyan, Devdariani.

Summary

In 1931 Beria was appointed Secretary of the Communist Party in Georgia, and for the whole Transcaucasian region in 1932. In 1934 he became a member of the Central Committee of the Communist Party of the Soviet Union. During this time, he began to attack members of the Georgian Communist Party and the Armenian Communist Party, particularly Gaioz Devdariani, who served as Minister of Education of the Georgian SSR. Since 1935 Beria was one of Stalin's most trusted subordinates. He steadied his place in Stalin's entourage with a long report on titled, "On the History of the Bolshevik Organisations in Transcaucasia" (later published as a book), which emphasized Stalin's role.

Լավրենտի Բերիայի կյանքն ու գործունեությունը մշտապես գտնվել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Չնայած նրա անձի և գործունեության շուրջ առաջացած մեծ հետաքրքրությանը, կատարված ուսումնասիրություններին, այնուամենայնիվ, դեռևս կան բազմաթիվ չլուսաբանված հարցեր, որոնք կարոտ են լուսաբանման: Նրա կյանքի առավել հետաքրքրական և իրադարձություններով լեցուն շրջան կարելի է համարել Անդրկովկասյան դաշնությունում նրա հնգամյա գործունեության տարիները:

1931 թ. հոկտեմբերի 31-ին տեղի ունեցավ Համամիութենական կոմունիստական բոլշևիկյան կուսակցության (ՀամԿ(բ)Կ) քաղբյուրոյի նիստ, որտեղ ընդունվեց «Համամիութենական կոմունիստական կուսակցության Անդրկովկասյան կազմակերպության աշխատանքի մասին» ՀամԿ(բ)Կ ԿԿ որոշումը, որով՝ Լավրենտի Բերիան նշանակվեց Անդրկովկասյան շրջանային կոմիտեի երկրորդ քարտուղար:¹

Աշխատանքների արդյունքները, ամբողջությամբ վերցրած բավարարում էին, բայց մի շարք հարցերի շուրջ, ինչպես օրինակ կոլտնտեսությունների կառուցվածքի շուրջ, լուրջ բողոքներ առաջ եկան: Անդրկովկասյան ընկերներին քննադատում էին այն մարդիկ, ովքեր անմիջականորեն ծանոթ էին մարզում տիրող իրավիճակին՝ Օրջոնիկիձեն, Կիրովը, Կազանովիչը: Վերջին խոսքի իրավունքը, ինչպես ենթադրվում է, պատկանում էր Ստալինին: Ոչ վաղ անցյալում նա առաջ էր քաշել «կադրերն են որոշում ամեն ինչ» կարգախոսը: Հենց կադրերին էլ Ստալինը հրամայեց վերանայել: Ստալինի առաջարկը Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմի և Անդրկովկասի շրջանային կոմիտեի երկրորդ քարտուղար նշանակել Լավրենտի Բերիային, հարավային ղեկավարների շրջանում դժգոհությունների առիթ տվեց: Դրանց վերջ դրեց Ստալինի հետևյալ արտահայտությունը. «Մնացած բոլորը աշխատանքային տեղերում»: Մեկ տարի անց՝ Բերիան Անդրկովկասյան շրջանային վարչության առաջին քարտուղարն էր:²

Այս կապակցությամբ ուշագրավ է Օրջոնիկիձեի դիրքորոշումը: Մենգովի և Միկոյանի վկայությամբ նա կտրականապես դեմ էր Լավրենտի Բերիայի «թագադրմանը», թեպետ մեկ տարի առաջ օգնել էր նրան զբաղեցնելու Վրաստանի Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնը:³

Այս կապակցությամբ ուշագրավ է Օրջոնիկիձեի դիրքորոշումը: Մենգովի և Միկոյանի վկայությամբ նա կտրականապես դեմ էր Լավրենտի Բերիայի «թագադրմանը», թեպետ մեկ տարի առաջ օգնել էր նրան զբաղեցնելու Վրաստանի Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնը:³

Բերիան Անդրկովկասյան դաշնության ստեղծման առաջին իսկ պահից թշնամաբար էր տրամադրված պետական այդ կազմավորման նկատմամբ, իսկ այն գլխավորելուց հետո

¹ Топтигын А. В. Неизвестный Берия, М., 2002 г., ст. 33.

² Там же, ст. 34.

³ Антонов-Овсеенко А. Берия, Сухум, 2007 г. ст. 34.

չհանգստացավ, մինչև որ այն չլուծարվեց: Նա այնքան խելամտորեն էր կազմակերպում իր աշխատանքը, որ կարողացավ Քաղբյուրոյի մերձավոր շրջաններին համոզել և իր նշանակումից չորս տարի անց՝ հասնել Դաշնության մեջ մտնող երեք հանրապետությունների վերականգնմանը:¹

Խոսելով Բերիայի քաղաքական կարիերայի նոր էտապի մասին՝ անհրաժեշտ է հիշել քաղաքական այն թիմին, որը Բերիան հավաքեց Պետական քաղաքական վարչությունում: Նրանց թիվը մեծ չէր, բայց նրանք այն մարդիկ էին, ովքեր, ինչպես պարզվեց հետագայում, իրենց ղեկավարի համար պատրաստ էին ամեն ինչի: 1953 թ. Բերիայի դատապարտումից և նրա մահապատժից հետո պարզ դարձավ, որ այդ պատրաստակամությունը շարունակվեց մինչև նշված ժամկետը՝ քանի դեռ «բոսը ձիու վրա էր»:²

Բերիայի մերձավորագույն ընկերների թվին էին պատկանում Միր Ջաֆար Աբբասա Ալ Բադիրովը, Վսեվոլոդ Մերկուլովը, Վլադիմիր Դեկանոզովը և այլք, որոնց հետ Բերիան կապված էր եթե ոչ բարեկամական, ապա գոնե ընդհանուր գաղտնիքներով, աներկբա վստահությամբ: Բադիրովի հետ ծանոթությունը կայացել էր 1917 թ, Բաքվում: Որոշ ժամանակ Բադիրովը Բերիայի ղեկավարն էր, բայց շուտով մեկուսացավ: 1932 թ. Բադիրովը և Բերիան համագործակցում էին կուսակցական հարթակում: Դերերը փոխվեցին. Բադիրովը դարձավ Ադրբեջանի Կ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար, Բերիան՝ Անդրկովկասյան շրջանային կոմիտեի երկրորդ, Վրաստանի Կենտկոմի առաջին քարտուղար:³

Պաշտոնին նշանակվելուց հետո Բերիան միանգամից անցավ իր պարտականությունների եռանդուն կատարմանը: Ամբողջ Խորհրդային Միության համար ցավոտ խնդիր էր մնում կոլտնտեսությունների համակարգի հարցը: Բերիայի և նրա համակիրների համար ակնհայտ էր, որ խնդրի լուծման գլխավոր հանգույցը գյուղն է, որը պետք էր ամրացնել: Բերիան, չունենալով անհրաժեշտ գյուղատնտեսական գիտելիքներ, ձեռնամուխ է լինում այդ խնդիրների լուծմանը: Առաջին հնգամյակի ընթացքում Վրաստանում ծանր արդյունաբերությունն աճեց գրեթե վեց անգամ, իսկ երկրորդ հնգամյակում՝ հինգ անգամ: Բերիան կաբինետային ղեկավար չէր: Նրան հաճախ կարելի էր տեսնել թեյի պլանտացիաներում, խաղողի այգիներում, կոլտնտեսականների շրջանում: Սպասված արդյունքն ակնհայտ էր:⁴

Վրաստանի Կենտկոմի առաջին քարտուղարի գործունեության ամենավառ իրադարձություններից մեկը դարձավ 1935 թ. հունիսին Վրաստանի հանրապետական ակտիվի առաջ ունեցած ելույթը, որին ներկա էին գտնվում նաև Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարները: Զեկույցը վերնագրված էր՝ «Անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների պատմության շուրջ»: Անդրկովկասում բոլշևիկյան կազմակերպությունների հիմնադիր հայտարարվեց Ստալինը. նա ինքն էր ղեկավարը, դրանց նվիրյալը: Անդրկովկասյան մյուս բոլշևիկ գործիչները պատվանդան էին, որի վրա հենվում էր առաջնորդի վիթխարի կերպարը:⁵

Անդրկովկասում տեղի ունեցած հեղափոխական շարժումների պատմության մասին ավելի վաղ նույնպես գրել էին, բայց դրանցում Ստալինը շատերից մեկն էր, լավագույն դեպքում՝ հավասարների մեջ առաջինը: Բերիան իր զեկույցով ցույց տվեց՝ «ով ով է»:

Բերիայի անունը մի ակնթարթում հայտնի է դառնում ամբողջ Միությունով: Նրա աշխատությունից առատորեն մեջբերումներ էին կատարում «Պրավդան», «Բոլշևիկը» և այլ կուսակցական հրատարակություններ: Մեկ ամիս անց՝ այդ զեկույցը տպագրվեց որպես առանձին գրքույկ և հետագայում հրատարակվեց անհաշիվ քանակությամբ:

Ո՞վ էր կերտել երիտասարդ Ստալինի մասին գրեթե աստվածաշնչյան այս առակը, ով ղեկավարում էր Անդրկովկասի բոլշևիկներին: Ոչ Լավրենտի Բերիան: Դա հաստատ է: Բայց այն, որ նրա կազմակերպածն է, անխուս: Հեղինակների շարքում հիշատակվում են

¹ Берия С. Мой отец Берия, М., 2002 г., ст. 29:

² Неизвестный Берия, ст. 29.

³ Там же, ст. 30.

⁴ Прудникова Е. Берия. Последний рыцарь Сталина, М., 2007 г., ст. 81.

⁵ Там же, ст. 92.

Թորոշելիձեն, Բեդիյան, այլ ազգանուններ: Այդ մարդիկ 1937 և 1938 թվականներին արյունոտ փրփուրը բերաններին ապացուցում էին, որ այդ աշխատության հետ որևէ կապ չունեն:¹

Բերիայի հետագա կարիերայի համար այս գիրքը նշանակալից դեր կատարեց, նա դարձավ ամբողջ Միությունով մեկ հայտնի անձնավորություն: 1935-1938 թվականներին նրա դրույթները ութ անգամ հրատարակվեցին «Պրավդա»-ում: Այդպիսի պատվի չէր արժանացել Միության Կոմկուսի քարտուղարներից և ոչ մեկը:

ԽՍՀՄ հանրապետություններում առկա մյուս կարևորագույն խնդիրը կապված էր կրթության հետ: Իրեն՝ քարտուղարին, բարձրագույն կրթություն ստանալու հնարավորություն չէր ընձեռնվել: Այստեղից էլ նրա վերաբերմունքը կրթության նկատմամբ: Դիպլոմի բացակայությունն այդ ժամանակ մեծ խոչընդոտ չէր համարվում: «Ուսումը խելքին չի փոխարինի», - հաստատում է հին ասացվածքը:

Բերիան իր անլիարժեք կրթության փաստն ընդունում էր եթե ոչ որպես անձնական ողբերգություն, ապա գոնե որպես ինչ-որ կարևոր գործոնի բացակայություն: Բերիան այս հարցին մոտենում էր որպես կարևոր մարտական առաջադրանք: Միայն 1931 թվականի վերջին և 1932 թվականին Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմը ընդունեց ժողովրդական կրթության տարբեր ոլորտներին վերաբերող վեց կանոնակարգ: 1938 թ. Վրաստանը բնակչության կրթության մակարդակով դուրս է գալիս ԽՍՀՄ-ում առաջիններից մեկը:²

Գյուղատնտեսության և կրթության խնդիրների լուծմանը զուգահեռ Բերիան չի մոռանում գուտ կուսակցական բնույթի խնդիրների մասին: Դրանցից կարևորագույնը գտումներն էին: Դրանք կատարվում էին պարբերաբար և ամենայն խստությամբ: Կուսակցության գտումը ընդդիմության բոլոր տարրերի դեմ պայքարի իդեալական միջոց էր, անձնական հաշվեհարդար տեսնելու համար ամենահարմար տարբերակը:

Կուսակցության գտման հերթական աշխատանքներն սկսվեցին 1933 թ. մայիսին, ինչպես սովորաբար տեղի էր ունենում, որը տևեց մինչև 1934 թ. դեկտեմբերի 1-ը՝ Կիրովի սպանությունը: ԽՍՀՄ կառավարությունը պաշտոնական հաղորդագրությամբ հանդես եկավ, որում շեշտվում էր «բանվոր դասակարգի բոլոր թշնամիներին վերջնականապես արմատախիլ անելու անհրաժեշտությունը»:³

Վրաստանի Կոմունիստական կուսակցության անդամների թիվն այդ ժամանակ համեմատաբար փոքր էր՝ 57 737 մարդ: Բայց Վրաստանի համար այդ գտումը «կենսական անհրաժեշտություն» էր: Կուսակցական փաստաթղթերի ստուգումների արդյունքում բողոք ներկայացվեց 2 394 մարդու դեմ: Նրանց նկատմամբ, Բերիայի պահանջով, վերաբերվեցին հատուկ ուշադրությամբ. Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմի հանձնաժողովի վերանայումից հետո կուսակցությունում վերականգնվեց 638 մարդ, 315 մարդ էտ ստացավ կուսակցական տոմսերը, 424 մարդ լքեց կուսակցության թեկնածուի շարքերը:⁴

«Մեծ գտումը» դարձավ «մեծ բռնաճնշումների» նախերգանքը: Բերիան առաջնահերթ նշանակություն էր տալիս իր թշնամիներին մշտական վախի մթնոլորտում պահելու հանգամանքին՝ զգոնության ամբողջ արշավն իրականացնելով անձամբ:

Մի քանի տարի Ստալինը շահարկեց Կիրովի սպանությունը 1920-ական թվականներին ընդդիմադիր տարբեր հոսանքների ղեկավարների հետ վերջնական հաշվեհարդար տեսնելու համար: Ոչնչացրեց քաղաքական նախկին հակառակորդներին՝ մեղադրելով ահաբեկչական գործունեության մեջ: 1935 թ. հունվար-փետրվար ամիսներին բացահայտվեց, այսպես կոչված, «Կրեմլյան գործը», որի համաձայն՝ ստեղծվել էր ահաբեկչական խումբ, որը պետության ղեկավարության դեմ դավադրություն էր պլանավորում:

Թբիլիսիում կուսակցական ակտիվի հուլիսյան հավաքի ժամանակ բացահայտվեց Բերիայի հերթական զեկույցի էությունը. «Անողորմաբար ոչնչացնել ժողովրդի թշնամիներին, ֆաշիզմի գործակալ մենշևիկ-ազգայնականներին, վրաց ժողովրդի անարգ թշնամիներին և դավաճաններին»:⁵

¹ Неизвестный Берия, ст. 41.

² Там же, ст. 43.

³ Там же, ст. 44.

⁴ Там же.

⁵ Берия, ст. 87.

Անդրկովկասում սանձագերծելով զանգվածային ահաբեկչություն՝ Բերիան կիրառում էր քարոզչության փորձված հնարները: «Ժողովրդի թշնամիների» ոչնչացումը համարվում էր օրինական և նույնիսկ մարդասիրական: Սկզբում Ստալինը և Բերիան խոշոր կուսակցական գործիչներին գրեթե չէին դիպչում: 1936 թ. նրանք սկսեցին մեկը մյուսի հետևից վերացնել նրանց:

Թերևս Անդրկովկասի կուսակցական նշանավոր գործիչներից ոչ ոք այնքան չէր վրդովվեցրել Ստալինին, որքան վրաց պետական գործիչ Բուդու Մդիվանին: Վերջինիս Գլխավոր քարտուղարի հետ ունեցած տարաձայնություններն սկիզբ էին առել դեռևս Լենինի կենդանության օրոք, Կոմկուսի XII համագումարից էլ առաջ: Ստալինի՝ Մդիվանուն պատժելու հրամանը Բերիան կատարեց պատրաստակամությամբ:

«Արևելքի արշալույս», 1937 թ. փետրվարի 15.

«Տասնապատկում է՝նք հեղափոխական զգոնությունը»

«Ողջունելով դատարանի վճիռը հակախորհրդային-տրոցկիստական կենտրոնի անդամների վերաբերյալ, Անդրկովկասի աշխատավորները պահանջում են դատապարտյալի աթոռին նստեցնել կապիտալիզմի ստոր վերականգնողներ Բուխարինի, Ռիկովի, Ուզլանովի և այլոց աջ հետևորդներին: Անդրկովկասի աշխատավորությունը անեծք և ատելություն է հղում ժողովրդի ստոր թշնամիներին՝ Վրաստանի հակախորհրդային-տրոցկիստական կենտրոնի անդամներին՝ Մդիվանուն, Օկոջավեին, Քավթարաձեին, Քիքնաձեին, Չիխլաձեին, Թորոշելաձեին, Ագնիաշվիլուն և այլոց»:

... Նրանք ահաբեկչական գործողություն են նախապատրաստել վրաց ժողովրդի փորձառու ղեկավար, ժողովրդի բարեկամ Լավրենտի Բերիայի դեմ:

...Վերացնել այս ստոր խմբավորմանը. սա է Վրաստանի ժողովրդի պահանջը»:¹

1937թ. «բացահայտվեց», որ Մդիվանին ահաբեկչական գործողություններ էր նախապատրաստել ընկեր Եժովի և ընկեր Բերիայի դեմ: 1938 թ. Մդիվանու վրա հետմահու դրվեց անգլիական լրտեսի խարանդ:²

Բերիայի հերթական զոհերից էր Միխայիլ Օկոջավան, ով 1920-ական թվականներին Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղարն էր: Վրաստանում Բերիայի բռնաճնշումներին զոհ են գնում նաև Վրաստանի ժողովուրդի նախագահ Գերման Մդալոբիշվիլին, Կոմկուսի քարտուղար Պետրե Ագնիաշվիլին և այլք, որոնց թեկնածությունն առաջադրվել էր Բերիայի կողմից: Գնդակահարվում են Բերիայի անձնական հակառակորդներ Ղրիմի շրջկոմի առաջին քարտուղար Լավրենտի Քարթվելիշվիլին, Վրաստանի Կենտկոմի նախկին առաջին քարտուղար Լևան Գոգոբերիձեն և այլք:³

Հետապնդումներ իրականացվեցին Սերգո Օրջոնիկիձեի ընտանիքի անդամների նկատմամբ: Բերիայի հրամանով արսորվեցին նրա եղբայրը՝ Պապուլիա Օրջոնիկիձեն, վերջինիս կինն ու երեխաները: Օպերայի ներկայացման ժամանակ Բերիայի կողմից դաժանաբար սպանվեց Աբխազիայի առաջնորդ Նեստոր Լակոբը: Լակոբի կնոջ պահանջով ամուսնու դին ենթարկվեց փորձաքննության: Արդյունքներն ստանալուց հետո Լակոբի կինը մեկնեց Մոսկվա ամուսնու մերձավոր ընկերոջ՝ Հմայակ Նազարեթյանի մոտ: Վերջինս, զարհուրելի սպանությունից ցնցված, գնաց Մոլոտովի մոտ : Մոլոտովը հրամայեց թաղել Լակոբին, իսկ նրա այրու և որդու համար թոշակ նշանակեց:⁴

Հայաստանում բռնաճնշումներն սկսվեցին Բերիայի Թբիլիսյան նստավայրում ՀԽՍՀ Կենտկոմի Առաջին քարտուղար Աղասի Խանջյանին գլխից գնդակահարելով սպանելուց հետո: 1937 թ. Բերիան, Մոսկվայից ուղարկված Գեորգի Մալենկովի և Անաստաս Միկոյանի հետ սկսեց Հայաստանի կուսակցական կազմակերպության «մաքրումը»:

«Արևելքի արշալույս», 1936 թ. հուլիսի 11

Ծանուցում

«Անդրկովկասի մարզային կոմիտեի Համկ(բ)կ-ն հայտնում է Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի քարտուղար ընկեր Խանջյանի սպանության մասին, 1936 թ. հուլիսի 9-ին տեղի ունեցած

¹ Там же, ст. 89.

² Там же, ст. 90.

³ Неизвестный Берия, ст. 48.

⁴ Прудникова Е. Берия. Преступления , которых не было, М., 2005 г., ст. 63-65.

ինքնասպանության հետևանքով: Ինքնասպանության ակտը դիտարկելով որպես վախկոտության դրսևորում, որն անթույլատրելի է հատկապես կուսակցական կազմակերպության ղեկավարի համար, Համկ(բ)կ Անդրկովկասի Կենտկոմը անհրաժեշտ է գտնում կուսակցության անդամներին հայտնել այն մասին, որ Խանջյանը վերջին ժամանակներում իր աշխատանքում թույլ է տվել մի շարք քաղաքական սխալներ՝ ցուցաբերելով նվազ զգոնություն ազգային և հակահեղափոխական տարրերի հայտնաբերման գործում: Գիտակցելով այս սխալները՝ ընկեր Խանջյանը իր մեջ քաջություն չի գտել բոլշևիկյան ձևով շտկել դրանք և դիմել է ինքնասպանության:

Խանջյանի ընդհանուր վիճակը բարդացել է նաև նրա երկարատև հիվանդության՝ ծանր տուբերկուլյոզի պատճառով:¹

1936 թ. մայիսին, երբ Խանջյանը մեկնել էր Մոսկվա՝ մասնակցելու Կոմկուսի պլենումի նիստին, Բերիայի անմիջական ցուցումով ՀԽՍՀ ՆԳԺԿ վարչության պետ և ՆԳ ժողկոմ Խաչիկ Մուղդուսին, Ակոպովը, ՀԿ(բ)Կ Կոմկուսի երկրորդ քարտուղար Ամատունին Հայաստանում սկսում են ձերբակալություններ իրականացնել, հատկապես Խանջյանի մերձավորներից: Պլենումից հետո Խանջյանին կանչում են Թիֆլիս:²

1936 թ. հուլիսի 1-ին Լավրենտի Բերիան իր աշխատասենյակում Խանջյանի մասին ստացած ցուցմունքների վերաբերյալ բացատրություն է պահանջում նրանից: Բերիայի աշխատասենյակում էլ Խանջյանը կասկածելի հանգամանքներում ինքնասպան է լինում: Ըստ Բերիայի ու նրա շրջապատի՝ Խանջյանի ցուցադրական սպանությունը միտված էր հայ և վրաց ժողովուրդների բարեկամության դեմ:³

Երկտողը, որ Խանջյանը իբր թողել էր կնոջ մոտ «ինքնասպանությունից» առաջ («Ես շփոթված եմ կուսակցության թշնամիների հետ ունեցած իմ կապերի պատճառով: Այսպես ապրել այլևս չեմ կարող: Ինձ մի մեղադրիր: Հաջողություն»), հնարամիտ կեղծիք էր:⁴

1936 թ. օգոստոս-սեպտեմբերին Հայաստանում շինծու գործերով ձերբակալվեցին Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն Ներսես Ստեփանյանը, գրողներ Եղիշե Չարենցը, Ակսել Բակունցը, Մկրտիչ Արմենը, Գուրգեն Մահարին և այլք: 1937 թ. օգոստոսին հարցաքննության ժամանակ երրորդ հարկի լուսամուտից դուրս նետվեց Հայաստանի կառավարության նախկին նախագահ Մահակ Տեր-Գաբրիելյանը: Աղասի Խանջյանին փոխարինած Ամատունի Վարդապետյանը ձերբակալվեց և գնդակահարվեց, իսկ Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի պլենումի ժամանակ ՀԽՍՀ Կենտկոմի առաջին քարտուղար է ընտրվում Թբիլիսիի քաղկոմի քարտուղար, Բերիայի մերձավորներից Գ. Հարությունովը:⁵

Անդրկովկասյան Ֆեդերացիայում 1930-ական թվականներին տիրող քաղաքական մթնոլորտը պայմանավորված էր Ստալինյան դիկտատուրայով, ինքնին համակարգով, բայց Բերիան դրա մեջ ներդրեց իր սեփականը: Իր համակիրների՝ Մերկուլովի, Դեկանոզովի, Գոլիձեի, Միլշտեյնի հետ միասին նա կազմակերպեց ամենատաղանդավոր, ազնիվ աշխատակիցների համատարած հետապնդումներ և մահապատիժներ:

Գրականություն

1. Антонов-Овсеенко А. Берия, Сухум, 2007 г.
2. Берия С. Мой отец Берия, М., 2002 г.
3. Прудникова Е. Берия. Последний рыцарь Сталина, М., 2007 г.
4. Прудникова Е. Берия. Преступления , которых не было, М., 2005 г.
5. Топтигын А. В. Неизвестный Берия, Москва, 2002 г.
6. Knight A. Beria Stalin's first lieutenant, Princeton, 1993.
7. Ղազախեցյան Վ. 1937-ը Հայաստանում, Երևան, 2004 թ.

¹ Берия, ст. 93.

² Knight A. Beria Stalin's first lieutenant, Princeton, 1993, pg. 71.

³ Берия, ст. 94.

⁴ Там же.

⁵ Ղազախեցյան Վ. 1937-ը Հայաստանում, Եր., 2004 թ., էջ 61:

ՀՏԴ 941(4)

Չոյա Չատինյան
Վանաձորի պետական համալսարան ,
պատմաաշխարհագրական Ֆակուլտետ,
պատմության բաժին, բակալավր
Գիտական ղեկավար՝ պ.գ.դ, պրոֆեսոր Ֆելիքս Մովսիսյան
էլ. փոստ՝ chatinyanz@mail.ru

**ԼԵՀԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՐԻԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՊԱՏԵՐԱԶՄԻՆ**

Բանալի բառեր՝ Ամերիկյան գաղութների անկախության համար պատերազմ, լեհերի մասնակցություն, Անջեյ Թադեուշ Բոնավենտուրա Կոսցյուշկո, Կազիմիր Միխալ Վազլավ Վիկտոր Պուլասկի, Միխալ Կովաչ, Յան Զելինսկի:

Ամփոփում

Լեհ-ամերիկյան համագործակցության պատմության լավագույն էջերից մեկը լեհերի մասնակցությունն է ամերիկյան գաղութների անկախության պատերազմին: Պատմական աղբյուրներում մեծ համակրանքով է խոսվում այն մասին, որ լեհական ապաները ամերիկյան գաղութների անկախության պատերազմում ներդրել են իրենց ռազմական գիտելիքները, իսկ նրանցից որոշները՝ սեփական կայսրը:

Зоя Чатинян
ВГУ, факультет истории и географии, бакалавр
Науч. рук.: д. и. н., проф. Феликс Мовсисян
chatinyanz@mail.ru

УЧАСТИЕ ПОЛЯКОВ В ВОЙНЕ ЗА НЕЗАВИСИМОСТЬ АМЕРИКАНСКИХ КОЛОНИЙ

Ключевые слова: Война за независимость американских колоний, участие поляков, Анджей Тадеуш Бонавентура Косцюшко, Казимир Вацлав Виктор Пуласки, Михал Ковач, Ян Зелински.

Резюме

Один из лучших страниц в истории польско-американского сотрудничества это участие поляков в борьбе за независимость американских колоний. В исторических источниках с большой симпатией говорится, что польские офицеры вложили в войну за независимость американских колоний свои военные знания, а некоторые из них собственную жизнь.

Zoya Chatinyan
WSU, the faculty of history and geography, bachelor's
Supervisor: Prof. Felix Movsisyan

THE PARTICIPATION OF THE POLES IN THE WAR OF THE INDEPENDENCE OF THE AMERICAN COLONIES

Key words: *The war of the independence of the American colonies, the Polish contribution, Andrzej Tadeusz Kosciuszko Bonaventura, Viktor Václav Casimir Pulaski, Michal Kovac, Jan Zielinski.*

Summary

The Polish contribution to the War of Independence of the American colonies is indeed one of the best phases of Polish-American historical cooperation. The Polish officers who devoted their military expertise knowledge and some of them even their life to the War of Independence of the American colonies are spoken about with special sympathy in the historical novels and researches about those times.

Լեհ-ամերիկյան համագործակցության պատմական լավագույն էջերից մեկը իրավամբ համարվում է ամերիկյան գաղութների անկախության համար պայքարին՝ լեհերի մասնակցությունը: Ամերիկյան գաղութների անկախության համար պատերազմի վերաբերյալ ստեղծված պատմական գրականության մեջ և ուսումնասիրություններում առանձնահատուկ համակրանքով է խոսվում լեհ այն սպաների մասին, ովքեր իրենց ռազմական գիտելիքները, մի մասն էլ նույնիսկ կյանքը ներդրեցին այդ պայքարում:

Մեչիսլավ Հայմանի տվյալներով մոտավորապես 110-120 լեհեր կամ լեհական ծագումով ամերիկացիներ մայրցամաքային բանակի կազմում կռվել են գաղութների անկախության համար պատերազմում: Առաջին հայացքից կարող է թվալ, որ այդ թիվն առանձնապես մեծ չէ: Սակայն, երբ լեհերի քանակը համեմատում ենք պատերազմին մասնակցած եվրոպական այլ ժողովուրդների քանակի հետ, այն տպավորիչ է: Վերջինս պատերազմին մասնակցած լեհերին բաժանում է երկու խմբի:¹ Առաջին խումբը կազմում են Լեհաստանից Ամերիկա եկած սպաներն ու զինվորները, ովքեր անդամագրվեցին Ջորջ Վաշինգտոնի գլխավորած բանակին: Այս լեհերի՝ ամերիկյան հեղափոխական բանակ մտնելու նպատակը մասնակցությունն էր ազատության և անկախության համար մղվող պայքարին: Երկրորդ խումբը լեհական ծագումով այն ամերիկացիներն են, ովքեր մայրցամաքային բանակի կազմում պայքարում էին իրենց նոր հայրենիքի անկախության համար: Սակայն վերը նշված երկու խմբից զատ՝ Ամերիկայում կար լեհերի մի երրորդ խումբ, ովքեր վաղուց ապրում էին գաղութներում և ինտեգրվել էին նոր իրողությանը: Նրանք ունեին որոշակի կարողություն և բնավ էլ ցանկություն չուներին կռվելու բրիտանական թագավորության դեմ: Երբ գաղութների պայքարն ավարտվեց հաղթանակով, այս փոքր խումբ լեհերը ամերիկյան լոյալիստների օրինակով չվերադարձան Անգլիա, որովհետև այն իրենց պատմական հայրենիքը չէր, այլ մնացին ամերիկյան մայրցամաքում:

Անկախության համար պատերազմի լեհ մասնակիցների թվում առանձնանում է զինվորական Անջեյ Տադեուշ Բոնավենտուրա Կոսցյուշկոն (1746-1817): 1769 թ. Կոսցյուշկոյին կրթաթոշակ է նշանակվում՝ զինվորական կրթությունը Փարիզում շարունակելու համար, որտեղ սովորելու տարիներին նրա վրա մեծ ազդեցություն են թողնում ֆրանսիական լուսավորիչների գաղափարները: 1776 թ. հունիսին Տ. Կոսցյուշկոն մի խումբ եվրոպացիներ հետ՝ Պիեր Բոմարշեի ֆինանսական աջակցությամբ² մեկնում է Հյուսիսային Ամերիկա՝ մասնակցելու ամերիկյան գաղութների անկախության համար պայքարին: Տեղ հասնելուն պես՝ օգոստոսի 30-ին, նա դիմում է Մայրցամաքային վեհաժողովին՝ խնդրելով իրեն ընդգրկել ամերիկյան բանակում: Նույն թվականի հոկտեմբերի 18-ին նա գնդապետի կոչումով անդամագրվում է Մայրցամաքային բանակին: Յոթ տարի շարունակ նա կռվում է ամերիկյան բանակում՝ մեծագույն ծառայություններ մատուցելով որպես բարձրակարգ ճարտարագետ-զինվորական: Նրա կառուցած

¹ Polish past in America. 1808-1865. Chicago, 1991., p. 11

² Storzynski Alex. The Peasant Prince: Thaddeus Kosciuszko and the Age of Revolution. New York, 2009, p.17-18.

նազմական ամրությունները կարևոր օգնություն են եղել ամերիկյան գործերին՝ հակառակորդին կազմակերպված դիմադրություն ցույց տալու գործում:

1776 թ. սեպտեմբերին Տ. Կոսցյուշկոյի նախաձեռնությամբ և նախագծով՝ Տիլադելֆիայի պաշտպանության նպատակով Դելավեր գետի ափին ամրություններ կառուցվեցին: Բարձր զնահատելով վերջինիս տաղանդը՝ Մայրցամաքային վեհաժողովը Տ. Կոսցյուշկոյին նշանակում է՝ 1777 թ. հյուսիսում Հորացիո Գեյսի գլխավորությամբ ստեղծված բանակի գլխավոր ճարտարագետ: ¹ 1777 թ. հոկտեմբերի 17-ին ամերիկյան բանակը հաղթանակ տարավ Սարատոգայի մոտ շնորհիվ նրա ճարտարագիտական տաղանդի: Գեներալ Գեյթսը հետագայում իր ընկեր Բենջամին Ռաշին գրում էր, որ հաղթանակի գործում մեծ էր լեհ ճարտարագետի կառուցած ամրությունների դերը: 1778 թ. Վաշինգտոնը գեներալ Գեյթսին Կոսցյուշկոյի մասին գրում է. «Ես ուղղակի հիացած եմ նրա վարպետությամբ ու աշխատասիրությամբ»:²

1780 թ. նա գտնվում էր Գեյթսի բանակում:³ 1781 թ. Կոսցյուշկոն ամրություններ է կառուցում հյուսիսային Կարոլինայում, իսկ 1782 թ. նոյեմբերի 14-ին հարավային Կարոլինայում մասնակցում է Ջեյմս Այլենդի կովին, որտեղ իր փոքրաթիվ ջոկատով ջախջախում է հակառակորդի գերակշիռ ուժերին: 1783 թ. հոկտեմբերի 13-ին Մայրցամաքային վեհաժողովը նրան շնորհում է գեներալի կոչում: Մարտական ծառայությունների համար նա պարգևատրվել է Միացյալ Նահանգների մարտական բարձրագույն պարգևով՝ Ցինցինատի շքանշանով: Ամերիկյան իշխանությունները պատերազմից հետո Կոսցյուշկոյին հող են հատկացնում Օհայո նահանգում և տարեկան թոշակ նշանակում, իսկ Վաշինգտոնը նրան զույգ ատրճանակ, մատանի և սուր է նվիրում հետևյալ մակագրությամբ՝ «Ամերիկայից և Վաշինգտոնից իր բարեկամ Տ. Կոսցյուշկոյին»:⁴ Սակայն նա չի հիմնավորվում ԱՄՆ-ում և 1784 թ. վերադառնում է Լեհաստան: Ամերիկայում գտնվող իր ողջ գույքը նա կտակում է սևամորթներին ազատություն տալու գործին, իսկ կտակի իրականացումը վստահում է Թ. Ջեֆերսոնին: Սակայն այն իրականություն չի դառնում: Ջեֆերսոնը Կոսցյուշկոյի մասին գրում է. «Նա անկախության ամենաազնիվ զավակն է, որպիսին ես երբևէ ճանաչել եմ»:⁵

ԱՄՆ-ում՝ Սպիտակ տան մոտ, մարքիզ Լաֆայետի անունը կրող հրապարակում կանգնեցված են անկախության համար պատերազմին օտարերկրյա մասնակիցների հուշարձանները: Սրանց թվում է նաև Կոսցյուշկոյի հուշարձանը, որը գտնվում է հրապարակի հյուսիսարևելյան մասում:⁶ Այն կանգնեցվել է 1910 թ.-ին, իսկ պաշտոնական բացումը կատարել է նախագահ Ու. Տաֆտը 1910 թ. մայիսի 11-ին: Կոսցյուշկոն պատկերված է՝ ձախ ձեռքին սուր, իսկ աջին՝ Սարատոգոյի ամրությունների քարտեզը: 2010 թ. այս հուշարձանի կրկնօրինակը կանգնեցվել է նաև Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում: Նույն թվականին Լեհաստանում թողարկվել է ոսկե հուշադրամ նվիրված Կոսցյուշկոյին:⁵

Անկախության համար պատերազմին լեհ մասնակիցների թվում էր նաև ազնվական Կազիմիր Միխալ Վալսլավ Վիկտոր Պոլասկին (1745-1779), ում պատմաբանները համարում են «ամերիկյան հեծելազորի հայր»:⁶ Նա 19 տարեկանում մտնում է զինվորական ծառայության մեջ և կարճ ժամանակում իրեն դրսևորում որպես քաջ զինվորական: 1768 թվականի մարտի 6-ին նրան շնորհվում է գնդապետի կոչում: 1771 թվականի նոյեմբերին թագավոր Ստանիսլավ Պոնյատովսկու դեմ անհաջող մահափորձից⁶ և 1772 թվականին համադաշնության պարտությունից հետո նա վտարանդվում է Թուրքիա, ապա՝ Ֆրանսիա: 1775 թվականի վերջին Փարիզում Պոլասկին ծանոթանում է մարքիզ

¹ Островер Леон Исаакович , Жизнь замечательных людей, Тадеуш Костюшко , 1961 г. М. стр. 97.

² Островер Леон Исаакович , Указ. соч., стр.114.

³ Там же.

⁴ http://ru.wikipedia.org/wiki/Костюшко,_Тадеуш

⁵ https://monetki.files.wordpress.com/2011/04/kostiushko_ru1.pdf

⁶ Szczygielski Wacław. «Pulaski Kazimierz»>. Polski Słownik Biograficzny. Tom XXIX Warszawa, 1986, s. 390.

Լաֆայետի և Բենջամին Ֆրանկլինի, Սայլաս Դինի հետ, ովքեր էլ նրան համոզում են մասնակցել ամերիկյան գաղութների ազատագրական պայքարին: Բ. Ֆրանկլինը նրան երաշխավորագիր- նամակ է տալիս՝ ուղղված ամերիկյան վեհաժողովին, որտեղ մասնավորապես ասված էր. «< Կոմս Պուլասկին հայտնի է ամբողջ Եվրոպայում որպես երեք մեծ տերությունների՝ Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի ներխուժման դեմ իր հայրենիքի ազատության համար պայքարող, ճանաչված հերոս : Նա օգտակար կլինի մեր պայքարի համար >>: 1777 թվականի հունիսի սկզբին այս նամակով և Սայլաս Դինի ֆինանսական աջակցությամբ Պուլասկին ափ է իջնում Մարբեդիդում, որտեղից էլ գրում է Վաշինգտոնին. «<Ես եկել եմ այստեղ պաշտպանելու ազատությունը, ծառայելու նրան, ապրելու և մահանալու հանուն ազատության >>: 1777 թվականի սեպտեմբերի 11-ին Բրենդիվայնի կովի նախօրյակին Պուլասկին՝ որպես կամավոր, մտնում է Ջորջ Վաշինգտոնի բանակ: Դեռևս օգոստոսի 20-ին Ջորջ Վաշինգտոնի հետ հանդիպման ժամանակ Պուլասկին առաջարկել էր հեծելազոր ստեղծել և ստացել էր Վաշինգտոնի համաձայնությունը: Բանն այն էր, որ Մայրցամաքային բանակը հեծելազոր չուներ: Կազմիր Պուլասկու հեծելազորային փորձը և կարողությունները Վաշինգտոնի վրա լավ տպավորություն են թողնում: 1777 թվականի սեպտեմբերի 15-ին Մյրցամաքային վեհաժողովը Պուլասկուն գեներալի կոչում է շնորհում, իսկ Վաշինգտոնը նրան նշանակում է հեծելազորի հրամանատար: Նրա ստեղծած հեծելազորը մասնակցում է 1777 թվականի սեպտեմբերի 4-ի Ջերմանհաունի կովին:

Կ. Պուլասկու գլխավորած ջոկատը փետրվար ամսին Ֆերրի Կուպերի շրջանում մի շարք անհաջողություններ է կրում: Պատճառն այն էր, որ Պուլասկին վատ էր տիրապետում անգլերենին և խնդիրներ ուներ իր ենթակայության տակ գտնվող սպաների հետ հաղորդակցվելու: Պակաս կարևոր դեր չէր խաղում Պուլասկուի ինքնահավան և մեծամիտ բնավորությունը: Նա գտնում էր, որ պիտի ենթարկվի միայն Վաշինգտոնին և Մայրցամաքային վեհաժողովին : Իսկ երբ 1778 թվականի մարտին բանակի ղեկավարությունը մերժում է նիզակակիրներից կազմված հեծելազոր ստեղծելու նրա առաջարկությունը, Պուլասկին որպես բողոքի նշան հրաժարվում է հեծելազորի հրամանատարությունից: Այնուհետև Յորթաունում նա հանդիպում է գեներալ Հորացիո Գեյսթին և առաջարկում հեծելազորային լեգեոն կազմավորել: Մայրցամաքային վեհաժողովը, բարձր գնահատելով նրա զինվորական կարողությունը, հավանություն է տալիս : Այն ձևավորվեց Բալթիմորում և ստացավ «<Պուլասկու լեգեոն>> անվանումը: Լեգեոնը կոչվում էր անբարենպաստ պայմաններում, ավելին, ժամանակին չէր վարձատրվում, և Պուլասկին ստիպված ծախսում էր իր անձնական միջոցները: Սրանից դժգոհ շուտով Պուլասկին հրաժարական է տալիս: 1778 թվականի հոկտեմբերի 4-ին Մայրցամաքային վեհաժողովը նրան նշանակեց Նյու Ջերսիում Լիթթլ Հարբորի պաշտպանության հրամանատար: Սակայն Պուլասկին այստեղ էլ հաջողություն չի գրանցում: Այնժամ վեհաժողովը նրան ուղարկում է Դեալավերի հովիտ՝ ետ մղելու հնդկացիների հարձակումները: Այս նշանակումից Պուլասկին դժգոհ էր և նույնիսկ ցանկանում էր վերադառնալ Եվրոպա, սակայն վերջին պահին մտադրությունը փոխում է: 1779 թվականի փետրվարի 2-ին Վաշինգտոնը նրան հանձնարարում է մեկնել Հարավային Կարոլինա և օգնել Հարավային բանակի հրամանատար Բենջամին Լինքոլնին: 1779 թվականի մայիսին Չարլզ սթոնի պաշտպանության ժամանակ Պուլասկու լեգեոնը, լուրջ կորուստներ տալով թողնում է քաղաքը: Սեպտեմբերին Պուլասկուն հանձնարարավում է մեկնել Սուգուստա և միավորել իր ուժերը գեներալ Լալան Մակինտոշի ուժերին: Այս կապակցությամբ Պուլասկին վեհաժողովին ուղղած նամակում բողոքում է իր նկատմամբ ամերիկյան սպաների վատ վերաբերմունքից, հավաստելով, որ այդուհանդերձ ինքը հավատարիմ է անկախության համար պայքարին:

1779 թվականի հոկտեմբերի 9-ին Պուլասկին իր լեգեոնով հարձակում է գործում Սավաննայի վրա, որը մի շարք պատմաբանների կարծիքով աննպատակ և անմիտ քայլ

էր: Մարտի ժամանակ նա վիրավորվում է և երկու օր անց մահանում:¹ 1779 թվականի հոկտեմբերի 29-ին Մայրցամաքային վեհաժողովը որոշում է կանգնեցնել նրա արձանը: 1854 թվականին պատրաստվում է նրա արձանը, իսկ 1867 թվականին կիսանդրին դրվում է Կապիտոլիումում՝ ամերիկյան պատերազմի մյուս հերոսների կողքին:

1910 թվականի մայիսի 11-ին ԱՄՆ նախագահ Ուիլյամ Տաֆտը Կոնգրեսին առաջարկում է գեներալ Պուլասկու նոր արձան կանգնեցնել, իսկ 1929 թվականին Կոնգրեսը որոշեց հոկտեմբերի 11-ը հայտարարել գեներալ Պուլասկու հիշատակի օր: Կ. Պուլասկու հիշատակի օրը նշում են նաև Իլլինոյս նահանգում:²

2005 թվականի հոկտեմբերի 11-ին Պուլասկու հիշատակի հերթական օրը ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշ Կրտսերը կոչ արեց ամերիկացիներին հարգել լեհ հերոսի հիշատակը և մեկ անգամ ևս բարձր գնահատեց նրա ծառայությունները անկախության համար պատերազմի տարիներին: 2009 թվականին ԱՄՆ Կոնգրեսը Պուլասկուն շնորհեց պատվավոր քաղաքացու կոչում:³ Պուլասկին դարձավ թվով 7-րդ օտարերկրացին, ով արժանանում է այդ պատվին: ԱՄՆ-ում Պուլասկու անունն են կրում մի շարք քաղաքներ, փողոցներ, կամուրջներ, նավեր, դպրոցներ:

Պուլասկու լեզունում կրվում էին նաև լեհ այլ սպաներ, նրանց թվում էր Յոթնամյա պատերազմի վետերան գնդապետ Միխալ Կովաչը, ով նահատակվեց Չարլսթոնի կրվում: Անկախության համար պատերազմին իր կյանքը զոհաբերեց նաև ազգությամբ լեհ կապիտան Յան Ջելինսկին Սավաննայում:

Անկախության համար պատերազմին մասնակցել են նաև լեհ Կարոլ Լիտոմսկին, որը Պուլասկու համհարզն էր, ինչպես նաև կապիտաններ Յոզեֆ Բալդեսկին և Տրեդերիկ Պաշկեն: Լեհական ծագումով ամերիկացիներից մայրցամաքային բանակի կամգում կրվում էին Ջաբորովսկիների ընտանիքի անդամները: Մասսաչուսեթսի, Փենսիլվանիայի և Նյու Յորքի նահանգներում նույնպես կրվում էին տոհմական լեհ ընտանիքիների անդամներ: Ֆրանսիացի գեներալ Դե Լաուգունի հրամանատարության ներքո կրվում էին մի քանի լեհ սպաներ: Նրանց թվում հայտնի են կապիտան Յան Կվիրին, Մեշկովսկին և լեյտենանտներ Միխայ Գրաբովսկին ու Եժի Ուգոլովսկին: Անկախության համար պատերազմի ավարտից հետո նրանք ֆրանսիական զինվորականների հետ միասին վերադարձան Ֆրանսիա և տարիներ անց՝ մասնակցեցին Ֆրանսիական մեծ հեղափոխությանը:

Հայտնի է նաև, որ սակավաթիվ լեհեր պատերազմի ժամանակ կրվել են անգլիական բանակում ընդդեմ ամերիկյան հայրենասերների: Նրանցից, մասնավորապես հայտնի է ռուսական բանակի սպա Պավել Գրաբովսկին, ով՝ որպես կամավոր, մեկնել է Ամերիկա և անդամագրվել բրիտանական բանակին: Վերջինս բրիտանական գեներալ Հենրի Քլինթոնի համհարզն էր:⁴

Անկախության համար պատերազմի մասնակիցների թվում էր նաև լեհ ազնվական, ծագումով հայ Ֆելիքս Միկլաշկիչը: Ժամանակակից լեհ պատմաբաններին հաջողվել է պարզել, որ նա 1780 թվականին մեկնել է Ամերիկա, որտեղ Բոստոնի նավահանգստում գրանցել է իր նավերը: Ենթադրվում է, որ նա Բարի համադաշնության անդամ էր⁵ և Ամերիկա է մեկնել՝ ռուսական իշխանությունների հետապնդումներից խուսափելու նպատակով: Պատերազմի ավարտից հետո 1783 թվականին վերադարձել է Վարշավա:

Ամերիկյան գաղութների անկախության համար պատերազմի ֆինանսավորման գործում անգնահատելի ծառայություն է մատուցել լեհ վտարանդի, ծագումով հրեա Հայիմ Սոլոմոնը (1740-1785թ.) : 1772 թվականին Լեհաստանի առաջին բաժանումից հետո մեկնել է

¹ Storozyński. A: op., cit. p. 31

² Szczygielski W : op., cit. p.393

³ И. Ю. Зарин. Поляки в диаспоре. Сравнительная характеристика этнической истории польских диаспор в России, США и Бразилии. М., 2010, стр. 77

⁴ Krzysztof Stopka. Niedoszty Konsull i Wielka diwa: Miklasiewiczowe. Wksiazke Ormianeska Warszawa., K. Stopka. A. Zieba, A. Artwich, M. Agopsowicz. Warszawa, 2012, s. 60.

⁵ Konopczynski W., Konqederacja Barska, t. 1-2. Warszawa, 1936-1938.

նախ Լոնդոն, ապա այնտեղից՝ օգոստոսին նավարկել է Ամերիկա: Նյու Յորքում նա բացել է ֆինանսական գրասենյակ, դարձել հաջողակ գործարար: Ազատ երկրում ապրելու ցանկությունը շուտով նրան մերձեցնում է անգլիական իշխանությունների դեմ պայքարի ելած ամերիկյան հայրենասերների հետ: 1776 թվականի սեպտեմբերի 17-ին անգլիական զորքերի կողմից Նյու Յորքի գրավումից հինգ օր անց՝ քաղաքի հրդեհումից հետո Սոլոմոնը ձերբակալվում է անգլիական իշխանության կողմից: Սակայն նրան հաջողվում է ազատվել բատարկությունից և փախչել Ֆիլադելֆիա, որտեղ դառնում է ֆինանսական միջնորդ Ամերիկայի և Ֆրանսիայի միջև: 1777 թվականին մեկնում է Եվրոպա, որտեղ հրեա բանկիրների աջակցությամբ 3.5 մլն ֆունտ ստեռլինգ է հավաքում ամերիկյան բանակի կարիքների համար: 1778 թվականին նա նորից բանտարկվում է: Մինչև 1781 թվականը Հ. Սոլոմոնը ամերիկյան կառավարությանը հատկացնում է 700 հազար դոլար պարտք: Նրա պարտքատերերի թվում էին Ջեյմս Մեդիսոնը, Բենջամին Ֆրանկլինը և Ջորջ Վաշինգտոնը: Այնուհանդերձ վերջինս մահանում է տուբերկուլյոզից՝ ընտանիքին թողնելով աղքատության մեջ:

Հայիմ Սոլոմոնին ամերիկյան կառավարությունը գնահատեց միայն 20-րդ դարում: ԱՄՆ նախագահ Թեոդոր Ռուզվելտի նախաձեռնությամբ 1941 թվականին Չիկագոյի Ուոլթեր Դրայվի վրա գտնվող Հելթ պուրակում բացվում է ԱՄՆ առաջին նախագահ Վաշինգտոնի արձանը, որի ձախ կողմում կանգնեցվում է նաև Հայիմ Սոլոմոնի արձանը: Նմանատիպ արձան է կանգնեցվում նաև Լոս Անջելեսի Մաք Արթուր պուրակում և Նյու Յորքի նրա անունը կրող հրապարակում: 1975 թվականին ամերիկյան փոստային ծառայությունը նրա պատվին թողարկում է հուշադրոշմանիշ << Հայիմ Սոլոմոն, ֆինանսական հերոս >> մակագրությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. И. Ю. Заринов. Поляки в диаспоре. Сравнительная характеристика этнической истории польских диаспор в России, США и Бразилии. М., 2010.
2. Островер Леон Исаакович, Жизнь замечательных людей, Тадеуш Костюшко, 1961 г. М.
3. Polish past in America. 1808-1865. Chicago, 1991.
4. Storozynski Alex. The Peasant Prince: Thaddeus Kosciuszko and the Age of Revolution. New York, 2009.
5. Szczygielski Wacław. <<Pulaski Kazimierz>>. Polski Słownik Biograficzny. Tom «X» Warszawa, 1986.
6. Krzysztof Stopka. Niedoszły Konsull i Wielka diwa: Miklasiewiczowe. Wksiazke Ormianeska Warszawa., K. Stopka. A. Zieba, A. Artwich, M. Agopsowicz. Warszawa, 2012.
7. Konopczyński W., Konfederacja Barska, t. 1-2. Warszawa, 1936-1938.
8. http://ru.wikipedia.org/wiki/Костюшко,_Тадеуш
9. https://monetki.files.wordpress.com/2011/04/kostiushko_ru1.pdf

ՀՏԴ 941(479.243)-054

Լիլիթ Մինասյան
Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ
Պատմաբանասիրական ֆակուլտետ, բակալավրիատ
Գիտական ղեկավար՝ պ. գ. թ. դոցենտ Վարդիթեր Աբրահամյան
Էլ. փոստ ani.minasyan.93@mail.ru

**ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

Բանալի բառեր՝ ազատագրական պայքար, գոյապայքար, Արցախյան շարժում, հայրենանվեր գործունեություն, միջազգային ճանաչում, բռնակցում, Գերագույն խորհուրդ

Ամփոփում

Տվյալ հոդվածում ներկայացված են Արցախի ազատագրական պայքարի մասին առավել կարևոր և հանգուցային վերլուծությունները, ուսումնասիրված են Արցախյան շարժման և ազատամարտի ծագման հիմնական փուլերը՝ սկսած 1921թ-ից մինչև Արթուր Մկրտչյանի գործունեության ավարտը: Արցախյան գոյապայքարի և Ա. Մկրտչյանի գործունեության շնորհիվ Արցախը մեկ անգամ ևս փաստեց իր ազատ ու անկախ ապրելու ձգտումը:

Лилит Минасян

ГПИ, бакалавриат

Науч. рук.: к.и.н., доц. Вардигер Абраамян

АРЦАХСКАЯ ОСВОБОДИТЕЛЬНАЯ БОРЬБА И ДЕЯТЕЛЬНОСТЬ АРТУРА МКРТЧЯНА

Ключевые слова: освободительная борьба, борьба за выживание, Арцахское движение, патриотическая деятельность, международное признание, аннексия, Верховный совет

В данной статье представлены самые главные и ключевые события Арцахского освободительного движения, представлены основные этапы Арцахского движения и освободительной войны начиная с 1921 года до завершения деятельности Артура Мкртчяна. Благодаря Арцахской борьбе, А. Мкртчяну, Арцах в очередной раз доказал свое стремление жить свободно и независимо.

Lilit Minasyan

GSPI, Baccalaureate

Supervisor: Ph.D. Varditer Abrahamyan

ARTSAKH LIBERATION AND ACTIVITY OF ARTHUR MKRTCHYAN

Key words: *liberation struggle, existence-fighting, Artsakh movement, patriotic action, international recognition, annex, General Council*

Summary

This article presents the most significant and important analysis about the liberation struggle of Artsakh, and explores in detail the main stages of origin of the Artsakh movement and existence fighting from 1921 to the end of Arthur Mkrtchyan's activity. Due to the Artsakh existence-fighting and Arthur Mkrtchyan's patriotic action, Artsakh proves once again its aspiration to live in a free and independent country.

1921թ. Արցախի ապօրինի բռնակցումն Ադրբեջանին և վերջինիս կողմից տասնամյակների ընթացքում կիրառած հայահալած քաղաքականությունը, հայ բնակչության մարդկային ու ազգային արժանապատվության ոտնահարումը Արցախում ստեղծել էին ծայրահեղ լարված վիճակ: Արցախահայությունը կամ պետք է հեռանար իր պապենական հողերից, կամ պայքարեր իր հողն ու պատիվը պաշտպանելու համար: Արցախցին ընտրում է վերջինը:

1988թ. վերակառուցման քաղաքականությամբ ոգևորված Արցախի հայությունը կրկին քարձրացնում է շուրջ 70 տարի ծխացող դարաբաղյան հիմնահարցը¹:

1988 թվականը շրջադարձային եղավ հայոց պատմության մեջ: Արցախի ժողովուրդը ձայնը բարձրացրեց սեփական իրավունքների ու ազատության պաշտպանության համար: Հետևելով գործող բոլոր իրավական նորմերին և օգտագործելով իր կամքն արտահայտելու բացառապես ժողովրդավարական ձևեր՝ Լեոնային Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը հանդես եկավ Հայաստանի հետ վերամիավորվելու պահանջով: Այդ իրադարձությունները բեկումնային եղան ոչ միայն արցախցիների կյանքում, այլ, փաստորեն, նախասահմանեցին ողջ հայ ժողովրդի հետագա ճակատագիրը: Դա նոր փուլ նշանավորեց հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մեջ: Կարող ենք ասել, որ արցախյան ազգային ազատագրական շարժումը սկսվեց 1988-ի փետրվարի 12-ին²: Ամեն ինչ մեկնարկեց Հաղորթի հանրահավաքից, որի մասնակիցները պահանջեցին Հայաստանի հետ Արցախի վերամիավորում: Հանրահավաքի կազմակերպիչներն էին Հաղորթի երկրագիտական թանգարանի տնօրեն, իսկ ավելի ուշ ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանը, «Կոունկ» կոմիտեի անդամներ Իգոր Մուրադյանը, Գրիգորի Հայրապետյանը, Էմիլ Աբրահամյանն ու ուրիշներ³: Կոմիտեն հետագայում վերափոխվեց «Ղարաբաղ» կոմիտեի: Այս պատմական որոշման հաջորդ օրն իսկ, արցախահայության ազատագրական պայքարին գորավիզ լինելու վճռականությամբ, Հայաստանում արցախահայության հետ համերաշխության զանգվածային ելույթների մեծ ալիք սկսվեց: Փետրվարի 21-ին Երևանի Թատերական հրապարակում տեղի ունեցավ առաջին զանգվածային հանրահավաքը: Շուտով հանրահավաքներ և ցույցեր կազմակերպվեցին նաև հանրապետության մյուս քաղաքներում: Ղարաբաղյան շարժման համաժողովրդական բնույթը շատերի համար անակնկալ էր: Մակայն իրականում այն մեր անցյալի տրամաբանական շարունակությունն էր, պատմական երևույթների շղթայի անխուսափելի օղակներից մեկը⁴:

Արցախյան շարժումը կարելի է բաժանել 5 հիմնական փուլերի, որոնք ընդմիջվել են ընդհանուր և կարճատև հրադադարներով⁵:

Առաջին փուլն սկսվել է 1988-ի փետրվարի 22 -ին եւ ավարտվել 1990-ի հունվարի 19-ին՝ Հյուսիսային Արցախի (Մարտունիի շրջանի) վրա հարձակումների կասեցմամբ: Երկրորդ փուլը 1991-ի ապրիլի 30-ից 1992-ի մայիսի 18-ը. սկսվել է «Օղակ» ռազմական գործողությամբ, ավարտվել Լաչին քաղաքի կրակակետերի ճնշմամբ և Հայաստանի հետ ցամաքային կապի վերականգնմամբ, երրորդ փուլը 1992-ի հունիսի 12 –ից 1993-ի հունվարի 20-ը: Չորրորդ փուլը 1993-ի փետրվարի 5 – ից նոյեմբերի 1-ը: Հինգերորդ փուլը 1993-ի դեկտեմբերի 15 – 1994-ի մայիսի 17-ը. սկսվել է Արցախի Հանրապետության սահմանագծի ողջ երկայնքով հակառակորդի լայնածավալ հարձակմամբ և եզրափակվել արցախա-ադրբեջանական հակամարտության գոտում զինադադարի հաստատումով:

¹ Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994, էջ 242:

² Թոմաս դե Վալ, Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղության և պատերազմի միջով, Երևան, 2007, էջ 72-73:

³ Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ, էջ 247:

⁴ Վ. Բալայան, Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, «Ամարաս» Երևան, 2002, էջ 250:

⁵ Թոմաս դե Վալ, նշվ. աշխ, էջ 88:

Առավել ձեռքբերումային էր Արցախյան շարժման երկրորդ փուլը: Հիմք ընդունելով 1991 թ. օգոստոսի 30-ի ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու և իր անկախությունը վերականգնելու Ադրբեջանի հայտարարությունը՝ Լեռնային Ղարաբաղը հանդես եկավ պատասխան հայտարարությամբ: Սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցած պատգամավորների մարզային և Շահումյանի շրջանային խորհրդի համատեղ նստաշրջանը «ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու մասին» օրենքի հիման վրա ընդունում է «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի հանրապետության հռչակման մասին»¹: Նույն թվականի դեկտեմբերի 10-ին տեղի ունեցած հանրաքվեն հաստատում է Ղարաբաղի անկախությունը: Այդ օրը ԼՂՀ բնակչության 80 տոկոսը մասնակցում է հանրաքվեին, որից 90 տոկոսից ավելին քվերակում է անկախության օգտին: 1991թ. դեկտեմբերին ձևավորվում է հանրապետության բարձրագույն օրենսդիր մարմինը՝ ԳԽ: 1992թ. հունվարին տեղի է ունենում հանրապետության Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը, որն ընդունում է ԼՂՀ-ի անկախության հռչակագիրը: Հունվարի 8-ին հանրապետության ԳԽ նախագահ է ընտրվում Արթուր Մկրտչյանը:²

Արթուր Ասլանի Մկրտչյանը ծնվել է 1959 թվականի փետրվարի 16-ին Հաղրութի շրջանի Էդիլու (այժմ՝ Ուղտաձոր) գյուղում: 1976 թվականին, ավարտելով գյուղի միջնակարգ դպրոցը, ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Համալսարանն ավարտելուց հետո սովորել է Մոսկվայի Միկլուխտ Մակլայի անվան ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրայում: Այն ավարտելուց հետո՝ 1981-1983 թվականներին, աշխատել է Հայաստանի ազգագրության պետական թանգարանում, ապա 1986 թվականին տեղափոխվել է ծննդավայր և աշխատել Հաղրութի պատմա-երկրագիտական թանգարանի տնօրեն: 1988 թվականին պաշտպանել է թեկնածուական թեզ և ստացել պատմական գիտությունների թեկնածուի աստիճան: 1991 թ. հունվարի 8-ին 33 տարեկան հասակում, ընտրվելով ԳԽ նախագահ, Արթուր Մկրտչյանի գործն է դառնում ժողովրդին ազգային-ազատագրական պայքարին պատրաստելը:

Արթուր Մկրտչյանը երկրի ղեկավարումը ստանձնեց դժվարին ժամանակահատվածում: Նա արցախյան շարժման այն առաջամարտիկներից էր, ով խորապես տիրապետում էր ազգային արժեքներին, և ում համար ի վերուստ պարզ էր, որ մեր ժողովրդի գոյատևման խնդիրն անիրագործելի է առանց նրա հավաքական ուժի և պայքարի: Օժտված լինելով մարդկային բարձր հատկանիշներով՝ նա շարժման հորձանուտում հայտնվեց որպես հանրության կողմից ընդունելի դեմք ու կազմակերպիչ, իսկ հետագայում դարձավ ազգային խորհրդանիշ: Նա իր քաղաքական ու դիվանագիտական քայլերով ցրեց անվստահության մշուշը, ցույց տվեց, որ արցախյան գոյապայքարն ունի իր արժանի ղեկավարը: Մինչև մահվան օրը Արթուրը հերոսամարտի առաջին շարքերում էր և զինյալ պայքարից բացի, այլ ելք չէր տեսնում: Արդյունքն ակնհայտ է այսօր. 1991թ. ամռանը հայաթափված Հաղրութի գյուղերն ազատագրված են: Գուցե պատմաբանի մասագիտությունն էր օգնում ՀՅ Դաշնակցության ներկայացուցիչ Արթուրին արագ և ճիշտ կողմնորոշվելու³: Կարևորում էր եւ ճիշտ դիվանագիտությունը, որպեսզի շեշտադրվի ոչ միայն հանրապետության ճանաչումը միջազգային հանրության կողմից, այլև հակամարտության ճիշտ ընկալումը. ոչ թե ազգամիջյան պատերազմ, այլ՝ ազգային-ազատագրական: Արթուր Մկրտչյանը քաղաքական հայացքներով անգիջում էր: Ապացուցում էր, որ քաղաքականությունն անբարոյականությունն չէ, երբ այն չեն հարմարեցնում անձնական շահերին⁴: Արթուր Մկրտչյանի դաշնակցական լինելը պատճառ էր դարձել նրա՝ Հայաստանի իշխանությունների թշնամական վերաբերմունքին արժանանալու համար, ինչը դրսևորվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ դառնալու առաջին իսկ օրից: Ազատագրության համար մարտնչող և Արցախի և ազատություն բերած ղեկավարը մերժվում է մայր հայրենիքի կողմից:

Արթուր Մկրտչյանը ղեկավարել է ընդամենը 97 օր, բայց նրա անձը, կյանքի ուղին և ճակատագիրն այնքան ներհյուսված են եղել հայ ժողովրդի նորագույն պատմությանը, որ նրա

¹ Թ. Հակոբյան, Արցախյան օրագիր. կանաչ և սև, Երևան, 2008, էջ 39:

² Թ. Հակոբյան, Նշվ. աշխ, էջ 49:

³ Ա. Պետրոսյան, Արթուր Մկրտչյան, Երևան, 2007, էջ 48:

⁴ Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ, էջ 249:

ղեկավարման 97 օրերը նրա անունն առհավետ գրել են ժողովրդի հիշողության մեջ: Նրա գործունեությունը 1988թ. փետրվարի 12-ի Հաղթության հանրահավաքից մինչև նախագահ ընտրվելը եղել է սրընթաց ու զարմանք հարուցող¹: Ոչ մեկի համար էլ զաղտնիք չէ, որ Արթուր Մկրտչյանը չի ընդունվել Հայաստանի այն ժամանակների իշխանությունների կողմից, ինչն անհերքելի փաստ է, դեռ ավելին՝ նրա ընտրվելուց հետո մի քանի օր շարունակ Հայաստանը գրկել է Ղարաբաղին բոլոր տեսակի օգնությունից: Բոլոր այն մարդիկ, ովքեր բախտ են ունեցել գեթ մեկ անգամ շփվելու Արթուր Մկրտչյանի հետ, ակնածանքով են խոսում նրա մասին: Անկախ Հայաստանի նախկին իշխանությունների կոկորդում նա ոսկորի նման էր. ոմանք չէին հանդուրժում դաշնակցական, մյուսներն էլ՝ սկզբունքային լինելու համար: ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը դժգոհել էր, որ Արթուր Մկրտչյանն է ընտրվել ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ և ասել էր՝ նախագահը «ձերոնքական է», թող գոնե տեղակայր «մերոնքական» լինի: Հետո պարզ դարձավ, որ «ձերոնքականը»՝ նշանակում էր դաշնակցական, իսկ «մերոնքականը»՝ ՀՀԾ-ական²:

1992 թվականի ապրիլի 14-ին Ստեփանակերտ քաղաքում, երեկոյան մոտավորապես ժամը 7:30-ին իր բնակարանում սպանվել է ԼՂՀ ԳԽ-ի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանը: Սպանել էին հրազենով, և հանցագործը դեռևս չի հայտնաբերվել: Կար նաև բնակարանի պատուհանը՝ ծակոտած ապակիով՝ հրազենի օգտագործման ապացույց³: Նրա դեմ արձակված կրակոցի պատճառն այդպես էլ մնացել է չպարզված, իսկ նրան սպանած գնդակը՝ չգտնված: Զանգվածային լրատվամիջոցներն հայտնեցին, որ դա ինքնասպանություն է, բայց Արթուր Մկրտչյանը երեխա չէր և գիտեր զենքի հետ վարվելու կանոնները: Երևի թե սա է ճակատագիրն ամեն մի հեռանկար պայքարի: Բայց արդյոք պայքարն անհեռանկար էր, և մի՞ թե մենք այս անգամ էլ պետք է ճաշակեինք պարտություն, որ երևի թե հավասար պիտի լինի անփառունակ, ստոր մահի: Արթուր Մկրտչյանը մաքուր, ազնիվ եւ մինչև վերջ նվիրված էր իր ժողովրդի փրկության գործին: Նա անհողորդ վճռականությամբ էր ընդունել իր նոր առաքելությունը: Եվ հիմա նա չկա, նահատակված է: Ով է նրա երիտասարդ, սուրբ արյան պատասխանատուն⁴: Մի թե մեկը մեր ներսից, որ դավաճանեց գոյապայքարին՝ չվախենալով ազգի ատելավառ հաշվեհարդարից, թե՛ հակառակ հոսանքի կամ կուսակցության ներկայացուցիչը, որ կատարել էր հանձնարարություն, մեր օրերի այիքներին բարձրացած հրեշավոր գործիչների պատվերը: Ըստ իս՝ գործել է վերջին տարբերակը, որն ամենից հավանականն էր, և այդ եղերական էր: Արթուր Մկրտչյանը դարձավ Արցախի պետականության խորհրդանիշը: Արթուր Մկրտչյանը երեք ամիսների ընթացքում մշակեց նորաստեղծ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դրոշը, որի սպիտակ զարդանախշը նշանակում էր աստիճանաբար միացում Մայր Հայաստանին: Լևոն Տեր-Պետրոսյանը, Գերագույն խորհրդի նախագահությունը և կառավարությունը հայտարարեցին, որ «խոր կսկիծով են ընդունել Արթուր Մկրտչյանի սպանության գույժը»⁵: Կատարվածը որակվում էր «յարանենց սպանություն»: Ընդամենը մի քանի ամիս նա ղեկավարեց հանրապետության գերագույն մարմինը, սակայն այդքանն էլ բավական էր, որ Ղարաբաղի նորանկախ հանրապետության առաջին ղեկավարը հետք թողնի Արցախի նորագույն պատմության մեջ: «Արցախն աղքատ բարերար չէ, որին պետք է օգնել, Արցախը պետք է նվաճել, Արցախը պետք է գրավել, Արցախը պետք է մերը դարձնել», «Թող ոչ մեկի մտքով չանցնի, թե Ղարաբաղում հայ չապրելով՝ Ղարաբաղը կարող է Հայաստանի մաս դառնալ: Հողը նրանն է, ով էդ հողի վրա ապրում է եւ պաշտպանում է այդ հողը» - ասում էր Արթուր Մկրտչյանը: Ասում են՝ պատմությունը մարդիկ կենսագրությամբ են կերտում: Իրենց կենսագրությամբ պատմություն կերտած հերոսների շնորհիվ Լեռնային Ղարաբաղի հանրապետությունն իրողություն է, եւ հենց այդ հերոսներից է ազատամարտի նվիրյալ Արթուր Մկրտչյանը⁶: «Պատմությունը չպետք է կարդալ հեքիաթի նման, այլ պետք է դասեր քաղել՝ սխալները

¹ Ա. Պետրոսյան, նշվ. աշխ, էջ 53:

² Թոմաս դե Վալ, նշվ. աշխ, էջ 304:

³ Բ. Ուլուբաբյան, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997, էջ 405:

⁴ Բ. Ուլուբաբյան, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, 409:

⁵ Թ. Հակոբյան, նշվ. աշխ. էջ 46:

⁶ Ա. Պետրոսյան, նշվ. աշխ, էջ 52:

յկրկնելու եւ հերոսական էջերն իբրեւ օրինակ ընդունելու համար»,- ասում էր նա: Իր ողջ կյանքը հայրենիքի ազատագրման վեհ գործին նվիրաբերած Արթուր Մկրտչյանը ցավոք, չկարողացավ տեսնել իր կատարած գործի տված պտուղները՝ այն է Լեռնային Ղարաբաղի Ի Հանրապետության գոյությունը, որը թեև մինչև այսօր էլ չի ճանաչվում միջազգային հանրության կողմից, բայց աշխարհին շարունակում է ապացուցել իր գոյության իրավունքը:

Գրականություն

1. Բալայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, «Ամարաս» Երևան, 2002:
2. Հակոբյան Թ., Արցախյան օրագիր. Կանաչ և սև, Երևան, 2008:
3. Պետրոսյան Ա., Արթուր Մկրտչյան, Երևան, 2007:
4. Թումաս դե Վաալ, Հայաստանն ու Ադրբեջանը իսադադության և պատերազմի միջով, Երևան, 2007:
5. Ուլուբաբյան Ա., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997:
6. Ուլուբաբյան Ա., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994:

ՀՏԴ 941(479.25)

**Հեղինակ Ադասյան
Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան**

ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՓՈՔՐ ՀԱՅՔՈՒՄ

Բանալի բառեր. Փոքր Հայք, ֆիդայի, չելլո, Սասուն, Անատոլիական թերակղզի, Կովկաս, Թորոս Օտտոկյան:

Ամփոփում

1880-ական թթ. կեսերից հայդուկային շարժումը տարածվում է նաև Փոքր Հայքում: 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո Կովկասից Թուրքիա գաղթած մահմեդական մուհաջիրները իսկական պատուստիստ դարձան քրիստոնյաների, հատկապես հայերի համար: Փոքր Հայքի և Սև ծովի ափամերձ շրջանների հայությանը պաշտպանելու նպատակով տեղի ըմբոստերիտասարդները ստեղծեցին իրենց ավագակային՝ չելլոյական խմբերը:

**Егине Агасян
АГПУ**

ГАЙДУКСКОЕ ДВИЖЕНИЕ В МАЛОЙ АРМЕНИИ

Ключевые слова: Малая Армения, фидаи, челло, Сасун, Анатолийский полуостров, Кавказ, Торос Царукян.

Резюме

Как видим эти движения народных мстителей стали называться гайдуцкими, фиданскими, челонскими и т.д. Следовательно, можно сказать, что челоны, хотя были преданы армянскому народу и другим страдающим народам, героически боролись против тирании, мучались, терпели много трудностей и страдали подвергая себя опасностям от султанского государства. В заключении можно сказать, что отрицательная сторона всех этих движений в том, что эти силы действовали строго разобщенно. Это движение начало существовать с середины 80-х годов, когда ещё на виду не было национальных партийностей. После образования этого движения руководство перешло в их руки. В истории национального движения челоны оставили глубокий след: и как идейные вдохновители, и как национальные герои, борющиеся за свободу армянского народа. Это освободительное движение челонов высоко оценён молодежью и имеет большое значение для будущего поколения

THE HAYDUK MOVEMENT IN LESSER ARMENIA

Key words: Lesser Armenia, fedayi, chello, Sasun, Anatolian peninsula, Caucas, Toros Tsarukyan.

Summary

In the mid - 1880s. the Hayduk movement spread all over Lesser Armenia. In 1877-1878 the Muslim refugees of Caucasus who fled to Turkey after the Russian-Turkish war converted to real selfless Christians, especially for the Armenians. Small Hayq rebellious youth and the Black sea coast, formed their own gang, Chelloyakan groups in order to protect the nation.

Ազատագրական գաղտնի խմբակների ստեղծմանը զուգահեռ կամ մի փոքր ավելի ուշ՝ արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի մեջ տարածում գտավ հայդուկային կամ ֆիդայական շարժումը, որն սկսվեց 19-րդ դարի 80-ականների կեսերից Տարոնում (Մուշ, Սասուն) և նրա շրջանակներում, մասնակիորեն Վասպուրականի նահանգի տարբեր գավառներում, նաև Փոքր Հայքում՝ այլ անվանումով: Այդ շարժումն իր սուր ծայրով ուղղված էր բոլոր տեսակի ճնշողների և բռնակալների դեմ, և այդ պատճառով անվանի պատմաբան Լեոն հայդուկային շարժումը չի համարում ազգային-ազատագրական արտահայտություն, այլ ընդգծում է նրա սոցիալական երանգը: Չժխտելով շարժման սոցիալական բովանդակությունը՝ գտնում ենք, որ հայդուկային շարժումը կազմում էր արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի փայլուն էջերից մեկը, որովհետև իբրև ճնշող հողատեր, բռնակալ առաջին հերթին հանդես էին գալիս քուրդ ռազմական ավագանին և թուրք պաշտոնեության ներկայացուցիչները : Ճիշտ է, երբեմն հայդուկի վրիժառու զենքն ուղղված էր նաև հայ մատնիչի, մեծահարուստի, գյուղապետի դեմ, բայց հաճախ, իբրև հայդուկ հանդես էր գալիս նաև հայ երևելի գերդաստանի կամ տոհմի, գյուղապետի, ընտանիքի որևէ անդամ¹:

Շարժման սկիզբը կապված է ռուս-թուրքական պատերազմի ավարտի հետ, երբ Կովկասից Անատոլիական թերակղզի գաղթեցին տարբեր լեռնական ցեղեր՝ չերքեզներ, լազեր՝ ընդհանուր մուհաջիր անվան տակ, որոնք կառավարության կողմից չապահովվելով հողով և անհրաժեշտ կենսամիջոցներով, զավթում էին տեղի քրիստոնյաներին, առավելապես հայերի հողը կամ կազմում ավագակախմբեր և զբաղվում ավագակախությամբ: Նրանց նմանությամբ ավագակախմբեր սկսեցին կազմվել նաև քրդերից և թուրքերից: Կառավարությունը սկզբում հաշտ աչքով էր նայում մահմեդական ավագակախմբերին, քանի որ նրանց զոհը հայերն էին: Աստիճանաբար լայնացավ ավագակախմբերի գործունեության ասպարեզը, նրանք սկսեցին հարձակվել նաև կառավարական գործերի թուրք պաշտոնյանների վրա: Հայ գյուղացուն, արվեստավորին ու շրջիկ մանրավաճառին պաշտպանելու համար հանդուգն հայ երիտասարդները ստեղծեցին իրենց ավագակախ խմբերը, կամ, այն ժամանակվա արտահայտությամբ, առաջացան հայ առաջին Չելլոները: Չելլոն մի ավագակապետի անուն է, ազգությունը՝ անհայտ: Նա կողոպտում էր հարուստներին, հարձակվում պետական պաշտոնյաների վրա, գրավում նրանց հարստությունները և բաժանում օրվա հացի կարոտ ժողովրդին՝ անկախ ազգությունից: Չելլո անունը ունի իր ծագումն ու պատմությունը²:

Ըստ հայ հեղափոխության առաջատար առաքյալ, թուրքական հասարակ բանտերից մինչև արքայի բերդաբանտի մեջ տարիներով ապրած Ազարիկ Գոլոյանի՝ «Ութսունական թվականներին Հնչակյան կուսակցության ծնունդից առաջ Հալեպի շրջանի մեջ գործել է ավագակախին մի խումբ. որը բաղկացած է եղել առավելապես թուրքմեններից և լազերից: Խմբի պետի անունը եղել է Ասատ Չուրլի քաջ ,հանդուգն: Խմբի բոլոր անդամները կրել են իրենց պետի անունը՝ սարսափ տարածելու համար: Չուրլի անունը աստիճանաբար վերածվել է «Չելլոի»»: Տարբեր վայրերում Չելլո անվան տակ գործող խմբերի կատարած գործողությունները գայրացնում էին ոստիկանությանը: Հալեպում, Մեքաստիայում, Կեսարիայում Չելլո անվան տակ խիզախ գործողություններ էին կատարվում: Չելլո անունը

¹ Հայոց պատմություն (խմբ. Խորհուրդ՝ Բարխուդարյան և ուրիշներ), հ. 3 գիրք 1, Երևան 2010, էջ 562 :

² Էմմա Կոստանդյան, Ակնարկ արևմտահայ մշակ. և հասարակ. - քաղաքական կյանքի պատմության, Երևան 2005, էջ 151:

դարձել էր առասպելական, որն ահ ու սարսափ էր տարածում ու ամենուրեք: Մարդկային զգացմունքներից բոլորովին զուրկ այդ խումբը իր ավագակային գործունեությամբ տարիներ շարունակ սարսափի տակ է պահել ժողովրդին մինչև այն պահը, երբ մեկ-երկու հայեր ևս մասնակցեցին և կարճ ժամահատվածում հաջողվեց խումբը հեռացնել ավագակային գործերից և մղել ժողովրդի թշնամի բռնապետությունների դեմ պայքարի: Այնուհետև խումբը սկսում է կողոպտել միայն հարուստներին, պետական հարստությունները և ձեռք բերված դրամների մեծագույն մասը առանց ազգային խտրականության բաժանել աղքատներին, որով էլ սկսում է վայելել հասարակության հարգանքն ու համակրանքը¹:

Այդ խմբի մեջ իր քաջությամբ մեծ համբավ է ունեցել Կարապետ Գըռ Փանոսյանը, ով հայտնի է Գարա Օղլան անունով: Նա հայտնի էր նաև «Ճելլատ» մականունով: Հուժկու հայ էր, որ աղքատի և չքավորի բարեկամն էր և քաջ եղբայրը: Համեստ էր, անշահախնդիր, ընկերասեր, ուներ վեհ հոգի: Չորս տարի գլխավորել էր ավագակախումբ, որի անդամները կոչվում էին «ՉԵԼԼՕ», այս խումբը ահ ու սարսափ էր տարածել Տավրոսի լեռներում և Կիլիկիայի դաշտերում:

Փոքր Հայքում 1885թ.-ին Մարզվանի Արմենական Գոլեճ կենտրոն անունով ստեղծվում է ինքնապաշտպանական մարմին, որը արթնացնում էր ժողովրդի գիտակցությունը ու մղում նրան ինքնապաշտպանության:

ՀՅԴ և արմենական հայդուկային խմբերից բացի՝ Փոքր Հայքի նահանգներում և Սև ծովի ափամերձ հայաբնակ վայրերում դեռևս 1890-ական թթ սկզբին գործում էին Հնչակյան կուսակցության հայդուկային խմբեր, որոնք այստեղ հայտնի էին «հրոսակային» կամ «ասպատակային» անվանումով²:

Հայ չելլոներից ամենից անվանին եղավ կյուրինցի Թորոս Ծառուկյանը (Մեծ Չելլո): Թորոս Ծառուկյանը ծնվել է 1870թ. Սեբաստիայում՝ Մահտեսի Վարդավառի ընտանիքում: Սովորել է Արամյան վարժարանում: Անդամակցել է «Փոքր Հայքի կազմակերպությանը»: Թորոսի հայրը իր ընտանիքի ապրուստը ապահովում էր գյուղական առևտրական գործերով զբաղվելով: Հոր մահից հետո Թորոսը շարունակում է հոր գործը՝ ընտանիքի հոգսը վերցնելով իր վրա: Հասնելով բավականին հաջողությունների՝ հանդիպում է թուրքերի կողմից առաջացրած բազում խոչընդոտների:

Թուրքերի կողմից փակվում է Թորոսի խանութը, որից հետո նա դառնում է շրջիկ առևտրական: Մակայն շուտով մի դեպքի պատճառով, որի ժամանակ թուրքերի կողմից հայերի հասցեին արված հայիոյանքների ժամանակ Թորոսը զայրանում է և զգուշացնում չարունակել, բայց թուրքերը փորձում են հարձակվել և դաս տալ հանդուգն հային, Թորոսը բարկանում է, զենքը քաշում և փորձում կրակել, սակայն իր ընկերները չեն թողնում: Այս դեպքը թուրք շրջանակի մեջ լայն արձագանք գտավ: Գյավուրը հանդգնել է զենք բարձրացնել մահմեդականի վրա, չեղած, չսված բան էր: Գյուղի թուրքերը զենքերով, սրերով շտապում են դեպքի վայր՝ պատժելու հանդուգն հային: Թորոսը կարողանում է փախչել մոտակա լեռը: Թուրք ամբոխը հետապնդում է նրան, սակայն մութն ընկնելուն պես հետ են վերադառնում ձեռնունայն: Շուտով ամբողջ թուրքական գյուղում սկսում են խոսել այդ դեպքի մասին: Գյուղացիների հետ ունեցած սերտ կապերի շնորհիվ նա տեղեկություններ է ստանում ոստիկանների և զինվորների տեղաշարժերի մասին, հարձակվում նրանց վրա, զենք հավաքում և զինվում: Կառավարությանը թուրքիմացության մեջ զցելու համար, իրեն անվանում է Չելլո:

Այդ անակնկալ դեպքը մեծ հեղաշրջում է առաջացնում Թորոսի մեջ: Ձգում է, որ ինքը բոլորովին տարբեր կոչում ունի, քան շրջիկ առևտրականը: Իր նման մի քանիսի հետ ստեղծում է փոքրիկ ու ճկուն մի խումբ: Նրանց գործունեության կենտրոնը Կեսարիան էր, սակայն աստիճանաբար ընդլայնվում են խմբի գործունեության շավիղները: Նրանք հարաբերություններ են հաստատում Մարզվանի «Փոքր Հայքի կազմակերպության» անդամների հետ: Նրանց պարենավորումը ապահովվում էր շրջակա հայ գյուղերի բնակչության կողմից: Զինամթերքը ձեռք էր բերվում թուրք ոստիկաններից ու զինվորներից

¹ Միրվարդ, Թորոս Ծառուկյան(Մեծ «Չելլո»), Փրովիդենս, 1960 էջ 21:

² Արշակ Ալպոյաճեան, Պատմություն Մալաթիոյ Հայոց, Պեյրուք 1961, էջ 863:

գնելու միջոցով¹: Դեպքերին մասնակից և ակնատես Բարսեղ Օհանյանը գրում էր. «Ուզածիդ չափ կառավարական զենք ու փամփուշտ կարելի էր ձեռք բերել²»:

Շատ չանցած՝ մասնավորապես Մեքաստիայում և Գաղատիայի շրջանների մեջ երևան եկած քաջերը, որոնք հայտնի էին <<Չեյլո>> անուններով, Թորոսի ուշադրությունն են գրավում, ով էլ որոշում է նրանց ընկերակցել: Աղասին ընդունում է նրան իրենց շարքերի մեջ: Նա կարճ ժամանակահատվածում կարողանում է կատարել իր առաջ դրված առաքելությունը և արժանանում Հնչակյան վարչության գնահատանքին: Առանձնակի կարևոր էր նրա խմբի հարձակումը պետական փոստակառքի վրա, որը տեղափոխում էր մեծ գումար: Այն բռնագրավվեց, մի մասը բաժանվեց հայ, թուրք և քուրդ գյուղացիներին, մյուս մասով զենք ձեռք բերեցին: Խումբը կապեր է հաստատում Մարզվանի «Փոքր Հայքի կազմակերպության» անդամների հետ³:

Փոքր Հայքում պայաքրի առավել կենսունակ և արդյունավետ գործունեություն է ծավալել Մինաս Օղլին (Հովհաննես Մինասյան): Ծնվել է Գաբու Գայա գյուղում: Ուներ երկու եղբայր Մինասը և Պողոսը: Նրանք բազմիցս ունեցել են բախումներ քուրդ, թուրք հայ հասարակությանը տարիներով կողոպտող և սարսափի մեջ պահող նշանավոր ավագակապետների՝ Շիրին Այի և Մեվլիտ հետ: Մինաս Օղլին ազատարարի համբավ ուներ ամբողջ բնակչության շրջանում, և հաշվի առնելով այս ամենը թուրքական իշխանությունները նրան նշանակել էին շրջանի հեծյալ ոստիկանների հրամանատար: Երկու տարի վարելով այս պաշտոնը Մինաս Օղլին չվստահելով թուրք իշխանություններին հեռանում է պաշտոնից և դարձյալ կազմում իր խումբը: Մատնվելով ձեռքակալվում է և բանտարկվում Մամսունի բանտում, որտեղ իր ընտանիքն էր բանտարկված: Որոշ ժամանակ անց նրան հաջողվում է բանտից փախչել գյուղացիների օգնությամբ և նոր խումբ կազմել ու իր գործունեությունը ծավալել Սև ծովի ափամերձ շրջանում: Մինաս Օղլու խումբը ուներ իր զինարանը, իսկ պարենով ապահովում էին շրջակա հայ գյուղերի բնակիչները: Հակառակ դրան՝ կառավարությունը փորձում էր մեջտեղից հեռացնել նրանց: Դավադրորեն նախ սպանում են Պողոսին: Հերթը չի հասնում Հովհաննեսին, քանի որ նա զինվորագրվում է Հնչակյան կուսակցությանը և դառնում հայության իրավունքների պաշտպաններից մեկը⁴:

Փոքր Հայքում հայտնի հայդուկներից էին նաև Միրջան Խանապախյանն և Փանոս Յաղուբյանը, որոնք ծնունդով թալասցի էին: Իրենց քաջագործությունների շնորհիվ էլ նրանք աչքի են ընկել: Նրանց քաջագործությունները պատմության մեջ առասպել են դարձել: Գործել են միասին: Միրջանն ավելի երիտասարդ, ավելի ճարպիկ էր, քան Փանոսը: Նրանց կապող օղակ էին հոգևորականներն ու մտավորականները, դրանցից հիշատակության արժանի էին առանձնապես Ժիրայր Պոլոճյանն և Դանիել վարժապետը: Տերեվանքը շնորհիվ վանահոր եղել է Անահին Ժիրայրի կամ Չեյլոների, կամ այլ հնչակյան գործիչների ապահով ապաստարանը: Վանքի վանահայրը Դանիել Վրդ. Բարսեղյանը, աչքի էր ընկնում իր քաջությամբ և շինարար գործերով, ամուր ու անբասիր վարքով ու բարքով: Նա նաև հայ ժողովրդի իրավունքների պաշտպանն էր: Նա մենակ չէր, նրա հետ գործում էին բազմաթիվ հայտնի և անհայտ հոգևորականներ:

Փոքր Հայքի անվանի հայդուկներից էր Մնձուրի Առյուծը (Գալուստ Արիանյան), որ չհանդուրժելով իր հայրենակիցների նկատմամբ կիրառվող տանջանքներն ու կտտանքները զենք է հայթայթում և լեռը բարձրանում: Աստիճանաբար նրա խմբի անդամները համալրվում են Մեծ և Փոքր Արմտան գյուղերի արիսկյանցի և ակնցի բազմաթիվ հայորդիներով:

Հաջորդ ակնառու դեմքերից էր Տիչլեկ Հովհաննես Արզումանյան, ով բարձրահասակ, թիկնեղ, բարի, անձնավեր երիտասարդ էր: Նաև քաջ որսորդ էր: Թուրքերը սարսափում էին նրա ուժից, քաջությունից և նշանառությունից⁵:

Չեյլոների համար որպես հավաքատեղի ինչպես նաև ապաստարան էին ծառայում հայկական վանքերն, իսկ հոգևորականությունը մեծ աջակցություն էր ցուցաբերում և

¹ Էմմա Կոստանդյան, Ակնարկ արևմտահայ մշակ. և հասարակ.- քաղաքական կյանքի պատմության, Երևան 2005, էջ 153:

² Արշակ Ալպոյաճեա, Պատմություն Մալաթիոյ Հայոց, Պեյրուք 1961, էջ 863:

³ Չորմիսյան Լ., Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմության, հատոր Բ, Պեյրուք, 1974, էջ 197:

⁴ Միրվարդ, Թորոս Ծառուկյան(Մեծ «Չեյլո»), Փրովիդենս,1960 էջ 22:

⁵ Միրվարդ, Թորոս Ծառուկյան(Մեծ «Չեյլո»), Փրովիդենս,1960 էջ 35:

ոգևորություն առաջացնում հայ երիտասարդության մեջ: Որպես այդպիսին հանդես եկավ Սուրբ Կարապետ վանքը: Չեյլոնների գործունեությունը հասկապես աչքի է ընկել Սուրբ Կարապետ վանքի մեջ: Այս վանքը Կեսարիայի շրջանի հայության ուխտատեղին էր: Վանքը նաև նրանց հավաքատեղին էր համարվում: Այստեղ կազմակերպվում էին միջոցառումներ, որոնց ժամանակ փառաբանվում էին Չեյլոների կատարած քաջագործությունները: Թուրք ոստիկան զինվորները ամեն կերպ փորձում էին ձեռքառել հայ երիտասարդությանը, հասկապես Թորոսին և նրա ընկերներին և դրա համար ամեն խորամանկության դիմում էին: Սակայն դա նրանց սկզբում չի հաջողվում:

Այս ժամանակաշրջանում տեղի ունեցած խորհրդակցություններից մեկի ժամանակ որոշվեց, որ հայ ժողովրդի պաշտպանությունը պետք է գործի մի քանի խմբերով, որոնցից մեկը գործելու է Կեսարիայում՝ Թորոսի գլխավորությամբ, ում պետք է աջակցեին Կյուլպենկը, Հովհաննեսը և Փանոսը: Երկրորդը գործելու էր Հալեպում՝ Միրջանի գլխավորությամբ, երրորդը՝ Սեբաստիայում, որը գլխավորելու էր Տենիք Մատենցի Կարդոյը: Խմբերը դարձյալ պետք է հանդես գային Չեյլո անվան տակ, որպեսզի ուշադրությունը շեղեին հայերի վրայից: Ծրագրի հեղինակը ժիրայրն էր: Ծրագիրը հավանության արժանացավ և ընդունվեց: Սկսեցին գործել համաձայն ծրագրի, և արդյունքն ակնհայտ եղավ: Ճիշտ է, ունեցան նկատելի հաջողություններ, սակայն դրանք ևս երկարատև չէին:

Թուրքական կառավարությունը իր ուշադրությունը կենտրոնացրեց, տիրող իրավիճակին լուծում տալու համար որոշվեց պատժել հանդուգն «ավազակախմբերին» և նրանց ղեկավարներին: 1893թ. ձմռան առաջին ամսում սկսվեց համատարած ձեռքարկություններ, որի հետևանքն էր Տիլքեկ Հովհաննեսի ձեռքով Փոքր Հայքի 82 քաղաքներում թուրքերեն ցրված հետևյալ արտահայտությունը. «Օսմանցիներ հասել են Աբդուլ Համիդ թագավորի բռնակալության վերջին օրերը, որը անպատվել է իսլամության անունը և կեղտոտել Օսմանի գահը: Այդ բռնակալը հափշտակել է կայսրությունը և ավերել է մեր սիրելի հայրենիքը: Եվ իր կառավարության գլուխը պահելու համար մեր հայրենասերների արյունն է հոսեցնում»: «Գործելու ժամը հասել է, վրեժխնդրության ձայնը բարձրացել մինչև երկինք, եղև ք քաջարի»¹:

Եռոզրատի կառավարությունը սարսափած այդ հայտարարությունից և կասկածելով, որ հայերի գործն է դա, սկսում է հազարավոր հայերի ձեռքարկությունը: Իսկ տգետ, մոլեռանդ թուրք ամբոխը սպանություններ է սկսում Կեսարիայի մոտ՝ հայկական գյուղերում: Ձեռքարկված էին արդեն Կյուլպենկը, Փանոսը, Միրջան և Տիլքեկ Հովհաննեսը: Թորոսը, լսելով 4 ընկերների ձեռքարկության լուրը, ծպտված դուրս է գալիս Կյուրիսի շուկան, սակայն հայտնի մատնիչ լրտես Էհմալ Օղլին անմիջապես հայտնում է լուրը ոստիկանությանը, վերջինս ձեռքարկվում է: Մոտ 90 Չեյլոներ ձեռքարկվեցին: Չարագործ սուլթանը հանգիստ սրտով վավերացնում է Էնկիլիբի դատարանի վճիռը, հուլիսի 18-ին կախաղանի դատապարտված հինգ հնչակյաններին արթնացնում են և ձեռնակապերով տանում տնօրենի սենյակ: Բերում են հայ քահանա, որպեսզի կրոնական պարտականությունները կատարեն: Խոստովանությունից հետո տանում են քաղաքի Թախտա Ղալե հրապարակ , ուր պատրաստվում են կախաղանի: Նախ կախաղան են բարձրացնում Մեծ Չեյլոյին՝ Թորոս Ծառուկյանին: Թորոսը ամենայն քաջությամբ ասում է. «Դուք ո՞վ եք, որ ինձ կախեք, կեցցե Հայաստան»: Այնուհետև կախաղան են բարձրացնում Կյուլպենկին, Տիլքեկ Հովհաննեսին, ով մինչև վերջին վայրկյանը գոռում էր իր անմեղության մասին, Միրջանին ու Փանոսին, ով անընդհատ հայհոյում էր սուլթանին ու թուրքական բոլոր սրբությունները:

Պատմության այս փուլում Չեյլոների ձախողումը հայ ժողովրդին թողեց անտեր, անօգնական ու անպաշտպան: Չեյլոները լինելով ազգային ազատագրական պայքարի դրսևորում, ձևավորվել են ավելի վաղ, քան ազգային կուսակցությունները: Ունենալով սահմանափակ հնարավորություններ՝ կարողացել են կազմակերպել ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ մյուս թույլ և անօգնական տարրերի պաշտպանությունը: Չեյլոների գործունեության ձախողումը առաջին հերթին կապված էր զուտ համախմբվածության

¹ Միրվարդ, Թորոս Ծառուկյան (Մեծ «Չեյլո»), Փրովիդենս, 1960, էջ 64-65:

բացակայության, արևմտահայ և արևելահայ բնեռների կապի բացակայության, միասնական, համաձայնեցված չգործելու և կուսակցությունների հետ չհամագործակցելու հետ:

Գրականություն

1. Սիրվարդ, Թորոս Ծառուկյան (Մեծ «Չելլօ»), Փրովիդենս, 1960
2. Էմմա Կոստանոյան, Ակնարկ արևմտահայ մշակ. և հասարակ.- քաղաքական կյանքի պատմության, Երևան, 2005:
3. Արշակ Ալպոյաճեան, Պատմություն Մալաթիոյ Հայոց, Պեյրուֆ, 1961:
4. Չորմիսյան Լ., Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմության, հատոր Բ, Պեյրուֆ, 1974:
5. Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ.Գ. Թեհրան, 1982 Երևան, 1990:
6. Հայոց պատմություն (խմբ. Խորհուրդ՝ Բարխուդարյան և ուրիշներ), հ. 3 գիրք 1, Երևան, 2010:

ՀՏԴ 941(479.243)

Մելինե Բադոյան

*Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ,
Պատմաբանասիրական ֆակուլտետ, բակալավրիատ
Գիտական ղեկավար պ. գ. թ. Լուսինե Պետրոսյան
էլ. փոստ՝ badoyan-93@mail.ru*

ԵՍԱՅԻ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆԻ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԴԵՐՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Բանալի բառեր՝ Եսայի Հասան-Ջալալյան, կաթողիկոս, Բարայել Օրի, ազատագրական պայքար, Կասպիական արշավանք, հայ-թուրքական պատերազմ

Սակիփագիր

XVIII դարի սկզբների ազատագրական պայքարի առաջնորդներից էր Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը, ով նշանակալի ազդեցություն է ունեցել հայկական ֆեոդալների ռուսական կողմնորոշման համար: Մինչև Բարայել Օրու մահանալը նրանք համագործակցում էին Ռուսաստանի կողմից զինված օգնություն կազմակերպելու գործում: Հետագայում Հասան-Ջալալյանը շարունակել է այդ քաղաքականությունը: Կասպիական արշավանքի տապալումից և ռուս-թուրքական պայմանագրից հետո այն փաստորեն տապալվեց, չնայած, Արցախում չգիտեին այդ մասին և շարունակում էին օգնություն կանչել ռուսներից: Միննույն ժամանակ, կաթողիկոսը համախմբիչ կարևոր դերակատարություն էր կատարում Արցախում:

Мелине Бадоян
ГТПИ, бакалавриат
науч. рук.: к.и.н. Лусине Петросян
badoyan-93@mail.ru

ОРИЕНТАЦИОННАЯ РОЛЬ ЕСАИ ГАСАН-ДЖАЛАЛЯНА В АРЦАХСКОЙ БОРЬБЕ

Ключевые слова: Есаи Гасан-Джалалян, католикос, Израел Ори, освободительная борьба, Каспийская кампания, армяно-турецкая война

Резюме

В начале XVIII века одним из лидеров освободительной борьбы был католикос Гандзасара Есаи Гасан-Джалалян, кто имел значительную роль в перемене внешнеполитической ориентации армянских феодалов в сторону России. Вплоть до смерти Израел Ори они сотрудничали ради организации военной помощи со стороны России. В дальнейшем Гасан-Джалалян продолжал эту политику. После провала Каспийской кампании и русско-турецкого договора она фактически вошла в тупик, хотя в Арцахе об этом не знали и продолжали звать на помощь. В то же время католикос в Арцахе выполнял важную объединяющую роль.

Meline Badoyan

GSPI, Baccalaureate

Supervisor: Ph. Lusine Petrosyan

ORIENTATION ROLE OF YESAI HASAN-JALALYAN IN ARTSAKH STRUGGLE

Keywords: Esai Hasan-Jalalyan, liberation struggle, catholicos, Israel Ory, Caspian campaign, Armenian-Turkish war.

Summary

One of the leaders of 18th century liberation struggle is catholicos of Gandzasar who had an important influence for the Russian orientation of Armenian fеоffees. Until Israel Ory's death they cooperated in the field for the organization of forced help from the Russian side. Then Hasan-Jalalyan continued that policy. After Caspian campaign has failed and Turkish-Russian agreement in fact it failed, notwithstanding that Artsakh didn't know about it ask for help from Russians. At the same time the catholicos played an important united role in Artsakh.

XVIII դարում Իսրայել Օրու (1659-1711թթ.) ջանքերով հայ ազատագրական մտքի - պատմության մեջ կատարվեց բեկում՝ արևմտաեվրոպական կողմնորոշումն իր տեղը զիջեց ռուսական կողմնորոշմանը: Ազգային ինքնության պահպանման և միասնական պետականության վերստեղծման համար հայության ամենավճռական պայքարի ընթացքում էական դերակատարություն ունեցավ Արցախի աշխարհը: Եվ դա պատահական չէր, ինչպես ակնառու պատմաբանն էր նշում. «...Ղարաբաղի լեռնաստանում էր, որ ծնվեց և գլուխ բարձրացրեց հայրենիքի ազատագրության գործը, այս բնական էր, նա չէր կարող ոչ ծնվել, ոչ էլ սնվել այնպիսի մի տեղ, ուր չկար հայ ազնվականություն, իբրև իշխանության կազմակերպված ուժ և իբրև ռազմիկ տարրերի առաջնորդ: Ղարաբաղն էր, որ ուներ այդ բոլորը: Ղարաբաղն էլ կարող էր դառնալ հայոց ազատագրության պատմության օրորոց»¹:

Դեռևս XVIIդ. վերջում քաղաքական ասպարեզ էր իջել ժամանակի հայ հասարակական-քաղաքական մտքի և ազատագրական պայքարի ամենակարկառուն դեմքը՝ Առանշահիկների թագավորական տոհմի ժառանգ, Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը (1701-1728թթ.)²: 1701թ. նստելով Գանձասարի կաթողիկոսական գահին՝ նա Գանձասարը դարձրեց ազատագրական շարժման քաղաքական կենտրոնը՝ Արցախի հոգևոր ու աշխարհիկ տերերի հավաքատեղին, իշխողների մի խորհրդարան, որտեղ դիվանագիտական հարաբերություններ ու ռազմական ծրագրեր էին քննարկվում ու մշակվում: Եսայի Հասան-Ջալալյանը՝ որպես Արցախի կաթողիկոս և ազատագրական շարժման ղեկավար, Իսրայել Օրուն ցույց էր տվել բարձր մակարդակի ընդունելություն և գորավիզ կանգնել նրա ազատագրական ծրագրերի կենսագործմանը: Եսայի Հասան-Ջալալյանն անգամ պատրաստակամություն էր հայտնել ռուսաստանյան իր թեմն այցելելու պատրվակով Օրու ուղեկցությամբ մեկնել Մոսկվա: Հետագայում այդ մասին Եսային գրում է Պետրոս Մեծին. «Իսրայել Օրին դեսպանն եկն երկրիս Հայոց և զհամբաւ բարեմաղթութեանդ սփռեալ տարածեաց ի լսելիս մեր ամենեցուն. և այնքան յորդորեցաք ի սէր քո մինչ ես իմովք միաբանիք էլեալ ընդ նմա հանդերձ եկինք մինչև ի Հաշթարախան քաղաք առ ի տեսութիւն և երկրպագութիւն մեծ և բարձր թագավորութեանդ»³: 1711 թ. ամռանը Օրին և Եսայի Հասան-Ջալալյանը մեծ դժվարությամբ հասան Աստրախան, այստեղ Օրուն հետապնդում էին

¹ Լեո, Երկերի ժողովածու, հ. III, գ. II, Եր., 1973, էջ 27:

² Է. Դանիելյան, Գանձասարի պատմություն, Եր., 2005, էջ 216:

³ Լ. Մկրտումյան, Ազվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ., Եր., 2006, էջ 85:

տեղական իշխանությունները՝ պատճառաբանելով, որ առանց մաքս վճարելու մեծ քանակությամբ արտասահմանյան ապրանքներ է տանում, որի մի մասը բռնագրավեցին, իսկ մյուս մասն էլ կողոպտեցին⁴: Օրին առանց ապրուստի միջոցների մնաց Աստրախանում, այնուհետև անհասկանալի պայմաններում 1711 թ. օգոստոսին մահացավ: Իսրայել Օրու հետ Աստրախան եկած Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը Օրու մահից հետո վերջինիս թաղելով Աստրախանի հայկական եկեղեցու բակում, վերադառնում է Արցախ⁵:

Հարկ է նշել, որ Եսայի Հասան-Ջալալյանի շուրջը համախմբվեցին Արցախի և Սյունիքի հոգևոր ու աշխարհիկ տերերը, որոնց վերջինս ջանասիրաբար նախապատրաստում էր ինքնապաշտպանության: Եսայի Հասան-Ջալալյանը ինքնապաշտպանական ուժերի առաջնորդն էր ու ոգին, բոլորին հավաստիացնում էր, որ հայությունը պիտի տա իր ամենաճակատագրական կռիվը պարսկական իշխանությունների դեմ: 1714 թ. նա Գանձասարի վանքում Արցախի հինգ մելիքների մասնակցությամբ գումարեց գաղտնի ժողով⁶: Ժողովը, երկար ու բուռն քննարկելով հայ ժողովրդի ներկա վիճակը, իրական գնահատական տալով հայության առջև ծառայած մարտահրավերներին, ընդունում է 23 կետից բաղկացած մի կանոնադրություն, որը պետք է ուղեցույց դառնար արցախահայության կյանքի կազմակերպման համար: Այդ կանոններից էին, մասնավորապես՝

ԺԱ. Իրաքանչիւր մելիք պարտաւոր է գահերէց ճանաչել Ջալալեան (ճիշտն ու ամբողջականը՝ Հասան-Ջալալյան – Հ-Ջ. Ս.) մելիքները եւ թէ՛ յայտնի եւ թէ՛ գաղտնի ժողովատեղի ընդունիլ Գանձասարի վանքը: Ամէն զօրավար հնազանդելու է իւր մելիքի հրամանին, ամէն գնդապետ իւր զօրավարին եւ ամէն զօրական իւր գնդապետին եւն:

ԺԲ. Իրաքանչիւր մելիք պարտաւորուած կը լինի պահել Վ (3000) կանոնաւոր զօրք, փորձառու զօրավար, հաւատարիմ սուրհանդակներ եւ պատրաստութիւններ:

ԺԳ. Իրաքանչիւր մելիք պարտաւոր է արթուն հսկել իւր սահմաններին, եւ եթէ վտանգ կը նշմարէ թշնամեաց կողմից, անմիջապէս պետք է հաղորդէ միւսներին:

ԺԵ. Ամէն ոք (մելիք) պարտաւոր է ամրապնդած պահպանել ներքին սիրոյ եւ միաբանութեան կապը, միաձոյլ զօրութեամբ արտաքնոց դէմ կռուելու:

ԺԶ. Մեծ կամ փոքր պատերազմներն կը մղուին բոլոր մելիքների, զօրավարների եւ գնդապետների որոշելուց յետոյ: Անակնկալ կամ յանկարծակի դէպքերն բացառութիւն կը լինին:

ԺԷ. Հայրենեաց եւ կրօնի դէմ դաւաճանութիւն եւ ծանր յանցանք գործողն, թէ՛ մելիք լինի, թէ՛ զինուորական եւ թէ՛ ժողովրդական, կը պատժուի կրօնական եւ մելիքական խառն ժողովոյ որոշած պատժով:

ԺԸ. Ո՛չ այլագգի իշխանաւորաց հետ խնամութիւն հաստատել եւ ո՛չ երկպառակութեամբ նոցա յարիլ:

ԺԹ. Եթէ օժանդակութեան համար զօրեղ տէրութեան դիմելու հարկն զգալի լինի՝ կրօնական եւ աշխարհական խառն ժողովով որոշելու է առաջարկելի պայմանները եւ պահանջները:

Ի. Իրաքանչիւր մելիք պարտաւոր է Հայրենեաց ընդհանուր շահերը իւր գաւառի շահերից վեր դասել եւ իւր գաւառի շահերը իւր անձնական շահերից եւ օգուտներից:

ԻԲ. Ամէն մելիք պարտաւոր է գտնուիլ իւր զօրաց գլխին պատերազմի ժամանակ եւ խրախուսել քաջասրտութեամբ իւր զօրքը եւ զօրավարը: Բացառութիւն է հիւանդութեան բանաւոր պատճառն:

ԻԳ. Մեզանից ով որ կը յանդգնի սոյն կանոններին հակառակը գործել, Հայրենեաց եւ կրօնի թշնամու կողմն անցնիլ, նորա հետ միաբանելով Հայրենեաց հանգստութիւնը վրդովել, հայը հայի դէմ թշնամի յարուցանել եւ արհուսահեղութիւն պատճառել՝ այնպիսին մահուան պատժով կը պատժուի, միւս մելիքներն կը գրաւեն նորա բերդը եւ ինչքը ցնոր տնօրէնութիւն...⁷

»:

⁴ Վ. Ա. Պարսամյան, Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական բախտը, Եր., 1978, էջ 16:

⁵ Դանիելյան, նշվ. աշխ., էջ 220:

⁶ Դանիելյան, նշվ. աշխ., էջ 221:

⁷ Հասան-Ջալալյան Ս. Ռ., Կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի քաղաքական գործունեությունն ու պատմագրական ժառանգությունը. «Լրաբեր Հասարակական Գիտությունների», 2011, N 3, էջ 87:

Ժողովի վերջում Եսայի կաթողիկոսն ու մելիքները ստորագրում են կանոնադրության բնագիրն ու արտագրված հինգ օրինակները, ապա մելիքներից յուրաքանչյուրը, իր հետ վերցնելով կանոնադրության մեկ օրինակ, համբուրում է տաճարի սուրբ բեմը և հեռանում⁸:

Արցախի պաշտպանական համակարգն անխոցելի դարձնելու նպատակով Եսայի Հասան-Ջալալյանի հրամանով մելիքները կարգի են բերում իրենց գորքերը, ամրացնում բերդերն ու ամրոցները: Արցախում հին ժամանակներից գոյություն ունեին սղնախներ, որոնց կողքին էլ կառուցվեցին նորերը: Ընդհանուր հաշվով Արցախում կար 6 սղնախ⁹: Բոլոր սղնախները ղեկավարվում էին մեծ սղնախի կողմից, որի գլուխ էր կանգնած Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը¹⁰: Եսայի Հասան-Ջալալյանի տեղեկությամբ, որը նաև Արցախի գորքերի գերագույն հրամանատարն էր, Արցախի սղնախներում տեղակայված էր 40.000 զորք, իսկ եթե անհրաժեշտ լիներ, ապա արցախյան զինուժի թվաքանակը կավելանար ևս 40.000-ով: Թիֆլիսի Մինաս (մոտ 1658-1740թթ.) արքեպիսկոպոսը խոսում էր նաև արցախյան 100 հազարանոց ռազմուժի մասին¹¹: Ահա այսպես էր նախապատրաստվել Արցախ աշխարհը սպասվող պարսկա-թուրքական արշավանքների դեմ:

Այսպիսին էր իրավիճակն Արցախում, երբ Պետրոս I-ը սկսեց նախապատրաստվել իր կասպիական արշավանքին: Պետրոս I-ը ցանկանում էր իր տիրապետությունը հաստատել Կասպից ծովի առափնյա շրջաններով անցնող և դեպի Հնդկաստան տանող մետաքսի առևտրական ճանապարհի վրա: Ռուսական իշխանությունները ուշադիր հետևում էին Պարսկաստանում տեղի ունեցող անկառավարելի իրավիճակին: Նրանք շահագրգռված էին իրենց ռազմարշավն իրականացնելիս օգտագործել Գանձասարի կաթողիկոսի ազդեցությունն ու դիրքը: Ամենայն հայոց կաթողիկոս Աստվածատուր Համանդացին, չնայած իր հավանությունն է հայտնել Պետրոս Մեծի անդրկովկասյան ծրագրերին, սակայն գրավոր օժանդակություն ցույց տալուց հրաժարվել էր պատճառաբանելով, որ դրանով կշարժի պարսիկների զայրույթը¹²: Ի տարբերություն Աստվածատուր Համանդացու՝ Եսայի Կաթողիկոսն ուրախությամբ հանձն է առել աջակցել ցարի ծրագրերի իրականացմանը և 1716 թ. օգոստոսի 10-ին նամակով դիմել էր Պետրոս I-ին և խնդրել ավելի հստակ տեղեկացնել նրա ծրագրած քայլերի մասին. «զի առաւել հաստատ լիցուք ի վերայ խորհրդեանս»¹³: Ինչո՞վ էր պայմանավորված Հարավային Կովկասում Ռուսաստանի ունեցած ծրագրի հանդեպ երկու կաթողիկոսական աթոռների որդեգրած վերաբերմունքի տարբերությունը: Նախ պետք է նշենք, որ այդ տարբերությունը բխում էր այն հանգամանքից, որ Ամենայն հայոց կաթողիկոսը բազմաթիվ թեմեր ուներ ոչ միայն Հարավային Կովկասում, այլև Պարսկաստանում և Օսմանյան Կայսրությունում: Պարզ է, որ նրա ռուսամետ դիրքորոշման դեպքում Էջմիածինը կգրկվեր այդ երկրներում ունեցած թեմերից: Բացի դրանից Ամենայն հայոց կաթողիկոսությունը գտնվում էր բեկլարբեկ Մեհր-Ալի խանի ուժեղ վերահսկողության տակ¹⁴: Չնայած նրան, որ Համանդացին կողմ էր Հայաստանի ազատագրությանը, բայց միևնույն ժամանակ նա վախենում էր վտանգի ենթարկել կաթողիկոսական աթոռը:

Այդ նույն ժամանակ իրադրությունը Պարսկաստանում գնալով սրվում էր: Լեզգիների և թուրքերի ասպատակություններից տուժում էր Ղարաբաղի հայ բնակչությունը: Այս իրադարձությունների կապակցությամբ Մաղաքիա Օրմանյանը գրել է. «Տագնապալից կդառնայ հայերուն կացութիւնն ալ Էջմիածնի եւ Աղուանից կաթողիկոսական վիճակներուն մէջ հաւասարապէս... Եսայի, որ շարժումի գաղափարներով վառուած էր, ինքն ալ զգաց, որ արկածախնդիր կերպեր կրնան վնասակար ըլլալ, ուստի մէկ կողմէն յատուկ պատուիրակով Մինասին կը յանձնարարէր մեծ զգուշաւորութիւն և միւս կողմէն՝ 1719-ին անձամբ Էջմիածին գալով և խոստովանելով գյանցանս իր Աստվածատուրի հետ կը հաշտուէր»¹⁵:

⁸ Դանիելյան, նշվ. աշխ., էջ 223:

⁹ Բարխուդարյանց Մ., Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 69-70:

¹⁰ Բարխուդարյանց, նշվ. աշխ., էջ 79:

¹¹ Հասան-Ջալալյան Ս. Ռ., նշվ. Աշխ., էջ 87:

¹² Պ. Հովհաննիսյան, Ամենայն Հայոց կաթողիկոսները, էջ 218:

¹³ Լեո, Հայոց պատմություն, հ. III, էջ 109-110:

¹⁴ Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 87:

¹⁵ Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, Բեյրութ, 1959 թ, էջ 764:

Ռուսական դեսպան Վոլինսկին Անդրկովկասում Ռուսաստանի հեղինակությունը բարձրացնելու և տեղացիների համակրանքը շահելու համար ծավալեց կարևոր դիվանագիտական գործունեություն: Նա հանդիպումներ ունեցավ Մինաս Վարդապետի, Վրաստանի թագավոր Վախթանգ VI-ի ներկայացուցիչ Փարսադան բեկի և ուրիշների հետ¹⁶: Պետրոս I-ի արշավանքն ուներ ինչպես բացահայտ, այնպես էլ թաքուն նպատակներ: Ռուսական կողմը պաշտոնապես հայտարարել էր, թե արշավանքը ձեռնարկում է միմիայն Պարսկաստանին ապստամբներից պաշտպանելու նպատակով: Այս ձևով էլ նրանք փորձում էին շահել պարսիկների համակրանքը: Բացի դրանից, Պետրոս I-ը նպատակադրվել էր. 1. անվտանգ դարձնել Կասպից ծովով կատարվող ռուսական առևտուրը, 2. կասեցնել Պարսկաստանի նկատմամբ թուրքական ագրեսիան¹⁷:

Ինչպես հայտնի է Պետրոս I-ի Կասպիական արշավանքը նախատեսված պլանով չընթացավ: Կայսրը, հանդիպելով ներքին և արտաքին լուրջ դժվարությունների, ստիպված եղավ նոր պայմաններին համապատասխան վերանայել և անսպասելի փոփոխություններ մտցնել 1722թ. ռազմական գործողություններում: Տվյալ ժամանակահատվածում խիստ աննպաստ էին դասավորվել միջազգային հարաբերությունները Ռուսաստանի համար: Գլուխ էին բարձրացրել Օսմանյան Թուրքիան և պետք էր կանխել Թուրքիայի արշավանքը Մերձկասպյան շրջանները, մյուս կողմից էլ նրա թիկունքում կանգնած Անգլիան ու Ֆրանսիան Ռուսաստանի դեմ դավեր էին նյութում, ինչպես նաև եռանդուն գործողություններ էին սկսել Թուրքիայի վասալներ Դրիմի խանն ու Դադստանի ավատատերերը¹⁸: Ստեղծված աննպաստ իրավիճակում Պետրոս I-ը Դերբենդը գրավելուց անմիջապես հետո այնտեղ ռազմական խորհուրդ է հրավիրում, որը որոշում է առայժմ բավարարվել Կասպիականի ափերի նվաճումով, ամրանալ գրաված վայրերում, լավ նախապատրաստվել և 1723 թ. շարունակել ու ավարտին հասցնել արշավանքը: Դերբենդում թողնելով գեներալ Միխայիլ Մատյուշկինի (1676-1737) զորամասը՝ 1722 թ. հոկտեմբերի 4-ին Պետրոս I-ը վերադառնում է Աստրախան: Դերբենդում կառուցվում է Սուրբ Խաչ բերդը, որտեղ նույնպես կայազոր է թողնվում¹⁹: Ցարը Մատյուշկինին հրամայել էր ռազմական հետագա գործողությունների ժամանակ գրավել միայն մերձծովյան շրջանները: Հայ-վրացական զորքերին միանալու մասին որևէ հրահանգ չկար: Իսկ հայ-վրացական զինված ուժերը Չոլակում ապարդյուն սպասում էին ռուսական զորքերին: Գրեթե մեկ ամիս²⁰ սպասելուց հետո՝ 1722թ. աշնան վերջին նրանք ստիպված վերադարձան իրենց երկրները:

Պետրոս I-ի ձախողված պարսկական արշավանքից հետո ապստամբած հայերն ու վրացիները հայտնվեցին խիստ աննպաստ իրավիճակում: Շահ Թահմասպ II-ը (1722-1732)²¹, Վախթանգ VI-ին մեղադրելով պետական դավաճանության մեջ, նրան գահընկեց հայտարարեց: Թուրքական զորքերը ներխուժեցին Վրաստան: Գահից զրկված Վախթանգն իրեն հավատարիմ զինված ուժերով ապաստանեց լեռներում, ապա 1200 հոգով անցավ Ռուսաստան և իր մահկանացուն կնքեց Աստրախանում: Հայկական ապստամբ ուժերը ,զրկվելով իրենց դաշնակցից՝ Վրաստանից, ստիպված էին միայնակ շարունակել պայքարը: Այն գլխավորելու ծանր ու դժվարին գործը ստանձնել էր Արցախի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը: Վերադառնալով Արցախ՝ հայկական զինված ուժերը ազատագրական կռիվների միջոցով երկրամասից դուրս քշեցին պարսկական վարչակազմին և զորամասերին: 1722թ. վերջին արդեն ամբողջ Արցախն ազատագրված էր պարսկական իշխանության մնացուկներից: Տեղական կառավարումն անցավ հայերի ձեռքը, վերացան պարսկական կառավարման ու հարկային համակարգերը: Ոչնչացվեցին հարկային բոլոր հին ցուցակները, ժողովուրդը ազատվեց դարեր ի վեր սրբագործված բռնություններից ու կամայականություններից: Աստիճանաբար մտցվում էին կառավարման, հարկահավաքման միանգամայն նոր ձևեր:

¹⁶ Աղայան Ծ.Պ., Ռուսաստանի պատմական դերը հայ ժողովրդի կյանքում, «Լրաբեր հասարակական գիտություններ», Երևան, 1975, էջ 5:

¹⁷ Հասան-Ջալալյան Ս. Ռ., նշվ. աշխ., էջ 88:

¹⁸ Աղայան Ծ. Պ., նշվ. աշխ., էջ 6:

¹⁹ Պարսամյան, նշվ. աշխ., էջ 26:

²⁰ Եսայի Հասան-Ջալալյանց, Պատմություն Համառոտ Աղուանից երկրի, Ստեփանակերտ, 2007, էջ 60:

²¹ Բայրության Վ., Իրանի պատմություն, Եր., 2005, էջ 361:

Սղնախներում ամրացած հայ զինվորականությունը ապահովում էր Արցախ-Ղարաբաղի անկախությունը: Շուրջ 14 տարի՝ 1722- 1736 թթ., Արցախի գավառներն այլևս հարկ չէին վճարում պարսիկ կամ թուրք բռնակալներին և ունեին անկախ կարգավիճակ²²:

1723 թ. հունիսի 3-ին ռազմական ու դիվանագիտական նշանավոր գործիչների ներկայությամբ ցարն ընդունում է Ս. Պետերբուրգում բնակվող մեծահարուստ վաճառական ծնունդով արցախցի²³ Իվան Կարապետին, որին անձամբ ճանաչում էր: Իվան Կարապետին նա հանձնում է. «Պատվական Հայոց ասկին, որն որ Պարսից երկրումն էք բնակեալ» խորագիրը կրող հրովարտակ-նամակն ու մի առանձին հուշագիր՝ ի պատասխան այն խնդրագրերի, որ իրեն էր ուղարկել Եսայի Հասան-Ջալալյանը: Կայսրը հայերին հուսադրում էր, թե ինքն անպայման օգնելու է նրանց, միայն թե չթուլացնեն դիմադրությունը, չկորցնեն հույսը և համբերեն այնքան, մինչև որ ինքն ի վիճակի կլինի նրանց օգնության գնալու հարկ եղած և հզոր միջոցներով²⁴:

Սակայն 1724 թ. հունիսի 12-ին Կոստանդնուպոլսում կնքվում է ռուս-թուրքական պայմանագիր, որն անսպասելի ծանր հարված էր հայ ազատագրական շարժմանը: Պայմանագրով, փաստորեն, Թուրքիան տեր դարձավ Վրաստանին, Հայաստանին և Պարսկաստանի ամբողջ հյուսիս-արևմտյան մասին²⁵: Թուրքերն անցան լայնածավալ հարձակման՝ կենտրոնացնելով իրենց ուժերը Երևանը և Թավրիզը գրավելու համար²⁶: Երևանը գրավելուց հետո թուրքերը նախապատրաստվեցին Ջանգեզուրի, Ղարաբաղի և Գանձակի վրա արշավել²⁷: Նրանք շատ լավ հասկանում էին, որ դեպի Կասպից ծով տանող ճանապարհին իրենց առջև ծառացած մեծ խոչընդոտն Արցախ աշխարհն է իր պաշտպանական հզոր համակարգով՝ Հայոց սղնախներով: Դիմադրությունը բացառելու համար թուրքական բանակի հրամանատար Արիֆ Ահմեդ փաշան հորդորում է Ամենայն հայոց կաթողիկոս Աստվածատուր I Համադանցուն (1715-1725)²⁸ նամակ գրել Արցախի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանին, որպեսզի Արցախի հայերը զենքը վայր դնեն և հանձնվեն թուրքերին: Ամենայն հայոց կաթողիկոսը տեղի է տալիս թուրք փաշայի հորդորներին և ասում է, որ հակառակ դեպքում թուրքերը գրավելով Ղարաբաղը, ոչ մեկին չեն խնայի²⁹: Սակայն չի կատարվում Աստվածատուր Համադանցու հանձնարարությունը: Ընդհակառակը, անմիջապես գործի անցնելով՝ սղնախներն ավելի է ամրացվում՝ քաջալերելով արցախահայությունը:

Հերոսական պայքար մղեց արցախահայությունը թշնամու դեմ, սակայն ուժերն անհավասար էին և ռուսական օգնությունն անհրաժեշտ էր: 1727թ. փետրվարի 28-ին Եսայի Հասան-Ջալալյանը մի պատվիրակություն է ուղարկում Դերբենդ՝ մերձկասպյան ռուսական զորքերի գլխավոր հրամանատար ֆելդմարշալ Վասիլի Դոլգորուկովի (1667-1746թթ.) մոտ՝ ստանալու Եկատերինա I-ի (1725-1727թթ.) խոստացած օգնությունը³⁰: Իշխանը պատասխանում է, որ նրանց զորք հատկացնելու հրաման չունի: Իսկ մայիսի 11-ին Դոլգորուկովն իր կառավարությանը հղած զեկույցում հայտնում է. «...պետք է զարմանալ, թե հայերն ինչպես են դիմանում, երբ նրանք հարկադրված են մեն-մենակ պատերազմել թուրքական բանակների դեմ...մարդկային մտքից վեր է, թե ինչպես են դիմանում հայերը այդքան զորեղ թշնամու առաջ»³¹:

Օսմանյան հրամանատարությունը, համոզված լինելով, որ զենքի ուժով հնարավոր չէ գրավել Արցախը, փորձեց կաշառել Եսայի Հասան-Ջալալյանին: Սակայն հայրենիքի նվիրյալ

²² Ուլուբաբյան Բ, Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Եր., 1994, էջ 141, Կարապետյան Բ., Գյուլիստան նամե, Մեծ Կուսնք, գիրք I, Եր., 2005, էջ 145:

²³ Աբրահամյան Ա., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Եր., 1953, էջ 24-25:

²⁴ Հասան-Ջալալյան Ս. Ռ., նշվ. Աշխ., էջ 91:

²⁵ Հայ ժողովրդի պատմություն, ՀՄՄՀ ԳԱ հրատ., հ. 4, Եր., 1972, էջ 156:

²⁶ Վ. Մ. Մարտիրոսյան, Անդրկովկասի ժողովուրդների համագործակցությունը և Երևանի 1724 թվականի պաշտպանությունը, «Պատմաբանասիրական հանդես», 1965, N 2, էջ 187-191:

²⁷ Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 106-107:

²⁸ Դանիելեան Է., Գանձասարի պատմություն, էջ 243:

²⁹ Մկրտումյան, նշվ. աշխ., էջ 107:

³⁰ Մկրտումյան, նշվ. աշխ. էջ 109:

³¹ Պարսամյան, նշվ. աշխ., էջ 35:

կաթողիկոսը կտրականապես մերժեց թուրքերին: Օսմանյան Թուրքիան, որը գրավել էր Իրանական Ատրպատականը, ողջ Անդրկովկասը, չկարողացավ վերջնականապես ծնկի բերել արցախցիներին³²:

Անդառնալի կորուստ էր հայ ժողովրդի համար Եսայի Հասան-Ջալալյանի մահը 1728թ.: Չնայած դրան՝ հայ ազատագրական ուժերի մյուս մասը 1729 թվականի սկզբներին Ավան և Թարիսի հարյուրապետերի գլխավորությամբ նոր պատվիրակություն ուղարկեց ռուսական բանակ, սակայն նրանք դրական պատասխան չստանալով, այլևս չվերադարձան Արցախ: 1729-1731 թվականներին թուրքական նվաճման դեմ պայքարը շարունակում էր Գյուլիստանի սղնախը, որի հրամանատարը հայկական աղբյուրներ համաձայն, կոչվում էր «Աբրահամ սպարապետը»: Այսուհանդերձ, 1730-ական թվականներին թուրք նվաճողների դեմ պայքարի կազմակերպման համար Արցախում այլևս չկար միասնական հրամանատարություն: Արցախը նվաճվեց թուրք զավթիչների կողմից, սակայն արցախահայությունը ցած չդրեց զենքը և շարունակեց ազատագրական պայքարը:

Բարձր գնահատելով հայրենանվեր կաթողիկոսի գործունեությունը՝ Լեոն գրել է. «Իր այս պաշտոնին Հասան-Ջալալյան կրոնապետը վերաբերվել էր մի անդրդվելի շիտակությամբ և հավատարմությամբ, որին բոլորովին չէր համապատասխանում ռուսական ցարի երկդիմի քաղաքականությունը... Այս մի շատ ծանր հարված էր, որ կրում էր Հայոց ազատագրական գործը՝ զրկվելով Եսայու պես մի անխոնջ կազմակերպիչ ուժից և ոգևորված գաղափարախոսից»³³:

Եսայի Հասան-Ջալալյանը ազգային-ազատագրական շարժմանը հաղորդեց առավել գործնական ընթացք: Նա իր մեջ խտացրել էր երեք՝ կաթողիկոսի, զորավարի և պատմիչի կերպարները: Եթե կաթողիկոս Եսային Գանձասարի հոչակավոր վանքում աղոթք էր բարձրացնում առ Աստված հայ ժողովրդի փրկության համար, իսկ զորավարը արցախյան 40 հազարանոց ինքնապաշտպանական բանակի հաղթական առաջնորդն էր, ապա պատմիչը՝ որպես դեպքերի գլխավոր մասնակից ու ակնատես, ամենայն մանրամասնությամբ գրի էր առնում բոլոր դեպքերն ու իրադարձությունները՝ գալիք սերունդներին հանձնելով ժամանակի կարևոր անցքերը: Նրա մի ձեռքում փետրագրիչն էր, մյուսում՝ սուրը, իսկ կուրծքը զարդարում էր կաթողիկոսական խաչը: Նա ապացուցեց, որ Առանշահիկ Հասան-Ջալալյանները, սկսած տոհմի փառավոր նախապապից՝ Հասան-Ջալալ-Դոլայից, հայ ժողովրդի ճակատագրի և հայոց պետականության կերտման գործում անուրանալի դերակատարություն են ունեցել:

Գրականություն Սկզբնաղբյուրներ .

1. Եսայի Հասան-Ջալալեանց, Պատմութիւն Համառօտ Աղուանից երկրի, Ստեփանակերտ, 2007:

Մենագրություններ .

1. Աբրահամյան Ա., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1953:
2. Բայբուրթյան Վ., Իրանի պատմություն, Երևան., 2005:
3. Բարխուդարյանց Մ., Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս:
4. Դանիելյան Է., Գանձասարի պատմություն, Երևան, 2005:
5. Լեոն, Հայոց պատմություն, հ. III, Երևան, 1973:
6. Կարապետյան Բ., Գյուլիստան նամե, Մեծ Կուանք, գիրք I, Երևան, 2005:
7. Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ., հ. 4, Երևան, 1972:
8. Հովհաննիսյան Պ., Ամենայն Հայոց կաթողիկոսները, Երևան, 2001:
9. Մկրտումյան Լ., Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ., Երևան, 2006:
10. Պարսամյան Վ. Ա., Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական բախտը, Երևան, 1978:

³² Կարապետյան Բ., նշվ. աշխ., էջ 177-178:

³³ Լեոն, նշվ. աշխ., էջ 172-173:

11. Ուլուբաբյան Բ, Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Եր., 1994:

12. Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, Բեյրութ, 1959 թ:

Հոդվածներ.

1. Աղայան Ծ. Պ, Ռուսաստանի պատմական դերը հայ ժողովրդի կյանքում, «Լրաբեր հասարակական գիտություններ», Երևան, 1975:

2. Հասան-Ջալալյան Ս. Ռ., Կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի քաղաքական գործունեությունն ու պատմագրական ժառանգությունը. «Լրաբեր Հասարակական Գիտություններ», 2011:

3. Վ. Մ. Մարտիրոսյան, Անդրկովկասի ժողովուրդների համագործակցությունը և Երևանի 1724 թվականի պաշտպանությունը, «Պատմաբանասիրական հանդես», 1965, N 2:

ՀՏԴ 941(479.25)-054

Մերրի Պետրոսյան

Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ,

Պատմաբանասիրական ֆակուլտետ, բակալավրիատ

Գիտական ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ Վարդիթեր Աբրահամյան

էլ. փոստ՝ merri.petrosyan.1994@mail.ru

ԻՍՐԱՅԵԼ ՕՐՈՒ ՊՖԱԼՑՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՐՑԻ

Բանալի բառեր՝ Պֆալցյան ծրագիր, ռազմական ուժեր, համատեղ պայքար, արշավանք, քաղաքական իրավիճակ

Անվիճվում

Տվյալ հոդվածում բացահայտվում է Իսրայել Օրու Պֆալցյան ծրագրի էությունը որպես առաջին մշակված ծրագիր, որը սկիզբ էր դնում հայ ազգային-ազատագրական պայքարի քաղաքական գիտակցությանը: Շարադրվում են ծրագրի կետերը ու հիմնական պայմանները: Ըստ որի Արևելյան Հայաստանն ազատագրվելու էր 20-25 օրվա ընթացքում: Պֆալցյան ծրագրով ավարտվեց հայ ազատագրական շարժման անծրագիր փուլը և այն դարձավ գիտակցական ու կազմակերպված:

Մերրի Պետրոսյան

ԴԴԻԻ, բակալավրիատ

Մ. Պ. Վարդիթեր Աբրահամյան

О ПФАЛЦСКОМ ПЛАНЕ ИСРАЙЕЛА ОРИ

Ключевые слова: Пфалцкий план, военные силы, совместная борьба, кампания, политическая ситуация

Резюме

В данной статье выясняется суть Пфалцского плана Исраела Ори как первого задуманного проекта с которого начинается политическое сознание армянской национально-освободительного движения. Представлены основные пункты и условия плана. По нему Восточная Армения должна быть освобождена за 20-25 дней. Пфалцским планом был завершён непроектированный этап армянского освободительного движения и оно стало осмысленным и организованным.

Merry Petrosyan
GSPI, Baccalaureate

Supervisor: Ph.D. Varditer Abrahamyan

ABOUT THE PFALZ PLAN OF ISRAEL ORY

In this article is cleared up the essence of the Pfalt's plan of Israel Ory as the first processed plan, which created the political consciousness of Armenian national-liberation struggle. The main conditions and points are discoursed closely. Under the plan Eastern Armenia will be liberated during 20-25 days. With this plan anplanned stage of Armenian-liberation movement has ended and becomes organized and realized.

1699 թ. ապրիլի 29-ին Իսրայել Օրին մելիքների դիմումնագրերով և Մինաս վարդապետի ուղեկցությամբ մեկնեց Եվրոպա¹: Նրանք Եվրոպա ժամանեցին 1699 թ. սեպտեմբերին և առաջինը եկան՝ Դյուսելդորֆ Հովհան Վիլհելմի հետ հանդիպելու, սակայն վերջինիս հիվանդության պատճառով ստիպված էին վեց ամիս սպասել²: Այս հանգամանքն էլ պատճառ է հանդիսանում, որ Օրին մշակի Հայաստանի ազատագրության իր առաջին ծրագիրը, որը հայտնի է «Պֆալցյան ծրագիր» անունով: Այս ծրագրի նախնական անունը եղել է «Զինվորական արշավանք Հռենոսի ափից մինչև Թավրիզ»³: Փաստորեն, Պֆալցյան ծրագիրը առաջին մշակված ծրագիրն էր, որը սկիզբ էր դնում հայ ազգային-ազատագրական պայքարի քաղաքական գիտակցությանը, գործնական հողի վրա էր դնում ազատագրական պայքարի գաղափարախոսությունը: Պֆալցյան ծրագիրը բաղկացած էր 36 կետից: Ծրագրի համաձայն՝ եվրոպական երեք երկրներ՝ Ավստրիան, Տոսկանան և Պֆալցը, Հռոմի պապի հավանությամբ ու աջակցությամբ կազմելու էին հակաթուրքական Եռյակ դաշինք: Մա ուներ քաղաքական հիմք՝ նկատի ունենալով վերջին երկու երկրների շեշտված հակաթուրքական դիրքորոշումը: Հայաստանի ազատագրման համար ձեռնարկվելիք արշավանքի համաձայն՝ ունենալու է արևմտաեվրոպական խաչակրության բնույթ: Հայաստան արշավող զորքերի դրոշների վրա պատկերված էին լինելու Քրիստոսի խաչը և Գրիգոր Լուսավորչի պատկերը: Հետաքրքիր է Լուսավորչի պատկերի հիշատակումը: Բանն այն է, որ քրիստոնեության մուտքը Հայաստան և հայադավան եկեղեցու հիմնադրումը կապվում են Լուսավորչի անվան հետ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կաթոլիկ միսիոներները ևս մեծարում են Լուսավորչին ու նրան համարում են ընդհանրական եկեղեցու հայրերից մեկը՝ պնդելով, թե իբր եկեղեցիների միությունից հրաժարվող հայադավան եկեղեցին շեղվել է Լուսավորչի ուղղափառ ուղեգծից⁴: Փաստորեն, եկեղեցիների վերամիավորումը քարոզող միսիոներների պես Օրին ևս շահարկում է Լուսավորչի անունը: Լուսավորչի զինանշանով նա ևս կամենում էր գրավել հայ ժողովրդի սիրտը: Ծրագրում հաշվառված էին նաև թնդանոթներն ու հրացանները, վառոդն ու ձիերը, զորքն ու զինվորները, պարենն ու անհրաժեշտ մյուս պարագանները: Ծրագրի համաձայն՝ դաշնակիցների 25000 զորաբանակը 1700 թ. մայիսին սկսելու էր իր արշավանքը: Այդ բանակը անցնելու էր Բոհեմիայով, Լեհաստանով ու Ռուսաստանով այն Վոլգայի վրայով իջնելու էր Աստրախան: Այս զորքերին միանալու էր 2000 հայկական մի զորամաս, որը դաշնակիցներին ուղեկցելու էր Հայաստան: Ռուսաստանի տրամադրած նավերով բանակը տեղափոխվելու էր Հայաստան, ափ էր հանվելու պարսկական սահմանագլխին, որտեղից էլ պետք է սկսվեր ազատագրական արշավանքը Հայաստան: Ծրագրում կարևոր տեղ էր հատկացվում հայկական ապստամբական ուժերի գործունեությանը: Այն պահին, երբ դաշնակից ուժերը մուտք կգործեին Հայաստան, անմիջապես սկսվելու էր համընդհանուր զինված ապստամբություն, և 100000 զինված բանակի վրա էր ընկնում Հայաստանի

¹ Պ. Հովհաննիսյան, Հայ ազատագրական շարժումները (XV դարի կես- XVIII դարի վերջ), Երևան, 2010, էջ 29:

² Գեղամյանց, Իսրայել Օրին և իր քաղաքական ծրագիրը, Բաքու, 1914, էջ 16:

³ Հ. Հարությունյան, Իսրայել Օրի, Երևան, 1945, էջ 18:

⁴ Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ-2, Երևան, 1959, էջ 347:

ազատագրման գործը: Փաստորեն, օտար բանակի առկայությունը ազդակ էր ծառայելու, իսկ Հայաստանն ազատագրելու էին հայ ապստամբական ուժերը: Նշվում է նաև, որ ապստամբության անմիջապես սկսվելուց հետո 80000 արևմտահայերի մի զորաբանակ գալու էր օգնության: Ըստ Օրու Պֆալցյան ծրագրի՝ Արևելյան Հայաստանն ազատագրվելու էր 20-25 օրվա ընթացքում, այստեղ հաշվի էր առնվել պարսկական ռազմական ուժերի սակավությունն ու վատ զինված լինելը և դրան հակառակ՝ դաշնակիցների բանակի կազմակերպվածությունն ու տեխնիկան: Ներկայացնելով Իրանի ռազմական վիճակը՝ Օրին նշում էր, որ Իրանը հազիվ 5000 մարդ միայն կարող է, դուրս բերել եվրոպական ազատարարներին դիմադրելու համար, քանի որ կրելով վաչկատուն բնույթ՝ նրա զորքերը համախմբված չեն մի վայրում, այլ իրենց հոտերով ու ողջ տնտեսությամբ տեղադրված են լեռներում: Կարևոր գործոն էր նաև հայերի խանդավառությունն ու կամքը: Մակայն չափազանցություն էր հայ ապստամբական ուժերի թվաքանակը: Այս ծրագրի համաձայն Հայաստանի ազատագրմանը մասնակցելու էր նաև Ռուսաստանը, սակայն մեկ այլ ուղղությամբ: 30000 ռուսական բանակը Հյուսիսային Կովկասից շարժվելու էր դեպի Վրաստան և օգնելու էր վրացիներին՝ ազատագրվելու օտար տիրապետությունից⁵: Փաստորեն, սրանով Օրին շեշտում էր երկու ժողովուրդների համատեղ պայքարի անհրաժեշտությունը: Հայաստանն ազատագրվելու էր Եռյակ դաշինքի զորքերի կողմից, իսկ Վրաստանը՝ Ռուսաստանի կողմից: Անմիջապես վերականգնվելու էր Արևելյան Հայաստանի անկախությունը, որի թագավոր էր հռչակվելու Հովհան Վիլիելմը: Ազատագրված Հայաստանի սահմաններն ընդգրկելու էին՝ Լոռին, Գանձակը, Գեղարքունիքը, Արցախը, Սյունիքը, Նախիջևանը, Արարատյան դաշտը, Շիրակը, մայրաքաղաք էր հռչակվելու Երևանը⁶: Ռազմական արշավանքի ամբողջ ծախսերը հոգալու էին հայերը: Եվ այս հարցին Օրին պատասխանել է այսպես. «Զորագնդերը պիտի հոգացվեն մեր ծախսերով, և բոլոր ծախսերը, որ նորին կայսերական մեծությունը և մոնսինյոր Մեծ Դուքսը կանեն, կվերադարձվի եռապատիկ և ավելի, եթե հարկավոր է՝ մի տարվա ընթացքում, չհաշված ուրիշ օգուտներ, որոնք պիտի առաջանան այդ գործից»⁷: Այս ընթացքում ապահովվելու էր Թուրքիայի չեզոքությունը, որը հնարավոր էր դառնում հաշվի առնելով թուրք – պարսկական թշնամական հարաբերությունները: Այսպիսով, ազատագրվելու էր միայն Արևելյան Հայաստանը, իսկ Թուրքիայի հնարավոր միջամտության դեպքում ռազմական գործողություններ էին սկսվելու նաև նրա դեմ⁸:

Օրին հաշվի էր առնում արդեն 1699թ-ին Կառլովիցում Ավստրիայի ու Թուրքիայի միջև սկսված հաշտության բանակցություններն ու պայմանագիր կնքելու դեպքում՝ Ավստրիայի հնարավոր չեզոքության իրողությունը: Իրատեսական էր ծրագրի այն մասը, որը վերաբերում էր զուտ Անդրկովկասի քաղաքական կացությանն ու ռազմական վիճակին, հայ ազատագրական շարժման ծավալման հնարավորություններին: Այն, առանձին չափազանցություններով հանդերձ, իրականանալի ծրագիր էր: Ծրագիրը կազմված էր բանիմացությամբ ու խորաթափանցությամբ: Պարսկաստանի կացության մասին նա հանդես է բերում գովելի իրատեսություն: Կանխատեսվել ու հաշվի էին առնվել ոչ միայն Պարսկաստանի թուլացումն ու անկումը, այլ նաև Ռուսաստանի հնարավոր տարածաշրջանային հետաքրքրությունները և այդ հետաքրքրություններում Հայաստանի տեղն ու դերը: Օրու Պֆալցյան ծրագրի ռազմավարական գլխավոր խնդիրը նախագուշակական միջոցառումներով և արագ զորաշարժերով թշնամուն հանկարծակիի բերելն է և զրկելը նրան ինքնապաշտպանության և հարձակման միջոցներից: Ռազմավարության այս եղանակը դյուրանում էր այս ժամանակաշրջանում, երբ երկրի կենտրոնը չէր կարող անմիջապես իմանալ այն, թե ինչ էր կատարվում երկրի ծայրամասում:

Մակայն իրատես չէր ծրագրի այն մասը, որ վերաբերում էր համաեվրոպական շահախնդրություններին, որը և անմիջապես դրսևորվեց: Ծրագիրը Հովհան Վիլիելմին ներկայացվեց 1699 թ. հոկտեմբերին: Հովհան Վիլիելմը իր հավանությունը տվեց այս ծրագրին և Օրուն առաջարկեց մեկնել Վիեննա՝ Լեոպոլդ I կայսր մոտ, Տոկանա, Ավստրիա, Հռոմ և

⁵ Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 354-358:

⁶ Ա. Աբրահամյան, Իսրայել Օրի, Երևան 1978, էջ 62-63:

⁷ Նույն տեղում:

⁸ Նույն տեղում:

Ռուսաստան, առաջիկա արշավանքի կազմակերպման վերաբերյալ իր անունից պաշտոնական բանակցություններ վարելու⁹: 1700 թ. հունվարին Օրին ժամանեց Ֆլորենցիա, որտեղ Կոզմաս 3-րդ Մեդիչին հավաստում է հավատարմության դաշինքն ու խոստանում էր տրամադրել համապատասխան ռազմական ուժ, ֆինանսներ և տեխնիկա: Նույն թվականի հունիսին Օրուն ընդունում է Հռոմի պապը և խոստանում է հնարավոր բոլոր միջոցներով աջակցել ապագա արշավանքի իրագործմանը¹⁰: 1700 թ. Օրին և Մինաս վարդապետը Վիեննայում էին, ուր ընդունելության արժանացան Լեոպոլդ I կայսեր կողմից: Եվրոպայի ամենաազդեցիկ ու հզոր տիրակալներից մեկը շեշտված հարգանքով ընդունեց հայ բանագնացին ու բավականին մանրամասն ծանոթացավ ներկայացված ծրագրի կետերին: Ծրագիրը կազմվել էր ուղիղ մեկ տարի առաջ եւ այդ ընթացքում քաղաքական իրադրությունը Եվրոպայում խիստ փոխվել էր: Նախ հաշտության պայմանագիր էր կնքվել Թուրքիայի հետ՝ ի շահ Ավստրիայի և Ավստրիան իր ծրագրից հանել էր Արևելյան հարցը, որի հետ իր նշանակությունը կորցրել էր նաև Հայաստանի ազատագրման հարցը: Մասնակցել մի նման վիթխարի, կասկածելի ընթացք ու ելք ունեցող արշավանքի, անշուշտ, Ավստրիան իրեն թույլ տալ չէր կարող՝ հենց թեկուզ Թուրքիայի հետ նոր ձեռք բերած այնքան անհրաժեշտ բարեկամությունը չկորցնելու համար: Թուրքիան նույնպես չէր կարող անտարբեր դիտորդի դերում հանդես գալ նման մի արշավանքի ժամանակ: Մյուս կողմից քաղաքական բարդ իրավիճակ էր ստեղծվել Արևմտյան Եվրոպայում, ուր Ավստրիայի ու Ֆրանսիայի շահերը սկսել էին բախվել Իսպանական ժառանգության հարցի շուրջ: Ավստրիան, որ լրիվ երես էր դարձրել Արևելքից, Հոլանդիայի ու Անգլիայի հետ նախապատրաստվում էր հակահարված տալ Բուրբոնների ծավալապաշտական քաղաքականությանը¹¹:

Միաժամանակ պետք է ասել, որ Ավստրիայի կայսեր հետ հանդիպումներն ունեցան նաև դրական նշանակություն, այն առումով, որ կայսրը հուշեց Օրուն դիմել Ռուսաստանի ցարին, քանի որ Պարսկաստանը ավելի մոտ էր Մոսկովյան պետությանը: Կայսրը խոստացավ անձամբ բարեխոսել ցարի առջև և Օրուն լավագույն երաշխավորագրերով ներկայացնել նրան:

Կայսեր հրաժարվելը ապագա արշավանքին մասնակցելուց խափանեց Եռյակ դաշինքի ստեղծումը, և Օրու Պֆալցյան ծրագիրը մնաց թղթի վրա: Անհրաժեշտ էր դառնում գտնել հարցի լուծման նոր ուղիներ: Իր կողմից ևս Պֆալցի իշխանը մի փոքրիկ հանձնարարական նամակ գրեց Պյոտր Մեծին հետևյալ բովանդակությամբ¹².

«Հայաստանի կառավարիչներն ու իշխանավորները, ցանկանալով պարսկական լծի տակից դուրս գալ, Հայոց Պոռշ իշխանական ցեղից սերված Իսրայել Օրի անունով իրենց մի հայ պատգամավորի միջոցով մեր օգնությանն են դիմել՝ խնդրելով որ մենք նրանց երկիրը գորք ուղարկենք, որ միանալով հայկական գորքի հետ կարողանան Հայաստանը ազատել: Ցանկանալով հայերի սույն խնդիրը հարգել՝ ես խնդրում եմ նեղություն հանձն առնել և ստուգել, թե հայերի այս խնդիրը, որն իբրև մեծ գաղտնիք հաղորդված է ինձ, որ աստիճան արդարացի է և իրագործելի:

Եթե Ձերդ մեծությունը հայերի սույն իղձը իրագործելի համարի և համաձայնի թույլատրել ինձ Ձեր երկրի միջով գորք անցկացնել, այն ժամանկ ես իմ համաձայնությունը կտամ հայերին»: Այս նամակից կարելի է հանգել այն եզրակացությանը, որ Եվրոպական տիրակալները Օրուն անուղղակի կերպով մերժում են և ուղղորդում դեպի Ռուսաստան:

Իսրայել Օրու «Պֆալցյան ծրագիրը» կազմված էր դիվանագիտական բարձր հմտությամբ ու խորաթափանցությամբ: Այն վկայում էր նրա հեղինակի աշխարհի քաղաքական անցուղարձերի, ռազմական գործի և արվեստի վերաբերյալ խոր ու բազմակողմանի գիտելիքների մասին: Եվ ամենակարևորը, հայ ազատագրական շարժման պատմության մեջ սա չունեի իր նախադեպը: Այն առաջին մշակված ծրագիրն էր, որ սկիզբ էր դնում հայ ազգային-քաղաքական գիտակցությանը, գործնական հողի վրա էր դնում հայ

⁹ Գեղամյանց, նշվ. աշխ., էջ 17:

¹⁰ Հայ ժողովրդի պատմություն, ԳՄ հրատ., հ-4, Երևան, 1972, էջ 136:

¹¹ Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 404-409:

¹² Գեղամյանց, նշվ. աշխ., էջ 17-18:

ազատագրական շարժման գաղափարախոսությունը՝ դրան տալով կոնկրետ բովանդակություն: Առաջին անգամ ազատագրական պայքարում Բարայել Օրին կարեւորում էր հայ ժողովրդի մասնակցությունը: Հայ ազատագրական շարժման անձրագիր փուլն ավարտվեց, և այն դարձավ ավելի գիտակցական ու կազմակերպված:

Գրականություն

1. Աբրահամյան Ա., Բարայել Օրի, Երևան 1978:
2. Գեղամյանց, Բարայել օրին և իր քաղաքական ծրագիրը, Բաքու, 1914:
3. Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ. , հ-4, Երևան ,1972:
4. Հարությունյան Հ., Բարայել Օրի , Երևան, 1945:
5. Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ-2, Երևան, 1959:
6. Հովհաննիսյան Պ., Հայ ազատագրական շարժումները (XV դարի կես-XXVIII դարի վերջ), Երևան, 2010:

ՀՏԴ 941(479.25)

Նոննա Ալավերդյան
Գորիսի պետական համալսարան,
Պատմության բաժին, մագիստրատուրա I կուրս
գիտ. դեկ. Նորայր Եսայան

ՀԱՅ - ԱՂԲԵԶԱՆԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1918-1922ԹԹ.

Բանալի բառեր. Հայ – ադրբեջանական հարաբերություններ, տարածքային վեճ, Արցախահայության 9-րդ համագումար, Գ. Նժդեհ, Լեռնահայաստան, ԼՂԻՄ, Մոսկվայի պայմանագիր, սահմանային խնդիրներ, ազգերի ինքնորոշման իրավունք:

Ամփոփում

Հոդվածում քննության են առնված 1918-1922 թթ. հայ-ադրբեջանական հարաբերությունները, որոնք խիստ լարված բնույթ են կրել: Այդ լարվածությունը պայմանավորված էր աշխարհաքաղաքական, ազգային, կրոնական, սահմանային – տարածքային և այլ գործոններով: Մրանցից առանցքայինը տարածքային հարցն էր, որի վրա կառուցված են երկու երկրների փոխհարաբերությունները: Սույն աշխատանքում փորձ է կատարվել համակողմանիորեն ներկայացնել վերոնշյալ հարցը:

ԻԿՄ, փилологический факультет, маг. 1-ый курс

Науч. рук.: Нора́йр Есаян

Нонна Алавердян

АРМЯНО-АЗЕРБАЙДЖАНСКИЕ ВЗАИМООТНОШЕНИЯ 1918-1922 ГОДА

Ключевые слова: Армяно-азербайджанские взаимоотношение, территориальный спор, 9 съезд армян Арцаха, Г. Нжде, Лернахайастан, НКАО, Московский договор, приграничные проблемы, право наций на самоопределение.

Резюме

В статье рассматриваются армяно - азербайджанские отношения 1918-1922 годов, которые имели строго натянутый характер. Эта напряженность была обусловлена геополитическим, национальным, религиозным, региональным и другими факторами. Из них ключевым был территориальный вопрос, на котором построены взаимоотношения двух стран. В этом исследовании была сделана попытка представить упомянутый вопрос.

Nonna Alaverdyan

GSU, the faculty of philology, master's degree 1st year

Supervisor: Norajr Esayan

ARMENIAN-AZERBAIJANI RELATIONS IN 1918-1922

Key words: The Armenian-Azerbaijani relations, the territorial dispute, 9th Congress of Armenians of Artsakh, G. Nzhdeh, LernaHayastan, ARNK, the Moscow treaty, border problems, the right of nations to self-determination.

Summary

The following article refers to Armenian-Azerbaijani relationships in 1918-1922, which had a strained nature in these period. This tension was conditioned by some geopolitical, ethnic, religious, border - territorial and other factors. The most crucial of the mentioned factors is territorial problem, on which the relationship between the two countries was built up. The given work comprehensively reflects the aforementioned issue.

Հայ – ադրբեջանական հարաբերությունների լարածությունը պայմանավորված էր աշխարհաքաղաքական, ազգային, կրոնական, սահմանային, և այլ գործոններով, այնուհանդերձ առանցքայինն այն տարածքային հարցերն էին, որոնց վրա կառուցվում էին երկու երկրների փոխհարաբերությունները: Տարածքային - սահմանային հարցի ծագման պատճառները պետք է փնտրել Ցարական Ռուսաստանի վարած սխալ ազգային – վարչական քաղաքականության մեջ:

1867թ դեկտեմբերի 9-ի օրենքի համաձայն՝ Անդրկովկասում կատարված վարչական բաժանումը դժգոհություններ առաջացրեց հայերի շրջանում, քանի որ ցարական իշխանությունները Թիֆլիսի նահանգի մեջ էին մտցրել հայկական Ջավախքը և Բորչալուն, Ելիզավետպոլի(Գանձակ) նահանգի մեջ՝ հայկական Ղազախը, Գանձակի լեռնային մասերը, Լեռնային Ղարաբաղը ու Ջանգեզուրը¹: Բնականաբար իրերի նման վիճակը ձեռնտու էր Ռուսաստանին, որովհետև նա Անդրկովկասը պահում էր ազգամիջյան վեճերի մեջ և երկրամասը ամբողջությամբ դարձնում կառավարելի: Այս քաղաքականությունը հետագայում շարունակեցին բոլշևիկները: Բնական է, որ հայոց ազգային խորհուրդը չէր հաշտվում իրերի նման վիճակի հետ և պարբերաբար Պետերբուրգ էր ներկայացնում Անդրկովկասն ազգային – տարածքային սկզբունքներով վերաբաժանելու իր մոտեցման նախագիծը: Դեռ 1905-1907 թթ. ռուսական առաջին հեղափոխության շրջանում, ինչպես ամբողջ Ռուսական կայսրության տարածքում, այնպես էլ Անդրկովկասում, առաջ էր քաշվել զեմստվոներ (տեղական ինքնավարության մարմիններ) ստեղծելու և երկրամասը ազգային - վարչատարածքային սկզբունքներով վերաբաժանելու պահանջը: 1917 թ. փետրվարյան հեղափոխությանը հաջորդած ամիսներին, երբ հսկայածավալ Ռուսաստանում վերացվում էին միապետական վարչակարգից ժառանգություն մնացած հասարակական կառույցները, հայության շրջանում հույսեր արթնացան, թե լուծում կգտնի նաև տասնամյակների ընթացքում հասունացած՝ Անդրկովկասյան ազգային - վարչատարածքային սկզբունքով վերաբաժանելու խնդիրը: Անգամ Պետրոգրադում Ժամանակավոր կառավարության կողմից ներքին գործերի նախարարությանը կից ստեղծվել էր տեղական ինքնավարության հանձնախումբ: 1917 թ. հուլիսին վերջինիս հրավիրած խորհրդակցությանը հայերի կողմից մասնակցում էին Ավետիս Շահխաթունյանը և Գևորգ Խատիսյանը, որոնց հաջողվեց խորհրդակցության մասնակիցներին

¹Տե՛ս Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Պատմության Ինստիտուտ, Հայ ժողովրդի պատմություն, հատոր VI, Երևան 1981, էջ 15

համոզել զեմստվո մտցնելուց առաջ Անդրկովկասը ենթարկել վարչական վերաբաժանման, որով ստեղծվելու էին երեք հայկական նահանգներ Գանձակի, Ալեքսանդրապոլի և Երևանի, ուր հայերը կազմելու էին համապատասխանաբար՝ 70%, 66%, 54%¹: Անդրկովկասի վարչատարածքային վերաբաժանման հայկական ծրագիրը հանդիպեց վրաց - թաթարական հակադեցույթյանը:

1918 թ. մայիսին երեք հանրապետությունների անկախացումից հետո լարված էին Հայաստանի և Ադրբեջանի հարաբերությունները: Ադրբեջանը հավակնություններ ներկայացրեց գերազանցապես հայաբնակ և անվիճելիորեն Հայաստանին պատկանող Ղարաբաղի, Ջանգեզուրի, Ղազախի սահմանային գավառների, ինչպես նաև Շարուր - Դարալագյազի, Նախիջանի և հայկական այլ տարածքների նկատմամբ: Թուրք - ադրբեջանական գործակցության նպատակն էր շրջափակման միջոցով ծնկի բերել նորանկախ Հայաստանի Հանրապետությանը և նրանից տարածքներ կորզել: Իր հերթին Հայաստանի Հանրապետությունը չճանաչեց Ադրբեջանի նկրտումները նշված տարածքների նկատմամբ: Կողմ լինելով հարևանների հետ վիճելի հարցերը փոխհամաձայնության և բանակցությունների սեղանի շուրջ կարգավորելուն՝ Հայաստանը նման կարգավորման համար հիմք էր ընդունում **Էթնիկական սկզբունքը**: Մինչդեռ Ադրբեջանը շեշտը դնում էր տնտեսական, աշխարհագրական և այլ գործոնների վրա: Հայաստանի համար նշված տարածքները ոչ միայն հայրենիքի մաս էին, այլև վերջինիս կենսունակ գոյության երաշխիքները: Մինչդեռ Ադրբեջանի և նրա դաշնակից Թուրքիայի համար դրանց տիրապետումը կնշանակեր պանթուրքական երազանքների իրականացման ճանապարհին կարևոր և առաջընթաց քայլ: Երկու կողմն էլ հասկանում էին հիշյալ տարածքների իրական նշանակությունը, որը և անզիջում էր դարձնում դրանց համար մղվող պայքարը: Ահա այս ամենն իր ազդեցությունն ունեցավ երկու երկրների փոխհարաբերությունների վրա՝ ժամանակ առ ժամանակ սպառնալով վերածվել ուղղակի պատերազմի, թեև մնացած ժամանակաընթացքում ամեն ինչ ընթանում էր չհայտարարված պատերազմի շրջանակում: Ընդ որում, Ադրբեջանը օգտագործում էր տնտեսական, ռազմական, ու դիվանագիտական ճնշման բոլոր լծակները իր ծրագրերի իրականացման համար: Հայաստանի համար փակ էին Ադրբեջանով անցնող բոլոր ճանապարհները: Ադրբեջանը հրաժարվում էր նավթ և հաց մատակարարել Հայաստանին՝ հուսալով նման ճնշմամբ զիջումներ կորզել Ղարաբաղի և Ջանգեզուրի հարցում: Ադրբեջանը չէր սահմանափակվում միայն ռազմական գործողություններով, այլև քայքայիչ գործունեություն էր ծավալում Հայաստանի մահմեդական բնակչության շրջանում և հարմար պահերի թուրք - թաթարական խռովությունների կազմակերպում: Դիվանագիտական ճակատում Ադրբեջանը օգտագործում էր իր աշխարհագրական դիրքը և նավթը՝ մեծ տերություններին որպես ուժ, օգտագործում՝ Հայաստանից տարածքային զիջումներ կորզելու նպատակով: 1918 թ-ից նման ուժի դերում հանդես է եկել Թուրքիան, 1918 թ. վերջից՝ Անգլիան, իսկ 1920 թ. ապրիլի 28-ից՝ Խորհրդային Ռուսաստանը:

1918 թ. հունիսի կեսերին թուրքական զորքերը Ղազախ - Աղստաֆա գծով շարժվեցին դեպի Բաքու՝ նպատակ ունենալով մի կողմից՝ կանխել գերմանացիներին, մյուս կողմից՝ գրավել Բաքուն և նախադրյալներ ստեղծել համաթուրքական նպատակների իրականացման համար:² Դեպի Բաքու շարժվող թուրքական բանակից առանձնացավ մի զորախումբ, և Կովկասյան 2-րդ դիվիզիայի հրամանատարներից Ջեմիլ Ջահիդը 17 բեյի գլխավորությամբ գնաց դեպի Ղարաբաղ և ուղղվեց Շուշի՝ ճանապարհին ոմբակոծելով ու զինաթափելով հայկական գյուղերը: Միաժամանակ հարձակման ենթարկվեց ու ոչնչացվեց Շուշիից դեպի Ջանգեզուր տանող ճանապարհին ընկած Ղարաղջլաղ հայկական մեծ գյուղը, որը շողկապի դեր էր կատարում Շուշիի և Ջանգեզուրի միջև³: Ոգևորված թուրքական բանակի հաջողություններով՝ Ադրբեջանի կառավարությունը նոր ոտնձգությունների դիմեց Ղարաբաղի և Ջանգեզուրի նկատմամբ: 1918 թ. հուլիսի 22-24-ին Շուշիում կայացավ

¹Տե՛ս Հայ-ադրբեջանական տարածքային խնդիրների լուսաբանումը Ռուբեն Տեր-Մինասյանի աշխատություններում, «Բանբեր Երևանի համալսարանի, հասարակական գիտություններ» N 1, Երևան, 2008, էջ 186:

²Հարությունյան Հ., Շուշին արցախյան գոյապայքարում (1918-1920 թթ.)։ Պատմա-բանասիրական հանդես, N° 1, 2013, էջ 25-26

³Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան 1998, էջ 328

արցախահայության առաջին համագումարը, երկրամասը հռչակվեց անկախ վարչաքաղաքական միավոր և կազմվեց «Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը»¹:

Քայլեր ձեռնարկվեցին նաև Սյունիքի կառավարումը և պաշտպանությունը կազմակերպելու համար: Դեռևս 1918թ. հունիսի վերջին Նախիջևանից Ջանգեզուր էր տեղափոխվել Ջորավար Անդրանիկը: Հոկտեմբերի սկզբին նա իրեն հռչակեց երկրամասի գերագույն զինվորական հրամանատար: Գավառի վարչական իշխանությունը ժամանակավորապես իրականացնելու էր Ջանգեզուրի հայկական ազգային խորհուրդը:

Նշենք նաև, որ Մուղրոսի զինադադարից հետո Անդրկովկասում հաստատվեցին Անտանտի, մասնավորապես Անգլիայի դիրքերը, որը շուտով բացահայտ ադրբեջանամետ քաղաքականություն է սկսում իրականացնել պայմանավորված Բաքվի նավթի գործոնով: 1919 թ. հունվարի 15-ին Բրիտանական զինվորական ներկայացուցչությունը Ղարաբաղի և Ջանգեզուրի ժամանակավոր գեներալ - նահանգապետ նշանակեց իր հայատյացությամբ հայտնի Խոսրով բեկ Սուլթանովին: Իր հերթին Ղարաբաղի և Ջանգեզուրի բնակչությունը մերժեց ճանաչել նրա իշխանությունը: Հայաստանի կառավարությունը բողոք հայտնեց Սուլթանովի նշանակման դեմ և Ջանգեզուրն ու Ղարաբաղը համարեց Հայաստանի անբաժանելի մաս: 1919 թ. սկզբին Ջանգեզուրի հայկական Ազգային խորհուրդը վերակազմվեց որպես «Ջանգեզուր - Ղարաբաղի մարզային խորհուրդ» և գործելու էր Հայաստանի Հանրապետության անունից: Որպես մարզային խորհրդի ներկայացուցիչ՝ մարտին Գորիս ժամանեց կապիտան Արսեն Շահմազյանը և ստանձնեց գեներալ կոմիսարի պաշտոնը: 1919 թ. նոյեմբերին նրան փոխաարինեց Սերգեյ մելիք Յուլյանը:

Սակայն Անգլիայի հեռանալը չհայտարարված պատերազմի ազդանշան հանդիսացավ, որն ընթանում էր հայ - ադրբեջանական բնակչություն ունեցող գրեթե բոլոր շրջաններում: Իրավիճակը հարթելու նպատակով որոշվել էր 1919 թ. նոյեմբերի 20-ին հայ - ադրբեջանական խորհրդակցություն հրավիրել: Բայց նոյեմբերին Ադրբեջանի Ջանգեզուրի վրա հարձակումը հարցականի տակ դրեց նոյեմբերի 20-ին Բաքվում նշանակված կոնֆերանսի կայացումը: Մինչ Գ. Նժդեհի հրամանատարությամբ հաջողությամբ մաքրվում էր Ջանգեզուրի տարածքը, Ադրբեջանը մաքրում էր Նախիջևանի և Գողթնի գավառները հայերից՝ նաև սրի քաշելով Ազուլիսի բնակչությանը², մյուս կողմից նախապատրաստվելով Ղարաբաղի գրավմանը: 1919 թ. դեկտեմբերի 25-ին Խոսրով բեկ Սուլթանովը գրավեց Ղարաբաղը: Սուլթանովը 1920 թ. փետրվարի 19-ին Շուշիի Ազգային խորհրդից պահանջեց Ղարաբաղը հայտարարել Ադրբեջանի մաս: Արցախահայության 8-րդ համագումարը մերժողական պատասխան տվեց, իսկ մարտի 23-ի գիշերը Ղարաբաղում ընդհանուր ապստամբություն բռնկվեց Ադրբեջանի դեմ: Ուժերը անհավասար էին և թշնամին, հրի մատնելով հայկական Շուշին, զանգվածաբար կոտորեց հայ բնակչությանը: Միայն ապրիլի 14-ին հայկական զորամասով Ղարաբաղ մտավ Դրոն՝ իր ձեռքը վերցնելով իշխանությունը³: Ապրիլի 23-29-ին հրավիրված Արցախահայության 9-րդ համագումարը երկրամասը հռչակեց Հայաստանի մաս⁴:

Իրավիճակը շտկելու և երկու երկրների միջև հարաբերությունները կարգավորելու նպատակով 1920 թ. ապրիլի 9-ին Թիֆլիսում տեղի ունեցավ խորհրդակցություն, սակայն բանակցությունների արդյունքում ոչ մի էական համաձայնության չեկան: Եվ 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացմամբ երկրամասի խնդիրը տեղափոխվում է հայ - ռուս - թուրք - ադրբեջանական հարաբերությունների և հակամարտությունների ոլորտ:

1920 թ. մայիսի վերջին Արցախ մտած խորհրդային զինուժի ճնշման տակ Դրոն ու Նժդեհը իրենց զորամասերը այնտեղից հետ քաշեցին: 1920 թ. հուլիսի 4-ին 11-րդ կարմիր բանակի զորամասերը մտան Ջանգեզուրի սահմաններից ներս և հաջորդ օրը գրավեցին գավառի կենտրոն Գորիսը: Լեռնաստանում ազդարարվեցին խորհրդային կարգեր: Կարմիր բանակի առջև խնդիր էր դրված գավառը նվաճելուց հետո շարժվել Նախիջևան և ուղիղ կապ հաստատել իրենց խորհրդային իշխանության բարեկամ հայտարարած Թուրքիայի քեմալական ուժերի հետ: Առաջին իսկ օրերից Ջանգեզուր մտած

¹ Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը, Երևան 1994, էջ 205

² Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան 1998, էջ 355-361

³ Տե՛ս Հարությունյան Հ., Շուշին արցախյան գոյապայքարում (1918-1920 թթ.). Պատմա-բանասիրական հանդես, № 1, 2013, էջ 40

⁴ Տե՛ս Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը, Երևան 1994, էջ 231-232

բոլշևիկյան ուժերը դաժան բռնաարարքների դիմեցին գավառի հայրենասիրական ուժերի դեմ՝ հաստատելով մղձավանջային ռեժիմ: Դա ավելի բորբոքեց տեղացիների աստվածությունը ադրբեջանական գավթիչների և նրանց աջակից կարմիր զորքերի նկատմամբ: Կապանի ներկայացուցիչները 1920 թ. հուլիսի 11-ին տեսակցել էին Կարմիր բանակի պատվիրակության հետ և տեղեկացել, որ նրանք եկել էին Չանգեզուրն ու Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանին կցելու համար¹:

1920 թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում ստորագրված համաձայնագրով կողմերի միջև ռազմական գործողությունները դադարեցվում էին, իսկ Ղարաբաղը, Չանգեզուրը և Նախիջևանը հայտարարվում էին «վիճելի տարածքներ»²:

Հայաստանի խորհրդայնացումից հետո էլ շարունակվեցին նաև ազգային լարված հարաբերությունները երկու երկրների միջև, և տարածքային վիճելի հարցը նոր հունի մեջ դրվեց: Հայաստանի խորհրդայնացման կապակցությամբ Խորհրդային Ադրբեջանի հեղկոմը 1920 թ. նոյեմբերի 30-ին հանդես եկավ «Լեռնային Ղարաբաղը, Չանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանի Հանրապետության մաս ճանաչելու» հայտարարությամբ: Սակայն Ադրբեջանը հետագայում ոչ միայն հրաժարվեց իր իսկ որոշումից, այլև գործի դրեց հնարավոր բոլոր միջոցները հայկական երկրամասերը Ադրբեջանին բռնակցելու համար:

Հայաստանի խորհրդայնացումից հետո Չանգեզուրը պահպանում էր իր ինքնուրույնությունը թերահավատորեն վերաբերելով Խորհրդային Ադրբեջանի հեղկոմի վերը նշված որոշմանը: 1920 թ. դեկտեմբերի 25-ին Սյունիքի Տաթևի վանքում հրավիրված համազանգեզուրյան համագումարը երկրամասը հռչակեց «Ինքնավար Սյունիք»: Սյունիքի սպարապետ նշանակվեց երկրամասի ինքնապաշտպանական ուժերի գլխավոր հրամանատար Գարեգին Նժդեհը³: Չանգեզուրի խորհրդայնացման խնդիրը խորհրդային իշխանությունները փորձում էին լուծել բանակցությունների միջոցով: Այդ նպատակով 1921 թ. փետրվարի 2-ին դիվանագիտական առաքելությամբ Գորիս է ժամանում 11-րդ կարմիր բանակի և ՀԽՍՀ ներկայացուցիչների միացյալ պատվիրակությունը: Նժդեհը Չանգեզուրի խորհրդայնացման մի շարք նախապայմաններ է դնում՝ քեմալական զորքերի հեռացում Հայաստանի զինագրված շրջաններից, Նախիջևանի և Լեռնային Ղարաբաղի փաստացի միացում Հայաստանի հանրապետությանը և այլն: Բանակցությունները ձախողվում են: Փետրվարյան ապստամբությունը ճնշելուց հետո Կարմիր բանակը, շարունակելով ապստամբների հետապնդումը, ընդհուպ մոտենում է Սիսիանի և Գորիսի սահմաններին: Կարմիր զորամասերին հաջողվում է ճնշել Նժդեհի զինակից Թևանի (Ստեփանյան) գլխավորած ապստամբությունը Ղարաբաղում. Թևանի ջոկատը նահանջում է դեպի Չանգեզուր, իսկ Արցախում հաստատվում է խորհրդային իշխանություն: Այսպիսով, 1921 թ. գարնան և ամռան ամիսներին Չանգեզուրը մնացել էր անկախության միակ կղզակն Անդրկովկասում և իր վրա սևեռել բոլշևիկների ուշադրությունը: Տաթևում հրավիրված համազանգեզուրյան երկրորդ համագումարը 1921 թ. ապրիլի 27-ին Ինքնավար Սյունիքը հռչակում է «Լեռնահայաստան» և վարչապետ ընտրում Գարեգին Նժդեհին: Շատ չանցած՝ հունիսի մեկին, Լեռնահայաստանը վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն. Սիմոն Վրացյանը դառնում է վարչապետ, իսկ Նժդեհը պահպանում է զինվորական նախարարի և սպարապետի պաշտոնները:

ՌԿ(Բ)Կ կովկասյան բյուրոյի 1921 թ. հունիսի 3-ի որոշմամբ ՀԽՍՀ կառավարությունը հունիսի 13-ին պայքարը դադարեցնելու և խորհրդայնացումն ընդունելու հերթական կոչն էր ուղղում Չանգեզուրի կառավարությանը՝ նշելով, որ երկրամասը լինելու է Խորհրդային Հայաստանի կազմում: Չանգեզուրի հերթական մերժումը ստիպում է խորհրդային կողմին խնդիրը լուծել ռազմական ճանապարհով: Կարմիր բանակը Չանգեզուրի վրա հարձակման է անցնում ինչպես արևմուտքից՝ Կարմիր բանակի Երևանյան զորախմբի, այնպես էլ արևելքից՝ Ադրբեջանում տեղակայված խորհրդային բանակի ուժերով: Հունիսի 30-ին խորհրդային զորքերը մտնում են Սիսիան: Վերջինիս անկումից հետո Նժդեհը որոշում է դադարեցնել

¹Տե՛ս¹ Նժդեհ Գ., Հայ-բոլշևիկյան կռիվները Երկեր, հ. 2, Ե., 2002, էջ 41

²Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբագրությամբ՝ Գ. Ա. Գալոյանի և Վ. Ն. Ղազարյանի, Ե., 2000, էջ 248:

³Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան 1998, էջ 586

պայքարը և Գորիսից նահանջում է դեպի Կապան՝ գորիսեցիներին պատգամելով չդիմադրել հայ -ռուսական կարմիր զորքերին և անխնա լինել, եթե հարձակում ձեռնարկեն ադրբեջանական ջոկատները: Կարմիր բանակի զորամասերը հուլիսի 2-ին մտնում են Գորիս, 7-ին՝ Կապան, իսկ 13-ին՝ Մեղրի դրանով իսկ ավարտին հասցնելով Զանգեզուրի խորհրդայնացումը: Նժդեհը թողնում է Զանգեզուրը և մի քանի հազար փախստականների հետ անցնում է Արաքսի աջ ափը: Այսպիսով՝ զանգեզուրցիների՝ Գարեգին Նժդեհի գլխավորած հերոսական պայքարի շնորհիվ երկրամասը մնում է ՀՄՄՀ անբաժան մասը:

Քանի դեռ Զանգեզուրն անկախ էր, Լեռնային Ղարաբաղի հարցը կարծես լուծվում էր Խորհրդային Հայաստանի օգտին: ՌԿ(Բ)Կ կովկասյան բյուրոյի հունիսի 3-ի որոշման 5-րդ կետով հայկական կառավարությանը հանձնարարվել էր հռչակագրով հայտարարել «Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանին պատկանելության մասին»: ՀՄՄՀ ժողովխորհի համապատասխան հայտարարությունը հրապարակվեց 1921 թ. հունիսի 12-ին: Ղարաբաղ գործուղվեց Ասքանազ Մռավյանը որպես արտակարգ կոմիսար: Այս քայլը առաջ բերեց ադրբեջանցիների կատաղի դիմադրությունը, որոնք Ղարաբաղի հարցում որդեգրեցին կոշտ և անզիջում քաղաքականություն¹:

Լեռնային Ղարաբաղի խնդիրը քննարկվեց ՌԿ(Բ)Կ կովկասյան բյուրոյի վերոհիշյալ հուլիսյան պլենումում: 1921թ. հուլիսի 4-ի նիստում, որին, Կովկասյան բյուրոյի անդամներից բացի, մասնակցում էր նաև ՌԿ(Բ)Կ կենտկոմի անդամ Ի. Ստալինը. քվեարկությամբ ընդունվեց միանգամայն արդարացի որոշում՝ Լեռնային Ղարաբաղը ՀՄՄՀ-ին միացնելու վերաբերյալ: Որոշմանը, սակայն, դեմ արտահայտվեց Ադրբեջանի կառավարության նախագահ Ն. Նարիմանովը: Նա պահանջեց հարցի վերջնական լուծումը փոխադրել Մոսկվա՝ ՌԿ(Բ)Կ կենտկոմ: Բայց հաջորդ օրը հուլիսի 5-ին, հրավիրվեց Կովկասյան բյուրոյի պլենումի արտահերթ նիստը, որում վերանայվեց Ղարաբաղի հարցի վերաբերյալ նախորդ օրը կայացրած որոշումը: Պլենումը առանց քվեարկության որոշեց Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի ԽՍՀ-ի կազմի մեջ²:

Այսպես, հուլիսի 5-ի որոշումն անօրինական էր, քանի որ Լեռնային Ղարաբաղը պատմականորեն Հայաստանին է պատկանում, բացի դրանից խախտվում էր ազգի ինքնորոշման իրավունքը: Անտեսվեց էթնիկական գործոնը, առաջնային պլան մղվեց տնտեսական գործոնը (բնակչության 94,4% հայեր էին 1923 թ. տվյալներով): Կարծում ենք, որ այս որոշման մեջ մեծ էր ՌԿ(Բ)Կ Կենտկոմի անդամ Ստալինի դերը, բայց այն որոշիչ չէր: Հիշենք, որ հուլիսի 4-ին Ստալինը ներկա էր, բայց դա չխանգարեց Հայաստանի օգտին ճիշտ վճիռ իրականացնելու համար: Ըստ երևույթին, Ադրբեջանը կարողացել էր իր կողմը քաշել ՌԿ(Բ)Կ Կենտկոմի ավելի բարձր պաշտոնյաններին, ենթադրաբար Լենինին և Տրոցկուն: Եվ պետք է նշենք, որ սրա մեջ իր մեղքն ունի հայկական կողմը: Միասնիկյանը Նարիմանովի օրինակով չպնդեց դարաբաղյան հարցի վերջնական լուծումը տեղափոխել ՌԿ(Բ)Կ Կենտկոմ: Բայց այդ հարցի նման լուծման գործում հարցում մեծ էր նաև թուրքական գործոնի դերը: Հիշենք, որ Լենինը մեծ հույսեր էր կապում քեմալական Թուրքիայի հետ. Եվրոպայում սոցիալիստական հեղափոխության ձախողումից հետո Արևելքում հեղափոխության ջահակրի դերը վերապահվում էր քեմալական Թուրքիային: Ադրբեջանը քայլեր էր ձեռնարկում՝ ստանալու արցախահայության համաձայնությունը, սակայն ապարդյուն: Իրավիճակը բավական սրվում է: 1921 թ. հուլիսի 28-ին համագումարի աշխատանքների մասին Ղարաբաղից Երևան ուղարկած գաղտնի զեկուցագրերից մեկում նշվում է. «Դրությունը օրհասական է, խնդրում ենք միջոցներ ձեռնարկել Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միացնելու համար»: Այդպիսին էր Ղարաբաղի ողջ հայ բնակչության միահամուռ ցանկությունը, սակայն դրա հետ ոչ ոք հաշվի չէր նստում: Այդուհանդերձ, արցախահայության և Խորհրդային Հայաստանի ղեկավարության հաստատակամ և հետևողական ջանքերի շնորհիվ, երկու տարվա համառ դիմադրությունից հետո, Խորհրդային Ադրբեջանի

¹ Տե՛ս Կ. Խաչատրյան, Հայ - ռուսական հարաբերությունները, 1920-1922 թվականներին, Երևան 2007, էջ 106

² Տե՛ս Կ. Խաչատրյան, Հայ - ռուսական հարաբերությունները, 1920-1922 թվականներին, Երևան 2007, էջ 108

իշխանությունները ստիպված էին նահանջել և 1923 թ. հուլիսի 7-ի որոշումով Լեոնային Ղարաբաղին տրամադրել ինքնավար մարզի կարգավիճակ:¹

Բացի Լեոնային Ղարաբաղի, Նախիջևանի և Զանգեզուրի հիմնահարցերից, հայ - ադրբեջանական հարաբերություններում 1920-1922 թթ. առկա էին նաև սահմանային խնդիրներ՝ ջրային ռեսուրսների, արոտավայրերի և անտառից օգտվելու առնչությամբ, որոնց ուսումնասիրությունը, կարծում ենք, ներկայումս կարևոր նշանակություն ունի: Այս հակասությունները երբեմն նաև արյունահեղ բնույթ էին կրում, քանզի կողմերը հաճախ անզիջում դիրք էին գրավում: Հատկապես կարևոր էր 1922 թ. դեկտեմբերի 11-ին Բաքվում Խորհուրդների անդրկովկասյան 1-ին համագումարում Գ. Օրջոնիկիձեի կողմից հնչեցված բոլշևիկյան հետևյալ տեսակետը այս հարցի առնչությամբ. «Օստրեթանալով ադրբեջանցի գյուղացիների կյանքի հետ՝ մենք տեսնում ենք, որ Ադրբեջանի գյուղացիությունը ապրիլի վերջերին դուրս է գալիս իրենց բնակավայրերից, որտեղ չկա ջուր և խոտ, և իրենց անասուններով, ընտանիքով ու ամբողջ ունեցվածքով քոչում հայկական լեռները և մնում այնտեղ մինչև օգոստոսի վերջը: Ադրբեջանի գյուղացիությունն առանց այդ արոտավայրերի գոյություն ունենալ չի կարող: Ես եղա Հայաստանն ու Ադրբեջանը սահմանազատող հանձնաժողովներից մեկում, պարզվեց հետևյալը՝ Թովուզի և Ղազախի գավառների գյուղացիները գոյություն ունեցող սահմանի պատճառով մնացել էին առանց անտառի»:² Բոլշևիկյան վերոհիշյալ մոտեցումը, ըստ էության, ավելի շատ համընկնում էր ադրբեջանական ընկալման և դիրքորոշման հետ, քան հայկականի: Մակայն ըստ արխիվային նյութերի՝ ադրբեջանցիների կողմից ՀԽՍՀ հյուսիսարևելյան սահմանահատվածում կատարվում էին լուրջ իրավախախտումներ: 1921 թ. սկզբներից Խորհրդային Ադրբեջանի Ղազախի շրջանի ղեկավարությունը սկսեց խոչընդոտներ հարուցել ՀԽՍՀ Իջևանի և Շամշադինի շրջանների անասնապահների առջև:³ Մյուս կողմից 1921-1922 թթ. ՀԽՍՀ հյուսիսարևելյան սահմանահատվածում գոյություն ունեցած վեճերի հիմնական պատճառները ադրբեջանական ազգաբնակչության զինված լինելու հանգամանքն էր, հաճախակի զինված հարձակումները հայկական գյուղերի վրա: Այն կատարվում էր ադրբեջանական կառավարության թողտվությամբ: Վեճերն ու բախումները շարունակվեցին նաև հետագայում:

Ինչ վերաբերում է Նախիջևանին, ապա այս հարցը որոշվեց 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի «Ռուս - թուրքական բարեկամության և եղբարության» պայմանագրով: Տարածքային մի շարք հարցերի հետ քննարկվեց Նախիջևանի հարցը: Պայմանագրի համաձայն՝ Նախիջևանը՝ որպես «Նախիջևանի մարզ», ինքնավար տարածքի կարգավիճակով փոխանցվում է Խորհրդային Ադրբեջանի խնամակալությանը պայմանով, որ վերջինս այն չի զիջելու մի երրորդ պետության, այսինքն՝ Հայաստանին:⁴ Միջազգային իրավունքի տեսակետից դա միանշանակ ապօրինի պայմանագիր էր: Երկու երկրներ իրենց իսկ կողմից ինքնիշխան ճանաչված մի երրորդ պետության տարածք հանձնում էին մի չորրորդ պետության՝ առանց նրանց մասնակցության և նույնիսկ կարծիքը հարցնելու:

Այսպիսով, հայ - ադրբեջանական տարածքային վեճը հիմնականում լուծվեց Ադրբեջանի օգտին: Եվ հայկական մի շարք տարածքներ, որոնց բնակչության մեծամասնությունը հայեր էին, հանձնվեցին Ադրբեջանին՝ խախտելով ազգի ինքնորոշման իրավունքը: Այս քաղաքականությունը հանգեցրեց հայ - ադրբեջանական լարված հարաբերություններին, որը ողբերգական հետևանքներ ունեցավ (1988 թ. փետրվարի 27-29-ի Սումգայիթյան կոտորածներ, հետագա ջարդերի ալիքի տարածումը ողջ ԱԽՍՀ-ում): Այն վերաճեց պատերազմի (1991-94 թթ.): Արցախի հարցը մինչև մեր օրերը իրավական առումով դեռևս կարգավորված չէ, և հայ - ադրբեջանական հարաբերությունները շարունակում են լարված մնալ: 2016 թ. ապրիլի 1-ի լույս 2-ի զիջերը Ադրբեջանը լայնամաշտաբ գործողություններ է ձեռնարկում արցախա-

¹ Տե՛ս, նույն տեղում, էջ 111

² Տե՛ս Հակոբյան Մ. Տ., Հայ-ադրբեջանական սահմանային խնդիրները ՀԽՍՀ հյուսիսարևելյան սահմաններում 1921-1922, Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 1, 2009, էջ 39

³ Տե՛ս Նույն տեղում

⁴ Տե՛ս Александр Иголкин, Московский договор с Турцией, Պատմա-բանասիրական հանդես, № 1, 2002, էջ 3-28

աղբրեջանական շփման գծի ողջ երկայնքով (առավել հայտնի է որպես Քառօրյա պատերազմ անունով):

Այսպես, խորհրդային իշխանությունների կողմից ազգային հարցում թույլ տված կոպիտ սխալները պայթուցավտանգ իրավիճակ ստեղծեցին և բազմաթիվ ողբերգական իրադարձությունների պատճառ դարձան հետխորհրդային ժամանակաշրջանում՝ առ այսօր:

Գրականություն

1. Հայկական ՄՍՀ Գիտությունների Ակադեմիայի Պատմության Ինստիտուտ, Հայ ժողովրդի պատմություն, հատոր VI, Երևան 1981:
2. Հայ-աղբրեջանական տարածքային խնդիրների լուսաբանումը Ռուբեն Տեր-Մինասյանի աշխատություններում, «Բանբեր Երևանի համալսարանի, հասարակական գիտություններ» N 1, Երևան, 2008:
3. Հարությունյան, Համլետ, Շուշին արցախյան գոյապայքարում (1918–1920 թթ.). Պատմա-բանասիրական հանդես, № 1, 2013:
4. Ս. Վրացյան, «Հայաստանի Հանրապետություն», Երևան 1998:
5. Բ. Ուլուբաբյան, Արցախի պատմությունը, Երևան 1994:
6. Նժդեհ Գ., Հայ-բոլշևիկյան կռիվները, Երկեր, հ. 2, Ե., 2002:
7. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբագրությամբ՝ Գ. Ա. Գալոյանի և Վ. Ն. Ղազախեցյանի, Ե., 2000:
8. Կ. Խաչատրյան, Հայ - ռուսական հարաբերությունները, 1920-1922 թվականներին, Երևան 2007:
9. Հակոբյան Ս. Տ., Հայ-աղբրեջանական սահմանային խնդիրները ՀՄԽՀ հյուսիսարևելյան սահմաններում 1921-1922, Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 1, 2009:
10. Александр Иголкин, Московский договор с Турцией, Պատմա-բանասիրական հանդես, № 1, 2002:

ՀՏԴ 941(479.25)

Մերի Մարդարյան

ԱրՊՀ, Պատմության և իրավագիտության ֆակուլտետ
 Պատմության բաժնի բակալավրիատի ուսանող 2016թ.
 Գիտ. ղեկավար պ.գ.թ., դոց. Նունե Մարումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ՝ ՕԿՈՒՊԱՑԻԱ ԹԵ՞ՓՐԿՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր: Հայաստանի հանրապետություն, բոլշևիկյան կուսակցություն, Խորհրդային Ռուսաստան, Քեմալական Թուրքիա, քեմալաբոլշևիկյան դաշինք, Սուստաֆա Քեմալ, Ի.Ստալին, Բ.Լեգրան, Վ.Լենին, խորհրդայնացում:

Ամփոփում

Հողվածում քննության է ենթարկվել 1920թ Հայաստանի խորհրդայնացումը, այդ ճանապարհին Ռուսաստանի կողմից ստեղծված արհեստական պայմանները: Հատկապես ուշադրություն է դարձվել քեմալաբոլշևիկյան գաղտնի հարաբերություններին և հայ թուրքական պատերազմում բոլշևիկների ցուցաբերած ռազմական գաղտնի աջակցությանը Թուրքիային: Ընդգծվել է այն հանգամանքը, որ Հայաստանի խորհրդայնացումը քեմալաբոլշևիկյան ծրագրի մի մասն էր կազմում: Քննության առնված

հիմնահարցում շեշտադրում է արվել այն հանգամանքին, որ Հայաստանի խորհրդայնացումը դիտարկվի ոչ թե որպես փրկություն, այլ օկուպացիա:

Мери Сардарян

АрГУ, факультет истории и юриспруденции, бакалавр

Науч. пук.: к.и.н., доц. Нунэ Сарумян

СОВЕТИЗАЦИЯ АРМЕНИИ: СПАСЕНИЕ ИЛИ ОККУПАЦИЯ?

Ключевые слова: Республика Армения, партия большевиков, Советская Россия, кемалистская Турция, кемалистско-большевистское соглашение, Мустафа Кемаль, И.Сталин, Б.Легран, советизация.

Резюме

В статье исследуется процесс советизации Армении в 1920г. и в связи с этим созданные искусственные условия со стороны России. Особое внимание уделено кемалистско-большевистским тайным отношениям и тайной военной помощи большевиков, оказанная Турции. Подчеркивается то условие, что советизация Армении составляла одну из частей кемалистско-большевистской программы. В исследуемой теме акцент ставится на то обстоятельство, чтобы советизация Армении рассматривалась бы не как спасение, а как оккупация.

Mery Sardaryan

ASU, the faculty of history and jurisprudence, bachelor's

Supervisor: PhD Nune Sarumyan

THE SOVIETIZATION OF ARMENIA SALVATION, OR OCCUPATION

Key words: Republic of Armenia, bolshevik party, Soviet Russia, kemal Turkey, Kemal-Bolshevik treaty, Mustafa Kemal, I. Stalin, B.Legran, V.Lenin, sovietization.

Summary

The process of the sovietization of Armenia in 1920 and artificial conditions created by Russia on its way are examined in this article. Attention was paid especially to the underground relationship between kemals and bolshevikq and the underground military support for Turkey that Bolsheviks evinced during the Armenian-Turkish war. It was taken into consideration that the sovietization of Armenia was a part of kemal-bolshevik plan. In this conflict, it is accentuated sovietization of Armenia wasn't considered as a salvation but as an occupation.

Պատմությունը ցույց է տալիս, որ, երբ Այսրկովկասյան տարածաշրջանում բախվում են ռուս-թուրքական քաղաքական շահերը, ապա դա աղետաբեր հետևանքներ է ունենում միայն ու միայն Հայաստանի համար:

Հայաստանի նորագույն շրջանի պատմությունը քաղում է դեռևս 1920թ ռուս-թուրքական բանակցությունների դառը պտուղները: Խորհրդային Ռուսաստանի գիտակցությամբ և լուռ համաձայնությամբ, ինչպես նաև Հայաստանի Արևմտյան դաշնակիցների քար անտարբերության պայմաններում 1920թ. քեմալական Թուրքիան պատերազմ հայտարարեց Հայաստանի առաջին Հանրապետությանը: Կարմիր բանակը տեղակայված էր Հայաստանի Հանրապետության սահմանի երկայնքով և սպասում էր հարմար առիթի՝ մուտք գործելու և խորհրդայնացնելու երկիրը: Քեմալականների հետ եղբայրացած բոլշևիկները միայն մի դեպքում կարող էին միջամտել, եթե Հայաստանի կառավարությունը խաղաղ կերպով իշխանությունը հանձներ խորհրդային Ռուսաստանին:

Ինչպես հայտնի է, 1920թ դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը ստորագրվում է Ալեքսանդրապոլի պայմանագիրը, բայց նույն դեկտեմբերի 2-ին Հայաստանի հանրապետության գործող կառավարությունն արդեն հրաժարական էր տվել: Ուստի, պետք է ընդգծել, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը իրավական ուժ չունեցող մարմինների (ԹԱՄԺ-ի կառավարությունն ևս) կողմից է ստորագրվել:

Ուր հենց այս պայմաններում 1920թ հուլիսին Մոսկվայում ընդհատված հայ ռուսական բանակցությունները վերսկսվել էին Երևանում հոկտեմբերի կեսերին: Բանակցությունների արդյունքում հոկտեմբերի 28-ին ստորագրվել է հայ-ռուսական հաշտության պայմանագիրը: Սակայն այդ պայմանագրի նախագիծը հավանության չարժանացավ Խորհրդային Ռուսաստանի կողմից: Ուր Ռուսաստանի համար դեպքերի բարեհաջող զարգացման արդյունքում նոյեմբերի 29-ին կարմիր բանակը մտնում է Հայաստան և հայտարարում խորհրդայնացման մասին: Թվում էր, թե Ռուսաստանի կառավարությունը Հայաստանի մի զգալի մասում խորհրդային կարգեր հաստատելուց հետո կպաշտպաներ հայ ժողովրդի

շահերը քեմալականներից, կպահանջեր հայկական տարածքների զավթված մասը, սակայն դա թվում էր, այն էլ միայն՝ հայերին:

Խորհրդաթուրքական ջերմագին միասնությունն ամրագրվեց 1921թ. մարտի 16-ին Մոսկվայում ստորագրված բարեկամության, եղբայրության մասին պայմանագրով: Այստեղ արևմտահայության մասին որևէ հիշատակում չկար: Դա նոր Թուրքիայի դիվանագիտության հաղթանակն էր և Հայաստանի խորհրդային օկուպացիոն քաղաքականության սկիզբը: Քեմալականներն արդեն իրենց ազգային ուխտի մեջ Արևմտյան Հայաստանն հայտարարել էին Թուրքիայի անբաժանելի մաս: Հայաստանը պետք է մասնակցեր բանակցություններին, բայց Թուրքիան առարկեց հայկական պատվիրակության մասնակցությանը: Հայկական հողերի որևէ պահանջ չներկայացվեց թուրքական պատվիրակությանը: Թուրքերը զիջեցին միայն Բաթումը, այն էլ անցավ Վրաստանին: Բաթումը փոխարինվեց Կարսով և Մուրմալույով: Թուրքիայի հյուսիս-արևելյան սահմանը անցնում էր Ախուրյան և Արաքս գետերի հունով՝ թուրքական կողմում թողնելով Կարսի մարզը և Մուրմալուի գավառը: Նախիջևանի մարզը դառնում էր ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալության տակ, որը չէր զիջվելու երրորդ պետության: Ռուսաստանը հույս ուներ, որ Թուրքիայի միջոցով հեղափոխությունը կտարածվի Արևելքում: Սպասված միջազգային հեղափոխությունը տեղի չունեցավ, սակայն Հայաստանի շահերը անորոշ ժամանակով զոհաբերվեցին:

Ռուսաստանը միշտ սերմանել է այն գաղափարը, որ Հայաստանը չի կարող վարել իր ինքնուրույն քաղաքականությունը տարածաշրջանում: Եվ պարզապես պետք է կառչած լինի մի որևէ այլ երրորդ ուժից: Ուր միշտ մշակվում է այն կարծիքը, որ Հայաստանը քաղաքական բարդ հակամարտությունների կենտրոնում գտնվելու դեպքում ստանում է Ռուսաստանի քաղաքական ու ռազմական աջակցությունը, բայց ակնհայտ է, որ բոլոր այդ իրադարձությունների նախասկիզբը կապված է հենց ռուսական շահերի հետ: Ուստի խորհրդայնացումը Հայաստանի համար ոչ թե փրկություն էր, այլ Ռուսաստանի կողմից ստեղծված արհեստական իրավիճակից դուրս գալու միակ միջոցը: Ուր եթե Ռուսաստանի միջամտությունն ու օժանդակությունը չլինեք Թուրքիային, հնարավոր է, որ իրադարձություններն այլ ընթացք ունենային:

1918թ., երբ Հայաստանը գտնվում էր սոցիալ-տնտեսական ու ռազմական ծայրահեղ ծանր իրավիճակում, կարողացավ հաղթանակ տանել Թուրքիայի դեմ պատերազմում և ստեղծել Հայաստանի առաջին հանրապետությունը: Սակայն երկու տարի անց, երբ արդեն ունեին կանոնավոր բանակ և ռազմական որոշակի ուժ, առանց որևէ լուրջ դիմադրության տեղի են տալիս թուրքական զավթիչներին:

Հայկական բանակի պարտությունը պայմանավորված էր նրանով(ըստ խորհրդահայ պատմաբանների), որ դաշնակցականների ու թուրքերի կողմից կեղծ լուրեր էին տարածվում, թե իբր քեմալականներն ու ռուսները դաշնակիցներ են, ուստի նման դեպքում հայ զինվորները հայտարարում էին. «Եթե այդպես է, էլ ինչու կովենք թուրքերի դեմ»:¹

Ակնհայտ է, որ այդտեղ որևէ կեղծիք չկա: Տվյալ ժամանակաշրջանում Ռուսաստանը աջակցում էր թուրքական բանակին: Նշվում է, որ թուրքական զորքը պարենավորված էր շատ լավ, ուներ առատ ռազմամթերք, տաք հագուստ, որը ստանում էր Իտալիայից, Ֆրանսիայից և Խորհրդային Ռուսաստանից:²

Թուրքերի՝ Հայաստան ներխուժման հետ կապված՝ խորհրդահայ պատմաբանները նշում են. «Ռուսաստանի կառավարությունը ցավում է և չի կարող անտարբեր մնալ արյունաքամ եղող հայ ժողովրդի բախտի նկատմամբ»:³ Բայց հակառակ այս արտահայտություններին Վրաստանի կոմկուսի պաշտոնաթերթ «Կոմունիստը» թուրքերի առաջխաղացման առթիվ գրում էր ցնծությամբ. «Մնում է միայն ուրախանալ, որ դաշնակցական Հայաստանը գտնվում է այն պոզահարող կովի դրության մեջ, որին Աստված եղջուրներ չի տվել»:⁴

¹ Պարսամյան Վ.Ա., Հարությունյան Շ.Ռ., Հայ ժողովրդի պատմություն., Ե.1979. էջ 471:

² Վրացյան Մ., Հայաստանի Հանրապետություն., Ե. 1993. էջ 505:

³ Պարսամյան Վ.Ա., Հարությունյան Շ.Ռ., նշվ. աշխ., էջ 472:

⁴ Վրացյան Մ., նշվ. Աշխ., էջ 506:

Պատերազմական բուռն պայքարի ընթացքում՝ 1920թ սեպտեմբերի 29-ին, ՌԿ(Բ)Կ կենտկոմի պլենումը որոշում է փողով ու զենքով փաստացի օգնություն ցույց տալ քեմալականներին: Միայն Էրզրումում քեմալական կառավարության և ռազմական հրամանատարության ներկայացուցիչներին Խորհրդային Ռուսաստանի իշխանությունները փոխանցեցին 200.6կգ ոսկի:¹

Պետք է նշել, որ խորհրդային կողմը քեմալականների առջև թեև պայման էր դրել, որ տրամադրվող օգնությունը պետք է օգտագործվի բացառապես Անտանտի դեմ պայքարում՝ արևմտյան ճակատում, սակայն գիտակցությունից դուրս է, որ կարելի էր վերահսկողություն սահմանել այն դեպքում, երբ պատերազմ էր ծավալվել նաև Հայաստանի դեմ: Մյուս կողմից հենց Խորհրդային Ռուսաստանի շնորհիվ էր, որ հաջողության հասնելով արևմտյան ճակատում՝ քեմալականներն իրենց առավել վստահ էին զգում Հայաստանի դեմ՝ արևելյան ճակատում:

Այսպիսով, եթե չլիներ Ռուսաստանի քաղաքական աջակցությունը և նյութական օգնությունը քեմալականներին, ապա վերջիններս չէին համարձակվի պատերազմ սկսել Հայաստանի դեմ, ինչպես չհամարձակվեցին պատերազմել 1920թ ամռանը: Նման եզրահանգումների հիմք են տալիս նաև այլ փաստերը. այսպես՝ 1920թ հոկտեմբերի սկզբներին Լենինին ուղարկված հեռագրում Ստալինը նշում է՝ «գտնում եմ, որ Թուրքիայի առաջխաղացումը ջուր է լցնում մեր ջրաղացին»²: Եվ նույն թվականի նոյեմբեր ամսին՝ Մոսկվա Գ. Չիչերինին ուղղված հեռագրում մտորելով Վրաստանի խորհրդայնացման հարցի շուրջ Ստալինը միանշանակ նշում է. «պետք է քեմալականներին հրահրել նաև Վրաստանի դեմ և տարբերակներից լավագույնը Թուրքիայի պատերազմն է Վրաստանի դեմ, ինչը Ռուսաստանին հնարավորություն կտա միջամտելու միջնորդի ու փրկարարի կեցվածքով»³:

Հենց այս օրինակով էլ Հայաստանի ճակատագիրը տնօրինելու էին Թուրքիան և Ռուսաստանը: Բնականաբար հաղթանակած Թուրքիան պետք է թելադրեր իր պայմանները, իսկ Ռուսաստանն էլ փորձում էր օգտվել այդ հաղթանակի պտուղներից և խաղաղ խորհրդայնացնել Հայաստանը որպես փրկարար: Ռուս-թուրքական հարաբերությունների մերձեցման և պլանավորված գործունեության մասին է խոսում այն, որ ապրիլի 26-ին Թուրքիայի ազգային ժողովը դիմեց Ռուսաստանի կառավարությանը, որ քեմալականները անկեղծորեն են ձեռք մեկնում նոր Ռուսաստանին, որը պայքարում է գաղութային լծից արևելքի բոլոր ժողովուրդների ազատագրման համար: «Մենք պարտավորությամբ ենք ստանձնում, - ասվում էր ուղերձում, - մեր ողջ գործնությունը միավորել իմպերիալիստական կառավարությունների դեմ պայքարի նպատակ ունեցող ռուսական բոլշևիկների հետ:»⁴

ՌԻ ակնհայտ է, որ կողմերի թիրախային կենտրոնում հայտնվելու էր Հայաստանը, որը, ըստ նրանց, համարվում էր «միջազգային իմպերիալիզմի գործակալ»⁵: Թուրքիայի ազգային ժողովը առաջարկում էր նաև, եթե խորհրդային ուժերը նախատեսում են ռազմական գործողություններ սկսել Վրաստանի դեմ, ապա թուրքական կառավարությունը իր վրա է վերցնում իմպերիալիստական Հայաստանի դեմ ռազմական գործողությունները⁶: Սակայն հարց է ծագում, թե ինչ էր պայամանավորված քեմալականների այս անկեղծ ձգտումը՝ փարվելու Բոլշևիկյան Ռուսաստանին: Պատասխանը հետևյալն է՝ 1920թ գարնանը Թուրքիայի միջազգային դրությունը բարդ էր և օրհասական: Ման-Ռեմոյում նախապատրաստվում էին ապագա Սերի պայամանագրի ստորագրմանը: Դաշնակիցների Գերագույն խորհրդի ապրիլի 20-ին Լյոդ Ջորջը ի լուր ամենքի հայտարարեց, որ «Թուրքիան պետք է խեղդամահ արվի մայրաքաղաքում և ծովափնյա նավահանգիստներում»⁷:

(Թուրքիային մնում էր ամեն կերպ փրկել իր կաշին:) Գ. Չիչերինը անդրադառնալով Մուստաֆա Բենալի ապրիլի 26-ի նամակին և շարադրելով նրա հիմնական

¹ Документы внешней политики (Д.В.П) СССР, т. 3, Москва, 1959, с. 675:

² Խաչատրյան Կ. ,Հայ ռուսական հարաբերությունները 1918-1920թթ. , Ե. 2007. էջ 30:

³Նույնի, էջ 31:

⁴Գալոյան Գ. ,Հայաստանը և մեծ տերությունները., Ե. 1999. էջ 136:

⁵Գալոյան Կ. ,Արցախի պատմություն., Ե. , 2000, էջ 305:

⁶Գալոյան Գ. ,նշվ.աշխ. , էջ 139:

⁷Նույնի, էջ 140:

բովանդակությունը շրջանցեց «Իմպերիալիստական Հայաստանի» դեմ ռազմական գործողություններ սկսելու Քեմալի ռազմատեսչ մտադրությունը փոխակերպելով դիվանագիտական հետևյալ ձևակերպումով, թե «Մուստաֆա Քեմալը հայտարարում է, որ Թուրքիան պարտավորվում է Խորհրդային Ռուսաստանի հետ համագործակցել և հայտնում Կովկասում իմպերիալիստների դեմ մղվող պայքարին մասնակցելու պատրաստականություն, և հույս է հայտնում, որ Խորհրդային Ռուսաստանից օգնություն կստանա Թուրքիայի վրա հարձակվող իմպերիալիստական թշնամիների դեմ կռվելու համար»:¹

Սակայն Ռուսաստանի նպատակը միայն իր բարեկամ Քեմալական Թուրքիայի հետ կապվելը և դեպի արևելք հեղափոխությունը տարածելն էր, իսկ քեմալականների նպատակը այդ ցամաքային կապի միջոցով Ռուսաստանից ռազմաֆինանսական օգնություն ստանալով լուծել իրենց «Ազգային ուխտով» ծրագրած խնդիրները: Թուրքերի իսկական նպատակը Հայաստանի քայքայումն ու Սևրի դաշնագրի ոչնչացումն էր: Իսկ «Պանթուրքիզմ ասվածը Թուրքիայի միացումն էր Ադրբեջանի հետ Հայաստանի դիակի վրայով»²: «Հայաստանի հանրապետությունը,-գրում է Լ. Խուրշուդյանը,- հայտնվեց արքանի մեջ: Մի կողմից առաջ էր շարժվում ռուսական բանակը, մյուս կողմից՝ թուրքականը: Այդ տարածությունը կամ պետք է գրավեին ռուսները կամ թուրքերը, կամ էլ նրանք կիսեին իրար մեջ: Դիմադրել միաժամանակ և ռուսներին և թուրքերին Հայաստանը չէր կարող»:³

Ուստի խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի հարաբերությունների ձևավորումն ընդհանուր էր փոխադարձ կասկածամտության մթնոլորտում: Եթե քեմալական Թուրքիայի ղեկավարներն ամբողջությամբ ձերբազատված չէին Ռուսաստանի նկատմամբ Թուրքիայի ունեցած դարավոր թշնամանքից ու կասկածամտությունից, ապա խորհրդային Ռուսաստանի ղեկավարները չէին հավատում Մուստաֆա Քեմալի անկեղծությանը: Դրա համար հիմք է ծառայում Ֆրանսիայի և Թուրքիայի միջև 1920թ մայիսին կնքված զինադադարը, որը խորհրդային Ռուսաստանը համարում էր Անտանտի տերությունների հետ Թուրքիայի մերձենալու առաջին քայլը: Այս ամենով հանդերձ՝ խորհրդային Ռուսաստանի համար տվյալ փուլում առաջնայինը Անտանտի դեմ մղվող պայքարում քեմալականներին օգտագործելն էր: Խորհրդային Ռուսաստանի իշխանություններն թեն աջակցում էին քեմալականներին, սակայն այլ կերպ էին նայում թուրքական առաջընթացին Հայաստանում:

1920թ հոկտեմբերի 5-ին Բ.Լեգրանին Թիֆլիս ուղարկված հեռագրում արտգործոժողկոմ Չիչերինը հուշում է, որ քանի դեռ թուրքերը չեն անցել Շահթախթ – Սարիղամիշ գիծը, անհանգստանալու կախք չկա, միննույն ժամանակ նա զգուշացնում է, որ «Մենք չենք կարող նրան թույլ տալ Հայաստանը ձգնել»⁴: Խորհրդային Ռուսաստանի մոտ առկա էր այն մտավախությունը, որ թուրքերի հարձակումը կատարվում է Անտանտի հետ համաձայնեցված, որը պատրաստվում է Բաթումում դեսանտ իջեցնել և Թուրքիայի Հայաստանի, Կրաստանի հետ միասին Բաքվում ու Կովկասում պատ կազմել Ռուսաստանի դեմ: Հոկտեմբերի 9-ին Լեգրանին ուղարկված հերթական հեռագրում Չիչերինը նշում է. «Դաշնակների կառավարությունը վերածվել է Անտանտի հարձակման բացահայտ գործիքի. Անտանտը դաշնակներին մատակարարում է զինամթերք, ինչ որ բան է պատրաստվում և թուրքական հարձակումը կարող է սադրիչ դեր խաղալ Անտանտի համար»:⁵

Նշելով, որ դաշնակցականների կառավարությունը վերածվել էր Անտանտի հարձակման բացահայտ գործիքի, չպետք է մոռանալ, որ Սևրի պայմանագիրը ավելի ծանրակշիռ էր քան հայ-ռուսական համաձայնագիրը: Ուր ինչպես նշում էր Լեոն. «Անտանտը հայերին դրել էր մի այնպիսի բարձրության վրա, որտեղ նրանք երբեք չէին եղել»:⁶

Այսպիսով, մի կողմից Ռուսաստանը հրահրում է Թուրքիային պատերազմ սկսել Հայաստանի դեմ, իսկ մյուս կողմից դեպքերի նպաստավոր զարգացման արդյունքում Թուրքիան կարողանում է բարելավել հարաբերությունները Անտանտի հետ, ու արդյունքում

¹ ДВП СССР, т. 2, с. 724-725.

² **Շահան Նաթալի.**, Թուրքերը և մենք., Ե. 1999. էջ 31:

³ **Հակոբյան Ա.**, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում., Ե. 2010. էջ 98:

⁴ **Արզումանյան Մ.Վ.**, Արհավիրքից վերածնունդ., Ե. 1973 էջ 333:

⁵ Նույնի, էջ 334:

⁶ **Լեո.**, Անցյալից., Ե. 2000. էջ 472:

Ռուսաստանը չի կարողանում վերահսկել Թուրքիայի քայլերն Անդրկովկասում: Ուի ինչպես նշում էր Գ. Չիչերինը՝ «մենք թուրքերի առաջխաղացումը կանխելու հնարավորություն չունենք»:¹ Մինչ Հայաստանում 1920թ հոկտեմբերի 28-ին ընթանում էին հայ-ռուսական բանակցությունները, թուրքական զորքերը 1920թ. հոկտեմբերի 31-ին գրավել էին Կարսը, նոյեմբերի 7-ին՝ Ալեքսանդրապոլը: Ռուսաստանը անհանգստություն հայտնեց, որ «քեմալականների հետ կապի բացակայության պատճառով իրենք անտեղյակ են Թուրքիայի հետագա ծրագրերից, որոնք սպառնում են փոխվել Ռուսաստանի համար ոչ ձեռնտու ուղղությամբ, ինչն անթույլատրելի է»:² Ստալինն ու Օրջոնիկիձեն որոշում են քեմալականների մոտ Կարս գործուղել կուսակցական հայտնի գործիչ Բուդդու Մոլիվանուն: Վերջինս Արևելքում եռանդուն գործնություն ծավալեց, լեզու գտնելով Կարաբեքիրի հետ, «ամեն ինչ արեց Թուրքիայի պահանջները բավարարելու, Հայաստանը ծնկի բերելու համար»:³ 1920 թ նոյեմբերի 7-ին Ստալինին ուղարկված Չիչերինի հեռագրում ասվում էր՝ «Անհրաժեշտ է փրկել Հայաստանը նրա խորհրդայնացման գնով»:⁴

Իսկ ինչ վերաբերում է Հայաստանին, քեմալաբոլշևիկյան ծրագիրը գրեթե ամբողջությամբ իրականացված էր, Հայաստանը գտնվում էր օրհասական իրավիճակում: Ինչպես հայտնի է Թուրքիայի արտգործնախարարի տեղակալ Ահմեդ Մուխթարի հղած դիմումից Մուստաֆա Քեմալին՝ «Հայաստանը գտնվում է խիստ լայնատարած մուսուլմանական մի հողատարածքի վրա, հետևապես անհրաժեշտ է նրան ինչպես քաղաքականապես այնպես էլ փաստականորեն ոչնչացնել : Հարկ է հաշվի առնել, որ քաղաքական ընդհանուր իրադրությունն ու հզորությունը բարենպաստ են այդ մտադրությունն իրականացնելու համար»:⁵ Թուրքական բանակը մտնում է Կարս, կրկին անգամ իրականացնում հայ ժողովրդի կոտորած՝ ոչնչացվեց 8 հզ. խաղաղ բնակիչ: Վերջապես գիտակցելով Հայաստանի անհուսալի դրությունը պատերազմում, և ձգտելով կանգնեցնել Թուրքիայի հարձակումը Ջաջուռի վրա Հայաստանի կառավարությունը նոյեմբերի 8-ին ընդունում է Թուրքիայի զինադադարի պահանջները: 1920 թ նոյեմբերի 18-ին խորհրդային Ռուսաստանը հանդես է գալիս հայտարարությամբ, որ պատրաստ է միջնորդի դեր ստանձնել: Լոնդոնում Ռուսաստանի առևտրական ներկայացուցիչ Լ.Կրասինին հաղորդած ռադիոհեռագրում Չիչերինը նշում է՝ որ «Թուրք ազգայնականների վերջին հաջողություններից հետո Հայաստանի դրությունը շատ տագնապալից է և Ռուսաստանի միջնորդությունը հենց ժամանակին է»:⁶ Հայկական իշխանությունների հետ բանակցություններում Ռուսաստանի ներկայացուցիչները նշում են, որ խորհրդային ղեկավարների միջնորդությունը կարող է իրական արդյունքներ տալ Հայաստանում միայն ռուսական բանակի առկայության պայմաններում, քանի որ քեմալականները Հայաստանի համար Ռուսաստանի հետ չեն պատերազմի: Մոլիվանին ավելացնում է նաև որ, «հարկավոր է դա վերջապես գիտակցել և ընդունել խորհրդայնացումը, այդ դեպքում հայ ժողովուրդը կփրկվի ոչնչացումից»:⁷

Իսկ խորհրդայնացումն ընդունելու դիմաց Ռուսաստանի ներկայացուցիչները խոստանում են վերականգնել Հայաստանի 1914թ. սահմանը: Սա փաստորեն Հայաստանը խաղաղ ճանապարհով խորհրդայնացնելու Ռուսաստանի անթաքույց պահանջն էր:

Մյուս կողմից, Քեմալականների հաղթական երթը Հայաստանի տարածքում չէր կարող չանհանգստացնել խորհրդային իշխանություններին, նրանց մոտ մեծ էր դեռ այն մտավախությունը, որ թուրքերը խորամանկում են և հետապնդում սեփական նպատակներ: Լենինին հեռագրած նամակում Ստալինը նշում է. «Թուրքերը ձգտում են ընդհանուր սահման ունենալ Ադրբեջանի հետ»:⁸ Ուստի Հայաստանը խորհրդայնացնելու խնդիրը դառնում էր հրատապ: Եվ 1920 թ. նոյեմբերի 29-ին Հատուկ գնդի ուղեկցությամբ ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոյի կողմից կազմավորված Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն, բոլշևիկյան

¹ Գալոյան Գ., Պատմության Քառուղիներում., Ե.1982 էջ 340:

² Խաչատրյան Կ., նշվ. աշխ. էջ 34:

³ Խորշոռյան Լ.Ա. „Հայաստանի բաժանումը 1920թ., Ե. 2002 էջ 242:

⁴ Նույնի, էջ 268:

⁵ Խաչատրյան Կ., նշվ. աշխ., էջ 35:

⁶ Խաչատրյան Կ., նշվ. աշխ.:

⁷ Նույնի, էջ 37:

⁸ Նույնի, էջ 38:

հայտնի գործիչ Սարգիս Կասյանի նախագահությամբ Ադրբեջանից մտնում է Իջևան և երկիրը հայտարարում Խորհրդային հանրապետություն: Իսկ 1920թ դեկտեմբերի 2-ին Հայաստանի գործող իշխանությունը հրաժարական է տալիս, ու Հայաստանը հայտարարվում է Սոցիալիստական անկախ հանրապետություն:

Այսպիսով, քեմալա-բոլշևիկյան ռազմաքաղաքական ճնշումներով, Հայաստանի գործող կառավարության ոչ ճիշտ քայլերի արդյունքում դադարեց գոյություն ունենալ Հայաստանի առաջին հանրապետությունը: Միջազգային հարաբերություններում և տարածաշրջանում ստեղծված քաղաքական բարդ իրավիճակում Հայաստանի արևմտյան Դաշնակիցների անգործության և Խորհրդային Ռուսաստանի որդեգրած արևելյան քաղաքականության, որը հիմնված էր քեմալական Թուրքիայի սերտ համագործակցության վրա, Հայաստանի խորհրդայնացումը միայն ժամանակի խնդիր էր: Եթե այն չիրականացվեր 1920թ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, ապա այն հայ ժողովրդի համար ավելի մեծ կորուստներով իրականություն կդառնար որոշ ժամանակ անց:

Անդրկովկասը դատապարտված էր խորհրդայնացվելու և ռուսական «կայսրության» կազմում ընդգրկվելու: Հայաստանի համար խորհրդայնացումը պահի առումով փրկություն էր, սակայն ապագայի համար 70-ամյա գաղութացում, որի ընթացքում կորցրեց տարածքների մեծ մասը: Իսկ այն փաստը, թե տնտեսապես Հայաստանի դրությունը խորհրդային Ռուսաստանի կազմում բարելավվել է, ապա դա կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ՝ Ռուսաստանն ընդհամենը իր «կայսրությունում» փորձում էր ապահովել սոցիալ-տնտեսական բարձր մակարդակ: ՈՒ «կայսրության» կազմում էլ գտնվում էր հպատակ Հայաստանը:

Այսպիսով, միշտ էլ հայկական շահերը համաձայնեցվել են ռուսական շահերի հետ, բայց ստացել է «ի շահ Հայաստանի» անվանումը: Եվ այն փաստը, թե Ռուսաստանը հետամուտ էր Հայաստանի առաջընթացին ու զարգացմանը և ի դեմս նրան Հայաստանն ունի «մեծ հովանավոր», դա ուղակի պատրանք է ստեղծված ռուսական քաղաքականության կողմից:

Ռուսաստանին պետք չէ ոչ հզոր Հայաստան, ոչ էլ հզոր Թուրքիա, նրան պետք է ընդամենը իր քաղաքական ազդեցությունը պահպանել տարածաշրջանում ու ստեղծված իրավիճակում դեպքերի զարգացումը ծառայեցնել իր իսկ երկրի շահերին:

Գրականություն

1. Պարսամյան Վ.Ա. Հարությունյան Շ.Ռ., Հայ Ժողովրդի Պատմություն. , Ե. 1979:
2. Վրացյան Ս. , Հայաստանի Հանրապետություն., Ե. 1993 :
3. Документы внешней политики(Д.В.П) СССР т 3 Москва 1959:
4. Խաչատրյան Վ. , Հայ ռուսական հարաբերությունները. , 1918-1920թթ. Ե. 2007:
5. Գալոյան Գ. , Հայաստանը և մեծ տերությունները. , Ե. 1999:
6. Բալայան Վ. , Արցախի պատմություն. , Ե. 2000:
7. Շահան Նաթալի. , Թուրքերը և մենք. , Ե. 1999:
8. Հակոբյան Ա. , Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում., Ե. 2010:
9. Արզումանյան Մ.Վ., Արհավիրքից վերածնունդ., Ե. 1973:
10. Լեռ. , Անցյալից. , Ե. 2000:
11. Գալոյան Գ. , Պատմության Քառուղիներում. , Ե. 1982:
12. Խուրշուդյան Լ.Ա. , Հայաստանի բաժանումը 1920թ., Ե. 2002:

ՀՏԴ 941(479.25)

Վերոնիկա Թորոսյան

ՀՊՄՀ Պատմության և իրավագիտության ֆակուլտետ

Պատմության բաժին, երրորդ կուրս

ՄՕՏՀ-Ը ՈՐՊԵՍ ԳՈՐԾՈՆ ՀԱՅ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ-ԱՂԲԵՋԱՆԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր – ՄՕՏՀ, ՄՕՏՀ ԽՎ, անդամ-երկրներ, միջպետական քաղաքական կոնֆլիկտներ, հայ-թուրքական հարաբերություններ, հայ-ադրբեջանական հարաբերություններ

Ամփոփում

ՄՕՏՀ-ը՝ ձևավորված սևծովյան տարածաշրջանի երկրների կողմից Թուրքիայում 1992թ. որպես տնտեսական կազմակերպություն, հանդիսանում է կարևոր հարթակ՝ անդամ երկրների միջև քաղաքական հարաբերությունների ձևավորման և զարգացման, միջպետական կոնֆլիկտների հարթման ուղղված քայլեր ձեռնարկելու համար: Հաշվի առնելով, որ անդամ-երկրների արտաքին քաղաքականությունն ու տնտեսությունը անմիջականորեն շաղկապված են միմյանց, տարածաշրջանային տնտեսական այս համագործակցությանը պետք է քաղաքական տեսանկյունից հատկացնել մեծ ուշադրություն:

*Вероника Торосян
АГПУ,*

факультет истории и юриспруденции, 3-ий курс

ОЧЭС КАК ФАКТОР В АРМЯНО-ТУРЕЦКИХ И АРМЯНО-АЗЕРБАЙДЖАНСКИХ ОТНОШЕНИЯХ

Ключевые слова: ОЧЭС, КА ОЧЭС, страны-участницы, межгосударственные политические конфликты, армяно-турецкие отношения, армяно-азербайджанские отношения.

Резюме

ОЧЭС-созданный странами черноморского региона в 1992г. в Турции как экономическая организация, является важной платформой для формулирования и укрепления политических отношений и решений межгосударственных конфликтов. Принимая тот факт, что иностранная политика и экономика стран-членов непосредственно связаны друг с другом, надо уделять большое внимание этому региональному сотрудничеству с политической точки зрения.

Veronika Torosyan

ASPU, the faculty of history and jurisprudence, 3rd year

BSEC AS A FACTOR IN ARMENIAN-TURKISH AND ARMENIAN-AZERBAIJANIAN RELATIONS

Key words: BSEC, CA BSEC member-countries, inter-state political conflict, Armenian-Turkish relations, Armenian-Azerbaijani relations.

Summary

BSEC- made by countries of Black Sea region as an economic cooperation organization in Turkey in 1992, is an important platform for forming and developing political collaborations between member-countries and solving political issues. Considering the fact, that foreign policy and economy of member-countries are directly connected to each other, countries have to pay attention to this regional economic cooperation from a political point of view.

Հոդվածը նպատակ ունի վեր հանելու Սևծովյան տնտեսական համագործակցության (այսուհետ՝ ՄՕՏՀ) արտաքին քաղաքական-դիվանագիտական կողմը: ՄՕՏՀ անդամ գրեթե բոլոր երկրները քաղաքական կոնֆլիկտներ ունեն իրար հետ (Հայաստան-Ադրբեջան, Հայաստան-Թուրքիա, Վրաստան-Ռուսաստան, Սերբիա-Ալբանիա, Հունաստան-Թուրքիա և այլն), ուստի այն կարևոր հարթակ է տարածաշրջանային խնդիրների լուծման, միջպետական հարաբերությունների ձևավորման ու ամրապնդման համար:

ՄՕՏՀ անդամ երկրների կողմից ստորագրված մի շարք պայմանագրեր, հուշագրեր և համաձայնագրեր (1.Սևծովյան օղակաձև մայրուղու համակարգված զարգացման ու ՄՕՏՀ տարածաշրջանում ծովային մայրուղիների զարգացման վերաբերյալ փոխըմբռնման հուշագրերը, 2. ՄՕՏՀ չորս անդամ-երկրների՝ Ալբանիայի, Հայաստանի, Մոլդովայի և Թուրքիայի կողմից ստորագրված Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության անդամ-երկրների քաղաքացի հանդիսացող բեռնատար մեքենաների վարորդների համար անդամ-երկրներում արտոնագրերի տրամադրման ընթացակարգերի դյուրացման մասին, 3. Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության անդամ-երկրների քաղաքացի հանդիսացող գործարարների համար անդամ-երկրներում արտոնագրերի տրամադրման ընթացակարգերի դյուրացման մասին համաձայնագրերը)¹ ենթադրում են ստեղծել տնտեսական միասնական ուղի հայ-թուրքական և հայ-

¹ ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայքէջ՝ Արտաքին քաղաքականություն-Միջազգային կազմակերպություններ, <http://www.mfa.am/>

աղբրեջանական կողմերի համար, ուստի և իրենցից բխեցնում են քաղաքական լարվածության վերացում և խաղաղ համագործակցային հարթակի ստեղծում այն դեպքում, երբ Հայաստանի և Թուրքիայի միջև բացակայում են դիվանագիտական հարաբերությունները. երկրները չունեն բաց սահման, իսկ Հայաստանի և Աղբրեջանի միջև գոյություն ունեցող տարածքային հակասությունները դեռ գտնվում են խաղաղ կարգավորման բանակցային փուլում:

Հարկ է նշել, որ ՄՕՏՀ-ն այս տեսանկյունից չի ենթարկվել բավարար ուսումնասիրության, ուստի մեր առաջ խնդիր ենք դրել ուսումնասիրել կազմակերպությունը՝ որպես կարևոր օղակ, տարածաշրջանային միջպետական քաղաքական կոնֆլիկտների լուծման գործընթացում՝ ի դեմս հայ-թուրքական և հայ-աղբրեջանական կողմերի:

ՄՕՏՀ-ը՝ որպես տնտեսական համագործակցային կառույց, հռչակվել է 1992 թվականի հունիսի 25-ին Ստամբուլում (Թուրքիա) հրավիրված գազաթնաժողովի ժամանակ՝ սնծովյան տարածաշրջանի տասնմեկ երկրների կողմից (Աղբրեջան, Ալբանիա, Բուլղարիա, Թուրքիա, Հայաստան, Հունաստան, Մոլդովա, Ռումինիա, Ռուսաստան, Վրաստան, Ուկրաինա) ստորագրված հռչակագրի միջոցով: 2004 թվականին կազմակերպությանը որպես անդամ միացել է Սերբիան: 2012 թ. հունիսի 26-ին ընդունվեց ՄՕՏՀ կազմակերպության հիմնադրման 20-ամյակին նվիրված հոբելյանական Հռչակագիրը¹:

ՄՕՏՀ-ը նպատակ ունի նպաստելու անդամ երկրների միջև փոխգործակցության ամրապնդմանն ու խորացմանը, ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժին, բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը, ինչպես նաև Սնծովյան տարածաշրջանում հաստատել խաղաղություն, կայունություն, բարգավաճում և նպաստելու անդամ երկրների՝ համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու գործին: Այն զբաղեցնում է շուրջ 20 միլիոն քառակուսի կիլոմետր տարածք՝ ընդգրկելով Սնծովյան տարածաշրջանի, Բալկանների և Կովկասի երկրները՝ շուրջ 350 միլիոն բնակչությամբ: Անդամ երկրների միջև առևտուրը տարեկան գերազանցում է 300 միլիարդ դոլարը: Կազմակերպությունում դիտորդի կարգավիճակ ունեն Եգիպտոսը, Ավստրիան, Բելոռուսը, Խորվաթիան, Չեխիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իսրայելը, Իտալիան, Լեհաստանը, Սլովակիան, Թունիսը, ԱՄՆ-ը: Եվրամիությունը մի շարք միջազգային այլ կազմակերպությունների հետ մեկտեղ վայելում է նույն կարգավիճակը: 1998թ. հունիսի 5-ին Յալթայի գազաթնաժողովում անդամ երկրների ղեկավարների կողմից ընդունվել է ՄՕՏՀ Կանոնադրությունը²:

ՄՕՏՀ-ը կազմված է անդամ-երկրների Արտաքին գործերի նախարարների խորհրդից, որը հանդիսանում է կազմակերպության շրջանակում որոշումներ կայացնող գերագույն մարմինը: Խորհրդի հերթական հանդիպումները գումարվում են տարեկան երկու անգամ՝ մայիս-հունիսին և նոյեմբեր-դեկտեմբերին, անհրաժեշտության դեպքում գումարվում են նաև հատուկ կամ ոչ-պաշտոնական հանդիպումներ: Խորհրդի հանդիպումները գումարվում են ՄՕՏՀ անդամ-երկրներում այբբենական կարգով և կարգավորվում են ՄՕՏՀ Նախագահության կողմից: Նախագահությունը նույնպես կարգավորվում է նույն սկզբունքով: Նախագահության ժամկետը տևում է վեց ամիս՝ սկսած յուրաքանչյուր տարվա հունվարի և հուլիսի 1-ից: ՄՕՏՀ անդամ-երկրների Արտգործնախարարների խորհրդի կողմից 1994 թ. մարտի 10-ին ընդունված որոշմամբ, Ստամբուլում հիմնադրվել է ՄՕՏՀ Մշտական միջազգային քարտուղարությունը³:

ՄՕՏՀ շրջանակներում տեղի ունեցած հետևյալ իրադարձությունները կարևոր նշանակություն են ունեցել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում:

Չնայած հայ-թուրքական հարաբերություններում առկա լարվածությանը՝ երկու կողմերն էլ հետաքրքրված են եղել պետություններում առևտրատնտեսական հարաբերությունների բարելավմամբ: Այս է փաստում 1992թ. հունիսի 23-26-ը ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորած պատվիրակության այցը Թուրքիա, որի նպատակն էր մասնակցել Սնծովյան

¹ Նույն տեղում:

² Organization of the Black Sea Economic Cooperation, <http://www.bsec-organization.org/>

³ Նույն տեղում:

տնտեսական համագործակցության կազմակերպության համաժողովին: Այցի շրջանակներում տեղի ունեցավ ՀՀ նախագահի և Թուրքիայի վարչապետի հանդիպումը: Հանդիպման ընթացքում, անդրադառնալով Հայաստան-Թուրքիա երկկողմ հարաբերություններին, մասնավորապես Լևոն Տեր-Պետրոսյանն ընդգծեց, որ դրանք չպետք է պայմանավորված լինեն հայ-ադրբեջանական հարաբերություններով: Ի պատասխան՝ վարչապետ Ս. Դեմիրելն ընդգծեց, որ սկզբունքորեն իրենք համաձայն են, սակայն Արցախում արյուն է հեղվում, և երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը խոչընդոտող միակ հանգամանքը շարունակվող ռազմական ընդհարումներն են: Բայց և այնպես, ՀՀ նախագահի այցելությունը Թուրքիա որոշակի դրական ազդեցություն ունեցավ երկկողմ հարաբերությունների վրա¹:

Սա Հայաստանի երրորդ հանրապետության պատմության մեջ առաջին նախագահական այցն էր Թուրքիայի Հանրապետություն: Ինչպես պարզ է դառնում վերը նշվածից, տնտեսական համագործակցության հարցերից զատ, ՀՀ նախագահը և Թուրքիայի վարչապետը քննարկել են նաև քաղաքական հիմնախնդիրներ: Ինչը ևս մեկ անգամ գալիս է ապացուցելու, որ երկու պետությունների միջև տնտեսական և քաղաքական հարաբերությունների ձևավորումները սերտորեն աղերսվում են միմյանց: Հարկ է նշել նաև այն կարևոր հանգամանքը, որ հայ-թուրքական հարաբերությունների բարելավումը թուրքական կողմը անմիջականորեն կապում էր Արցախյան հիմնախնդրի լուծման հետ: Թուրքական կողմի վարած այս քաղաքականությունը շարունակվել է հետագայում՝ վճռորոշ ազդեցություն ունենալով նաև Տյուրիխյան արձանագրությունների տապալման հարցում:

ՄՕՏՀ անդամ-երկրների արտգործնախարարների խորհրդի՝ 1994թ. մարտի 10-ին ընդունած որոշմամբ՝ Ստամբուլում հիմնադրվել է ՄՕՏՀ Մշտական միջազգային քարտուղարություն: Չնայած երկու պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների բացարձակ բացակայությանը՝ 2001 թ. օգոստոսից Ստամբուլում գործում է ՄՕՏՀ-ում Հայաստանի Հանրապետության Մշտական ներկայացուցչությունը՝ իր ողջ անձնակազմով²:

Ուշագրավ է թուրքական լրատվամիջոցների անդրադարձը այս իրադարձությանը: Թուրքական «Ռադիկալ» թերթում տպագրված Արիս Նալջրլի հեղինակային հոդվածում ասվում է, որ Ստամբուլում՝ ՄՕՏՀ շրջանակներում, Հայաստանի ներկայացուցիչների մեծամասնությունը աշխատում է ՀՀ ԱԳՆ-ում և կարիերային դիվանագետներ են: Այսպես Հայաստանը Թուրքիային մոտիկից ծանոթանալու հնարավորություն է ունենում³:

Երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում ՄՕՏՀ շրջանակներում Հայաստանի ներկայացուցչության գրասենյակը միակ պաշտոնական գրասենյակն է Թուրքիայում, այդ պատճառով էլ կարևոր դերակատարություն ունի: Այն մեծացնում է դիվանագետների երկկողմ հանդիպումների հավանականությունը: Նման մակարդակի շփումները իրենց հերթին կարող են հանգեցնել պետությունների միջև գոյություն ունեցող քաղաքական լարվածության թուլացմանը:

Հաջորդ կարևոր իրադարձությունը հայ-թուրքական հարաբերություններում ՄՕՏՀ շրջանակներում՝ Տյուրիխյան արձանագրությունների տապալումից հետո Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուի 2013 թվականին կատարած այցն էր Հայաստան: Նա դեկտեմբերի 12-ի առավոտյան ժամանել էր Երևան՝ մասնակցելու ՄՕՏՀ արտգործնախարարների 29-րդ նիստին⁴:

¹ Milliyet, www.milliyet.com.tr, 27.06.1992.

² Սիվիլնեթ, <http://civilnet.am>, 13.11.2014.

³ HayNews.am, <http://www.haynews.am>, 17.12.2013.

⁴ Ermeni Haber Ajansi, <http://www.ermenihaber.am/tr>, 12.12.2013.

Հարկ է նշել, որ Ա. Դավութջյանին ուղեկցող պատվիրակության մեջ էին ընդգրկված Ստամբուլի հայկական «Ակոս» շաբաթաթերթի խմբագիր Ռոբեր Քոփթաշը և «Յենի շաֆաք» թերթի հոդվածագիր Մարգար Եսայանը: Բայց ամենամեծ անակնկալը Սամսոն Օզարարատի ներկայությունն էր թուրքական պատվիրակության մեջ: Վերջինս մինչ այդ ՄՕՏՀ գործադիր խորհրդում Հայաստանի ներկայացուցիչն էր եղել, ով վերոնշյալ պահին որևէ պաշտոն չէր զբաղեցնում¹:

Ա. Դավութջյանի այս քայլը միտված էր միջազգային հասարակությանը ցույց տալու, որ երևանյան կարճատև այցի ընթացքում թուրքական կողմը այս կերպ ցանկանում է ձեռք մեկնել հայկական կողմին:

Ուշագրավ է, որ թուրքական մամուլում Դավութջյանի այցը ոչ թե դիտարկվում էր ՄՕՏՀ կազմակերպության համաժողովի շրջանակում, այլ փորձ էր արվում միջազգային հանրությանը այն ներկայացնել որպես Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորմանը ուղղված քայլ: Դա այն դեպքում, երբ թե՛ Ա. Դավութջյան, թե՛ Թուրքիայի արտաքին գերատեսչական մարմինները նշում են, որ հաստիկ ուշադրություն չպետք է դարձնել այցին, քանի որ այն ՄՕՏՀ կազմակերպության շրջանակում կայանալիք հերթական հանդիպումն է:

Անդրադառնալով Դավութջյանի այցին՝ թուրքական «Հյուրիյեթ» թերթը գրում է. «Արդեն սկսվել են Հայաստանյան իր պաշտոնակցի հետ տեղի ունենալիք հանդիպման համար նախապատրաստական աշխատանքները: Սպասվում է, որ այդ հանդիպմանը Հայաստանի ու Ադրբեջանի միջև ծագած դարաբաղյան հիմնախնդրի լուծման բանակցային գործընթացի հետ միասին կքննարկվի նաև ցյուրիխյան արձանագրությունների վերակենդանացման հարցը»²:

Մեկ այլ անդրադարձ Ա. Դավութջյանի երևանյան այցին կատարել էր թուրքական ամենահայտնի թերթերից մեկը՝ Zaman-ը: Հոդվածը սկսվում է դիտարկմամբ, թե Դավութջյանի այցը 1915թ. իրադարձությունների 100-րդ տարելիցի նախօրեին է: Zaman-ը Դավութջյանի այցը համեմատում է Թուրքիայի նախկին արտգործնախարար Այի Բաբաջանի այցի հետ, ով 2009թ.՝ կրկին ՄՕՏՀ կազմակերպության համաժողովի ընթացքում, հանդիպեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի եւ Էդվարդ Նալբանդյանի հետ, ինչից հետո թափ ստացավ հայ-թուրքական հաստիկ «ֆուտբոլային դիվանագիտությունը»³:

Այս համեմատությունը թույլ է տալիս ենթադրել, որ թուրքական ՁԼՄ-ները իրենց արտգործնախարարի այցին տալիս են քաղաքական կարևոր նշանակություն՝ այն համարելով հայ-թուրքական հարաբերությունները փակուղուց դուրս բերելու միջոց: Կարևոր է ընդգծել յրատվամիջոցի կողմից արված նկատառումը, որը անդրադառնում է 1915թ. իրադարձություններին: Այս կերպ թուրքական կողմը փորձում է ցույց տալ, որ հայերի ցեղասպանության հիմնահարցը շարունակում է մնալ Թուրքիայի արտաքին քաղաքականության կիզակետում:

Քանի որ Հայաստանի և Ադրբեջանի միջև չկան հաստատված դիվանագիտական հարաբերություններ, ՄՕՏՀ-ն այս դեպքում ևս անուղղակիորեն դառնում է այն բացառիկ հարթակներից մեկը, որտեղ խաչվում են երկու պետությունների շահերը:

Չնայած ՄՕՏՀ խորհրդարանական վեհաժողովի (այսուհետ՝ ՄՕՏՀ ԽՎ) նիստերի ժամանակ բազմիցս նշվել է, որ միությունը կրում է բացառապես տնտեսական բնույթ, ադրբեջանական պատվիրակները, օգտագործելով ցանկացած հարմար առիթ, Հայաստանին ներկայացնում են որպես ագրեսոր երկիր, որը օկուպացրել է իրենց երկրի տարածքի 20

¹ Hurriyet Daily News, <http://www.hurriyetdailynews.com>, 12.12.2013.

² Hurriyet Daily News, <http://www.hurriyetdailynews.com>, 11.12.2013.

³ Հայկական Ժամանակ, <http://armtimes.com>, 10.12.2013:

տոկոսը: Հայկական կողմը, իր հերթին, բազմիցս դիմել է հակադարձ քայլերի: Ասել, որ այս հայտարարությունները ազդեցություն չեն ունենում մյուս անդամ երկրների ներկայացուցիչների վրա, սխալ կլինի:

Նման հակասությունների օրինակներից է Բուլղարիայում՝ ՄՕՏՀ երկրների խորհրդարանական համագործակցության 41-րդ վեհաժողովի ընթացքում, ադրբեջանական ու հայկական պատվիրակությունների միջև տեղի ունեցած բախումը, որի պատճառը ադրբեջանական պատվիրակության անդամ Ասադ Հաջիևի ելույթն է եղել, ով նկարագրելով իր երկրի խնդիրները, ասել էր, թե Ադրբեջանը կարող էր տուրիզմի բնագավառում ավելի շատ հաջողություններ ունենալ, եթե իր տարածքի «20 տոկոսն օկուպացված չլիներ» Հայաստանի կողմից¹: Հայկական կողմը, իր հերթին, Թուրքիայի Տրապիզոն քաղաքում տեղի ունեցած ՄՕՏՀ ԽՎ 36-րդ լիագումար նիստի ժամանակ՝ ի դեմս հայաստանյան պատվիրակության ղեկավար Գազիկ Մինասյանի, անդրադարձել է Ադրբեջանի կողմից Ջուդայի խաչքարերի ոչնչացմանը: Նշվել է, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն իր հատուկ որոշումով դատապարտել է 2005 թվականին հազարից ավելի հայկական խաչքարերի ոչնչացումը²:

Հատկապես կարևոր է նշել, որ ադրբեջանական կողմը ապակառուցողական քաղաքականություն է ցուցաբերում ՄՕՏՀ շրջանակներում համաձայնագրերի կնքման հարցերում, որը բացասաբար է անդրադառնում տարածաշրջանում Հայաստանի տնտեսական աճի վրա: Ադրբեջանի ցուցաբերած անհանդուրժողականությունը՝ ՄՕՏՀ ծրագրերում Հայաստանի մասնակցության հանդեպ, գայիս է ապացուցելու այն փաստը, որ երկու երկրների միջև առկա քաղաքական հակասությունները անվիճելի ազդեցություն են թողնում հավանական տնտեսական համագործակցության վրա:

Նման օրինակ կարող է հանդիսանալ Սևծովյան օղակաձև մայրուղու համակարգված զարգացման մասին փոխըմբռնման հուշագրի վերաբերյալ Ադրբեջանի Հանրապետության վերապահումը՝ ստորագրված Էլմար Մամեդյարովի կողմից: Վերապահումում ասվում է, որ Ադրբեջանի Հանրապետությունը հայտարարում է, որ «Սևծովյան օղակաձև մայրուղու համաձայնեցված զարգացման մասին» Փոխըմբռնման հուշագրում ամրագրված ոչ մի իրավունք, պարտավորություն կամ դրույթ չի կիրառվում Ադրբեջանի Հանրապետության կողմից իր տարածքը հատող ճանապարհների կամ փոխադրամիջոցների նկատմամբ, որոնց համար Հայաստանի Հանրապետությունը մեկնման, տարանցման կամ նպատակակետ տարածք է³:

Հայկական կողմը, առարկելով Ադրբեջանի Հանրապետության այս վերապահման դեմ, հայտարարել է, որ Ադրբեջանի Հանրապետության կողմից կատարված վերապահումը, լինելով ընդհանուր բնույթի և անորոշ, չունենալով կիրառման հստակ սահմաններ և պայմաններ անհնարին է դարձնում նշված Փոխըմբռնման հուշագրի՝ ոչ միայն Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև կիրառումը, այլև նման բովանդակությամբ վերապահումն անհնար է դարձնում համագործակցությունը ՄՕՏՀ անդամ պետությունների միջև վերոնշյալ փոխըմբռնման հուշագրի շրջանակներում:

Հայաստանի Հանրապետությունը գտնում է, որ Ադրբեջանի Հանրապետության կողմից Փոխըմբռնման հուշագրի նկատմամբ կատարված վերապահումը հակասում է այդ հուշագրի առարկային և նպատակին, որն անթույլատրելի է միջազգային իրավունքի տեսանկյունից⁴:

Ուսումնասիրելով հայ-ադրբեջանական փոխհարաբերությունները ՄՕՏՀ շրջանակներում՝ հանգում ենք այն եզրակացության, որ քաղաքական հիմնախնդիրները մեծապես խանգարում են տարածաշրջանում տնտեսապես ավելի զարգանալու թե՛ Հայաստանին, թե՛ Թուրքիային: Ուստի այդ հիմնախնդիրներին լուծում տալը բխում է

¹ Trend News Agency, <http://www.trend.az>, 11.09.2013.

² HayNews.am, <http://www.haynews.am>, 12.11. 2010.

³ Սևծովյան օղակաձև մայրուղու համակարգված զարգացման մասին փոխըմբռնման հուշագիր, 19.04.2007, Բելգրադ:

⁴ Նույն տեղում

միաժամանակ երկու երկրների շահերից: Չնայած ՄՕՏՀ ԽՎ նիստերի ընթացքում երկու պետությունների ներկայացուցիչները հաճախ են բռնվում բանավեճերի և, համապատասխանաբար, պետությունների անուններ հաճախ են շահարկվում, փակ սահմանների պայմաններում սա կարևոր հարթակ է խորհրդարանական դիվանագիտության միջոցով երկկողմ բանակցությունների գնալու համար: Ինչն էլ կարող հանգեցնել քաղաքական լարվածությունը թուլացնելուն միտված որոշումների ընդունմանը:

Գրականություն

1. <http://www.mfa.am/>
2. <http://www.bsec-organization.org/>
3. Սևծովյան տնտեսական համագործակցության խորհրդարանական վեհաժողովի արտոնությունների և անձեռնմխելիությունների մասին արձանագրություն, ՀՀԱԳՆՊՏ 2009.12.30/11(19) Հոդ.6, Բաքու, 31.10.2003
4. ՀՀ նախագահի հրամանագիրը «Սևծովյան օղակաձև մայրուղու համակարգված զարգացման մասին» փոխըմբռնման հուշագիրը (Ադրբեջանի Հանրապետության վերապահման դեմ ՀՀ առարկությամբ) հաստատելու մասին, ՀՀՊՏ 2008.12.17/72(662) Հոդ. 1301, Երևան, 05.12.2008
5. Սևծովյան օղակաձև մայրուղու համակարգված զարգացման մասին փոխըմբռնման հուշագիր, ՀՀԱԳՆՊՏ 2009.12.30/11(19) Հոդ.5, Բելգրադ, 19.04.2007
6. www.parliament.am
7. www.haynews.am
8. Հայկական Ժամանակ օրաթերթ
9. www.armenpress.am
10. www.arlis.am
11. archive-am.com
12. www.civilnet.am
13. www.panorama.am
14. www.day.az
15. www.1news.az
16. <http://ru.apa.az>
17. Hurriet Daily Nesws
18. Milliyet
19. Ermeni Haber Ajansi
20. Trend News Agency

ՀՏԴ 941(479.25)=054

Գեղամա Խուդավերդյան
Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան
Էլ. Փոստ՝ geghama.khudaverdian@mail.ru

ԷԶԵՐ ՄԵՎՔԱՐԵՑԻ ՍԱՔՈՅԻ ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

Բանալի բառեր. Սևբարեցի Սաքո, հայդուկներ, Խանասորի արշավանք, Դերիկի վանք, Սալմաստ, Մշո ղաշտ, Հայ Յեղափոխական Դաշնակցություն, Դիլիջան, Սբ. Կարապետ վանք:

Ամփոփում

Պատմական այնպիսի ժամանակահատվածում, երբ համիդյան ջարդարար սուրն անխուսափելիորեն սպառնում էր Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայությանը, քաջ մարտիկ Սևքարեցի Սաքուն և նրա անձնակազմի ընկերները իրենց պարտավորված էին զգում, և իրենց համար առաջնահերթ ու կարևորագույն գերիստիտի էին դարձրել ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպումը: Սևքարեցի Սաքուն ամեն գնով փորձում էր որդեգրել առավել գործուն և կենսունակ ռազմավարություն և մշակել այնպիսի մարտավարություն, որը կպաշտպաներ արևմտահայությանը թշնամու բռնություններից և վայրագություններից: Բայց միևնույն ժամանակ հասկանում էր, որ հայդուկային-պարտիզանական մասնակի մարտական գործողությունները՝ չնայած իրենց հերոսականությանը, չէին կարող դրական և արդյունավետ լուրջ փոփոխություններ մտցնել, այլ դրանք կրում էին միայն ժամանակավոր բնույթ:

Geghama Khudaverdya

АГПГУ

geghama.khudaverdian@mail.ru

CHAPTERS FROM THE HAYDUK ACTIVITY OF SEVKARETSI SAKO**Summary**

In the period of history when Hamid slaughter's sword inevitably threatened the Armenians in the Ottoman Empire, one of the brave fighters Sevkaretsi Sako (Sarkis from Sevkar) and his dedicated friends felt their selfless duty and top priority to organize self-defense of people. Sevkaretsi Sako is trying in any way to adopt the most effective and viable strategy and also to work out some effective war tactics that would protect the Western Armenia from the violence and atrocities of the enemies. But at the same time he understood that despite partial military activities of Hayduks and their heroism they could not initiate serious, positive and effective changes and it was only temporary.

Гегам Худавердян

АПСУ

geghama.khudaverdian@mail.ru

СТРАНИЦЫ ГАЙДУКСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ САКО СЕВКАРСКОГО**Резюме**

В тот исторический период, когда боевой меч Хамида неизбежно угрожал армянскому населению, проживающему на территории Османской империи, храбрый воин Сако Севкареци и его самоотверженные друзья чувствовали себя должным перед народом, поэтому для них стала первичной и главенствующей проблемой организация самообороны народа. Сако Севкареци любой ценой пытался освоить более действующую и жизнеспособную стратегию и разработать такую тактику, которая защитит западных армян от насилия и зверства врага. Но в то же время он понимал, что айдукско-партизанские частичные боевые действия, несмотря на их героизм, не могли внести положительные и эффективные, серьезные изменения, а это было всего лишь временным.

1890-ական թվականները, պայմանավորված համիդյան «արյունոտ» քաղաքականությամբ, կարելի է սահմանել որպես ինքնապաշտպանության, մարտական ու զինակիր խմբերի կազմակերպման և հայդուկային պարտիզանական կռիվների ու ահաբեկչական գործողությունների իրականացման շրջան: Այդ ժամանակահատվածում Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող դեպքերի թելադրանքով բազում հայրենակներ հայորդիներ համախմբվում էին և ձգտում գորավիզ կանգնել, պաշտպանել ջարդերի սպառնալիքից արևմտահայությանը¹: Պատմական տվյալ ժամանակահատվածում մասնակի մարտական ձեռնարկումներով ու գործողություններով գործելու անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը՝ որպես պայքարի ընդունելի մարտավարություն դարձնելով՝ աչքի ընկավ Սևքարեցի Սաքուն:

Սևքարեցի Սաքուն ծնվել է 1870 թ. նոյեմբերի 13-ին: Նրա հայրենի գյուղը՝ Սևքարը, գտնվում է Տավուշի մարզում՝ Դիլիջանից ոչ հեռու: Եղել է Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության անդամ, ազգային-ազատագրական պայքարի ամենավաղ գործիչներից մեկը: Իր գործունեությունը սկսել է, ազգային-ազատագրական գաղափարները ձևավորվել են դեռևս 1890թ., երբ ծանոթացել է Սարգիս Կուկունյանի հետ: Սկսում է

¹ Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի հերոսապատումից, Երևան, 2006, էջ 17:

համագործակցել Քրիստափոր Միքայելյանի, Ստեփան Զորյանի (Ռոստոմ) հետ: 1890-ական թվականներին Սևքարեցի Սաքոն հանդես էր գալիս որպես զինատար խմբերի անդամ, ընդ որում՝ արևելահայ և արևմտահայ զինատար խմբերի միջև կապ հաստատող գործիչներից մեկը¹:

1897թ. Սևքարեցի Սաքոն շարունակում էր զբաղվել զենքի տեղափոխությամբ: Չնայած այս շրջանում սաստիկ դժվար էր զենք տեղափոխել Պարսկաստանի մի քաղաքից մյուսը, այդուհանդերձ հայ զինատար խմբերը կարողանում են իրականացնել իրենց ծրագրերը, իսկ շատ դեպքերում՝ նաև կանաց օգնությամբ: Փետրվար ամսին՝ մի այդպիսի փոխադրության ընթացքում, տեղի ունեցավ նմանատիպ մի դեպք Սևքարեցի Սաքոյի զինատար խմբի հետ: Նրանց են հանդիպում մի խումբ օրիորդներ, որոնցից մեկը խնդրում է միանալ հայդուկներին: Այսպես միասին հասնում են Սոֆիան գյուղը և ապա հաջորդ առավոտ շարժվում են Դիլախալի գյուղը: Օրիորդները կարողանում են զենքը թաքցնել իրենց իրերի մեջ և այդպիսով կասկած չեն հարուցում: Այսպիսի օգնության առկայությամբ հայդուկները անցնում են հերթական մաքսատունը, իսկ շուտով արդեն նրանցից մեկը՝ Աննա Մարդուլյանը, նույնիսկ ցանկություն է հայտնում մտնել հայդուկների շարքերը և ինչ որ բանով օգտակար լինել շարժմանը: Ինքը՝ Սևքարեցի Սաքոն, պատասխանում է, որ աղջկա խնդրանքը կատարելու համար կանի հնարավորության սահմաններում ամեն բան, սակայն շատ բան չի խոստանում, քանի որ ամեն ինչ չէ, որ իրենից է կախված: Սալմաստում հայդուկների խումբը բաժանվում է աղջիկներից և ուղղվում դեպի Ղալազար:

Երկու օր հետո Սևքարեցի Սաքոն շարժվում է Մակու, ապա Խոյ, որտեղ և հանդիպում է Ն. Դումանին, ով էլ նոր էր եկել Ռոսաստանից: Մեկ շաբաթ մնալով Խոյում՝ շուտով ճանապարհ է ընկնում ու Տղմուտ գետով անցնում Մակու: Երեկոյան, երբ հասնում է Մակու, Սևքարեցի Սաքոն ծանոթանում է մի խումբ երիտասարդների հետ, որոնց հայտնում է իր նպատակների մասին, այդ թվում և այն, որ անհրաժեշտ է զենքի փոխադրության համար մի պահեստ պատրաստել: Այստեղ նրան խորհուրդ են տալիս որպես այդպիսի զինապահեստ օգտագործել Թաղեոս Առաքյալի վանքը: Համոզվելով, որ վանքը, իրոք, հարմար է որպես զինապահեստ, այս երիտասարդներին որոշակի կարգադրություններ անելով՝ մեկնում է Շահթաղթ, ապա Երևան: Երևանում Սևքարեցին հանդիպում է մի քանի ընկերների հետ, այնուհետև վերադառնում է Մակու՝ այստեղ ստանձնած գործի շարունակությունը թողնելով ընկերներին, իսկ ինքը վերադառնում է Սալմաստ: Սալմաստում նա գրություն է ստանում՝ համաձայն որի բոլոր իրերը՝ զենքերը, տեղափոխվել են Սբ. Ստեփանոս Նախավկայի վանք²: Սևքարեցին և Բեզը Ն. Արիսբեկյանը իրենց հերթին մեկնում են վանք, ապա հանդիպում ունենում տեղի վանահոր հետ, իսկ այնուհետև կրկին վերադառնում Սալմաստ՝ կարողանալով հաջողությամբ անցնել բոլոր մաքսատներից³:

Մայիս ամսին հավաքվել էին շուրջ երեք հարյուր հայդուկներ, որոնք բաժանվեցին հայկական գյուղերի միջև՝ յուրաքանչյուր տանը տալով մեկ հայդուկ: Գյուղացիները նրանց ընդունում էին մեծ ուրախությամբ և պահում իրենց սեփական ծախսերով: Կոմիտեի կողմից սահմանվել էին վերակացուներ, որպեսզի հսկեն հայդուկներին, որ վերջիններս գյուղացիների առաջ մեծ պահանջներ չդնեն:

Վճռական պահի համար ամեն ինչ պատրաստ էր: Բանն այն է, որ 1896թ. Հունիսին քուրդ մագրիկ ցեղախումբը սուլթան Աբդուլ Համիդի («Արյունոտ սուլթան»-ի) հրամանով Վանի հայոց ինքնապաշտպանությունից հետո հարձակվել էր դեպի Պարսկաստան նահանջող անգլեն մարտիկների վրա և կոտորել գրեթե բոլորին: Մա, այսպես ասած, «լցրեց հայերի համբերության բաժակը» և առիթ հանդիսացավ Հայ Յեղափոխական Դաշնակցության կողմից վրեժխնդրական գործողություն կազմակերպելու համար: Նախատեսվում էր արշավանք իրականացնել քրդական ցեղերի դեմ: Սակայն հայդուկների խմբի մեջ կար երկպառակություն: Բոլոր ասպուրականցիները և մասամբ Կոմիտեի անդամները, այդ թվում նաև Սաքոն դեմ էին «արշավանք» կազմակերպելուն: Վերջիններս պնդում էին, որ մեծ խմբով բոլորը միասին պետք

¹ Հայոց պատմություն (խմբ. Խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշներ), հ. 3, գիրք 1, Երևան, 2010, էջ 567:

² Հայոց պատմություն (խմբ. Խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշներ), հ. 3, գիրք 1, էջ 567:

³ «Դրօշակ», 1930, մարտ, էջ 81:

է անցնեն Վասպուրական, Շատախի և Մոկսի լեռները և ամրանան այնտեղ, իսկ վերջիններիս հակառակորդները պնդում էին, որ 1896թ. Ռայոնական Ժողովը վճռել է արշավանք և պետք է ենթարկվել այդ որոշմանը:

Երկու հակադիր կողմերին հաշտեցնելու նպատակով Թիֆլիսից ժամանեց Հարություն Շահրիկյանը, ով գտնում էր, որ մինչև օգոստոսի 1-ը, երբ հրավիրվելու էր ըդհանուր հյուպատոսական ժողով՝ կապված բալկանյան ժողովորդների խնդիրների հետ, հայդուկները պետք է անցած լինեին վճռական գործողությունների¹: Լսելով Շահրիկյանի տեսակետները՝ հայդուկները վճռում են մի կողմ դնել տարաձայնությունները, միավորվել, ու բոլորը հանգում են միասական արշավանք իրականացնելուն: Որոշվեց, որ բոլորը պետք է հավաքվեն հուլիսի 22-ին Հավթվան գյուղում: Այդ օրը գյուղացիները մեծ ընդունելություն են ցույց տալիս հայդուկներին: Վերջիններս հաջորդ օրը՝ առավոտյան, հասնում են Դերիկ: Հայդուկները միասին բարձրացան Արաուլ սարի գագաթը:

Այսպես սկսվեց հայոց ռազմի պատմության մեջ Խանասորի արշավանք անունով հայտնի վրեժխնդրական գործողությունը հայ հայդուկների կողմից: Բոլորին հրամայված էր քուրդ տեսնելուն պես սպանել կամ բռնել ապահովության համար: Առավոտյան Խանասորի դիմացի սարից հայդուկները սկսեցին հետևել Շարաֆ աղայի բանակներին: Երկար բանակցություններից հետո վճռվեց հարձակվել Շարաֆ աղայի վրանների վրա: Առավոտյան ժամը չորսին Շարաֆ աղայի վրանների առաջ շղթա բռնած կանգնած էին հայդուկները, իսկ հեծելախումբը կանգնած էր բանակից հարյուր քայլ ետ և սպասում էր պայմանական ժամին: Հայերը կատաղի գնդակներ էին թափում վրանների վրա: Հայերը, խնայելով կանանց ու մանուկներին, ավելի կատաղաբար կոտորում էին մեծերին, այրում էին վրանները, թափում յուղի տկերը, սև ծուխը բարձրացել էր երկինք: Ազատության կարոտ ժողովուրդը, ելնելով իր ծանր վիճակից, իր կյանքի նպատակն էր դարձնել թշնամու դեմ պայքարը²:

Ժամը վեցն էր, երբ հնչեց նահանջի զինվորական փողը: Այդ միջոցին գետի մյուս ափին՝ հարավային կողմում, կոտորածից ազատված մնացել էին մի քանի վրաններ: Հայդուկների դրությունը սուկալի էր հոգնած, սոված, ծարավ, բայց էլի չէին ընկճվում թշնամու առաջ, այլ հերոսաբար կռվում էին: Կռվում աչքի էին ընկնում հարյուրապետներ Ախպերը, Կարոն, Վռամը: Հայդուկները, կռիվ մղելով, բարձրանում էին սարի գագաթը՝ այս դիրքից աստիճանաբար անցնելով մյուսը: Սևքարեցի Սաքոն ու Բիճան փորձում էին գտնել ողջ մնացած վիրավորներին, ուղարկել բանակի կենտրոնատեղին, կռվելու ունակ վիրավորներին գնք ու ձի էին բաժանում:

Այս հաղթանակից հետո ինքը՝ Սևքարեցի Սաքոն, նշում է. «Սարի գլխից լավ տեսարան էր բացված մեր առաջ: Երևում էր Սալմաստի դաշտը՝ իր հայաբնակ գյուղերով, Ուրմիո լիճը, Դերիկի սպիտակ վանքը և մեզանից ոչ հեռու՝ Խանազեհի քյուրդ ցեղի վրանները: Սրանք, տեսնելով մեր հերոսական կռիվը, վրանները քանդում էին մի ապահով ապաստան գտնելու համար»³:

Երեկոյան ժամը ութին վերցնելով վիրավորվածներին՝ հայդուկները գնում են վերջին սարի գագաթը, որտեղ հնչում են փողերը՝ ի նշանավորումն բանակի հավաքվելուն: Սարի գագաթը բարձրացած վիրավորների թվին էր պատկանում Համադանցի Սաղաթելը, ում վերքերը այնքան ծանր էին, որ չէր կարողանում ձի նստել: Հենց այդ նույն պահին հյուսիս-արևմտյան սարի կողմից հայդուկների վրա են տեղում թշնամու քսանից ավելի գնդակներ: Այդ գնդակներին զոհ գնացին Կարոն, Կակոն և վիրավոր Սաղաթելը: Հայդուկներին մնում էր միայն խույս տալ և հետքերը կորցնել թշնամուց: Հայդուկները որոշում են անցնել Դերիկի սպիտակ սարը՝ կռվողներին թշնամու գնդակից հեռացնելու, այնուհետև՝ այստեղից ավելի ապահով Սալմաստ անցնելու համար: Երբ հայդուկներ, հասան Սպիտակ սարը, նրանց շարքերը մի քանիսով պակասել էին: Չկային Ֆիդայի Բժիշկը, Դումնաը, Արբակը, Համբոն: Հայդուկները վերջիններիս սպասելով ու փնտրելով՝ սպասեցին մինչև երեկո, բայց և այնպես նրանց այլ ելք չէր մնում, քան բանակը անվտանգ տեղափոխել Սալմաստ:

¹ «Դրօշակ», 1930 մարտ, էջ 82:

² Հայ ժողովրդի պատմություն, ԳՍԱ, հ. 6, Երևան, 1981, էջ 289:

³ «Դրօշակ», 1930, մարտ, էջ 84:

Երեկոյան ժամը ութին նորից հնչեցին փողերը, բանակը կազմակերպվեց ու ճանապարհ ընկավ դեպի Սալմաստ: Առավոտյան ժամը չորսին հասան Հավթվան, որտեղ գյուղացիները կրկին ընդունեցին նրանց մեծ սիրով: Բոլոր հայդուկներն այդ օրը ցրվեցին իրենց տեղերը, նույն օրը եկան նաև բոլոր մոլորվածները, որոնց մեջ նաև Ֆիդայի Բժիշկը և մյուսները: Այսպես ավարտվեց Խանասորի արշավանքը, որը շատ պատմաբանների կողմից դիտվում է որպես արկածախնդրական գործողություն: Այն Դաշնակցությունը վերագրում է որպես իր կարևոր գործերից մեկը, սակայն իրականում երկուստեք եղան բազմաթիվ զոհեր, իսկ թուրքական կառավարությունն այն առիթ դարձրեց նոր կոտորածներ իրականացնելու համար¹:

Մի քանի օր շարունակ հանգիստ էր տիրում, և բոլորը կարծում էին, թե այս դրությունը պահպանվելու է: Սակայն շուտով Կ: Պոլսում տեղեկացան Սալմաստի սահմանագլխին տեղի ունեցած իրադարձությունների մասին, մյուս օրը Թեհրանցի շահի կողմից հեռագիր եկավ հետևյալ բովանդակությամբ. «Բռնեցե՛ք այդ դաշաղներին և ուղարկեցե՛ք Դարբե՛ծ»²: Սկսվեցին խուզարկություններ, իսկ հայդուկների դրությունը բավականին բարդացավ: Որոշվեց բոլոր հայդուկներին ուղարկել Ռուսաստան, սակայն այս հարցում խոչընդոտ էր հանդիսանում ֆինանսական միջոցների բացակայությունը:

Սալմաստի բոլոր հայ վաճառականները հավաքեցին իրենց ու եկեղեցու բոլոր միջոցները և օրական որոշակի գումար տրամադրեցին տեղական իշխանություններին, որպեսզի դադարեցվեն խուզարկությունները մինչև հայդուկների՝ ռուսաց հող անցնելը: Սակայն հայդուկները այդ նպատակին չկարողացան հասնել: Հինգ օրվա ընթացքում հնարավոր չեղավ բոլոր հայդուկներին տեղափոխել նախօրոք որոշված վայրեր: Այս ամենի մասին տեղեկացվեց շահը, ով այս կաշառակերության հետ կապված սկսեց նոր՝ ավելի դաժան ու խիստ խուզարկություններ, որի ընթացքում ձերբակալվեցին շուրջ 30 հայդուկներ: Նման պայմաններում գյուղացիները ամեն կերպ պաշտպանում և օգնում էին հայդուկներին:

Մի երեկո մոտավորապես 30 գյուղացու ձերբակալել էին, կապել խարույկի շուրջը և շամփուրներով հարվածում էին՝ փորձելով տեղեկություն ստանալ հայդուկների մասին: Հարուստ գյուղացիները, կարողանում էին որոշակի գումար վճարելով, ավելի քիչ տանջանքների ենթարկվել: Այսպես, գյուղացիներից մեկը, չդիմանալով տանջանքներն, մատնում է հայդուկների բնակության վայրը: Այսպես՝ մատնվողների թվին էր պատկանում նաև Սևքարեցի Սաքուն: Սակայն, ինչպես վերջինս է նշում, իրեն օգնության հասավ Բաֆֆու քույրը՝ տիկին Հռիփսիմեն, և հայդուկին ապաստան տվեց իրենց տան գաղտնաբանում, որտեղ վերջինս մնաց երեք օր շարունակ: Այստեղից նա տիկին Հռիփսիմեի շնորհիվ տեղեկանում էր տեղի ունեցող անցուդարձին: Սևքարեցին տեղեկանում է, որ իշխանությունները ձերբակալել են իր ընկեր Բժիշկին և անմիջապես դուրս է գալիս թաքստոցից՝ նրան գտնելու համար: Նա գալիս է Էջմիածին, հանդիպում ունենում Վեհափառի հետ, այնուհետև մեկնում Թիֆլիս, սակայն ընկերոջը ոչնչով օգնել չի կարողանում³:

Լինելով Թիֆլիսում՝ Սևքարեցի Սաքուն 1898թ. ապրիլի 24-ին մասնակցում է Դաշնակցության ընդհանուր ժողովին, ապա հենց ժողովի ընթացքում հրաժեշտ տալիս ընկերներին ու գալով Դիլիջան՝ չիմանալով, որ դա իր վերջին այցելությունն է հայրենի ծննդավայր, այնուհետև անցնում է Կարս: Այստեղ Սևքարեցին տեղեկանում է, որ Մխոն իր ընկերներով կարողացել է բանտից փախչել: Սա նոր խուզարկությունների ու բռնությունների առիթ պետք է տար, ինչի պայմաններում էլ ավելի էր դժվարանում Սևքարեցի Սաքոյի, Աղբյուր Մերոբի ու Գուրգենի տեղաշարժը դեպի Սասուն՝ այստեղ կազմակերպվելու:

Երկար մտորելուց հետո որոշվեց ծպտված անցնել սահմանը: Մայիսի տասնհինգին չորս ծպտյալ հայդուկները՝ Սևքարեցին, Արշակը, Մխիթարը և Տիգրանը, ճանապարհ ընկան դեպի Բասեն: Ծպտվածները կեսգիշերին հասան սահմանագլխին գտնվող և հույներով բնակեցված Սրբազան գյուղը, որտեղ նրանց լավ ընդունելություն ցուցաբերեցին, իսկ մայիսի 20-ի երեկոյան հայդուկները, հրաժեշտ տալով բնակիչներին, այստեղից հեռացան: Հայդուկները կարողացան անարգել հասնել Բասենի Քեոփրիքեո գյուղը, որտեղ նրանց ջերմ

¹ Հայ ժողովրդի պատմություն, ԳԱԱ, հ. 6, էջ 274:

² Դրօշակ, 1930 մարտ էջ 85

³ «Դրօշակ», 1930, մարտ, էջ 85:

ընդունելություն է ցույց տալիս գյուղի ռես Ղազարը: Այստեղ Ղազարը հայդուկներին պատմում է, թե ինչպես 1896թ-ին կոտորածների ժամանակ, ինքը մեծ դեր խաղացել պաշտպանելով տեղի հայ բնակչությանը, և դրա համար էլ Կարինում բանտարկվել է որպես ջան ֆիդայի: 1896թ. ընդհանուր ներման ժամանակ ինքը ևս ազատվել է¹: Գյուղում ռեսի եղբայրը, ով այդտեղ խմբապետ էր և ավելի մեծ դեր էր խաղում, խորհուրդ տվեց Կարին մտնելուց առաջ բաժանվել երկու մասի: Այդ պատճառով Տիգրանը և Մխիթարը ճանապարհ ընկան ավելի շուտ, քան Սևքարեցին ու Արշակը:

Կարին գնացող ճանապարհին Սևքարեցի Սաքոն և Արշակը հանդիպում են իրենց հին ընկերներից Վախթանգին, ով հետևում է նրանց դեպի քաղաք: Երգրումի դարպասների մոտ ծպտված Սևքարեցու և Արշակի մուտքը քաղաք փորձում է խոչընդոտել քաղաքի դարպասների պահակակետում նշանակված զինվորը: Մակայն վերջինս չի կասկածում ծպտված հայդուկներին, և վերջիններս մի թուրքի և վերջինիս ծառայի կերպարով կարողանում են մտնել Կարին: Աստեղ նրանք հյուրընկալվում են Արշակի ծանոթներից մեկի տանը, որտեղ հայդուկներին դիմավորում է մի օրիորդ ու իր մայրը: Հայդուկները այստեղ պետք է հանդիպեին տեղական կոմիտեին, ապա հեռանային քաղաքից շարունակելով իրենց ճանապարհը:

Տեղեկանալով, որ տեղի Կոմիտեն այլևս գոյություն չունի, որոշ ժամանակ այստեղ մնալով՝ Արշակն ու Սևքարեցի Սաքոն դուրս եկան Կարինից: Քաղաքից դուրս նրանց արդեն սպասում էին Մխիթարն ու Տիգրանը, ովքեր նոր ձի էին ձեռք բերել վերջինիս համար: Այստեղ Սևքարեցին միանում է ընկերներին և, միանալով հայ վաճառականների քարավանին, շարունակում է ճանապարհը, իսկ Արշակը մնում է, որպեսզի ղեկավարի Բասենի գյուղերում եղած զենքի տեղափոխումը: Այսպես հայդուկները առևտրական քարավանի հետ միասին ընկան ճանապարհը, որպես քարավանի անդամներ ծանոթացան ճանապարհին քրդերի, նրանց հարյուրապետի հետ, որը ամբողջ ընթացքում պատմեց մի շարք կարճ ու երկար պատմություններ Վանում ապրած իր տարիներից:

Շարունակելով ճանապարհը քարավանի հետ՝ նրանք անցնում են մի քանի հայաբնակ գյուղերով: Կալա հայաբնակ գյուղում ծպտված հայդուկները ծանոթանում են տեղի վարժապետի, բժշկի գյուղացիների հետ: Այստեղ նրանք լուր են ստանում, որ Աղբյուր Սերոբը իր խմբով եկել է Ս. Կարապետ վանք՝ իրենց դիմավորելու: Ուստի հայդուկները նախապատրաստվում են դեպի Ս. Կարապետ մեկնելուն²: Երբ հասնում են Մշո դաշտ, հայդուկների առաջ բացվում է սոսկալի տեսարան: Գյուղերը դատարկված էին, կոտորածներից հետո շատերը հեռացել էին Տիգրանակերտ կամ Ռուսաստան: «Մեր առջև բացվեց Մշո դաշտը՝ իր բազմաթիվ գյուղերով: Հեռադիտակով նայում էի այդ գյուղերին: Սոխակի տեղ բուերի երամներ էին, ամենը ավերված էր: Մի գյուղում հազիվ երեք-չորս երդիկից ծուխ էր բարձրանում: Ինչո՞ւ էր այդպես».- Գրում է Սևքարեցի սաքոն իր ինքնակենսագրականում³: Հասնելով Ս. Կարապետի վանք՝ այստեղ վանքի սարկավազից տեղեկանում են, որ ոստիկաններն արդեն դուրս են գալիս հայդուկների հետքի վրա և, շատ վտանգավոր է այստեղ մնալը, ուստի հայդուկները մտնում են մոտակա անտառ և հասնում Ճգնավորի այրը, որտեղ գտնվում էին նաև Աղբյուր Սերոբը, Միհրան Տամատյանը և Մուրադը: Մեկ օր այստեղ մնալուց հետո հայդուկները հեռանում են այստեղից ևս:

Այս մանրամասները ներկայացնում են Սևքարեցի Սաքոյի հայդուկային կյանքի մի հատվածը՝ հիմնված ինքնակենսագրական տվյալների վրա: Այնուհետև՝ որպես հեծյալ խմբի հրամանատար՝ ուղևորվել է Պարսկաստան, սակայն ռուս-պարսկական սահմանին հիվանդացել է խոլերայով և մահացել: Թաղվել է Երևանում՝ ներկայիս Կոմիտասի անվան պանթեոնի տարածքում: 1938 թվականին Խորհրդային իշխանության կողմից Սևքարեցի Սաքոյի գերեզմանը ավերվել է, իսկ գերեզմանաքարը (սպիտակ մարմար) փոխադրվել և դրվել է հայ նշանավոր կոմունիստ Ասքանազ Մռավյանի շիրիմին:

¹ Գևորգյան Հ., նշվ. աշխ., էջ 12-15:

² Նույն տեղում, էջ 17-24:

³ «Դրօշակ», 1931, մարտ, էջ 48:

Վերջում տեղին է նշել Ռուբենի խոսքերը հայդուկների մասին. «Ֆետայիները դեմքով տարբեր են հասարակ գյուղացիներէն, թէն բոլորն ալ գրեթէ գիւղացու գաւակներ: Ո՞վ գիտէ, թերեւս ֆետայական կեանքը որոշ տիպի մարդիկ կը քաշէ միայն: Իրողութիւնն այն է, սակայն, առաջին ակնարկով՝ անմիջապէս կմտածեք, թէ անոնք կամ այդ երկրացի չեն եւ կամ յատուկ ընտրուածներ են ժողովրդական խաւերէն»:

Գրականություն

1. Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի հերոսապատումից, Երևան, 2006:
2. Հայ ժողովրդի պատմություն, ԳԱԱ, հ. 6, Երևան, 1981:
3. Հայոց պատմություն (խմբ. Խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշներ), հ. 3, գիրք 1, Երևան, 2010:
4. «Դրօշակ», 1930, 1931:
5. Ռուբեն, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, հ. Բ, Երևան, 1990:

**ԲԱՅԱԿԱՆԵՐԻ «ՆԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ» ԱՐԱՄ ՊԱՅՅԱՆԻ «ՈՒՐ ԵՍ, ԼՅՈ՛Վ» ԵՎ
«ՅՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԾԻՏ» ԵՐԿԵՐՈՒՄ**

Բանալի բառեր. երկ, իրագործվածի ոլորտ, հավանականի ոլորտ, կառուցվածք, կերպար, մոդել:

Ամփոփում

Աշխատանքում ուսումնասիրել ենք Արամ Պայչյանի «Յտեսություն, Ծիտ» և «Ու՛ր ես, Լյո՛վ» երկերը՝ հետևելով կառուցվածքային գրականագիտության օրինաչափություններին: Իրագործվածի և հավանականի փիլիսոփայական հարաբերությունը հիմք է դարձել ստեղծագործության ստրուկտուրայի ամբողջական ըմբռնման համար: Գրական երկի տարբեր բաղադրիչների հարաբերությունը ներկայացված է գծապատկերների միջոցով:

Karen Manucharyan

«ПРИСУТСТВИЕ» ОТСУТСТВУЮЩИХ В ПРОИЗВЕДЕНИЯХ АРАМА ПАЧЯНА «ГДЕ ТЫ, ЛЁВ» И «ДО СВИДАНИЯ, ПТИЦА»

Ключевые слова : произведение, сфера реализации, сфера относительности, структура, образ, модель.

Резюме

В работе исследуются произведения Арама Пачяна «До свидания, Птица» и «Где ты, Лёв», с точки зрения закономерностей структурного литературоведения. Философское отношение реализации и относительности стало основой целостного восприятия творческой структуры. Соотношение различных составляющих литературного произведения представлено в виде схем.

Karen Manucharyan

THE “PRESENCE” OF THE ABSENTS IN ARAM PACHYAN’S “WHERE ARE YOU, LIOV?” AND “GOOD BYE, BIRD” COMPOSITIONS

Key words : composition, area of the committed, area of the possible, structure, character, model.

Summary

The work studies Aram Pachyan’s “Good bye, Bird” and “Where are you, Liov?” compositions, complying with patterns of structural literary criticism. The philosophical relation of the committed and the possible has become the basis of fully understanding the composition’s structure. The relation between the literary composition’s different components is presented through various diagrams.

Արամ Պայչյանի ստեղծագործությունը որոշակիորեն կրում է «գիտակցության հոսքի» կնիքը. ««Գիտակցության հոսք» տերմինի հեղինակը ամերիկյան իդեալիստ փիլիսոփա Վ. Ջեմսն է, ըստ որի՝ գիտակցությունը հոսք է, գետ, որտեղ մտքերը, զգացումները, անակնկալ գուգորդումները ասոցիացիաները, մշտապես ընդհատում են մեկը մյուսին և տարօրինակ կերպով, «անտրամաբանորեն» միահյուսվում են»¹: Պայչյանի ստեղծագործություններն արդյունք են զգացումների, մտքերի, հիշողությունների անակնկալ կամ օրինաչափ տեղաշարժերի: Օբյեկտիվ աշխարհը պատկերվում է անհատական հույզերի ընթացքի միջոցով: Այս հանգամանքն իր ազդեցությունն է թողնում նաև հեղինակային պատումի վրա. «Պատումի ավանդական կառուցվածքի խախտումները, ժամանակային պլանների տեղաշարժերը ձևական փորձարկումների բնույթ են ստանում»²: Պայչյանի ստեղծագործություններում մենք տեսնում ենք պատումի ավանդական ձևերի այլևայլ խախտումներ և ժամանակային տեղաշարժեր: Օբյեկտիվ ռեալությունը սուբյեկտիվ ապրումներով ամբողջացնելու միտումը երբեմն պայմանավորում է կետադրության բացակայություն, որի միջոցով առավել հստակ են պատկերվում գիտակցության

¹ Մելիս Սանթրյան, Գրականագիտական բառարան, Երևան, 2009, էջ 51:

² Նույն տեղում:

տեղաշարժերը: Այդ հատվածներն, ըստ էության, լեզվական միավորներ չեն, այլ գիտակցության անմիջական արտադրանքներ: «Գիտակցության հոսքի» ազդեցությունը պայմանավորում է նաև ժամանակային տեղաշարժերի ավելի ակտիվ դրսևորումներ: Կերպարի հավանական գործունեության պատկերումը նախորդում է իրագործվածի պատկերմանը (Բալայան Սահակ):

Լյո՛վ, ես մտածում եմ, որ դատարկությունն անտարածությունն և անկյանքությունն չէ, այն անավարտ մի տխրություն է, հիշողություն վերագտնելու բացառիկ հնարավորություն: Ոչ որ չի կարող լրացնել քո դատարկ տեղը, որովհետև ոչ մի մարդկային կյանք չի փոխարինվում մեկ այլ կյանքով... Ես երազում եմ փրկել քեզ, հավաքել բեկորներդ, հիշողությունս դարձնել վերադարձիդ արահետը...¹

Արամ Պաչյան, «Ու՛ր ես, Լյով»

Չկան մարդկային կյանքերի լիակատար կրկնություններ, բայց կան ճակատագրերի գուգահեռներ: Հենց այդ գուգահեռներն են պայմանավորում կառուցվածքային այն յուրահատկությունը, որ արդյունք է կերպարի բացակայության և շարունակելիության պարադոքսի: Առաջին հայացքից տարօրինակ թվացող այդ շարունակելիությունը պիտի քննել մեր կողմից մեկ այլ աշխատանքում առաջ քաշված իրագործվածի և հավանականի հարաբերության համայնապատկերում. **«Հավանականի ոլորտը ոչ այլ ինչ է, եթե ոչ իրագործվածից որոշակիորեն տարբերվող, կյանքի բնական օրինաչափություններին համապատասխան, տվյալ ստեղծագործության մեջ հիշատակվող, բայց չիրագործված գործողությունների հանրագումար»:**

Հավանականի հարթությունն ունի իր արտահայտման գեղարվեստական հնարներն ու եղանակները: Հավանականի և իրագործվածի գործողությունները կառուցվածքային տեսանկյունից անքակտելի ամբողջություն են կազմում: Էդվարդ Ջրբաշյանը, խոսելով գրական ստեղծագործության տարրերի ամբողջականության և միասնականության մասին, նշում է. «Ստեղծագործության բազմազան տարրերը իրենց տարբեր մակարդակներով, ներքին տարբեր կապերով և չափումներով միշտ ենթարկված են մի բարձրագույն միասնության: Նրանք ծառայում են միևնույն գաղափարական և գեղարվեստական նպատակին և, միասին վերցրած, ստեղծում են մեկ ամբողջական «օրգանիզմ», որի բոլոր մասերն ու տարրերը ապրում են միասնական շնչառությամբ»²: Գրական երկի տարրերի ամբողջականության մասին խոսում է նաև Արամ Գրիգորյանը: Նա առաջ է քաշում գրական երկի ստրուկտուրայի վերլուծության երկու մակարդակների խնդիրը. «Այստեղ գուցե պետք չէ երկյուղ կրել վերլուծության ինտուիտիվ և հասկացությային մակարդակների բացահայտ միացումից: Արվեստն, ըստ երևույթին, գիտակցության այն ձևն ու այն աշխարհն է, որը թույլ է տալիս հետազոտության նման «դուալիզմ»³: Գրիգորյանը կարևորում է գրականության բանական և զգայական իմացությունը⁴: Ըստ էության՝ հավանականի ոլորտի քննությունը արդյունք է բանականի և զգայականի ներդաշնակ համադրության:

Արամ Պաչյանի ստեղծագործություններում հավանականի հարթությունը բացվում է արդեն իրագործված գործողությունների տրամաբանական շարունակության ըմբռնման միջոցով: Երկու հարթությունների միջև գոյություն ունեցող այդ տրամաբանականությունը նպաստում է կոմպոզիցիոն ամբողջացմանը:

Այդ շարունակությունը համապատասխանում է գործողությունների տրամաբանությանը, բայց դուրս է իրագործվածի հարթությունից: Որպես հավանականի

¹ Արամ Պաչյան, Ռոբինզոն և 13 պատմվածք, Երևան, 2011, էջ 152:

² Կարեն Մանուչարյան, «Իրագործվածի և հավանականի հարաբերությունը Լևոն Խեչոյանի «Զանգը» պատմվածքում», անտիպ հոդված, 2016, էջ 1:

³ Գրական ստեղծագործության վերլուծության ուղիները և սկզբունքները, Երևան, 1983, էջ 20:

⁴ Նույն տեղում, էջ 49:

⁵ Տե՛ս նույն տեղում:

հարթության անիրագործելի իրողություն՝ այն ունի իր հակադրությունը իրագործվածի հարթության վրա: Դա մեծ մասամբ ոչ այլ ինչ է, եթե ոչ մահ: Մահից հետո կերպարը դուրս չի մղվում գործողություններից: Պայանի ստեղծագործություններում բավականին զգալի է մահացածների, բացակաների ներկայությունը. «Դատարկությունը անտարածություն կամ անկյանություն չէ»¹,_ փաստում է Արամ Պայանը և «անավարտ տխրության» միջոցով փորձում է տեսնել բացակայող մարդու աներևույթ ներկայությունը: Այդ անավարտ տխրությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ «հիշողության բեկորների հանրագումար»: Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Ռոբինզոն և 13 պատմվածքներ» ժողովածուի «Ու՛ր ես, Լյով» պատմվածքը: Այստեղ հստակ կերպով դրսևորվել են հիշողության բեկորների հավաքագրումը, բացակայող անհատի վերակերտումը և ճակատագրերի զուգահեռները: Մարդկային հիշողությունների հոսքի արդյունք է «Ու՛ր ես, Լյով» պատմվածքը. «Ու՛ր ես, Լյով

Երեք շաբաթ է՝ քեզ եմ փնտրում: Գալիս եմ, քարանում դատարկ տարածքում, որտեղ խնամքով դարսված էին լինում գրքերդ: Ու՛ր եմ այս դատարկությունը լցնող բանանի համար նախատեսված՝ «bonanzal» և «adria» ֆիրմաների պիտակներով արկղերդ, որոնք ամենամաշվածն էին ու ամենաքրքրվածը, որովհետև դու Վերնիսաժի առաջին գրավաճառներից էիր, գուցե ցրտերին դիմանալու համար վառել ես, որ տաքանաս, կամ պարզապես դեն ես նետել»²: Անշուշտ, հիշողությունների հոսքն այստեղ գերիշխողն է, բայց դրա հետ մեկտեղ մենք տեսնում ենք նաև ենթադրելին և ցանկալին, որոնց միջոցով պատկերվել են հավանականի հարթության երկու տարբեր իրողություններ: Ենթադրելիի միջոցով արտահայտվել է մարդկային ճակատագրի հավանական զուգահեռը: Արդեն իսկ իրագործված ճակատագիրն այժի առաջ ունենալով՝ հեղինակը գործողությունների տրամաբանական շարունակության ըմբռնմամբ պատկերում է ճակատագրի տարահարթեցված զուգահեռը. «Լյով, ես վախենում եմ քեզից քո բախտի կրկնությունից: Գիտես, որ բանի պետք չեմ: Պապան մեկ-մեկ փող ա տալիս ինձ: Երևի կճանաչես պապայիս: Դուք շատ նման եք իրար. նույն բարի ու անպահանջ ժպիտն է... Պապան քո պես վատառողջ ա, Լյով: Ամեն վայրկյան ես սարսափով սպասում եմ նրա մահվանը, ինչպես քո մահվանն եմ սպասել... Երբ պապան չլինի, ես լրիվ բոմժ կդառնամ: Մովից կմեռնեմ: Բայց նախքան էդ, երևի քո պես գրադարանիս գրքերը կվաճառեմ: Որոշել եմ, Լյով: Գրքերս շարելու եմ հենց քո տարածքում՝ բանանի համար նախատեսված արկղերի վրա, ու վաճառելու եմ լրիվ, մինչև բոլոր գրադարակներս դատարկվեն... Ու էլ ոչինչ չեմ ունենա ես կյանքում: Հետո մի տղա կհայտնվի, երկար կտնտղի վերջին գիրքս... չի առնի, չի արձագանքի իմ պաղատանքներին, ու ես քո նման կքայլեմ նրա ետևից՝ գիրքը թնիս տակ պինդ սեղմած, կքայլեմ կդառնամ փոշու մի հատիկ ու երբեք չեմ հասնի նրան...»³: Մա արդեն իսկ առկա իրավիճակի տրամաբանական շարունակությունն է, որ պատկերվում է ենթադրելիի միջոցով: Իրողությունների այս շղթան ձևված է արդեն իսկ իրագործված մեկ այլ ճակատագրի սխեմայով: Ընգծված հատվածը ճակատագրերի մեկ այլ զուգահեռի մասին է խոսում(Լյով-հայր): Այս դեպքում երկու ճակատագիրն էլ գտնվում են իրագործվածի հարթության վրա: Պատմվածքն ավարտվում է ցանկալիի դրսևորմամբ. «Էնքան եմ ուզում ողջ լինես, Լյով... Ուզում եմ տեսնեմ երեխուն շոկոլադ, փափուկ խաղալիք առնեմ նրա համար, մեղմ շոյեմ պանամկա գլխարկը... Էնքան եմ ուզում Վերնիսաժում քո էն մի քանի քառակուսի մետր տարածքը լցնես գրքերով, շարես արկղերդ... Էնքան եմ ուզում հեռվից տեսնեմ սև վերարկուդ ու ջոնջոլ գլխարկդ, շնչեմ «Չիրուխ» ծխախոտիդ խեղդող ծուխը... Ուզում եմ լսեմ հիվանդ թոքերիդ արձագանքը, վերադարձնեմ քո 500 դրամը... Ու գիտես ո՞նց եմ ուզում քեզ հանդիպեմ... Ուզում եմ մի անակնկալ ու անգույն սովերի պես կանգնեմ ետևումդ ու մատներովս ցնցեմ վերարկուդի թևքը, դու շրջվես, ու ես երջանկությունից գլուխս կորցրած բացականչեմ՝ ՈՒ՛Ր ԷՒ՛Ր, ԼՅՈՒՎ»⁴: Անհրաժեշտ է նշել նաև, որ և՛ ցանկալին, և՛ ենթադրելին, լինելով իրականությունից դուրս, խորապես կապված են իրագործվածի հետ: Այդ կապվածությունը պայմանավորված է ոչ

¹ Արամ Պայան, Ռոբինզոն և 13 պատմվածք, Երևան, 2011, էջ 152:

² Նույն տեղում, էջ 151:

³ Նույն տեղում, էջ 155-156, ընդգծումը մերն է:

⁴ Նույն տեղում, էջ 156-157:

միայն հավանականի և իրագործվածի տրամաբանական կապով, այլև մի շարք պատկերային և ընդհանրապես բովանդակային զուգահեռներով: Ե՛վ ենթադրելիի, և՛ ցանկալիի իրողությունների պատկերային և սյուժետիկ ատաղձը վերցված է իրագործվածից: Արդեն իսկ Լյովի հետ կատարվածն է հերոսի առաջ բացում իր ճակատագրի ենթադրելի շարունակությունը: Լյովին հանդիպելու ցանկալի հեռանկարը նույնպես հյուսվում է իրագործվածի պատկերներից: Այս հանգամանքները յուրահատուկ փոխկապակցվածություն են ապահովում իրագործվածի, ենթադրելիի և ցանկալիի միջև՝ ստեղծելով կոմպոզիցիոն ամբողջականություն: Նշենք նաև, որ և՛ ենթադրելի, և՛ ցանկալին ներկայացնում են իրագործելի հավանականը, քանի որ իրագործվածի հարթության մեջ չունեն իրենց հակադրությունը:

Գծապատկեր 1

Իրագործված	հավանական	
	ենթադրելի	ցանկալի
հիշողություններ հոսք	Լյո՛վ, ես վախենում եմ քեզնից... կքայլեմ կդառնամ փոշու մի հատիկ ու երբեք չեմ հասնի նրան...	Էնքան եմ ուզում ողջ լինես... ու ես երջանկությունից գլուխս կորցրած բացականչեմ՝ ՈՒՐ ԵՒՐ, ԼՅՈՎ:

Բացականների վերարտադրման, մահվան շուրջ հյուսված մտքերի պատկերման տեսանկյունից մեծ կարևորություն է ներկայացնում «Ցտեսություն, Ծիտ» վեպը: Բացականների ներկայության տեսանկյունից յուրօրինակ հետաքրքրություն են ներկայացնում Բալայան Սահակի և Տրյուֆոյի կերպարները: Այս կերպարները պետք է դիտել Միկիի հետ ունեցած որոշակի հարաբերակցության մեջ: Միկիի ճակատագիրը իրագործվածի հարթությանն է պատկանում. այն բացակա կերպարների ենթադրելի ճակատագրերի մոդելն է:

Սահակ Բալայանի կերպարը վերարտադրելիս դրսևորվել է պաշյանական «անավարտ տխրությունը». «Սահակ, քեզնից մնացել է պլշած ու հեռացող հայացքիդ խոր քնքշությունը, մնացել է հավերժ քեզնից առաջ ու քեզնից հետո՝ Դյուրերի առաջին ինքնանկարում, ես վախենում եմ սենյակի պատուհանից դուրս նայել, որովհետև դու միշտ կանգնած ես փողոցի հեռավոր կետում, թիթեռնիկը օձիքիդ կապած, բակի երեխաներից մեկի ծննդյանդ նվեր ճագարիկը գրկումդ»¹: Հիշողության պատառիկների միջոցով Պաշյանը փորձում է վերականգնել մահացած մարդու ուրվանկարը: Սահակի կերպարի գործունեությունն իրագործվածի հարթության վրա ավարտվում է մահվամբ. «Երեք ամիս հետո կիսավեր գործարանում խաղալիս Սահակն ընկավ մագութի ամբարն ու խեղդվեց... Սահակին պատկեցրել էին շագանակագույն, լաքապատ դագաղում՝ ծննդյան օրվա նույն կոստյումով: Թիթեռնիկը տխուր կպել էր օձիքին: Մտտո մատները հանգչել էին կրծքին: Դագաղը նրան շատ էր սագում»²: Պաշյանը մեր առաջ է բացում նաև հավանականի հարթությունը, որ ծնունդ է ենթադրելիի: Այստեղ ներկայացված է կերպարի գործունեության ենթադրելի շարունակությունը. «...եթե չմեռնեիր ու բանակ գայիր, ինքնասպան էիր լինելու: Ամեն առավոտ լավ տղերքի կոշիկները փայլեցնող ստրուկը: Երկու տարի անընդմեջ ճաշարանում նրանց համար կարտոֆիլ կտապակեիր, անձնական քարտուղար, մատուցող, մոխրաման դատարկող. լուր տանող-բերող ու փափիլի քամակիդ համար անկողնում զուգրնկեր կլինեիր...»³: Հավանականի հարթության գործողությունների այս շղթան ձևված է արդեն իսկ իրագործված այլ ճակատագրի վրա և արդյունք է դեպքերի տրամաբանական շարունակության ըմբռնման. «Միկի Մաուս: Ամենահեռակավոր մուկ: Մուկ՝ մկների: Նա քայլում էր մարմնիդ միջով ճաշարանի ետնաբակից, գլուխը կախ՝ մի ձեռքով հրացանի


¹ Արամ Պաշյան, Ցտեսություն, Ծիտ, Երևան, 2012, էջ 53:

² Նույն տեղում, էջ 83:

³ Նույն տեղում, էջ 55:


փոխարեն ցախավել բռնած, մյուս ձեռքում՝ քառակուսի խոշոր դույլ»¹: Միկիի ճակատագիրը իրագործվածի հարթության այն մոդելն է, որի վրա ձևվում է Բալայան Սահակի կերպարի հավանական ընթացքը: Իսկ գործողությունների տրամաբանական շարունակությունը բխում է կերպարի իրագործված գործողություններից. «Մեզ նկատելուն պես Սահակը մոտենում էր, կանգնում մեր կողքը ու ոչ մի բառ չէր խոսում: Ուր գնում էինք, Սահակը գալիս էր մեր ետևից, կանգնում մեր կողքը ու ոչ մի բառ չէր խոսում: Նյարդայնանալով մենք ծեծում էինք նրան, սպառնում, որ սրանից հետո, եթե հանդիպեց, գլուխը քարերով կջարդենք»²: Հենց այս ամենի տրամաբանական շարունակությունն է հավանականի հարթության գործողությունների շղթան: Հավանականի հարթության վրա պատկերվում է Սահակ Բալայանի ինքնասպանությունը: Սահակի թողած երեք հավանական նամակներից մեկում բացվում է հավանականի երկրորդ աստիճանը. «Ես, երագում էի ֆերմայի մասին: Կովեր, ոչխարներ, էժեր կպահեի. ձիեր, հավեր, կատուներ, մեղուներ: Մեղուներիս ամառը կտեղափոխեի սարեր: Փեթակները կշարեի աշխարհի ամենասիրուն ու հոտավետ ծաղիկների մեջ ու կապրեի նրանց հետ... Ասում եմ՝ բոլորդ մեղավոր եք, որ ես մեռնում եմ, եղավ, բայց ոչ թե որ ինքնասպանություն եմ գործում, այլ որ մեռնում եմ՝ առանց մեղուների պահելու, առանց տուզիկ ունենալու, առանց ծաղիկների գլխիկներին նայելով կոֆե խմելու...»³: Հավանականի առաջին աստիճանն արդյունք է ենթադրելիի, իսկ երկրորդը՝ ցանկալի:

Գծապատկեր 2



Այստեղ մենք գործ ունենք անիրագործելի հավանականի հետ, քանի որ իրագործվածի հարթության վրա ունենք հակադրություն (մահ): Տրյուֆոյի կերպարը նույնպես թույլ է տալիս խոսել այս հարթությունների մասին: Տրյուֆոյի կերպարի հավանական ընթացքը նույնպես արդյունք է գործողությունների տրամաբանական շարունակության ըմբռնման: Ի տարբերություն նախորդ օրինակի՝ այդ շարունակությունն այստեղ ենթադրում է լուրջ բեկում, բայց դա չի նշանակում, թե առկա է անտրամաբանականություն. դա բացատրվում է սվյալ միջավայրի ներքին օրենքներով: Հենց այդ օրենքներն են պայմանավորում Տրյուֆոյի կերպարի ենթադրելի բեկումը: Դարձյալ մահն է այն հանգամանքը, որ պատնեշ է դառնում իրագործվածի և հավանականի միջև, իսկ հավանականի պատկերումը բխում է միջավայրի դաժան օրենքներից. «Լաաաաաաաաաաաաաավ, թեթև տար, սրանից հետո, զուգարանում ու մյուս տարածքներում լավ օրեր կանցկացնես էն ծող Միկի Մաուսի հետ»⁴:

Գծապատկեր 3




¹ Նույն տեղում, էջ 57:

² Նույն տեղում, էջ 83:

³ Նույն տեղում, էջ 65, 67:


⁴ Նույն տեղում, էջ 131:

Տրյուֆոյի կերպարի հետ կապված՝ գծագրվում է նաև ցանկալի հավանականը. «Ախպերս, բան չմնաց, մի քիչ դիմացիր, մի տարին շուտ կանցնի, կգաս Փարիզ...»¹:



Ցանկալի հավանականի և դաժան իրագործվածի հզոր հակադրությունը արտահայտված է այս հատվածում. «Դեհ, երազանքդ իրականացավ: Հա, իրոք լրիվ երազի մեջ եմ, հավատս չի գալիս, որ Փարիզում եմ, եղբորս խելագարի պես կարոտել եմ, պատկերացնում եմ ինչքան կուրախանա: Լյուք-Վաչոն տխուր նայում էր Մենայի մկնագույն ջրերին: Էլ չի ուրախանա: Ո՞նց, ինչի՞: Որովհետև ստիպված է լինելու վերադառնալ տուն: Բայց ես եմ եկել, ի՞նչ տուն: Դու չես եկել: Դու հրաժեշտ ես տվել: Ու՞մ եմ հրաժեշտ տվել. գժվե՞լ ես Լյուք-Վաչո. քեզ ի՞նչ եղավ, լավ չե՞ս. անձրևի տակ մնացինք, շուտ վազենք: Անձրև չի գալիս՝ դիահերձարանի սառը ցնցուղն են պահել մարմնիդ»²: Այս օրինակն առանձնահատուկ է նաև նրանով, որ հավանականի հարթության վրա ներկայացվում է նաև «անհավանական» իրողություն (խոսող սագ): Եվ հենց այդ անհավանականի միջոցով է բացահայտվում ցանկալի հավանականի և դաժան իրագործվածի հակադրությունը: Այսպիսով՝ և՛ Տրյուֆոյի, և՛ Բալայան Սահակի կերպարները չիրագործված միկիներ են: Միկիի կերպարը Սահակի և Տրյուֆոյի հավանական շարունակության մոդելն է իրագործվածի մեջ.

Գծապատկեր 5



Մրանով լավագույնս արտահայտված է մարդկային ճակատագրերի հավանական զուգահեռականությունը: Այդ զուգահեռականությունը նույնպես նպաստում է ստեղծագործության տարբեր տարրերի կոմպոզիցիոն կապերի ըմբռնմանը:

Այսպիսով՝ Մրամ Պաչյանի ստեղծագործություններում դրսևորված ճակատագրերի զուգահեռները ստեղծում են բավականին հետաքրքիր կոմպոզիցիոն հնարներ: Պաչյանը առաջ է քաշում իր էսթետիկական ինքնատիպությունը, պատկերի, ստրուկտուրայի ամբողջացման իր եղանակները:

Գրականություն

1. Գրական ստեղծագործության վերլուծության ուղիները և սկզբունքները, ՀՄՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1983, 400 էջ:
2. Սանուչարյան Կ., «Իրագործվածի և հավանականի հարաբերությունը Լևոն Խեչոյանի «Զանգը» պատմվածքում», անտիպ հոդված, 2016, 5 էջ:
3. Պաչյան Ա., Ռոբինզոն և 13 պատմվածք, «Գրական էտալոն», Երևան, 2011, 160 էջ:
4. Պաչյան Ա., Ցտեսություն, Ծիտ, «Անտարես», Երևան, 2012, 224 էջ:
5. Սանթոյան Մ., Գրականագիտական բառարան, «Վան Արյան», Երևան, 2009, 272 էջ:

ԵՊՀ, Հայ քանասիրություն, մագիստրանտ
Գիտական ղեկավար՝ Բ. Գ. Թ., դոցենտ Նորայր Պողոսյան
Էլ. փոստ՝ hripsime.kostanyan@yahoo.com

ԳԱՌԻՉՈՅԻ ԿԵՐՊԱՐԸ ԽՈՐՔԵ ԼՈՒԻՍ ԲՈՐԽԵՍԻ
ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր. *Բորխես, Գաուչո, ֆանտաստիկ նովել, արգենտինական գրականություն*
Ամփոփում

Հոդվածի հեղինակը ներկայացնում է 20- դարի 30-ական թթ. արգենտինյան գրականությունը: Բորխեսը ներկայացվում է իբրև ֆանտաստիկ նովելի հիմնադիր: Գաուչոյի կերպարն այս հոդվածում մեկնաբանվում է, որպես երկրի տիրոջ կերպար, որի ճակատագիրը ողբերգական զարգացումներ է ունենում՝ կապված Արգենտինայի պատմությանը: Բորխեսը պատկերել է Գաուչոյի կերպարը ֆանտաստիկ սկզբունքով. նա առաջարկում է պարզ պլոտի երկու հանգուցալուծում: Հոդվածում անդրադառնում ենք ֆանտաստիկ տարրերի մեկնաբանմանը այն պատմվածքներում, որտեղ տիպական կերպարը Գաուչոն է:

Рипсима Костаян
ЕГУ, Армянская филология, магистрант
Науч. рук.: к.ф.н. Норайр Погосян
эл. адрес: hripsime.kostanyan@yahoo.com

ОБРАЗ ГАУЧО В НОВЕЛЛАХ ХОРХЕ ЛУИСА БОРХЕСА

Ключевые слова: *Борхес, Гаучо, фантастическая новелла, аргентинская литература.*

Резюме

Автор статьи представляет аргентинскую литературу в начале тридцатых годов 20-го века. Борхес представляется как основатель фантастической новеллы. В этой статье образ гаучо характеризуется как хозяин страны, чья судьба завершается трагическим образом. Его образ связан с судьбой Аргентины. Борхес изображает образ Гаучо фантастически. Он предлагает два исхода к одному простому сюжету. В статье мы обращаем внимание к фантастическим элементом, где типическим героем является Гаучо.

Hripsime Kostanyan
ESU, Armenian philology, Master's degree
Supervisor: Ph.D Norayr Poghosyan
email: hripsime.kostanyan@yahoo.com

THE CHARACTER OF GAUCHO IN SHORT STORIES OF JORGE LUIS BORGES

Key words: *Borges, Gaucho, fantastic novel, Argentinian literature*

Summary

The author of the article presents the Argentinian literature of the beginning of the 20th century. Borges is presented as a founder of fantastic genre in short stories. In this article the character of Gaucho is analyzed as the owner of his country whose fate is tragic. Gaucho is connected with the history of Argentina. Borges depicts Gaucho's image with the fantastical principle. He offers 2 solutions to one simple plot. In this article we turn to the analysis of fantastical components in those stories where the main typical character is Gaucho.

20-րդ դարի երկրորդ կեսը լատինամերիկյան երկրների գրականության պատմության մեջ վերելքի շրջան էր, որը համաշխարհային գրականության մեջ թողել է իր հետագիծը:

Այդ ժամանակաշրջանում՝ սկսած 20-րդ դարի 30-ական թվականների կեսերից մինչև 70-ականների կեսերը, այն գտնվում էր ողջ աշխարհի ուշադրության կենտրոնում: Գրականագետներն այդ երևույթն անվանեցին «լատինամերիկյան բուս»: Ակնհայտ է լատինամերիկյան գրականության վրա եվրոպական, հյուսիսամերիկյան գրականությունների ազդեցությունը: Սակայն ազդեցություն սրան միախառնվում էին տեղի առասպելական պատմական հիմքերը՝ ձեռք բերելով կրեոլական կամ տելուրիստական երանգները: Ձևավորվում է մայրցամաքի այցեքարտը դարձած «մոզական ռեալիզմ» երևույթը: Պետք է կարևորել, որ 1940 թ. վճռորոշ էր բուսի զարգացման գործընթացի համար: Հարցն այն է, որ այդ ժամանակ մեծ թվով ինտելեկտուալ անձինք ստիպված էին գաղթի դիմել Իսպանիայից,

Եվրոպայի շատ երկրներից դեպի Արգենտինա և Մեքսիկա: Երկրորդ Համաշխարհային պատերազմը կանգնեցնում է գրքերի և մամուլի հոսքը Եվրոպայից դեպի լատինամերիկյան երկրներ: Այս երկրների նոր սերունդը, որն առավելապես իսպանալեզու էր սկսում է, հետաքրքրվել տեղական աշխարհի խնդիրներով: Լատինական Ամերիկայում սկսում են տպագրվել գրքեր և գրական, մշակութային ամսագրեր իսպաներենով: Այդ ժամանակ ի հայտ եկան Բորխեսը, Կորտասարը, Կասարեսը՝ Արգենտինայից, Մարկեսը՝ Կոլումբիայից, Լյոսան՝ Պերուից, Ռուլֆոն՝ Մեքսիկայից, Կարպենտիերը՝ Կուբայից: Ինչպես իրավացիորեն նկատել է գրականագետ Վսեվեթո Բագնոն 20-րդ դարի երկրորդ կեսից ողջ աշխարհը հրապուրող լատինամերիկյան արձակի համբավը կարելի է համեմատել միայն 19րդ դարի ռուսական վեպի համաշխարհային համբավի հետ[1]: Լատինամերիկյան գրականությունն դուրս էր եկել համաշխարհային գրականության առաջնաբեմ: Լատինամերիկյան երկրներից, սակայն, կտրուկ առանձնանում է Արգենտինան(նաև Ուրուգվայը): Այստեղ առաջանում է աշխարհում ճանաչում գտած հենց արգենտինյան տիպի ֆանտաստիկ գրականությունը: Նախ և առաջ նշենք, որ այդ երկրում բացակայում է «մոգական ռեալիզմ» հասկացությունը: Խնդիրն այն է, որ աշխարհագրորեն Արգենտինայի տարածքը ացտեկների և մայաների քաղաքակրթական շրջանակներից դուրս է. ինկերի կայսրության ամենահարավային ծայրում է: Մյուս կողմից, հայտնի է, որ երկիր մտնող եվրոպացիները կամ ոչնչացնում էին կամ դեպի հյուսիսային ծայրամասեր էին մղում տեղաբնակ հնդկացիներին: Այս պատճառով «մոգական ռեալիզմի մենակարևոր բաղադրիչներից մեկը՝ առասպելականը, որը հիմնված է հնդկացիական - աֆրիկյան դիցաբանական շերտի վրա, գրեթե բացակայում է: Հիմնականում եվրոպական երկրներից գաղթած մարդիկ հայտնվել էին Ռիո դե լա Պլատայի երկու ափերի անծայրածիր, գրեթե չբնակեցված տարածքներում: Համեմատաբար փոքրաթիվ Ինտելեկտուալները իրենց տեղը չէին գտնում ագրարային, արդյունաբերական երկրի հասարակության մեջ: Զարմանալի չէ, որ եվրոպամետ մշակույթների միաձուլումից 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին այստեղ ծնվում է «ֆանտաստիկ» նովելը: Ե. Մպերատտի Պինեյրոն գրում է, որ «Արգենտինյան ֆանտաստիկ գրականությունը իսպանալեզու գրականությունների մեջ ամենահարուստն է»: Նույնն է գրում նաև մեքսիկացի գրականագետ Մ. Պ. Գոնսալեսը. «Արգենտինացիները 20-րդ դարի 30-ական թվականներից ի վեր բոլոր հարևան երկրներից ամենաշատն են ստեղծել ֆանտաստիկ նովելներ»: Առհասարակ, լատինական Ամերիկայի «ֆանտաստիկ» գրականությունը սնվում է ոչ այնքան բանահյուսական ակունքներից, որքան տարբեր քաղաքակրթական գաղափարների, ստեղծումների շփումից: Դրան հատուկ են փիլիսոփայական և ինտելեկտուալ բանականության խաղը, գոյության հավերժ գաղտնիքները: Արգենտինյան գրականությունը, այլ կերպ ասած, գտնվում է անցումային գոտում. Արգենտինան ոչ Եվրոպա է և ոչ էլ Ամերիկա բառի բուն իմաստով: Արևմտաեվրոպական գրականության հնուտ գիտակ Ի. Սերտերյանը, խոսելով լատինամերիկյան գրականության կայացման և բուռն վերելքի մասին, նկատում է, որ դրա հիմնական խթանն էին լատինամերիկացիների ինքնագիտակցության վերելքն աշխարհամասում: 20-րդ դարասկզբին Արգենտինան

սոցիալական կառուցվածքի սուր փոփոխություններ է կրում: Անասնապահական երկիրը ապրանքարդյունաբերության շնորհիվ միանգամից դառնում է տնտեսապես ամենից զարգացածը Լատինական Ամերիկայում: Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը իր հետքն է թողնում մարդու հոգեբանության, ճակատագրի վրա: Արգենտինան դառնում է ողջ աշխարհի համար պարենի մատակարար երկիր[2]: Այս փոփոխության հետևանքով քաջ գառուչն՝ հողի և երկրի տերը, վերածվում է կապիտալի ստրուկի: Ի. Տերտերյանը նշում է, որ ամենից կարևոր և առանցքային շրջադարձը հասարակական գիտակցության մեջ հատկապես գառուչի վախճանն էր և այդ փաստն է ընկած արգենտինյան նորագույն շրջանի գրականության ձևավորման հիմքում[3]:

Հասարակական կյանքի շրջադարձը յուրօրինակ անդրադարձ է գտնում գեղարվեստական գրականության մեջ: Հասկանալի է, որ սակավ չէին գրողի գեղագիտական հայեցակարգին հակադրվող մտավորականները, ինչպես Պաբլո Ներուդան, Գաբրիել Գարսիա Մարկեսը, Խուլիո Կորտասարը, Միգել Օտերո Սիլվան: Որոնք էլ, սակայն, իրենց

հերթին, անկախ ունեցած պատճառաբանություններից, միշտ շեշտել են բացահայտ ճշմարտությունն առ այն, որ Բորխեսը խոսքի իսկական Վարպետ է և նա է սկզբնավորողը լատինամերիկյան նորագույն արձակի Ժերար Ժենետտը գրում է, որ «Բորխեսը ինտերտեքստուալության արքետիպ է»: Այսպիսով, գրել գաուչոյի մասին Բորխեսի համար նշանակում էր գրել երկրի անկախության պատմությունը: Ահա ինչու՝ գրում է երկրի իսկական տիրոջ՝ Գաուչոյի պատմությունը: Հայտնի է, որ բռնակալները, տեղական ավագանին օգտագործում էին քաջերի ջոկատները՝ իշխանության գալու նպատակով. չէ՞ որ անուս գաուչոն կուրորեն ենթարկվում էր առաջնորդներին: Արդեն 19-20-րդ դդ. սահմանազլխին խոշոր հողատերերը դավաճանում են գրկելով նրան հողից, ձիավարելու իրավունքից: Գաուչոն դադարում է սոցիալական միավոր լինելուց: Նա վերածվում է օրավարձով աշխատող

բատրակի կամ ձուլվում է քաղաքային արվարձաբնակներին: Բորխեսը վերլուծում է երկրի նորագույն շրջանի ողբերգական դեպքերը: Դա է վկայում «Ուրիշ մահ» ֆանտաստիկ պատմվածքը: Եվրոպացի գրականագետներ Ռոժե Կայուան և Ցվետան Տոդորովը համարում են ֆանտաստիկ նովելը պատումի մի ժանր է, որը գտնվում է անսովորի, իրականության և հրաշքի միջև: Ռոժե Կայուան գրում է, որ ֆանտաստիկը ընդունված կարգի խախտում է, անթույլատրելիի ներխուժումը առօրյա անփոփոխ օրինաչափության մեջ: Բացի այդ՝ ֆանտաստիկը ենթադրում է ոչ միայն տարօրինակ իրադարձության առկայություն, որը ստիպում է երկմտել հերոսին և ընթերցողին, այլև պահանջում է ընթերցման հատուկ ձև, որը չպետք է լինի ոչ պոետիկ, ոչ էլ ալեգորիկ: Բորխեսի ընկալմամբ մենք գտնվում ենք ֆանտաստիկի տիրույթում, երբ կասկածում ենք ընթացող իրադարձությունների իրական լինելուն: Ֆանտաստիկը հիմնվում է որևէ արտահայտված կասկածի վրա և պահպանվում է պատմողի կողմից, որն այն փոխանցում է ընթերցողին: Կասկածը վերաբերում է պատմածի իրական կամ ոչ իրական լինելուն:

«Ուրիշ մահ» պատմվածքում ֆանտաստիկը պայմանավորված է ոչ այնքան այուժեով, որքան այն ներկայացնելու ձևով: Պեղրթո Դամիանիի համար ֆանտաստիկն արտահայտում է սկանդալ, պատվածք, անսովորի ներխուժում, որը համարյա անընդունելի է սովորական պայմաններում: ԻՆչպես և միֆերում, ֆանտաստիկ պատումն անդրաառնում է նույն թեմային՝ ներկայացնելով ինտրիգի այլ տիպի զարգացումներ: Բորխեսը պատկերում է ձիավորների, ուլքեր սանձում էին գավառներն ու նահանգները, չգիտեին, թե ի՞նչ է վախը: Նրանք գնդապետներ էին կամ կլանի առաջնորդներ՝ Ռուասի և Կիրոգի նման, որոնց զրուցի միջոցով գրում է **«Մեռյալների երկխոսությունը»**: Պետք է նկատի ունենալ, որ պաշտպանելով ազատասիրական, հերոսական համամարդկային գաղափարներ՝ գրողը բոլորովին չի իդեալականացնում հեղափոխությունը: Չէ՞ որ կռիվներն ու քաղաքացիական պատերազմները ծվատում էին Արգենտինան: Անկախության հասնելու համար ռազմական առաջնորդը՝ Կաուդիլիոն, տանյակ հազարավոր մարդկանց կյանքեր էր զոհաբերում: Առաջ էին մղվում նաև նրա շահադիտական նպատակներն ու փառասիրության բավարարմանն ուղղված գործողությունները: Սա էքստազի շրջան էր անկախ ամեն ինչից: Եվ գրողը դժգոհ էր սպանություններից: Մանավանդ համոզված էր, որ Լատինական Ամերիկյան կուշտ է արյունահեղություններից, իսկ քաջության հրաշքները կատարվել էին վաղուց՝ Չակոբուկոյի և Խունինեի օրերում, այսինքն, լատինական Ամերիկայի անկախության համար մղվող պատերազմներում: Այն ժամանակ պատերազմում էին առաջադիմական գաղափարների հաղթանակի համար: Պատմության այդ ողբերգական իրադրության ներգործությամբ բյուրեղանում էր դարաշրջանի բարոյական կողեքսը: Վերջինս առհասարակ բնորոշ է

«Էպիկական աշխարհին»:

«Թաղեռ Իսիդոր Կրուսի կենսագրությունը» պատմվածքում նկարագրվող դեպքերը վերաբերում են 19-րդ դարասկզբի առաջին տասնամյակներին. 1829 թ. փետրվարի 6-ին ապստամբները, որոնք այս անգամ հետապնդում էին Լավելլեին, հարավից գնում էին Լոպեսի գործերին միանալու: Ճանապարհին նրանք կանգ առան Պերգամինոյից երեք թե չորս լիզ հեռու: Լուսաբացից առաջ նրանցից մեկը երազ տեսավ: Կիսախավար բարաքում

նա գոռաց ու արթնացրեց հետը քնած կնոջը: Ոչ ոք չգիտեր՝ ինչ երագ էր դա, որովհետև հաջորդ օրը ժամը չորսին ապստամբները ստիված էին փախուստի դիմել: Սուրբաբեր, որ հետապնդում էր ապստամբներին մինչև ժամը 9-ին դաշտը չմտնեց, և այն մարդը՝ մահացան: Նրա գանգը բացեց Պերուում և Բրազիլիայում կոված թուրը: Կնոջը կոչում էին Իսիդորա: Տղային, որ նա ծնեց, կոչում էին Թադեո Իսիդորո Բորխես ստեղծագործական ինքնարտահայտման օրինաչափությունը մարդկային ոգուն յուրահատուկ ողբերգական շարժում է տեսնում, որը պարտադրում է անհանգիստ մտածել կյանքի իմաստի, անհատի կենսագրության մեջ իրագործվող վերերկրային հատուկ ծրագրի, ֆանտաստիկի ներկայության մասին: Ինչ էլ լինի Բորխեսի պատմվածքների պատումային արտահայտումը թվացյալ զգայական, խոհական, չոր ու կոշտ, գտված զգացմունքից՝ ենթակա առարկայական աշխարհի կոնկրետությանը՝ Գաուչոյի խորշակահար ներքին աշխարհի պատկերով, նկատվում է վերարտադրության կամային, ինքնահատուկ մի եղանակ, որն ուղղակի Բորխեսը քաղում պայքարի կոնկրետ դրվագից, և որը դարբնել է Լատինական Ամերիկայի դժվարին պատմությունը: Ինչպես տեսնում ենք, պատմվածքներում գործում է և գոյատևման համար նախասահմանված կյանքի նկարագրությունը, որի հիմնական պատկերը տառապանքն է, իսկ հետո երևում է գրողը, որն անուղղակի տալիս է եղածի իր գնահատականը՝ հաստատումը սեփական ժողովրդի հերոսական պատմության կենսափորձով: Գրականության պատմաբանները նշում են, որ դեռևս սկսած քսաներորդ դարի քսանական թվականներից՝ Խ. Բորխեսը դավանում էր մշուշոտ հեղափոխականություն(Ի.Տերտերյան): Սա նրա աշխարհայացքի նշանակալի կողմերից է, ինչը, սակայն, հետագայում որոշ փոփոխություն է կրում, զարգացում ապրում և ձևավորում է մի ամբողջական ստեղծագործական հայեցակարգ, այսպես կոչված, պատմվածքների գաուչոական շերտը: Նույնիսկ բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն, որն այդպես էլ չհրատարակվեց, Բորխեսը կոչել էր «Կարմիր հիմներ(պատմներ)», «Կարմիր», այսինքն՝ արյունի բանաստեղծություններ: Եվրոպայից վերադառնալով հայրենիք՝ նա դեռևս շարունակում էր գտնվել ուլտրաիզմի ազդեցության տակ: Ավանգարդիստական շարժման առաջնորդներից էր և կողմնորոշումն արտահայտում էր նույն ոգով գրված ստեղծագործություններով: Արյունոտ տարիների թեմաների շուրջ նա գրել է մեծ թվով պատմվածքներ գրեթե մերժելով հեղափոխության հրեշավոր դաժանությունը «Ուրիշ մենամարտ»: Նա հետաքրքրված էր խոշոր պատմական անհատներով, այն տարիների ազատասեր գործիչներով: Պատմության և պատմություն կերտող անհատի միջև կապերը փորձում էր վերլուծել բարոյական և էթիկական արժեքային համակարգով:

Հայրենականություն, որն ինքն իրենով եզրափակում է մարդու գործունեությունը: Դա էր նրան գրավում: Ծագումնաբանական տեսանկյունից՝ գրողի նախընտրած տիպական կերպարը Գաուչոն աչքի է ընկնում զսպվածության, մաքառումի, մայր հողի հետ պորտալարով ու արյունով կապվածության ազնվական հատկանիշներով. գուցե նաև այն պատճառով, որ վերջիններիս իսկատիպ ակունքը, իրական պատմական է: Բորխեսյան գրական նախադրյուններում դասական մշակման ենթարկված ազատամարտիկի տեսակը ազգային ձուլվածք ունի: Կարելի է ասել, որ կերպարի նախօրինակը թրծվել է երկարաթև հազարամյակների ժամանակամիջոցում (վկայված է դեռևս իսպանական «Սիդով») □ Մենք զգում ենք վերջինիս ձուլումը ժողովրդական բանահյուսությանը, այնուհետև գործառվելով-հասունանալով՝ հյուսված լինելը Սերվանտեսի երկու հերոսների՝ Սանչո Պանսային և Դոն Կիխոտին: Բորխեսի և Սերվանտեսի միջև գաղափարապաշտ Դոն Կիխոտի և Դամիանի կերպարի ընտրության հարցում ընդհանրություններ կան, միևնույն են հեղինակային դիրքորոշումները, կերպարների հիմնական ամրաձույլ հատկանիշները, հենց Բորխեսն է Դոն Կիխոտի էպիկական կերպարի դասական կողմին ժամանակակից Գաուչոյի երանգավորում տվել: Կերպար, որի տիպական, անխառնուրդ տեսակը, Բորխեսի արձակում զգացմունքային չէ(այդպես է պատկերված), բայց հուզում է ծայրաստիճան, չի պահանջում ոչինչ, քանի որ պատրաստ է ապրելու արյան հիշողության և կանչի անմիջական ներգործումով, արժանավայել ու հպարտորեն իր մաքառմանը համեմատ: Կարելի է նույնիսկ ասել, որ Գաուչո Դամիանի կերպարն այն է,

ինչ կլինեն Սերվանտեսի հերոսը, եթե գրված լիներ քսաներորդ դարում: Բորխեսն իր կերպարը հարստացնում է ներքին տարողությամբ: Թույլ է տալիս, որ նա դառնա սեփական հոգեվիճակային տանջալից իրադրությունների միակ տերը: Որովհետև եթե հնարավոր լիներ, տառապանքը նա կկրեր՝ ինչպես Հիսուն իր խաչը՝ չկիսելով որևէ մեկի հետ: Այստեղից էլ նրա պատմվածքի խոսքի ապացուցողական արձանագրական չոր բնույթը, որն էական ընդգծված երանգներ չունի, երկխոսության մեջ վիճաբանական է ուղղված է ոչ թե վիճաբանող կողմին, այլ առարկային՝ պատերազմին, և որի համեմատությամբ տոնի և ոճի ոչ մի խիզախում, ոչ մի ճիչ ավելի մեծ կշիռ չէր կարող ունենալ, քան փաստերը: Գեղարվեստական այդ լեզվին տիրապետելու համար Բորխեսն իրական փաստից հեռու գնալու անհրաժեշտություն չի գգում: Նա դրսևորում է այն, ինչը կարելի է բնութագրել որպես իրականում դրսևորվող բարոյահոգեբանական փորձարարություն: Պատմվածքներ, որոնց վավերատիպ, իրականում հնարավոր սյուժեի գեղարվեստական մշակումը հատկանշվում է ծավալվող կյանքի բարոյաբանական կարծրությամբ:

Գրականություն

[1] Вc. Банго, Книга песчинок. Фантастическая проза Латинской Америки, Л., 1990, с.5.

[2] И Тертерян Художественное своеобразие литератур Латинской Америки, Аргентиская проза. Особый путь. М., 1976, стр 310.

[3] Նույն տեղում, էջ 311

ՀՏԴ 82-1

Հռիփսիմե Կոստանյան
ԵՊՀ, Հայ բանասիրություն, մագիստրանտ
Գիտական ղեկավար՝ ր. գ. թ., դոցենտ Նորայր Պողոսյան
Էլ. փոստ՝ hripsime.kostanyan@yahoo.com

ՀԱՎՈՐԹՈՒՄԱԹԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

Բանալի բառեր՝ ուշ միջնադար, տաղեր, ճարտասանական կամ ոճական հնարներ, լեզվական արտահայտչամիջոցներ

Ամփոփում

Հակոբ Երեց Թոխաթեցին ուշ միջնադարի տաղասաց, թարգմանիչ, գրիչ է: Ուսումնասիրության համար նյութ են «Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա»-յի և «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը» գրքերի տաղերը: Մենք քննել ենք Հակոբ Թոխաթեցու տաղերի լեզվական արտահայտչամիջոցները: Ճարտասանական կամ ոճական հնարները մտքերն արտահայտելու հատուկ, ոչ սովորական միջոցներ ու եղանակներ են, որոնք առատապես հանդիպում են Հ. Թոխաթեցու տաղերում: Քննությունն ի ցույց է դնում Հակոբ Թոխաթեցու երկերի լեզվի հարստությունը, ուշ միջնադարի մեր այս բանաստեղծը կարողացել է լեզվական արտահայտչամիջոցների շնորհիվ իր տաղերին գեղարվեստական երանգ հաղորդել: Հարկ ենք համարում նշել, որ դասակարգումը զուտ պայմանական է ու ներառված են միայն ավելի գեղեցիկ ու տպավորիչ օրինակներ: Թոխաթեցու լեզուն այնքան հարուստ է, որ երբեմն մի երևույթին կարող ենք միաժամանակ մի քանի անուն տալ:

Рипсима Костаян

ЕГУ, Армянская филология, магистрант

Науч. рук.: к.ф.н. Норайр Погосян

эл. адрес: hripsime.kostanyan@yahoo.com

ЯЗЫКОВОЕ ИСКУССТВО СТИХОТВОРЕНИЙ АКОПА ТОХАТЕЦИ

Ключевые слова: позднее средневековье, напевы, ораторские и стилистические навыки, языковые средства выражения.

Резюме

Акоп Тохатеци поэт, переводчик, писец позднего средневековья. Материалами для исследования являются напевы из книг «Хрестоматия древней и средневековой армянской поэзии» и «Армянская поэзия позднего средневековья». Мы анализировали языковые средства выражения напевов Акопа Тохатеци. Ораторские и стилистические способы вырывать мысли, необычные средства и методы часто встречаются в напевах А. Тохатеци. Выявляется языковое богатство в творениях Тохатеци. Поэт позднего средневековья сумел с помощью языковых образов придать своим напевам художественный тон. Считаем уместным добавить, что классификация сугубо условная и включены только красивые и впечатляющие примеры. Язык Тохатеци настолько богат, что порой одному и тому же явлению можно дать несколько имен.

Hripsime Kostanyan

ESU, Armenian philology, Master's degree

Supervisor: Ph.D Norayr Poghosyan

email: hripsime.kostanyan@yahoo.com

THE LINGUISTIC ART OF HAKOB TOKHATECI'S VERSE

Key words: the Late Middle Ages, canto, rhetorical and stylistic skills, linguistic means of expression

Summary

Hakob Tokhateci is a poet, translator and scribe of the Late Middle Ages. The current paper investigates cantos from << Readings of Ancient And Medieval Armenian poetry>> and << Armenian Poetry of the Late Middle Ages>>. We analyzed linguistic means of expression of the Hakob Tokhateci's canto. In the Tokhateci's cantos one may meet peculiar rhetorical and stylistic means of expressing thoughts. His rich language is highly appreciated. He could easily impart artistic style to his cantos with the help of linguistic means. It's worth to be mentioned that the classification is purely notional and there are included beautiful and impressive examples.

Հակոբ Երեց Թոխաթեցին ուշ միջնադարի տաղասաց, թարգմանիչ, գրիչ է: Հեղինակ է «Ողբ ի վերայ Օլախաց երկրին» (գրված 1595 – 1596 թթ.), «Տաղ և ողբանք ի վերայ Եվդոկիա քաղաքին» (1604) պատմական թեմայով ողբերի, քնարական բնույթի գղջական-խրատական տաղերի, զանձերի ու ներբողների, «Յակոբի Սաղմոսարան» կոչված անտիպ երկի: Լատիներենից հայերեն է թարգմանել հնդկական ծագում ունեցող «Եօթն իմաստասիրաց

պատմությունը» (1614, հայերեն 1-ին անգամ հրատարակել է 1696), որը, խմբագրական որոշ փոփոխություններով, հրատարակվել է 9 անգամ: Այս գործը հայերենից թարգմանվել է թուրքերենի (1803), ռուսերենի (1847), վրացերենի (XIX դ.), ֆրանսերենի (1919)¹ :

Հակոբ Թոխաթեցու գրչությամբ պահպանվել է 6 ձեռագիր (Երևանի, Վիեննայի և Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարաններում): Բացառիկ նշանակություն ունի նրա գրչագրած «Գեոլայի տաղարանը» (Երևանի Մատենադարան, ձեռագիր № 10050), որն ամփոփում է հայ միջնադարյան պոեզիայի բազմատեսակ ստեղծագործություններ²:

Ուսումնասիրության համար նյութ են «Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա»-յի և «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը» գրքերի տաղերը.

1. Յակոբայ Թոխաթեցույ ողբ ի վերայ Օլախաց երկրին,
2. Նորին Յակոբի ասացեալ խրատ վասն անձին իւրոյ,
3. Նորին Յակոբի ասացեալ վասն սիրոյն Աստուծոյ և սրբոց նորա,
4. Ի Յակոբ իրիցուէ ասացեալ է գեղջուկ ոտանաւորս ի դէմս վարժապետին իւրոյ՝ Յակոբ քահանային, որ ասի Այվաթենց, և իւրեանց մականունն ասեն Թոխաթցի Բաթուկի տէր Յակոբ, որ է այժմ ի Լեհաց տուն, Չամօսցա,
4. Ի Բաթուկ Յակոբ իրիցուէ ասացեալ ի դէմս վարժապետին իւրոյ՝ Այվաթենց տէր Յակոբին,
5. Յակոբայ Թոխաթեցույ ասացեալ տաղ վասն կենաց մարդկան,
6. Յակոբայ երիցու ասացեալ զղջման խօստովանօրէն,
7. Նորին Յակոբի ասացեալ ողբ աղօթական,
8. Յիշատակարան շարադրողի սաղմոսիս, Տէր Աստուած ողորմեսցի, ամեն,
9. Տաղ վասն սուրբ Երուսաղեմայ, ի Յակոբ քահանայէ ասացեալ,
10. Տաղ և ողբանք ի վերայ Եւրոկիա քաղաքին:

Մենք քննել ենք Հակոբ Թոխաթեցու տաղերի լեզվական արտահայտչամիջոցները: Նշենք, որ հեղինակի երկերում հանդիպում են փոխառյալ ու դիպվածային բառեր, օր.՝ քանցելար - գերմ. kanzler, ռուս. канцлер «պաշտոնատար անձ», դիպվածաբանություններ՝ լիական, Աբեթական, ցոցոռային և այլն: Մականյն Հ. Թոխաթեցու լեզուն առավելապես աչքի է ընկնում ոճական միջոցների բազմազանությամբ:

Ճարտասանական կամ ոճական հնարները մտքերն արտահայտելու հատուկ, ոչ սովորական միջոցներ ու եղանակներ են, որոնք ծառայում են միտքն ու գաղափարն ուժեղացնելու, դրանք գեղեցիկ, զարդարուն, առավել պատշաճ, դիպուկ ու նպատակասլաց արտահայտելու խնդրին և կամ ասվածին հուզականություն, զգացմունքայնություն տալու, նրա մեջ կիրք ու կամք դնելու և ունկնդրի կամքի ու զգայությունների վրա ներգործելու նպատակին³: Նման կառույցներ առատապես հանդիպում են Հ. Թոխաթեցու տաղերում, որոնցից ներկայացնում ենք բնորոշ օրինակներ:

Փոխաբերություն: Մի բառի (բառակապակցության) գործածությունն է մեկ այլ բառի իմաստով և նրա փոխարեն հիմնված դրանց արտահայտած առարկաների (հատկանիշների, գործողությունների) նմանության կամ համեմատելի լինելու վրա:⁴ Մի քառատողի մեջ հանդիպում են մի քանի փոխաբերությունների, որոնք էլ ավելի գրավիչ են դարձնում բանաստեղծությունը.

Միրով քո կարօտուղ սիրտս կու վառի:

Եւ գութն տարածեաց յաշխարհս, որ մարդիկք սիրով վառվեցան:

Ընթերցողի երևակայության մեջ փոխաբերությունը ստեղծում է հույզեր, պատկերներ: Հեղինակը դիպուկ ընդգծել է չարն ու բարին: Կարդալով նրա տողերը՝ բարությունն աչքիդ առաջ ասես հայտնվում է լուսավոր, պայծառ կերպարով, իսկ չարը բնորոշում է մութն ու խավարը:

Այս Ըրզվան չար կենդանին:

Ընտրեալ ես յաստուծոյ դու յորովայնէ,

Շնորհքն աստուածային ի քեզ իջեալ է:

Փոխաբերական իմաստն արտահայտվում է ոչ միայն մեկ բառի, այլ բառերի

¹ Ալիյան Ն., Մատենագիտական հետազոտություններ, հատոր 4, էջ 3-12:

² Ալիյան Ն., Հինգ պանդուխտ տաղասացներ, էջ 174-178:

³ Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, հտ. 2, էջ 3-4:

⁴ «Հայոց լեզու և խոսքի մշակույթ», էջ 141:

կապակցության միջոցով: Հաճախ բառակապակցություններն ավելի են մասնավորեցնում ու ընդգծում հեղինակի խոսքի հուզական այն որակը, որը բնորոշ է չափածոյին: Օր.

Չերկինս կամար կապեաց, հրեղէն գորացն օթարան,
Չարեզակն եղ ի նմա և կարգեաց աստեղաց սահման:

Մակդիր: Մակդիրների պատկերավորությունն ու ուժգնությունը հաճախ նրանց անսպասելի կիրառությամբ են պայմանավորված, և նրանց ոճական արժեքը բացահայտվում է միայն տվյալ համատեքստում:

Ղազախներուն շուն պարոնին:

Պեղծ վոյվոտան հօն բնակեր:
Չար վոյվոտան Օլախ ազգին:

Աղտեղի մեղօք լցեալ Յակոբ դուն:

Մակդիրների գործածությամբ հաճախ ներկայացվում է ինչպես առանձին անհատների արտաքին նկարագիրը, այնպես էլ նրանց հոգեվիճակն ու տրամադրությունը:

Նման ինքնատիպ մակդիրների ընտրությամբ արտահայտվում են ոչ միայն հեղինակի կամ որևէ կերպարի ընկալումն ու պատկերացումները կյանքի առանձին երևույթների, իրականության նկատմամբ, այլև ներկայացվում նրանց համապատասխան վերաբերմունքն ու գնահատականն այդ իրողության կամ անձնավորության նկատմամբ տվյալ իրավիճակում:

Եօթնարփեան շնորհօք լցոյց և եղ ի դրախտին փափկութեան:

Հաճախ մակդիրների բազմազանությունը թույլ է տալիս ընթերցողին ընկնել երևակայության գիրկն ու իր ուժերով ստեղծել իր կերպարն ու նրա հոգեվիճակը, իսկ հեղինակն ուղղակի հպանցիկ փոքր-ինչ ուղղորդում է նրան: Առարկայի կամ երևույթի բազմաառնականիչ և պատկերավոր բնութագրերը ավելի ակնհայտ է բարդություններով արտահայտված մակդիրների գործածության դեպքում:

Յումեքէ ոչ երկնչի, չունի նա ահ երկիւղական:

Հետաքրքրական է նաև հոմանիշ բառերի մակդիրային գործածությունը:

Անունդ քո բարի տարածեալ յերկրի,
Ո՛վ տէր Յակոբ, ընտրեալ ի մէջ ամէնի,
Բնութեամբդ ես դու բարի, գործով գովելի,
Մաքուր ես և անբիծ, անախտ ի մարմնի:

Գրմբեթաձև բաղանիքներն,
Կամարակապ էր անկիւններն,
Սալարակապ շատըրվաններն,
Յեղք ի ցեղաց էր իւր քարերն:

Հեղինակն այնքան խորն է նկարագրել երևույթները, որ երբեմն մակդիրով հանդես են եկել քառատողեր: Տողերը սահում են տողերի ետևից, քառատողերը՝ քառատողերի և չես էլ հասցնում նկատել, թե ինչպես մի շնչով կարդացիր բանաստեղծությունը:

Համեմատություն: Երկու կամ ավելի առարկաների կամ երևույթների համադրումն է դրանցից մեկի կամ մյուսի նմանությամբ կամ տարբերությամբ:¹ Թոխաթեցին օգտագործել է շատ դիպուկ համեմատություններ.

Նման ես դու սրբոց հարցն առաջի,
Որ և համեմատիս հրեղեն սեռ,
Ի յայս ձմեռնացեալ չար ժամանակի,
Դու վարդ երևեցար ի մէջ պարտեզի:

¹ Հայոց լեզու և խոսքի մշակույթ, էջ 138:

Լուսով պայծառ նման դու արիւսակի:

Երկիրն ամենն սարսէին
Ի յահէ անհաւատ Թաթրին,
Որպէս գնաւ ի մէջ ծովին,
Որ ի յալեացն տատանին:

Նման էս դու հոգով ծաղկայից դաշտի
Եւ էս փետուրաթափ թռչուն ի գրի:

Աստուածատիպ կերպարիդ հոգիս փափագէ,
Որպէս եղջիրն այն ջուր ի աղբերէ:

Չաւուրս մարդոյ որպէս խոտ անցին:
Քաղցրանայ, լինի նման շաքարի:

Գարնան ծաղկի նման կու ծաղկին,
Որպէս շուշանի պայծառ տես ունին:

Լինին որպէս վարդ ի մէջ կոկոնին,
Հոտ անուշ բուրեն իւրեանց ծնօղին:

Ի դուռն մահու արդէն անկանին,
Իբր զկիսայրեաձ կոճղ անկեալ դնին:

Չորացեալ ծառի տերնի նման,
Անկանին մահուամբ և ի հող դառնան:

Հաշվի առնելով, որ համեմատությունները հաճախ կառուցվում են անսպասելի, երբեմն ոչ սովորական, իրար հետ արտաքինապես կապ չունեցող առարկաների համադրությամբ, հեղինակը կարևորում է մարդու և բնության փոխկապակցվածությունը, այդ իսկ պատճառով համեմատությունների զգալի մասում մենք տեսնում ենք բնությունն՝ իր տարտեսակ դրսևորումներով:

Բիրք ի բիրոց ի ներս մտին,
Քան զչար գազան անապատին:

Ընկերք նոցա յետոյ եկին,
Նման իժի և քարք օձին:

Նման գազանի ի յորս կու գնան:

Անբան անասուն է նա և վատթար, քան զվայրի գազան:

Ստեղծագործությունների մեջ ինչպես մակդիրների դեպքում, այնպես էլ համեմատությունների մեջ կողք կողքի ներկայացված են չարն ու բարին:

Արար զմեր նախնին պատկերին նման,
Դարձեալ նորոգեաց ևս պայծառ քան գայն:

Արդար, հեզ և հանդարտ և բարեհոգի,
Գործով էս դու մարուր և առաքինի,
Դու էս դամպար վառեալ, լոյս անշիջելի,
Ի քեզ նման չի կայ ի յայս միջակի:

Եւդոկիա՛ դու գովական,

Նրման երկրին Պաղեստինեան:

Նրման էիր դու այն երկրին,

Որ էջ շրջեաց աստուածորդին:

Ամփոփելով համեմատությունները կարող ենք ասել, որ հեղինակը յուրահատուկ երանգ է հաղորդել իր գործերին, ինչն ավելի գայթակղում ընթերցողին:

Կարգափոխություն: Միևնույն իրողությունը կարող է հաղորդվել գործառական տարբեր ոճերի միջոցով: Միօրինակությունից ու միապաղաղությունից խուսափելու և ստեղծագործությանը աշխուժություն, կենդանություն ու թարմություն տալու համար անհրաժեշտ է լինում փոփոխություններ մտցնել նրա բանակարգի ու հորինվածքի մեջ: Քառասողի մեջ կտրուկ փոփոխվում է միտքը: Օրինակ՝

Լալով ասեմ ողբերգական,

Արտասուելով հառաչական,

Այս անողորմ բանքս որ եղան,

Ի մեր մեղացն գործեցան:

Քեզ, Յակոբ երեց, ո՞վ եղ հրաման,

Որ շաղակրատես բանս ի յատեան,

Զձեզ աղաչեմ, եղբարք ամենայն,

Մի՛ խնայեք ինձ ասել զՀայր մեղայն:

Միմվոլ: Բանաստեղծությունն ինքնին սիմվոլ է, խորհրդանիշ, կյանքի, միջավայրի, իրականության այլաբերական, հաճախ նաև սիմվոլիկ նկարագրություն, լեզվի գեղարվեստական զանազան միջոցների ու ոճական հնարանքների գործածություն: Խորհրդանիշների միջոցով երբեմն վերացական, ոչ իրական, երևութական պատկերներն ու գաղափարները դառնում են կոնկրետ, տեսանելի ու թանձրացական: Ոճական այս հնարանքի միջոցով արտահայտվում է նաև որևէ իրավիճակ, տրամադրություն, հոգեվիճակ:¹

Սա միայն սուրբ էր ի յերկրին,

Որպես գՅովքն այն առաջին:

Անուամբն էր ինքն Ահարոնին,

Գործով նման Սաղայելին:

Շնորհոք ես դու լցեալ նման Ներսէսի:

Հեղինակի չափաձայնում առկա է շատ հայտնի դեմքերի օրինակներ և որպես սիմվոլ՝ մի բառի սահմաններում իր ասելիքը դարձել է պարզ ու մատչելի հասկանալու համար:

Չափազանցություն և նվազաբանություն: Խոսքի պատկերավորության նպատակով Թոխաթեցին միտումնավոր մեծացված ու չափազանցված է ներկայացնում որոշ երևույթներ, ինչով էլ ավելի ազդեցիկ է դարձնում խոսքը:

Թօթափեա գմրուրդ, փախիր ի չարէն:

Գերունակ գոգոյդ անբաւս, մեղայ:

Քանցելարն քաջ և արին,

Մտօր ճարտար, գիտող բանին:

Պեղծ Ըրզվան՝ իշխան չարին:

Այս քանցելարն՝ իշխան բարին:

Եպիսկոպոսն սուրբ հոգի,

Ես անարժան հող և փոշի:

¹ Եզեկյան Լ., Ոճագիտություն, էջ 351-352:

Չոր սիրով իջեալ յերկնից և էառ մարմին կուսական:

Այլաբանություն: Այստեղ մարդկային հատկանիշները ներկայացվում են կենդանիների, առարկաների և առանձին երևույթների միջոցով:

Կայր մեջ գայլոց նման գառին:

Արեգ յարևու,

Աստղ առաւօտու,

Հոգւոց լուսատու:

Ակնարկ: Հեղինակը որևէ իրողություն մանրակրկիտ նկարագրելու փոխարեն այն ներկայացնում է շատ սեղմ, բայց բազմիմաստ մի արտահայտությամբ:

Խաղաղութիւն եղև երկրին,

Բարեխօսութեամբ սուրբ Կուսին:

Փոխանունություն: Այս երևույթը գործածվում է իբրև մի բառի գործածություն այնպիսի բառի փոխարեն, որի հետ ունի պատճառահետևանքային և տրամաբանական այլ կարգի իմաստային առնչություններ:¹ Այնպիսի նույն ոճով է հեղինակը գրել իր ստեղծագործություններն, որ այս երևույթը սահուն անցնում է տողերի միջով.

Լոյսդ աննենց և սուրբ և հեգահոցի:

Այստեղ լույս բառն հանդես է եկել փոխանվանաբար՝ անձնավորում ստանալով: Ունենք դեպքեր, ինչպես վերոնշյալը, երբ բառը կարող է հանդես գալ տարբեր միջոցների շարքում: Կրկնություններից խուսափելու համար հարկ են համարում նույն երևույթը պատկերավորման մեկ միջոցի սահմանում քննել՝ ելնելով համատեքստում առկա հեղինակի նպատադրության:

Ասաց. Ջարդեմ զագգն տաճկին:

Միանշանակ բացասական երանգ է հեղինակը հաղորդում գործին ջարդել ազգը արտահայտությամբ, որտեղ ամփոփված են նաև սեփական դիրքորոշումները:

Հետ ձեզ երթամք ի վրայ Թուրքին:

Հեղինակը ցանկանում է ասել, թուրքերի քաղաքի վրա, որտեղ կարևորելով հատկապես թուրքերին, բնավ ոչ այլ ազգի բնակիչներին, քաղաքն անվանել է Թուրք:

Քննությունն ի ցույց է դնում Հակոբ Թոխաթցու երկերի լեզվի հարստությունը, ուշ միջնադարի մեր այս բանաստեղծը կարողացել է լեզվական արտահայտչամիջոցների շնորհիվ իր տաղերին գեղարվեստական երանգ հաղորդել:

Հարկ ենք համարում նշել, որ դասակարգումը զուտ պայմանական է ու ներառված են միայն ավելի գեղեցիկ ու տպավորիչ օրինակները: Թոխաթցու լեզու այնքան հարուստ է, որ երբեմն մի երևույթին կարող ենք միաժամանակ մի քանի անուն տալ:

Գրականություն

1. Ակինյան Ն., Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921:
2. Ակինյան Ն., Մատենագրական հետազոտություններ, հ. 4, Վիեննա, 1938:
3. Եզեկյան Լ., Ոճագիտություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2003, 376 էջ:
4. Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Գիրք Բ, Երևան, ԵՊՀ հրատ., 2015, 340 էջ:
5. Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա, Երևան, ԵՊՀ հրատ., 1979, 683 էջ:
6. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, հտ. 2, Երևան, ԵՊՀ հրատ., 1991, 396 էջ:
7. Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI-XVIIդդ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1975, 334էջ.

¹ Պողոսյան Պ., Խոսքի մշակույթ և ոճագիտության հիմունքներ, հտ. 2, էջ 49-58:

ՀՏԴ 82.09

Անահիտ Հայրապետյան
ԱրՊՀ, 2016-2017 ուս. տարի, քանասիրական ֆակուլտետի
Հայոց լեզվի և գրականության բաժին, 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Դ., պրոֆեսոր Սոկրատ Խանյան

Ա Վ Ո Յ Ի Կ Ե Ր Պ Ա Ր Ը Հ Ա Յ Պ Ո Ն Զ Ի Ա Յ Ո Ւ Մ

Բանալի բառեր. Արցախ, ազատություն, պայքար, Ավո, մարտնչում, պոեզիա, լեգենդ, անմահություն, հաղթանակ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

Ամփոփում

Սույն հոդվածում նշվում է, որ 2016-ի սեպտեմբերի 2-ին համայն հայությունը նշեց ԼՂՀ անկախության 25-րդ տարեդարձը, ընդգծվում, որ այդ հաղթանակը ձեռք է բերվել հայ ժողովրդի խիզախ զավակների անձնուրաց պայքարի շնորհիվ, որի շարքերում է նաև լեգենդար հրամանատար Մոնթե Մելքոնյանը (Ավոն): Նշվում է, որ Ավոն կյանքից մտավ պոեզիա, որպես հայ զինվորի խոստոված կերպար: Վերլուծվել են բանաստեղծներ Է. Եսայանի, Ս. Խանյանի, Վ. Հակոբյանի, Հր. Բեգլարյանի, Ն. Մովսիսյանի պոեմներ՝ նվիրված Ավոյի սխրանքին:

Анаит Айрапетян

ОБРАЗ АВО В АРМЯНСКОЙ ПОЭЗИИ

АргУ, филологический факультет, 3-ий курс,

Науч. рук.: д.ф.н., проф. Сократ Ханян

Ключевые слова: Арцах, свобода, бой, Аво, борьба, поэзия, легенда, бессмертие, победа, Нагорно-Карабахская Республика.

Резюме

В данной статье отмечается, что 2 сентября 2016 г. армяне всего мира отметили 25-ую годовщину независимости НКР, подчёркнуто, что эта победа была достигнута благодаря борьбе храбрых сыновей армянского народа, в рядах которых был и легендарный командир Монте Мелконян (Аво). Отмечается, что жизнь Аво, вошла в поэзию, как легенда, как углубленный образ армянского воина. В статье анализировались поэмы Э. Есаяна, С. Ханяна, Г. Бегларяна, В. Акопяна, Н. Мовсисяна, в которых создан художественный образ бессмертного Аво.

AVO'S IMAGE IN ARMENIAN POETRY

Anahit Hayrapetyan

ASU, the Faculty of philology, 3rd year,

Supervisor: Prof. Sokrat Khanyan

Keywords: Artsakh, freedom, fight, Avo, commander, struggle, poetry, legend, immortality, victory, Nagorno-Karabakh Republic.

Summary

The following article states that September 2, 2016 the Armenians all over the world celebrated the independence of the Nagorno-Karabakh Republic. It is also mentioned that the victory was achieved due to the selfless struggle of the nation's brave sons and the legendary commander Monte Melkonian (Avo) was among them. Avo entered the poetry from the real life as an image of the Armenian soldier. E. Yesayan's, S. Khanyan's, V. Hakobyan's, Hr. Beglaryan's and N. Movsisyan's poems dedicated to Avo's heroic deeds are analysed in the article.

2016 թվականի սեպտեմբերի 2-ին համայն հայությունը նշեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության 25-րդ տարեդարձը: Իսկ նույն ամսվա 21-ին տոնվեց Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակը: Այս հաղթանակը հայ ժողովրդի դարավոր երազանքն է, որն իրանականացվել է ժողովրդանվեր ու հայրենասեր զավակների արյան գնով: Անկասելի ճշմարտություն է, որ ազատությունը պահանջում է նաև սրբազան զոհեր: Այդ մասին է վկայում մեր ժողովրդի հազարամյակների ուղին՝ սկսած Հայկ նահապետից մինչև Անդրանիկ զորավար ու սպարապետ Նժդեհ: Այդ մասին է վկայում նաև Արցախյան ազգային ազատագրական պայքարը, որն ընթացավ Արցախում ամբողջ հայ ժողովրդի մասնակցությամբ: Արցախ աշխարհի ազատությունը իրականություն դարձավ

ավելի քան 6000 անձնուրաց ազատամարտիկների արյան գնով: Նրանք գալիքում ևս նոր սերունդների հետ խոսելու են հպարտորեն: Նրանց շարքում հնչելու է նաև Ավոյի թանկ անունը: Ավոն (Մոնթե Մելքոնյանը), որ ծնվել է 1957 թ. ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի Ֆրեզնո քաղաքից քառասուն մղոն հեռավորությամբ գտնվող Վայսելիա ավանում, ասես հասակ էր առնում Սասուն աշխարհի դյուցազնական հերոսների պես: Եվ դա պատահական չէ, քանզի Ավոյի ծնողները Ամերիկա են տեղափոխվել հենց հայոց առաապելական Սասուն աշխարհից: Ավոն արտասահմանում անցավ վտանգավոր, բայց փառավոր ճանապարհ: Նա արհամարհեց բանտերը, նույնիսկ կիսատ թողնելով իր համալսարանական կրթությունը՝ եղավ Լիբանանում, որտեղ հայությունը մարտնչում էր նոր Մսրա Մելիքների, նոր Թալեաթների դեմ: Վերջապես Ավոն, տեղեկանալով Արցախում բռնկված ազատագրական պայքարի մասին՝ իր սրտի թելադրանքով այցելեց Արցախ, մարտնչեց Շահումյանի շրջանում և ապա նշանակվեց Մարտունու շրջանում որպես հրամանատար: Ժողովուրդը սիրեց նրան: Անունը կնքեց Ավո և ընդունեց որպես իր հարազատ զավակ: Կարճ ժամանակաընթացքում Ավոն հետմահու մտավ գրականություն՝ որպես լեզենդար հերոս: Ձեռնամուխ լինելով սույն հոդվածի ստեղծմանը՝ համոզվել ենք, որ Ավոյի մասին գրված յուրաքանչյուր գործ անհրաժեշտ է առանձնապես երիտասարդ սերնդի համար: Այդ նպատակն է մեզ մղել գրելու այս աշխատանքը, որը դաստիարակչական նշանակություն ունի: Ճիշտ է, Ավոյի մասին գրական գործեր են գրվել, սակայն դրանց վերաբերյալ առանձին ուսումնասիրություն չի ստեղծվել: Հոդվածը գրելիս հիմնականում դիմել ենք վերլուծական-գնահատման մեթոդին:

1993թ. բանաստեղծ Էռնեստ Եսայանը գրեց «Ձորավար Ավո» պոեմը: Ապրելով Մարտունիում, լինելով մարտական գործողությունների կիզակետում ու նաև անձամբ ճանաչելով իր հերոսին՝ Է. Եսայանը կարողացավ կերտել Ավոյի կերպարը:

Պոեմն սկսվում է հայ ժողովրդի համար տխուր տարեթվերի շարադրմամբ: Ըստ հեղինակի «տարիների այդ քարավանն արդեն ոչ թե լիության, այլ տառապանքի ու արյան լափուն էր առած գալիս»: Նկարագրելով Արցախ աշխարհը ոտքի էլնելու կանչով՝ բանաստեղծը դիմում է Նժդեհին ու Դրոյին: Ազերի ՕՍՕՆ-ականների կողմից ավերվում է մի ողջ շրջան՝ Արցախի հյուսիսային դարպասը՝ Շահումյանը: Եվ այս համայնապատկերի վրա բանաստեղծը նկարագրում է Ավոյի հայտնվելը՝ նրան համեմատելով քաջ Անդրանիկի հետ.

Եվ այս ամենի ֆոնին գինավառ
 Հայտնվում է ինքը՝ Անդրանիկը նոր,
 Հայտնվում ինքն ու գավառից գավառ
 Գալիս, որ փրկի մեզ ամեն գնով¹:

Է. Եսայանը Ավոյին ներկայացնում է որպես էպոսային կերպար, ընդգծելով այն միտքը, որ Ավոն ըստ էության շարունակում է «Սասնա ծռեր» էպոսի դյուցազունների հայրենասիրական գործը.

Գալիս է Ավոն... նվիրյալն այն նոր,
 Որ հայ էպոսի ճյուղից է սերվել
 Երդվում է թափած անմեղ արյունով,
 Հասած Արցախի լեռները մեր վե՛ս²:

Ավոյի հայտնվելը հուսահատ մարդկանց սրտերում հույսի նշույլներ ներարկեց: Քննարկելով երկրում եղած միջկուսակցական հակասությունները՝ հեղինակը ճիշտ հետևություն է անում, ասելով, որ դժվար ու ծանր այդ օրերին մեզ բռունցքվել էր պետք, միասնական ուժերով թշնամուն դիմադրելու կամք ու կորով: Եվ Ավոն բռունցքվեց՝ բնավ չտարվելով սեփական շահերով: Ասել է թե՛ մարդը կարողացավ վեր բարձրանալ ինքն իրենից՝ հայրենիքի շահը գերադասելով անձնական շահից, այն պահին, երբ թուրքը անպատասխան էր մնում հայկական բնակավայրերում, երբ ավերում էր ամեն ինչ, հայր մի բուռ, ոսոխն անթիվ էր, երբ

¹ Է. Եսայան, «Ձորավար Ավո», «Արցախ» հրատ., 1993., էջ 13:

² Ն ու յ ն տ ե դ ու մ , է ջ 16:

վրեժն անհատնում էր, զենքերը՝ պակաս: Ու այստեղ լսվում է Ավոյի հրամանատարական ձայնը.

Տղա՛ք, պինդ կացեք, պաշտպանվե՛ք սակայն:¹

Ավոյի այս հրամանից հետո փոխվում է ամեն ինչ: Տղաները դիմում են ինքնապաշտպանության, ու սկսվում է մարտը, գրադներն ու հրանոթներն առանց դադարի սկսում են գործել: Փոխվում է իրավիճակը:

Հայ կամավորականների հուժկու հարվածներին չդիմանալով՝ թշնամու մեծաթիվ ուժերը ճողոպրելու հնարներ էին փնտրում: Տանկերը դառնում էին երկաթե թափոն, իսկ.

Զորավար Ավոն առանց հերթափոխի

Կռիվ էր տալիս Մեծ Վրեժ դառած²:

Ստեղծագործության մեջ հեղինակը Ավոյին ներկայացնում է որպես հավաքական կերպար: Բացահայտելով Ավոյին՝ նա նաև բացահայտում է հայ զինվորի ոգին, նրա ուժն ու արիությունը.

Ու ետ շարտված ոսոխը դժնի,

Եվ պարտությունն արդեն ճաշակած,

Խաբված զենքերից և պատիր ուժից՝

Մեր ոտքերի տակ ընկած են ահա³:

Այս ամենից հետո մարդկանց մեջ արթնանում է հավատը, հաղթելու կամքն ու վճռականությունը: Ու այդ հավատը գալիս է Ավոյից, ժողովուրդը այն կապում է Ավոյի հետ: «Նվազ հավատի»՝ այսպես է վերնագրված պոեմի երկրորդ գլուխը: Եվ այդ հավատն արմատներ ունի, քանզի քաջարի հրամանատարը մեկ անգամ չէ, որ ցույց է տվել հայի բազկի ուժը, հայի ստեղծարար կամքը: «Նվազ հավատի» գլուխը սկսվում է այսպես.

Զորավա՛ր, քանի այստեղ ես ու կաս,

Մեր հավատն արդեն բարձր է մեզանից,

Քեզ հետ անհաղթ ենք աշխարհում այնքան,

Զորե՛ղ, քո ձեռքը անպարտ է քանի:

Զորավա՛ր, սա է մեր մարտը վերջին,

Ու մեծ հաղթանակն այն համազգային,

Որ մեր հավատի աչքերում վճիտ

Վերադարձրեց Մեծերին նաև⁴:

«Նվազ հավատի» գլխում հեղինակը Ավոյի հետ խոսում է ժողովրդի անունից: Ընթերցողին Ավոյի կերպարն ավելի պատկերավոր դարձնելու համար հեղինակը ոճական գեղեցիկ առանձնահատկություններով, համեմատություններով նկարագրում է Ավոյի սխրանքը: Նրան մերթ անվանում է իրական հերոս, մերթ արիասիրտ առյուծ և նոր Նժդեհ, մերթ էլ՝ ծլած դրոշ՝ հառնող հույսի մեջ:

Է. Եսայանի «Զորավար Ավո» պոեմն իր էությանը ռազմահայրենասիրական իրապատում է, որտեղ գնահատվում է հերոսը և նրա միջոցով մի ամբողջ ժողովուրդ՝ մաքառումներով ու ապրումներով: Ավոյի հերոսաբար զոհվելուց մեկ տարի անց՝ 1994թ. ,բանաստեղծ Սոկրատ Խանյանը գրեց «Նահատակ լուսո» պոեմը, որը նվիրված է Արցախի հերոս, Մեծ մտածող, գորահրամանատար Մոնթե Մելքոնյանին: Պոեմը բաժանված է երկու մասի, որոնց մեջ ըստ գլուխների ներկայացված է Մոնթե-անհատականությունը՝ ծննդից մինչև խիզախում: Պոեմը՝ հերոսականության խտացում լինելով հանդերձ, նաև պարունակում է քնարական երանգներ: Այն աչքի է ընկնում ռեալիստական խոր ընդհանրացումներով, հոգեբանական նուրբ վերլուծություններով, զգացմունքային խորացումներով: Իրական է պոեմի նյութը: Գլխավոր հերոսը սփյուռքից, իր պապերի կանչին ականջալուր եղած և Արցախի փրկության համար հայրենիք եկած Մոնթե Մելքոնյանն է, իսկ ենթատեքստում հայ ինքնապաշտպանների մղած կենսաց և մահու մարտերն են թուրք զավթիչների դեմ:

¹ Նույն տեղում, էջ 18:

² Նույն տեղում, էջ 21:

³ Նույն տեղում, էջ 23:

⁴ Նույն տեղում, էջ 27:

Պոեմի առաջին մասի առաջին գլխում, որ վերնագրված է «Ծնունդ», առանց ավելորդ գունագարդումների, Ս. Խանյանն ընդգծում է.

Նա պիտի ծնվեր Սասնա լեռներում,
Վարագա վանքում մկրտվեր մի օր,
Մշո վարդերը ջահել ձեռքերում,
Սիրո մեղեդի երգեր մեղմօրոք,
Նարեկա վանքում Նարեկը կարդար,
Սուրբ Կարապետի օրհնանքը լսեր,
Տարվեր Անիի վեմերով ճարտար,
Աղթամարում իր հրճվանքը կիսեր...
Մհերի դռան Մհերին կանչեր,
Խնդրեր Դավթի ձին ու թուր Կայծակին,
Թշնամուն ասեր.«Դե՛հ, ինձ ճանաչիր»
Եվ շանթեր նրան ուժով կայծակի¹:

Տալով անմահ հերոսի մանկության ու պատանեկության շրջանի նկարագրությունը՝ բանաստեղծը յուրահատուկ տաղանդով բացահայտում է նրա ունեցած հաջողություններն ուսման, լեզուների իմացության, պատմության ու հնագիտության բնագավառներում: Ասել է թե՛ ընթերցողի հայացքի առջև հառնում է Մոնթե անհատականությունը: Սակայն ո՛չ ուսումը, ո՛չ լեզուների իմացությունը և ո՛չ էլ ապագայում մեծ գիտնական դառնալը Մոնթեին ամեննին էլ չեն գայթակղել, քանզի.

Նրա սրտի մեջ, փոթորկված հոգում,
Գրվել էր արդեն Մայր Հայաստան²:

Նկարագրվող իրադարձությունների շղթան շարունակվում է, որտեղ ներկայացվում է, թե ինչպես Մոնթեի Մելքոն պապը թոռան հետ շրջում է Հայաստանում՝ ծանոթացնելով հայկական հուշակոթողներին, յուրաքանչյուր անուն արտասանելիս նշում «Քոնն է որդիս, քոնն է Տիգրիսը, Սիփանը, Սիսը» և այդպես շարունակ: Բանաստեղծ Սոկրատ Խանյանը թոռանն ուղղված պապի պատգամի միջոցով, նուրբ երանգներով հաղորդում է հավաքականություն: Քոնն է ասելով՝ նկատի ունի Հայինն է:

Պապի պատգամ-հեքիաթին գումարվում է նաև փարիզյան բանտի նկարագրությունը, որտեղ Ավոն նետվել էր ընկերոջ հետ Հռոմում գտնվող թուրքական դեսպանատունը պայթեցնելու և Թուրքիայի դեսպանին ոչնչացնելու պատճառով:

Եվ լսելով Արցախում տեղի ունեցող դեպքերի ու իրադարձությունների մասին՝ Մոնթեն որոշում է լինել Մայր Հայաստանում, գտնվել տեղի ունեցող գործողությունների խաչմերուկում:

Պոեմի երկրորդ մասը նվիրված է Ավոյի գործունեությանը Արցախում: Բանաստեղծը պատկերում է գործողությունների կարևոր կետերը՝ այդ շրջանակներում բացահայտելով հերոսի հայրենասիրական մղումներն ու փիլիսոփայությունը: Մոնթեն ներկայացվում է որպես զինվոր, հրամանատար, գիտնական, պարզապես ժողովրդի ծոցից ելած անհատականություն:

Ավոն, իր զորագնդով մասնակցելով Արցախում տեղի ունեցած բոլոր վճռական մարտերին, զորավարական տաղանդ է ցուցաբերել գրեթե ամենուր: Ու այդ ամենը գեղեցիկ գեղարվեստական հնարանքներով պատկերված է «Ուրյան սարը», «Մաճկալաշեն», «Ջրաբերդում» և այլ գլուխներում: Արցախ աշխարհով մեկ տարածվում է Ավո զինվորի լեզենդը:

Պոեմի երկրորդ մասի երկրորդ գլխում, որ կոչվում է «Երդում», սրտառույց գեղումներով պատկերվում են հերոսի որդիական սերն ու զգացումները Արցախի հանդեպ, որը Ավոյի բնավորության գլխավոր հատկությունն է: Դիմելով Արցախին՝ նա ասում է.

Իմ երագները թևերն են Հայոց,
Թներիս մեկը դու ես հաղթական,
Ինչ-որ փրկվել է աշխարհում հայոց,

¹ Ս.Խանյան, Ընտիր երկեր, 10 հատորով, հ.3, «Սոնա» հրատ., Ստեփ. 2010, էջ 210:

² Նույն տեղում, էջ 211:

Իրենց գոյությամբ քեզ են պարտական:

Ով քեզ ընծայեց դաժան օտարին,
Իմ թշնամին է նաև, մայր իմ սուրբ,
Որդուդ հայտնվելը գրկում քո բարի,
Համարիր սիրո, նվիրումի տուրք¹:

Փորձության տարբեր աստիճաններում բացահայտվում են հերոսի բնավորության տարբեր գծեր: Կանայք ու ծերեր «Ի՛նչ անենք, Ավո՛ւ, ո՛ւր գնանք» հարցումներով դիմում են հրամանատարին, իսկ Ավոն իր յուրահատուկ սառնասրտությամբ պատասխանում է.

-Ուր պիտի գնանք,-ասում է Ավոն,-
Ում պիտի թողնենք մեր լավ շեները,
Հին ու նորօրյա երագով, ցավով,
Մենք Արցախին ենք, Արցախը մերը²:

Պոեմի ուշագրավ գլուխներից է Ավոյի և իր սիրելի Մեդայի սիրո մասին պատմող «Հանդիպում» գլուխը: Ու այս գլխում Ս. Խանյանը փորձում է ընթերցողին ցույց տալ, որ Ավոն ոչ միայն լավ հրամանատար, մեծատառով մարդ ու հայրենասեր անձնավորություն է, այլև կնոջը սիրող ամուսին: Սիրո խոստովանանքի գեղեցիկ բառերով իրար լրացնելով՝ Ս. Խանյանը ստեղծել է այնպիսի պատկեր, որտեղ երկու իրար պաշտող զույգ իրենց սերը հաստատում են երդմամբ.

ՄՈՆԹԵ

Այնպես լինեք, լինեք այնպես,
Որ խոնարհվեք հոգիս քո դեմ,
Միրտս քեզ հետ մտներ Եդեմ
Ու մատաղվեք գառնուկի պես:

ՄԵՂԱ

Այնպես լինեք, լինեք այնպես,
Որ բուրվառվեք հոգիս քո դեմ,
Որ լուռ վառվեք հոգիս քո դեմ,
Ու խնկարկեք իմ սիրո պես...
...Քոնն եմ, դու իմ Աղբյուր Մերոք,
Իմ գորապետ, իմ Արև-Մեր...

ՄՈՆԹԵ

...Արցախի մեջ դարձած Ավո,
Ես էլ քոնն եմ, դու իմ Սոսե³:

«Խիզախում» գլխով Ս. Խանյանն ավարտում է պոեմը, որտեղ խորին ավստասանքով ու սրտի ցավով է պատկերում լեզենդար գորապետի ողբերգական մահը.

...Հունիս... 12... ա իս ինչո՞ւ եկար,
Ինչո՞ւ լարեցիր թակարդը չարի,
Թշնամու արկը այդ ինչպե՞ս դիպավ
Ավոյի նման մարտիկին արի⁴:

Ավոյի կերպարին անդրադարձել է նաև բանաստեղծ Վարդան Հակոբյանը: Նա իր «Ավո» ստեղծագործության մեջ այսպես է նկարագրում հերոսին.

Հողից մինչ երկինք կանգնած է սարը,
Հողից մինչ երկինք Ավո է,
Ճակատի վրա աստղ ու շուշան,
Ճակատի վրա՝ լուսնի մանանա,
չհանգչող լույսի կերոն է Ավոն⁵:

¹ Նույն տեղում, էջ 226:

² Նույն տեղում, էջ 228:

³ Նույն տեղում, էջ 249:

⁴ Նույն տեղում, էջ 257:

⁵ Վ.Հակոբյան, Մենարան Եր. Պետհամալսարանի հրատ. 1996, էջ 115:

Բանաստեղծ Հրաչյա Բեգլարյանն իր մարտական երգերի շարքում մեծ տեղ է հատկացրել նաև Ավոյի կերպարին՝ նրա մասին գրելով «Մոնթե-Ավո» երկը: Ժողովրդական բանահյուսության արտահայտչամիջոցներով Հ. Բեգլարյանը «Մոնթե-Ավո» պոեմում Ավոյին համարում է մեր օրերի քաջ ֆիդայի, որ «Ամերիկյան հեռուներից» հասել է Արցախ՝ ամբողջ հայ ժողովրդի ավանդական օջախներից մեկը: Բանաստեղծը ընդգծում է, որ Ավոն Արցախ եկավ իր սրտի կանչով և ժողովրդի կողմից ընդունվեց որպես Հաղթանակի Աստված, որպես «Մի նոր Սասնա Դավիթ Թուր Կայծակին ձեռքին»: Հ. Բեգլարյանը սելջուկ թուրքերին ներկայացնում է որպես վախկոտ արարածներ:

Պոեմում բանաստեղծը ընդգծում է հայ ժողովրդի սերն ու հավատը լեգենդար որդու հանդեպ.

Մոնթե-Ավո,
Մոնթե-Ավո,
Լեգենդ դարձած մեր սրբություն,
Հայի տղա,
Հրաշք տղա,
...Դու հույս ու լույս,
Ժպիտ ու հույզ,
Դու անարատ,
Մեր սուրբ հավատ,
Դու բռունցքը մեր բազկի,
Վերջին հույսը ժողովրդի¹...

Բանաստեղծը պոեմում որպես կոմպոզիցիոն միջոց, օգտագործում է հարց ու պատասխանի ձևը, որի ընթացքում քանդակում է անմահ գորապետի կերպարը՝ որպես ժողովրդի ցավից ու ճիչից ծնված դյուցազուն, որը մարտնչում է հայ ժողովրդի դարավոր թշնամու դեմ, իրեն դրսևորում որպես արդարության և ուժի մարմնացում: Ավոյի շուրթերին միշտ հնչում է մարտական հրամանը.

Հիմա՛ ի մա՛րտ,
Ի զե՛ն, տղերք.
Զարկին նոր զարկ,
Մահին նոր մահ...
Հողն ազատենք
Ազերիներից,

Մեզ համար ցավ-ազարներից²...

Ավոյի մասին ստեղծվել են նաև մարտական երգեր: Այդ առումով աչքին են ընկնում անվանի բանաստեղծներ Գուրգեն Գաբրիելյանը և Դավիթ Միքայելյանը: Ժողովրդանվեր հերոս Մոնթե Մելքոնյանի մասին հետաքրքիր պոեմ է ստեղծել ճանաչված բանաստեղծ Նորայր Մովսիսյանը: Նա իր «Մարտնչող անմահություն» պոեմում նկարագրելով Ավոյի անցած դժվարին ու հերոսական ճանապարհը, Ավոյի մահը համարում է մարտնչող Ավոյի անմահության սկիզբը՝ ընդգծելով ժողովրդական այն իմաստությունը, որ «Հայրենասեր Մարդու կյանքը իր իսկ մահով Չի վերջանում»: Հիրավի, այդպես է: Ավոն իր սխրանքով ապացուցեց 5-րդ դարի մեծ պատմիչ Եղիշեի թևավոր միտքը. «Զգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը անմահություն»: Ասել է թե՛ Ավոն իր ժողովրդանվեր կյանքով դարձել է Վարդան Մամիկոնյանի, Եսայի Ապուսուսեի, Հայոց ֆիդայիների, Գարեգին Նժդեհի արժանի ժառանգորդը և ապրելու է դարեդար:

Գրականություն

1. Եսայան Էռնեստ, Զորավար Ավո, (պոեմ), Արցախի հրատ., 1993:
2. Խանյան Սուկրատ, Ընտիր երկեր 10 հատորով, հ.3, «Մոնա» հրատ., 2010թ:
3. Հակոբյան Վարդան, Մենարան, Եր. Պետհամալսարանի հրատ., 1996թ:
4. Մովսիսյան Նորայր, Մարտնչող անմահություն, Հայաստանի հրատ., 1994թ.:
5. Բեգլարյան Հրաչյա, Քնար Ղարաբաղի, Տիգրան Մեծ հրատ., 2004թ:
6. Խանյան Սուկրատ, Արցախյան պատերազմը և հայ պոեզիան, Ստեփանակերտի պոլիգրաֆ հրատ., 1998թ:

¹ Հր.Բեգլարյան, Քնար Ղարաբաղի», «Տիգրան Մեծ», հրատ. 2004, էջ 231:

² Նույն տեղում, էջ 235:

7. Հակոբյան Վարդան, Քսաներորդ դարի հայ քնարերգության զարգացման հիմնական միտումները, Արցախ հրատ., 1998թ:

ՀՏԴ 21/ 29(479.25)

Տաթևիկ Բաբլոյան
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
բանասիրական ֆակուլտետ
մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի
Գիտականդեկավար՝ ՀՀԳԱԱ թղթակից անդամ բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյան
Էլ. հասցե՝ tatev.babloyan@mail.ru

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԴՆՆՅԱԿ ՀԱՅԵՐԻ ՀԻՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՅԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԾԵՍԵՐԸ

Բանալի բառեր՝ նախաքրիստոնեական, կրոն, բնություն, մարդ, բազմաստվածություն, տոներ, առասպելներ, քրիստոնեություն, ծեսեր, ավանդույթներ, գաղտնի:

Ամփոփում

Նախաքրիստոնեական շրջանում այլ էին մարդկանց մտածելակերպն ու աշխարհայացքը: Մարդիկ հավատում էին բազմաստվածությանը:

Հին կրոնը հարուստ էր ծեսերով, սովորույթներով: Ժամանակի ընթացքում հին տոները՝ փոխանցվելով սերնդեսերունդ, ենթարկվելով ժամանակային փոփոխություններին, մտել են ավանդությունների մեջ, դարձել եկեղեցական տոների հարազատ մաս:

Քրիստոնեության ընդունումից հետո փոխվեցին հին կրոնական մի շարք տոներ: Եկեղեցական տոներ դարձան տրընդեզը, ատամհատիկը, ծառագարդը, բարեկենդանը:

Հայ ժողովրդական ծեսերը բազմաթիվ են և բազմերանգ: Նրանք մեզ են ավանդվել հին ժամանակներից, անցել երկար դարերի միջով, ենթարկվել բազմապիսի փոփոխությունների և մեր սուրբ հայրերի մեկնությունների շնորհիվ տեղ գտել եկեղեցական տոների շարքում: գաղտնի:

Татевик Баблоян

АГПУ, факультет филологии, магистрант

Науч. рук.: член-корреспондент НАА РА, д.ф.н., проф. Аэлита Долухаян

НИКОГАЙОС АДОНЦ О СТАРЫХ ПОВЕРЬЯХ АРМЯН И СОВРЕМЕННЫЕ РЕЛИГИОЗНЫЕ ОБРЯДЫ АРМЯН

Ключевые слова: дохристианский, религия, природа, человек, пантеизм, праздники, легенды, христианство, обряды, традиции, Пасха

Резюме

Мышление и мировоззрения людей были другими в дохристианский период. Люди были приверженцами пантеизма.

Старая религия была богата обрядами. В течение времени старые праздники, переходя из поколения в поколение, подвергаясь эпохальным изменениям, вошли в традицию и стали неотъемлемой частью церковных праздников.

После принятия христианства ряд старых религиозных праздников перетерпел изменения. Церковными праздниками стали «трндез» (праздник огня), «атаматик» (праздник первого зуба), вербное воскресенье и масленица.

Армянские народные обряды многочисленны и многокрасочны. Они дошли до наших дней с древнейших времен, прошли через долгие века, подверглись многообразным изменениям и благодаря комментариям наших святых отцов нашли свое место в ряду церковных праздников.

Tatevik Babloyan

ASPU, the Faculty of Philology, Master's degree,

Supervisor: Corresponding member of NAS of RA, Prof. Aelita Dolukhanyan

NIKOGHAYOS ADONTS ON ARMENIAN ANCIENT BELIEFS AND MODERN ARMENIAN RELIGIOUS RITUALS

Key words: *Pre-Christian, religion, nature, Man, polytheism, holidays, legends, Christianity, rituals, customs, Easter.*

Summary

In pre-Christian times people's way of thinking and worldview were different. People believed in polytheism. The old faith was full of rituals and customs. In the course of time passing from one generation to another and understanding changes they entered traditions and became as integral part of church holidays. After the adoption of Christianity certain old religious holidays changed. Terndez, Atamhatik, Barekendan and Tsarazardar became religious holidays. Armenian national holidays are numerous and various. They have been handed down to us from ancient times, have gone through centuries, have undergone a lot of changes and have found their place amongst church holidays due to the interpretations of our holy fathers.

Նախաքրիստոնեական ժամանակաշրջանում այլ էին մարդկանց մտածելակերպն ու աշխարհայացքը: Մարդիկ հավատում էին բազմաստվածությանը, նրանք մտածում էին, որ աստվածներն են տնօրինում բնության երևույթներին ու մարդուն:

Նախքան քրիստոնեության ընդունումը հին հայոց աշխարհում մարդիկ նույնպես ունեցել են իրենց աստվածները, նրանց համար կառուցել են տաճարներ, կատարել հատուկ ծիսակատարություններ, հանդեսներ և առասպելներ են հյուսել աստվածների մասին:

Հայոց երկրում մշտապես եղել են աղետներ, որոնք թողել են իրենց կործանարար հետքը՝ թե՛ արտաքին՝ նյութական, թե՛ մտավոր՝ աշխարհայացքային: Այդ կործանարար աղետների հետևանքով ոչնչացվել են անցյալի թանկարժեք և հոգևոր հարստությունները, սակայն, որքան էլ զարմանալի լինի, հայերի հիշողությունը, հակառակ բոլոր աննպաստ պայմանների, պահել է դարերի խորքերից մեզ հասած որոշ հարստություններ, որոնք մեր առջև բացում են մարդկության հնագույն պաշտամունքների տաճարները:

Հին կրոնը հարուստ էր ծեսերով, սովորույթներով: Այն կար ոչ միայն օտար երկրներում, այլև Հայաստանում: Կրոնական պատկերացումների մեջ իշխում էր տղամարդու և կնոջ սկզբունքը, որից ծնվում էին բեղմնավորությունն ու բարիքը: Այս սկզբունքը հին կրոնական պանթեոնի առանցքն էր:

Տոտեմական շրջանում բեղմնավորությունը հանդես է եկել կենդանիների կերպարանքով: Կնոջ պատկերով ներկայանում էր երկիրը, իսկ կայծակնահար երկնքի կերպարով՝ երիտասարդ գեղանի այրը: Նրանց հանդիպման վայրը հսկա լեռների գագաթներն էին: Այդտեղ կարծես երկինքն իջնում հավասարվում է երկրին և բեղմնավորվում հորդ անձրևով՝ կյանքի կոչելով բնությանը ձմռան մահացությունից:

Ժամանակի ընթացքում փոխվում էին պաշտամունքները: Նրանց հետ փոխվում էին նաև անունները: Չուգակից աստվածության պաշտամունքը տարածված էր Նեղոսի ափերից Սև ծով, Բաբելոնից՝ Եգեական աշխարհ: Հայտնի անուններն են՝ «Իշտար և Թամուզ՝ Միջագետքում, Աստարտե և Ադոնիս՝ Ասորիքում, Իզիս և Օզիրիս՝ Եգիպտոսում, Կիբելե (կամ Կիբել) և Ատիս՝ Փոքր Ասիայում, և եգեական – հունական դիցաբանության բազմանուն աստվածները՝ Ռեայից մինչև Արիադանե և Չեսից մինչև Դիոնիսոս»:¹

Քրիստոնեության նախօրյակին Փոքր Ասիայում տարածված էր գույզ աստվածության դիցաբանական ծագման մասին մի առասպել՝ Կիբելե և Ատիս, որի ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել հին աշխարհի մարդկանց պաշտամունքը և ծեսերը: Մինչև հին աշխարհի մարդկանց ծեսերին ու պաշտամունքներին անդրադառնալը ներկայացնենք «Կիբելե և Ատիս» առասպելը և հասկանանք նրա հին պաշտամունքի էությունը: Դարերի ընթացքում այս առասպելը կորցրել է իր դիցաբանական անունները՝ քրիստոնեության ընդունումից հետո դառնալով եկեղեցական ծիսակատարություններ: Կիբելեն սկզբում հրեշավոր արարած էր, երկսեռային՝ այր և կին միաժամանակ: Աստվածները կտրում են նրա առնական բաժինը և դեն նետում, որից բուսում է մի նշենի: Նշենին աճում է, պտուղ տալիս: Մի օր Մանգար գետի աղջիկը մի նուշ է քաղում ծառից և պահում ծոցում: Աղջիկը հղիանում է, մանուկ ծնում, անունը՝ Ատիս: Կիբելեն սիրահարվում է գեղանի Ատիսին: Ատիսի հարսանիքի ժամանակ գալիս է Կիբելեն: Ատիսը խելագարվում և անդամահատում է իրեն: Նրան է հետևում աները՝

¹ Ադոնց Ն., Հին հայոց աշխարհայացքը, տե՛ս Ադոնց Ն., Երկեր, հ. Ա, Երևան, 2006, էջ 15 – 16:

Պիսիներտի թագավորը: Վշտացած Կիբելեն աղերսում է Ջևսին, որ իր սիրելիի մարմինը անեղծ պահի:

Չրույցը պատմում է, որ Ատիսի դժբախտությունը տեղի է ունեցել Փիճի ծառի տակ: Կիբելեն թաղում է նրա առնանդամը, որից բուսնում է մանուշակ և պատում Փիճի ծառը: Ջևսն անեղծ է պահում Ատիսի մարմինը: Միայն մազերն են երկարում, և ճկույթն է շարժում: Աստվածուհին տանում է Ատիսի մարմինն իր անձավը՝ այնտեղ ողբալու նրա կորուստը: Երիտասարդ աստվածը բուսականության մարմնացումն է: Ինչպես բույսն է ծլում հողից, այնպես էլ Ատիսն է ծնունդ առնում մայր երկրից: Ինչպես ամառվա արևը խանձում, սպանում է բուսականությունը, այնպես էլ Ատիսն է մեռնում՝ կորցնելով գորությունը: Բայց նրա մահը ընդմիջտ չէ: Երբ վերջանում է սառնաշունչ ձմեռը, վերածնվում է նաև Ատիսը՝ մարմնավորվելով բնության մեջ: Նրա մահը ժամանակավոր է: Այս առասպելը եղել է մարդկության պաշտամունքը: Հին աշխարհում ստեղծվել են ծեսեր՝ Ատիսի տոների անվանումներով, որոնք նշվել են նվիրական հանդեսներով: Տոները տևում էին մարտի 22-ից 27 – ը, այդ օրերը Փիճի ծառի հիշատակի օրերն էին, որի տակ տեղի էր ունեցել Ատիսի դժբախտությունը: Տոնը կոչվում էր Ծառամուտ:

Ատիսի տոները վերափոխվել են՝ անցնելով հսկայական ժամանակների միջով, դարձել եկեղեցական տոներ: Դարերի միջով անցնելով՝ դեռ շարունակում են ժողովրդի պաշտամունքի մի մասը կազմել:

Իմ հայրենի գյուղում՝ Ոսկեվազում, հնուց եկած տոն է պահպանվել: Այդ տոնը պահպանվել է նաև Հայաստանի մի շարք անկյուններում: Ամռանը, երբ Հայ Առաքելական եկեղեցին նշում է Աստվածամոր պայծառակերպության տոնը, մի շարք գյուղերի բնակիչներ, այդ թվում Ոսկեվազի բնակիչները՝ իրենց ընտանիքներով, կամ երիտասարդները՝ խմբերով, գնում են Բյուրականից հյուսիս, Տեղեր գյուղում գտնվող համանուն (Դորի) եկեղեցին, որը կառուցված է անդնդախոր կիրճի վրա: Եկեղեցին շատ հին պատմություն ունի: Այն 13 – րդ դարի կառույց է և դարերի ընթացքում մի քանի անվանում է ունեցել, սակայն հիմա եկեղեցու պատմության մասին չենք խոսի, քանի որ դա չէ մեր հետազոտության խնդիրը:

Այդ եկեղեցու շրջակայքում կա մի ծառ, որի վրա մարդիկ կապում են շորերի կտորներ և հավատում, որ կբժշկվեն հիվանդություններից, կպաշտպանվեն դժբախտ դեպքերից:

Հին տոները, փոխանցվելով սերնդեսերունդ, ենթարկվելով ժամանակային փոփոխություններին, մտել են ավանդույթների մեջ, դարձել հարազատ, նույնիսկ եկեղեցական ծեսերի մաս են կազմել: Եթե նայենք դեպի անցյալ՝ տոտեմական ժամանակաշրջան, կտեսնենք, որ այն իր ձևով նման է Ատիսի տոնին, որի ժամանակ մարդիկ գնում էին սրբազան անտառը, կտրում մի ծառ, բերում և զարդարում էին ծիրանի շորի պատառներով՝ ի հիշատակ այն հանդերձանքի, որով Կիբելեն խնամել էր Ատիսի վերքը: Ճյուղերից կախված էին սրինգ, թմբուկ, ծնծղա: Մրանք համարվում էին Ատիսի խորհրդանիշերը: Հետաքրքիրն այն է, որ այս տոնը հազարավոր տարիներ առաջ է եղել, սակայն մինչ օրս պահպանվել է: Եվ որքան այսպիսի ավանդույթներ են եղել հազարավոր տարիներ առաջ, որոնց մեծ մասը, չլիմանալով ժամանակի և դարի գաղափարական փոփոխություններին, իսպառ մոռացվել է, իսկ մի մասն էլ, կրելով փոփոխություններ, դարձել քրիստոնեական հավատքի մաս:

Հնագույն ժամանակներում մարտի 24 – ին նշում էին Ատիսի մահը և թաղումը: Հին Պարսկաստանում հավատում էին, որ մահացած մարդու հոգին երեք օր մնում է անշնչացած մարմնի մեջ: Այդպես էին մտածում նաև հին թրակացիները: Եվ այդպես հանգուցյալին երեք օր հսկում էին նոր հետո թաղում: Այս հավատալիքը կա նաև հայերի մոտ: Իսկ մարտի 25 – ին գարնանամուտն է: Բնությունը վերակենդանանում է: Այդ օրը ոչ միայն Ատիսի հարության օրն է այլև Կիբելեի ու նրա սրբամուսնության:

Մարտի 26–ը հանգստյան օրն էր, իսկ 27–ը՝ լվացման: Աստվածուհու պատկերը հանդիսավոր ձևով տանում էին մոտակա գետը կամ աղբյուրը և լվանում: Մրանով վերջանում էին տոները:

Քրիստոնեության ընդունումը հեղաշրջում էր կրոնի պատմության մեջ: Ընդունել քրիստոնեություն, նշանակում էր ընդունել միաստվածություն: Բայց ինչպես ժողովրդին ներընդգրկել քրիստոնեության մեջ: Չէ՞ որ միանգամից փոխել հավատը, հրաժարվել հեթանոս աստվածներից, պաշտամունքներից, խորհրդանիշներից և քարոզել նոր կրոնը, անհնար էր:

Այդ պատճառով մեր հոգևորականները հին կրոնի շատ ծեսեր վերափոխեցին՝ նոր երանգ ու ձև հաղորդելով հավատքին: Ինչ է անում եկեղեցին: Քրիստոնեական եկեղեցին սկսում է յուրացնել մեռնող պաշտամունքների ժառանգությունը: Փոխելով հեթանոս աստվածների անունները Տիրամոր և Աստվածորդու անուններով և հին ծեսերը դարձնելով եկեղեցական ծեսեր՝ նոր շունչ հաղորդեցին հավատքին և ժողովրդին մատուցեցին քրիստոնեական հավատքը:

Հին պաշտամունքը միայն արևմուտքի սեփականությունը չէր: Ընդունված էր Առաջավոր Ասիայում, ոչ միայն Հայաստանից արևմուտք, այլև հարավ՝ Միջագետքի քաղաքակրթության աշխարհում: Հայաստանը Միջագետքի հետ կապված է եղել ոչ միայն աշխարհագրական դիրքով, այլև կրոնով: Այդ կապվածության արդյունքում է Արայի և Շամիրամի պատմությունը, որը մեր ժողովրդի մեջ մինչ օրս կենդանի է: Այս առասպելը ունի դիցաբանական բնույթ: «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելը մեզ է ավանդել Մովսես Խորենացին:

Ադոնցը, ուսումնասիրելով «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելը, Արային համարում է ոմն դյուցազուն կամ Աստված:

Հին ժամանակներում, երբ մարդկությունն ապրում էր հեթանոսական աստվածների դարաշրջանում, ստեղծվում էին աստվածներ, որոնց էլ վերագրվում էին դյուցազնական գծեր: Ինչպես, օրինակ, մեռնելն ու հարություն առնելը: Խորենացուց մեզ ավանդված առասպելներից իմանում ենք այդ մասին և մեզ համար, որպես ուսումնասիրության հիմք վերցնում նրա պատմությունը: Խորենացին Արային չի համարում աստված կամ դյուցազն: Արան Հայոց թագավոր է, իսկ Շամիրամը՝ Ասորեստանի թագուհին:

Շամիրամի այս գրույցը տարածված է եղել Հայաստանի սահմաններից դուրս՝ Միջագետքում: Անցնելով ժամանակի և տարածության երկար ճանապարհը՝ հնավանդ գրույցները ենթարկվում էին փոփոխությունների, սակայն դրանց տակ թաքնված և հարատևած պաշտամունքի էությունը չէր փոխվում: Այս երևույթը հաստուկ է եղել և մեր դիցաբանական աշխարհին: Միջագետքում Իշտարը մայր աստվածուհին է եղել, բայց հայերին հայտնի է Շամիրամ անվամբ: Շամիրամ – Աստարտե կամ Կիբել, որի սիրելին պետք է, որ Ադոնիսի կամ Ատիսի փոխանակը լինի:

Արայի մահվան պատճառը Շամիրամի կիրքն էր, ճիշտ այնպես, ինչպես Ատիսը գոհվում է Կիբելեի սիրային հետապնդումից: Սա ապացույց է այն բանի, որ փոխվում են աստվածների անունները, սակայն էությունը մնում է նույնը: Արայի հարությունը պահպանված է ըստ հեթանոս հայերի հավատքի: Եղել են արալեզներ, որոնք, լիզելով Արայի մարմինը, նրան կենդանացրել են: «Լիզեալ աստուածոցն զԱրայ և կենդանացուցեալ լիցին զփափագ մեր և զհեշտութիւն. Վասն որոյն առաւել յայսմ հետէ պաշտելիք են ի մէջն և փառաւորեալք, իբրև հեշտացուցիչք կամակատարք»¹, - գրում է Մովսես Խորենացին:

Սկզբնական շրջանում մարդը մաքառում էր բնության արհավիրքների դեմ: Մարդն և բնությունը մահն ու վերածնունդն առաջնակարգ տեղ էին գրավում նախնի պանթեոնում և կազմում էին նրա զարդը: Բնության և մարդու կովին ավելանում էր հերոսների և դյուցազունների շրջանը՝ Հերկուլեսի և Վահագնի նմանների շրջանը: Նրանց սխրագործություններով խմորվում էր ժողովրդական ոգին:

Բնության աստծու դերը պատերազմի աստծուն անցնելիս նրան է փոխանցվում նաև մայր աստվածուհու մտերմությունը: Ափրոդիտեն Արեսից անցնում է Հերկուլեսին, Իշտարը աշխատում է շահել Գիլգամեի սերը: Նրանց հետևում է հայոց Աստղիկը, որ դառնում է Վահագնի սիրելին: Վահագնի և Աստղիկի պաշտամունքը խոր արմատներ է ունեցել ժողովրդական մտածելակերպում: Դրա ապացույցն այն է, որ հեռավոր դարերից մինչ օրս հայ բանաստեղծներն այդ թեմայով գրել են բանաստեղծություններ ու գրույցներ:

Վահագնը մատենագիտությունից հայտնի է որպես քաջության և հաղթանակի աստված, որը եղել է հայ ժողովրդի սիրելին և հովանավոր աստվածը: Նրանից էին հայ թագավորները ուժ ստանում: Վահագնի մասին երգեր, գրույցներ են հյուսվել: Դրանք

¹ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 62:

պահպանվել են նույնիսկ քրիստոնեության ժամանակ: Վահագնի մասին առասպելը հետևյալն է.

«Երկներ երկին, երկներ երկիր,
 Երկներ և ծովն ծիրանի.
 Երկն ի ծովուն ուներ և զկարմրիկն եղեգնիկ.
 Ընդ եղեգան փող ծուխ էլներ,
 Ընդ եղեգան փող բոց էլներ.
 Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ.
 Նա հուր հէր ուներ,
 (Ապա թէ) բոց ուներ մօրուս,
 Եւ աչկունքն էին արեգակունք»:¹

Հայ ժողովրդական առասպելները բազմիցս եղել են ուսումնասիրության առարկա, թե՛ անցած սերնդի, թե՛ նոր սերնդի գիտնականների համար: Այդ առասպելները ուսումնասիրել են Մանուկ Աբեղյանը՝ «Երկեր» հ. Գ – ում, Սարգիս Հարությունյանը՝ «Հայ առասպելաբանություն», Հրանտ Թամրազյանը՝ «Հայ քննադատություն», Աելիտա Դոլուխանյանը՝ «Հայ գրականության պատմություն» աշխատություններում: Վերջինս «Հայ գրականության պատմություն» գրքում խոսում է հայ ժողովրդական առասպելների մասին:

Քանի որ մեր ուսումնասիրության առարկան «Արա Գեղեցիկ և Շամիրամ» և «Վահագնի ծնունդը» առասպելներն են, այդ իսկ պատճառով մեր ուշադրությունը կենտրոնացնում ենք այդ առասպելների վրա: Նա գրում է. «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելը ունի «անկրկնելի հմայք»:² «Վահագնի ծնունդը» մշակել է Հովհաննես Հովհաննիսյանը՝ Վահագնին համարելով հայերի փրկության արևը: Իսկ Եղիշե Չարենցն ունի 1916 թվականին գրված մի գողտրիկ բանաստեղծություն «Վահագն» խորագրով, որի մեջ հեթանոս աստծո տաճարի սյուները կործանված են, որովհետև եղել է նրան պաշտող ժողովրդի ցեղասպանությունը.

Թե մի ֆ էիր դու ... եկան երգեցին
 Մի հին իրիկուն գուսանները ծեր,
 Որ հզո ր էս դու, հրոտ, հրածին,
 Որ դո ՚ւ կբերես փրկությունը մեր ...³:

Այս վկայակոչումներն ապացույցն են այն բանի, որ Հայոց եկեղեցին զերծ չի մնացել հին հեթանոսական ազդեցություններից:

Զատկական տոները նման են Ատիսյան հանդեսներին, զարնանային աստծո տոնին: Եկեղեցում այդ տոները բաղկացած են մի շարք տոնակատարություններից և հանդեսներից: Քրիստոնեական եկեղեցում այն մեծ պասի ընդմիջումով բաժանվում է երկու հատվածի՝ Բարեկենդանի և Զատկի օրերի: Կարելի է ասել, որ հայ եկեղեցին պատրաստի ստացել է այս տոները, բայց անմասն չի մնացել ազգային որոշ երանգավորումներից:

Ծաղկազարդը և Ծառազարդը, ինչպես հիմա ասում է ժողովուրդը, չեն արտահայտում օրվա եկեղեցու իմաստը: Այն համապատասխանում է Ատիսի ծառի տոնին: Մինչ այսօր Հայաստանի մի շարք գյուղերում պահպանվել է այս պաշտամունքը: Եկեղեցին այդ հինավուրց տոնը հարմարեցրել է Քրիստոսի՝ Երուսաղեմ մտնելու հանդեսին:

Հին ժամանակներից մեզ են հասել նաև Բարեկենդանի, Տրընդեզի և այլ տոները: Դրանցից յուրաքանչյուրը կազմում է Հայ եկեղեցու ծիսաշարի անբաժանելի մասը և պահանջում է երկարատև ուսումնասիրություն:

Ապարանի, Աշտարակի մի շարք այլ շրջանների գյուղական բնակավայրերում նշված տոները վայելում են մեծ ժողովրդականություն և նշվում ուրախ երգ ու պարերով: Բարեկենդանի օրը երիտասարդ տղաներն ու աղջիկները կրում են դիմակներ՝ կենդանիների պատկերներով, խաղում են «չար» կատակներ, խմբերով գնում են հարևանների տները և շարունակում իրենց հանդեսը: Դիմակավորվելն Ատիսի տոների ժամանակ նույնպես հատուկ

¹ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 102:

² Դոլուխանյան Ա., Հայ գրականության պատմություն, Երևան, 2006, էջ 39:

³ Չարենց Ե., Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1963, էջ 37:

սովորույթ էր և կազմում էր ծեսի բուն մասը: Կարծես Հայ եկեղեցին որդեգրել էր հին հեթանոս տոները:

Պասը վերջանում է Սուրբ Սարգսի հիշատակով, այն ժողովրդի մտածողության մեջ հայտնի է Սուրբ Սարգսի պաս անունով: Այս տոնը նույնպես ունի հին գրույցներ, որոնք մինչև օրս պահպանվել են: Բերենք այդ ավանդական գրույցներից երկուսը: Այսպես՝ պատմվում է, որ «Արթիկի շրջանի Մեծ Մանթաշ գյուղի հարևանությամբ գտնվող ձորակում կա մի քար՝ բնորոշ փոսերով: Ժողովրդական հավատալիքի համաձայն, երբ Սբ. Սարգիսը փախցնում է հույն աղջկան, նա իջնում է այդ ձորակը և ձիու ոտքի ու ծնկի հետքն է թողնում այնտեղ: Դրա համար այդ ձորը կոչվում է Բզնոց կամ Սիրահարների ձոր»:¹ Մեկ այլ գրույց էլ կա, որը պատմում է. «Մի ազահ ու հարուստ գյուղացի, որի մարագները լիքն են եղել դարմանով, աչք է դրել անձար պառավի այծերի և ուլերի բաժին դարմանին և գողացել է այն: Հրեշտակը գաղտնի ծակել է նրա քրոջի տակը և հարդը մաս – մաս թափվել է գետնին: Դեպքը պատահել է Սբ. Սարգսի պասին, օրը պայծառ ու տաք է եղել. հարուստը, խաբվելով օդի ջերմությունից, արածելու է ուղարկել իր ոչխարների հոտը. վրա է հասել Սբ. Սարգիսը և այնպիսի փոթորիկ բարձրացրել, որ կոտորել է հարուստի ամբողջ հոտը: Սբ. Սարգսի բարձրացրած այդ փոթորիկը (թիփի) Պառավի ցուրտ է կոչվում, իսկ երկնքում եղած աստղերի մի խումբ էլ՝ Հարդագողի ճանապարհ»:²

Պասը տոնում են փոխինձով, որը հայտի է Հայաստանի յուրաքանչյուր անկյունում: Այս պասը միակն է, որ ունի նվիրական կերակուրը: Այդ կերակուրը նույնպես ունի հեթանոսական ծագում: Ատիսի պահքի ժամանակ բացի փոխինձից, չէր թույլատրվում այլ ուտելիքներ ճաշակել: Կարևոր տեղ էին զբաղեցնում հացը, հացահատիկեղենը: Հացը համարվում է պահեցողության նյութ, քանի որ Ատիսը մարմնավորում էր բուսականությունը: Այստեղից երևում է, որ այնուամենայնիվ, ձգվող կապ կա հեթանոսական հանդեսի և Սբ. Սարգսի պահքի մեջ:

Սարդիկ հավատում էին Ատիսի տոներին, որոնք նշում էին մեծ հանդիսություններով, պատրաստում էին բուսական ծագմամբ կերակուրներ: Սբ. Սարգսի տոնն այսօր սիրելի է երիտասարդների համար և նշվում է մեծ շուքով:

Բազմաթիվ ավանդույթներ հեռավոր կապ ունեն հեթանոսական տոների, հանդեսների հետ: Այդ տոների, ծեսերի և մինչ օրս էլ նշվում են ուրախություններով, երգ ու պարերով: Այդ տոների մեջ առավել կենսունակը Տրընդեզի տոնն է, որը՝ որպես ավանդույթ, շարունակում է մնալ ոչ միայն գյուղերում, այլև քաղաքներում: Տրընդեզի հիմնական մասն է կազմում խարույկը: Եվ այդ օրվա բոլոր իրադարձությունները պտտվում են խարույկի շուրջ: Տրընդեզը նշվում է փետրվարի 13 – ի երեկոյան ժամերին: Մարդիկ պատրաստում են խարույկներ: Եթե կան նորապսակներ, ապա նրանք են վառում խարույկը, սպասում են, որ կրակը հանգստանա, այնուհետև ցատկում են արդեն իսկ հանգստացած խարույկի վրայով: Տրընդեզի կրակով այրում են իրենց հագուստի մի փոքր մասը, որպեսզի լինեն առողջ, կամ պաշտպանվեն չար ուժերից: Այս տոնի մեջ խարույկի բուն նշանակությունն արևն ուժեղացնելն է՝ ձմռան օրերից անցումն է զարնան տաք օրերի: Որոշ գյուղերում Տրընդեզի խարույկի մնացած մոխիրը տանում, արտերն են լցնում, որ այդ կողմերի այգիներն առատ բերք տան և այլն: Այս տոնը նույնպես, ինչպես բոլոր մյուս տոները, նշում են երգ ու պարերով, ուրախ հանդեսներով:

Մեր ժողովրդական ծեսերը բազմաթիվ են և բազմերանգ, նրանք մեզ ավանդվել են հին ժամանակներից, անցել երկար դարերի միջով, ենթարկվել բազմապիսի փոփոխությունների և մեր սուրբ հայրերի պատշաճավոր մեկնությունների շնորհիվ տեղ գտել եկեղեցական տոների շարքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ադոնց Ն., Երկեր, հ. Ա, Երևան, 2006:
2. Դոլուխանյան Ա., Հայ գրականության պատմություն, Երևան, 2006:
3. Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969:
4. Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Երևան, 1981:

¹ Միմոնյան – Մելիքյան Լ., Տոմարային ծիսաշար, հ. 2, Երևան, 2007, էջ 21:

² Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969, էջ 8:

5. Չարենց Ե., Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1963:
6. Միմոնյան – Մելիքյան Լ., Տոմարային ծիսաշար, հ. 2, Երևան, 2007:

УДК 82.09

МАРГАРИТ АГАЯН
АГПУ им. Хачатура Абовяна

ИЗУАЛЬНОСТЬ В РОМАНЕ Ф.М. ДОСТОЕВСКОГО «ПОДРОСТОК»

Ключевые слова: визуальность, фотография, экфрасис, видение, картина, сон.

Резюме

Статья посвящена рассмотрению визуального мира романа Ф.М. Достоевского «Подросток». Достоевский воссоздаёт видимый мир с помощью словесных образов, которые воплощают его мысль и пробуждают воображение читателя. Визуальный образ у Достоевского – то, на что обращает внимание герой – и является отражением личной духовной реальности героя.

Роман «Подросток» можно назвать романом видения, так как сильна и значима в нем визуальная составляющая. В романе соприкасаются видение идей и видимое слово.

Մարգարիտ Աղայան
Խ. Արուսյանի անվան ՀՊՄՀ

ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ Ֆ.Մ. ԴՈՍՏՈՎՍԿՈՒ «ԴԵՌԱՀԱՍ» ՎԵՊՈՒՄ

Բանալի բառեր. տեսանելիություն, լուսանկար, էկֆրասիս, տեսողություն, նկար, երազ:

Ամփոփում

Հոդվածը նվիրված է տեսողական աշխարհի քննարկմանը Ֆ.Մ. Դոստոևսկու «Դեռահաս» վեպի մեջ: Դոստոևսկին ստեղծում է տեսանելի աշխարհը բանավոր պատկերների օգնությամբ, որոնք մարմնավորում են իր միտքը և արթնացնում ընթերցողի երևակայությունը: Տեսողական կերպարը ըստ Դոստոևսկու այն է, ինչին ուշադրություն է դարձնում հերոսը և ինչը արտացոլվում է հերոսի անձնական հոգևոր իրականության մեջ:

«Դեռահաս» վեպը կարելի է անվանել տեսողական վեպ, քանի որ ուժեղ և նշանակալի է իր մեջ տեսողական բաղադրիչը: Վեպում համակցվում են տեսողական գաղափարները և տեսանելի խոսքը:

Margarit Aghayan
ASPU

VISUALITY IN F.M DOSTOEVSKY'S NOVEL «TEENAGER»

Key words: *visuality, photo, ecphrasis, vision, picture, sleep.*

Summary

The following article addresses the problem of the visual world in F. M. Dostoevsky's novel « Teenager». The authour recreates the visual world with the help of verbal images that embody his mind, and awaken the reader's imagination. According to Dostoevskiy the visual image is something that the hero pays attentionb to, and it reflects the reader's personal spitirual reality.

The novel Teenager can be called a visual novel as its visual component is strong and significant. The visial ideas and the visible word are joined in the novel.

Культура и литература пребывают в постоянном процессе преобразования. Одной из причин смены культурных и литературных эпох являются изменения в системе восприятия и оценки человеком действительности. «Визуальность» воспринимается как культурный феномен, который всецело отождествляется со сферой зрительного восприятия и влечет за собой целый ряд глубинных изменений в культуре и литературе.

По словам И.А. Герасимовой: «Под визуализацией в широком смысле понимают видение – способность делать зримыми объекты и процессы <...> В собственном значении визуализация обязательно предполагает качество зримой осязательности» [2. С. 10].

Усиление роли визуального изображения в литературе исследователи Г. Андерс и Г. Беём связывают с произошедшим в современной культуре «иконическим поворотом». Сущность данного явления состоит в переходе от вербального способа передачи информации к визуальным образам.

Художественному слову всегда присуще изобразительное начало, но не все писатели рисуют словами. Они рассказывают, описывают или излагают мысли. Наличие в тексте словесной живописи определяется способностью автора создавать картины, сначала в воображении, а потом при помощи слов рисовать их на бумаге, передавая своё особое видение предмета живописания. Именно к таким авторам-живописцам относится и Ф.М. Достоевский.

Достоевский относится к тем писателям, которые воспринимают мир и как художники, зрительно. Его письмо не только свидетельство тончайших ощущений. Только проникающий в душу взгляд способен так подействовать на другого. Глядя в себя, персонаж смотрит в глаза другого, его я, раскрываясь в другом, забывает само себя.

Визуальность в художественном мире Достоевского имеет особенную ценность для восприятия произведения. Писатель воспроизводит не просто момент события, а показывает его в движении, в развитии, когда очертания картины и её краски меняются.

Специфику художественного видения Ф.М. Достоевского М.М. Бахтин определил следующим образом: «Основной категорией художественного видения Достоевского было <...> сосуществование и взаимодействие. Он видел и мыслил свой мир по преимуществу в пространстве <...> Разобраться в мире значило для него помыслить все его содержания как одновременные и угадать их взаимоотношения в разрезе одного момента. Характеризуемая нами особенность Достоевского не есть, конечно, особенность его мировоззрения в обычном смысле слова, – это особенность его художественного восприятия мира» [1. Т. 2. С. 33 – 34]. Такое видение Достоевского обусловило, по мысли философа, двойничество художественного мира писателя. Обычное у Достоевского явление парных героев объясняется этой же его особенностью.

Литературные произведения Достоевского вобрали в себя приёмы, которые свойственны изобразительному искусству. Живописное слово может настолько сильно воздействовать на воображение и чувства человека, что в результате возникает яркий образ – «ожившая картина» [4. С. 195].

При описании визуальности в литературоведении используются термин «экфрасис». Экфрасис представляет собой описание произведения изобразительного искусства или архитектуры в литературном тексте. Это один из видов описания, объектом которого является художественная реальность, мир, преображённый творческим воображением художника.

С помощью экфрасиса Достоевский превращает обычное слово в магическое средство, образно передающее читателю все оттенки цветов. Реальность в описании Достоевского настолько жива и зрима, что в определенном смысле претворяется в виртуальное полотно. «Таким образом адресат поражен работой одновременно двух художников: того, который нарисовал картину, и того, который сумел это так хорошо описать. В этом сокрыта поэтическая роль экфрасиса: он хочет прорвать завесу между изображаемым и высказываемым» [9. С. 101-102].

Визуальные образы в художественном мире Достоевского имеют особенную ценность для восприятия произведения. Через них Достоевский создает два мира: объективную реальность, в которой независимо существуют данные образы, и духовную реальность героев, которые воспринимают реальность этими образами. Визуальный образ у Достоевского – то, на что обращает внимание герой – и является отражением личной духовной реальности героя.

Современный исследователь А.Б. Криницын отмечает, что зримую реальность писатель подает как «ряд необыкновенно сильных эстетических переживаний» [10. С. 171]. Даже описания внешности героев у Достоевского порой достаточно схематичны. Портрет героя

создается как визуальный образ глазами других персонажей. «Для Достоевского зрительные образы важны только в их духовном, выразительном модусе», и «достаточен лишь факт их присутствия в сознании героев» [10. С. 172].

У Достоевского визуальные образы существуют в сознании героев и для героев. Автор, растворяя свое присутствие в произведениях, стремится объективно описывать своих героев, их жизненные позиции и взгляд друг на друга. Поэтому визуальные образы даются через восприятие героев, а не автора.

Рассмотрим визуальный мир на материале романа Ф.М. Достоевского «Подросток», где он изображен очень ярко и полно.

В «Подростке» в центре внимания оказывается второстепенный персонаж Стебельков, который является одним из носителей идеи беспорядка и хаоса в романе. Во многом именно благодаря ему беспорядок, в который вовлечены главные герои, усиливается и разрастается. Интересно, что Стебельков говорит главному герою, юному Аркадию, слова, многое в романе разъясняющие: «Я иду по Невскому и замечаю, что по другой стороне улицы, по тротуару, идет господин, которого характер я желал бы определить. Мы доходим, по разным сторонам, вплоть до поворота в Морскую, и именно там, где английский магазин, мы замечаем третьего прохожего, только что раздавленного лошадь. Теперь вникните: проходит четвертый господин и желает определить характер всех нас троих, вместе с раздавленным, в смысле практичности и основательности» [5. Т. 8. С. 174].

Данный фрагмент является схемой всего романа. В нем нет ничего случайного. Это образец того, как автор работает со своим материалом.

Итак: «Я иду... и замечаю», говорит Стебельков. «Замечаю», потому что желаю «определить характер» некоего господина. Но не только я замечаю, а и «мы замечаем» некоего третьего, а кто-то замечает всех нас и, поразительно: не просто видит нас каким-то случайным взглядом, а хочет «определить характер всех нас троих», то есть влезть в нас, испытать наше нутро. Можно предположить, что эти слова являются ключевыми для романа, где так часто встречаются глаголы зрения – видеть, смотреть, замечать, выпучить глаза и прочее.

Здесь как будто реализуется призыв Достоевского из письма к племяннице, Софье Ивановой: «...видеть и слышать все своими глазами» [5. Т. 15. С. 255].

К этому и стремятся центральные персонажи – Аркадий, Версильев, который в важных для него обстоятельствах смотрит неподвижным взглядом, идеальный Макар Долгорукий с его странничеством и житийными рассказами, а также низменные интриганы и шпионы – Стебельков, Ламберт, «зоркая» Альфонсинка и Анна Андреевна, также умеющая в нужные минуты «зорко взглянуть» на интересующий ее объект. Все смотрят на всех и стремятся изнутри разглядеть сокровенные мотивы поведения окружающих. А большинство наблюдателей желает воспользоваться своим взглядом для достижения той или иной практической цели. Эти взгляды запутывают человеческие отношения и увеличивают беспорядок.

Макар Долгорукий умеет смотреть на вещи иначе, чем другие персонажи романа. Для него увиденные в микроскопе «блоха и вошь, и конец иголки, и волосок, и капля воды» [5. Т. 8. С. 171] – все эти мизерные детали оказываются поводом к большой мысли о повсеместно проникающем и все омывающим свете: «Рече Господь: да будет свет, и бысть свет» [5. Т. 8. С. 172]. Он видит свет, потому что ищет его – отсюда его утверждение, что мятежный герой его рассказа – «человек чистый и ума высокого», отсюда же его любовь к астрономии, о которой между прочим упоминает Версильев. Словом, «любовь, что движет солнце и светила» [5. Т. 8. С. 174], обеспечивает Макару его светлое видение малого и большого, человека и мироустройства.

Просвещенному взгляду Макара открывается лестница творения – от микробов до планет – в ее исходном совершенстве, в благообразии ее замысла» [7. С. 469].

Участие зрения в происходящем, проблема глубины его постоянно чувствуется в романе. «Весь роман – авантюра зрения, созерцания. Наверное, о финале романа можно было бы сказать: приблизив свое прошлое, взглядевшись в него и перевоспитав себя процессом записывания, Аркадий увидел окружавшие его лица и вещи в натуральную величину, без искажений, умаления или преувеличения той или иной личности» [7. С. 470]. Характерно не только то, как

меняется сам Версиков в финале, но и как меняется оценка его Аркадием, угол зрения, под которым теперь Версиков ему видится. Человек, бывший для него великой приманкой и загадкой, предметом ненавидящей влюбленности, показан в своей слабости, в своей зависимости от вековой спутницы его жизни Софьи Андреевны.

Объектом видения в первую очередь являются лица героев. Писатель в соответствии с тем или иным этапом своего становления рассматривает интересующие его объекты (личности) по-разному. Он может смотреть на них из угла, скрытно, как это нередко бывает с персонажами Достоевского. Сам он при этом говорит о «душе паука», которую чувствует в себе, и ту же хищность он предполагает в тех, кого наблюдает («двойник» Версикова, «выведывающая змея» Ахмакова – вот как он раскрывает характеры наиболее дорогих ему людей). Но меняется ракурс, прибавляется света – и он может рассматривать те же самые личности лицом к лицу, с восторженной прямоотой и открытостью. Эта особенность детского, чистого зрения сопровождает его визуальные впечатления, когда он впервые знакомится с Версиковым, исполняющим роль Чацкого в домашнем спектакле, когда его навещает в пансионе Тушара мать, когда им овладевает после ряда встреч с Ахмаковой гуманное восхищение ее красотой. Следовательно, тут можно говорить о чередовании ракурсов. На смену выведывающему взгляду «из угла» приходит взгляд прямой и любовный, причем возможны и обратные переходы, от гуманного и высшего созерцания любимого человека к «душе паука», к подглядыванию за добычей.

В романе «Подросток» тесная связь визуального образа с узлами сюжета является принципиальной особенностью структуры. Самую важную роль в художественной системе романа играют живописные образы и экфрастические эпизоды – описание лорреновской грезы Версикова и трех фотографических женских изображений. Этим эпизодам романа посвящена статья Р. Якубовой «Диалог фотографического и художественного отражений в романе “Подросток”» [8. С. 164]. В романе упоминаются три женских фотоизображения – Катерины Ахмаковой, Софьи Андреевны и Лидии Ахмаковой.

Тема женских фотоизображений в «Подростке» может быть раскрыта как тема трех визуальных преломлений национальной общественной жизни. «Это – три лица русской Клио: консервативный путь, путь сохранения «красоты форм», который так дорог Катерине Николаевне, путь русской идентичности (мама) и, наконец, изображение Лидии, указывающее на путь дегенерации и вырождения всего общества вслед за «ведущим слоем» [7. С. 472].

В кабинете Версикова Аркадий увидел фотографию своей матери: «Первое, что остановило мое внимание, был висевший над письменным столом, в великолепной резной дорогого дерева раме, мамин портрет – фотография, снятая, конечно, за границей, и, судя по необыкновенному размеру ее, очень дорогая вещь. Я не знал и ничего не слышал об этом портрете прежде, и что, главное, поразило меня – это необыкновенное в фотографии сходство, так сказать, духовное сходство, – одним словом, как-будто это был настоящий портрет из руки художника, а не механический оттиск» [5. Т. 8. С. 485]. Это для Версикова повод развивать свои мысли о достоинствах фотографии вообще. «Фотографические снимки чрезвычайно редко выходят похожими, и это понятно: сам оригинал, то есть каждый из нас, чрезвычайно редко бывает похож на себя. В редкие только мгновения человеческое лицо выражает главную черту свою, свою самую характерную мысль. Художник изучает лицо и угадывает эту главную мысль лица, хотя бы в тот момент, в который списывает, и не было ее вовсе в лице. Фотография же застает человека как есть, и весьма возможно, что Наполеон, в иную минуту, вышел бы глупым, а Бисмарк нежным» [5. Т. 8. С. 468].

Если бы писатель изображал своих персонажей в «главное мгновение», то создавались бы исключительно однозначные образы. Человеческая натура, по Достоевскому, – так сложна и противоречива, что внешность человека обычно не соответствует его внутреннему содержанию. Художественная практика Достоевского показала, что люди так многообразны, сложны и изменчивы, что никакого «главного мгновения» для них не существует.

Среди галереи портретов гордых характеров особое место занимает Версиков. Именно благодаря раздвоенности Версиков способен на низкие поступки и на возвышенную любовь. Он целует портрет Софьи. В «этом портрете, солнце, как нарочно, застало Соню в ее главном

мгновении – стыдливой, кроткой любви и несколько дикого, пугливого ее целомудрия» [5. Т. 8. С. 370]. Софья Андреевна – один из светлых женских образов у Достоевского.

Аркадий так говорит о Катерине Николаевне Ахмаковой: «Я уже знал ее лицо по удивительному портрету, висевшему в кабинете князя; я изучал этот портрет весь этот месяц. При ней же я провел в кабинете минуты три и ни на одну секунду не отрывал глаз от ее лица. Но если б я не знал портрета и после этих трех минут спросили меня: «Какая она?» – я бы ничего не ответил, потому что все у меня заволочлось» [5. Т. 8. С. 34]. Подросток признается ей после: «Выражение вашего лица есть детская шаловливость и бесконечное простодушие – вот! Я ужасно дивился на это все время, как к вам ходил. О, и вы умеете смотреть гордо и раздавливать взглядом» [5. Т. 8. С. 202], – именно «умеет», почему и не помнил бы ее лица Аркадий. Гордые люди запоминаются сразу. Да и очевидно, что гордый человек Версиков никогда бы не выбрал такую женскую натуру, которая смогла бы ему противостоять и – победить его.

Иногда гордость обращается в свою противоположность – унижение. Так, другой герой Достоевского Аркадий говорит: «Я знаю, что товарищи смеются и презирают меня, но мне это-то и любо...» [5. Т. 8. С. 209].

Важнейшими эпизодами романа являются те, в которых хаос и беспорядок отступают, стремительные события останавливаются. Здесь, даже если речь идет о драматически напряженных происшествиях, царит покой. Это – рассказы Макара, воспоминания Аркадия о детской встрече с Версиковым и еще более – о приезде матери в пансион к Тушару, рассказ Версикова о его странствиях и его видение «золотого века». Сюда же относится эпизод с Тришатовым, с его рассказом Аркадию о детских чтениях в родительском поместье и о «Лавке древностей» Диккенса. Эти фрагменты картинны. Они требуют покоя, остановки, рассматривания. Из материала этих эпизодов формируются «картины»: картина из рассказа Макара о мальчике-самоубийце, картина «золотого века» у Версикова, подобная «Пейзажу с Ацисом и Галатеей» Клода Лоррена и образ «заката Европы» (силуэт мрачного собора на фоне садящегося солнца).

Все эти картины видятся не в настоящем, текущем времени, а внутренним зрением, в воспоминаниях о давно прошедшем или во сне (так Версиков видит пейзаж Лоррена). Во всех этих случаях герои говорят о чем-то для них безусловно дорогом. Когда они рассказывают, они становятся выше тех страстей или тех мучительных обстоятельств, которые их терзали и терзают. Юрий Селезнев проводит параллель с физиологией зрения: «от обилия света зрачок, носитель зрения, сужается, как уменьшается эгоистическое человеческое «я», когда просветляется душа. То же происходит с персонажами, когда они напрямую смотрят друг на друга, а не подсматривают украдкой, «из угла», из-за двери. Они видят лицо, а не ситуацию, которой стремятся воспользоваться» [6. С. 425 – 426].

Разговор об образе Версикова невозможен без обращения к знаменитой картине «золотого века». Этот образ занимает важное место в романе.

Андрей Петрович Версиков рассказывает сыну Аркадию свою заветную мечту, навеянную полотном французского художника XVII века Клода Лоррена «Морской пейзаж с Ацисом и Галатеей». Версиков, охваченный волнением, говорит сыну: «...уголок Греческого архипелага... голубые, ласковые волны, острова и скалы... словами не передашь. Тут запомнило свою колыбель европейское человечество... О, тут жили прекрасные люди!..» [5. Т. 8. С. 269]. С помощью слова не только воссоздается лорреновский пейзаж, но и воплощается мировая скорбь «русского европейца», «лишнего человека», видящего закат современной Европы и на русский лад тоскующего о всемирном единении людей. Версиков рассматривает пейзаж Лоррена глазами своей заветной идеи – идеи всечеловечности русского культурного типа, драгоценной для него «русской тоски» по целостной христианской Европе. Словесный образ «золотого века» в представлении Версикова наделен такой мощью, которой не обладает сама картина Лоррена.

Для европейской культуры классические образы Лоррена связаны с тем, что Гельдерлин говорил об античной Греции: «Эллада – это “первый человек мира”» [3. С. 350]. И в «Подростке» в картине «золотого века», как ее передает герой, видны либо прекрасное детство человечества, либо человечество на его закате. Первый человек оказывается последним человеком мира

накануне Второго пришествия Христова. Начала тут сливаются с концами, образ «золотого века» окольцован. В образах лорреновского Средиземноморья Версилону видится картина дивного родства между людьми. Люди, потерявшие веру, начинают трепетно заботиться друг о друге. Все завершается в трактовке героя Достоевского явлением Христа тем, кто, даже не зная, даже отвернувшись от Него, все-таки осуществил в своей жизни закон любви.

Естественно, то, что померещилось Версилону, является утопией, но она возникает не на пустом месте. Пейзаж Лоррена предстает в тексте романа не вполне как прямое описание, не как картина. Это, по словам Версилова, воспоминание о сне, в котором картина была им увидена.

Сон Версилова о «золотом веке» – центр романа. Версильская мечта о «золотом веке» в повествовании Макара оказывается реализованной, взаимная любовь людей оказывается не целью стремлений, а чем-то уже достигнутым. Греза Версилова вводится Макаром в план реальной жизни. Благодаря этому персонажу она одновременно одухотворяется и материализуется, становится не мечтой, а жизнью. Неслучайно в романе, который автор в черновиках именовал «Беспорядок», именно Макар проповедует «благообразие».

Заимствованная у Лоррена картина представляет альтернативу царствующему в романе социальному, семейному, идейному беспорядку. Она же является возможным торжеством благообразия в романе, о котором говорит Макар Долгорукий. Перед нами – упорядоченная природа, какой она вышла из рук Творца, натуральное блаженство. Но, в этой божественно спокойной природе есть и смерть в образе циклопа Полифема. Но что это за смерть? «Это – что-то напоминающее природную метаморфозу, ведь убитый Полифемом Ацис не умирает, а становится потоком... Все три главных героя полотна связаны с водной стихией: Галатеея – с морской, Ацис – с речной, и Полифем – снова с морской, он – экстравагантное порождение Посейдона. Вода универсальна, она может быть разной: и безмятежно тихой, дающей жизнь, и бурно стихийной. Полифем у Лоррена – мотив *memento mori*, популярный и в пейзаже, и в натюрморте XVII века. Причем пасторальному пейзажу он сообщает оттенок меланхолического философствования» [7. С. 476].

Описанный Достоевским лорреновский мир – это мир без Христа. Однако он находится в ожидании Спасителя и готов принять Его, о чем, собственно, Версильов и говорит. Это – мир природных стихий, которым предстоит пережить катастрофу грехопадения, а впоследствии – катарсис Суда.

По мнению Е. Степанян-Румянцевой, «Озерная Мадонна» Джованни Беллини несравненно ближе к образу «золотого века» у Достоевского, чем картина Лоррена. Обе картины имеют общей темой красоту и умиротворение бытия, по поводу обеих вспоминаются слова Пушкина о спокойствии как необходимом условии прекрасного. Но все же между ними есть некоторые различия. А именно, при всем своем совершенстве природа Лоррена уже раскрыта, у Беллини она еще анонимна.

Из пересказа картинного сюжета в «Подростке» исключены мифологические любовники Лоррена. Пейзаж в «Подростке» – фон для ведущейся в романе беседы о судьбе русских сословий, о перспективах истории, об ожидании Христа в России и во всем человечестве. Версильов и Аркадий как бы берут на себя функцию отсутствующих у Лоррена собеседующих. При этом герои Достоевского находятся вне пределов картины, их диалог разворачивается в сюжетном пространстве (то есть в пространстве их реальной жизни). Для читателей же, рассказ о «золотом веке» – «мост из мира живописи в словесное искусство, а оттуда – уже в жизнь каждого» [7. С. 479].

Образ золотого века, с которым человечество не в состоянии расстаться на протяжении тысячелетий, сообщает новые и новые идеи произведениям различных искусств, роднит их между собою. Элементы этой картины, варьируясь, все-таки остаются одними и теми же. Природа, овеваянная человеческой мыслью, как фон, тема и соучастница философского диалога; животная стихия, вселенская упорядоченность как следствие подвига самоотречения и любви... Это – составляющие вековечной мечты не только о святом прошлом, но и о возвышенном будущем. о словах Версильова, человек, брат всех людей, сможет посмотреть на природу «взглядом любовника на возлюбленную» [5. Т. 8. С. 309].

Таким образом, непрерывные «вглядывания» героев друг в друга целиком определяют их взаимоотношения, а также восприятие ими действительности в целом. Визуальный мир приобретает в романе «Подросток» новое измерение. Поэтому в романе присутствуют целый ряд весьма специфических зрительных образов, важных для общего идейного плана романа. Это – символические картины, а также «видения», порождаемые этими картинами в сознании героев.

Эти «видения» предопределяют взаимоотношения героев и ведет их к трагической развязке, так как в сознании персонажей часто возникает трагическое раздвоение между живым, реальным человеком и видением о нем, которое всегда неизменно, обобщенно, символично и выходит за рамки действительности. Видение является непреложным фактом душевной жизни увидевшего его героя, при том, что оно раскрывает только часть правды о живом человеке.

Литература

- 1.Бахтин М. Проблемы поэтики Достоевского. М., Сов. Россия, 1979.
- 2.Герасимова И.А. Визуализация, творчество и культурные практики. Визуальный образ. М., 2008.
- 3.Гельдерлин Ф. Гиперион. М., Наука, 1988.
- 4.Даниэль С. Искусство видеть. СПб., 2006.
- 5.Достоевский Ф.М. Полное собрание сочинений и писем: в 30 т. Л., Наука, 1972–1990.
- 6.Селезнёв Юрий. Достоевский. М., Молодая гвардия, 2004.
- 7.Степанян-Румянцева Елена. Словесное и пластическое в «Подростке». «Вопросы литературы». 2013. Март-Апрель.
- 8.Якубова Р.Х. Диалог фотографического и художественного отражений в романе «Подросток». Достоевский и мировая культура. СПб., 2010.

Интернет-источники

- 1.Вахтель Э. «Идиот» Достоевского. Роман как фотография. Пер. с англ. Я. Токаревой. М., 2002. //http://www.philology.ru/literature2/vachtel-02.htm
- 2.Криницин А.Б. Исповедь подпольного человека. К антропологии Ф. М. Достоевского. М., 2001.// http://www.ozon.ru/context/detail/id/8462881/

ՀՏԴ 397

Լիլյա Հարությունյան
 Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
 բանասիրական ֆակուլտետի
 մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի
 Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, 41 շենք, 14 բնակարան
 Էլ. հասցե՝ lilya.harutyunyan@bk.ru

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ ՍԱՐԳԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
 ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ**

Բանալի բառեր՝ հանելուկ, ժանր, բանահյուսություն, հեքիաթ, խաղիկ, աշխարհայացք, միջնադար, կենցաղ, հավատալիք, համահավաք:

Ամփոփում

Հանելուկի ժանրը հայ բանագիտության պատմության մեջ առաջին անգամ ծավալուն հետազոտության է ենթարկվել Սարգիս Հարությունյանի կողմից: Նա հեղինակել է «Հայ ժողովրդական հանելուկներ» ուսումնասիրությունն (1960թ.) ու «Հայ ժողովրդական հանելուկներ» համահավաք բնագիրը (1965թ.):

Հանելուկի ժանրի դրսևորումներ տեսնում ենք Աստվածաշնչում, Ռիզվեդայում, Ավետայում, Եզրպոսի առակներում: Միջնադարում հանելուկներ են գրել նաև Ա. Շիրակացին, Ն. Շնորհալին:

Հայ ժողովրդական հանելուկները ստեղծվել են հայերենի տարբեր բարբառներով: Ա. Հարությունյանն իր համահավաք բնագրում միննույն առարկայի կամ երևույթի համար ներկայացնում է մի քանի հանելուկներ:

Ժողովրդական հանելուկներն իրենց մեջ անդրադարձնում են ժողովրդի աշխարհայացքն ու մտածողությունը, կենցաղային նշանակություն ունեցող բարոյական պատկերացումները ու նրանց նյութական արտահայտությունը, ժողովրդական հավատալիքներն ու ծեսերը:

Հանելուկը, որպես էպիկական ժանր, աղերսներ ունի հեքիաթների, հմայական աղոթքների, խաղիկների, առած – ասացվածքների հետ:

Ա. Հարությունյանը բարեխղճորեն քննել է հայ ժողովրդական հանելուկներն իրենց բոլոր դրսևորումներով, այսպիսով իր աշխատությունները դարձնելով էլակետային այդ բնագավառն ուսումնասիրողների համար:

Лилия Арутюнян

АГПУ, факультет филологии, магистратура 2-ой курс

Эл. адрес: lilya.harutyunyan@bk.ru

АРМЯНСКИЕ НАРОДНЫЕ ЗАГАДКИ В ТРАКТОВКЕ САРКИСА АРУТЮНЯНА

Ключевые слова: загадка, жанр, фольклор, сказка, песенка, мировоззрение, средневековье, быт, поверье, сводный.

Резюме

Жанр загадок в истории армянского фольклора впервые был основательно исследован Саркисом Арутюняном. Он автор исследования «Армянские народные загадки» (1960 г.) и сводного текста «Армянские народные загадки» (1965 г.). Мы находим проявления жанра загадок в Библии, в Ригведе, в Евангелие и в баснях Эзопа. Средневековые загадки создавали также А. Ширакаци и Н. Шнорали. Армянские народные загадки были созданы на разных армянских наречиях. В своем сводном тексте С. Арутюнян представляет несколько загадок для каждого предмета или явления. Народные загадки отражают в себе мировоззрение и мышление народа, имеющие бытовое значение нравственные понятия и

их материальное выражение, народные поверья и обряды. Загадка, как эпический жанр, взаимосвязана со сказками, магическими молитвами, с песенками, пословицами и поговорками. С. Арутюнян добросовестно исследовал армянские народные загадки во всех их проявлениях, сделав таким образом свои труды исходными для исследователей этой области.

lilya Haroutyunyan

ASPU, the Faculty of philology, Master's degr 2nd year

E-mail: lilya.harutyunyan@bk.ru

SARGIS HAROUTYUNYAN'S INTERPRETATION OF ARMENIAN FOLK RIDDLES

Key words: *Riddle, genre, folklore, fairy tale, song, outlook, medieval times, household, belief, collection.*

Summary

The genre of riddle in the history of Armenian Folklore Studies for the first time was extensively examined by Sargis Haroutyunyan. He is the author of the scholarly study "Armenian Folk Riddles" (1960) and the collection of original texts called «Armenian Folk Riddles» (1995).

We can see riddle genre displays in the Bible, in Rigveda, Avesta and in Aesop's fables. In medieval times riddles were also written by A. Shirakatsi and N. Shnorhali.

The Armenian folk riddles have been created in different Armenian dialects. In his collection of original texts S. Haroutyunyan presents several riddles for the same object or phenomenon.

Folk riddles reflect people's outlook and thinking, moral understanding of household significance and their material expression, folk beliefs and rituals.

As an epic genre, riddles are related to fairy tales, sorcery prayers, songs, sayings and proverbs.

S. Haroutyunyan has scrupulously studied Armenian folk riddles in all their displays, thus making his works as a source for those studying this field.

Հանելուկի ժանրը հայ բանագիտության պատմության մեջ առաջին անգամ ծավալուն հետազոտության է ենթարկվել Ս. Հարությունյանի կողմից, որի թեկնածուականատենախոսությունը նվիրված էր այդ թեմային:

Տերմինն առաջին անգամ հանդիպում է Անանիա Շիրակացու «Հանելուկ դիմակք» վերնագրով աշխատության մեջ: 7-րդ դարի այս խոշոր մտածողը կազմել է նաև «Խրախճանանք» կոչված թվաբանական խնդիր-հանելուկների ժողովածու: Ներկայացնենք այդ խրախճանականներից մեկը. «Ասասջիր ցընկերն քո՝ եթե կարող եմ դիտել՝ թե քանի դրամ կայ ի քսակիդ քում: Եթե ասիցե քեզ՝ գիտեա՛, ասասջիր ցնա՛՝ եթե կալ գորչավութիւն դրամիդ, և նոյնչափ ալ կաջիր. և երկոցունցդ չափ, և որչափ զառաջինն կայր. և միաբանեալ թիւդ կրկնեսջիր. և յորժամ կալեալ լինի նորա ցասացեալսն քո, տաջիր բաշխել նմա զհարդ և կամիցիս, որ դար և որ կոճատ. և դու ի քո մտիդ առ և թիւն, թիւ մի կաջիր և քանի թիւ գայ՝ այնչափ դրամ լինի լեալ ի քսակին»:¹

Հանելուկ բառը ծագել է հանել բայից, որը նշանակում է մի բան ի ներքուստ վեր հանել, խոր թաքնված ներքին իմաստի բացահայտում, վերհանում կամ գուշակում. «Հանելուկը բառերի որոշակի կապակցություն է, որի մեջ այլաբանորեն թաքնված է որևէ իմաստ, որ ենթակա է վերհանման կամ գուշակման»:²

Ստ. Մալխասյանցի «Հայերենի բացատրական բառարանում» հանելուկ բառը իր բացատրությունն է գտնում առեղծուած բառի տակ. «Մի առարկայի նկարագրութիւն, մութ՝ այլաբանական խօսքերով, որոնց ամբողջութիւնից կարելի է հասկանալ առարկայի ինչութիւնը»:³

Միջնադարում Աստվածաշնչի թեմաների հիման վրա ստեղծվել են հանելուկային հարց ու պատասխանի ժողովածուներ: Դրանցից մեկն է «Պատմութիւն վասն մանկանն եւ աղջկանն և հարցնունք նոցա ընդ միմեանս», որը հնում առանձին չի տպագրվել: Խրատական բնույթ կրող այլ ստեղծագործությունների հետ այն գետեղվել է «Պատմութիւն Պղնձե քաղաքին» հայտնի ժողովածուում:⁴

Ներկայացնենք մեկ հարց ու պատասխանի օրինակ.

¹ Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 234:

² Ս. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան 1960, էջ 9:

³ Ս. Մալխասյանց, Հայերենի բացատրական բառարան, հ. Ա, Երևան, 1944, էջ 227:

⁴ Ա. Դոլուխանյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 2008, էջ 71:

Ասէ աղջիկն.

- Այն ի նշ տուն է, որոյ մէջն լի է ոսկւով և դուռն նորա շրջապատեալ է արծաթով, բայց երբ մի կողմ որմոյ իւրոյ արատաւորի և քակի, ոչ կարեն շինել զնա, թէն ճարտարք ամենայն աշխարհի ի մի եկեացն:

Ասէ մանուկն.

- Այդ ձուն է, յորոյ մէջն եղեալ դեղնուցն նման է ոսկւոյ և ի վերայ նորա շրջապատեալ կեղեն նման է արծաթոյ, սակայն երբ խորտակի ինքն, ոչ ոք ի մարդկանէ կարէ շինել զայն:¹

Այս հարց ու պատասխանն ունի իր հանելուկային ձևակերպումը ևս.

Էն ի նշ քաղաք է,

Դուրսը արծաթ է, ներսը ոսկի է,

Որ քարով տաս կը քանդվի ու էլ չի շինվի:²

Հանելուկը, որպէս էպիկական ժանր, կապված է հեքիաթների հետ, որոնց սյուժեն կառուցված է հանելուկային իրադրության վրա: Այսպիսի հեքիաթները կոչվում են հեքիաթ-հանելուկ: Հեքիաթ-հանելուկներ են «Սև եզան հեքիաթն»³ ու «Աղջիկ թագավորի հեքիաթը»:⁴ Հետաքրքիր հեքիաթ-հանելուկ է հրատարակել նաև Գ. Սրվանձտյանը՝ «Երագատեսը» վերնագրով:⁵

Լինում է նաև այնպես, որ հեքիաթում աղջկա կամ նրա հոր կողմից հերոսին հանելուկներ կամ որոշ դժվար ձեռնարկելի պայմաններ են առաջադրվում: Այս պայմանի կատարման դեպքում հերոսն իբրև պարզ կարող է ստանալ աղջկա ձեռքը և նյութական ժառանգություն: Բերենք «Արտուճ և խաղաղ թագավոր» հեքիաթի օրինակը, որը տպագրված է Չարսանջագի բարբառով.

Աղջիկը ու տղան նստան օդի մէջ, աղջիկը հարցոց.

- Տղա, ըն ինչ կենդանի է. էռտուն օր կապրի, մէ օր կը մեռնի, մէկէքա՛լ օր կը սաղնա: - Էան լուսնիակն է:⁶

Հետաքրքրական է, որ Ս. Հարությունյանի կազմած բնագրում առկա է նույն բովանդակությամբ հանելուկ, և դարձյալ Չարսանջագի բարբառով.

Ըն (այն) ի նշ կենդանի է,

Էռտուն օր կապրի,

Մէ օր կմեռնի,

Մեկյալ (հաջորդ) օր կը սաղնա:

(Լուսին)

Միևնույն առարկայի համար կարող են լինել տասից ավելի հանելուկներ (Ինչում կհամոզվենք մի փոքր ուշ Ս. Հարությունյանի «Հայ ժողովրդական հանելուկներ» համահավաք բնագրի մասին խոսելիս):

Ս. Հարությունյանին հետաքրքրում է նաև հանելուկի և առած-ասացվածքի նմանողությունը, ինչը տեսնում ենք նաև Բրոկզհաուզի և Էֆրոնի հանրագիտարանային բառարանում. «По своей форме народные загадки примыкают к пословицам, та же мерная, складная речь, то же частое употребление рифмы и созвучия слов»:⁷

Սակայն սա դեռ ամենը չէ: Հայկական ժողովրդական հանելուկները աղերսներ ունեն նաև դյուրանքի և հմայքի չափածո բանավոր աղոթքների հետ: Երկուսն էլ խորհրդավոր են և վաղնջական ծագում ունեն: Տրամաբանական է, որ մեկը իր որոշ կողմերով կփոխազդեր մյուսին, մեկը վերածվեր մյուսի: Օրինակ.

Լալա լարթամ

¹ «Պատմություն վասն մանկանն եւ աղջկանն, Պատմութիւն յաղագս Փահլուլ թագաւորին, աշխատասիրությամբ Արմենուհի Սրայանի, Երևան, 1983, էջ 87:

² Ս. Հարությունյան, Հայ ժող հանելուկներ, 1965, էջ 73:

³ Ե. Լալայան, Մարգարիտներ հայ բանասիրության, գիրք Գ, Թիֆլիս – Էջմիածին, առանց տարեթվի, էջ 18-32

⁴ Նույն տեղում, էջ 151-158:

⁵ Գ. Սրուանձտյանց, Մանանայ, Կ. Պոլիս, 1876, էջ 190-199:

⁶ «Էմինեան ազգագրական ժողովածո», հ. Բ, Մոսկվա-Վաղարշապատ, 1901, էջ 238:

⁷ Փ. А. Брокгауз и И.А. Ефрон «Энциклопедический словарь », С.-Петербург, 1894, т. 23, ст. 115:

Ճեղն չօնե, տիրն չօնե
Չար մարդին խոսքը չօնե:¹

Այս բանաձևումն ամբողջությամբ խորհրդավոր է, երկրորդ տողն առանձին վերցրած մի հանելուկ է, որը հանդիպում է հետևյալ ձևով.

Ունք ունի, բունք ունի
Ճուղն ունի տերն չունի:²

(Եղջերուի եղջյուրներ):

Հայկական հանելուկների բազմամանողությունն այսքանով չի եզրափակվում. բանահյուսական մյուս տեսակը, որի հետ հանելուկը առնչություն ունի երգն է՝ խաղիկ:³ Խաղիկների առաջին երկու տողը բնությունից կամ հասարակական կյանքից վերցրած էպիկական-նկարագրական բնույթ ունի, մյուս տողերում երգիչը առաջին երկու տողի արտաքին պատկերը զուգադրում է իր ներքին քնարական զգացմունքների: Առաջին մասը մութ է, նման հանելուկի: Շատ դեպքերում ժողովրդական խաղիկներից անջատվում են առաջին տողերը, այլաբանական իմաստ ձեռք բերելով՝ անցնում առանձին առարկաների վրա իբրև հանելուկներ:

Թուր ու թվանք թամբումը,
Ջուխտ աղունակ վանքումը,
Մեռնիմ սիրական յարիս
Ինքը քաղքի ճամփումը:⁴

(Հարս ու փեսա):

Նշենք նաև, որ Լոռիում այս խաղիկի առաջին երկու տողը առանձնացվել է, վերածվել հանելուկի:

1965 թվականին լույս է տեսնում Ս. Հարությունյանի «Հայ ժողովրդական հանելուկներ» համահավաք բնագիրը՝ նվիրված Մանուկ Աբեղյանի ծննդյան 100-ամյակին:

Գիրքը հայ ժողովրդական հանելուկների գիտական համահավաք ժողովածու է, որը խմբագրել է նշանավոր բանագետ Արամ Ղանալանյանը:

Ս. Հարությունյանը գրում է, թե հանելուկները ավանդական բանահյուսության հին տեսակներից են և ժանրային նկարագրով պատկանում են վիպական բանահյուսությանը: Բանագետը հանելուկները, առակների և առածների հետ միասին կոչում է սիմվոլային բանահյուսություն:

Ահա Բրոկհաուզի և Էֆրոնի «Հանրագիտարանային բառարանում» հանելուկի համար տրվում է հետևյալ բացատրությունը. «**Загадка** - Метафорическое выражение в котором один предмет изображается через посредство другого, имеющего с ним какое нибудь, хотя бы отдаленное сходство: на основании последнего вопрошаемый и должен отгадать задуманный предмет. В древнейших загадках отразилась первобытная мифическая символизация, поэтический образ служил здесь отчасти для описания, отчасти для объяснения явлений природы и окружающей обстановки. С течением времени это значение загадки утратилось лишь ее индифферентная, аллегорическая форма, уцелел ее сильный, образный язык, и народ стал смотреть на загадку, как на простое упражнение ума».⁵

Հանելուկի ամենապարզ ու նախնական ձևը հարցն է: Հայկական հանելուկների ամենատարածված ու գործածական հարցական բանաձևերն են. «Էն ի՞նչն է», «Էտ ի՞նչ ի », «Էտ ի՞նչն ա, ինչը», «Ի՞նչն ա ինչ», «Ի՞նչ ի», «Էն ի՞նչ թե ինչ», «Էն ո՞վ էր» - բոլորն էլ հանելուկների պարտադիր բաղադրիչներ, անկախ բանահավաքի դրանք նշելու կամ չնշելու հանգամանքից: ⁶

¹ Ս. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1960, էջ 37:

² Նույն տեղում, էջ 37:

³ Խաղիկի բուն ձևը քառատողն է գլխավորապես, և երկրորդաբար եռատողը և նույնիսկ երկտողը: Տե՛ս Ս. Աբեղյան, Երկեր, հ. Բ, Երևան, 1967, էջ 283-285:

⁴ Ս. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, էջ 42:

⁵ Փ. А. Брокгауз и И. А. Ефрон, Энциклопедический словарь, т. 23, ст. 115:

⁶ Ս. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, էջ Ը:

Գրքի «Առաջաբանում» հեղինակը գրում է, որ հայկական հանելուկների համահավաք բնագիրը կազմելիս կիրառել է հանելուկների գիտական դասակարգման առարկայական սիստեմը: ¹ «Հայ ժողովրդական հանելուկներ» ժողովածուն կազմված է հետևյալ բաժիններից ու ենթաբաժիններից.

Բնություն

1. Երկնային մարմիններ և երևույթներ.
 - ա) Երկինք, երկնային լուսատուներ:
 - բ) Մթնոլորտային երևույթներ:
2. Ժամանակ:
3. Երկիր, երկրային առարկաներ և երևույթներ:
4. Բուսական աշխարհ.
 - ա) Այգի, ծառեր, մրգեր և պտուղներ:
 - բ) Բանջարեղեն:
 - գ) Հացաբույսեր և տեխնիկական մշակույթներ:
 - դ) Ծաղիկներ և զանազան բույսեր:
5. Կենդանական աշխարհ.
 - ա) Ընտանի կենդանիներ:
 - բ) Վայրի կենդանիներ և սողուններ:
 - գ) Թռչուններ:
 - դ) Բզեզներ, միջատներ, որդեր:

Մարդկային կյանք

1. Մարդ:
2. Մարդու մարմնի մասեր:
3. Հոգեկան երևույթներ:
4. Մահ և թաղում:
5. Ուտելիք և խմելիք:
6. Հագուստ-կապուստ:
7. Դրամ և զարդեր:
8. Տնտեսական օգտագործման իրեր և առարկաներ:
 - ա) Գյուղատնտեսական գործիքներ:
 - բ) Արհեստագործիքներ:
 - գ) Տնային կենցաղային գործիքներ, իրեր և առարկաներ:
 9. Շենքեր, կառույցներ, շինարարական առարկաներ:
 10. Գիրք, թուղթ, գրենական պիտույքներ և երաժշտական գործիքներ:
 11. Մեքենաներ և գործիքներ:
 12. Ջենքեր:
 13. Հավատալիքներ, սրբավայրեր, եկեղեցական ծեսեր և առարկաներ:
 14. Բիրլիական կերպարներ:
 15. Այլ և այլք: ²
 16. Բազմառարկա հանելուկներ: ³

Գրքում ներկայացվում են միևնույն առարկայի տարբեր բարբառներով հանելուկներ (Շիրակ, Խարբերդ, Լոռի, Դիարբեքիր և այլն): Ստորև ներկայացնում ենք նույն հանելուկի օրինակներ « Բնություն » բաժնից.

ԵՐԿԻՆՔ

1ա Մեկ տուն
Էն էլ անտուն:

¹ Առարկայական դասակարգում - Այս դեպքում հիմք է ընդունվում լուծման առարկան և նրա տակ են համախմբվում վերջինիս վերաբերյալ եղած բոլոր հանելուկներն իրենց տարբերակներով:

² Այս բաժնում տեղադրվել են այն հանելուկները, որոնց լուծման առարկաները, մեծ մասամբ լինելով վերացական հասկացություններ, չեն համապատասխանել մյուս առարկայական խմբերին:

³ Այս բաժնում ընդգրկվել են այն հանելուկները, որոնք ունեցել են միմյանց հետ չառնչվող մի քանի տարասեռ առարկաներ:

Շիրակ, Մոկս

*բ Մի տուն ունեմ՝ սուն չունի:
Վաղարշապատ- Ալիբեկլու. Դարալագյազ

գ Չատրըր (վրան) մը ունիմ՝ սուն չի կա:
Խարբերդ

դ Էն ի՞նչն ա, ինչ.
Անգերան շինած ա ,
Անսին կաղնած ա:
Լոռի

*2 Առաստաղ մի ունիմ՝ սատա (գուտ) կարկտան:
Դիարբեքիր

3 Կապուտ քաֆիկ (սփռոց),
Զմեն (ամբողջ) նխշունիկ:
Մոկս

4 Մամաս մեկ սավան ունի,
Կը ծալե, կը ծալե, ծալելու չի կրնալ:
Նոր- Նախիջևան

5 Ավլեմ, ավլեմ՝ չի իստակվի:

*6 Կատուտիկ (խատուտիկ), կապուտիկ,
Անունն ըսեմ չինաս հաներ:
Արաբկիր

Ս. Հարությունյանը բնագրի առաջաբանում բացատրում է, որ վերևում գլխատառերով դրված է լուծման առարկան, տակը այդ առարկային վերաբերող բոլոր հանելուկներն իրենց տարբերակներով: Ամեն հանելուկի տակ գրված է դրա տարածման վայրը, եթե իհարկե հայտնի է: Բոլոր հանելուկները համարակալված են աճող թվանշաններով, իսկ տարբերակները հայկական այբուբենի թվական արժեքներով:

Բնագրի մի մասն է կազմում «Աղբյուրներ և ծանոթագրություններ» բաժինը:

«Աղբյուրներ և ծանոթագրություններ» բաժնում յուրաքանչյուր համարի տակ համառոտագրությամբ դրված է հանելուկի աղբյուրը, այսպես, եթե տվյալ հանելուկն ասվում է նաև ուրիշ առարկաների վերաբերյալ, հիշատակված են այդ առարկաներն իրենց համարներով: «Հանելուկներում եղած մութ ու անհասկանալի իրադրությունները, մեկնաբանության կարիք ունեցող արտահայտությունները բացատրված են ծանոթագրությունների մեջ: Ծանոթագրությունների մեջ են ներառված նաև այնպիսի ստեղծագործություններ, որոնք կամ աղճատված են, կամ անհասկանալի, գրական մշակման ենթարկված և կամ էլ որևէ պատճառով նպատակահարմար չեն համարվել տեղադրվելու բուն տեքստում»¹ - գրում է բանագետը:

Այնուհետև հեղինակը ներկայացնում է, այսպես ասած, հանելուկի ժանրի ստեղծման պատմությունը:

Հայ իրականության մեջ հանելուկներ են գրվել 7-րդ դարում Անանիա Շիրակացու կողմից, Ներսես Շնորհալին ավելի ուշ 12-րդ դարում գրել է աշխարհիկ բովանդակությամբ հանելուկներ: Շնորհալին հանելուկի գրական տեսակը յուրացրել է ժողովրդական բանահյուսությունից: Նա ժողովրդական հանելուկի տեսակն ընդարձակելով վերածել է նույնահանգ քառյակների, և անպաճույճ ու հակիրճ ոճով առաջ է բերել իրական փոքրիկ բանաստեղծություններ լի ճշգրիտ իրականությամբ:

¹ Ս. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, էջ ԻԲ:

Եկ դու մի՛տ դիր, սիրելի՛,
Իրք մի ասեմ զարմանալի,
Մէկ մի ունի մագիլք հաւի,
Վազէ յերես բըռնակալի:

(Սանդր)¹

Կամ՝ Պտուղ մի կայր յոյժ ցանկալի,
Ի ինք գեղեցիկ տեսակ ունի,
Յոյժ վայելուչ ու պիտանի
Որ հիւանդաց շարապ լինի:

(Խնձոր)²

Չնայած մինչ այս էլ փոխաբերական խոսքը նշանակալից տեղ է գրավել մարդկանց կյանքում, հատկապես ռազմական գործերում և դեսպանների ու սուրհանդակների աշխատանքում: Հայ իրականությունից հիշենք Վասակին, որը իր երբեմնի հզորությունն ու պարսկական թագավոր Շապուհի անգորությունը ցույց տալու համար, ի պատասխան վերջինիս սարկազմի, ասում է.-Այժմ քո տեսեալ զիս անձամբս փոքրիկ, ոչ առեր զչափ մեծութե իմոյ. զի ցայժմ ես առեւծ էի, և արդ աղուես: Բայց մինչ ես Վասակն էի, ես սկայ էի. մի ոտնս ի միոյ լերին կայր, յոր ժամ յաջ ոտնս յենուի, զաջ լեառն ընդ գետին տանէի. Յորժամ ի ձախ ոտնն յենուի, զձախ լեառն ընդ գետին տանէի:

- Աղէ՛ տուր ինձ գիտել, ո՞վ են լերինքն այնոքիկ՝ զորս դուն ընդ ունջ տանէիր: Վասակը մեկնաբանում է հանելուկ - մետաֆորը. «Լերինքն երկունք, մի դու էիր և մի թագաւորն Յունաց»:³

Եվրոպայում հանելուկների հանդեպ հետաքրքրություն է արթնանում 17-րդ դարից սկսած, երբ բազմաթիվ բանաստեղծներ ու գրողներ դիմում են հանելուկի ժանրին՝ հանդես բերելով ուշագրավ ստեղծագործություններ (Ֆրանսիայում՝ Ն. Բուալոն, Ժան Ժակ Ռուսոն, Գերմանիայում՝ Ֆ. Շիլլերը, Զ. Ֆ. Հերեյն ու ուրիշներ, Ռուսաստանում՝ Վ. Ժուկովսկին):

1980 թվականին լույս է տեսնում քաջահմուտ միջնադարագետ Ա. Մնացականյանի «Հայ միջնադարյան հանելուկներ» գիրքը, որի ներածության մեջ նա նշում է Ս. Հարությունյանի «Հայ ժողովրդական հանելուկներ» ուսումնասիրության (1960թ.) և «Հայ ժողովրդական հանելուկներ» համահավաք բնագրի (1965թ.) կարևորությունը՝ գրելով, որ այդ գրքերի շնորհիվ առաջին անգամ որոշակի պատկերացում ստեղծվեց և ժողովրդական հանելուկների՝ ստեղծագործական առանձնահատկությունների, պատմագեղարվեստական արժանիքների, և բուն նյութի վերաբերյալ:

Ա. Մնացականյանը իր «Հայ միջնադարյան հանելուկներ» գիրքը կազմելիս օգտվել է Ս. Հարությունյանի գրքերից: Նա այն կարծիքին է, որ հանելուկը ամենատարածված կիրառական ժանրերից մեկն է եղել: «Հանելուկին սիրով են տեղ տվել ինչպես խնջույքներում, հարսանիքներում, հավաքներում, ընտանեկան հարկի տակ, այնպես էլ դպրոցներում»⁴, գրում է բանասերը, և ավելացնում, որ ժողովրդական հանելուկներն առավել մասսայական են եղել, քան գրավոր հանելուկները, քանի որ ժողովրդական հանելուկներին կարող էին հաղորդակից լինել բոլորը, առանց գրագիտության, իսկ գրավոր հանելուկները պահանջում էին գրագիտություն, ձեռագրերից օգտվելու կարողություն և գրական լեզվի իմացություն:

Ի դեպ Ա. Մնացականյանի «Հայ միջնադարյան հանելուկներ» գրքի պատասխանու խմբագիրը հենց Սարգիս Հարությունյանն է:

Գրականություն

1. Աբեղյան Ս., Երկեր, հ. Բ, Երևան, 1967:
2. Աբեղյան Ս., Հայ հին գրականության պատմություն, հ. Բ, Երևան, 1946:
3. Աբրահամյան Ա., Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944:
4. Դոլուխանյան Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 2008:
5. Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Բ, Մոսկվա - Վաղարշապատ, 1901:

¹ Ս. Աբեղյան, Հայ հին գրականության պատմություն, հ. Բ, Երևան, 1946, էջ 95-97:

² Գր. Հակոբյան, Ներսես Շնորհալի, Երևան, 1964, էջ 232:

³ Փ. Բուզանդացիոց, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1832, էջ 168-169:

⁴ Ա. Մնացականյան, «Հայ միջնադարյան հանելուկներ», Երևան, 1980, էջ 13:

6. Լալայան Ե., Մարգարիտներ հայ բանահյուսության, գիրք Գ, Թիֆլիս-Էջմիածին, առանց տարեթվի:
7. Հակոբյան Գր., Ներսես Շնորհալի, Երևան, 1964:
8. Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1960:
9. Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965:
10. Մալխասյանց Ս., Հայերենի բացատրական բառարան, հ. Ա, Երևան, 1944:
11. Մնացականյան Ա., Հայ միջնադարյան հանելուկներ, Երևան, 1980:
12. «Պատմութիւն վասն մանկանն եւ աղջկանն, Պատմութիւն յաղագս Փահլուլ թագաւորին, աշխատասիրությամբ Արմենուհի Սրայայանի, Երևան, 1983:
13. Սրուանձտյանց Գ., Մանանայ, Կ. Պոլիս, 1876:
14. Փ. Բուզանդացիոց, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1832:

Այլալեզու գրականություն

1. Ф. А. Брокгауз и И.А. Ефрон, Энциклопедический словарь, том 23, С.-Петербург, 1894.

УДК 82.09(470)

ИЗАБЕЛЛА АЛЛАХВЕРДЯН
АГПУ им. Хачатуря Абовяна

ЖИВОТНОЕ ПАДЕНИЕ И ДУХОВНОЕ ПРОЗРЕНИЕ ГЕРОЯ В ПОВЕСТИ «ОТЕЦ СЕРГИЙ»

Ключевые слова: животная жизнь, духовная жизнь, Отец Сергий, вера, соблазн.

Резюме

«Животная» и «духовная» жизнь, падение и воскрешение, вопросы морали и нравственности особо волновали Л.Н. Толстого в «послепереломный» период. В статье рассматриваются особенности животного падения и диалектика духовного прозрения героя повести «Отец Сергий». В повести нашла свое отражение и художественное осмысление проблема соотношения истинных и ложных целей жизни

Բզարեղլա Ալահվերդյան
ՀՊՄՀ

«ՀԱՅՐ ՍԵՐԳԻՒՄ» ՎԻՊԱՎԻ ՀԵՐՈՍԻ ԿԵՆՂԱՆԱԿԱՆ ԱՆԿՈՒՄՆ և ՀՈԳԵՎՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր. հոգևոր կյանք, կենդանական կյանք, Հայր Սերգի, հավատ, գայթակղություն:

Ամփոփում

«Կենդանական» և «հոգևոր» կյանքն, անկումն և հարությունը, բարոյականության հարցերը առավել մտահոգել են Լ.Ն. Տոլստոյին հետձգնաժամային ժամանակաշրջանում: Հոդվածում քննարկվում են «Հայր Սերգիի» վիպակի հերոսի կենդանական անկման և հոգևոր դիալեկտիկայի հարության առանձնահատկությունները: Վիպակի մեջ արտացոլվում և գեղարվեստորեն մեկնաբանվում է ճշմարիտ և կեղծ կյանքի նպատակների հարաբերակցության ինտիմը:

Izabella Alahverdyan
ASPU, the Faculty of Philology

ANIMAL FALL AND SPIRITUAL INSIGHT OF THE PROTAGONIST IN «FATHER SERGIUS» TALE

Key words: spiritual life, animal life, Father Sergius, faith, temptation.

Summary

Animal and spiritual life, fall and resurrection, morality issues particularly worried Leo Tolstoy in 'postcritical' period. The article address the protagonist's animal fall and spiritual insight in Father Sergius tale. The tale reflects and artistically interprets the correlation of the true and false purposes of life.

Творчество «позднего» Толстого, в своем единстве, характеризуется как система, в которой органически связаны Толстой-обличитель и Толстой-моралист на уровне как содержания, так и поэтики его произведений «послепереломного» периода.

Духовно-нравственное искания Толстого нашли свое отражение в повестях 1880-х – 1890-х годов. «Толстой совмещает в повестях полярные величины: жизнь и смерть, нравственный

закон и чувство, духовное и животное начала личности и создает художественную модель противоборства сознательного и бессознательного. Жизненные ситуации оказываются фоном, на котором человек проходит испытание любовью и смертью» [14.С.190]. Герои поздних повестей Толстого – люди, обуреваемые обычными страстями. Однако они не задумываются о смысле жизни и вечных вопросах до тех пор, пока не настанет кризис, душевная ломка.

В повести «Отец Сергей», создававшейся в 90-е годы XIX века, разворачивается сюжет «ухода» от обыденных форм бытия ради познания его сокровенного смысла.

Жизненная канва произведения с исключительными обстоятельствами, складывающимися в мирской и религиозной среде, раскрывает проблему личной ответственности героя за себя и окружающих. «Неизбежные муки совести, разрыв с привычной средой, обращение к «новой жизненной вере» проходят красной нитью через этапы морального («животного») падения и духовного прозрения героя, разнопланово преломляя его жизнь» [7.С.53].

Линия «ухода» от освоенного жизненного пространства к взысканию абсолютной истины оказывается сквозной в судьбе главного героя повести. «В Петербурге в сороковых годах случилось удивившее всех событие: красавец, князь, командир лейб-эскадрона <...>, которому все предсказывали <...> блестящую карьеру при императоре Николае I, за месяц до свадьбы с красавицей фрейлиной, пользовавшейся особой милостью императрицы, подал в отставку, разорвал свою связь с невестой, отдал небольшое имение своей сестре и уехал в монастырь, с намерением поступить в него монахом» [1.Т.31.С.5]. Герой повести - аристократ Степан Касатский выделялся среди товарищей «блестящими способностями», гордостью и преувеличенным самолюбием; его жизненные интересы сводились к тому, чтобы целенаправленно заставлять себя всегда и во всём добиваться первенства, «вызывающего похвалы и удивление людей». «И уход в монастырь, и «святость» героя вызывались требованиями всё той же гордыни, которая искала утешение «в духовной жизни» отца Сергия» [9.С.127].

Князь вёл «жизнь не распутную» и, отличаясь от «товарищей относительной чистотой своей жизни», принадлежал к тем людям, которые в одно время, «не осуждая нечистоту в отношении, требовали от жены идеальной, небесной чистоты» [1.Т.31.С.9].

Касатский, стремясь пробиться в самое высшее общество, собирается жениться на одной из фрейлин - графине Коротковой. Чувство любви пленило героя, и ум, некогда сосредоточенный на карьере, был скован любовью. Однако «ангельская чистота невесты» оказалась формальной, её пятнала давняя близость с императором Николаем I. Таким образом, столкнувшись с тем, что светское общество «поощряет» тайные измены, но не «прощает» искреннюю и открытую любовь, Касатский оставляет графиню, «подаёт в отпуск и отставку», уезжает в деревню, а по прошествии лета едет в монастырь. Налицо социально-психологический конфликт. «Попрана личная жизнь, проклята среда, в которой Касатский жил. Светскому молодому человеку ничего не оставалось, как покинуть мир», - замечает В.Жданов [4.С.242]. Но, вопреки мнению исследователя, отказ Толстого от изображения любви героев (как это видно уже из «Крейцеровой сонаты» и «Воскресения») может быть вызван и причинами мировоззренческого плана. И мысль писателя о «животных» отношениях сводится к поискам «цели, достойной человека». «Увлечение», любовь, чувственная страсть намеренно лишаются у Толстого всякого поэтического или романтического ореола и представляются только как «животное» влечение.

Уход Степана Касатского из суетного мира, как и уход от графини, можно рассматривать и как влияние горделивого духа, желание быть «выше тех, которые хотели показать ему, что они стоят выше его». К уходу в духовную обитель подталкивала князя, «переплетаясь с чувством гордости и желанием первенства», и проснувшаяся в нём «детская» вера в Бога, «которая никогда не нарушалась в нём». По словам Толстого, детскость души есть сердцевина нравственности, суть прекрасного в человеке.

Вера раскрывает в герое недоступную обычному познанию духовную правду, помогающую понять призрачность и беспочвенность светской жизни.

Касатский сразу решает уйти в монастырь. Однако церковный человек должен немного походить с этой мечтой в сердце, иначе он никогда не будет понимать монашество. Поэтому полный мыслительной нерешительности и не свойственной аскетам духовной вялости молодой аристократ пытается и там показать своё превосходство над другими.

Степан Касатский показывает себя человеком не только подверженным мирским страстям, но и прилагающим усилия к их искоренению. Он совершенствуется в смирении, кротости и воздержании, задаётся целью быть «чистым не только на деле, но и в мыслях, и послушным». Даже «победа над грехом похоти <...> и блуда легко давалась ему» [1.Т.31.С.12]. День посылал подвижнику жизнь в молитве, месяц преумножал, а год закреплял несомненность некогда сделанного выбора. Так прожил Касатский в первом монастыре семь лет, где и был пострижен в иеромонахи с именем Сергей. На четвёртом году его монашества он был назначен в близкий к столице монастырь.

В прежней обители «соблазн женский мало мучил Сергия, здесь же соблазн этот поднялся со страшной силой и дошёл до того, что получил даже определённую форму» [1.Т.31.С.14].

Толстой сталкивает героя с испытаниями, чтобы он осознал, что несмотря на то, что он посвятил себя духовному служению, все же в нем продолжает жить «животный» человек. Первое многотрудное испытание на предмет чувственного соблазна приходится на шестой год жития Сергия в затворе. Происшествие с Маковкиной усилило душевное смятение отца Сергия. Вера подвижника временами являлась весьма шаткой, находилась «на колеблющейся ножке».

В эпизоде, когда отец Сергей наблюдает через стекло Маковкину, он думает: «Да, она, женщина <...> с милым, милым, добрым и испуганным лицом <...>». При этом повтор «милым, милым» выделяет нарастание животного любопытства героя. Пригнувшись к стеклу, Маковкина также пыталась разглядеть через тусклый свет лампы затворника. «Глаза их встретились, - пишет Толстой, - и узнали друг друга. Не то чтобы они видели когда друг друга: они никогда не видались, но во взгляде, которым они обменялись, они (особенно он) почувствовали, что они знают друг друга, понятны друг другу» [1.Т.31.С.21]. Согласимся с В.Гебриалем, считавшим, что «автор показывает Маковкину как проекцию всех негативных черт самого Сергия: животности, вспыльчивости и гордыни» [15.С.118]. Намерения светской дамы были понятны отцу Сергию.

Духовный мир Сергия был просвещён живым словом христианской нравственности, где кроме любви к Богу, в известном догматическом смысле, присутствовала и любовь к людям. Испуганный и преисполненный грустной наивности монолог Маковкиной побуждает Сергия впустить светскую барыню.

Последующие диалоги Сергия показывают, что он, не забыв «привычное обращение с дамами», нравственно укорял себя и «не переставая молился». Сердечная молитва протрезвляет монаха от увиденного и услышанного.

В то же время голосом совестливого «я» герой слышит и чувствует, «что опасность, погибель тут, над ним, вокруг него, и он может спастись, только ни на минуту не оглядываясь на неё».

Сергий ощущал силу до того времени неиспытанного соблазна; он, невзирая на голос обольстительницы, «отворив свою дверь, не глядя на неё, прошёл мимо неё в дверь в сени, <...> ощупал чурбан, на котором он рубил дрова, и топор <...>, взяв топор в правую руку, положил указательный палец левой руки на чурбан, взмахнул топором и ударил по нему. <...> Палец отскочил <...>» [1.Т.31.С.25]. Сергей поступает как человек исключительной воли и духовной силы - он калечит своё тело, чтобы спасти душу. Отсечение пальца, побуждённое духом веры, символизировало отсечение прелести сластолюбия. Герой спас себя, так как находил в себе страх Божий и совестливую стыдливость.

Отец Сергей предотвращает влияние пагубных страстей (или, по Ю. Айнхенвальду, «только отсрочивает» [13.С.55] их). А Маковкина, узнав о происшествии, отчаянно вымаливает у затворника прощение, обещая «переменить свою жизнь». В письме дочери Маше от 8 апреля 1901 года Толстой писал: «У нас, мужчин, мысль влияет на поступки, а у женщин <...> поступки влияют на мысль» [1.Т.73.С.57]. И Маковкина, греховная, но по натуре благородная, через покающую исповедь, пришла к Богу.

Нравственное самоусовершенствование принесло отцу Сергию целебные плоды, продолжение подвигов благочестия их приумножило. «В затворе прожил Отец Сергий ещё семь лет. Сначала отец Сергий принимал многое из того, что ему приносили <...>. Но чем дальше и дальше шло время, тем строже и строже он устанавливал свою жизнь <...> наконец, дошёл до того, что не принимал больше ничего, кроме чёрного хлеба один раз в неделю <...>. Всё время своё отец Сергий проводил в келье на молитве или в беседе с посетителями <...>» [1.Т.31.С.27]. Известные события с Маковкиной приумножили славу и подняли нравственный авторитет героя: «около его кельи поселились монахи, построилась церковь и гостиница, а после чудотворного исцеления четырнадцатилетнего мальчика «по округе прошла слава о святой целебной силе старца Сергия <...>» [1.Т.31.С.28].

В письме В. Черткову от 16 февраля 1891 Толстой пишет об «Отце Сергии»: «Борьба с похотью тут эпизод, ступень; главная борьба с другим - с славой людской» [1.Т.65.С.71]. И герой мучается вопросом: «„На сколько то, что я делаю, для бога и на сколько для людей?“ <...> Он чувствовал в глубине души, что дьявол подменил всю его деятельность для бога деятельностью для людей» [1.Т.31.С.29]. В затворе Сергий возлюбил Господа Бога всем сердцем, всею душою, всем разумением своим. Выйдя из затвора он вводит себя в ложный круг суждений о Боге, мире и человеке.

Толстой верит, что Бог сам осуществляет добро в мире и что не нужно препятствовать его воле. Здесь писатель возвращается к системе взглядов Ж-Ж. Руссо об извращении церковью естественных природных стремлений человека к счастью, правде и добру. И этому следует его монашеский герой: гордыня и тщеславие навязывают Сергию мысли об обретении им личного счастья. Он приходит к выводу, что его призвание навязано духовенством, и хочет призвания естественного, которое должно осуществиться за счёт чистой божественной воли. Такие мысли героя пробуждали жажду к прежней затворной жизни, где лишь и была, по мнению Сергия, «истинная жизнь»: «Он чувствовал <...>, что <...> ему тяжело было, когда его отрывали от его уединения» [1.Т.31.С.29]. И отец Сергий, желая естественного призвания себе, хочет «уйти, скрыться» от «искусственного» то в затворе, то просто бежать в мир, надев «мужицкую рубаху», соделав себя другим, свободным. Но автор оставляет мысль о победе и странничестве героя.

По Толстому, жизнь, имеющая смысл, и жизнь, основанная на вере, есть одно и то же. Вера является знанием смысла жизни, осознанием человеком своего положения в мире, которое обязывает его к известным поступкам. Но у Сергия не было стойкой, чистой веры, следовательно, отсутствовала стройная система знаний об истинном смысле жизни. В миру Степан Касатский разочаровался в царе, в монастыре отец Сергий начинает разуверяться в вере.

Сергий, живя в настоящем, не ощущал божественную благодать, страстно тяготел к урокам прошлого, вспоминая молитвы свои в первое время затвора, когда он молился в даровании ему чистоты, смирения и любви, и едва думая о будущем, которое уже предвещало ему духовное падение.

«Была весна, канун праздника преполовления. Отец Сергий служил всенощную в своей пещерной церкви <...> когда он вышел, славя... к гробу своего предшественника, он пошатнулся и упал бы, если бы стоящий за ним купец и за ним монах <...> не подхватили его» [1.Т.31.С.30]. Так начинается прелюдия духовного падения Отца Сергия. «Песнь» весны здесь символизирует природное гармоничное начало в человеке, гармонию души, в противовес разрушительному дисгармоничному началу.

Автор не случайно отмечает «покачивание» Сергия. В «покачивании», как физической потери равновесия, можно усмотреть и духовное «покачивание», завершившееся впоследствии духовным падением.

У Отца Сергия был дар чудотворения. Исцеления просил своей «единственной дочери» и купец. Он рассказал старцу, что его дочь «девица двадцати двух лет, заболела два года тому назад, после скоропостижной смерти матери, ахнула, как он говорит, и с тех пор повредилась <...>. Днём она не ходит, боится света, а может выходить только после заката солнца» [1.Т.31.С.33]. Отец Сергий не мог не понять просьбу купца «спасти болящую дочь». Монах,

необходимым образом руководствуясь не чувствами, а верой, должен был видеть в девушке воспитанницу, личность, предмет исцеления. Но с нарастанием внутреннего безбожия Сергей воспринимает её не как больную, а как представительницу противоположного пола: «Ему было приятно узнать, что купцовой дочери двадцать два года, и хотелось знать, красива ли она». Молитвы Сергия, направленные против «животного», не приносили духовного отрезвления, так как герой сомневается в существовании самого Спасителя: «Да есть ли он?» [1.Т.31.С.35].

22 июня 1891 года Толстой записал в дневнике: «К отцу Сергию. Когда он пал с купеческой дочерью и мучается, ему приходит мысль о том, что если падать, то лучше бы ему пасть с красавицей, а не с этой гадостью. И опять гадость захватила его» [1.Т.52.С.47]. В сознании монаха начинают появляться резкие контрасты душевных проявлений, как соединение в духовном мире добра, евангельских истин и зла, бесовской плотской страсти.

Столь разные люди, отец Сергий и Марья поддаются своей животной стороне потому, что каждый из них видел в другом любовный интерес. «Апостол праведной» жизни лишается духовных стремлений, постепенно уводя его к бессознательным животнo-стихийным корням жизни. Марья являлась кульминацией накопившегося соблазна, животного падения.

Толстой подвёл своего героя под чувственное падение. «Чувственность и слабоумие оказались намного сильнее и жизнеспособнее псевдоаскетичности и умственной изошрённости Касатского в силу их естественности подлинности» [5.С.106], — отмечает по этому поводу А.Кондратьев.

Победа животного становится последним аккордом сложных душевных переживаний отца Сергия, за которым последуют два варианта окончания повести. В первом варианте он убил соблазнительницу, во втором скрылся из монастыря и стал благочестивым странником.

Физическое убийство дочери купца, подводившее Сергия под ответственность перед совестью и судом, делало, по мысли Толстого, почти невозможным его возвращение к нормальной жизни, и автор отменяет убийство. Так герой после животного падения бежит из монастыря в мир.

Наутро после падения через монолог Сергия «„Неужели всё это было? Отец придёт. Она расскажет. Она дьявол. Да что же я сделаю?“» [1.Т.31.С.36], Толстой раскрывает его страх и стыд. Поэтому «дьяволом» он называет, как до, так и после падения, Марью, так как «искушала» и может «рассказать». Вопросительное «что же я сделаю?» отображает, с одной стороны, намёк на духовное смятение, катастрофу, с другой - на зарождающееся начало переворота в сознании Сергия, который с ужасом почувствовал, что и сам состоит из плоти.

Пройдя в келью, Сергий «снял мужицкое платье, оделся, взял ножницы; обстриг волосы и вышел по тропинке под гору к реке. <...> К вечеру он пришёл к деревне на реке» [1.Т.31.С.37]. Первые строки описания бегства развёртывают эволюцию опрощения старца, осуждение им прошлой жизни, всех своих прежних взаимоотношений с окружающим миром. «Как Лютер, — пишет Л. Шестов, — он ушел в монастырь, чтоб святыми делами спасти свою душу», и, как Лютер, он с ужасом убедился», что дела не спасают, а губят душу - будь то самые святые дела, и что, принимая сан, он начал служение дьяволу» [12.С.134]. Как некогда Касатский ушёл в затвор, теперь покидает монастырь отец Сергий.

Сергий подаётся в бега не от Марьи, а от своего положения архипастыря. Не было у монаха раскаяния и церковного покаяния, не было и смирения, а была гордыня, не нуждающаяся в благодатной помощи Бога, которая и подвигает старца на самоспасение, спасение естественными, человеческими силами.

Сергий прорывается в мир с «течением несвязанных чувств и мыслей, беспорядочных воспоминаний о прошлом и смутных гаданий о будущем» [2.С.153]. После падения в душе отца Сергия звучит одно: «„Да, надо кончить. Нет бога. Как покончить? Броситься. Умею плавать, не утонешь. Повеситься? Да вот кушак, на суку“. Это показалось так возможно и близко, что он ужаснулся. Хотел, как обыкновенно в минуты отчаяния, помолиться. Но молиться некому было. Бога не было» [1.Т.31.С.37].

На пути к «подруге детства», Пашеньке, Толстой проводит героя через воспоминания о ней с раннего детства до приезда её в монастырь. Сначала Сергий вспоминает о её

«ничтожности», «жалкости», обо всём том, что наделяет её нелепостью и беспомощностью. Он то перестаёт думать о ней («Да что мне об ней думать?»), то опять, чтобы спастись от мысли самоубийства, «стал думать о Пашеньке». Так, то размышляя о «своём необходимом конце, то о Пашеньке», Сергей засыпает. «И во сне он увидел ангела, который пришёл к нему и сказал: „Иди к Пашеньке и узнай от неё, что тебе надо делать, и в чём твой грех, и в чём твоё спасение”» [1.Т.31.С.38]. Образ Прасковьи Михайловны построен Толстым в манере сопоставления внешнего с внутренним: чем более жалкой изображается несчастная женщина, тем ярче выступает её внутренняя красота. В её доме начинается решаться судьба кающегося грешника, где правде Сергея противопоставляется истинная правда живой жизни Прасковьи Михайловны.

Диалог учительницы музыки и монаха о прожитом волнует обоих. Отец Сергей исповедуется в грехах: «**Я** блудник, я убийца, я богохульник и обманщик, <...> И я, который думал, что всё знаю, который учил других, как жить, - я ничего не знаю, и я прошу тебя научить» [1.Т.31.С.41].

Поучительная беседа раскрывает в сознании Сергея пути оправдания перед Богом кающегося грешника. Герой нашёл бога в Прасковье, он видит в ней всеми униженную и оскорблённую женщину, всё выдерживающую с великим трудом и терпением, благодарившую и хвалившую Бога. И приходит к выводу: «„Так вот что значил мой сон. Пашенька именно то, что я должен был быть и чем я не был. **Я** жил для людей под предлогом Бога, она живёт для Бога, воображая, что она живёт для людей. Да, одно доброе дело, чашка воды, поданная без мысли о награде, дороже благодетельствованных мною для людей. Но ведь была доля искреннего желания служить богу?” <...> Да, но всё это было загажено, заросло славой людской. Да, нет бога для того, кто жил, как я, для славы людской. Буду искать его”» [1.Т.31.С.43].

По мнению И. Егоровой: «<...> кроткая Пашенька воспринимается не столько как пример истинной мудрости, сколько как выражение неудавшейся жизни <.. > её кротость в большей степени вызвана тяжкими обстоятельствами, практическим бессилием, а не религиозным чувством» [3.С.47-48]. Однако, Прасковья Михайловна однозначно способствует духовному возрождению отца Сергея.

Герой Толстого хочет понять другого едва ли не в той же степени, как и самого себя: лишь в отношениях с другими он познаёт, а следовательно, и совершенствует себя. Натура отца Сергея перестраивается, освобождается от гордыни, от животного, воспринимающегося самим Толстым едва ли не главным препятствием к достижению идеала. Герой «Отца Сергея» становится праведным странником, растворяется в безвестном, безымянном существовании, решаясь через скитальничество заслужить спасение.

В конце повести каждый шаг странника, его смиренная помощь людям комментируется как раскрытие в его душе истинного Бога: «Кротость его побеждала всех <...> И понемногу бог стал проявляться в нём <...> Чем меньше имело значения мнение людей, тем сильнее чувствовался бог» [1.Т.31.С.46].

Повесть заканчивается кратким эпилогом: Сергея ссылают в Сибирь, где он поселяется на заимке у богатого мужика и живёт там. Он работает у хозяина в огороде, учит детей, ходит за больными. Конец повести, по мнению С. Толстой, несёт в себе малую художественную убедительность. «Фальшь в этой повести: это конец в Сибири» [10.С.400], – заключает она.

«Русский роман, начиная с Гоголя, ставит проблему не изменения положения героя, а преобразование его внутренней сущности», – подчёркивает Ю. Лотман [8.С.97]. Сергей пытается «поднять» себя, «преобразить» то уходом в монастырь, что совершается отнюдь не в результате просветления, то уходом из монастыря из-за обиды на преуспевающего игумена, оскорбляющего его своей бездуховностью, то бегством из затворнической кельи, оваянной славой его святости, вызванным его искушением. И только последний, четвертый уход — из дома Пашеньки — вызван истинным просветлением. Таким образом, шаг за шагом герой «выламывался» из прежней среды. Лишь в миру толстовский герой обретает правду, понимаемую как истина жизни, не только им самим, но и писателем. Как справедливо подчёркивает И.Концевич, «духовная катастрофа Сергея и есть личная драма Толстого» [6.С.55].

Произведения Толстого несут на себе яркие следы «всех тех фазисов духовного развития автора, которые приводили его от одной крайности в другую. <...> Он ошибочно видел в собственной жизни тип человеческой жизни вообще: „Я спросил себя: что такое жизнь? Говорит он, и получил ответ - зло и бессмыслица. И точно, моя жизнь — жизнь потворства и похоти плоти - была бессмысленна и зла <...>» [11.С.21]. В таком морализаторском ключе в 1890-е годы Толстой и анализирует брачно-плотские отношения и религиозную веру, сводя их к бесчестию, подлости и обману.

Литература

1. Толстой Л.Н. Полн. собр. соч. в 90 т. (юбилейное издание). Т. 31, 52, 65, 73. М., 1937-1950.
2. Бунин И. Освобождение Толстого. М., 1978.
3. Егорова И.П. Проблемы веры и её художественное выражение в творчестве Л.Н.Толстого 90-х годов. Хабаровск, 1976.
4. Жданов В.А. От «Анны Карениной» к «Воскресенью». М., 1968.
5. Кондратьев А.С. Творческие искания Л.Н.Толстого 80-90-х годов. Поэтика прозы. Липецк, 1998.
6. Концевич И.М. Истоки душевной катастрофы Л.Н.Толстого. Мюнхен, 1960.
7. Лакшин В.Я. Л.Н.Толстой. М., 1977.
8. Лотман Ю. Сюжетное пространство русского романа XIX. Избр. статьи: в 3 т. Т.3. Таллин, 1992.
9. Лученецкая-Бурдина И.Ю. Парадоксы художника. Особенности стиля Л.Н.Толстого в 1870 - 1890 годы. Ярославль, 2001.
10. Толстая С. А. Записки о словах, сказанных Л. Н. Толстым во время писания. - «Дневники Софьи Андреевны Толстой. 1860-1891». М., 1928.
11. Уард О. Жизнь Толстого. Одесса. 1943.
12. Шестов Л.И. На весах Иова. М., 2001.

Интернет-источники

13. Айхенвальд Ю. Посмертные сочинения Л.Н.Толстого. СПб., 1912.// <http://www.tolstoj.pushkinskijdom.ru/Default.aspx?tabid=10482>.
14. Лученецкая-Бурдина И. Ю. Реконструкция художественного целого в повестях Л. Н. Толстого 1880–1890-х гг.// http://vestnik.yspu.org/releases/2014_2g/36.pdf.

Переодика

15. Гебриаль, В. Анализ повести Л.Н.Толстого «Отец Сергей» в парадигме К.Г.Юнга. Вестник Московского ун-та. Серия 7. Философия, №2. 2004.

ՀՏԴ 82.09

Թագուհի Ամիրխանյան
ՎՊՀ, Բանասիրական ֆակուլտետ

ՀՆԻ ՈՒ ՆՈՐԻ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԲԱԽՈՒՄԸ ԲԱԿՈՒՆՏԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ Բակունց, ժամանակ, նահապետականություն, բարոյական օրենքներ, բարքեր, բախում:
Ամփոփում

Բակունցի պատմվածքներում մարդը և ժամանակը գտնվում են սերտ միասնության մեջ: Այդ ժամանակ կոչվածն է կարգավորում մարդկային հարաբերությունները, նրանով է պայմանավորված մթնաձորյան հերոսների հոգեբանությունը: Ժամանակի հոլովություն ամփոփված տարիները սեպ են խրում երբեմնի հարազատների միջև, օտարացնում նրանց: Բակունցը նոր օրերի գրող էր, ով պատկերում էր, թե ինչպես է մեռնում հինը՝ իր տեղը զիջելով նորին:

Тагуи Амирханян
ВГУ, факультет филологии

Ключевые слова: Бакунц, время, старина, моральные законы, строи, стыковки.

Резюме

В рассказах Бакунца человек и время находятся в тесном единстве. Так называемое время регулирует человеческие отношения, им согласована психология мтнадзорских героев.

Годы отдаляют бывших родственников и отчуждают их.

Бакунц писатель нового времени, который показывает как умирает древнее и уступает свое место новому.

Taguhi Amirkhanyan
VSU, the Faculty of Philology

THE CONFLICT OF THE OLD AND THE NEW IN BAKUNTS'S STORIES

Key words. Bakunts, time, old times, moral laws, conflict.

Summary

In Bakunts's satories the man and the time are in close unity. The so called time regulates human relations, it defines the psychology Oof Mtnadzor heroes. Years seperate relatives making them strangers.

Bakunts was a modern writer who showed how the old died giving place to the new.

Բակունցն իր ստեղծագործություններում մարմնացնում, ձև ու կերպարանք է տալիս ժամանակին:

Նրա պատմվածքները կարելի է բաժանել երկու շրջանի՝ մինչխորհրդային և հետխորհրդային կյանքը պատկերող գործեր: Այս պատմվածքների ընդհանուր օրինաչափությունը հնի ու նորի հավերժական բախման պատկերումն է:

Մրանց հերոսներն իրենց նիստուկացով, հոգեկերտվածքով շատ քիչ են տարբերվում իրարից: Բնավորությամբ նույնն են, պարզապես նորի նկատմամբ տարբեր պատկերացումներ ունեն, որն ինչ-որ չափով պայմանավորված է նոր ժամանակների հասարակական հանգամանքներով և գյուղի ու քաղաքի միջև սկսված ակտիվ շփումներով:

Բակունցի գեղարվեստական զննումների առարկան, իր հերոսների գործողության վայրը հայ հին՝ նահապետական նիստուկացով ապրող գյուղն է, մի միջավայր, ուր «Ժամանակը սահում է դանդաղ, տարիները միևնույն ծառի միանման տերևներն են: Դրա համար էլ խառնվում է ծերունու հիշողությունը: Գետն աղմկում է առաջվա հանգով, նույն քարերն են, նույն քարե արծիվը» («Ալպիական մանուշակ»):

Ժամանակի ընթացքից դուրս մնացած տարիները գյուղացու հայացքից առաջ շարունակաբար ոչինչ չեն փոխել, նրանց կենցաղը նույնն է եղել դարեր շարունակ. «Տարիների ընթացքում ամեն ինչ, ամեն օր կրկնվել էր այնքան նման իրար, որ շարժումները մեքենայացել էին» («Աքարում»):

Լեռներն ու սարերը, ծառերն ու ծաղիկները լուռ վկաներն են դեպքերի, ասես իրենց մեջ դարերի հիշողությունն են կրում: Նրանք պատմում են խիտ անտառների մեջ ծվարած, ապրելու իր ձևն ու օրենքներն ունեցող մի ուրույն աշխարհի մասին, ուր նախակիզբ ժամանակների շունչն է իշխում մարդկանց կենցաղի, հոգեբանության, կեցության ու գիտակցության վրա:

«Նրանք անտառում են ապրում, և որովհետև անհիշելի ժամանակներից ի վեր գյուղը խիտ անտառների մեջ է, ճանապարհներից զուրկ, - Սաբու գյուղի երեխան այնպես է կարծում, թե աշխարհն անվերջ անտառ է, որտեղ մարդը բացատներում ցանում է կորեկ, իսկ արջերը հավաքում են ընկած կաղիքները, ծառերը ճղակոտոր անում և հազեցած պառկում կորեկի արտում: Սաբուն մազ չի խուզում. բեղ ու միրուք կտրելը համարում է մահացու մեղք: Դրա համար էլ մարդիկ երկարամորուս են, բրդոտ...»

Սաբուն մոայլ է: Անտառն է վարժեցրել ունքերը կախ և կացնի կոթից բռնած լուռ ման գալ ծառերի տակ» («Սաբու»):

Նույնպիսի մի աշխարհ է նաև Մրոցը, որը հեռվից նայողին անմարդաբնակ մի երկիր է թվում: Այդ գյուղը շատ զարմանալի մի սովորություն ունի. «Մրոցում մինչև այժմ էլ տոնում են ուրիշ Նոր տարի, որին Նավասարդ են ասում, ինչպես հեթանոս Նավասարդի գիշերը զարթնում են, ճրագները վառում, լուսադեմին ճաշ անում» («Մրոց»):

Մթնածորյան գյուղերում ժամանակն ասես կանգ է առել: Նրանց համար ամեն ինչի սկիզբը նախաստեղծ ժամանակներից է գալիս: Այս հարցի վերաբերյալ ուշագրավ են Խ. Սարգսյանի դիտողությունները.

Այս գյուղերի ծագումը պատած է խոր անցյալի թանձր մշուշով: Աքարը «հին է անհիշելի ժամանակներից»: Հյուսիսարևմտյան մարդիկ ապրում են «անհիշելի ժամանակներից ի վեր»: «Սաբուն» անհիշելի ժամանակներից ի վեր՝ խիտ անտառների մեջ է տեղավորված: Մրոցը հնուց ի վեր իր տեղն է, և թվում է, թե անհիշելի ժամանակ ապառաժի կտորներից ծնվել են և Մրոցի բնակիչները: »

«Հիշողությունից ջնջվել է, սակայն, ոչ միայն գյուղերի, այլև այն ամենի ծագումը, ինչ կատարվում էր այնտեղ: Մրոցն ու Միրը կրվում էին Ծիրանի տափի համար, բայց «ոչ ոք չէր հիշում... թե երբ ծագեց առաջին թշնամությունը»: Մանասն ու Առաքելը թշնամիներ էին իրար ու հայտնի էր, որ այդ թշնամությունը երկու տան մեջ «հնուց» կար («Օրանջիա»): Պետին նույնպես «հնուց» էր նախրապան («Այու սարի լանջին»): Իսկ Բադին ինքն էլ «չէր հիշում», թե քանի տարվա տավարած էր («Վանդունց Բադին»): Այդպիսով, ամենի արմատներն էլ կորչում են անցյալ դարերի ու օրերի մութ ծալքերում: <...>: Առասպելը և հեթանոս դարերի շունչը դեռ շատ է հզոր Բակունցի մոռացված ու իր հազարամյա դեմքը համարյա անարատ պահած գյուղերում» [1,12-14]

Նահապետական գյուղն իր ստեղծած կյանքի նիստուկացով, ժամանակի հավերժական ընթացքն իր օրենքներով չափող աշխարհ է:

Բակունցը նոր օրերի գրող էր, ով պատկերում էր, թե ինչպես են նոր կյանքն ու նոր բարքերը թափանցում գյուղ, ինչպես են ոմանք սկսում պայքարել հնացած բարքերի ու սովորությունների դեմ:

Մուրեն Աղաբաբյանը գրում է.

«Նա փորձում է գտնել հնի անհետացման և նոր կենցաղի ծնունդի պատմական օրինաչափության կոնկրետ դրսևորումը մարդկանց հոգեբանական աշխարհում, ցուցադրել «գարնան կանաչի պես» ծլող նորի բախումը հին կենցաղի հետ, որը տանում է դեպի կյանքի նոր ձևերի հաղթանակ»: [2,64]

Բակունցի հերոսներն ապրում են երկբևեռ ժամանակի հակադիր գոտիներում: Մի կողմում հնի կրողներն են, մյուսում՝ նորի: Ահա՛ նրանք՝ Ավան ամին և Ակսելը, Ասյան և Սաքանի մայրը, Մինա բիրին ու Անժիկը...

«Հին տանը» նամակաձև պատմվածքում նորի կրողը հենց ինքը՝ Բակունցն է, որի գրած նամակում արտացոլված է իր տեսակետը Ավան ամու մահացող աշխարհի մասին: Նա, իհարկե, սիրում է Ավան ամուն, ներողամիտ է նրա «սառած մտքի» նկատմամբ, ով ամբողջովին հնով է ապրում:

Ավան ամին չէր կարող այլ կերպ պատկերացնել կյանքը. իսկ իր պատկերացրած կյանքն արդեն բազում տեղերից փշուր-փշուր էր լինում: Բակունցը ցավ է ապրում նրա համար, քանի որ գիտի՝ Ավան ամու ցանկությունները չեն իրականանալու: Օերունու վիշտը նահապետականության կործանման համար էր, որի միակ մեղավորը ժամանակն էր. նա իր համար ամենամիլիարկանն էր կորցրել, դրա համար էլ մեծ ողբերգություն էր ապրում. «Օրծեռնակի բուն է դարձել մեր տունը, ձագերը թն են առնում, ուրիշ երկրներ թռնում և ձագերից ոչ մեկը շյուղ էլ չի բերում՝ հին տունը կարկատի: Դու գնացիր, Վահանն էլ գնաց, Սամսոնը, որ իսկի նամակ էլ չի գրում: Էսպես ցրվել ենք աշխարհով մեկ: Բա մեր տու՛նը... »:

Ավան ամին հիշեցնում էր «հայրենական բնում ընկած, թևը ջարդած ծիծեռնակի », որն, ուր որ է, ցրտից կփետանար ու կընկներ:

Այս պատմվածքում տեսնում ենք նաև ժառանգորդման խնդիրը. ու՛մ էր թողնելու այգին, կարո՞ղ էր հանգիստ խղճով մահանալ, երբ գիտեր՝ չկա մեկը, ում կկարողանա հանձնել տան ժանգոտած, ծայրը ծուռ բանալիները:

Մի շարք պատմվածքներում ու ակնարկներում Բակունցը քննադատում է գյուղի ծերերի նկատմամբ արհամարհանքով լցված երիտասարդներին, որոնք առիթ բաց չեն թողնում նրանց վիրավորելու: Հարց է ծագում՝ հնի ու նորի սահմանագծին կանգնած Բակունցի դիրքորոշումը ո՞րն է, ի՞նչ է մտածում նա: Անկասկած, Բակունցը վեր է կանգնած մթնաձորյան հերոսներից այնքանով, որ նրանց նման կառչած չէ նահապետականությանը, քանզի հասկանում է՝ հինը իր տեղը զիջում է նորին: Սակայն սխալ կլինի կարծել, թե միշտ դեմ է նրանց, նա գիտի, որ գյուղի նահապետները որոշ հարցերում ավելի ճիշտ են քան երիտասարդները:

«Մինա բիրին» պատմվածքում ևս բախվում են հինն ու նորը: Հնի կրողը Մինա բիրին է՝ նահապետականության օրենքներով ապրող մի կին, նորինը՝ Անժիկը՝ նրա թոռնուհին:

Տատին դուր չեն գալիս թոռնուհու արարքները. «...երբ մի անգամ էլ Անժիկին պաշեցին, նա թաշկինակով թշերը սրբեց, նոթերը կիտեց...ասես նրա համար տհաճ էր գյուղացու պաշը»:

Նոր ժամանակները խորթացրել են երբեմնի հարազատներին. տատը չի կարող գրկել թոռանը, ու ինքն իրեն հույս տալ, թե «ինքը վերջին շառավիղը չէ. միջուկը փտած արմատը դեռ շատ ծիլեր է տալու»: Ինչու՞ : Գուցե պատճառն ամեննին էլ ժամանակը չէր, գուցե դա նրանից էր, որ «տատի շապկից ծանր հոտ էր գալիս, ցերեկները բոբիկ էր քայլում, իսկ գիշերն էլ՝ առանց լվալու պառկում»: Միգուցե տատն էր սխալ, որ ուզում էր քաղաքում ծնված ու ապրած թոռանը գյուղի աղջիկ դարձնել՝ առանց հաշվի առնելու ժամանակը, որի ընթացքում քաղաքի տված և ո՛չ մի բանն ինքը չէր կարող արմատախիլ անել: Բակունցը քայլ առ քայլ ցույց է տալիս տատի ցանկության անհնարիությունը, տատի ու թոռան աստիճանական խորթացումը:

Տատն ամեն ինչ անում էր, որ թոռանը աղոթել սովորեցնի, բայց, երբ Անժիկը պետք է համբուրեր խաչքարը, չհամբուրեց և դեռ ավելին. «-Չեմ ուզում, կեղտոտ է...Ես քարը չեմ համբուրի, էնտեղ ի՞նչ կա որ...»:

Չէտո էլ գլուխը դռանը հարվածելու պատճառով ասում է. «- Թու՛հ, էս ինչ դուռ են շինել»: Եվ երբ տատը հանդիմանում է թոռանը, ասում, որ Աստված կպատժի , թոռը պատասխանում է. «Աստված չկա, տատ՛իկ» :

Բակունցը ցույց է տալիս, թե ինչպես են ի դերն լինում տատի հույսերը և ինչպես՝ «այդ հինավուրց մատուռի մեջ տատին անհարազատ են թվում թոռան աչքերը»:

Նույն անտարբերությունն ու խորթությունն է տիրում նաև «Մայրը» պատմվածքում: Ծնողները երկար են սպասել իրենց որդուն, ով ահա կարճ ժամանակով հյուր է եկել իրենց: Ուրախության հետ մեկտեղ ծերունի Ունանին այսպիսի մտքեր են պաշարում. «Միտք էր անում ծերունին, թե էս ինչ մարդիկ են... չհարցրեց, թե բաղը ոնց է, ծառերը, հողը... Ոնց որ մի դոնադ: Իսկ փոքրուց էդպես չէր... Ոնց փոխվեց, հը... Ծառերն ու մ պիտի մնան» («Մայրը»):

Անչափելի է գյուղի մեծերի ողբերգությունը, որովհետև որդիները խորթանում են իրենց արմատներին, իրենց հոր տուն են գալիս որպես հյուր. ով գիտե գուցե մի օր էլ այլևս չեն գա, հավետ կմոռանան հայրենական տունը: Կրկին նույն հարցն է ծագում՝ ինչն էր պատճառը, որ գյուղում մեծացած զավակները խորթանում էին ծննդավայրին, հողին, տանը... Եթե ոչ այն, որ քաղաքում ապրելուց հետո գյուղը նրանց խեղճ ու հետամնաց էր թվում, իսկ դրա պատճառն էլ իր հերթին այն էր, որ քաղաքում երկար տարիներ ապրելուց հետո նրանց հիշողության մեջ միայն գյուղի գրավիչ կողմն էր վառ մնացել. բարձր լեռներ, գուլպ ու կարկաչուն աղբյուրներ, կանաչ արոտներ, ուր «խտոր տեղ-տեղ մինչև գոտկատեղն է հասնում»: Ժամանակի ընթացքում նրանք մոռանում են, որ «գյուղում կեղտը շատ է, սապոնով երես չեն լվանում, մի ձեռք շոր ունեն, հագնում են այնքան, մինչև հնանա, սևանա, հետո կարկատում են հազար տեղից ու նորից հագնում...»:

Ընդգծելով գյուղացու չարքաշ կյանքը՝ Բակունցը ցույց է տալիս, որ, չնայած բազմաթիվ դժվարություններին, հին սերնդի ներկայացուցիչների մեջ կար իրեն ծնած ու սնած հողին հարազատ մնալու, դժվարությունները հաղթահարելու և տոկալու ուժ, սովորություն, ներքին բնագոյ, ինչը չէիր ասի նոր սերնդի մասին: Մակայն, այսքանով հանդերձ, Բակունցը չի իդեալականացնում հին գյուղը, չի թաքցնում նրա արատները: Մի քանի անգամ հին գյուղի կյանքը համեմատում է մինչև անգամ «խաղաղ ճահճի» հետ: Միայն է կարծել, թե ամեն հին բան վատ է, և ամեն նոր բան՝ լավ, կամ հակառակը: Հնի մեջ շատ է եղել լավը, բարոյապես անաղարտը, գեղեցիկը և, անկասկած, գյուղի նահապետներն ավելի բարձր դիրքերում են կանգնած, քան քաղքենի բարքերի կրողները: Բայց և այնպես «հնի» դարն անցել էր, այն իր լավ ու վատ կողմերով էր նահանջում և իր տեղը զիջում նորին. չէ՞ որ հին գյուղը մի ամբողջություն էր՝ իր լավ ու վատով, գեղեցիկով ու տգեղով, դրականով ու բացասականով և ամբողջությամբ ու աստիճանաբար էլ մահվան էր դատապարտված: Ինչ փույթ, թե հնի կրողները ջանում էին պահպանել թե՛ լավը, թե՛ վատը, դիմադարձ կանգնում իրենց աշխարհ մուտք գործող ամեն նորին՝ և՛ լավին, և՛ վատին:

«Գալուստի վիկը» պատմվածքի հերոս իմաստուն Ռուստամ ապերը չի ուզում, որ ցանվի և նոր կանոններով մշակվի այնպիսի օգտակար կերաբույս, ինչպիսին վիկն է. «ռանչպար եղի ր, գիտուն մի եղիր», - սա է նրա կարգախոսը: Նա մերժում է գիտության բերած նորարարությունը և ընդունում պապենական վարուցանքը:

Մի շարք գործեր էլ պատկերում են հին գյուղի դիմադրությունը «տրախտորի և սերմնագտիչի» մուտքին:

Բայց և պարզ է, որ հաղթողը նորն է, նորի բերած սերմնագտիչն ու տրակտորը, և, որ ամենից կարևորն է, նոր ժամանակների մարդն է, որ հանդգնել է խախտել նահապետականության օրենքները: «Հինը» աշխատում էր պահպանել նաև բարոյական օրենքները, չնայած այստեղ էլ անկումն անխուսափելի և ակնհայտ էր: Այս տեսանկյունից ուշադրության ենք արժանացրել «Եվ բատրակը թույլ տվավ իրեն», «Գյուլբահարի համար» և «Մթնաձորի չարքը» պատմվածքները:

Առաջինում բատրակը թույլ է տալիս իրեն գիշերել տիրոջ կնոջ անկողնում: Լուրը ռումբի պայթյուն է հանում գյուղում: Գյուղխորհրդի նախագահը լրջորեն անհանգստանում է, չնայած ինքն էլ ամբողջովին հին գյուղի բարոյագիտությամբ է ապրում, մեղադրում է նրան, սակայն Մանուշի մասին ասում է. «Անիրավիդ աղջիկը քաշած պատկեր ա, էլի...»: Իսկ գյուղի ծերերը նրանց արարքը մեծագույն մեղք են համարում. «Փողոցում մի քանիսը Սրապին հանդիմանում էին, թե Մրոցն իր օրում այդպիսի բան չի տեսել»:

Իսկ ահա «Գյուլբահարի համար» պատմվածքում Դրմբոնի գաղթական քահանայի և որբնայրի Գյուլբահարի միջև տեղի ունեցածն ուղղակի սարսափելի էր. «Մեր գյուղի պատիվը

գաղթական տերտերն էսպես ոտնատակ տա՞... Ա՛յ, նրա կարգին, ճակատի մեռնին...» : Եվ նրանք որոշում են հին օրենքներով դաս տալ տերտերին:

Բարոյականության և ապաբարոյականության օրենքների մասին է «Մթնածորի չարքը»: Քաղաքից եկած ընկեր Ասյան իր շարժումով, հագուկապով արդեն իսկ խորթ ու օտար տարր էր նահապետական բարոյական օրենքներով ապրող հին գյուղում, բայց, չնայած դրան, գործելու համար ամուր հենարան ուներ: Նա իր տեսքով, վարմունքով գայթակղում է ողջ կյանքում հողի ու թրիքի հետ գործ ունեցող Սաքանին: Վերջինս հոգեկան անհավասարակշռության է մատնվում Ասյայի պատճառով: Եվ քաղաքից եկած չարքը կարծեք թե սեպ է խրում ամուսինների մեջ: Ասյայից հետո իր կինը շատ է նսեմանում աչքին: Այս ամբողջ իրարանցումը երկու տարբեր կանանց համեմատության հետևանք էր. ինչպե՞ս են ուտում, լվանում ատամները, խոսում... Սաքանին թվում էր, «թե կինը որոճում է պառավ կովի պես, հացը շաղախում թքի հետ և կուլ տալիս էլ վիզը մի քիչ երկարում, իսկ գիշերն առաջին անգամ Սաքանը կնոջ բերանից ծանր հոտ է առնում»: Ինչպե՞ս Սաքանը մինչ այդ չէր նկատել, և, բացի այդ էլ, մի՞թե գյուղն ու այդ գյուղի կենցաղը չէին սպասել Սաքանի կնոջ երբեմնի գեղեցկությունն ու կանացիությունը, ինչպիսին կլինեք Ասյան, եթե ապրեք գյուղում, չէ՞ր փոխվի արդյոք, մի թե նույն նուրբ շարժումներով, սեթևեթող, հմայող ու գերող և միշտ ցանկալի կինը կմնար...

Սաքանը հրապուրված էր Ասյայով, այո՛, բայց նրա հանդեպ թերահավատությամբ էր լցված. «Ուրեմն մշտական շրջում ես գյուղերը, ժողով անում, քարոզ տալիս,- հարցրեց Սաքանը: Ասյան ծիծաղեց և ծիծաղի միջից «հա» ասելով գլխով արավ: Թեկուզ Սաքանը նկատեց, թե ինչ մաքուր էին նրա ատամները, և թե գլխով անելիս ինչպես մի փունջ մազ ընկավ ճակատին, - տեսավ այդ և դուր չեկավ Ասյայի ծիծաղը»:

Բակունցի հերոսների ողբերգությունը գեղեցիկի ընկալման և ճանաչումից հետո կոպիտ իրականության հետ հարմարվելու փորձեր փնտրելու և չգտնելու մեջ է:

Սաքանը տեսնում է Ասյայի նուրբ շարժումները, թեթևակի բացված ազդրերը, նրանից առնում է սարի ծաղիկների հաճելի բուրմունքը, նկատում, թե ինչպես է աղջիկը լվացվում և լվանում ատամները, ինչպես է փոքր պատահներով հաց ուտում, զգում է անհրաժեշտ, բայց չունեցած մի բանի պահանջ, որն էլ տակնուվրա է անում հոգին:

Բայց հաջորդ օրն իսկ նա կմոռանա Ասյային կամ կմտաբերի որպես քաղցր հիշողություն, որպես Մթնածոր եկած «չարք» ու կշարունակի ապրել իր տաղտկալի կյանքը:

Դավիթ Գասպարյանը նկատում է ,որ պատմվածքը միաժամանակ երկու կարևոր հարցի է պատասխանում. «Նախ կոպիտ իրականության մեջ նույն այդ կոպիտ մարդիկ ի վիճակի են զգալու գեղեցկությունը, միայն թե զրկված են դրանից և ապա՝ գեղեցկությունը զգացվում ու գնահատվում է դրսի ու ներսի աշխարհների հարաբերությամբ: Ինքն իր մեջ այդ ներսի աշխարհը չունի գեղեցիկի զգացողություն, թեև այն իր մեջ է»: [3,108-109]

Պատմվածքն ուշադրության է արժանի նաև մեկ այլ տեսանկյունից. հետաքրքրական է այն պատկերը, ուր կանանց ժողովից եկած հարսը սկեսրոջը որևէ բան բացատրելիս աչքի տակով նայում էր Ասյային, կարծես ուզում էր հարցնել. ճի՞շտ էր սերտել դասը: «Սկեսուրն էլ էր հարսին նայում. նա ն՛ուրախ էր, որ հարսը կուսակցության մարդ չէ, և՛ կասկածում էր՝ չլինի՞ վերջը ժողովներում շատ բան սովորի ու միտքը փոխի»:

Ակնհայտ է, որ եթե սկեսուրը միշտ մնալու էր իր կարծիքին, ապա հարսը շատ չանցած գնալու էր ընկեր Ասյայի ուղենշած ճանապարհով:

Բակունցն իր պատմվածքներում քննադատում է նաև հին գյուղի այնպիսի վատ սովորություններ, ինչպիսիք են հեքիմությունները, մանկահասակ տարիքում ամուսնությունները, սնահավատությունները, ամուսնու վայրենությունները, սարսափելի աղոտությունը... «...աչքացավ կա ու երեխաները արևքոռ ման են գալիս, աչքերը կարմրած, մի կեղտոտ շոր ճակատին» («Աքարում»): «Մեկ ծնվելիս են լողանում, մեկ էլ՝ մեռնելիս» («Գալուստի վիկր»):

Իսկ Մինա բիբին Էլյայի աչքի առաջ բացում էր «գյուղի հազարամյա գիրքը, որի յուրաքանչյուր էջը սոցիալության մի գոհի մարտրոսագիր էր, բռնակալ ամուսնու կրնկի տակ ընկած կնոջ տանջանքի նկարագրի կամ ծածուկ խեղդամահ արած մանուկների պատմություն»:

Միով բանիվ ներկայացնելով հայոց նահապետական գյուղը՝ Բակունցը պատկերում էր լավը և նրան անխաղաղորեն կապված վատը, ցույց տալիս գյուղի տգիտությունը, կեղտոտությունը, գյուղացու չարքաշ կյանքը, նորի բերած դրականը և միաժամանակ շեշտում, որ ինչքան էլ հին գյուղը կեղտոտ էր ու վատ կողմեր ուներ, միննույն է՝ նահապետական օրենքներով ապրող մարդիկ բարոյապես ավելի բարձր դիրքերում էին, քան երիտասարդ սերունդը:

Գրականություն

1. Սարգսյան Խ., Տասնամյակների միջով, Երևան, 1966:
2. Աղաբաբյան Ս., Ակսել Բակունց, Երևան, ՍՍՀ ԳԱ, Երևան, 1963:
3. Գասպարյան Դ., Ակսել Բակունց, Երևան, Ջանգակ-97, 2009:
4. Ակսել Բակունց, Երկեր 4 հատորով, հատոր 1, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1976:
5. Ակսել Բակունց, Երկեր 4 հատորով, հատոր 2, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1979:

ՀՏԴ 82.09(46)

Անահիտ Բագրատունյան
Երևանի պետական համալսարան

ԽՈՐԽԵ ԼՈՒԻՍ ԲՈՐԽԵՍ. ԿՅԱՆՔԻ և ՄԱՀՎԱՆ ՄԱՀՄՆԱԳԾԻՆ («Ալեֆ» ժողովածու)

Բանալի բառեր՝ Խորխե Լուիս Բորխես, լատինամերիկյան արձակ, Ալեֆ, մոգական ռեալիզմ, կյանքի և մահվան սահմանագիծ, գեղարվեստական գյուտ, պատմականություն

Ամփոփում

Աշխատանքը նվիրված է Խորխե Լուիս Բորխեսի «Ալեֆ» ժողովածուի մի քանի պատմվածքների քննությանը: Ժողովածուում գերակշռում են կյանքի և մահվան, նրանց հարաբերակցության թեմաները: Այս տեսանկյունից էլ մեկնարանվում են պատմվածքները՝ «Անմահը», «Մեռյալը», «Deutsches Requiem»-ը: Բացառություն է կազմում «Ալեֆը» պատմվածքը, որը դուրս է մնում դիտարկվող թեմայի շրջանակից: Այն վերլուծվում է որպես ծրագրային-գեղագիտական ստեղծագործություն:

Աշխատանքի նպատակն է՝ ցույց տալ արգենտինացի մեծ գրողի ստեղծագործության այժմեականությունը: Բորխեսի պատմվածքների քննությունը վկայում է, որ նրա առաջադրած գեղարվեստական խնդիրները այսօր էլ շարունակում են հուզել համայն մարդկությանը:

Анаит Багратунян
ЕГУ, факультет филологии

ХОРХЕ ЛУИС БОРХЕС. НА ГРАНИ ЖИЗНИ И СМЕРТИ (СБОРНИК «АЛЕФ»)

Ключевые слова: Хорхе Луис Борхес, латиноамериканская проза, Алеф, магический реализм, грань между жизнью и смертью, художественное открытие, историчность

Резюме

Данная работа посвящена анализу нескольких рассказов Хорхе Луис Борхеса из сборника "Алеф". В сборнике преобладают темы о жизни и смерти, об их соотношении. С этой точки зрения анализируются рассказы "Бессмертный", "Мертвец", "Deutsches Requiem". Исключение составляет рассказ "Алеф", который остается за рамками рассматриваемой темы. Он анализируется как программно-эстетическое произведение.

Цель работы: показать актуальность произведений великого аргентинского писателя. Анализ рассказов Борхеса свидетельствует о том, что художественные задачи, поставленные им, до сих пор продолжают волновать все человечество.

Anahit Bagratunyan
ESU, the Faculty of Philology

JORJE LUIS BORGES. ON THE VERGE OF LIFE AND DEATH (COLLECTION: "THE ALEPH")

Key words: Jorge Luis Borges, latino-american prose, Alef, magic realism, boundary between life and death, literal discovery, historicity.

Summary

*The research is dedicated to the examination of several short stories from the collection *The Aleph* by Jorge Luis Borges, The topics of life and death, the relationship between them are predominate. From this viewpoint the short stories *The Immortal*, *The Dead Man*, *Deatsches Requiem* are interpreted. The short story *The Aleph* is an exception as it goes beyond the scope of the research under consideration. It is analysed as a planned-aesthetic work.*

The aim of the research is to show the topicality of the eminent Argentine writer. The examination of Borges/ stories proves that the artistic problems set by him are still of interest and remain topical for the mankind.

Արգենտինացի արձակագիր Խորխե Լուիս Բորխեսը այն հազվագյուտ հեղինակներից է, որոնց ստեղծագործությունը դժվար է ամբողջությամբ տեղադրել գրական որևէ մեթոդի շրջանակներում: Բորխեսը պատկանում է լատինամերիկյան մեծ արձակի ներկայացուցիչների թվին, այն արձակի, որին քննադատությունը տվել է «մոգական ռեալիզմ» անվանումը: Ըստ էության, Բորխեսը մոգական ռեալիզմի ռահվիրաներից մեկն է, քանի որ նրա ստեղծագործելու առաջին տասնամյակներին դեռևս անհայտ անուններ էին լատինամերիկյան գրականության մյուս խոշոր վարպետները՝ Խուլիո Կորտասարը և Գաբրիել Գարսիա Մարկեսը:

Մոգական ռեալիզմը հատկանշվում էր նրանով, որ գրողը չէր բավարարվում առօրյա իրականության ուղղակի արտացոլմամբ: Նա իր հերոսների բնավորությունը աշխատում էր բացահայտել նաև ազգային ավանդույթների, միֆական վերհուշերի և զանազան այլ փոխառնչությունների մեջ: Այս գրելաձևը դառնում է մի տեսակ գեղարվեստական օրինաչափություն հարավամերիկացի լավագույն հեղինակների համար: Իսկապես, դժվար է պատկերացնել Մարկեսի կամ Կորտասարի երկերը սովորական կյանքային ընթացքով: Միֆականը, արտասովորը, ոչ աօրեականը հատկանշական են նաև Բորխեսի համար: Սակայն նրա պատմվածքներն ու էսսեներն անգամ շատ ավելի մեծ ընդգրկում ունեն: Ցանկացած նոր ստեղծագործության մեջ արգենտինացի արձակագիրը կարող է մի նոր գեղարվեստական գյուտ կատարել, մի նոր մոտեցում հանդես բերել: Նրա ստեղծագործության գաղտնիքների մի յուրահատուկ թարգման է «Ալեֆը» ժողովածուն (1949):

Ինչպես հայտնի է, Ալեֆ-ը հրեից այբուբենի առաջին տառն է: Սակայն Բորխեսը բոլորովին այլ նշանակություն է տալիս այդ անվանը: Ալեֆի իմաստը բացահայտվում է ժողովածուի վերջին՝ նույնանուն պատմվածքում:

Արդեն նշեցինք, որ Բորխեսի գեղարվեստական համակարգը շատ բազմատարր է և չի ենթարկվում ինչ-որ միասնական գեղագիտական օրինաչափության: Ի տարբերություն, ասենք, Գ. Գ. Մարկեսի՝ արգենտինացի հեղինակը շատ չի տրվում ազգային առասպելաբանությանը և գերբնական երևույթների նկարագրությանը (թեև, իհարկե, դրանք նույնպես առկա են նրա ստեղծագործություններում): Բորխեսը մեծ հակում ունի պատմության նկատմամբ: Կարելի է ասել, որ համաշխարհային պատմությունը նրա «թուլությունն» է: Միշտ չէ, որ պատմական փաստերը իսկապես պատմական իրողություններ են Բորխեսի գործերում: Երբեմն նա հորինում է պատմությունը և հերոսներին: Սակայն անգամ ոչ արժանահավատ դեպքերն ու դեմքերը Բորխեսի գրչի տակ դառնում են հավաստի երևույթներ և խորհելու տեղիք են տալիս: «Ալեֆը» ժողովածուում պատմությունը, պատմական ժամանակը առկա են անխտիր բոլոր պատմվածքներում: Պատմականության շնորհիվ Բորխեսի բազմաթիվ ստեղծագործություններ դիտվում են որպես էսսեներ, այսինքն՝ վավերական պատմություններ, թեև դրանք իրականում նույնպես գեղարվեստական երկեր են՝ պարզապես հղացված և մարմնավորված բորխեսյան յուրահատուկ ձեռագրով: Հարկ է նկատել նաև, որ պատմությունը Բորխեսը իմաստավորում է փիլիսոփայական և հոգեբանական երազներով: Նա ոչ թե վավերագրում է պատմությունը, այլ վավերագրում է պատմական իրողության թողած հետևանքները և ներգործությունը մարդկանց և նրանց հետագա ճակատագրերի վրա:

«Ալեֆը» ժողովածուն բացվում է «Անմահը» պատմվածքով: Այս ստեղծագործությունը միաժամանակ պատմական, փիլիսոփայական և ֆանտաստիկ բնույթ ունի: «Անմահը» պատմվածքի մեջ հեղինակը ուրվագծում է ողջ պատմվածաշարի գեղագիտական հիմնական միտումը: Մարդը մահկանացու է, սակայն նա միշտ էլ ձգտել է անմահության, և իր ձգտումների ճանապարհին հաճախ ոչնչացրել է իր նմաններին ու արյունով նվաճել փառք, իշխանություն և անմահ հիշատակ: Բորխեսի կարծիքով, մարդը իր ողջ կյանքի ընթացքում

կանգնած է կյանքի և մահվան սահմանագծին: Այդ սահմանագիծը խախտվում է կամ կյանքի բնական ընթացքով, կամ մարդկային կրքերի ու գաղափարների ողբերգական բախումներով: «Անմահը» պատմվածքը կյանքի և մահվան յուրօրինակ առնչության գեղարվեստական սկիզբն է...

Բորիսեսի պատմվածքը, ինչպես նրա ստեղծագործություններից շատ շատերը, փիլիսոփայական բարդ հյուսվածք ունի: Պատմվածքը միաժամանակ պարունակում է առասպելաբանական և պատմական տարրեր: Ստեղծագործության մեջ գործում են իրական հերոսներ, ներկայացվում են իրական-պատմական իրադարձություններ: Պատմվածքը սովորական պոեմ է չունի, ինչը հաստուկ է Բորիսեսի գրեթե բոլոր ստեղծագործություններին: Սակայն ընթերցողին օգնում են վավերագրական-իրական հղումները, որոնցով Բորիսեսը առաջնորդվել է իր գրական ողջ ճանապարհի ընթացքում:

Պատմվածքի մեջ հեղինակը մեզ հրամցնում է մի կորած ձեռագրի պատմություն, որը ունի հնավաճառ Կարտաֆիլիոս առաջարկում է մի դքսուհու: Այս պատմությունից մենք իմանում ենք, որ ստեղծագործության հերոսները՝ հռոմեական տրիբուն Ռուֆուսը, առասպելական Հումերոսը, տարիներ, նույնիսկ դարեր շարունակ փնտրել են անմահությունը, անմահ լինելու գաղտնիքը, հանդիպել բազմաթիվ արկածների: Սակայն այս պատմության մեջ կան բազմաթիվ խճողումներ, հատվածներ, որոնք պարզապես շեղում են ընթերցողին, և առաջանում է տարրընթերցում, այսինքն՝ մի ընկալումը փոխարինվում է մեկ այլ՝ հակադիր ընկալմամբ: Խորանայով այդ փոփոխական տեղաշարժերի ընթացքի մեջ՝ մենք կարծես թե մոտենում ենք ճշմարտությանը: Բորիսեսյան դժվարամարս տողերի արանքում մենք հայտնաբերում ենք հեղինակի ասելիքը: Կալտաֆիլիոսը այն հանրահայտ թափառական կամ հավերժական հրեան է (այլ անունով՝ Ագասֆեր), որի մասին բազմաթիվ գրական հուշարձաններ կան: Դրանցից բավականին հանրահայտ է 19-րդ դարի ֆրանսիացի վիպասան Էժեն Սյուի Թափառական հրեա՝ բազմահատոր վեպը (մի հատորն, ի դեպ, թարգմանել է Մ. Նալբանդյանը): Թափառական հրեան Քրիստոսի ժամանակներում ապրած սովորական մի քաղաքացի էր: Քրիստոսը անցում է այդ մարդու տան մոտով և ուզում է հենվել նրա կացարանին, մի փոքր հանգստանալ: Սակայն տանտերը թույլ չի տալիս: Աստծո որդին զգուշացնում է նրան, որ նա անպայման կպատժվի, և իսկապես այդպես էլ լինում է: Ըստ ավանդության՝ նա դառնում է թափառական ու անմահ, և նրա անմահությունը՝ տառապանքները, պիտի ավարտվեն Քրիստոսի երկրորդ գալստյանը: Այս թեման, իր մեջ ամփոփելով մարդու հանցանքի և պատժի գաղափարը, հետաքրքրել է մարդկությանը, արվեստագետներին, որի պատճառով բազմաթիվ անդրադարձեր կան այս թափառական հրեայի կերպարին: Փաստացի նույն կերպարին է անդրադառնում, գուցե անուղղակի, նաև Բորիսեսը: Պարզապես Բորիսեսի միտումը բոլորովին այլ է: Նա ամենին էլ ցանկություն չունի ևս մեկ անգամ ցույց տալու, որ իր անզգույշ արարքի համար այսպես դաժանորեն պատժվում է դեռ վաղնջական ժամանակներում ծնված մարդ արարածը: Նրա և Հումերոսի, նաև Ռուֆուսի, գուցե և ուրիշների՝ մահկանացու մարդկանց հետ ունեցած հակադրությամբ, գրողը փորձում է պարզել՝ ինչ է անմահությունը, և այդ անմահությունը ինչ է տալիս մարդուն, գուցե նրան իսկապես՝ ցանկալի հավերժություն է պարգևում: Այս հարցերն են հուզում Բորիսեսին: Տեքստային տարրընթերցումներից էլքը ցույց է տալիս հենց ինքը՝ հեղինակը: Եթե մենք նայում ենք միֆական տեսանկյունից, Կարտաֆիլիոսը, լինելով անմահ և թափառական, շատ բաների է ականատես եղել, և շատ բան տպավորվել է նրա հոգու մեջ, ժամանակի ընթացքում դարձել նրա էության մի մասը: Մի դեպքում իրեն Ռուֆուս է երևակայել, մեկ այլ դեպքում՝ հույն բանաստեղծ Հումերոս: Սակայն դժբախտաբար նա ոչ մեկն է եղել, ոչ էլ մյուսը: Եվ հոգեբանական այս նույնությունը, ուրիշների կաշվի մեջ մտնելը ինչքանով է նրան անմահացրել: Նա փորձում է իրեն վերագրել հանճարեղ Հումերոսի մեծ փառքը, այդ աննշան տրիբունի անկոտրում կամքը և քաջությունը, սակայն նրան չի հաջողվել վերածվել Հումերոսի, դառնալ մեծ բանաստեղծ, չի հաջողվել շարունակել քաջ զինվորականի ուղին: Բորիսեսը մի դաժան արտահայտությամբ ապացուցում է իր պատկերածի ճշմարտացիությունը. «Հյուսված, հողագույն դեմքով, մոխրագույն աչքերով ու մորուքով, բացառիկ չիժվող դիմագծերով մի մարդ էր: Սահուն և անգիտակցաբար օգտագործեց տարբեր լեզուներ, մի քանի բույսերի ընթացքում ֆրանսերենից անգլերենի և անգլերենից սալոնիկյան իսպաներենի ու Մակաոյի

պորտուգալերենի մի առեղծվածային համադրանքի անցավ»¹: Նա հազարամյակների, դարերի պատմության մեջ ասես տեսիլք լիներ: Մնում է պարզել, թե Կարտաֆիլիուսի միջնադարյան, սակայն իրական ընկալվող կերպարով ինչ է ուզում ասել Բորխեսը: Կարտաֆիլիուսը փորձել է փառքի ինչ-որ փշրանքներ հավաքել, և նման մարդիկ, ովքեր շփվում են, առնչվում են պատմության կերտողների հետ, ուզում են, որ այդ փառքի լույսը նաև իրենց վրա ընկնի, սակայն այդպես չի լինում: Եվ երբ պատմվածքի վերջում ասվում է, որ 1927թ.-ին նա արդեն մեռած էր, գուցե մեռած չէր իսկապես, բայց մեռած է մարդկության համար, որովհետև նա արժանահիշատակ ոչինչ չի արել: Եվ սա Բորխեսի ընկալումն է: Գրողը ձեռնոց է նետում դարեր շարունակ թափառական հրեային վերակենդանացնողներին: Իսկական անմահը պատմության մեջ հետք թողող Հումբոլտն է և նրա նման ուրիշ հազվագյուտ մահկանացուներ, որոնք, այո, կարող են քայլել նաև Կարտաֆիլիուսի կողքին, սակայն անգամ այդ ժամանակ նրանց փառքից ոչինչ չի հասնի անդամ, թեպետ և անմահ մարդուն: Գուցե այդ ձեռագիրը խառնողը հենց ինքը՝ Կարտաֆիլիուսն է, ով ինչ-որ կերպ ցանկանում է մնալ պատմության էջերում: Հեղինակը մի բան շատ ճիշտ է նկատում. եթե դու դարեր շարունակ, հավիտենական մենությունից տառապելով, անընդմեջ ապրես և անմահ լինելով հանդերձ՝ որպես մարդ ոչինչ չանես, քո անմահությունը գրոշի արժեք չի ունենա: Պատահական չէ, որ վերջում Բորխեսը գրում է. «Բառեր, մի կողմ նետված բառեր, խեղանդամ բառեր, ուրիշներին պատկանող բառեր, ահա այն խղճուկ ողորմությունը, որ նրան նետեցին հեռացող ակնթարթներն ու դարերը»²:

Այսինքն՝ որքան ուզում ես պատմությունը խմբագրիր, կարևորիր քո դերը պատմության մեջ, փորձիր գրչի միջոցով խլել ուրիշների արյամբ և մաքառումներով վաստակածը, միննույնն է, դրանք կլինեն ընդամենը բառեր՝ արժեքից զուրկ և ժամանակի հետ ոչնչացող:

«Ալեֆը» շարքի երկրորդ պատմվածքը «Մեռյալ»-ն է: Այն ոչ միայն վերնագրով, այլև ոճով և բովանդակությամբ հակադրվում է «Անմահը» պատմվածքին: «Մեռյալը» Բորխեսի հազվադեպ հանդիպող այն երկերից է, որոնք կայուն սյուժե ունեն, հստակ սկիզբ և ավարտ: Սակայն այս պատմվածքում նույնպես կան մանվածապատ, դժվարամարս հատվածներ: Ոճական առումով Բորխեսը գեղարվեստական նոր ոլորտներ է նվաճում: Այստեղ փիլիսոփայան իր տեղը զիջում է իրականությունը պարադոքսալ ցնցումներով բացահայտող սյուրռեալիստին: Հեղինակը երևակայության տեղ ընդհանրապես չի թողնում: Ընթերցողի առջև հառնում են անգույթ մարդիկ, որոնց առօրյան արյունն ու զենքն են, խավարն ու մուրթը: Էականն այն է, որ գրողը իրեն զգում է, ինչպես ձուկը ջրում, և ստեղծագործության թեման իրացնում է նույն վարպետությամբ: Մի կարևոր հանգամանք «մատնում է», որ պատմվածքը Բորխեսն է հեղինակել: Ստեղծագործության մեջ կան դրվագներ, որոնք էլ ամփոփում են հեղինակի հիմնական ասելիքը: Դրանք չընկալելու դեպքում գրական ստեղծագործությունը պարզապես չենք հասկանա: Նույնը մենք տեսանք նաև «Անմահը» պատմվածքում:

«Մեռյալ»-ում Բորխեսը պատկերում է պատանի արկածախնդիր Բենխամին Օտալորայի տխուր ճակատագիրը: Հեղինակը այս անգամ ևս չի զլանում հավատարիմ մնալ պատմականությանը. «1891 թվականին Բենխամին Օտալորան տասնինը տարեկան է: Նեղ ճակատով, մաքուր, անկեղծ աչքերով, ջլապին մի երիտասարդ է, դաշույնի դիպուկ մի հարված հայտնի է դարձնում նրա քաջությունը»³:

Այս քաջ երիտասարդը ծարավի է խելահեղ և հանդուգն արկածների: Եվ ճակատագիրն ինքն է նպաստում Օտալորայի սովորական կյանքի անսպասելի փոփոխությանը: Գիշերային մի կռվի ժամանակ նա մահից փրկում է հայտնի ավագակապետ Ասեվեդո Բանդեիրային: Դա նպաստում է նրան, որ Ասեվեդոն կովարած տղային վերցնում է իր ավագակախումբ: Այս պատմությունը արտաքուստ սովորական ընթացք է ստանում: Օտալորան փառասեր է, նա մեծամտանում է և կարծում է, որ ինքն է արժանի դառնալու ավագակապետ: Պատանուն հատկապես զայրացնում է այն, որ իրենց խմբապետը անհրապույր տեսք ունի, և պարզապես ստորացուցիչ է նրա ենթական լինելը: Բորխեսը ներկայացնում է նաև Ասեվեդոյի արտաքինը, և ուշադիր ընթերցողը տեսնում է այն, ինչը, ցավոք, չի նկատում նորաթուխ ավագակալը. «Ասեվեդո Բանդեիրան ուժեղ է երևում, բայց այնուամենայնիվ կուզիկի անբացատրելի

¹ Բորխես Խ.Լ., «Անմահը», Երևան, 1992, էջ 116:

² Բորխես Խ.Լ., «Անմահը», Երևան, 1992, էջ 130:

³ Բորխես Խ.Լ., «Մեռյալը», Երևան, 1992, էջ 131:

տպավորություն է թողնում, նրա դեմքում արտացոլվում են հրեան, սևամորթն ու հնդկացին, նրա լրջության մեջ երևում են կապիկն ու վագրը, դեմքի սպին նույնպես մի գարդ է, ինչպես նրա սև ու թավամազ բեղը»¹:

Միամիտ Օտալորան չի նկատում իր տիրոջ փորձառությունը, նենգությունը և ներքին հսկայական ուժը, ինչի պատճառով էլ ճակատագրական սխալներ է թույլ տալիս և հատուցում կյանքով: Նա հետամտում է Ասեվեդոյի կնոջը և նույնիսկ գիշեր անցկացնում նրա հետ: Անցնում է մի ամբողջ տարի, և ինքն իրենով հիացած երիտասարդը արդեն պատրաստվում է խլել ավագակապետի պաշտոնը: Խեղճ տղան գլխի չէր ընկնում, որ վաղուց արդեն դատապարտված էր մահվան, նույնիսկ այն բանից առաջ, երբ ոտնձգություն կատարեց Ասեվեդոյի կնոջ նկատմամբ:

Հեղինակը պարադոքսալ իրավիճակ է ստեղծում: Խմբապետի առողջությունը վատացել է, նա երկար ժամանակ միայն անունով է ավագակալմբի ղեկավարը, և իր պատանեկան եռանդով ավագակներին առաջնորդում է Օտալորան: Սակայն պարզվում է, որ նրա օրերը վաղուց հաշված են: Միայն կյանքի վերջին վայրկյաններին է Բենխամին Օտալորան գլխի ընկնում, որ ինքը դատապարտված էր մահվան հենց սկզբից. «Օտալորան մեռնելուց առաջ հասկանում է, որ սկզբից նեթ դավաճանել են իրեն, որ ի սկզբանե դատապարտել են մահվան, որ թույլ են տվել սերը, իշխանությունն ու հաղթանակը, որովհետև արդեն մեռած են համարել, որովհետև Բանդեիրայի համար ինքն արդեն մեռած է եղել»²:

«Մեռյալը» առաջին հայացքից դասական կանոններին բավարարող սյուժետային պատմվածք է: Սա, իհարկե, սխալ չէ: Սակայն պատմվածքը ունի նաև խորը ենթատեքստ, ունի թաքնված իմաստներ, որոնք ստիպում են ստեղծագործությունը վերընթերցել և այն էլ՝ ոչ մեկ անգամ: «Անմահը» պատմվածքի հետ լինելով հակադրության մեջ՝ «Մեռյալը» միաժամանակ որոշ առումով կամրջվում է այդ ստեղծագործությանը: Ինչ է ավագակապետի սին փառքը, որին ձգտում է պատանի Բենխամինը: Ոչինչ. սա է Բորխեսի պատասխանը: Իր մեծամտությամբ Օտալորան կանգնում է Կարտաֆիլիուսի կողքին: Ըստ էության, երկուսն էլ ձգտում են ուրիշների փառքի հաշվին իրենք էլ անմահանալ: Մեկի պատիժը հավերժական թափառումներն են, մյուսինը՝ ծաղիկ հասակում կյանքից զրկվելը:

Բորխեսը, անկասկած, կարեկցում է իր պատանի հերոսին, ով դրական մղումների դեպքում գուցեև արժանանար երկրային փառքի, սակայն ընտրեց բոլորովին այլ, կորստաբեր ուղի: Արգենտինացի մեծ գրողը ի վերջո ռեալիստ է և այդ պատճառով էլ չի մեղանշում կյանքի ճշմարտության հանդեպ:

«Ալեֆը» ժողովածուում կան ստեղծագործություններ, որոնք գրված են հոգեբանական ռեալիզմի մեթոդով («Deutsches Requiem», «Էմմա Ցունց», «Աստերիոնի տունը» և այլն): Համամարդկային արժեք է ներկայացնում «Deutsches Requiem» պատմվածքը: Այս ստեղծագործությունը իրական հիմք ունի: Օտտո Դիտրիխը իսկապես գոյություն է ունեցել և ծառայել է ֆաշիստներին: Հեղինակը որոշ պատմական փոփոխությամբ, ի դեմս Օտտո Դիտրիխի, կերտում է գերմանական նացիստի կերպարը:

Ֆաշիստների նկատմամբ Նյուրնբերգյան դատավարությունը տեղի ունեցավ 1946 թ.-ին: Բորխեսի «Ալեֆը» ստեղծվել է այդ տարիներին: Իր պատմվածքով արգենտինացի արձակագիրը դատապարտության խոսք է ասում ֆաշիզմ անունով համաշխարհային ժանտախտին: Նրա «Deutsches Requiem»-ը այսօր էլ արդիական է, քանի որ ազգայնամոլական մտածողությունը շարունակում է ահաբեկել ժամանակակից մարդկությանը:

Պատմվածքի հերոս Օտտո Դիտրիխ ցուր Լինդեն գտնվում է բանտում: Նա դատապարտված է մահվան: Օտտոն վերհիշում է իր կենսագրությունը. նրա կարիերան բուռն առաջընթաց է ունեցել, և Ցուր Լինդեն դարձել է նացիստական կուսակցության հայտնի դեմքերից մեկը: Օտտոն հիշում է նաև ոտքից իր սարսափելի վիրավորվելը: Հեղինակը իր հերոսի ֆիզիկական ցավը համեմատում է նրա հոգեկան ապրումների հետ: Օտտոն զարհուրելի ֆիզիկական տառապանքներ է ունեցել, սակայն մահվանից առաջ նա աններում է նրանց նկատմամբ, ովքեր նահատակվել են նրա և հիտլերական մյուս դահիճների ձեռքով: Մի

¹ Բորխես Խ.Լ., «Մեռյալը», Երևան, 1992, էջ 131:

² Բորխես Խ.Լ., «Մեռյալը», Երևան, 1992, էջ 136:

կողմից՝ նացիստ հերոսը սրտաճմլիկ տոնով ներկայացնում է իր ցավը, սակայն մյուս կողմից՝ կատարյալ անտարբերությամբ է վերհիշում իր զոհերին, հատկապես հրեաներին, ասես նրանք մանեկեններ էին և ոչ թե մարդիկ. «Աշխարհը մեռնում էր հրեականությունից և հրեականության այն հիվանդությունից, որ Հիսուսի հավատ է կոչվում. մենք սովորեցրինք բռնության ու սրի հավատը»¹:

Պատումը տարվում է հենց իր՝ հերոսի անունից: Բորիսը դառնում է Յուր Լինդե, և իր հերոսի բերանով ներկայացնում ոչ միայն նրա ճակատագիրը, այլև մինչև ուղնուծուծը նացիստ դարձած մարդու հոգեբանությունը: Հեղինակը բառիս բուն իմաստով մտնում է իր հերոսի կաշվի մեջ, նրա աչքերով նայում իրականությանը: Ընթերցողին ուղղակի ապշեցնում է, թե ինչպես է մահվան դատապարտված ոճրագործը արդարացնում իր և իր համախոհների սև գործը: Բարոյապես անկայուն մարդը նույնիսկ կարող է տարվել Յուր Լինդեի գաղափարներով. «Աշխարհին տիրել է անգութ մի ժամանակաշրջան: Մենք ենք պատրաստել, մենք, որ արդեն նրա զոհն ենք: Ի՞նչ կարևոր է, թո՞ղ Անգլիան լինի մուրճը, իսկ մենք՝ սալը: Կարևորն այն է, որ բռնությունը տիրի և ոչ թե քրիստոնեական երկչոտ ծառայամտությունը»²:

Մակայն պատմությունը արդեն դատապարտել է Օտտոյին և կենդանի մնացած բոլոր ֆաշիստներին: Բորիսը ինքն է դատավճիռ կարդում իր հերոսին, թեև փորձում է ճանաչել նրա էությունը: «Deutsches Requiem», նաև «Աստերիոնի տունը» և «Մպասում» պատմվածքները վկայում են, որ Բորիսը ոչ միայն մեծ փիլիսոփա է, պատմության հրաշալի գիտակ, այլև խորաթափանց հոգեբան:

«Ալեֆը» ժողովածուի պսակը համանուն պատմվածքն է, որով էլ եզրափակվում է պատմվածաշարը: Շատերը գտնում են, որ «Ալեֆն» ընդհանրապես Բորիսեի ողջ ստեղծագործության գլուխգործոցն է: Սա ժողովածուի միակ գործն է, որտեղ կյանքի և մահվան թեման չի շոշափվում: Բանն այն է, որ պատմվածքը զուտ գեղագիտական խնդիրների է անդրադառնում, թեև դրանք նույնպես էականորեն կապված են իրական կյանքի և պատմության հետ:

«Ալեֆը» պլոժետային հստակ զարգացում ունի, թեպետ ուշադիր աչքը կնկատի, որ պատմվածքը իրականում երկփեղկված է և բաղկացած է երկու հատվածից: Ստեղծագործությունը հագեցած է ֆանտաստիկ տարրերով, սակայն միաժամանակ վավերական հիմք ունի: Պատմվածքի հերոսներից մեկը հենց ինքը՝ Բորիսեն է: Նա էլ ներկայացնում է Ալեֆի հետ կապված տարօրինակ պատմությունը: Դեռևս երիտասարդ Բորիսը մեծ վիշտ է ապրում, երբ վախճանվում է նրա սիրո առարկան՝ երիտասարդ նկարչուհի Բեատրիս Վիտերբոն: 1929 թվականից (Բեատրիսի մահվանից) ի վեր նա տարին մեկ անգամ այցելում է սիրելի կնոջ տուն, սկսում շփվել Բեատրիսի զարմիկի՝ Կարլոս Արխենտինո Դաներիի հետ: Դաներին արվարձարանային մի գրադարանում ինչ-որ երկրորդական պաշտոն է վարում: Նա բոլորովին չի հրապուրում գրողին: Մակայն մի օր պարզվում է, որ սկսել է մի վիթխարածավալ պոեմ գրել՝ «Երկրագունդ» վերնագրով: Այդ անձայրաձիր ստեղծագործության մեջ Դաներին ներկայացնում է ամբողջ մոլորակը՝ իր բոլոր աշխարհագրական մանրամասնություններով և հին ու նոր պատմությամբ: Բորիսը այդ արտառոց պոեմից մի հատված հրամցնում է ընթերցողին.

Հույնի պես տեսել եմ քաղաքները, մարդկանց
Գործերը, օրերը՝ տարբեր լույսի տակ, սովր:
Ոչ դեպքերն եմ սրբագրում, ոչ էլ անունները,
Մակայն պատմածս ճամփորդություն է, բայց ...
Մեփական բնակարանի շուրջը:³

Կոչումով գրող հեղինակ-հերոսը ակնհայտորեն ձանձրանում է այս անվերջանալի տափակարանությունից: Շուտով Դաներին սկսում է նաև քննադատական ճառեր ասել, Բորիսեի համար «բացահայտում է» բանաստեղծական արվեստի գաղտնիքները: Այս տաղտկալի պատմությունը սկսում է հոգնեցնել և հեղինակին, և ընթերցողին, երբ մի անսպասելի երևույթ բոլորովին նոր ընթացք է տալիս ստեղծագործությանը:

¹ Բորիս Խ.Լ., «Deutsches Requiem», Երևան, 1992, էջ 167:

² Բորիս Խ.Լ., «Deutsches Requiem», Երևան, 1992, էջ 168:

³ Բորիս Խ.Լ., «Ալեֆը», Երևան, 1992, էջ 200:

Ինչ-որ նոր կառուցվող սրճարանի պատճառով Դաներիի հինավուրց տունը ուզում են հիմնահատակ քանդել: Նա հուզմունքից և զայրույթից նույնիսկ լաց է լինում: Դանիերին մի մեծ գաղտնիք է վստահում հեղինակ-հերոսին: Պարզվում է, որ նա գտել է Ալեֆը՝ մի թաքնված կետ իրենց տան ներքնահարկում, որն իր մեջ ամփոփում է համայն աշխարհը: Մա այն կետն էր, «ուր աշխարհի բոլոր վայրերն են՝ դիտված բոլոր հնարավոր անկյուններից»¹: Հենց սա է Բորխեսի գեղարվեստական համակարգը՝ ամեն ինչը, ամեն տեղ և յուրաքանչյուր ոք: Ալեֆը իսկապես որ մի անկրկնելի գյուտ է, որի շնորհիվ մենք հեղինակի հետ ճամփորդում ենք ժամանակների միջով, յուրացնում ենք համաաշխարհային մշակույթի և պատմության բազմաթիվ իրողություններ և հազվագյուտ մտքեր:

Ալեֆի հայտնաբերմամբ պատմվածքը նոր շարունակություն է ստանում: Արդեն պարզ է դառնում, որ այս ստեղծագործությունը գեղագիտական ծրագրային բնույթ ունի: Ալեֆը հրեից այբուբենի առաջին տառն է, որը Բորխեսի համար նշանակում է սկիզբ, ակունք:

«Ալեֆը» պատմվածքը ժողովածուի վերջին գործն է, որը կարդալուց հետո մի տեսակ տարակուսանքի մեջ ես ընկնում: Այն ոչ միայն անվանումով, այլև հեղինակի գեղագիտական համակարգի բացահայտման առումով պետք է որ ծողովածուի սկզբում լիներ: Գուցե պատահական է ստացվել կամ գուցե բորխեսյան անհաշիվ առեղծվածներից մեկն էլ սա է: «»Կամ էլ գրողը որոշել է ամենահամադամ կերակուրը վերջում մատուցել հոգեբանական լարված ճանապարհ անցած իր ընթերցողներին: Մեզ թվում է, որ Ալեֆի հայտնագործմամբ հեղինակը վերջնականապես ապացուցում է, որ կյանքային տարբեր իրավիճակներ, անգամ տարբեր ժամանակներ ներկայացնող երկերը կարող են տեղ գտնել գեղարվեստական նույն տարածության մեջ: Միայն անողոր ճակատագիրը չէ, որ միավորում է «Deutsches Requiem»-ի, «Անմահ»-ի և «Մեռյալ»-ի հերոսներին: Նրանք, ինչպես նաև մյուս պատմվածքների հերոսները, առօրեական մարդիկ չեն: Նրանք որևէ գաղափարի (գեղեցիկ կամ հրեշավոր) կրողներ են: Այդ գաղափարները նրանց առաջնորդում են դեպի մահ կամ դեպի անմահություն:

Մակայն վերոնշյալը ընդամենը մի կաթիլ է անծայրածիր օվկիանոսում: Ալեֆն իր մեջ ամփոփում է Բորխեսի ողջ ստեղծագործությունը՝ բազմապիսի և անհավանական թվացող կերպարներով, բազմաշերտ և բազմախորհուրդ փիլիսոփայությամբ, գեղարվեստական անընդմեջ անակնկալներով և գյուտերով: Ալեֆը ողջ աշխարհն է, ողջ տիեզերքը: Եվ այն ամբողջությամբ հասու է գրողի՝ սահմաններ չճանաչող երևակայությանը և գեղարվեստական հանճարին:

Գրականություն

1. Կարմեն Բալարտ Կարմոնա և Իրմա Մեսպեդ Բենիտեզ. «Պարբերաբար կրկնվող թեմաները բորխեսյան գրականության մեջ», Չիլի, Սանտիագո, 2010:
2. Դանիել Բալդերսթոն. «Կոնտեքստից դու րս: Պատմական առնչությունը և իրականության արտահայտումը Բորխեսի մոտ», Արգենտինա, Ռոսարիո, 1996:
3. Խուլիո Վոսկոբոինիկ. «Ալեֆ՝ի հոգին», Արգենտինա, Բուենոս Այրես, 1996:
4. Անա Տիստերա. «Բորխեսը և հնարավոր աշխարհները (1975-1985)», Բուսանիա, Կորդոբա, 2005:
5. Կարմեն Բալարտ Կարմոնա և Իրմա Մեսպեդ Բենիտեզ. Պատմողական կառուցվածքի բանալիները. Մոպասանից մինչև Բորխես, Չիլի, Սանտիագո, 1998

¹ Բորխես Խ.Լ., «Ալեֆը», Երևան, 1992, էջ 205:

ՀՏԴ82.09

Լիլիթ Հարությունյան
ԵՊՀ

**ԲԵՐՏՈԼԴ ԲՐԵՒՏԻ «ԿՈՒՐԱԺ ՄԱՅՐԻԿ» ՊԻԵՍԸ ԵՎ ՊԱՏԵՐԱԳՄԻ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Բանալի բառեր. *Բերտոլդ Բրեխտ, Երեսնամյա պատերազմ, Գերմանիա, Կուրաժ մայրիկ, էպիկական թատրոն,*

Ամփոփում

Գերմանացի դրամատուրգ Բերտոլդ Բրեխտի տեսությունները, ինչպես նաև նրա քաղաքական հայացքները միջոտ քննարկման ենթակա են եղել: Պատերազմի հակահումանիստական գաղափարներին դեմ գրված ստեղծագործություններից է նաև իր «Կուրաժ մայրիկը» պիեսը, որը մինչ օրս էլ չի կորցրել իր արդիականությունը, քանի որ այսօր աշխարհում դեռևս շարունակվում են պատերազմները: Մեր ուսումնասիրության գլխավոր նպատակն է ներկայացնել պատերազմի մեկնաբանությունը Բ.Բրեխտի «Կուրաժ մայրիկը» պիեսում: Պատերազմը կոմերցիոն պայքար է, պատերազմում չկան սրբություններ, բարոյականությունը տեղ չունի այնտեղ, իսկ կրոնի համար մղվող պատերազմում հոգևորականի կերպարն արժեզրկվում է: Ահա այն հիմնական գաղափարները, որոնց շուրջ հեղինակը ստեղծել է իր պիեսը:

Այսպիսով՝ պիեսը քննության ենթարկելով տարբեր հայեցակետերից և համախմբելով Բրեխտի մտածողության առանձնահատկությունները՝ կփորձենք ի վերջո լուսաբանել հեղինակի գլխավոր նպատակը՝ պատերազմի հետևանքները մարդկային հասարակության վրա:

Լիլիթ Արությունյան

ԵԳՄ, ֆակուլտետ փիլոլոգիայի

ПЬЕСА БЕРТОЛДА БРЕХТА <<МАМА КУРАЖ>> И КОММЕНТАРИИ ВОЙНЫ

Ключевые слова: *Бертолд Брехт, Тридцатилетняя война, Германия, Мама Кураж, Эпический театр.*

Резюме

Разные теории а также политические взгляды немецкого драматурга Бертольда Брехта всегда вызывали бурные дискуссии. Одна из своих пьес написанная против антигуманитических идей это произведение "Мамаша Кураж и ее дети", которое до сих пор не потеряло свою актуальность, так как в современном мире войны еще продолжают. Главная цель нашего исследования представить интерпретации войны в пьесе Бертольда Брехта. Война- это коммерческая борьба, на войне нет святых, там нет места для морали, а в религиозной войне образ священников обесценивался... Вот те основные идеи, с которыми автор создал свою пьесу. Таким образом, изучив различные аспекты пьесы и объединив

особенности мышления Брехта, в конце концов попробуем показать основную цель автора: последствия войны в человеческом обществе.

Lilit Harutunyan

ESU, the Faculty of Philology

THE PLAY OF BERTOLT BRECHT " MOTHER COURAGE" AND COMMENTS OVER THE WAR

Key words: Bertolt Brecht, 30 year war, Germany, Mother Courage, epic theatre.

Summary

The theories as well as political views of the German playwright Bertolt Brecht have always been under discussion. "Mother Courage and Her Children" is one of his works reflecting the inhuman notions of the war, which still keeps its modernity in as much as wars are yet going on. The aim of our research is to introduce the interpretation of the war within "Mother Courage". War is a commercial struggle, where there is no sacredness, there is no place for morality and even the image of clergyman devalues during the war repealed for religion. Here are the main ideas around which the author has written his work. So, examining the play from different points and joining together the peculiarities of Brecht's thinking, we shall try to enlighten the main purpose of the dramaturg, that is the consequences of the war on the human society.

Գերմանացի դրամատուրգ Բերտոլդ Բրեխտի «Կուրած մայրիկը» պիեսը հեղինակի էպիկական թատրոնի գլխավոր ձեռքբերումներից է: Պիեսում ներկայացվում է Երեսնամյա պատերազմը և նրա թռուրտում հայտնված մի ընտանիքի պատմություն, որտեղ Կուրած մայրիկը անդամահատ Գերմանիայի խորհրդանիշն է: Այնինչ իրականում պիեսում հեղինակը չի սահմանափակվում 20-րդ դարի Գերմանիայի պատմության շրջանակներով. Կուրած մայրիկի ճակատագիրն իր կերպարով խիստ նախագուշացման կոչ է բուրդ նրանց, ովքեր պատերազմները դիտարկում են որպես հարստանալու միջոց:

Բրեխտի համար պիեսի ստեղծման աղբյուր է հանդիսացել 17-րդ դարի հեղինակ Հանս Յակոբ Բրիստոֆել ֆոն Գրիմմեյսհաուզենի (1621-1676) «Խաբեբա և տխրահռչակ թափառաշրջիկ Կուրածի հանգամանակից և զարմանալի կյանքը պատմությունը» ("Ausführliche und wunderseltame Lebensbeschreibung der Erzbetrügerin und Landstorzerin Courage" - 1670): Այստեղ Գրիմմեյսհաուզենն ընթերցողին ներկայացնում է Երեսնամյա պատերազմի իրադարձությունները, որոնց մասնակիցն անձամբ է եղել 1635-1657թթ.¹:

Սակայն Բրեխտը, Երեսնամյա պատերազմն ընտրելով դեպքերի զարգացման համար պատմական նախահիմք, պիեսի գլխավոր ասելիքը տանում է այլ ուղղությամբ: Իրականում նա ցույց է տալիս թե ինչքան կործանարար են յուրաքանչյուր պատերազմի հետևանքները: Հավատքի համար պատերազմի օրինակով Բրեխտը ցանկանում է ընթերցողին պիեսի էության խորքերը տանել ու խորհել նաև կրոնի բացասական կողմերի մասին, ինչը նրա էպիկական թատրոնի գլխավոր նպատակներից մեկն է. հանդիսատեսին ստիպել մտորել, խորհել:

Խոսելով Երեսնամյա պատերազմի մասին հարկ է նշել նաև, որ մարդկության պատմության ընթացքում հավատի համար մղված մեծագույն պատերազմներից մեկն էր: Սակայն ի վերջո այն վերածվեց Եվրոպային տիրելու համար զավթողական պատերազմի և կորցրեց իր կրոնական բնույթը՝ ժողովրդի համար դառնալով մի չարագույն աղետ, քանի որ պատերազմը պետք էր միայն երկրի ղեկավարությանը, իսկ հավատը պարզապես շարժառիթ էր:

Պիեսում, երբ հայտնվում է Կուրած մայրիկն իր առևտրային գործունեությամբ, պատերազմն արդեն 6 տարի է, ինչ սկսվել էր, այսինքն՝ մարդկանց համար այդ ամենը նույնիսկ սովորական, առօրեական էր դարձել և սկսել էր ավելի շատ կենցաղային բնույթ կրել: Միգուցե հենց սա էր պատճառը, որով բացատրում է հեղինակը Կուրած մայրիկի անտարբերությունը դեպի իր սրբությունը՝ դեպի իր զավակները: Ֆիրլինգը բացականչում է. «Վերջ, ժամանակ չունեն, գնացի նք, պատերազմն ամեն օր չի լինում. . . »:

Պատերազմի հիմքում հավատի դրդապատճառների ձևական բնույթն արտացոլվում է զինվորական հոգևորականի կերպարում, ով պարադոքսային կերպով հավատի համար մղվող պատերազմում կարծես երկրորդական, անզամ «անպետք» հերոսի է վերածվել: Հոգևորականը

¹ Бертольт Брехт. Театр. Пьесы. Статьи. Высказывания. В пяти томах. Т. 3, М., Искусство, 1964

չունի ոչ մի զբաղմունք, քանի որ նրա հոգևոր ճառերը ոչ մեկին չի հետաքրքրում և նրան ոչ-ոք չի լսում: Եվ երբ նշում է, որ պատերազմում զոհվելը երջանկություն է, որովհետև հավատի համար է մղված, Կուրաժը նրան պատասխանում է. «Այո՛, հավատի համար մղված պատերազմ, որտեղ մորթում և թալանում են.»։ Եվ իսկապես, այս պատերազմում արժեզրկված է կրոնի և հավատի գաղափարը: Ուստի հոգևորականն այլևս չի պնդում իրեն որ չի փորձում այլևս բարոյականության դասեր տալ պատերազմով զբաղված իր շրջապատին: Միայն Էյլիֆի ձերբակալության տեսարանում է, որ փորձում է որպես հոգևորական դրսևորել իրեն, երբ հետևում է նրան՝ զոհն հոգու հանգստության և փրկության համար աղոթելու:

Պիեռի զարգացումներին մտովի հետևելիս թվում է, թե ընթերցողին ներկայացվում են պատերազմի առանձին դրվագներ, սակայն պատերազմն այս պիեսում ամենուր է: Նրանից չի խուսափում և ոչ ոք: Սակայն յուրաքանչյուր հերոս յուրովի է վերապրում և իր հարմարվողականությունը դրսևորում պատմական դեպքերին: Կուրաժը փնտրում էր միմիայն գումար աշխատելու միջոցներ, Էյլիֆը և Շվեյցարկասը պատերազմն ընկալում էին փառքի և բարձր պաշտոնի հասնելու միջոց: Իսկ խոհարար Պիտերի ակնկալիքները պատերազմից նման էին Կուրաժին, որովհետև վերջինիս նման էլ չէր ուզում պատերազմի ավարտը, քանի որ եթե չլիներ պատերազմ, այլևս խոհարարներ պետք չէին գա, չէ՞ որ պատրաստելու ոչինչ չէր լինի:

Հեղինակը, գլխավոր հերոսուհուն ընտրելով իգական սեռի ներկայացուցիչներից, փորձում է ցույց տալ պատերազմի հակադրություններն ու անհամատեղելիությունները...կին և պատերազմ, երեխաներ, ընտանիք, սակայն բարոյական արժեքների բացակայություն, ինչն ապացուցում է ոչ միայն երեխաներից յուրաքանչյուրի տարբեր հայրեր ունենալու փաստը, այլ նաև այն կուրացնող հաշվենկատությունը, որը ձեռք էր բերել Կուրաժ մայրիկը պատերազմին զուգընթաց:

Հատկանշական է նաև անդրադառնալ այն փաստին, որ Բրեխտն իր պիեսն ավարտել է 1939 թվականի աշնանը, երբ Եվրոպայում արդեն սկսվում էր Երկրորդ համաշխարհային պատերազմը: Դրամատուրգը հետագայում խոստովանել է. «Երբ ես գրում էի, ինձ թվում էր, թե որոշ մեծ քաղաքների բեմերից ողբերգական նախազգուշացում էր հնչում, նախազգուշացում այն մասին, որ ով ուզեր սատանայի հետ նախաճաշել, իր համար երկար գող պիտի պահեր: Միգուցե ես, այդ ամենն անելով, նաև միամտություն եմ ցուցաբերել, բայց կարծում եմ, որ միամիտ լինելն ամոթ է: Ներկայացումները, որոնց մասին ես երագում էի, չկայացան: Գրողները չեն կարող գրել կառավարություններին հատուկ արագությամբ, ինչպես պատերազմներ են հայտարարում: Քանի որ ստեղծագործելու համար պետք է մտածել: Իսկ թատրոնները շատ շուտ ընկան խոշոր ավազակների ձեռքը: «Կուրաժ մայրիկը և նրա երեխաները» ուշացավ¹:

Անկասկած, Աննա Ֆիրլինգը պիեսում առանցքային, գլխավոր հերոսն է, սակայն ամենահակասական կերպարն է: Աննա Ֆիրլինգը մի մարկիտանուհի է, որին վերանվանել են Կուրաժ (գերմ. Courage – համարձակություն):

Ինչպես նաև պետք է ուշադրության արժանացնենք նրա անվանման թարգմանությունը, որը հայերենում և շատ այլ լեզուներում ստանում է մի փոքր բացասական իմաստավորում և բացի «համարձակություն, սրտապնդություն» իմաստից՝ նաև բնորոշվում է որպես «անկաշկանդություն, անպարկեշտություն»²:

Պիեսում Կուրաժը պատահաբար չի ասում. «Աղքատ մարդիկ չեն կարող լինել առանց *կուրաժի...*», քանի որ տիրող իրավիճակում առանց համարձակության, քաջության, լավատեսության միևնույն ժամանակ առանց նախանձախնդրության ու հանդգնության հնարավոր չէր լինի գոյատևել:

¹ "Hans Bunge, Brecht im zweiten Weltkrieg. -"Neue Deutsche Literatur", հոդված, 1962, N 3, S. 46-47

² Ա. Պ. Հայրապետյան, Օտար բառերի առձեռն բառարան, Եր., 2011

Ընթերցողին անընդհատ լուրջ խորհելու տեղիք է տալիս Կուրաժի կերպարը: Ամբողջ պիեսն ասես գրված լինի խրատական առածների ձևով, որտեղ հեղինակը քննադատում է մի կողմից նրանց, ում պատճառով պատերազմներ են սկսվում, մյուս կողմից նրանց, ովքեր փորձում են այդ պատերազմից ամեն կերպ սեփական շահադիտական նպատակները հետապնդել: Եվ ահա վերջինիս վառ ներկայացուցիչը Կուրաժն է: Նա հույս ունի իրեն և երխաներին կերակրել պատերազմի և առավել ևս զինվորականների հաշվին, քանի որ ինչպես պիեսում է նշվում. «Ի՛նչ պատերազմ առանց զինվորների. . .»: Եվ սկզբնապես նա հոգում է իր գործի «արդյունավետության» համար՝ հաշվարկելով, թե երբ է ավելի նախընտրելի և ձեռնտու վաճառել ապրանքները և ինչ քանակությամբ ռազմական իրեր են պետք գնել: Կուրաժի ամբողջ մտքերը միայն այս հաշվարկների մասին են, երբ պատերազմն արդեն խլում է նրա երեխաներին: Կուրաժ մայրիկի ճակատագրական սխալն էլ իր կողքին տեղի ունեցող իրադարձությունները ժամանակին չհասկանալու մեջ է: Բրեխտի պիեսը սովորեցնում է հասկանալ իրականության մեջ տեղի ունեցող դեպքերի սոցիալական նշանակությունը, այլապես յուրաքանչյուր մարդ անձամբ կարող է դառնալ որևէ մեղսագործության մասնակից կամ դրա զոհը, ինչը տեղի ունեցավ Կուրաժ մայրիկի հետ իր զավակներին կորցնելիս:

Տելեֆեելի պատահաբար արտահայտած միտքը դառնում է մարգարեություն, որը միգուցե արտահայտում էր նաև հենց Բրեխտի կարծիքը. «Պատերազմով ապրել ցանկացողը դրա համար պետք է վճարի»:

Մարկիտանուհին, ով բավականին իմաստացել է կյանքի փորձով, իր դարի իրադարձություններից շատերին ակնատես է եղել, մի կին է, ով ունի իր ընտանիքը, երեք զավակների մայր է, ով ամեն կերպ ջանք չի խնայում իր զավակներին հեռու պահել պատերազմից: Բայց ինչքան էլ տարօրինակ է, ինքն անձամբ է առաջ շարժվում դեպի այդ պատերազմական գործողությունները: Նա տխրում է, երբ խաղաղություն է տիրում և ուրախանում, երբ կրկին պատերազմ է սկսվում: Հերոսուհու բարձրաձայն մտորումներից մեկի ժամանակ հնչում է այն միտքը, որ պատերազմը անիմաստ սպանդանոց է: Փաստորեն, նա գիտակցում է իսկապես պատերազմի ահռելիությունը, որ ամեն պահին իր ճանապարհին է դուրս գալիս: «Իմ երեխաներին թույլ չեմ տա զինվորագրվել», - բացականչում է նա՝ ի պատասխան զինվորագրողների խնդրանքներին: Այստեղ ևս մեկ հակասություն. նա չի ուզում իր երեխաներին պատերազմում կռվել, փորձում է նրանց պատերազմից պաշտպանել, սակայն անձամբ է նրա ճանապարհին ուղղվում: Քանզի նրան այդ պատերազմ կոչվածը օդի ու ջրի նման անհրաժեշտ է: Քանի որ պատերազմը միակ միջոցն է գոյությունը պահպանելու: Կուրաժ մայրիկն առևտրով է զբաղվում՝ ուղեկցելով ռազմական շարապանը: Եվ նրա երեխաներն էլ սկզբնապես լուռ ենթարկվում են նրան, սակայն տղաները շատ շուտով որոշում են փառքի հետևից գնալ:

Կուրաժի ոչ այնքան իմաստուն երգերում աշխարհի դրվածքի մասին շատ ճշմարտացի մտքեր կան. «Հե՛յ հրամանատար ր, դադարի հրաման տու ր, զինվորներիդ մասին հոգ տար: Կռվից չես ուշանա, բայց նախ և առաջ թող հետևակդ իր կոշիկները փոխի: Հրացանների կրակոցների տակ ոջիլներին կերակրելը, ապրելն ու փոշու վերածվելը մարդկանց ավելի հաճելի կլինի, եթե գոնե նոր կոշիկներով լինեն: Հե՛յ, քրիստոնյանե՛ր, սառույցը հալվում է, մեռածները քնել են մթության մեջ. Վե՛ր կացեք, վե՛ր կացեք, ժամն է արշավի բոլոր նրանց համար, ովքեր դեռ ապրում ու շնչում են»: Ի վերջո հասկանալի է դառնում, որ նա պատերազմի այս ձոնը երգում է՝ միայն իր ապրանքը վաճառելու նպատակով: Բայց նա նաև խոստովանում է, որ չի սիրում պատերազմ, «պատերազմն էլ առանձնակիորեն իրեն չի սիրում»: Եվ այս խոսքերում արտացոլում ու ի հայտ է բերում իր գոյության ցավալի գիտակցումը:

Պիեսի սկզբում խաչերով գուշակությունն իր պատմության ողբերգական ավարտի հստակ կանխագագցումն է: Պատերազմն այն խաչն է, որ կրում է Աննա Ֆիրլինգը՝ խաչը, որը իր բոլոր երեխաների և անգամ իր կյանքի վրա խաչ քաշեց:

Կուրաժ մայրիկը մեկ այլ տեսանկյունից նաև փիլիսոփա է: Եվ հենց գլխավոր հերոսուհու շուրթերից են հնչում քաղաքականության մասին համոզմունքները, ազգի կարևորության գաղափարախոսությունները (ավելի կոնկրետ՝ նրա անգործության և կրոնա-քաղաքական հարցերի վերաբերյալ անտարբերությունը), կյանքի փիլիսոփայությունը, որը նա սովորեցնում է իր երեխաներին: Հաճախ այդ խոսքերի հետևում թաքնված են հենց Բրեխտի

սեփական մտքերը մարդկային հասարակության դասավորվածության մասին: Կուրաժի հետևյալ երգերից մեկը դրա ապացույցն է. «Կար մի ժամանակ, որ ես անմեղ էի, մարդկային ցեղին նայում էի վերից, չգիտեի ինչ ասել է «կես», չգիտեի, թե ինչ էր նշանակում «փոխզիջում»: Բայց և տարին էլ այնքան կարճ չէ, ստիպված եղա ինչ-որ բան գոհել, այդժամ արդեն ծնկի էի եկել...»¹:

Պիեան ընթերցելիս բոլորը այն կարծիքն են հիմնականում ունենում, որ Կուրաժն անհոգ ու անսիրտ կնոջ կերպար է, սակայն նա նախ և առաջ մայր է, ով տառապում է արտաքին աշխարհի հակասություններից և իր գոյության ողբերգականությունից: Մեր կարծիքով՝ Կուրաժին չի կարելի ո՛չ դրական, ո՛չ բացասական կերպար համարել: Նա մի համարձակ մարկիտանուհու կերպար է, որը ,պիեսի զարգացմանը զուգահեռ ավելի ու ավելի խղճալի է դառնում:

Երեխաների կերպարներից առանձնակիորեն տարբերվում է Կատրինը, քանզի Շվեյցարկասը և Էյլիֆը ինչքան էլ ողբերգական վախճան ունեցան, սակայն նրանք պատերազմի մեջ փառքի հասնելու ձգտումներով օժտված կերպարներ էին, ինչը բնորոշ էր տվյալ ժամանակի զինվորներին: Կուրաժը նույնպես սկզբում դեմ է դուրս գալիս որդիներին, սակայն հասկանում է, որ նրանց էությունն է այդպիսին: Անգամ նմանեցնում է հայրերի բնավորություններին:

Եվ իրականում միակ տարբերվող և առանձնահատուկ երեխան Կատրինն է, ով իր համրությամբ, երբեմն մոր համար ուսերին բեռ էր թվում: Կուրաժը հաճախ նրա մասին ասում էր. «Իսկ աղջիկս մի դատարկ տեղ է»: Սակայն հենց այդ աղջիկն էր, որ կարողացավ մորը ինչ-որ բանում երբևէ համոզել, երբ օգնում էր կարիքավոր գյուղին:

Կատրինը և՛ իր մոր, և՛ եղբայրների, և՛ ողջ հասարակությանը հակադրվող բարության մարմնավորումն է: Նա կարողանում է ոչ միայն մոր հաշվենկատության դեմ դուրս գալով անվճար օգնել մի ամբողջ գյուղի, այլև վիրակապեր կապելով ու իրենց ունեցած սպիտակեղենի որոշ մաս բնակիչներին «նվիրաբերելով»: Նա անգամ իր կյանքի գնով մեկ այլ բնակավայր է փրկում՝ հարձակման մասին համառորեն թմբուկի արձագանքներով տեղեկացնելով: Կատրինը հեղինակի ռոմանտիկական մտածելակերպի արդյունքն է: Սակայն Կատրինի կերպարով նաև հեղինակը ցույց է տալիս, որ նրա նման բարի կերպարները պատերազմում տեղ չունեն: Եվ ուշ թե շուտ մի օր նա դուրս կմնար այդ պայքարից:

Պիեսում կարևոր տեղ ունի նաև բեռնասայլը, որը ոչ թե լոկ մի բեռներով ծանրացած սայլ է, այլ մինչև անգամ կարելի է նրան որպես կերպար ընկալել: Առաջին անգամ մենք բեռնասայլը նկատում ենք առաջին տեսարանում, երբ ֆելդֆերելը և զինվորագրողը նկատում են Կուրաժին: Հետո Կուրաժին տեսնում ենք բեռնասայլով տարբեր երկրներով անցնելիս՝ մեկ Լեհաստանով, մեկ Բավարիայով, հետո՝ Իտալիայով: Սակայն ոչինչ չի փոխվում. նորից Կուրաժն իր բեռնասայլով է, միայն թե պատերազմը հետզհետե տանում է նրա զավակներին: Բեռնասայլն անգամ նրա երեխաների կորստի լուռ վկան է դառնում: Վերջում Կուրաժը մնում է միայնակ բեռնասայլի հետ, այլևս չկա այն քաշող և տանող որևէ մեկը: Այստեղ արդեն բեռնասայլը խորհրդանշում է նրա ողջ կյանքն ու անցած ճանապարհը:

Գրականություն

1. Брехт Б. Театр: Пьесы. Статьи. Высказывания: В 5 т. М.: Искусство, 1965. Т. 5/1 /
2. Б.Брехт Театр. Пьесы. Статьи. Высказывания. «Мамаша Кураж», М., 1964
3. Бертольт Брехт. Театр. Пьесы. Статьи. Высказывания. В пяти томах. Т. 3, М., Искусство, 1964
4. Волгина А. А. Бертольт Брехт: Биобиблиографический указатель. М., 1969
5. И. Фрадкина «Художественная литература», М., 1972
6. Кацева Е., Книнович Е. «Б. Брехт о литературе», М., 1977
7. Ключев В. Г., «Б. Брехт — новатор театра», М., 1961
8. Сурков Е. «Бертольт Брехт. Театр 5/I, 5/II», М., 1965

¹ И. Фрадкина «Художественная литература», М., 1972

ՀՏԴ 82.09

Արմինե Մարկոսյան
ԵՊՀ, Ռոմանագերմանական բանասիրության
Ֆակուլտետ, բակալավրի ուսանող,
Գիտ. Ղեկավար՝ Բ.Գ.Թ. ասիստենտ Ս. Գալստյան
Էլ. փոստ՝ markosyanarmine@yandex.com

**ՄԱՐԴՈՒ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱԿԱՏԱԳՐԻ ԹԵՄԱՆ ՊԵՐՈՆ ԿԱԼԴԵՐՈՆԻ
«ԿՅԱՆՔԸ ԵՐԱԶ Է» ՊՈԵՄՈՒՄ**

Բանալի բառեր՝ Պեդրո Կալդերոն, բարոկկոյի գրականություն, ազատություն, ճակատագիր, հաղթանակ, կենդանական կիրք, իդեալական ղեկավար

Ամփոփում

Աշխատանքը նվիրված է բարոկկոյի շրջանի իսպանացի հայտնի գրող Պեդրո Կալդերոն դե լա Բարկայի «Կյանքը երազ է» կրոնափիլիսոփայական դրամայում մարդու ազատության և ճակատագրի քննությանը: Վերոնշյալ խնդիրը Կալդերոնն արծարծում է կրոնական և աշխարհիկ տեսանկյուններից: Աշխատանքի նպատակն է ցույց տալ իսպանացի գրողի՝ 17-րդ դարում բարձրացրած խնդրի արդիականությունը նաև 21-րդ դարում: Մարդու ազատության և ճակատագրի հարցը բոլոր դարերում գրողներին մշտապես հուզող հարցերից է:

Armine Markosyan

ESU, the Faculty of Romo-Germanic Philology, Baccalaureate

Supervisor: Ph.D S. Galstyan

E-mail: markosyanarmine@yandex.com

THE TOPIC OF FREEDOM AND DESTINY IN PEDRO CALDERON'S POEM LIFE IS A DREAM

Key words: *Pedro Calderon, Literature of barocco, freedom, destiny, victory, animal passion, ideal ruler*

Summary

The following research is the examination of human freedom and destiny in the religious-philosophical drama of the famous Spanish Baroque writer Pedro Calderon de la Barca Life Is a Dream. Calderon discusses the above-mentioned problem from religious and secular perspectives.

The aim of the paper is to show that the problem raised in the 17th century is topical in the 21st century. The problem of the freedom of man and his destiny has always interested writers in different ages.

Армине Маркосян

ЕГУ, Романогерманский факультет, бакалавриат

Մագ. քաղ. գիտ. թեզ, ասիստենտ Ս. Գալստյան
 Էլ. ասիստենտ: markosyanarmine@yandex.com

ТЕМА ЧЕЛОВЕЧЕСКОЙ СВОБОДЫ И СУДЬБЫ В ПОЕМЕ ПЕДРО КАЛЬДЕРОНА ЖИЗНЬ СОН

Ключевые слова: Педро Кальдерон, барокко литература, свобода, судьба, победа, дикая страсть, идеальный руководитель

Резюме

Работа посвящена исследованию человеческой свободы и судьбы религиозно-философской драмы "Жизнь сон" известного писателя испанского барокко Педро Кальдерона де ла Барка. Вышеуказанная проблема Кальдерон развивает из религиозных и светских аспектов. Цель работы показать актуальность повышенной проблемы испанского писателя 17 ого века в 21 веке. Проблема человеческой свободы и судьбы вопрос, который обеспокоил писателей всех веков.

Պեդրո Կալդերոնը դե լա Բարկան բարոկկոյի շրջանի խոշորագույն ներկայացուցիչներից է իսպանական ոսկեդարյան գրականության մեջ: Նրա գրչին է պատկանում «Կյանքը երազ է» փիլիսոփայական դրաման, որի գլխավոր թեման մարդ արարածի ազատության, իր սեփական ճակատագիրը տնօրինելու հարցն է:

Եթե հակիրճ ներկայացնելու լինենք սյուժեն, կունենանք հետևյալ պատկերը. Լեհաստանի Բասիլիոն արքան իր որդի Սեխիսմունդոյին ծնված օրվանից պահում է աշտարակում՝ հավատալով այն գուշակությանը, որ ազատության մեջ գտնվելու դեպքում արքայազնը կկործանի իր հորը: Եվ ահա տարիներ անց՝ Բասիլիոն, ցանկանալով համոզվել գուշակության ճշմարտացիության մեջ, Սեխիսմունդոյին քնած վիճակում տեղափոխում է պալատ, պատմում նրա ով լինելը, և երբ նորահայտ արքայազնը ագրեսիվ պահվածք է դրսևորում, նրան կրկին քնած ժամանակ հետ են տանում աշտարակ և հայտնում, որ ամենը երազ է եղել, նա երբեք էլ պալատում չի եղել: Սեխիսմունդոն գալիս է այն եզրակացության, որ երազ է ոչ միայն իր տեսածը, այլև մեր ամբողջ կյանքը, ուստի միակ բանը, որ մնում է անելու, բարությունն է, քանզի միայն դա է իրական և մնայուն: Կալդերոնը բարձրացնում է աստվածաբաններին և փիլիսոփաներին մշտապես հետաքրքրող հարցը՝ «Արդյո՞ք ազատ է մարդը»: Եվ խոսքն ամենևին էլ ֆիզիկական ազատության մասին չէ: Ճիշտ է՝ Սեխիսմունդոն բանտարկված էր, զրկված էր բնական ազատությունից, սակայն նա չունեի նաև ներքին ազատություն, քանզի նրան անհայտ էր իր ով լինելը («...soy un hombre de las fieras y una fiera de los hombres. /Մարդ եմ՝ կենդանիների մեջ, և կենդանի՝ մարդկանց մեջ):

Գազանի կենսակերպով ապրող հերոսը խորապես գիտակցում է, որ վիճակն անբնական է, իրեն ազատություն է անհրաժեշտ: Սա բացահայտվում է նրա առաջին իսկ մենախոսությունից.

Descúbrese Segismundo con una cadena y la luz vestido de pieles.

(Երևում է Սեխիսմունդոն՝ շղթայված և կենդանու մորթով պատված):

¡Ay mísero de mí, y ay
 infelice

Apurar, cielos, pretendo,
 ya que me tratáis así,
 qué delito cometí

contra vosotros naciendo./

(Օ՛, ես՝ թշվառս և անբախտս, Երկի՛ նք, ուզում եմ քեզնից պարզել, Քանզի այսպես ես ինձ հետ վարվում, Ի՛նչ մեղք եմ ես Քո դեմ գործել:)

Aunque si nació, ya entiendo
 qué delito he cometido;
 bastante causa ha tenido
 vuestra justicia y rigor,
 pues el delito mayor
 del hombre es haber nacido.

(Հասկանում եմ, քանզի ծնվել եմ, Արդեն իսկ մեղք եմ ես գործել: Քո դատն ու դատաստանն արդարացված է, Քանզի մարդու ամենամեծ մեղքը ծնվելն է:)

Թեև ամբողջ կյանքում, փակված լինելով այդ աշտարակում, Սեխիսմունդոն չի տեսել, թե ինչպիսին է կյանքը դրա պատերից դուրս, այնուամենայնիվ հասկանում է, որ ինքը հավանաբար ինչ-որ մեղք է գործել, որ նման պատժի է արժանացել: Իսկ քանի որ չունի իր հարցի ստույգ պատասխանը, համոզմունք է հայտնում, որ մարդը մեղավոր է հենց նրանով, որ ծնվել է: Սակայն դա այնքան էլ բավարար պատճառ չէ, որ մարդ բանտարկության պատժի արժանանա, ինչպես իր դեպքում է: Եթե այդպես լիներ, բոլորն էլ իր վիճակում կհայտնվեին, բայց հերոսին ակնհայտ է, որ մյուսները կարծես ինչ-որ առավելություն ունեն իր նկատմամբ.

Sólo quisiera saber
para apurar mis desvelos
—dejando a una parte, cielos,
el delito del nacer—,
¿qué más os pude ofender,
para castigarme más?
¿No nacieron los demás?
Pues si los demás nacieron,
¿qué privilegios tuvieron
que no yo gocé jamás?

(Միայն կուզենայի հասկանալ, մի կողմ դնելով ծնված լինելու մեղքը,
Էլ ինչո՞ւ վե՞ր քեզ վիրավորել, Որ պատժում ես ինձ այսպես:
Ի՞նչ է, մյուսները չե՞ն ծնվել, Իսկ քանի որ ծնվել են,
Ի՞նչ առավելություն են ունեցել, Որ ես այդպես էլ չունեցա:)

Հերոսի համար անհասկանալի է այն, որ մյուս մարդիկ էլ են իր պես ծնվել կամ ծնվում, սակայն միայն ինքն է, որ պատիժ է կրում ծնված լինելու մեղքի համար, ուրիշների նման չունի այդ առավելությունը: Մա անկեղծ բողոք է իր ճակատագրի դեմ, որն ավելի է խորանում, երբ հերոսն իրեն համեմատում է բնության մյուս արարածների հետ: Առաջին համեմատությունը թռչունի հետ է: Այս փոքրամարմին արարածը վայելում է իր ազատությունը, հենց որ թռչել է սովորում: Եվ ամենևին էլ կապ չունի, որ նա ոգով ցածր է մարդուց. դա խոչընդոտ չի կարող հանդիսանալ բաղձալի ազատության ճանապարհին: Ակնհայտ է, որ այս համամատությունը թռչնի հետ այնքան էլ պատահական չէ: Եթե այն դիտարկենք կրոնական տեսանկյունից, ապա կարող ենք գուցահեռ անցկացնել աստվածաշնչյան աղավնու հետ, որն իր թռիչքով և ձիթենու ճյուղը կտուցին վերադարձով ավետեց ջրհեղեղի ավարտը, իսկ վերջինս նշանակում էր ազատություն Նոյի և նրա ընտանիքի համար:

Մյուս համեմատությունը, որը նմանապես կարող ենք կապել Աստվածաշնչի հետ, ձկան օրինակն է: Անգամ միայն սահմանափակ տարածքում շնչելու հնարավորություն ունեցող ձուկն է ազատ հերոսից: Ձկան խորհրդանիշը աստվածաշնչյան ամենահին խորհրդանիշերից է: Ինչպես հայտնի է, առաջին դարում Հռոմեական կայսրությունում քրիստոնյաները իրենց հավատքի համար բազմաթիվ հալածանքների էին ենթարկվում: Նրանք գաղտնի էին հավաքվում, քարոզում Ավետարանը: Այս պայմաններում հնարավոր չէր ոչ միայն բացահայտ ներկայանալ իբրև քրիստոնյա, այլ նաև խոսել հավատի մասին:

Այդ պատճառով նորադարձ քրիստոնյաները սկսեցին օգտագործել ծածկագիր-խորհրդանշաններ, որպեսզի միմյանց գտնեին և ճանաչեին: Եվ որպեսզի իրար հայտնեին այն վայրը, որտեղ հավաքվում էին, քրիստոնյաները օգտագործում էին ձկան պատկերը: Քարերի վրա, հրապարակներում, մարդաշատ վայրերում, աղբյուրների մոտ պատկերված այդ նշանը օգնում էր տարբեր վայրերից եկած քրիստոնյաներին հասկանալ, թե որտեղ են հավաքվում իրենց հոգևոր եղբայրները:¹

Քրիստոնեական այս սիմվոլին (հունարենով ձկան խորհրդանիշը կոչվում է “*ichtus*”, որը թարգմանվում է հետևյալ կերպ. «Հիսուս Քրիստոս, Աստծո որդի, Փրկիչ»²) Կալդերոնը հաղորդել է նաև ազատության երանգ:

Սեխիսմունդոյի այս առաջին մենախոսությունը բացահայտում է մարդու ստորակարգությունը բնության մյուս արարածների նկատմամբ: Բարոկկոյի գրականության

¹ Տե՛ս ավելին՝ <http://henaran.am/161752.html#sthash.4hXfk8YN.dpuf>

² San Agustín, Ciudad de Dios, libro XVIII, cap. XXIII

գլխավոր միտումներից էր մարդուն պատկերել որպես մի թշվառ և մեղսավոր էակ, որն էլ հենց տեսնում ենք Մեխիստունդոյի օրինակով:

Վերածննդի գրողները շեշտը դնում էին մարդու մտքի և ազատության վրա, իսկ բարոկկոյի գրողները չեն մոռանում Աստծո գոյության մասին և մարդու համար ներդաշնակությունը փնտրում են ոչ թե նրա էության, այլ հոգու մեջ: Բարոկկոյի գրականության հերոսը երբեք մենակ չէր, քանզի միշտ նրա հետ էր Աստված:

Կարևոր է հասկանալ նաև մահվան կալդերոնյան ըմբռնումը: Որպես կաթոլիկ և բարոկկոյի շրջանի հեղինակ՝ Կալդերոնի համար մահը անելանելի իրավիճակ չէր, ինչպիսին որ Վերածննդի շրջանի գրողների համար էր: Սահը բացում էր բարձրագույն ճշմարտության դարպասները, և թե ինչպիսին կլինեին մարդու կյանքը մահից հետո, կախված էր այն բանից, թե նա ինչպես կ'մտնի այդ դարպասներից ներս:

Աշտարակ-բանտում գտնված ժամանակ Մեխիստունդոն երագում է ազատ լինելու մասին, ազատ թռչունի, ձկան, վայրի գազանի նման: Սակայն երբ ստանում է այդ բաղձալի ազատությունը, ինքը վերածվում է գազանի, հարձակվում է պալատի սպասավորների վրա, մեկին պատշգամբից դուրս շարտում, ցանկանում վնասել իր հորը և խնամակալին: Դրամատուրգը ցույց է տալիս, թե ինչպես է անկառավարելի ազատությունը մարդու մեջ սպանում ամեն մարդկայինը, ինչը որ պատահում է Մեխիստունդոյին, հենց որ ազատություն է ստանում: Խոնարհ բանտարկյալից նա վերածվում է դաժան բռնակալի: Կալդերոնը բարձրացնում է մարդու կամքի ազատության տեսությունը, ինչպես նաև այն, թե մարդիկ կատարում են երկնքի կողմից նախապես սահմանված իրենց դերը: Հետևաբար, կատարելագործվելու կամ ազատությունը վերափոխելու համար նրանք պետք է նախ և առաջ պայքարեն իրենք իրենց դեմ, ձգտեն փոխել իրենց ի սկզբանե մեղսավոր էությունը:

Մեխիստունդոն հաղթում է՝ անկում ապրելով: Եթե սկզբում նա հարձակվում է հոր վրա, նրան մեղադրում իրեն ազատությունից և գահից զրկելու համար, ապա վերջում մեր հերոսը ներում է հորը: Սա հաղթանակ էր ինքն իր հանդեպ: Նա ոչ թե պարզապես հաղթահարում է իր կենդանական կրքերը, այլ վերածվում է իդեալական ղեկավարի, որի կարքին ուներ ժողովուրդը:

ՀՏԴ 39(479.243)

Մելինե Պետրոսյան
ԱրՊՀ, բանասիրական ֆակուլտետ
Գրականության և լրագրության ամբիոն
մագիստրանտ

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԳՐԱՌՄԱՆ ՊՍՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բաներ – բանահյուսություն, հեքիաթ, բանագիտություն, ասք, հեքիաթասաց, **Սակոփում**

Սույն հոդվածի մեջ քննվում է արցախյան հեքիաթների գրառման պատմությունը: Այն սկսվում է 19-րդ դարի երկրորդ կեսից՝ Ալեքսանդր, Առաքել և Գրիգոր Բահաթրյանների ջանքերով, ովքեր արցախյան բանահյուսության նմուշները կործանումից փրկել, մշակել և սերունդներին են փոխանցել:

Յուրաքանչյուր բանահյուսական երկ ինքնին շատ կարևոր է և կրում է իր մեջ արցախցու ինքնանկարը, ազգային դիմագիծը, բարոյահոգեբանությունը:

Կարևորել և գնահատել ենք հեքիաթների անուրանալի դերը մեր բանագիտության պատմության մեջ:

Meline Petrosyan
ASU, the Faculty of Philology, Master's degree 1st year

Key words – folklore, fairy tale, folklorist, saga, storyteller,

Summary

The article reviews the history of registration and collection of Artsakh folk tales.

It starts at the second half of the 19th century by AlexandreՅr, Arakel and Grigor Bahatryans who have saved Artsakh folklove samples from oblivion and who have developed and transmitted if to the coming generations. Every piece of folklore is very important and carries Artsakh identity and national character morals and psychology.

Мелине Петросян
АрГУ, факультет филологии, магистратура 1-ый курс

Ключевые слова – фольклор, сказка, фольклорист, сказание, сказочник, фольклористика

Резюме

В данной статье исследуется история записи и собрания арцахских сказок. Это начинается со второй половины 19 века, усилиями Александра, Аракела и Григора Баатрян, которые спасли от забвения и передали поколениям образцы арцахского фольклора.

Каждый фольклорный очерк сам по себе очень важен и носит в себе автопортрет арцахца, национальные, морально-психологические черты. Подчеркнута и оценена неоспоримая роль фольклора, как одного из стержней армянской литературы.

Հեքիաթը ժողովրդական բանահյուսության ամենահին, տարածված և հարուստ ժանրերից մեկն է: Հեքիաթին հատուկ առասպելական հնարանքները ստեղծվել ու ձևավորվել են դարերի ընթացքում՝ ժողովրդական կյանքի բոլոր ձևերի սերտ կապի մեջ:

Հեքիաթներն իրենց վրա կրում են պատմական բոլոր դարաշրջանների ժողովրդական կյանքի ու մտածողության կնիքը:

Ժողովրդական հեքիաթները կործանումից փրկելու հիմնական ճանապարհը դրանց գրառումն է, որը սկսվում է 19-րդ դարի երկրորդ կեսից, սակայն սխալ կլիմի կարծել, որ մինչ այդ ոչինչ չի արվել: Հարկ է նշել, որ դեռևս հեթանոսական շրջանում քրմերը երկրի տնտեսական, քաղաքական ու կրոնական կյանքի պատմությունը գրել են գերազանցապես հեքիաթների և բանահյուսական այլ նյութերի հիման վրա: Նույնն են արել նաև հայ պատմիչները միջնադարում¹: Կարդում ենք Գ.Գրիգորյանի «Հայ ժողովրդական բանահյուսություն» գրքում:

Ինչպես վկայում են բանագիտական աղբյուրները, արցախյան ժողովրդական հեքիաթների հավաքմանն առաջին անգամ ձեռնամուխ են լինում ժամանակի շուշեցի նշանավոր մտավորականներ Առաքել Ալեքսանդր և Գրիգոր Բահաթրյանները, ովքեր 1960 թվականի մայիսի 6-ից օգոստոսի 6-ը Շուշիում գրի են առնում հեքիաթներ, զրույցներ, անեկդոտներ, խաղիկներ: Այդ գրառումներում առանձնապես արժեքավոր են հեքիաթները, որոնք հայկական հեքիաթների գրառման անդրանիկ նմուշներն են: Սակայն Բահաթրյանները որևէ վկայություն չեն թողել բանասացների ու գրառման վայրի մասին, ինչը կասկածելի է դարձնում դրանց՝ անմիջապես բանասացից, թե հիշողությամբ վերարտադրելու միջոցով գրառվելու հանգամանքը²: Հավաքածուի բնագրի մեջ պահպանված է «Հաքյաթին ընտրությունը» խորհրդածությունը, որտեղ ասվում է. «Հաքյաթին ընտրությունը էն ա, որ մին հաքյաթին մեջի տուրուստ պան ինի: Հաքյաթեն ամենը սոտ պաներ ա, ուրուր քցած, էրկանացրած: Ամմա կյիրիլիս վախտը հինչ ինի, պետում ու կյիրենք: Բայց մունք մեր խելքին ըկորա պետում ա փրոնըցընենք, տեսանք, որըն ա լափ շինովի, որըն ա ճշմարիտից մոտի, որն ա լափ ճշմարիտ»³:

Իրենց պակասություններով հանդերձ՝ այս հեքիաթները բովանդակության ու պատմելիքի տեսակետից մեծ արժեք ունեն, մանավանդ, եթե հաշվի առնենք այդ ժամանակի բանահավաքչական աշխատանքների ընթացքը և մակարդակը:

Դեռևս 19-րդ դարի 70-ական թվականներին, ձեռնամուխ լինելով հայ բանահյուսության գրառմանը, երիտասարդ բանահավաք, հրատարակիչ Տիգրան Նավասարդյանը հրապարակավ դիմում է հայ հասարակությանը՝ կոչ անելով փրկելու և հրատարակելու ժողովրդի հոգևոր մշակույթի գանձերը⁴: Առաքել Բահաթրյանը Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում պաշտոնավարելիս (1881-82թթ.) նրան է հանձնում վերոհիշյալ գրառումները, որոնք մասամբ տպագրվում են Տ. Նավասարդյանի կողմից⁵, իսկ ամբողջությամբ՝ 1973 թվականին⁶: Ընդհանուր առմամբ, Նավասարդյանի կողք լայն արձագանք է գտնում հայ մտավորականների շրջանում: Շուշու թեմական դպրոցի

¹Տե՛ս Գ. Գրիգորյան, Հայ ժողովրդական նբանահյուսություն, Երևան, 1967. էջ 275:

²Տե՛ս Ա.Սարգսյան, Արցախի բանահյուսությունը, Երևան, 2015, էջ 11:

³Տե՛ս Հայ ժողովրդական հեքիաթներ, հ.6, Երևան 197., էջ 706:

⁴Տե՛ս Հայրապետյան Թ., Կոստանդին, Մելիք-Շահնազարյան (Տմբլաչի Խաչյան, կյանքն ու գործունեությունը)

⁵Տե՛ս Սարգսյան Ա., Բարբառային օրինաչափությունների պահպանման կարևորությունը, բանահյուսական ժողովածուներում (Ղարաբաղի բարբառի օրինակով), «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2012. հ.1 Մարգարյան Լ., Արցախի բանահյուսության լեզուն, Ստեփանակերտ, 2011, էջ 118:

⁶Տե՛ս Սարգսյան Ա., «Արցախի բանահյուսությունը», Երևան, 2015, էջ 738:

շրջանավարտ, Վարանդայի (Մարտունի) Նոր շեն գյուղի ուսուցիչ Միքայել Տեր Հովհաննիսյանը գրի է առնում մի շարք հեքիաթներ, որոնց մի մասը հրատարակվում է ¹: Նույն շրջանում մոսկվայաբնակ շուշեցիներից հեքիաթներ է գրառում Հարություն Թավրիզյանը:

Բահաթյանների, Միքայել Տեր-Հովհաննիսյանի, Հարություն Թավրիզյանի հավաքած հեքիաթների ձեռագրերը պահպանվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվի Ս. Նավասարդյանի ֆոնդում:

19-րդ դարի երկրորդ կեսին Շուշին դարձել էր գիտամշակութային և ժողովրդագրական նյութերի հավաքման ու հրատարակման կարևոր կենտրոն: Պատահական չէ, որ 1895 թվականին Երվանդ Լալայանը հենց այստեղ է հիմնադրում «Ազգագրական հանդեսը», որտեղ ազգագրական և տեղագրական նյութերի հետ ներկայացվում էին նաև բանահյուսական տարբեր ժանրերի ստեղծագործություններ:

Այս շրջանում է ժողովրդական բառ ու բանով հագեցած ֆելիետոններով սկսում իր գործունեությունը Կոստանդին Մելիք-Շահնագարյանը՝ Տնփառ խաչանը, ով լինելով բնիկ շուշեցի և քաջատեղյակ լինելով երկրամասի ժողովրդական կյանքին, կենցաղին ու բառ ու բանին, իր ողջ գիտակցական կյանքում գրառում է նաև ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերի նյութեր՝ այդ թվում մի շարք հեքիաթներ²: Նրա գրառած հեքիաթների մի մասը տպագրվում է³, իսկ ամբողջ հավաքածուն պահվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում և Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում:

Քաղաքական բարդ իրավիճակի պատճառով ինչպես հայ ազգագրական մյուս շրջաններում, այնպես էլ Արցախում, կարելի է ասել, 20-րդ դարի սկզբին որոշակիորեն նվազում է հետաքրքրությունը դեպի բանահյուսությունը: Այդ տարիներին նշանավորվում է Սարգիս Իսրայելյանի բանահավաքչական գործունեությունը, վերջինս ժողովրդական բազմաթիվ ստեղծագործությունների շարքում Արցախի, ինչպես նաև Շամշադինի և Զանգեզուրի տարբեր բնակավայրերից գրառում է հեքիաթներ, որոնց մի մասը տպագրվում է⁴, իսկ մյուս մասը ձեռագիր վիճակում պահվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության ու ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում:

Արցախի բանահյուսության հավաքման ու հրատարակման գործում մեծ է ծնունդով շուշեցի Մարգարիտ Գրիգորյան-Սպանդարյանի դերը:

1920-ական թվականներից մինչև 70-ական թվականները շրջագայելով պատմական Արցախի տասնյակ բնակավայրերում՝ նա անձնվեր սիրով և հմտությամբ գրառել է տարբեր ժանրերի ստեղծագործություններ, որոնց մեծ մասը ամփոփվել են «Հայ ժողովրդական հեքիաթներ» բազմահատորյակի 5-րդ հատորում (Երևան 1966թ.) և «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը» (Երևան 1971թ.) ժողովածուում: Հեղինակի ձեռագրերը ներկայումս պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվում, ինչպես նաև Ստեփանակերտի պատմաերկրագիտական թանգարանում:

1960 թվականին Ստեփանակերտում բացվում է ժողովրդական ստեղծագործության մարզային տունը, որի աշխատակիցների՝ տարբեր գյուղերից հավաքած հեքիաթները այլ ժանրերի նմուշների հետ տեղ են գտել 1978 թվականին Երևանում հրատարակված «Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից» ժողովածուում, որը կազմել են Միքայել Առաքելյանը և Ռոբերտ Ղահրամանյանը: Նրանք անձամբ Արցախի տարբեր գյուղերից գրառել են բազմաթիվ հեքիաթներ, որոնք տեղ են գտել հայ ժողովրդական հեքիաթների 6-րդ և 7-րդ հատորներում:

1983 թվականին «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի 15-րդ հատորում հրատարակվում է հայ բանագիտության երախտավոր Ալվարդ Ղազիյանի

¹Տե՛ս Նավասարդյան Ս., Հայ ժողովրդական հեքիաթներ, պրակ 1, Վաղարշապատ, 1882, Հայ ժողովրդական հեքիաթներ, հատոր վեց, Երևան, 1973, էջ 138:

²Տե՛ս Հայրապետյան Թ., Կոստանդին Մելիք-Շահնագարյան (Տնփառ խաչան, կյանքն ու գործունեությունը), «Հայ ազգագրություն և բանահյուսություն», չ 24, Երևան 2007, գլուխ 3

³Տե՛ս Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 6, Երևան 1873:

⁴Տե՛ս Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 6, Երևան, 1873թ.

«Արցախ» խորագրով բանահյուսական ժողովածուն, որտեղ հիմնականում ներկայացված են հեղինակի և Բարխուդար Ղազիյանի կողմից 1966, 1970-1988 թվականներին Լեռնային Ղարաբաղի և Շահումյանի շրջանի տարբեր բնակավայրերից գրառված նյութեր, այդ թվում նաև մի շարք հեքիաթներ: Հետաքրքիր է այն փաստը, որ ժողովածուի հեքիաթների շարքում հեղինակը ընդգրկել է նաև «Մասնա ծոեր» էպոսի առաջին ճյուղի՝ Արցախից գրառած պատումը՝ «Մասասար նան Բաղդասարը» վերնագրով:

Ալվարդ Ղազիյանը բանագետ Սվետլանա Վարդանյանի հետ 2004 թվականին հրատարակել է նաև «Բաքվի հայոց բանահյուսությունը» ժողովածուն, որոշ հեքիաթներ՝ գրառված Բաքվում բնակվող արցախցի բանասացներից:

1991 թվականին լույս է տեսնում արցախցի վաստակաշատ մանկավարժ Լ. Հարությունյանի «Նշխարներ Արցախի բանահյուսության» ժողովածուն, որին հետագա տարիներին հաջորդում են 2-5-րդ հատորները: Հեղինակն այստեղ առանձին տեղ է հատկացրել նաև հեքիաթներին:

Արցախի բանահյուսության հավաքման և հրատարակման պատմության մեջ նորություն էր բանագետ Թամար Հայրապետյանի՝ 2014 թվականին հրատարակած «Յերգինքան իրեք խնձոր վեր ընգավ ու տասը խրատ» մանկական հեքիաթների ժողովածուն, որտեղ ներկայացված են Արցախից գրառված 10 մանկական հեքիաթներ: Նշված բոլոր բանահավաքների գործունեությունը անշուշտ լուրջ ներդրում է Արցախի բանահյուսությունը կորստից փրկելու հույժ կարևոր գործում, սակայն հարկ է նշել, որ հեղինակները հաճախ են անտեսել Ղարաբաղի բարբառի, հատկապես նրա առանձին խոսվածքների յուրահատկությունները, և եթե որոշ աշխատանքներ գրառվել և տպագրվել են գրական կամ ժողովրդախոսակցական լեզվով, ապա մյուսների մեջ էլ ակնհայտ են Արցախի բարբառային օրինաչափությունների աղավաղումները, որոնք հանդես են գալիս լեզվական տարբեր մակարդակներում:

Այս տեսակետից կարևոր են բարբառագետ, բանահավաք Արմեն Սարգսյանի բանահյուսական ժողովածուները, որտեղ խստորեն պահպանված է բարբառային գիտական տառադարձությունը: Հեղինակի վերջին՝ 2015 թվականին հրատարակած «Արցախի բանահյուսությունը» ծավալուն ժողովածուում ընդգրկված են 22 հեքիաթներ: Ժողովածուի ընդարձակ առաջաբանում տրված են նաև Արցախի բանահյուսական տարբեր ժանրերի, այդ թվում հեքիաթների ժանրային և իմաստային առանձնահատկությունները:

Արցախի տարածքից հեքիաթներ են գրառվել ու հրատարակվել նաև այլ հեղինակների կողմից, դրանցից մի մասը ընդգրկված են Ղարաբաղի բարբառին ու պատմությանը նվիրված աշխատություններում¹: Միաժամանակ բանագիտական և բարբառագիտական մի շարք ուսումնասիրություններում հեղինակները անդրադարձել են նաև արցախյան հեքիաթներին²:

¹Տե՛ս Սարգսյան Ա., Բարբառային օրինաչափությունների պահպանման կարևորությունը բանահյուսական ժողովածուներում (Ղարաբաղի բարբառի օրինակով), «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2012թ. N1, Մարգարյան Լ., Արցախի բանահյուսության լեզուն, Ստեփանակերտ, 2011, էջ 118:

²Տե՛ս Սարգսյան Ա., «Արցախի բանահյուսությունը», Երևան, 2015, էջ 738:

ՀՏԴ 82.177

Սոնա Ալավերդյան
Գորիսի պետական համալսարան
բակալավրիատի IV կուրս
գիտ. դեկ. Գոհար Սահակյան

ԷՔՁԻՍՏԵՆՑԻԱԼ ՄԱՐԴՈՒՑ ԱԲՍՈՒՐԴԻ ՄԱՐԴ ԱՆՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Բանալի բառեր. մոդեռնիզմ, էքզիստենցիալիզմ, արսուրդ, Ս. Կիերկեգոր, Ֆ. Մ. Դոստոևսկի, Ֆ. Կաֆկա, Ժ. Պ. Սարտր, Ա. Բամյու, Ս. Բեկկետ:

Ամփոփում

Հոդվածում քննության են առնված 20-րդ դարում մշակույթի մեջ առաջացած մի նոր ուղղության՝ մոդեռնիզմի բերած նորությունները, դրա դերը գրականության մեջ: Այս շրջանում հերթական անգամ վերադիրքավորվում է մարդու դերը արժեքների համակարգում, և մոդեռնիզմի ցանկացած արտահայտություն (էքզիստենցիալիզմ, արսուրդ) արձանագրում է մարդու հետ կատարված փոփոխությունները՝ անկումը, օտարումը, քայքայումը: Արդյունքում մարդը նախ զրկվում է գոյությունից, ապա գիտակցությունից և վերջում վերածվում է սոսկ «ձայնի»:

Сона Алавердян
ГГУ, бакалавриат, IV курс
науч. рук.: Гоар Саакян

ПЕРЕХОД ИЗ ЭКЗИСТЕНЦИАЛЬНОГО ЧЕЛОВЕКА НА ЧЕЛОВЕК АБСУРДА

Ключевые слова: модернизм, экзистенциализм, абсурд, С. Кьеркегор, Ф. М. Достоевский, Ф. Кафка, Ж. П. Сартр, А. Камью, С. Беккет.

Резюме

В статье рассматривается новое направление в культуре 20 века: новшества, пришедшие из модернизма, его роль в литературе. В течении этого периода репозиционируется роль системы ценностей человека и

любое выражение модернизма (экзистенциальность абсурд), регистрируются изменения, происшедшие с человеком: падение, отчуждение, распад. В результате человек лишается существования, затем сознания и в конце становится только „ голосом ”.

Sona Alaverdyan
GSU, Baccalaureate, 4th year
Supervisor: Gohar Sahakyan

THE TRANSITION OF EXISTENTIAL MAN INTO ABSURD ONE

Key words: *modernism, existentialism, nonsense, S. Kierkegaard, F. M. Dostoevsky, F. Kafka, Zh. P. Sartr, A. Kamyu, S. Bakket.*

Summary

The article examines a new trend, modernism which appeared in the culture of the 20th century and discusses its role in the literature. During this period, the role of human was once again rearranged in the system of values. Any expression of modernism (such as existentialism, absurd) records the changes associated with man; fall, alienation and decay. As a result, man is firstly deprived of existence, then consciousness and in the end changes into a mere "sound".

Մինչև 19-րդ դարի կեսերը արվեստի պատմության մեջ գործում էր ժառանգականության սկզբունքը, այսինքն՝ յուրաքանչյուր նոր ուղղություն մերժում էր նախորդ ուղղության կենտրոնական գաղափարը և ավելացնում նորը: 19-րդ դարի կեսերից սկսվում է նոր շրջան, որը կոչվում է մոդեռն:

Մոդեռն աշխարհի հայեցակարգը տարբերվում է անտիկ և միջնադարյան աշխարհներից: Սա մի գործընթաց է, որը պայմանավորված է մարդկային ջանքերով՝ փոփոխելու իրենց վիճակը, դրությունը: Մարդկային գործունեության բոլոր ոլորտների (քաղաքականություն, արդյունաբերություն, հասարակություն, գիտություն, տեխնիկա, մշակույթ ևն) առաջընթացը պատճառ է դառնում հին աշխարհի փոփոխության դեպի մոդեռնի կամ նոր աշխարհի: Փոփոխվում է Աստվածաշնչի ընկալման արժեքային համակարգը, վերագնահատվում կառավարման միապետական համակարգը, վերանում ֆեոդալական – տնտեսական համակարգը ժողովրդավարական և լիբերալ գաղափարների ներմուծմամբ:¹

Մոդեռնիզմի հիմքը պետք է փնտրել Առաջին համաշխարհային պատերազմի տված մասսայական զոհերի առկայության փաստի մեջ: Պատերազմի արդյունքները մարդուն կանգնեցրին լրջագույն խնդրի առջև: Մարդը գիտակցեց իր օտարվածությունը հասարակությունից, և այդ գիտակցումից էլ ծնվեց մոդեռնիզմի հիմնական թեման՝ մարդկային գոյությունը, անհատի ճակատագիրը, կյանքի իմաստը, մարդու ազատությունը, օտարումը, անհատի և հասարակության հարաբերությունները:

Մոդեռնիզմը, սկսելով իր գրկական ընթացքը, բերեց մի միջավայր, որտեղ մարդն ինքն արդեն չի ստեղծում իր աշխարհը: Նա ստիպված է համակերպվել այն ամենի հետ, ինչ որ իրեն է տրված, ի տարբերություն Վերածննդի շրջանի մարդու, որին էր պատկանում ողջ տիեզերքը: Մոդեռնիզմի մարդը չունի ոչինչ, բացի իրենից: Միակ տիեզերքը, որ կարող է մարդը ստեղծել մոդեռնիզմի գրականության մեջ, իր մեջ է, որն էլ սուբյեկտիվ է: Արդյունքում վիճարկման առարկա է դառնում աշխարհստեղծումը, իսկ մարդու կյանքի ուղին դադարում է լինել հաջորդական գործողությունների հանրագումար:

Մոդեռնիստական ուղղությունների մեջ առանձնանում է էքզիստենցիալիզմը իր փիլիսոփայական հիմքով և ընդգրկումով: էքզիստենցիալիզմի գաղափարները սերում են դանիացի իդեալիստ փիլիսոփա Սյորեն Կիերկեգորի հայացքներից, ըստ որի՝ կարևորը մարդու իրական գոյությունն է, մարդու էքզիստենցիան՝ ամեն տեսակ արտաքին կապերից մաքրված, անձնական, անհատական կյանքը:

«Ահուղող» (Fear and Trembling) աշխատության մեջ Կիերկեգորը վերցնում է երկու առասպել՝ հին հունական և Հին կտակարանից: Հին հունականից նա ընտրում է Ագամեմնոնի՝ իր աղջկան Իֆիգենիային, զոհաբերելու պատմությունը: Ի տարբերություն: Ագամեմնոնի, որը հասկանալի կերպար է, Աբրահամի կերպարը բազմաթիվ հարցերի տեղիք է տալիս: Աբրահամին Աստված ասել է, որ զոհաբերի իր միակ որդուն՝ որպես ապացույց իր նվիրվածության, հավատարմության: Կիերկեգորը հարցնում է՝ ինչու Աբրահամը այդպես

¹ The Modern Tradition: Backgrounds of Modern Literature, New York: Oxford University Press, 1965, p. 3.

վարվեց: Արդյո՞ք նա դա Աստծո համար արեց, որովհետև Աստված պահանջել էր հավատի համար ապացույց, թե՛ իր համար, որ ցույց տար՝ ինքը կարող է ապացուցել: Արդյո՞ք այն պատճառով, որ Աբրահամը և Աստված, անձնական հարաբերությունների մեջ մտնելով, իրար հետ պայմանավորվել ու խաղում էին, և Աբրահամը գիտեր՝ Աստված թույլ չի տալու այդ զոհաբերումը: Այս բոլոր ենթադրությունները, հասկանալի է, չի կարելի ընդունել: Աբրահամը ո՛չ վախկոտ էր, ո՛չ անձնասեր և ո՛չ էլ դերասան: Կիերկեգորն ասում է. «Աբրահամին հասկանալու համար նոր կատեգորիա պետք է ստեղծել»¹: Խնդիրն այն է, որ Աբրահամի գործողությունները դրսի վրա բացատրելի չեն: Աբրահամը չի կարող լաց լինել, դժգոհել, որովհետև շրջապատը կասեր՝ ինչու ես արել, բացատրություն չկա: Նա լռում է, որովհետև ինքն իր մեջ ունի մի ճշմարտություն, և այդ ճշմարտությունը հավատն է: Նա հավատում է Աստծուն: Եվ այդ հավատն այն է, ինչ ներսից հասկանալի է որպես հավատ, դրսից ընկալվում է որպես արքունի: Ահա սա է, որ Կիերկեգորը անվանում է էքզիստենցիա՝ ներքին գոյություն:²

Հետագայում մեկ ուրիշ էքզիստենցիալ գրող Սարտրը, նույն կոնտեքստը օգտագործելով, «էքզիստենցիալիզմը հումանիզմ է» ելույթում անդրադառնում է Կիերկեգորեի առաջադրած «Աբրահամի տառապանքին»՝ վերախմաստավորելով էքզիստենցիալ մարդու վիճակը: Այսպես, Սարտրը նախ հնչեցնում է առաջին հարցը՝ «Ո՞վ կարող է ապացուցել, որ դա իրոք հրեշտակ է»³, երկրորդ՝ «Եթե ես լսում եմ ձայներ, ո՞վ կարող է ապացուցել, որ դրանք հնչել են դրախտից, և ոչ թե դժոխքից»⁴, երրորդ՝ «Ո՞վ կարող է ապացուցել, որ նա Աստվածն էր»⁵, և վերջին հարցը՝ «Արդյո՞ք ես Աբրահամն եմ»⁶: Սարտրը հանգում է կարևոր եզրահանգման. մարդը կոչված չէ զոհելու, զոհվելու, նա կոչված է ընտրելու, նա ամբողջապես ազատ է: Ազատություն, որի հակառակ երեսին դժոխային հուսահատությունն է գտնվում:

Դժոխային գոյության, մարդու «վայրէջքի» թեման, ըստ գրականագետ Հ. Էդոյանի, անցնել է երեք աստիճաններով՝ «1) մարդու քայքայումը որպես հոգեբանություն. նրա անհետացումը հոգեբանական պլանում (Դոստոևսկի), 2) մարդու քայքայումը որպես գոյություն. նրա անհետացումը գոյության պլանում (Կաֆկա), 3) մարդու քայքայումը որպես գիտակցություն. նրա անհետացումը գիտակցության պլանում (Բեկկետ)»⁷:

Մարդկային հոգին 19-րդ դարի կեսերին Դոստոևսկու կողմից բացահայտվում է որպես քայքայվող երևույթ: Իբրև առաջին նախանշաններ՝ մեկուսանալու ցանկությունը, ձանձրույթն են ի հայտ գալիս, և մարդը լիովին անձնատուր է լինում այն վիճակին, ինչը Դոստոևսկին անվանում է մենամոլություն և ապա փորձում բացատրել՝ «անմարդկայնության չափ սառնություն և անզգայություն»⁸: Սրանից բխում են գիտակցական այնպիսի մթազնումներ, որոնք պարբերական բնույթ չունեն, այլ շարունակվում են որոշ ընդմիջումներով՝ հասնելով կատաստրոֆի, որը հետո խուճապային վախի է վերածվում: Դրան հաջորդում է հոգեկան անտարբերության փուլը: Փաստորեն ունենում ենք մի վիճակ, երբ կենդանի մարդը մեռնող մարդկանց բնորոշ ցավազին, բայց նաև անտարբեր դրության մեջ է հայտնվում:

Արտաքին աշխարհը հետաքրքիր չէ, չկա ոչինչ սիրելի, ինչ մտտ է, որովհետև սիրելիները սիրելի են այնքան ժամանակ, քանի դեռ հեռվում են: Այն պահից սկսած, երբ նրանց գոյությունը դառնում է ֆիզիկական ներկայություն, վիճակը այլևս տանելի չէ. «Ես հո նրանց սիրում էի, երբ հեռու էին»⁹, և հետո՝ «Մայրս, քույրս, որքան ես սիրում էի նրանց: Ինչո՞ւ եմ հիմա ատում»¹⁰: Ուշադրություն դարձնենք այս «ինչո՞ւ»-ին, որ Դոստոևսկու մտտ դեռ հնչում է՝ ի տարբերություն Կաֆկայի, Քամյուի կամ Սարտրի պարագայի, որտեղ այդ «ինչո՞ւ»-ն արդեն չկա, որովհետև դրա կարիքը պարզապես չկա:

¹ Søren Kierkegaard, *Fear and Trembling*, New York: Penguin Books (first published 1843), 2006, p. 52.

² Նույն տեղում, p. 53-61.

³ Walter Kaufmann, *Existentialism from Dostoevsky to Sartre*, Jean – Paul Sartre, *Existentialism is a Humanism*, New York: Meridian, 1989, p. 293.

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում:

⁷ Հ. Էդոյան, *Շարժում դեպի հավասարակշռություն*, Սարգիս Խաչենց, Երևան, 2009, էջ 155:

⁸ Ֆ. Դոստոևսկի, *Ոճիք և պատիժ*, Մովեսական գրող, Երևան, 1980, էջ 262:

⁹ Նույն տեղում, էջ 279:

¹⁰ Նույն տեղում, էջ 339:

Հ. Էդոյանը մարդու փլուզումը Դոստոևսկու մոտ տանում է հոգեբանական մակարդակ՝ հաշվի առնելով մարդու շարունակական նահանջը, կապելով Վերածննդի մշակույթի մեջ Քրիստոսի ընկալման հետ իբրև մարդ, որն իր սովորով ծածկում է Քրիստոս – Աստծուն, և որքան փնտրում է ինքնությունը, այնքան հենց այդ խախտման պատճառով կորցնում է այն:¹

Դոստոևսկյան մարդը, վերլուծելով երկնային ամեն ինչ, էության մեջ դեռևս պահպանելով Քրիստոսի այն օրինակը, որին հետևում էր առաջ, հասնում է կյանքի գերազանահատման ու բախվում նոր մարդու երկունքի խնդրին. «Նո՛ր մարդն է ծնվում, հասկանում եմ այդ բանը... Բայց Աստծուն եմ ափսոսում»:² Մարդ, որը չի հավատում Աստծուն, չի հավատում անմահությանը (որովհետև Աստվածը և անմահությունը միասին էին ընկալվում), նա նաև այլևս ի վիճակի չէ ստեղծել մի այլ, ավելի բարձր Աստծո օրինակ: Իսկ եթե Աստված չկա, «Ուրեմն այսպիսով ամեն ինչ թույլատրելի՞ է դառնում, ամեն ինչ կարելի՞ է անել»:³

Փաստորեն հոգեբանական մակարդակում անկումը կատարվում է մարդու մոտ հոգեկան անտարբերության առաջացմամբ: Նա անզգայանում, ստեղծված նոր վիճակից դուրս գալու համար քայլեր է ձեռնարկում, նոր մարդուն է լույս աշխարհի բերում, որը Աստծու գոյության փաստն է կասկածի տակ առնում, և ապա ոչնչացնում նրան: Տիտանական հայարտությամբ հայտարարում է, որ թույլատրված է ամեն ինչ:

Եթե Դոստոևսկու մոտ մարդը քայքայվում է հոգեբանական մակարդակում, բայց նրա գոյության հիմքերին ոչ մի վտանգ չի սպառնում, ապա Կաֆկայի ստեղծագործություններում մարդն անհետանում է որպես գոյություն, նա հետ է քաշվում աշխարհի պլանից, կորցնում իր բոլոր ուղիները, վերածվում կենսաբանական էակի, որը կարող է ամեն ինչ լինել, բացի մարդուց: Սա մարդկային ճակատագրին է, և նա դատապարտված է: Ինքը դա գիտի, եթե փորձում է պատժից փախչել («Դատավարություն»), այդ պատժի վրա չի զարմանում: Մեփական զարմանքի բացակայությունն էլ զարմանալի չի թվում: Պատճառն այն է, որ ցանկացած ճիգ ու ջանք, փրկության ամեն քայլ նրան դարձնում են ավելի անպաշտպան ու անօգնական, որովհետև ի սկզբանե նա դատապարտված էր ոչնչացման: Ահա այս հակասությունների մեջ են ի հայտ գալիս արտադրող երկի առաջին նշանները: Ուղեղն իր մտավոր ողբերգությունն արտահայտում է կոնկրետ ձևերով, այլ կերպ ասած՝ անվերջանալի պարադոքսներով:

Կաֆկան բերում է երկու աշխարհ՝ առօրյա կյանք և գերբնական տագնապ: Բնականն ու գերբնականը զուգահեռվում են անհավանականի ու տրամաբանականի հետ: Ներկայացնելով հոգու պատկանելի ծավալումներով իրեն գերազանցող մարմնին՝ նա ըկնում է հակադրությունների գիրկը, և, ինչպես Քամյուն է նկատում, «ողբերգականը պատկերում առօրյայի, արտադրող՝ տրամաբանականի միջոցով»:⁴

Կաֆկայական գրականության մեջ գիտակցությունը, ի տարբերություն գոյության, դեռևս քայքայված չէ: մարդը գոյություն ունի գիտակցության ներքին պլանում, նա գոյություն չունի գոյության արտաքին պլանում: Արտաքին աշխարհում գիտակցությունը չի կարող ներկա լինել, նա արտաքայված է այդ աշխարհից, նրա տեղը մարդու ներքին աշխարհն է: Մարդն ինքն իր գիտակցությունն է, ուրեմն դատապարտված է արտաքսման, անհետացման. նա գոյություն ունի սոսկ իր գիտակցության մեջ, ապավինում է իր փակ էությանը: Իսկ եթե մարդը անհետանում է գոյության պլանում, նրա անհետացմամբ ամեն ինչ դառնում է հնարավոր: Վերափոխվում է Դոստոևսկու խոսքը («Եթե Աստված չկա, ամեն ինչ հնարավոր է») և դառնում՝ եթե մարդը չկա, ամեն ինչ անհիմաստ է:⁵

Այսպիսով, մարդը աշխարհ գալով մտնում է գոյության դժոխք, որտեղ նա գրկված է պաշտպանությունից, տիեզերական ծնողից՝ Աստծուց: Քամյուի հերոսը ասում է. «Աստված, որ այնքան երկար ժամանակ իր բարի դեմքը դարձրել էր այս քաղաքի վրա, սպասելուց հոգնած, հավերժական հույսի մեջ խաբված, այժմ հայացքը հեռացրել է մեզանից: Եվ Աստծո լույսից գրկված, ահա երկար ժամանակ ապրում ենք ժանտախտի խավարի մեջ»:⁶ Այս գոյության դժոխքում նա ստիպված է մնալ մինչև գոյության ավարտ, նա ստիպված է աշխարհի մասին եզրահանգում կատարել: «Դրանից հետո իրավունք չունի կանգ առնելու, կամ պիտի ապրի իր կյանքով՝ այսինքն վաղ թե ուշ մահանա, կամ էլ ծավալվի»:⁷ Արդյունքում մարդը դադարում է հուսալ: Վերջիվերջո ներկայի թագավորությունը դառնում է իր դժոխքը, բոլոր հիմնահարցերը սրտայամբ ի հայտ են գալիս: Մեռնել՝ մի ցատկով խո՛յս տալ նրանցից, թե յուրովի վերակառուցել գաղափարների շենքը:

Զարմանալի չէ, որ դժոխքի կրկնվող պատկերը դառնում է էքզիստենցիալիզմի պատկերային, գեղարվեստական հնարաններից մեկը, որովհետև դա դժոխք է առանց դրախտի, որտեղ անցում չկա ավելի բարձր մակարդակներ: Մարդը հասկանում է, որ ինքը դրախտի հույս չունի (ի տարբերություն Դանթեի նկարագրած անդրշիրիմյան աշխարհի, որտեղ դժոխքի կողքին կար դրախտի գոյության փաստը):

Ինչպես գիտենք, հոգիներին ազդարարելու համար դանթեյան դժոխքի դռան վրա նշված էր. «Ո՛վ մտնողներ, թողեք ձեր հույսը համայն»:⁸ Նույն կերպ էլ կարող ենք ասել՝ գոյություն մտնողներ, թողեք ձեր հույսերը բոլոր: Այս խնդիրը արժարձված է Քամյուի «Միզիփոսի առասպելը» էսսեում: Անդրադառնալով անտիկ նախահիմքերին՝ Քամյուն նախ վերհանում է Միզիփոսի կերպարը: Միզիփոսը բավական ինտելեկտուալ կերպար է՝ «մահկանացուների մեջ ամենախմաստունն ու հեռատեսը»:⁹ Ի վերջո, լինելով մահկանացու՝ նա կարողացավ խաբել աստվածներին, շղթայել Մահը և անգամ երբ հայտնվեց դժոխքում, կարողացավ Պլուտոնից երկիր վերադառնալու թույլտվություն ստանալ, «տեսավ այս աշխարհը, վայելեց ջուրն ու արևը, քարերի տաքությունն ու ծովը, չուզեց մտնել ստորգետնյա խավարի դժոխքը»:¹⁰ Աստվածներն ստիպված եղան վճռական միջոցների դիմել: Հերմեսը եկավ, բռնեց այդ անհնազանդի օձիքից և քարշ տվեց դժոխք, ուր քարն արդեն պատրաստ էր: Նա ստիպված եղավ զբաղվել մի գործով, որը վերջ չունի: Եվ Քամյուն ներկայացնում է Միզիփոսի՝ քարը սարի գագաթը բարձրացնելը, «թե ինչպես էր մինչև վերջ պրկում մարմինը, որպեսզի բարձրացնի ահռելի քարը, գլորի լեռն ի վեր և հարյուրերորդ անգամ հաղթահարի նույն վերելքը... Այս երկար տառապանքը, որ կարող է չափվել միայն աներկինք անսահմանությամբ ու անսկիզբ - անվերջ ժամանակով, պսակվում է հաջողությամբ: Նա հասնում է իր նպատակին ու տեսնում, թե ինչպես է քարը հաշված վայրկյաններում գլորվում խորխորատ, որտեղից նորից գագաթ պետք է բարձրացնել»:¹¹ Եվ հենց այս դադարի պահին է Միզիփոսը հետաքրքրում Քամյուին, թեթևացած շունչ քաշելու պահը, որը կրկնվելու է, ինչպես իր տառապանքը: Սա ինքնագիտակցության պահն է: «Լեռան գագաթից

¹ Հ. Էդոյան, Շարժում դեպի հավասարակշռություն, Սարգիս Խաչենց, Երևան, 2009, էջ 158-171:

² Ֆ. Դոստոևսկի, Կարամազով եղբայրներ, հ. 2-րդ, Հայաստան, Երևան, 1970, էջ 399:

³ Նույն տեղում:

⁴ Ֆ. Կաֆկա, Դատավարություն, Ապոլոն, Երևան, 1991, էջ 215:

⁵ Հ. Էդոյան, Շարժում դեպի հավասարակշռություն, Սարգիս Խաչենց, Երևան, 2009, էջ 175-176

⁶ Ա. Քամյու, Ժանտախտը, Ապոլոն, Երևան, 1991, էջ 61:

⁷ Ա. Քամյու, Միզիփոսի առասպելը. <http://grapaharan.org/index.php>

⁸ Դ. Ալիգերի, Աստվածային կատակերգություն, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1983, էջ 15:

⁹ Ա. Քամյու, Միզիփոսի առասպելը:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Նույն տեղում:

աստվածների բնակատեղին իջնելու յուրաքանչյուր ակնթարթին նա վեր է բարձրանում իր ճակատագրից: Նա իր ժայռից ավելի կարծր է»¹: Փաստորեն սրանով Քամյուն առաջ է քաշում մարդու դժոխային գոյության և խաղաղ չգոյության խնդիրը: Արդյոք ք մենք, Միզիվոսը վտարված ենք խաղաղ չգոյությունից (Միզիվոսը չէր դժգոհում իրեն վիճակվածից), թե՛ գոյության մեջ հայտնվելն է մարդու համար կորուստ վիճակ, որովհետև գոյության մեջ հույսը բացակայում է, որովհետև «Աստված մահացել է»: Պատասխանը հետևյալն է. եթե մարդը ապրում է առանց հույսի, եթե նա պայքարում է անիմաստ բանի համար, որովհետև գոյությունը նույն բարդ բարձրացնելն է, ապա ունենում ենք մի այնպիսի վիճակ, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ կրկնվող իրականություն: Դրա գիտակցումը մարդուն բնականաբար բերում է տառապանք: Եվ ահա այստեղ է տարբերությունը: Միզիվոսը, լինելով չգոյության մեջ, տառապալի չէ, նա երջանիկ է, որովհետև նա դա անում է սեփական ցանկությամբ, սեփական ընտրությամբ: Առանց գերագույն տիրոջ մնացած այս տիեզերքը նրան չի թվում ո՛չ ամուլ, ո՛չ էլ ճղճիմ: Ահա թե ինչու, գործն ավարտվում է այսպես. «Միզիվոսին պետք է պատկերացնել երջանիկ»:

Ալբերտ Քամյուի աբսուրդի հայեցակարգին ապավինելով՝ «Միզիվոսի առասպելը» որպես հիմք ունենալով՝ զարգանում է աբսուրդի ժանրը: Աբսուրդի գրականության ամենակարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ այնտեղ բացակայում է ողբերգությունը, բացակայում է ոչ միայն որպես ժանր, այլև նաև որպես գիտակցության ձև, ուր կարող են ներքուստ հանդես գալ ինքնագիտակցության նշաններ՝ կապված ողբերգական իրավիճակների հետ: Բսկ այդ ողբերգական իրավիճակները կարող են լինել տիեզերքի վերածում անդարձ աբսուրդի, անհատի գրկումը կորցրած հայրենիքի հիշողություններից ու Ավետյաց երկրի հույսից: Քանի որ ողբերգությունն ինքնընդհատված է անհատ, իսկ անհատը փլուզվել է հոգեբանական մակարդակում (Դոստոևսկի), անհատը անհետացել է որպես գոյություն (Գաֆկա), հիմա էլ գրկվում է միակ ունեցածից՝ գիտակցությունից, ապա անհատի բացակայությամբ ողբերգությունը դառնում է անիմաստ, աբսուրդ: Ունենում ենք քառասյան վիճակ, երբ մարդն իրեն շրջապատող պատերից բացի ոչինչ չի վիճակի չէ տեսնել, զգալ ու հասկանալ, նա չի կարող երջանիկ լինել, քանի որ չի կարող գտնել կյանքի իմաստը: Արդյունքում ծնվում է աբսուրդը մարդկային հարցապնդման ու աշխարհի անտրամաբանական լռության բախումից:

1940-ականների ավարտին ֆրանսիական թատերական կյանքը նշանավորվում է առաջատար մի նոր ուղղության՝ աբսուրդ թատրոնի կամ «անտիթատրոնի»² ստեղծմամբ: «Աբսուրդի թատրոն» հասկացությունն առաջին անգամ օգտագործել է թատերական քննադատ Մարտին Էսլինը՝ այն դարձնելով իր գրքի խորագիրը: 1953-ին Փարիզում ներկայացվում է իռլանդացի Ս. Բեկկետի «Գոդոյին սպասելիս» պիեսը, որը «կարելի է անվանել «աբսուրդի» թատրոնի «ավետարանը», որը ազդարարում է մարդու վերջնական քայքայումն ու անհետացումը գրականության մեջ»³: Այն 20-րդ դարի մարդու մահախոսականն է:

Աբսուրդի թատրոնում մենք գործ ունենք սյուժեի ոչ սովորական ընկալման հետ կամ կարող ենք ասել՝ սյուժեն ընդհանրապես չի գործում, քանի որ գործող անձերը գուրկ են կամքի դրսևորումներից, նրանք չեն կարող որևէ ազդեցություն գործել իրերի վրա, նրանք իրենք են ենթարկվում այդ իրերին, հետևաբար սյուժեն այնպես, ինչպես դասական դրամայում է, այստեղ չի կարող գործել. նա չունի սկիզբ, զարգացում, ավարտ: Եթե մարդը չկա, ուրեմն չկա նաև զարգացում, տրամաբանական գիծ: Աբսուրդի դրամայում սկիզբը և վերջը միանցից չեն տարբերվում: Բեմի վրա ամեն ինչ կարող է կատարվել, բայց ոչինչ չի կատարվում:

Այս ամենը լավագույնս երևում է Ս. Բեկկետի «Գոդոյին սպասելիս» պիեսում, որում ներկայացված են երկու գույզեր՝ Վլադիմիր և Էստրադոն, Փոզզո և Լաքի: Էստրադոնը (անունը թարգմանաբար նշանակում է «թախտու») ներկայացնում է իմպուլսիվ, պարզունակ կողմը (նա մտահոգված է գերագնացապես ուտելիքով, քնով), ի տարբերություն Վլադիմիրի, որ խտելեկառույ կողմի ներկայացուցիչն է: Նշենք, որ Փոզզո և Լաքի անունների ընտրությունը նույնպես պատահական չէ. «pazzo»-ն իտալերեն է, նշանակում է «լավ», իսկ «lucky»-ն անգլերեն է, նշանակում է «հաջողակ, բախտավոր»: Հետաքրքիր է, որ Լաքիին պետք է ընկալել իբրև հաջողակ կերպար, որովհետև նա կյանքում չունի ոչ մի ակնկալիք, հույս:

Թափառաշրջիկ Էստրադոն ու Վլադիմիրը սպասում են Գոդոյին, որն անօթևան, քաղցած ու կործանված այդ մարդկանց համար իրական անհրաժեշտություն է, առանց որի հնարավոր չէ պատկերացնել կյանքը: Եվ ամեն առավոտ նրանք գալիս են հանդիպման նախորդված վայրը (նրանք վստահ չեն, որ գտնվում են պայմանավորված տեղում, կամ որ շաբաթվա այդ օրն է խոստացել գալ Գոդոն) և ուշ երեկոյան վերադառնում՝ համառորեն կաշտելով այն մտքից, որ վաղը նա անպայամն կգա: Բսկ Գոդոն այդպես էլ չի հայտնվում: Թե ով է նա, չեն կարող ասել նաև Վլադիմիրն ու Էստրադոնը:

Տեղանքը, որտեղ նրանք գտնվում են, ամայի, անշարժ վայր է մի չորացած ծառով, որի մոտ սպասում են Գոդոյին: Վերջինիս ով կամ ինչ լինելը բավական վիճահարույց է: Ծառ սկզբում անվանվում է «Godot» անվան «God»՝ աստված բառից, պնդում են,

որ Գոդոն փրկիչն է, որի գալույթը սպասում են: Բայց Բեկկետը նշում է. «Եթե ես, Godot **ասելով, նկատի** ունենայի God-ը, ես հենց God էլ կանվանեի, և ոչ թե Godot»⁴: Մի ուրիշ դեպքում էլ՝ «Իմ կողմից տխմար բան կլիներ ձևացնել, թե ես չեմ տեսնում իմաստային կապը «Godot» բառի և այն բազմաթիվ կարծիքների միջև, որոնք պնդում են, թե այն նշանակում է «God»: Բայց դուք պետք է հիշեք՝ ես այս գործը գրել եմ ֆրանսերենով և եթե իմ մտքում այդ իմաստն եմ նկատի ունեցել, դա իմ անգիտակցականում ինչ-որ տեղ է եղել, և ես բացահայատորեն տեղյակ չեմ եղել դրա մասին»⁵: Փաստորեն հաշվի առնելով անգիտակցական այն իմպուլսները, որոնք մասնակիորեն կառավարել են Բեկկետին՝ տեսնում ենք, որ փրկիչ պատկերի հետ գործ ունենք: Այսինքն՝ մշտապես բախվում ենք դեռևս Հին կտակարանում առկա փրկիչ գալստյան սպասման և Նոր կտակարանում իրականացման խնդիրներին, այն տարբերությամբ, որ այստեղ կա գալստյան, փրկության սպասում, բայց ոչ իրականացում: «Է.- Օ, այո, արի հեռու գնանք այստեղից: Վ.- Չենք կարող: Է.- Ինչու է: Վ.- Մենք պետք է վաղը ետ գանք: Է.- Ինչի համար: Վ.- Գոդոյին սպասելու: Է.- Ա՛հ: (Դադար): Նա չեկա մի: Վ.- Ոչ: Է.- Բսկ եթե թողնե՛նք ու գնանք: (Դադար): Թողնենք ու գնանք: Վ.- Նա մեզ կպատժի»⁶:

Հայտնի է, որ մարդիկ ջերմության, սիրո կարիք ունեն, բայց քառսի մեջ սեր լինել չի կարող, աբսուրդը և սերը հակադիր ուժեր են, հետևաբար եթե կյանքը աբսուրդ է, սերն անհնար է: Այս է պատճառը, որ ամեն անգամ, երբ Էստրադոնն ու Վլադիմիրը մոտենում են իրար ջերմանալու, անմիջապես հետ են մղվում՝ ծակելով միմյանց իրենց իսկ գոյության փշերով: «Է.- Դա ինձ սպանեց: Ես սասցի, նա մենակ է, նա կարծում է, որ ես ընդմիջտ գնացել եմ և երգում է: Վ.- Մարդ իր տրամադրության տերը չէ: Ամբողջ օրը ես շատ լավ էի գգում: (Դադար): Ես գիշերը չարթնացա ոչ մի անգամ: Է. (մռայլ)- Տեսնում ես, քեզ համար ավելի լավ է, երբ ես չկամ: Վ.- Ես կորցրի քեզ... և միևնույն ժամանակ ես երջանիկ էի: Տարօրինակ է, չէ: Է. (ցնցված)- Երջանիկ է: Վ.- Գուցե դա հարմար բառը չէ: Է.- Իսկ հիմա: Վ.- Հիմա... (Հաճույքով): Դու այստեղ ես նորից... (Անտարբեր): Մենք այստեղ ենք նորից... (Տխուր): Ես այստեղ եմ նորից: Է.- Տեսնում ես, դու ավելի վատ ես գգում, երբ ես քեզ հետ եմ: Ես մենակ նույնպես ավելի լավ եմ գգում: Վ.

¹ Նույն տեղում:

² Martin Esslin, The Theatre of the Absurd, The Tulane Drama Review, Vol. 4, No. 4 (May, 1960), p. 3.

³ Հ. Էդոյան, Շարժում դեպի հավասարակշռություն, Մարգիս Խաչենց, Երևան, 2009, էջ 190:

⁴ Enoch Brater, The Essential Samuel Beckett: An Illustrated Biography, London: Thames & Hudson, 2003, p. 75.

⁵ Deirdre Bair, Samuel Beckett: A Biography, London: Vintage, 1990, p. 591.

⁶ XX դ. Արտասահմանյան դրամատուրգիա, հտ.2, Երևան, 1986, էջ 160:

(վիրավորված ինքնասիրությամբ)- Այդ դեպքում ինչն¹ ուր սողալով ետ վերադարձար: Է.- Չգիտեմ: Վ.- Իսկ ես գիտեմ: Որովհետև դու չգիտես, ինչպես հոգ տանել քո մասին²:

Աբսուրդի թատրոնի հերոսները հետևողականորեն մոռանում են անցյալ չունեն, որովհետև անցյալի ճանաչումը դառնություն է բերում: Ճանաչողությունը, բնակաբար, չի ենթադրում հիշողություն: Ինքնազնույն է ճանաչել առարկաներ, իրադարձություններ, բայց չմտապահել, որովհետև եթե հիշողության ասպեկտ լինի, օտարում տեղի չի ունենա: Եվ այս անվերջ ներկայի և հիշողության կորստի համակցումը հասցնում է կյանքի արտուրդի: «Վ.- Նա ասաց՝ շաբաթ: Կարծեմ: Է.- Բայց ո՞ր շաբաթ: Եվ շաբաթ է արդյոք այսօր: Իսկ գուցե կիրակի³ է: Կամ երկուշաբթի: Կամ երեքշաբթի: Եվ այդ բոլորը երևի էր, ասում ես: Եվ այստեղ, որտեղ հիմա մե՞նք ենք»: Չերոսների համար չտարրոշվող, սակայն, ժամանակների հետ խաղի կանոններն են գործում: Չկա հիշողություն, չկա ապագա և անցյալ, անվերջ ներկայի մեջ դեգերումներ, և սպասումի, փնտրումի, իմաստի չգոյություն:

Այս համատարած սպասման մեջ միակ գործը, որ նրանք կարող են անել, խոսելն է, ուր նրանք կարող են հաստատել իրենց գոյությունը: Գոյության այլ ձև նրանք չունեն: Բայց «խոսելն» այստեղ նորից տարբերվում է սովորական ընկալումից, որովհետև ցանկացած բառ, խոսք, որ հնչում է, անհմաստ է, անկապ, բառիմաստը չի կարևորվում: Ընդ որում, կերպարները միմյանց չեն էլ լսում, և երկխոսությունը ոչ թե ենթադրում է այս պարագայում խոսող և լսող կողմերի առկայություն, այլ միայն խոսող և խոսող կողմերի առկայություն: Այսինքն՝ Բեկկետը կարևորում է սոսկ ձայնը, և ոչ բառիմաստը: Տեքստի ընթերցում տեքստի բացակայության պայմաններում, որպեսզի հնարավոր չլինի ընթերցողի, հանդիսատեսի համար գտնել մի որևէ տրամաբանական կապ: Նրա համար կարևորը ձայնն է, «որով նրանք ցույց են տալիս իրենց ներկայությունը, իրենց գոյությունը աշխարհում, այդ ձայնից դուրս նրանք կորցնում են իրենց գոյությունը, դադարում են գոյություն ունենալ, որը նրանց մեջ առաջացնում է վախ ու սարսափ. նրանք ինտուիտիվ սարսափ են զգում լռությունից³: Փաստորեն այս անտիլեգուն բառախմաստային համակարգից անցում է կատարում ձայն - ազդանշան համակարգի գործելով որպես «հնչյունաշար», որպես մարդու գոյության միակ փաստ, որից դուրս նա ոչինչ չունի:

Յանսկի Ս. Բեկկետի էրզիստենցիալ մարդուց արտուրդի մարդ անցման ճանապարհը վերջանում է մարդու ավարտով, որ ազդարարվում է Բեկկետի հերոսների ձայնի խուլ հնչյուններով:

Գրականություն

1. Դ. Ալիգերի, Աստվածային կատակերգություն, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1983:
2. Ֆ. Դոստոևսկի, Կարամազով եղբայրներ, հ. 2-րդ, Հայաստան, Երևան, 1970:
3. Ֆ. Դոստոևսկի, Ոճիր և պատիժ, Սովետական գրող, Երևան, 1980:
4. Հ. Էդոյան, Շարժում դեպի հավասարակշռություն, Սարգիս Խաչենց, Երևան, 2009:
5. Ֆ. Կաֆկա, Դատավարություն, Ապոլոն, Երևան, 1991:
6. Ա. Քամյու, Ժանտախտը, Ապոլոն, Երևան, 1991:
7. Ա. Քամյու, Սիզիփոսի առասպելը
8. XX դ. Արտասահմանյան դրամատուրգիա, հտ. 2, Երևան, 1986:
9. Deirdre Bair, Samuel Beckett: A Biography, London: Vintage, 1990.
10. Enoch Brater, The Essential Samuel Beckett: An Illustrated Biography, London: Thames & Hudson, 2003.
11. Martin Esslin, The Theatre of the Absurd, The Tulane Drama Review, Vol. 4, No. 4 (May, 1960).
12. Søren Kierkegaard, Fear and Trembling, New York: Penguin Books (first published 1843), 2006.
13. The Modern Tradition: Backgrounds of Modern Literature, New York: Oxford University Press, 1965.
14. Walter Kaufmann, Existentialism from Dostoevsky to Sartre, Jean – Paul Sartre, Existentialism is a Humanism, New York: Meridian, 1989.

¹ Նույն տեղում՝ էջ 127-128:

² Նույն տեղում՝ էջ 89:

³ Հ. Էդոյան, Շարժում դեպի հավասարակշռություն, Սարգիս Խաչենց, Երևան, 2009, էջ 193:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ԲԱԳԻՏԱԿԱՆ	
1. Մարիամ Մկրտչյան	ԹԵՑԱՀԱՎԱՔՆԵՐՈՒՄ ԴԱԲԱՂԱՅՈՒԹԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ.....	3
2. Արփինե Յարամիշյան	ՄՆԿՈՒՄ ՀԱՃԱՆՍ ԿԻՐԱՌՎՈՂ ՈՐՈՇ ԴԵՂԱԲՈՒՅՄԵՐԻ ՄՆԿԱՑԻՆ ՀԻՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	7
3. Լիանա Խաչատրյան	ԿԱՌՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՇՄԱՆ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՄ.....	11
4. Բելլա Պետրոսյան	ՕՂԱԿԱՎՈՐ ՈՐԴԵՐԻ ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....	15
5. Անի Հովհաննիսյան	Sambucus Nigra L. ՏԵՄԱԿԻ ՋՐԱՑԻՆ ՌԵԺԻՄԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՒԳԱՐՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ.....	19
6. Сергей Кривоногов	ИНФОРМАЦИОННАЯ СИСТЕМА «ЭЛЕКТРОННЫЙ ЖУРНАЛ УЧЕТА ТЕОРЕТИЧЕСКОГО ОБУЧЕНИЯ АКАДЕМИЧЕСКОЙ ГРУППЫ ФАКУЛЬТЕТА ИТ» ИСС ГБОУ ВО НГИЭУ.....	24
7. Գայանե Համբարյան	ԿՈՎԿԱՍՅԱՆ ՄՐՏԱՎԱՐԴԻ ՈՐՈՇ ԷՎՈԼՈԳՈՑԻՉՈՒՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԼՈՌՈՒՒ ՄԱՐՁՈՒՄ.....	27
8. Արթուր Արրահամյան	ԼՂՀ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԲՆԱԿԱՎԱՑՐԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՍՈՒԹՅՈՒՆԸ (XX ԴԱՐԻ ՎԵՐՁԻՑ ՄԻՆՉԵՎ 2015թ.).....	32
9. Асмик Степанян	ИЗВЛЕЧЕНИЕ РЕДКИХ РАССЕЯННЫХ МЕТАЛЛОВ ИЗ МЕДНО-МОЛИБДЕНОВОГО СУЛЬФИДНОГО КОНЦЕНТРАТА.....	36
10. Սոնա Զարարյան	ԴԵՂԵՐԻ ԿՈՂՄԱԿԻ ԱՋՐԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	40
	ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	
11. E.A. Леонтьева, Д.В. Журба	К ВОПРОСУ О КЛАССИФИКАЦИИ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ С СЕМАНТИКОЙ ТЕМПОРАЛЬНОСТИ В ВОСТОЧНОСЛАВЯНСКИХ ЯЗЫКАХ.....	46
12. Ani Harutyunyan	HISTORICAL BACKGROUND OF ENGLISH IDIOMS.....	51
13. Լիլիթ Ղուլինյան	ՀՈՌՈՍՄԱՑՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	58
14. Անի Չատինյան	ԿԱՐԱՒՏ ԲԱՌԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՊՀ.....	61
15. Ալինա Նահապետյան	ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՄԵՎՈՐՄԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ Պ. ՄԵՎԱԿԻ ՊՈԵԶԻԱՑՈՒՄ.....	65
16. Էդիտա Ալթունյան	ԱՆԿԱՏԱՐ ՆԵՐԿԱ ԵՎ ԱՆՅՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՎԵԼՅԱԼ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՅՑՈՒ ՄՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....	71
17. Վանուշի Բաղրամյան	ՊԱՏՃԵՆՈՒՄՍՑԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՎԳԵՐՑԱՆԻ ԱՆԳԼԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆՈՒՄ.....	76
	ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ	
18. Արմեն Չոփուրյան	ԴԵՑԹՈՆՅԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԸ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ.....	81
19. Էլլադա Հայրապետյան	ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԲԵԶԱՆԱ-ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ /1991-1994 թթ. / ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԻՏԱԿԵՏԻ.....	87
20. Լուիզա Ջանյան	ՄԻՄԻԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԻՑ ՀԱՅՆԱԲԵՐՎԱԾ ՄԵԴԱԼԵՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՆՏԻՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՆԹՈՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՄԱՆ ԱՂՔՅՈՒՐ.....	92

21. Տաթև Արարատյան, Մալվինե Մարկոսյան	ԱԼՄԱ ՑՈՒՂԱՆՍՈՒՆԻ ԵՎ ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՈՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....98
22. Ադունիկ Մահակյան	ԲԵՐԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ(1931-1937 թթ.).....101
23. Զոյա Չատինյան	ԼԵՂԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՐԻԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐԻ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ.....107
24. Լիլիթ Մինասյան	ԱՐՑԱՒՅԱՆ ԱԶՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ.....113
25. Հեղինե Աղայան	ՀԱՅՊՈՒԿԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՓՈՔԻ ՀԱՅՔՈՒՄ.....117
26. Մելինե Բաղդյան	ԵՄԱՅԻ ՀԱՄԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆԻ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԴԵՐԸ ԱՐՑԱՒՅԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ.....122
27.Մերրի Պետրոսյան	ԻՄՐԱՅԵԼ ՕՐՈՒ ԴՅԱԼՑՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՐՑԻ 129
28. Նունա Ալավերդյան 29. Մերի Մարդարյան	ՀԱՅ - ԱՐԻԲԵՋԱՆԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1918-1922ԹԹ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ՝ ՕԿՈՒՊԱՑԻԱ ԹԵ՞ՓՐԿՈՒԹՅՈՒՆ.....140
30. Վերոնիկա Թորոսյան	ՄՕՏՀ-Ը ՈՐՊԵՍ ԳՈՐԾՈՆ ՀԱՅ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ-ԱՐԻԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....146
31. Գեղամա Խուդավերդյան	ԷՋԵՐ ՄԵՎՔԱՐԵՑԻ ՄԱՔՈՑԻ ՀԱՅՊՈՒԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ152
32.Կարեն Մանուչարյան	ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԲԱՑԱԿԱՆԵՐԻ «ՆԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ» ԱՐԱՄ ՊԱՉՅԱՆԻ «ՈՒՐ ԵՍ, ԼՅՈՎ» ԵՎ «ՑՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԾԻՏ» ԵՐԿԵՐՈՒՄ.....158
33. Հռիփսիմե Կաստանյան	ԳԱՈՒՉՈՑԻ ԿԵՐՊԱՐԸ ԽՈՐԽԵ ԼՈՒԻՍ ԲՈՐԽԵՄԻ ՊԱՏՎԱԾՔՆԵՐՈՒՄ.....165
34. Հռիփսիմե Կաստանյան	ՀԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՐՎԵՍԸ.....170
35. Անահիտ Հայրապետյան	Ա Վ Ո Ց Ի Կ Ե Ր Պ Ա Ր Ը Հ Ա Յ Պ Ո Ե Ջ Ի Ա Ց Ո Ւ Մ 176
36. Տաթևիկ Բաբոյան	ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐՈՆՑԸ ՀԱՅԵՐԻ ՀԻՆ ՀԱՎԱՍԱԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՅԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԾԵՍԵՐԸ.....182
37.Маргарит Агаян	ВИЗУАЛЬНОСТЬ В РОМАНЕ Ф.М. ДОСТОЕВСКОГО «ПОДРОСТОК».....188
38. Լիլյա Հարությունյան	ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ ՄԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆԻ ՄԵԿԱԲԱՆՈՒԹՅԱՐ.....195
39. Изабелла Аллахвердян	ЖИВОТНОЕ ПАДЕНИЕ И ДУХОВНОЕ ПРОЗРЕНИЕ ГЕРОЯ В ПОВЕСТИ «ОТЕЦ СЕРГИЙ».....202
40.Թագուհի Ամիրխանյան	ՀՆԻ ՈՒ ՆՈՐԻ ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԲԱՆՈՒՄԸ ԲԱԿՈՒՆՑԻ ՊԱՏՎԱԾՔՆԵՐՈՒՄ.....209
41. Անահիտ Բաղդասարյան	ԽՈՐԽԵ ԼՈՒԻՍ ԲՈՐԽԵՍ. ԿՅԱՆՔԻ և ՄԱՀՎԱՆ ՄԱՀՄԱՆԱԳԾԻՆ.....214
42. Լիլիթ Հարությունյան	ԲԵՐՏՈԼԴ ԲՐԵՆՏԻ«ԿՈՒՐԱԺ ՄԱՅՐԻԿ» ՊԻԵՍԸ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԵԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....221
43. Արմինե Մարկոսյան	ՄԱՐԴՈՒ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՃԱԿԱՏԱԳՐԻ ԹԵՄԱՆ ՊԵՂՐՈՎ ԿԱԼԵՐՈՆԻ «ԿՅԱՆՔԸ ԵՐԱԶ Է» ՊՈԵՄՈՒՄ.....226
44. Մելինե Պետրոսյան	ԱՐՑԱՒՅԱՆ ՀԵՔԻԹՆԵՐԻ ԳՐԱՌՄԱՆ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԸ229
45. Սոնա Ալավերդյան	ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ՄԱՐԴՈՒՑ ԱԲՍՈՒՐԻՄ ՄԱՐԴ ԱՆՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐԸ.....233

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ (հոդվածների ժողովածու)

SCIENTIFIC READINGS (collection of articles)

НАУЧНЫЕ ЧТЕНИЯ (сборник статей)

Տեխնիկական խմբագիր՝ Շ.Աղաբեկյան

Հանձնված է շարվածքի՝ 25.10.2016թ.: Ստորագրված է տպագրության՝ 14.12.2016թ.:
Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ; Ծավալը, 30,25 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100:

Հիմնադիր՝ Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5
հեռ. (047) 94-04-91, ֆաքս (047) 97-12-14
E-mail: rector@asu.am

ԱրՊՀ հրատարակչություն՝ հեռ. (097) 34-01-86,
e-mail printery.asu@mail.ru

Основатель – Арцахский государственный университет г.Степанакерт, ул.Мхитара Гоша 5,
тел. (047) 94-04-91, факс (0479) 7-12-14
Издательство АрГУ: тел. (097) 34-01-86

Founder - Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert
Tel.: (047) 94-04-91, Fax: (0479) 7-12-14
ASU Publishing house: tel. (097) 34-01-86

